

31560
U-16

Ա. Գ. ԱՐԲԱՆՅԱՆ

ՀԱՐԱՌՈՏ ԱՐՎԱԿԻՆ
ՀԱՅ ԴԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Բ

Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ
ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Բ

Խմբագրությունը՝ պրոֆ. Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆԻ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայրենի երկրում օտարերկրյա նվաճողների կատարած վայրագությունների և կյանքի վատթարացման ու անապահովության հետևանքով հայ ժողովրդի ավելի քան կեսը հարկադրված է եղել տարագրության ցուպը վերցնել ձեռքը, հեռանալ երկրից և բնակություն հաստատել օտար հորիզոնների տակ: Դարերի ընթացքում հայկական գաղթավայրեր և գաղթօջախներ են ստեղծվել Պարսկաստանում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Իտալիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Հյուսիսային Ամերիկայում և այլ վայրերում:

Հայ գաղթականությունն օտարության մեջ մեծ մասամբ ապրել է հավաքական կյանքով, ըստ հնարավորին կապված է մնացել հայրենի երկրի հետ և հոգևոր կենսական սնունդ ստացել նրանից: Անկարելի է մատնացույց անել հայրենի երկրում տեղի ունեցած քաղաքական, հասարակական և մշակույթային որևէ երևույթ, որը զգայուն թելերով կապված չլինի գաղթավայրերի հետ:

Օտար երկրներ ապաստանած հայ գաղթականությունը զրտնրվել է, համեմատաբար, ավելի նպաստավոր պայմաններում, քան բուն Հայաստանում և որոշ դեպքերում հանդես է եկել խիզախ նախաձեռնողի դերում: Փաստ է, որ առաջին հայ գիրքը տպագրվել է գաղթավայրում, հայ հասարակական և քաղաքական աչքի ընկնող ուսման կենտրոնները հանդես են եկել գաղթավայրերում, հայ առաջին պարբերականը տպագրվել է գաղթավայրում և այլն: Ուստի հասկանալի է, որ հայ ժողովրդի հասարակական և մտավոր վաստակները լիարժեք գնահատելու համար անհրաժեշտ է

АШОТ ГАРЕГИНОВИЧ АБРАМЯН
КРАТКИЙ ОЧЕРК ИСТОРИИ АРМЯНСКИХ
ПЕРЕСЕЛЕНЧЕСКИХ ОЧАГОВ

(На армянском языке)
Издательство „Айастан“
Ереван, 1967

ո՛չ միայն ուսումնասիրել մայրենի երկրի ժողովրդի, այլև՝ Սփյուռքում ցրված նրա բեկորների պատմությունը:

Ստեղծված իրադրության մեջ արտասահմանյան տարբեր երկրներում գտնվող հայ գաղթավայրերը հանդես են եկել տվյալ երկրի և Հայաստանի միջև շաղկապող օղակի դերում, նպաստել են նրանց միջև փոխհարաբերությունների ստեղծմանը: Այդ առումով, հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը կարևոր է հայ ժողովրդի և մյուս ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության համար, մի խնդիր, որը սովետական պատմագիտության տեսանկյունից ունի կարևոր նշանակություն:

Չնայած անցյալում գրվել են հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ, սակայն դրանց մեծ մասը նվիրված է առանձին հայ գաղթավայրերին միայն և պարունակած նյութը հիմնականում պատվում է գաղթավայրերի հայ մեծահարուստների շուրջը: Վերջերս միայն Սովետական Հայաստանի մի խումբ գիտնականներ ձեռնարկել են և այժմ հանգամանորեն ուսումնասիրում են հայ գաղթավայրերի գիտական պատմությունը:

Պատմական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ պրոֆեսոր Ա. Գ. Աբրահամյանի և պատմական գիտությունների թեկնածու Ռ. Աբրահամյանի հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված ներկա աշխատությունը սովետահայ պատմագիտության մեջ առաջին փորձն է, որ նպատակ է դնում ամփոփ ձևով տալու հայ գաղթավայրերի պատմության ուրվագիծը միջին դարերում և նոր ժամանակներում: Երկու հատորներում զետեղված են ավելի քան երեսուն հայ գաղթավայրերի պատմություն, որոնց մի մասը դարերի ընթացքում խամրել է, իսկ մյուս մասը կենդանի է և շարունակում է գոյատևել:

Հայ գաղթավայրերի պատմությունը գրելու համար հեղինակները կատարել են մեղվաջան աշխատանք. նրանք մխրճվել են խունացած ձեռագրերի ու վավերագրերի թղթապանակների մեջ, թերթել են տարբեր վայրերում հրատարակված հայկական հարուստ պարբերական մամուլը, ուսումնասիրել են հարյուրավոր գրքեր ու հոդվածներ և այդ աղբյուրներից հավաքած նյութերն օգտագործել իրենց աշխատության մեջ:

Ներկա ուսումնասիրությունը, սակայն, փաստագրական նյութերի ինչ-որ անգույն ժողովածու չէ. հեղինակները, մարքսիստ պատմաբանին պատշաճող բժախնդրությամբ, աշխատել են քննա-

դատաբար վերլուծել պատմական իրադարձությունները, գտնել դեպքերի պատճառականությունը, գիտականորեն իմաստավորել և ճշմարտացի գնահատել դրանք:

Որպես հայ գաղթավայրի մարքսիստական պատմության առաջին փորձ, որպես այդ բնագավառի առաջնեկը, անշուշտ, այն կարող է ունենալ որոշ թերություններ: Սակայն այդ երբեք չի կարող ստվեր նետել այն մեծ և դրական աշխատանքի վրա, որ կատարել են հեղինակները: Հավատացած ենք, որ ներկա աշխատությունը սիրով պիտի ընդունվի ինչպես մեր պատմագիտական հասարակայնության, այնպես և ընթերցողների լայն շրջանների կողմից:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գաղթավայրերի հին շրջանի պատմության ուրվագիծը փրկվել էր հանգուցյալ Ա. Ալպոյաճյանը, որի փաստական նյութերից և բիրլիոգրաֆիկ տեղեկություններից օգտվել էինք մեր առաջին հատորը կազմելիս: Իսկ երկրորդ հատորը կազմելիս մենք ձեռքի տակ չունեինք հայ գաղթավայրերի նոր և նորագույն շրջանն ամփոփող որևէ աշխատություն:

Չենք ուզում ասել, թե ամենևին չկան առանձին հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված աշխատություններ. կան, սակայն նրանց մեծ մասը, դժբախտաբար, պարունակում է գրված խավորապես հայ խոջանների և մեծահարուստ ընտանիքների, պետական և հասարակական ասպարեզներում աչքի ընկնող գործիչների, եկեղեցիների ու բարձրաստիճան հայ եկեղեցականների պատմությունը, իսկ գաղթավայրերի աշխատավոր խավերը՝ իրենց ներքին կյանքով և գոյավիճակով, իրենց խաղացած դերով տեղ չեն գտել նշված աշխատությունների մեջ, ուստի նրանք հարկավոր չափով մեզ օգտակար չեն եղել:

Արդարությունը պահանջում է, սակայն, ասել, որ մեր աշխատության մեջ ևս թույլ է լուսաբանված հայ գաղթավայրերի ներքին կյանքը, սոցիալական տարբեր խավերի վիճակը և այլն: Այդ պետք է բացատրել ո՛չ թե մեր թերացումով, այլ սկզբնաղբյուրների ժլատությամբ. աղբյուրները, դժբախտաբար, կցկտուր տեղեկություններ են պահպանել:

Պատմության գիտական պարբերականացման համար, ինչպես հայտնի է, հիմք են ծառայում սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Ըստ որում, դասակարգային հասարակության

հին ժամանակաշրջանը կապվում է ստրկատիրական հասարակութ-
թյան հետ, միջին դարերը՝ ֆեոդալիզմի (ավատականության),
նոր ժամանակաշրջանը՝ կապիտալիզմի, իսկ նորագույնը՝ սոցիա-
լիստական հասարակության: Հայ գաղթավայրի պատմության
պարբերականացումը, պարզ է, որ պետք է կազմվեր և կազմվել
է այս սկզբունքով: Սակայն աշխատանքի ընթացքում մեր առջև
ծառայան որոշ դժվարություններ ժամանակագրության հարցում.
ինչպե՞ս կողք-կողքի բերել աշխարհի տարբեր վայրերում, զար-
գացման տարբեր ընթացք ունեցող և ներկայումս սոցիալ-տըն-
տեսական տարբեր աստիճանի վրա գտնվող երկրներում ապրող
հայ գաղթավայրերի պատմությունն այնպես, որ կարելի լինի
ժամանակագրական ճիշտ սահմանագծումներ կատարել: Չէ՞ որ
հայ գաղթականները տարագրության են դիմել ո՛չ մեկ անգամ,
և ո՛չ մեկ որոշակի ժամանակաշրջանում:

Վերցնենք, օրինակ՝ Հունաստանի, Իրաքի, ԱՄՆ-ի, Գերմա-
նիայի, Իսպանիայի, Անգլիայի և նման ուրիշ երկրների հայ գաղ-
թավայրերի պատմությունը. տվյալ երկրներում հայ գաղթավայ-
րերը հիմնականում ստեղծվել են նոր ժամանակներում՝ համաշ-
խարհային առաջին պատերազմից հետո, սակայն մինչ այդ այդ-
տեղ եղել են հայկական առանձին օջախներ, այլ խոսքով ասած՝
նրանք ունեցել են իրենց նախապատմությունը. ինչպե՞ս վարվել
նման դեպքերում. պարբերականացումն անխախտ պահպանելու
համար պե՞տք էր նրանց նախապատմությունը շարադրել առան-
ձին, թե՞ իրար հետ միասին: Մենք նախապատմությունը տվել ենք
երկրորդին:

Ներկա հատորը կազմելիս մեզ մոտ մտածելու լուրջ խնդիր է
եղել գաղթավայրում հանդես եկող այն հայ գործիչների հարցը,
որոնք աչքի ընկնող դեմքեր են հանդիսացել տվյալ երկրի մշա-
կույթի, գրականության, գիտության, տնտեսության ու քաղաքա-
կան ասպարեզի տարբեր բնագավառներում: Անհրաժե՞շտ էր
արդյոք կանգ առնել նման անձնավորությունների վրա և ցույց
տալ նրանց ծառայությունները տվյալ երկրին, թե ոչ: Նրանց
կտրելը, առանձնացնելը տվյալ երկրի հասարակական կյանքից և
ներկայացնելը որպես հայ գործիչներ ունեն այն անպատեհու-
թյունը, որ դժվար կլիներ նրանց գործունեությունը ճիշտ գնա-
հատել շրջապատից կտրված և կարող էր նույնիսկ ընթերցողի մոտ
ստեղծել այն սխալ կարծիքը, թե տվյալ երկրի հասարակական
կյանքը զարգացնողները հայերն են հանդիսացել: Սակայն, մյուս
կողմից, նրանց մասին չխոսելու դեպքում հայ գաղթավայրերը

կորվեին կրավորական վիճակի մեջ. կստեղծվեր այն սխալ տպա-
վորությունը, որ հայ գաղթականությունը կարծես ոչ մի մասնակ-
ցություն չի ունեցել իր ապրած երկրի հասարակական-քաղաքա-
կան կյանքում և չի հատուցել իր երախտագիտական պարտքը
հյուրընկալ երկրին: Այս երկու ծայրահեղություններից խուսափե-
լու համար որոշեցինք մեծ ընտրությամբ և չափավորված խոսել
նշանավոր գործիչների մասին:

Մենք այն կարծիքը չունենք, թե գաղթավայրի հայ հարուստ-
ների մեջ չեն եղել հայ համայնքների հետ կապված և ազնիվ
նպատակներով հանրօգուտ գործեր կատարող անձնավորություն-
ներ. այդպիսիները չեն անտեսվել մեր կողմից: Սակայն, որպես
ընդհանուր կանոն, հայ հարուստների մեծ մասը, իր անձնական
և դասակարգային շահերի թելադրանքով, սերտորեն կապված է
եղել ո՛չ թե հայ համայնքների հետ, այլ տեղի օտարազգի ֆեո-
դալական կամ բուրժուական մեծահարուստ շրջանների հետ և
մերվել է նրանց հետ: Մինչդեռ գաղթավայրերի հայ աշխա-
տավորությունը կապված է եղել տեղի աշխատավորության հետ
և ընթացել է նրան համաքայլ: Պատահական չէ, որ հայ աշխա-
տավորությունը հաճախ գործուն մասնակցություն է ցուցաբերել
տեղի աշխատավորության սոցիալական շարժումներին: Այնպես
որ դժվար է հայ գաղթավայրերում շահերի ընդհանուր միասնու-
թյուն փնտրել հայ հարուստների և հայ աշխատավորության միջև:
Պետք է նկատի ունենալ, որ շահագործողը՝ շահագործող է, լինի
օտարազգի, թե ազգակից:

Առաջին հատորը, ինչպես հայտնի է, ընդգրկում է, հիմնա-
կանում, հայ գաղթավայրի հին և միջին դարերի պատմությունը,
իսկ երկրորդը՝ նոր շրջանի: Երկու հատորներում եղած նյութը
դժվար է եղել բաժանել այնպես, որ կարելի լիներ առաջին հա-
տորի մեջ զետեղել զուտ հին և միջին դարերին վերաբերող նյու-
թեր, իսկ երկրորդում՝ նոր: Վերցնենք, օրինակ, Հունաստանի կամ
ԱՄՆ-ի հայ գաղթավայրերի պատմությունը: Տվյալ երկրներում
ցրված հայ բնակչություն է ապրել XVII դարից սկսած, սակայն՝
նրանք հավաքական իմաստով գաղթավայր չեն կազմել, ուստի
անիմաստ կլիներ փոքրածավալ այդ հատվածի պատմությունը
անջատ ներկայացնել նոր ժամանակաշրջանի հիմնական պատ-
մությունից: Այդ նկատառումով, այդ խմբի գաղթավայրերի միջ-
նադարյան պատմությունը մենք միացրել ենք նոր շրջանի պատ-
մությանը:

Հայ գաղթավայրերի մեջ կան և այնպիսիները, որոնք ստեղծվել են շատ վաղուց, բայց չեն խամրել, այլ ստվարանալով նոր շրջանում նոր գաղթականություններ, շարունակում են իրենց գոյությունը և ներկայումս: Նման գաղթավայրերի պատմությունը մենք բաժանել ենք երկու մասի՝ հին և միջնադարյան շրջանի, որոնք զետեղված են առաջին հատորում և նոր ու նորագույն շրջանի, որոնք մտել են ներկա հատորի մեջ:

Ինչպես առաջին, այնպես և երկրորդ հատորում, հասկանալի է, անհնար էր տալ այս կամ այն գաղթավայրի մանրամասն պատմությունը: Կան գաղթավայրեր, որոնց ընդարձակ պատմությունը հանգամանորեն շարադրելու համար հարկավոր էին հատորներ, իսկ մեզ մոտ ավելի քան 30 գաղթավայրի պատմություն ամփոփված է երկու գրքում: Նման սահմանափակ շրջանակների մեջ մենք ստիպված ենք եղել դիմելու մեծ ընտրության՝ վերցնելու միայն պատմական այն փաստերը, որոնք գիտական և ուսուցողական նշանակություն կարող են ունենալ:

Մինչ սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ հասարակական կյանքին ընթացք, ուղղություն տվող հայկական խոշոր կենտրոնները գտնվել են Հայաստանից դուրս. դրանք հանդիսացել են Քբիլիսին, Բաքուն, Պոլիսը, Նոր-Նախիջևանը և Զմյուռնիան: Այդ վայրերում են ծայր առել և դրսևորվել սոցիալական և ազատագրական շարժումները, դրանք են հանդիսացել հայ մշակույթի խոշոր կենտրոնները, այդ վայրերում են կենտրոնացած եղել հայ մտավորականության առաջավոր ջոկատները և այլն: Հայկական այդ հատվածների պատմությունը անխզելիորեն կապված է հայրենի երկրի նոր շրջանի պատմության հետ և նրա կարևոր մասն է կազմում: Այդ նկատառումով, մենք նպատակահարմար չհամարեցինք այն անջատել նրանից և շարադրել գաղթավայրի պատմության հետ:

Մենք կանգ չենք առել նաև Հարավային Ամերիկայի գաղթավայրի պատմության վրա (Արգենտինայի, Չիլիի, Ուրուգվայի և Կոլոբայի), որովհետև այդ գաղթավայրերը, հիմնականում, ստեղծվել են նոր ժամանակներում: Այդ գաղթավայրերի առանձին ձեռնարկումների մասին, սակայն, մենք համառոտակի խոսել ենք հատորի վերջում՝ «Սովետական Հայաստանը և Սփյուռքը» գլխում:

Ներկա հատորում տեղ են գտել նաև հայկական այնպիսի գաղթօջախներ, որոնք շատ փոքր են եղել, երբեմն՝ մի քանի հարյուր հոգի: Մենք նկատի ունենք Իսպանիայի, Պորտուգալիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի և Հեռավոր Արևելքի որոշ գաղթա-

վայրեր: Գուցե ճիշտ կլիներ այդ կարգի գաղթավայրերի վրա կանգ չառնել: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ գաղթավայրի պատմությունը սերտորեն կապված է նաև հայ և մյուս ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության հետ և ունի ուսուցողական կարևոր նշանակություն, իսկ այդ հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում էական դեր են կատարում գաղթօջախները՝ դրանք լինեն մեծ կամ փոքր, ուստի որոշեցինք շրջանցել փոքրիկ գաղթօջախներն ու համառոտակի կանգ առնել նրանց վրա ևս:

Քիչ չեն հայկական այն գաղթավայրերը, որոնք չնայած հանդես են եկել վաղ շրջանում, փայլուն անցյալ են ունեցել, բայց խամրել են նոր շրջանը դեռ ոտք չդրած: Այս խմբի գաղթավայրերի պատմությունը, բնական է, տեղ չէր կարող ունենալ երկրորդ հատորում:

Երկրորդ հատորի մեջ չեն արտացոլվել նաև հայկական այն գաղթավայրերը, որոնք գտնվել են Սովետական Միության տերիտորիայում: Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, երբ սովետական ժողովուրդները միավորվեցին մի ընտանիքի մեջ և դարձան այդ հարազատ ընտանիքի իրավահավասար անդամները, Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Ադրբեջանում և մյուս հանրապետություններում եղած հայ համայնքները կորցրին իրենց նախկին նշանակությունը իբրև գաղթավայր:

Ի տարբերություն նախորդ հատորի, ներկա հատորում, նյութը չժանրաբեռնելու համար, մենք չենք տվել սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը ըստ առանձին գաղթօջախների՝ երկու նպատակով. նախ սկզբնաղբյուրներից և գրականությունից արված մեջբերումների վերաբերյալ նշումներ տրված են տողատակ ծանոթագրության մեջ և նրանց աղբյուրներով հետաքրքրվողը անհրաժեշտ բերլիոգրաֆիկ տեղեկություններ կարող է գրտնել այնտեղ: Եվ, ապա, հայ գաղթավայրի պատմությանը վերաբերող կարևոր աղբյուրների և ուսումնասիրությունների մասին խոսված է արդեն առաջին հատորում, ուստի այստեղ կրկնության կարիք չկար:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված ներկա աշխատությունը նեղ մասնագիտական բնույթ չունի, այլ յուրատեսակ տեղեկատու ձեռնարկ է հանդիսանում ընթերցողների լայն շրջանների համար, ուստի նրա պարունակած նյութն ավելի դյուրամատչելի դարձնելու նպատակով մենք աշխարհաբար ենք թարգմանել պատմիչներից բերած

գրաբար մեջբերումների մեծ մասը: Գրաբար են մնացել միայն այն մեջբերումները, որոնք գրաբար ձևերում ընթերցողներին հասկանալի են:

Հայ գաղթավայրերի պատմության ներկա հատորում մի շարք գլուխներ՝ կապված գլխավորապես Արևելքի և Աֆրիկայի հետ, գրել է Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտական սեկտորի գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Ա. Աբրահամյանը: Նրա հեղինակությանն են պատկանում Հնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Ավստրալիայի, Հեռավոր Արևելքի, Չինաստանի, Ֆիլիպինյան կղզիների, Աֆղանըստանի, Եթովպիայի, Սուդանի և Աֆրիկայի մյուս գաղթօջախների, պատմությունը:

Ներկա հատորի հրատարակությամբ մենք սպառված չենք համարում մեր աշխատանքը՝ հայ գաղթավայրերի ուսումնասիրության ուղղությամբ: Լիովին գիտակցում ենք, որ մեծ աշխատանք է հարկավոր կատարել՝ հրատարակված հատորների փաստական նյութերը հարստացնելու, առաջադրված խնդիրներն ավելի լավ մշակելու համար:

1. ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Սիրիայի և Լիբանանի գաղթավայրերը XVIII և XIX դարերում:

Սիրիայի և Լիբանանի երբեմնի եռուն կյանք ունեցող հայ գաղթավայրերը XVIII և XIX դարերում սկսում են խամրել: Այդ, հիմնականում, հետևանք էր հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի նրկատմամբ թուրքական կառավարության վարած կեղեքիչ քաղաքականության: Քայց կար այլ պատճառ ևս. XV դարում, աշխարհագրական մեծ հայտնագործություններից հետո, Սիրիայի և Լիբանանի վրայով անցնող առևտրական տարանցիկ ցամաքային ուղին իր տեղը զիջում է օվկիանոսային ուղուն, որը և բացասաբար է անդրադառնում Սիրիայի ու Լիբանանի տնտեսական կյանքի վրա¹: Նոր իրադրության մեջ հայ գաղթականական խոշոր հոսանքներ չեն գալիս Սիրիա և Լիբանան, իսկ նախկինում հաստատվածների մեծ մասը կաթոլիկություն է ընդունում և ձուլվում է տեղի մարոնիտների հետ: Այս ամենի հետևանքով Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներից շատերը ջնջվում են աշխարհագրական քարտեզից, իսկ մնացածները շարունակում են պահպանել իրենց գոյությունը մեծ դժվարությամբ:

Սիրիայի միջնադարյան հայկական գաղթավայրերից նոր ժամանակներում մնացած է եղել Հալեպը: Ըստ տեղեկությունների, XVIII դարում այնտեղ գտնվել է շուրջ 500 հայ ընտանիք, մոտ 2000—3000 շունչ բնակչությամբ:

¹ «Всемирная история», т. V, стр. 593.

Ինչպես նախկինում, այնպես էլ նոր ժամանակներում Հալեպի հայ բնակչության սոցիալական կազմում մեծ թիվ են կազմել առևտրականները, այն տարբերությամբ, որ այժմ նրանց մեջ չենք տեսնում նախկին մեծահարուստ խոջաների, այլ՝ մանր և միջին կարգի վաճառականների, որոնք կապված էին ներքին շուկայի հետ: XIX դարում, երբ եվրոպական առևտրական կապիտալը ամուր հաստատվում է Սիրիայում և Լիբանանում, հայ առևտրականները շարունակում դիմանալ մրցակցությունը, դուրս են գալիս մրցապայքարի ասպարեզից և դառնում եվրոպացիների միջնորդները կամ նրանց հանձնակատարները: Հայ ճանապարհորդներից մեկը՝ Աստվածատուր Տեր-Հովհաննիսյանը, որը 1868 թվականին եղել է Հալեպում, իր ճանապարհորդական նոթերում նշում է, որ առևտուրը Հալեպում նախկին ծավալը չունի և առևտրականների գործունեության շրջանակները սահմանափակված են¹:

Նոր ժամանակներում Հալեպի հայ բնակչության մեջ մեծ թիվ են կազմել տնայնագործ արհեստավորները, որոնք ունեցել են իրենց ջուլհակային դազգահները, գործել են մետաքս հրաշալի կտորներ և առևտրականների միջոցով վաճառքի հանել շուկաներում: Պետք է նկատի ունենալ, որ եվրոպական ֆաբրիկաներում գործված նուրբ մետաքս կտորների ասպարեզ իջնելուց հետո էլ ձեռքով գործվող մետաքսը շարունակում է սպառման լայն շուկա գտնել:

Մետաքսագործ ջուլհակների մասնագիտության հետ սերտորեն կապված էր ներկարարությունը, որի լավագույն վարպետները Հալեպում համարվել են Այնթափի և Մարաշի հայ ներկարարները, որոնք բուսական ներկերով էին ներկում մանվածքեղենը և կտորները: «Հիննն ի վեր,— գրում է Սյուրմեյանը,— Հալեպ հաստատված Այնթափի և Մարաշի հայերուն ընթացիկ արհեստը մնաց մանած ներկելը և կտոր գործելը»²:

Հալեպի հայ արհեստավորների մեջ, ջուլհակներից և ներկարարներից բացի, զգալի թիվ են կազմում նաև դերձակներն ու կոշակարները: Տեղական իշխանությունների կողմից հայ դերձակներին է հանձնարարված եղել բանակը հանդերձավորելու պարտականությունը: Նրանք լավ վարպետներ են համարվել մասնավորապես մուշտակներ կարելու գործում:

¹ Ա. Վ. Տեր-Հովհաննիսյան, Կարճ ճանապարհորդություն Ասիա (Տե'ս «Սիրո», 1868, էջ 212):

² Ա. Արեպ, Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, հ. III, էջ 973:

Հալեպում հայտնի էին նաև հայ կոշակարները, որոնք ոչ խարի, այժի և ուղտի մորթիներից պատրաստել են դեղին և կարմիր կիսակոշիկներ և վաճառահանել ներքին շուկաներում:

Հալեպի ճանաչված վարպետներից են հանդիսացել նաև հայ որմնագիրները, որոնց ձեռքերով են պատրաստվել ո՛չ միայն Հալեպի, այլև Բեյրութի և Դամասկոսի աչքի ընկնող կառույցներից շատերը:

Հալեպում հայկական մասնագիտություն է համարվել ոսկերչությունը: Ոսկերիչները ընդհանրապես գործունեության լայն ասպարեզ են ունեցել պերճանքներ սիրող արաբական շրջաններում: «Հալեպի ամեն ազգի բարձր ընտանիքների մոտ,— գրում է Սյուրմեյանը,— տակավին կտեսնվին հայկական հին ոսկերչության լավագույն նմուշները, ամեն տեսակի զարդեղեններ, մարգարտահեռ ու ադամանդակուռ»¹: Հայ ոսկերչության լավագույն գործերից է համարվել մասնավորապես սև ներկված ու լավ մշակված կաշվե զարդանկարչությունը:

Սիրիայի և Լիբանանի հայ արհեստավորների մեջ եղել են այլ մասնագիտության մարդիկ ևս՝ դարբիններ, ատաղձագործներ, և այլն²:

XVIII դարում հայկական գաղթօջախներ են գտնվել հյուսիսարևելյան Սիրիայում, ուր հայ բնակչությունը հաստատված է եղել շատ վաղուց՝ դեռևս խաչակրաց արշավանքների շրջանում:

Հայ բնակչության ստվար մի հատված XVIII դարում գտնվել է Անտիոքում և նրան մոտիկ գյուղերում: Ամանոսում հայկական գաղթօջախներ են գտնվել Փայասում, Ալեքսանդրետտայում, Սվեդիայում և Բեյլանում: Մուսադաղի վրա ապրող հայերը հիմնականում կենտրոնացված են եղել հայկական վեց գյուղերում, որոնց մասին խոսք կլինի քիչ հետո: Այս վեց գյուղերից բացի, հայ բնակչություն է ապրել արաբների ու ալաուտների հետ միասին այլ գյուղերում ևս: Զբերել Արայում մեծ թվով հայեր ապրել են Քեսապում և նրա մոտակա հայկական գյուղերում: Այս վայրերում հայերը բնակություն են հաստատել զլխավորապես XVII դարում՝ գալով Կիլիկիայից, Զեյթունից և Հաջնից: Հյուսիսային Սիրիայում ապրող հայության մեծ մասը եղել են մանր առևտրականներ և արհեստավորներ: Անտիոք քաղաքի հայ բնակչու-

¹ Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, հ. III, էջ 975:

² A. K. Sanjian. The Armenian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge, 1965, էջ 53-56:

թյան հիմնական զբաղմունքն է եղել արհեստագործությունը՝ կապված առևտրի հետ: Բեյլանում և մոտիկ վայրերում ապրող հայերի հիմնական զբաղմունքն է եղել այգեգործությունը: Քասաբի և մոտիկ վայրերի բնակչությունը զբաղվել է շերամապահության, ծխախոտագործությամբ և դափնի յուղի արդյունահանությամբ: Քասաբում արտադրված մետաքսը, ծխախոտը և դափնի յուղը արտահանվել են Հալեպ, Ադանա, Բեյրութ, Կիպրոս, Եգիպտոս և այլ վայրեր¹:

Իրենց արտադրանքով արտաքին շուկայի հետ են կապված եղել Մուսադաղի հայկական վեց գյուղերը, որոնց մասին վիճակագրական որոշ տեղեկություններ են պահպանում համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակից: Բիթիաս գյուղն ունեցել է 200 տուն հայ բնակչություն, Հաջի-Հաբիբլին՝ 250 տուն, Յողուն Օլուզը՝ 250 տուն, Խըղըր-բեկը՝ 150 տուն, Վագիֆը՝ մոտ հարյուր տուն, Քյաբուսիյեն՝ 200 տուն: Թվարկված վեց գյուղերում հաշվով էլ է վեց հազարից ավելի հայ բնակչություն: Նրանց հիմնական զբաղմունքն է եղել շերամապահությունը, այգեգործությունը և երկրագործությունը: Այս գյուղերում սիրված արհեստներից է եղել սանր և գդալ պատրաստելը, որը մեծ քանակությամբ արտահանվել է²:

Սիրիայում հայկական հնագույն գաղթօջախներից է հանդիսացել Լաթաքիան (նախկին Լավոդիկիան): Հնագույն շրջանում հայկական այս գաղթօջախն այնքան մեծ է եղել, որ եպիսկոպոսանիստ կենտրոն է դարձել: Նոր ժամանակներում Լաթաքիայի գաղթօջախը գտնվել է գրեթե խամրած վիճակում. XIX դարի երկրորդ կիսում միայն մի քանի հայ ընտանիքներ են մնացել:

Լաթաքիայի մոտիկ վայրերում, լեռների վրա, գտնվել են մի քանի հայկական գյուղեր, որոնց բնակչությունը XIX դարի երկրորդ կիսում, ըստ ականատեսների վկայության, գտնվել է անշափ ծանր վիճակում: Ծանապարհորդներից մեկը, այս գյուղերն այցելելուց և հայ գյուղացիների ծանր վիճակը տեսնելուց հետո, հետևյալն է գրել «Սիրոն» ամսագրին. «Սիրոս ի խոր խոցեցավ, երբ տեսա զիրենք լեռներու գլուխները ամենախեղճ խրճիթներու ու ծերպերու մեջ պատսպարված՝ հետին աղքատությամբ»³:

1 Ա. Կ. Sanjian, նշված աշխատությունը, էջ 54—55:

2 Գ. Գապեննյան, Սուրիա, քաղաքական, կրոնա-պատմական, կրթական և բնական տեսակետով (տե՛ս «Տաթև», 1927, էջ 242—243):

3 «Սիրոն», 1866, էջ 100:

Այս գյուղերից խոշորը հանդիսացել է Արամա գյուղը, որը պատկանել է Մուսադաղի ֆեոդալական տանը: Կալվածատերերը ստրկական վիճակում են պահել հայ գյուղացիներին: Առանց նրանց գիտության, հայ ընտանիքներն իրավունք չեն ունեցել անգամ տղա կամ աղջիկ ամուսնացնել: Հետագայում Արամա գյուղի մի մասը որպես կալվածք վաճառվել է ֆրանսիական և ռուսական հյուպատոսներին, որոնք պակաս անխիղճ չեն հարստահարել հայ գյուղացիներին, քան նախկին կալվածատերերը: «Ասոնք ամենքն ալ,— վշտով գրում է թղթակիցը,— թե՛ քրիստոնյա, թե՛ անքրիստոնյա գյուղատերերը, ըստ առաջին սովորության, խեղճ գյուղացու հայոց ոսկորները կծծեն և բուրթին հետ մորթին ալ վիրավորելով կխուզեն»¹:

Հայկական հին գաղթօջախներից է հանդիսացել նաև Դամասկոսը: Հայտնի է, որ Դամասկոսում հայկական ձեռագիր է գրվել 1445 թվականին: Նոր ժամանակներում ևս հայ գաղթօջախը շարունակում է պահպանել իր գոյությունը: Տեղեկություններ կան այն մասին, որ Դամասկոսի և Հալեպի հայ առևտրականները 1726 թվականի հունվարի 11-ին դիմել են Ռուսաստանի կառավարական սենատին և խնդրել թույլ տալ իրենց առևտուր անել Ռուսաստանում: Սենատը որոշում է ընդունել թույլ տալ նրանց ազատ առևտուր անել Ռուսաստանում այն պայմաններով, ինչ պայմաններով թույլատրված է եղել նոր-Ջուղայի հայ առևտրականներին²: Ավելի նոր ժամանակներում գաղթօջախը զգալիորեն նվազում է: Այդ բացատրվում է Դամասկոսի տնտեսական կյանքի անկումով և 1859 թվականին Դամասկոսում քրիստոնյաների, այդ թվում նաև հայերի կոտորածով: Ըստ տեղեկությունների, 1866 թվականին Դամասկոսի հայ բնակչության թիվը եղել է ընդամենը 120 հոգի³: Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Դամասկոսը տարագիր հայության կանգառներից մեկն է հանդիսացել. երբեմն այնտեղ կենտրոնացել է մինչև 30 000 հայ գաղթականություն:

Նոր ժամանակներում ավելի անմխիթար վիճակում է գտնվել Լիբանանի հայ գաղթավայրը: XVIII դարում Չմմառում գրված մի ձեռագիր հիշատակարանում լիբանահայ գաղթօջախների մասին

1 Նույն տեղում, էջ 101:

2 Армяно-русские отношения в XVIII веке, стр. 180.

3 «Սուրիահայ տարեցույց», 1929, էջ 218—223:

տեղեկությունից երևում է, որ խղճուկ բեկորներ են մնացած եղել նախկին ստվարաթիվ հայ գաղթավայրից: Հիշատակագիրը նշում է, որ Լիբանանի լեռներում կար փոքրաթիվ հայ բնակչություն, որը ցրված ապրում էր Զուգ Միքայելում, Ղազիրում, Զյունեյում, Զղարթում և Դեյրէլ Քամարում: Սրանցից բացի, հիշատակագիրը նշում է, թե Լիբանանում եղել են «բազում թվով հայ ընտանիքներ, որոնք «խառնեալ են ազգն մարինաց»: Զեյուբեթ Բիշարում նա մատնացույց է անում 15 վանք, որոնք մի ժամանակ պատկանելիս են եղել հայերին և որոնց վրա եղել են հայկական արձանագրություններ: Բեշարիի Հասուն կոչվող գյուղում նա հիշում է հարյուր ընտանիք, որոնք հայեր են եղել, և գյուղը կոչվել է նրանց տոհմանունով՝ «Պեյթ Արմենի»: Գյուղի նախկին անունը փոքր-ինչ ձևափոխված մնացել է, իսկ նախկին հայ բնակիչները ձուլվել են տեղացիների հետ¹:

Ըստ նույն հիշատակագրի տեղեկության, որը, դժբախտաբար չի ստուգվում պատմական այլ աղբյուրով, Սսից 1683—1690-ական թվականներին Լիբանան է եկել տասը հազար հոգուց բաղկացած գաղթականություն, որի ղեկավարն է եղել Ազարիա Ղարիբ անունով մի անձնավորություն²: Այս գաղթականության ճակատագիրը ևս մեզ հայտնի չէ:

XVII—XVIII դարերում Լիբանանը սակավաթիվ գաղթականություն է ընդունել գլխավորապես Թուրքիայից՝ մեծ մասամբ հալածված հայ կաթոլիկներ, որոնք ապաստանել են դավանակից մարտնիտների մոտ³: Այս կաթոլիկների հոգևոր կենտրոնն է հանդիսացել Զմմառի վանքը, որի մասին խոսք է եղել ներկա աշխատության առաջին հատորում:

Լիբանանի հայ բնակչությունը փոքր-ինչ ավելացել է Կարապետ Արթին Դավության փաշայի կառավարչության շրջանում:

**Չանգվածային
խոշոր գաղթը
Թուրքիայից:**

Լիբանանի հայերը մինչև 1895—1896 թվականները՝ Համիդյան ջարդերը, շատ քիչ են եղել: Բավական է ասել, որ 1847—1860 թվականներին Բեյրութում, որը հետագայում դարձավ հայկական ամենախոշոր գաղթօջախը Մերձավոր Արևելքում, եղել է ընդամենը 60 տուն հայ բնակչություն: Հետա-

¹ Շ. Թոփչան, Հայությունը Սուրիո մեջ (տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1928, էջ 747):

² Ս. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, Բեյրութ, 1951, էջ 258:

³ Մ. Թեբգյան, Զմմառու վանքը, էջ 77:

գայում հայ բնակչության թիվը փոքր-ինչ ավելացել է: Կուվինեյի հաղորդած տեղեկությունների համաձայն, 1891 թվականին այստեղ բնակչություն են հաստատած եղել վեց հարյուր շունչ հայեր: Նույն հեղինակը 1891 թվականին Սուր քաղաքում հիշում է 530 հայերի Մերջայունում: Նրա մոտիկ վայրերում ևս հիշվում է 201 հոգի հայ բնակչություն:

1895 թվականի ջարդերից հետո Կեսարիայից, Ադանայից, Սսից, Մարաշից, Այնթափից, Ուրֆայից, Տիգրանակերտից և ուրիշ վայրերից Բեյրութ և Լիբանանի մյուս քաղաքներն են գալիս բազմաթիվ հայ գաղթականներ: Բացի այդ, 1896-ի ջարդերից հետո Բեյրութ են տեղափոխում Մարաշի և Զեյթունի որբերին:

Հատկանշական է այն, որ նոր եկող հայ գաղթականությունը, ի տարբերություն նախորդ դարերում Սիրիա և Լիբանան եկող գաղթականության, որոնք հավաքական կյանք գրեթե չեն ունեցել, մտել են կաթոլիկ համայնքների մեջ և արագ ենթարկվել ձուլման, բնակչություն է հաստատում հավաքական ձևով, բաց անում դրպրոցներ, ստեղծում հասարակական և բարեգործական կազմակերպություններ, հրապարակում թերթեր և հանդեսներ, որոնք և նպաստում են գաղթավայրերի ամրացմանը ու գոյատևմանը:

Սկսած XIX դարի վերջերից մեծ թվով հայ ուսանողություն է սկսում հաճախել Բեյրութի ամերիկյան և ֆրանսիական համալսարանները: Մեծ է եղել հայ ուսանողության թիվը հատկապես բժշկական ֆակուլտետում:

Այս ուսանողությունը հայ հասարակական կյանքում կատարել է գործուն դեր. նրանցից ոմանք աչքի ընկնող մասնագետներ և հասարակական գործիչներ են դարձել հետագայում:

Վերին աստիճանի ծանր դրության մեջ են գտնվել Սիրիայի և Լիբանանի գաղթավայրերը համաշխարհային առաջին պատերազմի տարիներին: Պատերազմը բռնկվելուց հետո, թուրքական կառավարությունը Բեյրութի հայերին աքսորում է Դամասկոս: Չեքափակում է քաղաքի աչքի ընկնող բոլոր մտավորականներին և աքսորի ճանապարհին բոլորին էլ սրատում: Բանակ են կանչվում Բեյրութի համալսարանի բժշկական ֆակուլտետի ավարտած և սովորող բոլոր հայ ուսանողները, որոնցից քչերին է հաջողվում կենդանի վերադառնալ:

Սիրիայի և Լիբանանի հայ գաղթավայրի ստվարացման նոր շրջան հանդիսացավ համաշխարհային առաջին պատերազմը և նրան անմիջապես հաջորդող ժամանակաշրջանը: Մինչև պատերազմը ամբողջ Սիրիայում և Լիբանանում հաշվվել է ընդամենը

17—18 000 հայ բնակչություն: Սիրիան և Լիբանանը, պատերազմի տարիներին և հետո, հայ գաղթականություն են ընդունել մի քանի հոսանքներով:

Հայ գաղթականության առաջին հոսանքը Սիրիա և Լիբանան է եկել համաշխարհային պատերազմի առաջին տարիներին: Այս գաղթականությունը բաղկացած է եղել գլխավորապես հայ տարեգիրներից: Նրանցից քչերին է հաջողվել մազապուրծ ազատվել թուրքական իշխանությունների հետապնդումներից ու ջարդերից և գաղտնի ապաստանել Հալեպում, Հոմսի շրջանում, Դամասկոսում և Հավրանի գյուղերում՝ Դամասկոսից դեպի Երուսաղեմ ձգվող երկաթգծի երկայնքով:

Պատերազմի տարիներին Թուրքիայից եկած հայ գաղթականությունը Լիբանանում չի հաստատվել, որովհետև այնտեղ մոլեզուն է սովը, և հենց Լիբանանում այդ ժամանակ 300 000-ից ավելի մարդ մահացել է սովից:

1918 թվականին, երբ անգլիական և ֆրանսիական զորաբանակները գրավեցին Սիրիան ու Լիբանանը, նրանց կազմում կային 6000 հայ կամավորներ, այսպես կոչված «Հայ լեգեոնականներ», որոնք գործուն մասնակցություն ունեցան Արարայի և Դամասկոսի ճակատամարտերում: Նրանք, բարեկամ արաբ ժողովրդի հետ միասին, հերոսաբար կռվեցին ընդդեմ թուրք հարստահարիչների: Շուտով անգլո-ֆրանսիական բանակները, արաբների և հայերի ակտիվ գործակցությամբ, ջարդեցին թուրքական հարավային զորաբաժինները և դուրս բռնեցին նրանց Սիրիայից, Լիբանանից և Կիլիկիայից:

Թուրքական զորքերի հեռանալուց հետո հայ գաղթականությունը Սիրիայից և Լիբանանից սկսեց հոսել դեպի Կիլիկիա և այնտեղ նորից կառուցել իր օջախն այն ակնկալություններով, որ դաշնակիցները, որոնց հաղթանակի համար քիչ ջանքեր և քիչ զոհեր չէ, որ դրել է հայ ժողովուրդը, կճանաչեն նրա օրինական իրավունքները Կիլիկյան Հայաստանի նկատմամբ, և իրենք ապրելու մի փոքրիկ օջախ կունենան: Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականությունը այդ հույսերով ու համոզմունքներով է, որ տեղափոխվում էր Կիլիկիա:

Հայ գաղթականության հույսերը, սակայն, չարդարացան. երկու-երեք տարի անց, երբ հայ գաղթականությունը դեռ չէր ավարտել իր բնակելի նոր օջախի կառուցումը, հարկադրված եղավ նորից գաղթականական ցուպ վերցնել ձեռքը: Ֆրանսիական իշ-

խանությունները, ինչպես հայտնի է, գաղտնի պայմանագրով թուրքերին զիջեցին Կիլիկիան: Տարագիր հայությունը նոր հուսախաբություն ապրեց իմպերիալիստական պետությունների այս խարդավանքի համար: Նորից փաստվեց այն անհրեքելի իրողությունը, թե որքան անհեռատես են գտնվել հայ բուրժուական շրջանները, որոնք մեծագույն ջանասիրությամբ կազմակերպել են հայ կամավորական խմբերը և արյունոտ դաշտ են դուրս հանել հայ երիտասարդությանն այն ակնկալություններով, որ կարողանան շահել իրենց «դաշնակից» իմպերիալիստական պետությունների համակրանքը:

Երբ Կիլիկիան թուրքական տերության տակ անցավ, հայերը, բնական է, այնտեղ մնալ այլևս չէին կարող, իսկ մյուս կողմից՝ «դաշնակից» Անգլիան, հայ ժողովրդի ողբերգական այս ծանր շրջանում, փակած է եղել հայ գաղթականության մուտքը Եգիպտոս, Իրաք և Պաղեստին: Պատմական այս փաստը ևս ցուցանշում է իմպերիալիստական Անգլիայի բարոյական կերպարը, նրա բարոզած «մարդասիրությունը»:

Հայ գաղթականները, զրկված նյութական հնարավորությունից, ապաստանում են Սիրիայում և Լիբանանում: Անտանելի ծանրը պայմաններում, գերմարդկային ճիգեր թափելով, նրանց մի մասին է միայն հաջողվում հայթայթել օրվա ապրուստը և պահպանել ֆիզիկական գոյությունը:

Թե որքան է եղել Սիրիա և Լիբանան եկող հայ գաղթականության ճիշտ թիվը, վիճակագրության բացակայության պատճառով դժվար է ասել, մանավանդ որ գաղթականությունը հոսուն վիճակում է գտնվել. նրա որոշ մասը տեղափոխվել է Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Ֆրանսիա, Բալկաններ և այլ վայրեր:

Ըստ 1924 թվականին «Սիրիահայ տարեցույց»-ում հրատարակված մի հաշվետվության, հետևյալ թվով գաղթականություն է եղել Սիրիայում և Լիբանանում. Հալեպում՝ 48 000 հոգի, Բեյրութում՝ 15 000, Հոմսում և Համայում՝ 12 000, այլ քաղաքներում՝ 20 000, որբանոցներում՝ 10 000:

«Հայաստանի կոչնակ»-ի մեջ հրատարակված վիճակագրության համաձայն, Սիրիայում և Լիբանանում 1925 թվականին ապրելիս է եղել շուրջ 150 000 հայ բնակչություն, որից՝ Հալեպում և շրջակայքում՝ 90 000, Բեյրութում՝ 18 000, Դամասկոսում՝ 8000, Իսկանդերիեում՝ 8000, Լիբանանի մեջ ցրված՝ 6000, Քրապլսում և Զղարթայում՝ 5000, Բելիլում ցրված՝ 6000, Պատրոսում՝

3000, Չահլեում և շրջակա գյուղերում՝ 2000, Սուրում և Սաիդա-յում՝ 3000, Ճյունիում՝ 2500, Դաղերում՝ 2500¹:

Այստեղ բերված վիճակագրության մեջ Սիրիայի և Լիբանանի հայ բնակչության թիվը պակասեցված է: Սիրիա և Լիբանան եկող հայ բնակչության թիվը, չհաշված այդ երկրներում պատերազմից առաջ ապրող հայերին, հաշվում է շուրջ 125 000, որից 25 000 հոգի մահացել է սովից և համաճարակից, կամ փոխադրվել այլ գաղթավայրեր: Հայ բնակչությունը Սիրիայում և Լիբանանում տեղադրված է եղել հետևյալ կերպ. Հալեպի նահանգում՝ 55 000 հոգի, որից 25 000-ը՝ Հալեպ քաղաքում, Դամասկոսի նահանգում՝ 15 հազար, որից 13 հազար՝ Դամասկոս քաղաքում, Ալեքսանդրեթի սանջակում՝ 5 հազար, Ալլահուտի նահանգում՝ տասը հազար, Մեծ Լիբանանում՝ քառասուն հազար, որից 22 հազարը գտնվել է Բեյրութում²:

Սիրիայի և Լիբանանի հայության վիճակը ուսումնասիրող հանձնաժողովը Ազգերի լիգային ներկայացրած իր հաշվետվու-թյան մեջ, որը վերնագրված է «Սիրիայի հայության վիճակի մա-սին», առանձնահատուկ գովեստով է խոսվում հայ գաղթականնե-րի ձեռնարկած շինարարական աշխատանքների մասին. «Այսօր, — ասված է այնտեղ, — շնորհիվ բնակիչների շինարարական ոգուն, աղյուսե տներ են բարձրանում այս ու այն կողմերում: Իսկական քաղաքներ են կազմակերպվում...»³:

Նանսենի հանձնաժողովը նշում է նաև այն փաստը, որ հայ գաղթականներն ամենուրեք աշխատում են համահավաք բնակու-թյուն հաստատել, և այդ բացատրվում է նրանով, որ «Հայերը քանի որ հարստության որոշ աստիճանի շեն հասել, սիրում են խմբված լինել իրենց ցեղի մարդկանց հետ: Նրանք այդպիսի խըմ-բավորման մեջ հայտնի ապահովություն են գտնում: Այդ զգացու-մը բացատրվում է այն ազգությունների համար, որոնք միշտ ապ-րել են իրենց թշնամի միջավայրի մեջ»⁴:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և նրա-նից հետո Սիրիա ու Լիբանան եկած հայ գաղթականությունը կենտրոնացված չի եղել մի վայրում, այլ ցրվել է տարբեր քա-ղաքներում և ավաններում: Հայ գաղթականության բնակչություն հաստատած վայրերը հետևյալն են.

1 «Հայաստանի կոչնակ», 1925, էջ 794:

2 2ՊՁԱ, ֆ. 40, 113, գ. 374, էջ 18:

3 Նույն տեղում, էջ 19:

4 Նույն տեղում, էջ 20:

1. Հալեպ քաղաքն իր արվարձաններով, որոնցից կարևոր-ներն են՝ Նոր-Գյուղ կամ Մեյդան, Դավուզիե, Գերմանիկ և Շեյխ-Մագուտ:

2. Հալեպի նահանգի ավանները, որոնցից կարևորներն են՝ Ազեզ, Արաբ-Բունար, Ջարաբլուս, Աֆրին, Այն-էլ-Արուս, Ամուդա, Բաբ, Միմբիջ և Այն-Դիվար:

3. Հյուսիսային Սիրիան, Ջեզիրեի նահանգը, որ ունի հետև-յալ ավանները՝ Գամշլը, Հասիչե, Ռաս-յուլ-Այն, Դեր-Ջոր և Դեր-բեսիե:

4. Քեսաբի և Լաթաքիայի շրջանը, ուր հայերը հաստատվել են՝ Լաթաքիա քաղաքում, Քեսաբ, Գարադուրան, Նագուբիե, Ղընմիե, Ջիսր-էլ-Շղուր, Մեյդան-էքբեզ, Թարթուս, Թել-Աբիաթ, Թել-Քոչեք, Թել-Պրագ, Դերիք, և Ընկզիկ ավաններում:

5. Դամասկոսը և նրան մոտիկ քաղաքները՝ Հոմս, Համա և Սվեյտա:

6. Բեյրութի հետևյալ արվարձաններում՝ Նոր-Հաջըն, էշրե-ֆիե, Հայաշեն, Րմեյլ, Նոր-Մարաշ, Նոր-Սիս, Նոր-Ադանա, Թրատ և այլն:

7. Լեռնային Լիբանան, որի մեջ մտնում են՝ Անթիլիասը, Ջյունին, Ջիբեյլը, Ղազիրը, Բիքֆայեան, Ալեյը և Համմանան:

8. Բիքայի լեռնադաշտային շրջանում հայերը կենտրոնացել են հիմնականում չորս վայրերում՝ Չահլեում, Բահալբեկում, Ռա-յագում և Շթորայի շրջանում:

9. Հարավային Լիբանանի շրջանի Սուրում և Սայդայում:

Լիբանանում նոր ժամանակներում կազմակերպվել են մի շարք բարեսիրական հաստատություններ, որոնցից կարևոր դեր է կատա-րել Ազունեի ազգային բուժարանը, որը հիմնվել է 1923 թվակա-նին երեք հարևանությունների՝ հայ ազգային եկեղեցու, հայ կաթոլիկների և հայ ավետարանականների համատեղ ջանքերով: Սկզբում այն գտնվել է Ջյունիի մոտ, իսկ 1939 թվականին, Լեռ-նալիբանանի օդասուն վայրում՝ Ազունեում, կառուցվել է երեք-հարկանի սեփական մի շենք, ուր և հիվանդանոցը տեղափոխվել է: Ազունեի այս հիվանդանոցում բուժվում են թոքախտավորները ո՛չ միայն Սիրիայից և Լիբանանից, այլև Մերձավոր Արևելքի բոլոր գաղթավայրերից: Այս հիվանդանոցում են աշխատում մեծ հռչակ վայելող հայ բժիշկներ:

Մեր խնդրից դուրս է Սիրիայի և Լիբանանի ժամանակակից հայ գաղթավայրերի հասարակական և բարեգործական հաստա-տությունների, դպրոցների, պարբերական մամուլի և այլ խնդիր-

ների վրա կանգ առնելը: Այն հաջող տրված է Ս. Գասպարյանի աշխատության մեջ¹: Սակայն ցույց տալու համար Սիրիայի և Լիբանանի հայ բնակչության սերտ փոխհարաբերությունը տեղացի արաբ ժողովրդի հետ, անհրաժեշտ ենք համարում փոքր-ինչ կանգ առնել մի քանի կարևոր իրադարձությունների վրա:

**Հայ-արաբական
համագործակ-
ցությունը:**

Հայ և արաբ ժողովուրդների փոխհարաբերությունները Սիրիայում և Լիբանանում հիմնված են եղել փոխադարձ հասկացողության և հարգանքի վրա: Հայ գաղթականները, ինչպես ամենուրեք, այնպես և արաբական աշխարհում, շատ արագ հարմարվել են տեղական պայմաններին, յուրացրել տեղացիների լեզուն և բարբերը և օտար չեն համարել իրենց: Արաբները ևս խորթ աչքով չեն նայել հայերի վրա: Չէ՞ որ նրանք ևս դարեր շարունակ բախտակից են եղել հայերին և ճաշակել թուրքական արյունոտ լծի դառնությունը: Արաբներն իրենց երկրում հայերին տվել են քաղաքացիական իրավունքներ ու անհատական, առևտրական, հասարակական և մշակութային բոլոր անձնաշնորհումները:

Սիրիայի և Լիբանանի հայ բնակչությունը երախտագիտորեն գնահատելով արաբ ժողովրդի բարյացակամ և կարեկից վերաբերմունքը, սիրով է կապվել իր երկրորդ հայրենիքի հետ և հաստատակամ կանգնել իր նեղ օրվա բարեկամի կողքին՝ վերահաս բոլոր փորձությունների ժամանակ:

Համաշխարհային առաջին պատերազմի թեժ օրերին, երբ արաբները գործուն մասնակցություն էին ցուցաբերում դաշնակիցների ռազմական գործողություններին հարավային ռազմաճակատում, անգլիական և ֆրանսիական իշխանությունները, արաբներին սիրաշահելու նպատակով, խոսք տվեցին, որ պատերազմը վերջանալուց հետո թույլ կտան նրանց ազատություն ձեռք բերել և սեփական անկախ պետություն ստեղծել: Սակայն խոստացան՝ խաբեցին: Պատերազմը վերջանալուց հետո, ինչպես հայտնի է, 1920 թվականին Սան-Ռեմոյի կոնֆերանսում դաշնակիցները համաձայնության եկան և Սիրիան ու Լիբանանը հանձնեցին Ֆրանսիայի խնամակալությանը, իսկ Պաղեստինը, Հորդանանը և Իրաքը՝ Անգլիայի: Այսպիսով, Սիրիայում և Լիբանանում թուրք հարստացման փոխարինելու եկան անգլո-ֆրանսիական գաղութարարները:

¹ Ս. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, էջ 171—175:

Ֆրանսիական գաղութային իշխանությունները, հենվելով տեղի ֆեոդալական-կալվածատիրական վերնախավի վրա, Սիրիան և Լիբանանը կոտորակեցին վարչական մանր միավորների: Նրանք չնչին գներով սկսեցին արտահանել երկրի հումքը, արգելակեցին տեղի արդյունաբերության զարգացումը, ժողովրդի վրա ծանր հարկեր դրեցին և այլն: Այժմ արաբ ժողովրդի հիմնական խնդիրը դարձավ պայքարել ֆրանսիական գաղութարարների դեմ իր ազատության և քաղաքական անկախության համար: Գաղութարարների դեմ ուղղված այդ պայքարում միավորվեցին սոցիալական առաջադիմական բոլոր խավերը: Այդ պայքարին գործուն աջակցություն ցույց տվեց նաև Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորությունը:

1925 թվականի մայիսի 25-ին բռնկվեց Ջեբել Դրուզի գյուղացիական նշանավոր ապստամբությունը, որը արաբական ժողովրդի առաջին խոշոր զինված ելույթն էր ֆրանսիական իմպերիալիստների դեմ: Ֆրանսիական իշխանությունները փորձեցին այդ ապստամբությունը ճնշել տեղում կազմակերպված կամավորական ջոկատների միջոցով: Կամավորներ հավաքագրելու նպատակով ֆրանսիացիները դիմեցին նաև հայերին, սակայն վերջիններս ո՛չ միայն հրաժարվեցին կատարել նրանց պահանջը, այլև հանդես եկան արաբ հայրենասերների ջերմ պաշտպանների դերում: Որոշակի դիրք վերցրին համայնավարները (կոմունիստները), հնչակյանները և ռամկավարները, ինչպես և անկուսակցական կազմակերպությունները: Հայ ժողովրդական ճակատն իր առջև խնդիր էր դրել՝ համախմբված, միասնական ճակատով «Ամրապնդել Հայաստանի և Սուրիայի ժողովուրդների կապերը», լուծել սիրիահայ ներքին անհետաձգելի հարցերը և աջակցություն ցույց տալ սիրիական ժողովրդի ազատագրական շարժմանը: Ըստ որում, հայերը չոր խոստումներ չէր, որ տվեցին, նրանք կոնկրետ օգնեցին ապստամբներին՝ հայթայթելով նրանց զենք, զինամթերք և դեղորայք: Հայ առաջադիմական կազմակերպությունները հատուկ կոչով դիմեցին Սիրիայի և Լիբանանի հայությանը. «Պետք չէ զենք բարձրացնել սիրիացի եղբայրների դեմ, որոնք կոչվում են իրենց անկախության համար»¹:

Արաբական ժողովուրդների ազատագրական շարժումները ֆրանսիական գաղութարարների դեմ ավելի բուռն բնույթ ստա-

¹ Օ. X. Топузян, Участие армян в национально-освободительном движении Сирии и Ливана, (автореферат), Ереван, 1964, стр. 7.

ցան 1929—1933 թվականներին՝ տնտեսական համաշխարհային ճգնաժամի տարիներին, երբ ֆրանսիական իշխանությունները՝ ցանկանալով կանխել վաղահաս ճգնաժամը սեփական տնտեսության մեջ, դիմեցին բացահայտ կողոպուտի: Նրանք իրենց ձեռքը վերցրին Սիրիայի և Լիբանանի դրամական շրջանառությունը, ֆինանսները, էլեկտրականությունը: Այդ նոր դժգոհության տեղիք տվեց և խթանեց ազատագրական շարժումների ծավալմանը:

Ֆրանսիացիները մեծ ջանքեր գործադրեցին հայերին հեռու պահելու արաբ ժողովրդի ազատագրական շարժումներից. նրանք կտրեցին հայկական դպրոցներին տրվող նպաստը, արգելեցին հայերի հասարակական ժողովները, քանիցս սպառնացին հայ ղեկավար կազմակերպություններին, իրենց վարձու գործակալների միջոցով սպանել տվեցին հիսունից ավելի հայերի, որոնք մասնակցում էին արաբական ազատագրական շարժումներին, սակայն հայ աշխատավորությունը հաստատակամ շարունակեց կանգնած մնալ արաբ հայրենասերների կողքին:

Հալեպում, ուր կենտրոնացած էր ավելի քան 60 000 հայ բնակչություն, 1936 թվականի հուլիսին կազմակերպվեց «Սիրիահայ ժողովրդական ճակատ» կազմակերպությունը, որի մեջ մըտնում էին Սիրիայի առաջադիմական կուսակցությունները:

«Սիրիահայ ժողովրդական ճակատ»-ը եռանդուն մասնակցություն է ունենում մասնավորապես Ալեքսանդրեթի սանջակի շուրջը ծավալված պայքարին՝ 1938—39 թվականներին: Ֆրանսիական իշխանությունները համաշխարհային երկրորդ պատերազմի նախօրյակին ցանկանալով սիրաշահել Թուրքիային, ուզում են նրան զիջել Ալեքսանդրեթի սանջակը: Սիրիայի հայ բնակչությունը, տեղացիների հետ միասին, հանդես է գալիս կատաղի դիմադրությամբ: Սակայն ֆրանսիական գաղութարարները, ոտնահարելով սիրիական ժողովրդի օրինական իրավունքները, Ալեքսանդրեթի սանջակը հանձնում են Թուրքերին: Արաբ ճառախոսներից մեկը, գնահատելով Սանջակի շուրջը ծավալված պայքարում հայերի գրաված դիրքը, հետևյալն է հայտարարել. «Մեծապես կգնահատենք մեր հայ եղբայրներու դիրքը Սանջակի հարցի մեջ: Արդարև, մենք բոլորս ալ այժմս այս արաբական երկրի զավակներն ենք... Անցյալին ձեզ մեր դեմ, մեզ ալ ձեր դեմ գրգռեցին: Անոնք մեր երկու ժողովուրդներու ալ թշնամիներն էին: Այժմ

մենք բոլորս արաբական հայրենիքի միասնական զավակներն ենք, այսպես ալ կշարունակենք մեր պայքարը»¹:

Ֆրանսիական իշխանությունները, արաբական ժողովրդի ազատագրական շարժումների նոր վերելքի ճնշման տակ, հարկադրված են լինում ձեռնադրել Սիրիայի և Լիբանանի անկախությունը: Սակայն 1943 թվականի սեպտեմբերի 21-ին, երբ Լիբանանի խորհրդարանում հարց է դրվում սահմանադրությունից շնչել և հանել ֆրանսիական մանդատի մասին հոդվածը, ֆրանսիական կառավարության լիազոր ներկայացուցիչը ձերբակալում է Լիբանանի կառավարության նախագահ Բեշարի Հուրիին և պրեզիդենտ Ռիադ Սոհլիին: Այդ տեղիք է տալիս մասսայական վերդովմունքի արաբական շրջանակներում: Ժողովուրդը Բեյրութում դուրս է գալիս մասսայական ցույցի:

Արաբական ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող այդ օրերին, ֆրանսիական գաղութային իշխանությունները, ցանկանալով պառակտում մտցնել հայ և արաբ աշխատավորության մեջ, զրպարտչական լուրեր են տարածում, որ իբր թե Լիբանանի կառավարությունը մտադիր է սահմանափակել հայերի և սյուս քրիստոնյաների իրավունքները: Սակայն հայերը շեն ենթարկվում պրովակացիայի և շարունակում են ակտիվ մասնակցություն ունենալ Սիրիայում և Լիբանանում տեղի ունեցող բոլոր ցույցերին:

Լիբանանի վարչապետ Ռիադ Սոհլը, 1943 թվականի նոյեմբերի 30-ին, Բեյրութում հրավիրված պրեսկոնֆերանսում, գնահատելով հայերի մասնակցությունը նոյեմբերյան ցույցերին, ասել է հետևյալը. «Ես հայերու ներկայությունը այս երկրին մեջ կընդունեմ գրկաբաց և առանձին հաճությով: Անոնք այս երկրի անկախությունը զուցե մեզմե ավելի շատ կպաշտպանեն, որովհետև անոնք երկար ժամանակ պարած են բռնության տակ, պայքարած և զոհված են անկախության համար, հետևաբար լավ գիտեն անկախության արժեքը: Իմ կառավարության սիրտը բաց է հայերու համար»²:

Սիրիայի հանրապետության պրեզիդենտ Շյուբրի Քյուֆթալին, բարձր գնահատելով հայերի դիրքը արաբ ժողովրդի ազատագրական շարժումներում, հայտարարել է. «Չափազանց զգացված եմ հայերու հավատարիմ կեցվածքեն... Մեր հարգանքը և վստահու-

¹ «Ժողովրդի ձայն», 1938, հուլիսի 24: (Այս բաժնում օգտվել ենք Օ. Թոփուզյանի աշխատությունից):

² «Ժողովրդի ձայն», 1943, դեկտեմբերի 1:

թյունը հայերու հանդեպ համոզումի մը ուժ ունի: Դուք, որ այս երկրի հպատակներն եք 20—25 տարիներն ի վեր միայն, կվայելեք և պիտի վայելեք այն բոլոր իրավունքները; զոր արաբ ժողովուրդն ունի այս երկրի մեջ»¹:

Հայերը գործուն մասնակցություն են ունեցել նաև Սիրիայի և Լիբանանի դեմոկրատական շարժումներին: Սիրիայում և Լիբանանում քաղաքական անկախություն ձեռք բերելուց և պետական անկախություն ստեղծելուց հետո, իշխանության գլուխ անցավ տեղական բուրժուազիան, որը ոչինչ չարեց բարելավելու աշխատավորության դրությունը. միջոցներ չձեռնարկեց դուրս հանելու երկիրը օտարերկրյա մոնոպոլիստների տնտեսական կախումից, հրաժարվեց անցկացնել ագրարային ռեֆորմներ, երկրի տնտեսական վիճակը մնաց նույնը: Ավելին, բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հեղափոխական շարժումներից սարսափահար, արաբական բուրժուազիայի կոմպրոմիսորական թևը հանդես եկավ իմպերիալիստական երկրների հետ համագործակցելու և հեղափոխական շարժումները ճնշելու քաղաքականություն: Ահա թե ինչու արաբ աշխատավորությունը, դժգոհ այս քաղաքականությունից, իր պայքարի սուր ծայրն ուղղեց տեղական բուրժուազիայի դեմ:

Հայ աշխատավորությունը արաբ ժողովրդի հետ է եղել դեմոկրատիայի համար նրա մղած պայքարի բոլոր փուլերում: Նրանք արաբ հայրենասեր աշխատավորության շարքերում են գտնվել 1946 թվականի մայիսին՝ Լիբանանի, իսկ հունիսին՝ Սիրիայի համընդհանուր գործադուլին, ինչպես և համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին՝ ֆաշիզմի դեմ մղած պայքարի ծանր օրերին, 1954 թվականին Բաղդադի ագրեսիվ պակտին շմիանալու համար մղվող պայքարում և այլն: Հետադիմական շրջանների բոլոր փորձերը՝ ետ պահելու հայ աշխատավորությանը ակտիվ քաղաքական պայքարից, վերջացել են անհաջողությամբ:

Այդ պայքարից ահա մի դրվագ, որը կապված է Բաղդադի ագրեսիվ դաշինքին շմիանալու պատմության հետ. 1955 թվականի փետրվարի 24-ին Բեյրութ է ժամանում Թուրքիայի պրեզիդենտ Բայարը՝ նպատակ ունենալով համոզել Լիբանանի քաղաքական ղեկավար շրջաններին միանալու այդ դաշինքին: Արաբ աշխատավորության մասսայական հուզումներից վախենալով, Լիբանանի կառավարությունը հրաժարվում է ընդառաջել թուրք պրե-

¹ «Ժողովրդի ձայն», 1943, դեկտեմբերի 11:

զիդենտին: Թուրքական հետադիմական մամուլը, ցանկանալով այդ գործում հայերի մեղսակցությունը փնտրել, իր էջերում զրբպարտչական հաղորդում է հրապարակել, որ իբր թե Բեյրութի հայերը փորձել են այրել թուրք պրեզիդենտի պատվին Բեյրութում կառուցված շքակամարը և քաղաքի կենտրոնում երկու ումբ են պայթեցրել:

Կամ մի այլ փաստ ևս. 1957 թվականին թուրքական կառավարությունը փորձեց տապալել Սիրիայի իրեն ոչ համակիր կառավարությունը և հաջողություն չունեցավ. նա դիմեց բացահայտ սպառնալիքի. զորք կենտրոնացրեց Սիրիայի սահմանի վրա՝ նըպատակ ունենալով ներխուժել Սիրիա: Ճակատագրական այդ ծանր օրերին Սիրիայի հայ բնակչությունը նորից կանգնեց արաբական ժողովրդի կողքին և, նրան օգնելու համար, կամավորական ջոկատներ կազմակերպեց:

Հայ աշխատավորները գործուն մասնակցություն են ցուցաբերել նաև 1958 թվականին Շամունի ռեակցիոն կառավարության դեմ ուղղված քաղաքացիական կոիվներին: Բազմաթիվ հայ երիտասարդներ մտել են արաբ աշխատավորության շարքերը և կռվել Շամունի զորքերի դեմ:

Ուշագրավ է մի հայտարարություն, որ հրապարակել է Բեյրութի Մասլախ և Նոր Հաջրն թաղամասերի արաբ և հայ բնակիչների ներկայացուցչական ժողովը: Հայտարարության մեջ հետևյալն է ասված. «Այսօր, երբ Լիբանանը կդիմագրավե պատմական ծանր փորձություն (ակնարկում է 1958 թ. քաղաքացիական կոիվները—Ա. Ա.) մեր պարտականությունն է ավելի քան երբեք ամրապնդել արաբ և հայ եղբայրական կապերը, արգելք հանդիսանալու համար շարակամ մարդոց այն ճիգերուն, որոնք կմիտին թշնամություն սերմանել այս զույգ հարևանություններու միջև: Կոչ կրենք մեր թաղեցիներուն գիտակցության, զանոնք հրավիրելով միություն և եղբայրության. պաշտպանելու համար Լիբանանի անկախությունն ու ազդային գերիշխանությունը մեր ներքին գործերեն ներս կատարվելիք ամեն օտար միջամտության դեմ: Կեցցե Լիբանանը: Կեցցե հայ և արաբ եղբայրությունը»¹:

Հետաքրքիր է նաև այն հայտարարությունը, որն արել է ապստամբների ղեկավարներից մեկը՝ Զումբլադը. «Իմ շարքերու մեջ ունեի Բեյրութից եկած հայ երիտասարդներ, որոնք կռվի առաջին գծի վրա քաջաբար մարտնչեցան»²:

¹ «Մեր նշանաբանն է հառաչ», 1958, հուլիսի 7:

² «Զարթոնք», 1958, սեպտ. 21:

Անժխտելի փաստ է, որ հայ բնակչությունը թուրքիայից արաբական աշխարհ եկավ կողոպտված վիճակում: Սակայն ձեռներեց հայ գաղթականները արաբ ժողովրդի հյուրասեր հարկի տակ՝ ոչ միայն կարողացան արագ ոտքի կանգնել, այլև շուտով իրենց ձեռքը վերցրին երկրի տնտեսական որոշ կարևոր երասանակներ: Հայերը ղեկավար դիրքեր ունեն ծանր արդյունաբերության, առևտրի, արհեստների, տնայնագործության մեջ և այլն:

Լիբանանի պառլամենտի նախագահ Ադել Օսեյրանը խոսելով տեղացի հայերի մասին, հետևյալն է հայտարարել. «Ծն անձնապես կգնահատեմ հայ ժողովուրդը... հայերը Լիբանանին մեջ առաջադիմության, արվեստի, ճարտարվեստի, գիտությանց և կյանքի բոլոր մարզերուն մեջ օրինակներ հանդիսացած են մեզի, հիացումով միայն կրնամ խոսել հայերու մասին»¹:

Գաղթավայրի մշակույթը նոր ժամանակներում:

Սիրիայի հայ գաղթավայրի միջնադարյան մշակույթի մասին՝ կապված Հալեպի գրչության օջախի հետ, մասամբ խոսվել է ներկա աշխատության առաջին հատորում: Ավելի նոր ժամանակներում Սիրիայի և Լիբանանի գաղթավայրերի մշակույթը առանձնապես աչքի չի ընկել զարգացման իր մակարդակով: XVIII դարում հայկական մի շարք գաղթավայրերում արդեն քաղաքացիության իրավունք ձեռք բերած լուսավորական շարժումը դեռ չէր թափանցել Սիրիայի և Լիբանանի հայ գաղթավայրերը և այդ վայրերում դեռ չկային վանական շրջանակներից դուրս գտնվող բարձրորակ և ժամանակակից գիտություններին լայն ասպարեզ տվող դպրոցներ:

Սիրիայի և Լիբանանի հայ համայնքների մշակութային կյանքի դժգույն պատկերը ճշմարտացի ներկայացված է 1866 թվականի «Միլն Ավարայրի» հանդեսում տպագրված մի թղթակցության մեջ. «Հալեպը, — կարդում ենք այնտեղ, — հինգ հարյուրի չափ գերդաստանով հայ հասարակություն մը ունի, թե կղերական դասեն ու թե աշխարհականեն չկա երկու մարդ, որ իր մայրենի լեզուն գիտնա, որևիցե բան մը կարդալու և գրելու և անոր իմաստը իմանալու կարող ըլլա. չկա մարդ մը, որ յուր ամենափափուկ իրավունքն անգամ ոտքի տակ առնված ատենը զայն պաշտպանելուն կերպը գիտնա, ինչու որ՝ արդի հայը տգետ է ու կույր, և ապագա հայուն համար ալ ոչ դպրոց կա, ու ոչ ալ ունենալու հոգ»:

¹ «Արարտ», 1953, սեպտեմբերի 2:

Ասկե վաթարագույն թող համարվին Անտիոքը, Պելանը, Քիլիսը, Այնթափը, Պերեճիկը, Ուրֆան, Սևերեկը և այլն, և այլն»¹:

Հալեպահայ այս թղթակիցը հանդիսացել է Հովհաննես Քյուրքչյանովը, մի անձնավորություն, որը համարվում է նոր մտավոր շարժման նախակարապետը Սիրիայի հայ գաղթավայրում: Նա կազմել է ծրագիր, գրել է հոդվածներ և շատագուց եղել լուսավորության տարածմանը հայ համայնքներում: Քյուրքչյանովը գտնում է, որ հայ բնակչության հիմնական դժբախտությունը տգիտությունն է, որի դեմ պետք է պայքար ծավալել. լուսավորության համար անհրաժեշտ է դպրոցներ բաց անել և դաստիարակել մատաղ սերունդը, իսկ դպրոցներ հիմնելու համար պետք են նյութական միջոցներ: Այդ միջոցները գտնելու համար նա առաջարկել է հետևյալ ծրագիրը. Հալեպ քաղաքում, որպես տարանցիկ առևտրի կենտրոնի, պետք է կազմակերպել հայ առևտրական ընկերություն՝ «Արամյան առևտրական ընկերություն» անունով: Այդ ընկերությունը պետք է ունենա 500 000 ֆրանկ դրամագլուխ, որը պիտի կազմվի հազար բաժանորդների տված 500-ական ֆրանկ բաժնեվճարներից: Այդ դրամագլուխը պետք է տալ շահեցման գործույնյա առևտրականներին և ստացած շահույթը հատկացնել հայ մանուկների դաստիարակությանը: Ծրագրում նախատեսվում էր գիշերօթիկ դպրոց բաց անել Կիլիկիայի հարմար ավաններից մեկում: Այդ դպրոցը կոչվելու էր «Արամյան առևտրական ընկերության փոխատված դպրոց»: Դպրոցն ավարտած պատանիները պետք է ուղարկվեին արևմտաեվրոպական երկրներ՝ մասնագիտական կրթություն ստանալու և, վերադառնալով Կիլիկիա, նրանք պետք է աշխատեին բացվելիք արհեստագործական դպրոցում²:

Ի դեպ, Քյուրքչյանովը այդ ծրագիրն առաջարկելուց առաջ, Հալեպում 1860 թվականին, բաց է արել աղջիկների համար մասնավոր վարժարան, որը մի քանի տարվա կյանք է ունեցել: Ըստ տեղեկությունների, Հալեպում 1841 թվականին բացվել է տարրական դպրոց, իսկ 1880 թվականին այնտեղ գործել են հայկական երեք դպրոցներ, որոնցից երկուսը՝ տղաների համար, իսկ մեկը՝ աղջիկների: Ըստ Պոլիսի պատրիարքարանի պաշտոնական

¹ «Միլն Ավարայրի» 1866, էջ 408—409:

² Այս ծրագիրը շարադրված է «Միլն Ավարայրի»-ում, 1866 թվական, էջ 408—418), «Առաջարկություն ազգային հրապարակական դաստիարակություն հաստատելու ի Կիլիկիա» խորագրով հոդվածում:

տվյալների, 1901—1902 ուսումնական տարում Հալեպի հայկական դպրոցներում սովորելիս են եղել 687 աշա 'րտ և աշակերտուհի¹: Նույն տվյալների համաձայն, Անտիոքում և նրա մոտիկ վայրերում, ուր հայեր են ապրում, գործել են հայկական փոքրիկ դպրոցներ, ուր 1901—1902 ուսումնական տարում սովորելիս են եղել 440 աշակերտ և աշակերտուհի²:

Հայկական դպրոցների վիճակը, համեմատաբար, ավելի լավ է եղել Քեսաբի սանջակում: Այնտեղ գործել են ութ տարրական դպրոց, ուր 1910 թվականին սովորելիս են եղել ավելի քան 1100 տղաներ և աղջիկներ: Քեսաբի հայ գաղթօջախում կազմակերպվել է «Ուսումնասիրաց միություն», որի խնդիրն էր օգնել դպրոցական գործի զարգացմանը: 1882 թվականին Քեսաբի դպրոցներից մեկը վեր է ածվել մանկավարժական ուսումնարանի՝ խնդիր ունենալով հայկական դպրոցների համար մանկավարժ կադրեր պատրաստել³:

Դամասկոսում հայկական դպրոցը հիմնվել է 1849 թվականին և գործել որոշ ընդմիջումներով: Դարի վերջին Դամասկոսում գործել են հայկական երկու դպրոց, ուր սովորել են 310 աշակերտ:

Բեյրութում հայկական ծխական դպրոցը բացվել է 1859 թվականին Ս. Նշան վանքի շրջափակում: 1890 թվականից սկսած դպրոցին կից գործել է մանկապարտեզ: Ըստ տեղեկությունների, 1891 թվականին Բեյրութի հայկական դպրոցում սովորել են 100 երեխա, որոնցից 60-ը՝ տղաներ, 40-ը՝ աղջիկներ⁴:

Քիչ տեղեկություններ ունենք Լաթաքիայի հայկական դպրոցների մասին: Լաթաքիայում մինչև համաշխարհային առաջին պատերազմը գոյություն է ունեցել ութ դպրոց, որից երկուսը՝ արական միջնակարգ, մեկը՝ իգական միջնակարգ (երկուսում սովորել են 180 աշակերտ), երեք՝ արական տարրական և երկու իգական, որոնցում սովորել են 350 աշակերտ: Այսպիսով, ութ դպրոցներն ունեցել են ընդամենը 530 աշակերտ:

Սիրիայում և Լիբանանում հայ տպագրության և մամուլի մա-

¹ Տե՛ս «Վիճակացույց գավառական ազգային վարժարանաց Քուրթիո», 1901, 26-րդ աղյուսակ:

² Նույն տեղում, 27-րդ աղյուսակ:

³ K. Sanjian, The Armentian Communitis in Syria, էջ 91-92:

⁴ K. Sanjian, նշված աշխատությունը, էջ 84:

սին ոչինչ ասել չենք կարող, քանի որ մինչև համաշխարհային պատերազմը այդ գաղթավայրերում գոյություն չի ունեցել ոչ հայկական մամուլ և ոչ էլ տպագրություն: Մեծ եղեռնից հետո է, երբ բազմահազար հայ տարեգիրներ մուտք գործեցին Սիրիա և Լիբանան, այդ ժամանակվանից է, որ սկիզբ է դրվում և հայ տպագրությանը և հայ պարբերական մամուլին այդ գաղթավայրերում:

II. ԻՐԱՔԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆՔ¹

Հայաստանի հնագույն կապերը Միջագետքի հետ:

Պատմական Միջագետքը, որի տերիտորիայի վրա ուշ միջնադարում կազմավորվել է ներկայիս Իրաքը, Հայաստանի հարե՛վան այն երկրներից մեկն է, որը նրա հետ միասին պատմական ասպարեզ է իջել վաղեմի այն ժամանակներում, երբ մարդկային մշակույթի առաջին հիմնաքարերն էին դրվում Առաջավոր Արևելքում: Հնագույն այդ ժամանակներից սկսած հայ ժողովուրդը քաղաքական և կուլտուրական սերտ հարաբերությունների մեջ է գտնվել իր հարավային հարևանի հետ:

Ավելի քան երեք հազարամյակի ընթացքում հայկական գաղթօջախներ են ստեղծվել Միջագետքի մի շարք վայրերում: Սակայն նրանք միալար և երկարատև պատմություն չեն ունեցել և դեպքերի բերումով հաճախ են տեղից տեղ փոխադրվել, լուծվել ու նորից կենդանացել՝ Միջագետքում հանդես եկող և անհետացող քաղաքական խոշոր կազմավորումների շառաչուն հողի վրա: Գաղթավայրի պատմության ուսումնասիրությունը ուշադրավ և ուսանելի շատ դրվագներ ունի ինչպես հայ ժողովրդի, այնպես և Միջագետքի պատմության համար:

Հայաստանի և Միջագետքի փոխհարաբերությունները մեզ

¹ Նկատի ունենալով, որ Իրաքի հայ գաղթավայրի հին շրջանի և միջին դարերի պատմությունը այնքան էլ հարուստ չէ, ուստի նպատակահարմար չի համարվել առանձին տալ նախորդ հատորում և այժմ այն ներկայացվում է տվյալ գաղթավայրի նոր շրջանի պատմության հետ միասին:

տանում են պատմության հեռավոր խորքերը: Ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունների մեջ բազմաթիվ փաստեր են արձանագրված Հայաստանի և Միջագետքի նախաբնիկների միջև գոյություն ունեցող ռազմաքաղաքական հարաբերությունների մասին. երկու հարևան երկրներ երբեմն կովում են իրար հետ, երբեմն դաշնակցում: Մեր կարծիքով, այդ ժամանակաշրջանում պետք է որ ստեղծված լինի Շամիրամի և Արա Գեղեցիկի ավանդավալը, որը գրի է առել պատմահայր Մովսես Խորենացին¹:

Որոշ արևելագետներ ազգակցական կապեր են տեսնում Միջագետքում հանդես եկող արամեացիների և հայ-արամեաների միջև. ենթադրվում է, որ Միջագետքում հայ-արամեաների որոշ ցեղախմբեր, սեմական ժողովուրդների հուժկու ալիքների տակ, ձուլվել են տեղացիների հետ:

Հայաստանի և Միջագետքի հնագույն կապերի մասին առաջին հավաստի տեղեկությունը մեզ հաղորդում է հույն նշանավոր պատմիչ Հերոդոտոսը (484—425): Ըստ նրա տեղեկության, արմենները Եփրատի վրայով լաստանավերով ապրանքներ էին տեղափոխում Բաբելոն և վաճառում²:

Հնագույն այդ շրջանում դժվար է, իհարկե, մեծ կամ փոքր գաղթօջախներ փնտրել Միջագետքում: Համենայն դեպս, սկզբնաղբյուրներում այդ ապացուցող փաստերի չենք հանդիպում: Ծիշտ է, 520 թվականին, մեր թվականությունից առաջ, Բիհիստունի քարածայրի վրա պարսից Դարեհ թագավորի թողած արձանագրության մեջ տեղեկություն կա այն մասին, որ Արախս անունով մի հայ ապստամբություն է բարձրացրել Բաբելոնում Աքեմենյան Պարսկաստանի դեմ և տեղացիների օժանդակությամբ Բաբելոնի թագավոր հռչակվել: Սակայն այդ փաստը չի ապացուցում հայ գաղթավայրի գոյությունը Միջագետքում, ինչպես կարծում են ուսումնասիրներից ոմանք: Արախսն կարող էր լինել պարսկական բանակում ծառայող հայ զինվորական: Պետք է նկատի ունենալ, որ Աքեմենյան զորաբանակում միշտ էլ հայկական զորամասեր եղել են:

Ամենից հավանական է, որ Միջագետքի հյուսիսային շրջաններում հայկական փոքրիկ գաղթօջախներ ստեղծվել են Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանում: Տիգրան երկրորդը,

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 48—50:

² Հերոդոտոս, Պատմություն, I գիրք, էջ 194:

ինչպես հայտնի է, 89—85 թվականներին նվաճեց Ադիաբենը¹։ Այդ ժամանակ էլ, պետք է կարծել, որ հայ բնակչության որոշ հատվածներ եկել և բնակություն են հաստատել այստեղ։

Միջագետքի հյուսիսային շրջաններում հայկական գաղթօջախների գոյությունը փաստվում է գրավոր աղբյուրներով։ Ըստ հռոմեական պատմիչների տեղեկության, 53 թվականին, մեր թվականությունից առաջ, Կրասոսի արշավանքի ժամանակ, Խառանից ոչ հեռու հյուսիս ձգվող բլրաշարքի վրա հայեր են ապրելիս եղել²։ Մի այլ հեղինակ՝ Ապոլոնոսիոս Տիանացին, մեր թվականության 44-ին, Միջագետքում կատարած իր ճանապարհորդության ժամանակ, Միջագետքի հյուսիսում արաբական վայրերում ապրող հայկական գյուղեր է տեսել³։

Հայ գաղթօջախների առկայության մասին Միջագետքում ավելի որոշակի կարելի է խոսել Սասանյան ժամանակաշրջանում, երբ Միջագետքը ընկել էր պարսկական գերիշխանության տակ, իսկ Տիգրոսը դարձել նրանց մայրաքաղաքը։ Այս շրջանում հայկական խոշոր գաղթօջախ գտնվել է Տիգրոսում։ Այն բաղկացած է եղել գլխավորապես առևտրականներից, պետական պաշտոնյաներից և պատանդներից։ 387 թվականից հետո, ինչպես հայտնի է, Արևելյան Հայաստանն ընկել էր Սասանյան գերիշխանության տակ, ուստի հայ նախարարներն ի պաշտոնե հարկադրված էին երթևեկել Տիգրոս՝ իրենց սովերեն տիրակալների մոտ, պահել իրենց ներկայացուցիչները պարսկական արքունիքում, վստահության համար պատանդներ տալ և այլն։

Հայ պատմիչների տեղեկություններից երևում է, որ IV—V դարերում մի շարք անգամներ Հայաստանից մեծաթիվ գերիներ են տարվել Իրաք։ Այսպես, Փավստոսը վկայում է, որ Շապուհը 369 թվականին մեծ թվով գաղթականություն է տարել Հայաստանից և բնակեցրել «յերկիրն Խուժաստան»։ 451 թվականի ազատագրական շարժման մասնակիցներից ոմանց պարսկական Շապուհ թագավորն արքորել է «յերկիրն Բաբելացոց, ի գաւառ մի, զոր Շահուղն անուանեն»⁴։ Ժամանակի ընթացքում տարվող գերիներից բավականի մեծ թվով հայ գաղթականություն է կենտրոնանում Տիգրոս քաղաքում։

¹ 2. Մանանդյան, Տիգրան II և Հոռոմ, էջ 48—49։

² Ե. Տիշյան, «Հայաստանի կոչնակ», 1939, էջ 737։

³ Gutshmid, Kleine Schriften, III, p. 64. Այս և մի քանի այլ մեջբերումներ օգտվել ենք Ա. Ալպոյաճյանի «Պաղտատ» հոդվածից («Պարսկահայ տարեցույց», 1930, էջ 71—94)։

⁴ Եղիշե, Վանն վարդանայ և Հայոց պատերազմին, էջ 187։

Որ V դարում Միջագետքում բավականի թվով հայ բնակչություն էր ապրում, այդ երևում է այն փաստից, որ 410 թվականին Սահակ Պարթևի հրավիրած սյունհողոսին մասնակցել են Մծբնի թեմի ներկայացուցիչները, իսկ Մծբնի թեմի մեջ մտնում էին Աղձինքը, Մոկքը, Մավդեքը, Բեմինեն, Կորդուքը և Միջագետքի մի քանի այլ վայրեր¹։

Հայ գաղթավայրի գոյությունը V—VI դարերում փաստվում է նաև հայոց Քրիստափոր կաթողիկոսի (539—545) մի գրությամբ, որը նա ուղարկել է Ասորեստանի և Խուժաստանի հայ համայնքներին։ Այդ գրությամբ նա զգուշացնում է նրանց, որ խուսափեն հաղորդակցության մեջ մտնելու նեստորականների հետ որպես վտանգավոր աղանդավորների²։

Տեղեկություններ կան, որ Քրիստափոր կաթողիկոսն ինքն անձամբ գնացել է Միջագետքի հայ գաղթավայրը, շրջել է այնտեղ և անհրաժեշտ հանձնարարություններ տվել³։ Բնական է, եթե Միջագետքում մեծաթիվ հայ հատվածներ չգտնվեին, անիմաստ կլիներ կաթողիկոսի նման գրությունը կամ անձամբ նրա այցելությունը։

Վեցերորդ և յոթերորդ դարի առաջին քառորդում պարսկա-բյուզանդական կոիվների ժամանակ հայկական որոշ նախարարներ, զայրացած հայերի նկատմամբ Բյուզանդիայի վարած նենգ քաղաքականությունից, անցնում են Պարսկաստան և ապաստանում Միջագետքում։ Սեբեոսը պատմում է, որ 595 թվականին հայկական յոթը նախարարներ «գնացին միաբանությամբ հանդերձ իւրաքանչիւր գնդովք և դրաւու ի դուռն թագաւորին Պարսից... Իսկ նա խնդովեամբ ընկալաւ զնոսա և երեւելի շքեղութեամբ մեծացոյց պատուովք»⁴։

Հյուսիսային Միջագետքում մեծ թվով հայեր ապրելու մասին է վկայում նաև այն փաստը, որ 504 թվականին, երբ բյուզանդացիները գրավեցին Ամիդ քաղաքը և ցանկացան պատժել տեղի հայ բնակչությանը՝ ռազմական գործողությունների ժամանակ պարսիկներին օժանդակելու համար, տեղի հայ բնակչության մի

¹ J. Marquart, Erânšahr nach der Geographie des Ps. M. Xorenaci Berlin, 1901, էջ 25.

² Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. I, էջ 530։

³ Ե. Վ. Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցիների հարաբերությունները ասորացի եկեղեցիների հետ, էջ 120—124։

⁴ Սեբեոս, էջ 58։

մասին կոտորեցին, իսկ մյուսներին՝ թվով 18 600 հոգի, տեղափոխեցին Բյուզանդիոն:

Խոսելով Միջագետքի հայ գաղթավայրի մասին Սասանյան ժամանակաշրջանում, պետք է նշել, որ այն շատ մեծ չի եղել: Բացահայտ չափազանցություն է Վ. Մելքոնյանի այն պնդումը, որ «Նախքան 640 թվականը (այսինքն՝ նախքան խալիֆայության տիրապետությունը—Ա.Ա.) կրավի թե միլիոնն ավելի հայեր կային Իրաքի մեջ, որոնք մեծ մասով Քտեզիֆոն (այսինքն՝ Տիգրոնում—Ա.Ա.) կգտնվեին»¹:

Միջագետքի պատմության մեջ խոշոր բեկում տեղի ունեցավ VII դարում, մասնավորապես 637 թվականի Քադեսի ճակատամարտից հետո, երբ Իրաքում փաստական իշխանության տերը դարձավ արաբական տարրը, որն ընդունել էր մահմեդականություն: 750 թվականին հիմնվեց Աբբասյան խալիֆայությունը, որի մայրաքաղաքը դարձավ Բաղդադը: Աբբասյան խալիֆայությունը պահպանվեց բավականին երկար՝ մինչև 1065 թվականը, երբ Միջագետքը նվաճվեց սելջուկների կողմից:

Խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում որոշ անհանդուրժողականություն է ցուցաբերվել Իրաքի օտար համայնքների, այդ թվում նաև հայերի նկատմամբ: Խալիֆայության շրջանում Իրաքի հայ համայնքները գաղթականական նոր հոսանքներ չստանալով հայրենի երկրից, աստիճանաբար նվազեցին և ձուլվեցին:

Ճիշտ է, արաբական մատենագրության մեջ պատահում են կցկտուր տեղեկություններ առանձին հայերի մասին, որոնք, իշխանական փառքի ետևից ընկած, եկել են Միջագետք, մահմեդականություն ընդունել, ծառայության մտել արաբական բանակում և վարչական ապարատներում ու հաճախ մեծ պաշտոններ գրավել: Մեր նպատակից դուրս է այդպիսի հայ գործիչների մասին խոսելը, որովհետև նրանց գործունեությունը ոչնչով կապված չի եղել իրաքահայության հետ, բացի այդ, նման հայերի մեծ մասը եղել են բախտախնդիր մարդիկ:

Խալիֆայության ժամանակաշրջանում զանգվածային խոշոր թիվ կազմող հայ բնակչություն է գերավարվել Միջագետք: Հայ մատենագրության մեջ բազմաթիվ տեղեկություններ կան այդ մասին: Այսպես, 640 թվականին, երբ արաբները գրավեցին Դվի-

նը, տեղի բնակչությունից 35 000 գերի տարան Ասորեստան¹: Ըստ Քովմա Արծրունու տեղեկության, Աբուսեթը 850 թվականին ձերբակալելով Տարոնի իշխան Բագրատին, Տարոնի բնակչությանը գերի է տանում և վաճառքի հանում Սիրիայում²: Կաղանկատվացին վկայում է, որ հայ բնակչության մի այլ հատված գերավարել և Բաղդադ է տեղափոխել Բուղան 852 թ.³:

Գերավարության մասին հայ պատմիչների հաղորդած այս տեղեկություններից երևում է, որ հայ բնակչությունը Միջագետք էր տարվում ո՛չ թե այնտեղ գաղթօջախ ստեղծելու, ինչպես վարվել է հետագայում Շահաբասը, այլ «վաճառակուռ անելու», այսինքն՝ շուկաներում որպես ստրուկ վաճառելու նպատակով:

Հայ գաղթօջախները Միջագետքի հյուսիսային սահմանի վրա սկսում են ստեղծվել X դարում: Այդ այն ժամանակն էր, երբ Բյուզանդական կայսրությունը խալիֆայության դեմ մղած պաշտպանողական պատերազմներից անցել էր հարձակողական պատերազմների և գրավել Սիրիայի ու Միջագետքի հյուսիսային շրջանները: Բյուզանդացիների գրաված այս շրջաններից մահմեդական բնակչությունը հեռանում էր արաբական նահանջող բանակի հետևից՝ թողնելով իր բնակավայրերը: Բյուզանդացիների գրաված վայրերում ստեղծվում էին բնակչազուրկ ազատ տարածություններ, որոնց վրա և բյուզանդական իշխանությունները բերում բնակեցնում էին հայերին, հույներին և ասորիներին:

Տեղեկություններ կան, որ X դարի վերջերում Իրաքի հյուսիսային շրջաններում այնքան հայ բնակչություն է կենտրոնացած եղել, որ անհրաժեշտ է եղել առանձին թեմ ստեղծել: Այդ թեմը ենթարկվել է Աղթամարի կաթողիկոսությանը. նրա հարավային սահմանը հասել է մինչև Մուսուլ⁴:

Սակայն Միջագետքի այս նոր գաղթօջախներին ևս վիճակված չէր երկար կյանք ունենալ. նրանք ենթարկվեցին մեծ փորձությունների XI դարի կեսերին, երբ սելջուկները նվաճեցին Միջագետքն ու սկսեցին իրենց սովորական վայրագությունները:

Սելջուկները անխնա կոտորում էին նվաճված երկրի բնակիչներին, ավերում քաղաքները և գյուղատնտեսական զարգացած

¹ Վ. Մելքոնյան, Իրաք և հայերը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1946, № 4, էջ 112):

¹ Սերբոս, Պատմութիւն Հայոց, էջ 10:

² Քովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 131:

³ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից, էջ 380:

⁴ Դ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 192:

ըրջանները վեր ածում անապատի: Սելջուկների վայրագություններից մեծ չափով տուժեցին առաջին հերթին հայերը:

Հետագայում Իրաքի հյուսիսում ստեղծված հայ գաղթօջախները նոր հարված ստացան մոնղոլների՝ արշավանքից: Մոնղոլները 1258 թվականին գրավեցին Բաղդադը՝ հազար ու մի գիշերների հեքիաթային այս քաղաքը, և ենթարկեցին աննկարագրելի կործանման: Սրի ու հրի փոթորիկի մեջ խորտակվեց դարերի իմաստությամբ ստեղծված արաբական գիտության և կուլտուրայի այս աշխարհահռչակ գանձատունը:

Հայ մատենագրության մեջ պահված տեղեկություններից երեւում է, որ մոնղոլական այս արշավանքի ժամանակ Բաղդադի հայ գաղթօջախը, համեմատաբար, քիչ է տուժել: Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ Հուլավուի կինը՝ Տոքուզ խաթունը, քրիստոնյա էր, խնդրեց իր ամուսնուն, որ խնայի Բաղդադի քրիստոնյաներին, չկոտորի նրանց և թույլ շտա կողոպտել նրանց գույքը¹:

XIII դարում, երբ ստեղծվում են շատ ու քիչ նպաստավոր պայմաններ, Իրաքում սկսում են առաջանալ նոր գաղթօջախներ Բաղդադում և Բասրայում: Պատմական տեղեկություններ կան այն մասին, որ 1222 թվականին այնքան շատ հայ բնակչություն է հավաքված եղել Բասրայում և նրա շրջակայքում, որ նոր թեմ է ստեղծվել²:

1354 թվականին Սուլթանիայում գրված մի ձեռագրի հիշատակարանում հիշվում է Բաղդադի հայ համայնքի հոգևոր առաջնորդը՝ Սարգիսը, որպես քորեպիսկոպոս Բաղդադի³: Իրաքում, պետք է կարծել, որ զուգահեռ գոյություն է ունեցել երկու թեմ՝ Բաղդադի և Բասրայի:

Հայ բնակչության մի այլ խումբ XIV դարում գտնվել է Մուսուլում և նրա մոտիկ վայրերում: Այդ եզրակացությունն են մեզ բերում պատմական հետևյալ փաստերը: 1352 թվականին Մուսուլում հայկական ձեռագիր է գրվել: Եթե այնտեղ հայկական համայնք չլիներ, հայ գրչություն գոյություն ունենալ և, հասկանալի է, ձեռագիր գրվել չէր կարող:

Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը գանգատվում է, որ 1336 թվականին քանդել են Մուսուլի քրիստոնեա-

կան եկեղեցիները, որոնց մեջ, անշուշտ, եղել է նաև հայկական եկեղեցի, ուր պետք է որ գրված լիներ վերը հիշված հայկական ձեռագիրը:

XIV դարում Մուսուլի մոտիկ Արբելա քաղաքում և Քարամլես գյուղաքաղաքում հիշվում են հայ համայնքներ⁴:

Իրաքի հայ գաղթավայրը խորտակիչ հարված ստացավ Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակ: Ըստ տեղեկությունների, Լենկ-Թեմուրը Իրաք է արշավել երկու անգամ՝ 1397 և 1401 թվականներին: Ռստակես գրիչը, 1397 թվականին ընդօրինակած ձեռագիր հիշատակարանում, Լենկ-Թեմուրի առաջին արշավանքի մասին խոսելիս նշում է, որ Բաղդադը և Մերդինը գրավելիս «Ձամենեսեան ի սուր սուսերի մաշեաց և հրով այրեաց և զորս գերի վարեաց»⁵: Իր հիշատակարանի վերջում գրիչը դառնացած նշում է՝ «Արդարութիւն ամենայն ուրեք նուազեալ է և յանիրաւութիւն յամենայն կողմանց զօրացեալ»⁶:

Լենկ-Թեմուրի երկրորդ՝ 1401 թվականի արշավանքի մասին տեղեկություն է մեզ հաղորդում Ոստանցի մի գրիչ: Լենկ-Թեմուրը, գրում է նա, մեծ կատաղությամբ եկավ Մերդին, քարուքանդ արեց, քաղաքը կրկնավար հող դարձրեց, բայց բերդը չկարողացավ առնել: Այնուհետև տեղի քրիստոնեների «ըշտ գերի եբեր»⁴:

Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակ այնքան հիմնովին են ոչնչացված եղել հայկական գաղթօջախները Իրաքում, որ XV դարի առաջին քառորդի պատմական սկզբնաղբյուրներում Իրաքի հայկական գաղթավայրի մասին այլևս որևէ վկայություն չենք հանդիպում: Տեղեկություններ կան միայն հայ բնակչության գերավարության մասին: Այսպես, Գրիգոր Մերենցը, իր 1416 թվականի շափածո մի հիշատակարանում հաղորդում է, որ Ղարա Յուսուֆը ասպատակել է Ախլցխայի շրջանը և տասը հազար հոգի տեղի հայ բնակչությունից գերի տարել Բաղդադ, Եգիպտոս և Խորասան⁵: Տարել է, անշուշտ, արևելյան շուկաներում վաճառքի հանելու գերիներին, ուր և նրանք ասիմիլիացիայի են ենթարկվել:

XV դարի երկրորդ քառորդում Իրաքի մարած գաղթավայրերից նորից կյանք է առնում միայն Մերդինը, ուր գրվում և ընդօրինակվում են հայկական ձեռագրեր: Պետք է ենթադրել, որ Մեր-

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 382:

2 Տե՛ս Ա. Ալաջաճյան, 299, II հ., էջ 396:

3 Մատենադարան հայկական թարգմանության, էջ 145—146:

1 Տե՛ս «Ավետիք», 1945, էջ 55:

2 ԺԳ դարի հայերեն ձեռ. հիշատակարաններ, էջ 618:

3 Նույն էջում:

4 Նույնը, էջ 4:

5 Նույնը, էջ 282:

դինի գաղթօջախը այս շրջանում ստվար բնակչություն է ունեցելը Այդ երևում է Հակոբ գրչի 1452 թվականին գրած մի հիշատակարանից, որի մեջ Մերդինը հիշված է որպես եպիսկոպոսական թեմ: Գրիչը ընթերցողներից խնդրում է հիշել Հովհաննես «վերատեսչին քաղաքին» և Տավել անունով մի այլ հոգևորականի¹:

Միջագետքում ապրող հայ բնակչությունը շատ է վնասվել հաճախակի կրկնվող համաճարակներից:

XVII դարում իրաքահայ գաղթօջախներից նորից աշխուժանալ են սկսում Բաղդադն ու Բասրան²: Եվրոպացի ճանապարհորդ Ջորջ Մանվարինկը իր ուղեգրության մեջ հաղորդում է, որ Բաղդադ քաղաքը մեծ առևտրի վայր է, այնտեղ են հաճախում հնդիկ, հայ, պարսիկ, թուրք, վենետիկցի և բազմաթիվ հրեա վաճառականներ³: Նույն ճանապարհորդը Բաղդադում բնակություն հաստատած արաբ, հրեա և թուրք բնակիչների կողքին հիշում է նաև հայերին:

Իրաքահայ
գաղթավարը
XVII—XVIII
դարերում:

XVII դարի ութսունական թվականներին Բաղդադը՝ պատմական Բաբելոնը, որպես առևտրական կենտրոն սկսում է հաճախ հիշվել հայկական հիշատակարաններում և ուղեգրություններում: Եվրոպացի մի ճանապարհորդ՝ Պետրո Տեքստրոն, որը 1604 թվականի վերջերին եղել է Բաղդադում, իր ուղեգրության մեջ նշում է, որ Բաղդադում փոքրաթիվ քրիստոնյա հայեր են ապրում:

Եվրոպացի այս ճանապարհորդի, ինչպես և մյուսների հաղորդած տեղեկությունները Բաղդադում ապրող հայերի մասին, որոնք ավելորդ ենք համարում մեջ բերել, անշուշտ վերաբերում է բուն քաղաքում ապրող բնակչությանը, այլապես քաղաքի արվարձաններում և մոտիկ գյուղերում բավականի թվով հայեր են ապրել:

XVII դարի ութսունական թվականներին Բաղդադը դառնում է հայ գրչության օջախներից մեկը Մերձավոր Արևելքում: Մեզ հայտնի են գրչության այդ օջախում գրված և մանրանկարված մի շարք ձեռագրեր⁴:

¹ Ժն դարի հայերեն ձեռ. հիշատակարաններ, հ. II, էջ 27:

² Նույնը, էջ 27:

³ Ն. Վ. Սայիշյան, տե՛ս նրա հոդվածը «Ավետիք» ամսագրում, 1945, էջ 55:

⁴ Հ. Վ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց Վիեննայի Մխիթարյան մատենադարանի, էջ 31:

XVII դարում Իրաքի հայ գաղթավայրը ստվարանում է այնտեղ եկող գաղթականության երեք նոր հոսանքով:

Առաջին հոսանքը գալիս է Շահաբասի բռնագաղթից հետո. Սպահան քշված հայ գաղթականներից ոմանք գալիս և բնակություն են հաստատում Իրաքի խոշոր և նավահանգստային քաղաքներում:

Հայ գաղթականության երկրորդ հոսանքը Իրաք է գալիս XVII դարի սկզբներում Թուրքիայից՝ ջալալիների այնտեղ կատարած խժոժությունների հետևանքով:

Պետրո Դելլա Վելան, որը 1616 թվականին եղել է Բաղդադում, ամուսնացել այնտեղ մի հայ աղջկա հետ և մոտիկից ծանոթ է Բաղդադի հայկական համայնքի հետ, հայտնում է, որ շատ ժամանակ չէ, որ «Դիարբեքիից և Մերդինից հայ ընտանիքներ են եկել Բաղդադ» խույս տալով ջալալիների վտանգից⁵:

Հայ գաղթականության երրորդ հոսանքն Իրաք է գալիս 1638 թվականին՝ Բաղդադը թուրքերի կողմից գրավելուց հետո: Սակայն չի կարելի համաձայնվել բանասեր Մելքոնյանի հայտնած այն կարծիքի հետ, որ իբր թե Բաղդադի մնացած գաղթօջախը հիմնադրվել է հենց այդ ժամանակից⁶:

Որ, իրոք, թուրքերի գրավումից շատ առաջ հայ բնակչություն եղել է Բաղդադում, այդ երևում է ո՛չ միայն վերը բերված եվրոպացի ուղեգրիչների տեղեկություններից, այլև հայկական մի ձեռագիր հիշատակարանից, որը ակադ. Հ. Աճառյանի կարծիքով, գրված պետք է լինի XV կամ XVI դարերում: Չեռագրի պատվիրատուն է եղել թավրիզցի Ղուկաս անունով մի հոգևորական, որը հիշատակարանում հիշված է իբրև «Եպիսկոպոս քաղաքին Բաբելոնի Պարսից երկրին և Սագաստանեայ նահանգին»⁷: Թուրքերը, ինչպես հայտնի է, Բաղդադն առաջին անգամ գրավեցին 1534 թվականին, իսկ մինչ այդ այն գտնվում էր Պարսկաստանի սահմանների մեջ, ինչպես հիշված է հայկական ձեռագրում: Հետևապես, այն գրված պետք է լինի 1534 թվականից առաջ: XV կամ XVI դարերում հայ հոգևոր առաջնորդի հիշատակությունը անվիճելի ցույց է տալիս, որ հայ համայնք է այնտեղ եղել. առանց «հոգևոր հոտի», հասկանալի է, հոգևոր առաջնորդ լինել չէր կարող:

⁵ V. Melkonian, An historikal glimpse of the armenians in Iraq Basra, 1957, p. 3.

⁶ Հ. Աճառյան, Ցուցակ հայ ձեռագրաց թավրիզի, էջ 53:

Բաղդադից հետո, ըստ խոշորության, Իրաքի հայկական մյուս գաղթօջախն է հանդիսացել Բասրան: Ըստ տեղեկությունների, Բասրան հայ բնակչություն է ունեցել շատ վաղուց, սակայն նա զանդվածային խոշոր հայ գաղթականություն ընդունել է XVIII դարի առաջին քառորդում: Պարսկական իշխանությունների հարստահարությունների, ինչպես և աղվանների Պարսկաստան մտնելու, Սպահանը գրավելու և ասպատակելու հետևանքով, Նոր-Ջուղայից բավականին թվով հայեր են եկել և հաստատվել Բասրայում: Սակայն այս գաղթականությունը երկար չի մնացել այստեղ. օդի վատության, ինչպես և աշխատանքի ասպարեզը սահմանափակ լինելու հետևանքով, նրանց մի մասը տեղափոխվել է Սուրաթ, իսկ մյուս մասը՝ Բաղդադ¹:

XVII դարի կեսերում տեղեկություններ ունենք նաև Բուշիրի, Բանդար Աբասի, Լինդայի, Խերիկի և այլ մեծ ու փոքր հայ գաղթօջախների մասին:

Հայ գաղթօջախների բնակչության մեծ մասը պատկանել է սոցիալական ցածր խավին՝ արհեստավորներ, այգեգործներ, նավահանգիստներում աշխատող գործավորներ և այլն: Անհիմն է պատմական գրականության մեջ քաղաքացիություն ստացած այն կարծիքը, որ իբրև թե Իրաքի հայ գաղթավայրի բնակչությունը, հիմնականում, բաղկացած է եղել առևտրականներից:

Իրաքի հայկական համայնքներում եղել են, իհարկե, նաև առևտրականներ, գոհարավաճառ մեծահարուստ խոջաներ, որոնք իրենց ներկայացուցիչներն են ունեցել Հնդկաստանում և եվրոպական մի շարք երկրներում: Բասրայում, օրինակ, եղել են այնպիսի խոշոր վաճառականներ, որոնք օվկիանոսային նավեր են ունեցել և նավարկել Հնդկական օվկիանոսում²: Սակայն այդպիսի մեծահարուստ հայերի թիվը շատ քիչ է եղել: Գաղթավայրի բնակչության մեծամասնությունը եղել է աշխատավորությունը, որն անխիղճ շահագործման է ենթարկվել ինչպես օտար, այնպես և ազգակից հարուստների կողմից:

XVII դարի վերջերում և XVIII դարի սկզբներում հայ գաղթականներ են գալիս Իրաք և բնակություն հաստատում Նոր-Ջուղայից, Համադանից, Քիրմանշահից և Պարսկաստանի այլ վայրերից: Դատելով Բաղդադի գերեզմանատան շիրմաքարերի ար-

ձանագրություններից, որոնց մեջ նշվում է մահացածի որտեղացի լինելը, բաղդադահայերի մեջ զգալի թիվ են կազմել շոտթցիները, դափանցիները, ագուլիսցիները և շիրազցիները: Փոքր թվով գաղթականներ եկել են նաև Տիգրանակերտից, Մերդինից, Սերթից և Ուրֆայից: Տարբեր վայրերից եկող ահա այս հայերը, երկար ժամանակ ապրելով կողք-կողքի, ստեղծում են հայկական յուրատեսակ մի խառնուրդ բարբառ, որը լեզվագիտության մեջ հայտնի է «իրաքահայ բարբառ» անունով:

Իրաքի հայ գաղթավայրի ամենից բարգավաճ շրջանը XVIII դարի երկրորդ կեսն է, երբ Իրաքը, հատկապես հարավային նավահանգստային քաղաքները, դառնում են տարանցիկ առևտրի խոշոր կենտրոններ: Ամենայն հայոց կաթողիկոսարանի վավերագրերից երևում է, որ Իրաքի թեմը համարվել է «տերունի», այսինքն՝ էջմիածնին անմիջապես ենթակա թեմ: Այդ թեմի մեջ մտնող կարևոր կենտրոններից հիշվում են հետևյալ վայրերը՝ Բաղդադը, Ղարաշորան, Բասրան, Բանդարբուշիրը, Բանդարբուկը, Խարկը, Բանդարբասը և նրանց մոտիկ գյուղերը և ավանները¹: Այդ վայրերը բազմաթիվ անգամ հիշվում են այլ վավերագրերում ևս: Կաթողիկոսական դիվանում պահվել է Սիմեոն կաթողիկոսի 1775 թվականի մայիսի 26-ի շրջաբերական կոնդակի պատճենը՝ հասցեագրված Իրաքի հետևյալ հայաշատ կենտրոններին՝ «ի Բաղդադ, ի Ղարաշորան, ի Բասրա, ի Բանդար Բուշեռ և շրջակայս նոցին»²:

Վերը բերված երկու վավերագրից կարելի է ենթադրել, որ Իրաքի կենտրոնական քաղաքներից բացի, հայ բնակչությունն ապրել է նաև քաղաքամերձ վայրերում և գյուղերում: Իսկ այդ փաստը վկայում է, որ պակասավոր են վիճակագրական այն տվյալները, որոնք հաղորդում են եվրոպացի ուղեգիրները:

Իրաքի հայ գաղթօջախները 1771—1772 թվականներին անշափ ծանր հարված են ստացել համաճարակից, գուցե ավելի ծանրը, քան միջնադարյան Իրաքի համար սովորական դարձած կոտորածներից որևէ մեկի ժամանակ: Այդ թվականներին Բաղդադում է գտնվել Մխիթարյան միաբանության անգամ պատմաբան Մ. Չամչյանը: Նա 1771 թվականի սեպտեմբերի 12-ին գրած իր նամակում հայտնում է, որ ինքը տեղեկություն է ստացել, թե

¹ Տե՛ր-Նովհանյանց, Պատմութիւն Նոր-Ջուղայի, հ. II, էջ 108:

² Վ. Մելիքյան, Բասրայի գաղութը (տե՛ս ընդ ազգարար», 1952, 6—8, էջ 56—57):

¹ Դիվան հայոց պատմության, հ. III, էջ 801:

² Մաշտոցի անվան մատենադարան (ՄԱՄ), № 4481, ք. 174բ:

Բասրայում համաճարակից մահացել են 55 000 հոգի, որից 4000-ը եղել են հայեր¹:

Հաջորդ տարին՝ 1772 թվականին վենետիկի Մխիթարյան միաբանության մի այլ անդամ՝ Աթանաս եպիսկոպոսը, իր նամակներից մեկում խոսելով Իրաքում մոլեզնող համաճարակի մասին, հետևյալն է գրում. «Ի Նինվե, Մուսուլ և ի Մերետին, և ի Դիարբեքր և ի էնկյուրի այնքան ուժգին և սաստիկ է մահը, որ շիջեցայց զբազում տունս, մինչ չկարել միմեանս օգնել թաղումն»²:

1831 թվականին Բաղդադում նորից բռնկում է ժանտախտը: Ըստ տեղեկությունների, համաճարակից առաջ քաղաքում հաշվել է 130 տուն հայ բնակչություն՝ բաղկացած 673 շնչից, իսկ համաճարակից հետո քաղաքում մնացել են ընդամենը 27 հոգի. հայ բնակչության մի մասը մահացել է համաճարակից, իսկ մյուսները տեղափոխվել են այլ վայրեր³:

XVII—XVIII դարերում կաթոլիկ միսիոներական կաղմակերպությունները, ինչպես հայտնի է, լայն աշխատանք են ծավալել Արևելքում՝ «անհավատներին և թերահավատներին ուղիղ հավատքի բերելու համար»: «Թերահավատներին» շարքին են դասվել նաև հայերը: Կաթոլիկ միսիոներների ուշադրությունից, բնական է, չէր կարող վրիպել իրաքահայությունը: Նյութական փոքրիկ օժանդակությունների և խոստումների շնորհիվ նրանց հաջողվում է իրաքահայության մի մասին կաթոլիկ դարձնել: Եվ ահա այդ օրից սկսած, Իրաքի հայ համայնքներում սկիզբ են առնում միջդավանական վնասակար վեճեր, որոնք, վերջին հաշվով, վարկաբեկում են հայ համայնքներին օտար շրջապատում⁴:

Որքան հայ բնակչություն է ունեցել իրաքահայ համայնքը XVIII դարում: Վիճակագրության բացակայության պայմաններում դժվար է այդ հարցին հաստատապես պատասխանել: Կողմնակի որոշ նյութեր, սակայն, հնարավորություն են տալիս մոտավոր հաշվումներ կատարել Իրաքի հայ գաղթօջախների, մասնավորապես նրանցից ամենախոշորի՝ Բաղդադի գաղթավայրի բնակչության թվի մասին: Մեզ են հասել էջմիածնի կաթողիկոսական դիվանի մի քանի գրությունները, որոնցից երևում է, որ Բաղդա-

դում երեք ժխական քահանա են եղել: Մխատեր քահանաների առկայությունը ենթադրել է տալիս, որ Բաղդադում 200—300 տուն բնակչություն պետք է որ եղած լինի¹:

Բաղդադից էջմիածին կաթողիկոսին է ուղարկված համախոսական մի գրություն, որով նրանք խնդրել են թույլ տալ օրինական համարել ամուրիների ամուսնանալը կույսերի հետ՝ պատճառաբանելով այդ նրանով, որ տեղի հայ բնակչությունը փոքրթիվ է և միշտ չէ, որ հնարավոր է լինում կույսերից զույգեր կազմել²:

Սկզբնաղբյուրներում, դժբախտաբար, նյութեր չեն պահպանվել Իրաքի հայ գաղթավայրի ներքին կյանքի վերաբերյալ՝ սոցիալական կազմի, աշխատավոր բնակչության վիճակի, շահագործողների դեմ տեղի ունեցող ընդվզումների, հայ համայնքների հարաբերությունների մասին տեղաբնակ բնակչության հետ և այլն: Պատմական գրականության մեջ միայն կցկտուր տեղեկություններ են մնացել հայերի մի քանի զբաղմունքների մասին: 1840 թվականին Բասրայում հիշվում են հացագործներ, բժիշկներ և մի քանի այլ մասնագիտության մարդիկ:

XIX դարի վերջերին Իրաքի հայ գաղթօջախները սկսում են խամրել: Այդ պետք է բացատրել թուրքական կառավարության կողմից Իրաքի բնակչության նկատմամբ կիրառած կեղեքիչ քաղաքականությամբ: Տեղացի արաբ ժողովրդի հետ միասին խիստ տուժում է նաև հայ բնակչությունը: Իրաքահայերից ոմանք մեկնում են եվրոպական երկրներ, Հնդկաստան, Պարսկաստան և այլ վայրեր: Ըստ Պոլսի պատրիարքարանի 1888 թվականին կազմած վիճակագրության, իրաքահայ բնակչության թիվն այնքան է պակասել, որ բոլոր գաղթօջախների բնակչությունը միասին վերցրած հաշվում է 150 տուն, որից 90-ը՝ Բաղդադում, իսկ մյուսները՝ Բասրայում և Մուսուլում: Բաղդադում հաշվում է 706 հոգի, Բասրայում՝ 242, Մուսուլում՝ 173, ընդամենը՝ 1121 հոգի³:

Ըստ Կուլինենի, XIX դարի վերջերին Իրաքի հայ գաղթավայրի բնակչության թիվը հետևյալ պատկերն է ունեցել. Բաղդադում՝ 3300 հոգի, Բասրայում՝ 1525, Մուսուլում՝ 230 հոգի⁴:

Իրաքի հայ համայնքները ենթարկվում էին Նոր-Ջուղայի

1 «Մայր դիւան Մխիթարեան միաբանութեան», էջ 352—353:

2 Նույն տեղում, էջ 354:

3 «Ավետիք», 1946, էջ 174:

4 Ն. Պողոտյան, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Հակոբյանց, հ. III, էջ 85—86:

1 ՄԱՄ, ձեռ. № 450, թ. 114բ—115ա:

2 «Դիւան հայոց պատմութեան», հ. 8-րդ, մաս II, էջ 411:

3 «Սուրիահայ տարեցույց», 1925, էջ 111—112:

4 Այս տեղեկությունը մեզ հաղորդել է պատմ. գիտ. թեկնածու Օ. Քոփուզյանը:

առաջնորդութեանը և նրա հոգևոր հովվութիւնն էին կազմում: Հոգևոր հովիվներին նշանակում էր Նոր-Ջուղայի թեմակալը, իհարկե, հաշվի առնելով կաթողիկոսի համաձայնութիւնը: Այդ վիճակը շարունակվել է մինչև 1848 թվականը՝ երբ Իրաքի թեմը անջատվեց Նոր-Ջուղայի թեմից և ենթարկվեց Պոլսի պատրիարքութեանը: Համաշխարհային առաջին պատերազմից հետո, երբ Իրաքը դուրս եկավ թուրքական տիրապետութեան տակից, Իրաքում կազմվեց ինքնուրույն թեմ, որն սկսեց ենթարկվել կաթողիկոսութեանը:

**Իրաքի հայ
գաղթավայրը
նոր ժամանակներում:**

Ինչպես իր գերիշխանութեան տակ գրտնրվող մյուս երկրամասերում, այնպես էլ Իրաքում, Թուրքիան վարում էր հայ բնակչութեանը ֆիզիկապես ոչնչացնելու (գենոցիդի) քաղաքականութիւն: Սակայն ի պատիվ Իրաքի արաբ ժողովրդի պետք է ասել, որ Իրաքի հայ բնակչութիւնը, համեմատած Թուրքիայի մյուս մասերում գտնված հայ համայնքների, քիչ է տուժել: Իրաքի արաբ ժողովուրդը, որ մշտապես բարեկամական լավ հարաբերութիւնների մեջ է գտնվել տեղի հայ բնակչութեան հետ, չի ենթարկվել թուրքական իշխանութիւնների կարգադրութիւններին ու ձեռք չի բարձրացրել նրա վրա:

Արդարամիտ գտնվելու համար պետք է ասել, որ իրաքահայութեան նկատմամբ բարյացակամ է եղել նաև Բաղդադի կուսակալը՝ ազգութեամբ թուրք Սուլեյման Նազիֆ փաշան: Ստանալով թուրքական կենտրոնական իշխանութիւնների հրամանը՝ կազմակերպել իրաքահայութեան կոտորածը, նա այդ չի արել՝ համարելով ապերախտութիւն հայերի նկատմամբ: Կենտրոնական իշխանութիւնը զայրացած Իրաքի կուսակալի վրա, որոշել է նրան հեռացնել պաշտոնից, սակայն չցանկանալով իր դիտավորութեանը հրապարակային բնույթ տալ, որոշել է նրան փոխադրել Բաղեշ՝ վալիի պաշտոնով, իսկ Բաղեշի արյունոտ ժամանակներին Բաղդադ՝ կազմակերպելու հայերի կոտորածը: Սակայն Սուլեյման Նազիֆ փաշան չցանկանալով իր վրա վերցնել որևէ մեղսակցութիւն, հրաժարվել է իր նոր պաշտոնից:

Թուրքական կենտրոնական իշխանութիւնը Իրաքի կուսակալ է նշանակում մեկ ուրիշի, որը 1916 թվականին ձերբակալում և աքսոր է ուղարկում տեղի հայ համայնքի աչքի ընկնող բազմաթիվ գործիչների, որոնց մի մասը հետագայում վերադառնում են աքսորից:

Երբ 1917 թվականի մարտի 11-ին անգլիացիները գրավեցին Բաղդադը, Արևմտյան Հայաստանի հարավ-արևելյան շրջաններից և Պարսկաստանի Ուրմիայից, որն այդ ժամանակ նվաճված էր թուրքերի կողմից, ավելի քան 25 000 հայ գաղթականներ, ազատվելով թուրքական սպանդից, ապաստանեցին Բաղդադում: Անգլիացիները հայ գաղթականութեանը տեղավորել են Բաղդադին մոտիկ Բաքուբա կոչվող վայրում՝ վրանների տակ: Այս ճամբարի բնակչութիւնը հետագայում մեծանալով ստացել է «Բաքուբայի գյուղաքաղաք» կամ «Հյուղաքաղաք» անունը¹:

1918 թվականին, հայ Բարեգործական ընդհանուր միութեան նախաձեռնութեամբ, Բաղդադում հիմնվում է որբանոց, ուր սկսում են հավաքել թուրքական սրից ազատված անապաստան հայ երեխաներին: 1921 թվականին Իրաքի հայ որբերի մի մասը տեղափոխվել է Երուսաղեմ, իսկ մյուս մասը՝ Եգիպտոս:

Հայ գաղթականութիւնը Բաքուբայի ճամբարում մնացել է մինչև 1920 թվականը: Սննդի պակասի, բնակարանային վատ պայմանների և ծայր առած համաճարակի հետևանքով տեղի են ունեցել մասսայական մահացութիւններ: Ստեղծված դրութիւնից դուրս գալու նպատակով, Բաղդադի թեմական իշխանութիւնները 1919 թվականի հուլիսի 19-ի գրութեամբ դիմել են Գեորգ Ե կաթողիկոսին և խնդրել՝ միջնորդելու Հայաստանի կառավարութեան առջև՝ Իրաքի 25 000 գաղթականութիւնը Հայաստան տեղափոխելու համար: Սակայն Հայաստանն այդ ժամանակ այնպիսի ծանր վիճակում էր գտնվում, որ ի վիճակի չէր խնամելու տեղում եղած գաղթականներին, թո՛ղ թե նոր գաղթականութիւն ընդունելու մասին կաթողիկոսը բացասական պատասխան է տալիս:

Անգլիական իշխանութիւնները 1920 թվականին Բաքուբա հյուղաքաղաքը տեղափոխել են Միջագետքի հարավային մասը՝ Քասրայից ոչ այնքան հեռու գտնվող Ներհումեր կոչվող վայրը: Այստեղ արևադարձային վատառողջ կլիմայի, վատ ջրի, տարափոխիկ հիվանդութիւնների, գաղթականութեան կիսաքաղց վիճակի հետևանքով սկսում են մեծ թվով մահացութիւններ: Հայ գաղթականութեան վիճակն անտանելի է դառնում: Պոլսի «Ժողովուրդ» թերթը ապրիլի համարում գրել է. «Եթե ազգային մարմինները ուշադրութիւն չդարձնեն, Ներհումերի հայութիւնը կորած պիտի համարվի»:

¹ 202 պետական կենտրոնական արխիվ, ֆ. 114, № 89, ք. 37, այսուհետև գրք է ածվելու «ՀԳԱ»:

Մինչև համաշխարհային առաջին պատերազմը Իրաքի հայ բնակչության թիվը չի անցել հազար հոգուց: Հստ տեղեկությունների, 1915 թվականից առաջ Բաղդադում գտնվել է 70 ընտանիք, Բասրայում՝ 35 ընտանիք: Դրությունը փոխվում է համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և նրան մոտիկ ժամանակներում, երբ Արևմտյան Հայաստանից հայ գաղթականությունը զանգվածաբար փախուստի է դիմում և ապաստանում արաբական աշխարհում: 1924 թվականին Իրաքի հայ առաջնորդարանը, Խորհրդային Հայաստանի կառավարության Պարսկաստանի ներկայացուցչի պահանջով, կազմել և ներկայացրել է իրաքահայության հետևյալ վիճակագրությունը.

Ներհումների ճամբարում՝	628 ընտանիք	1995 շունչ
Բասրա քաղաքում՝	152 »	427 »
Բաղդադի Գելանի ճամբարում՝	647 »	2222 »
Բաղդադի Հինալդի շրջանում՝	33 »	111 »
Բաղդադ քաղաքում՝	134 »	445 »
Բաղդադի շրջակա գյուղերում՝	99 »	115 »
Մուսուլ քաղաքում՝	191 »	640 »
Մուսուլի Չախորի շրջանում՝	173 »	1584 »

Ընդամենը՝ 1987 ընտանիք, 6539 շունչ¹:

Բուն տեղացի հայերը հաշվում են 1121: Իրաքի ողջ հայ բնակչությունը՝ տեղացի, թե եկվոր, եղել է 7660: Այս թվի մեջ չեն մտնում Իրաքի հայ կաթողիկոսները, ինչպես և փոքր քաղաքներում ու գյուղերում ցրված հայ բնակչությունը:

Ուշագրավ է թվարկված հայ բնակչության սոցիալական կազմը, մանավանդ գաղթականության, որ ամենայն մանրամասնությամբ բերված է այդ վիճակագրության հավելվածում: Հայ գաղթականների մեջ հաշվառված էին 438 հողագործներ, 349 բանվորներ, 162 հյուաններ, 110 կոշկակարներ, 130 մեքենավարներ, 71 փականագործներ, 27 որմնադիրներ, 32 սափրիչներ, 49 դարբիններ, 27 դերձակներ, 17 մեխանիկներ, 14 շուկահայեր, 19 թիթեղագործներ, 29 կառապաններ, 18 խոհարարներ, 85 խանութպաններ և այլն:

«Սուրիահայ տարեցույց»-ի մեջ 1925 թվականին հրապարակվել է Միջագետքում հայ բնակչության զբաղմունքը ցույց տվող

¹ 202 Նոկո. հեղափ. և սոց. շինարարության պետ. կենտ. արխիվ, ֆ. 118, № 153, էջ 112, այսուհետև գործ է ածվում «ՀՊՀԱ»

մի ցանկ ըստ մասնագիտությունների, որը անհրաժեշտ ենք համարում կրճատումով բերել ստորև իբրև մի նոր ապացույց, որը գալիս է մի նոր անգամ մերժելու քաղաքացիություն ստացած այն սխալ կարծիքը, թե իրաքահայության մեծ մասը իբրև կազմված է վաճառականներից: «Տարեցույց»-ի տվյալներից երեւում է, որ աշխատունակ իրաքահայերը ունեցել են հետևյալ մասնագիտությունները. հողագործներ՝ 218, բանվորներ՝ 260, հյուաններ՝ 56, մեքենագործներ՝ 62, կոշկակարներ՝ 81, ավտովարորդներ՝ 96, որմնադիրներ՝ 18, դարբիններ՝ 17, սափրիչներ՝ 25, կառապաններ՝ 29, խոհարարներ՝ 13, էլեկտրագործներ՝ 13, թիթեղագործներ՝ 13, դերձակներ, խոհարարներ, հնակարկատներ, ներկարարներ, հիվանդապահներ, զինվորներ և այլն՝ շուրջ՝ 140, խանութպաններ՝ 60, առևտրականներ՝ 14¹:

Հրապարակված տվյալներից դժվար չէ տեսնել, որ ողջ Իրաքում եղել են ընդամենը 14 առևտրականներ և նրանց հետ կապված 60 խանութպաններ, իսկ մյուսները հանդիսացել են գյուղացիներ, բանվորներ և արհեստավորներ:

Իրաքի հայ բնակչության մարդահամարն ավելի մոտիկ ժամանակում կազմել է բանասեր Գ. Գևորգյանը, որը Իրաքի ողջ հայ բնակչության թիվը հաշվում է 18 000 հոգի, որից 11 000-ը՝ Բաղդադում, 2000՝ Բասրայում, 1000՝ Մուսուլում, 1000՝ Քերուկում, 100՝ Չախոյում, 968՝ Մարգելիում, 550՝ Հապպանիում, 160՝ Խանաքինում, իսկ մյուսները Հավրեզեում, Տրհոբում, Սյուլեյմանեում և ցրված այլ քաղաքներում, ավաններում և գյուղերում:

Գևորգյանի այս թվերից կասկածելի է երևում Մուսուլի բնակչության թիվը. ըստ Իրաքի առաջնորդարանի 1944 թվականի կաթողիկոսին ներկայացրած գեկուցագրի, Մուսուլում ապրում է 3340 հայ բնակչություն:

Հին և միջնադարյան իրաքահայ մշակույթից աննշան բեկորներ են հասել մեզ: Քաղաքական վայրիվերումների ժամանակ ո՛չ միայն մարել և ասպարեզից հեռացել են Իրաքի երբեմնի ծաղկուն հայ գաղթօջախները, այլև ոչնչացել է նրանց ստեղծած մշակույթը: Ուստի շպետք է զարմանալ, որ մենք ի վիճակի չենք ավելի քան 2500 երկարածիք տարիների կյանք ունեցող գաղթավայրում մատնացույց անել հայկական գաղթօջախների հետ կապված աչքի ընկնող որևէ հնություն:

¹ «Սուրիահայ տարեցույց», 1925, էջ 112—113:

Իրաքում հայկական ճարտարապետական շատ ու քիչ արժեք ներկայացնող հնագույն հուշարձանը՝ Բաղդադի Ս. Աստվածածին կոչվող եկեղեցին է, որը, կարծում են, թե 600 տարվա հնություն ունի: Համեմատաբար ավելի նոր է Բասրայի հայկական եկեղեցին, որը կառուցվել է 1736 թվականին: Մյուս գաղթօջախների հուշարձաններն ավելի նոր են: Իրաքահայ մշակույթի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է ծանոթանալ նրա նոր և նորագույն ժամանակաշրջանի մշակույթի հետ:

Գաղթավայրի մշակույթի ամենից կարևոր օջախները նոր շերտում հանդիսացել են դպրոցները, որոնց նկատմամբ, պետք է ասել, արտակարգ հոգատարություն և գուրգուրանք է ցուցաբերվել: Գաղթավայրում չի եղել և ներկայումս գոյություն չունի հայկական մեծ կամ փոքր մի համայնք, որը չունենա իր դպրոցը: Իրաքահայերը դպրոցների վրա նայել են ո՛չ միայն մի հաստատություն, որը պարտավորություն ունի կրթելու, դաստիարակելու մատող սերնդին, այլև մի օջախի, որը հայերին կրթություն տալով, պաշտպանում է նրանց ասիմիլյացիոն վտանգից:

Գաղթավայրի ամենից հին դպրոցը համարվում է Բաղդադի ժառանգավորաց կոչվող վարժարանը, որը հիմնվել է 1852 թվականին: Հետագայում Բաղդադում բացվել է երկրորդ դպրոցը ևս, որը, ի պատիվ վաստակավոր մանկավարժ Սվաճյանի, անվանվել է նրա անունով: Այդ դպրոցները, սակայն, եղել են թերի միջնակարգ և արական դպրոցներ: Աղջիկները զրկված են եղել այդ դպրոցում սովորելու իրավունքից: 1901 թվականին Բաղդադի բարերարներից մեկը՝ Հովհաննես Իսկենդերյանը, իր տունը հատկացրել է համայնքին, օրիորդաց դպրոց բաց անելու՝ ի հիշատակ իր մահացած աղջկա՝ Զարեհի:

Իրաքի հայկական տպարանը առաջին անգամ հիմնվել է Բաղդադում 1874 թվականին՝ Թադևոսյան եղբայրների նախաձեռնությամբ, որոնք տպագրել են զլխավորապես հայկական դասագրքեր հայկական դպրոցների համար: Այդ տպարանում 1890—1892 թվականներին Բաղդադի հայկական դպրոցի սաների ջանքերով լույս է տեսել աշակերտական «Փունջ» հանդեսը: Բաղդադի հայկական դպրոցի դասատու Սվաճյանի խմբագրությամբ լույս է տեսել «Տիգրիս» խմորատիպ պարբերականը, որը, դժբախտաբար, երկար կյանք չի ունեցել:

Իրաքի հայ գաղթօջախները առանձնապես չեն փայլում նաև իրենց մատենագրական-ձեռագրական մշակույթով: Իրաքում գոր-

ծող հայկական գրչության օջախներից XIV—XV դարերում աչքի է ընկել Մերդին քաղաքի մոտ գտնվող Թվին անապատի գրչության օջախը, ուր գրվել և ընդօրինակվել են մի շարք արժեքավոր ձեռագրեր:

Թվինի գրչության դպրոցներում գրված ձեռագրերից առանձնապես ուշագրավ է Վարդան գրչի ձեռագիրը, որն ընդօրինակված է 1358 թվականին: (Ձեռագիրը ներկայումս Մաշտոցի անվան մատենադարանի սեփականություն է և գրանցված է 8400 թվահամարի տակ): Նույն Վարդան գրիչը Թվին անապատում ընդօրինակել է մի այլ ձեռագիր 1356 թվականին: Այս ձեռագիրը Վենետիկի Մխիթարյանների սեփականությունն է: Մեզ են հասել Մերդինում գրված այլ ձեռագրեր ևս, դրանցից են՝ 1300 թվականին գրված մի ձեռագիր, որի մասին հիշատակում է Գ. Սրվանձտյանն իր «Քորոս աղբարի» մեջ (Բ, 381), 1362 թվականին ընդօրինակած ձեռագիր, որ նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի սեփականություն է և գրանցված է № 170-ի տակ, 1377 թվականին ընդօրինակված ձեռագիր, որը Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի սեփականություն է և գրանցված է № 201-ի տակ և այլն:

XVIII դարում հայ գրչության դպրոցներ են եղել Բաղդադում և Բասրայում: Պետրոս Մինասյանցը 1734 թվականին Բասրայում ընդօրինակել է մի ձեռագիր, որը Մաշտոցի անվան մատենադարանի սեփականություն է: 1770 թվականին Բաղդադում Մարկոս գրիչը ընդօրինակել է Պողոս Տարոնեցու «Ընդդէմ Քէոփիստէ Հոսփիլիսոփային» աշխատությունը: Գրիչն իր թողած հիշատակաբանում գանգատվում է նախագաղափար օրինակի եղծված լինելու մասին: Այս ձեռագիրը ևս Մաշտոցի անվան մատենադարանի սեփականություն է: 1772 թվականին Բասրայում ձեռագիր է ընդօրինակել թբիլիսեցի Աստվածատուր Դավթյանը (Մաշտոցի անվան մատենադարան, № 7847) և այլն:

Իրաքահայ մշակույթի մասին վերը բերված նյութերը, պետք է ասել, աղոտ պատկերացում են տալիս գաղթավայրի երբեմնի հարուստ մշակույթի մասին:

III. ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Եգիպտոսի հայ
գաղթավայրը
XVIII—XIX
դարերում:

Եգիպտոսը թուրքական տիրապետության շրջանում (1517—1801) գտնվել է իր պատմության ամենից մռայլ ժամանակաշրջաններից մեկում: Նրա տնտեսական կյանքը մտել է լճացման մեջ և կորցրել է իր երբեմնի առաջավոր դիրքը Մերձավոր Արևելքում: Թուրք տիրակալների կեղեքումները մի կողմից, նրանց հովանավորության տակ գտնվող մամլուկ ֆեոդալական շրջանում ծայր առած գզվտոցը՝ մյուս, Եգիպտոսը հասցրել էին բացահայտ քայքայման: Անհիմն չէ եվրոպացի այն ճանապարհորդը, որը XVIII դարի Եգիպտոսի վիճակը բնորոշելիս այն համեմատում է անցյալի փառահեղ հուշարձաններից մնացած մամուռած և քայքայված բեկորների հետ:

Թուրք տիրապետության շրջանում ծանր դրության մեջ է գտնվել նաև Եգիպտոսի հայ գաղթավայրը: Երկրի քայքայված վիճակը, քրիստոնյաների նկատմամբ զոյություն ունեցող անհանդուրժողականությունը և հայկական նոր, թարմ գաղթականական հոսանքի բացակայությունը իրենց որոշակի ազդեցությունն են թողել գաղթավայրի վրա: Հստ Ստեփանոս Գուվեր Ագոնցի տեղեկության, XIX դարի սկզբում Կահիրե քաղաքում ապրում էր ընդամենը 50—60 տուն հայ բնակչություն, չհաշված երթևեկող հայ վաճառականներին և Պոլսից Եգիպտոս եկած տերձակ և արծաթագործ արհեստավորներին¹: Եգիպտոսի մյուս քաղաքներում հայ բնակչությունն ավելի աննշան է եղել:

¹ Ս. Գ. Ագոնց, Աշխարհագրութիւն շրից մասանց աշխարհի, Ափրիկե, 1802, էջ 54:

Մամլուկների զորամասերը, ինչպես հայտնի է, կազմվում էին կռիվների կամ ասպատակությունների ժամանակ գերեվարված լեզգի, վրացի և հայ մանկահասակ երեխաներից, որոնց բերում էին Եգիպտոս, հավատափոխ անում, տեղավորում զինանոցներում, զինավարժություն սովորեցնում և ապա նրանցով համալրում մամլուկական զորամասերը: Ծագումով հայ այս մամլուկների մեջ գտնվել են անհատներ, որոնք իրենց քաջության և ընդունակությունների շնորհիվ պետական և զինվորական ապարատներում կարողացել են բարձր դիրքեր գրավել:

Մեր խնդրից դուրս է կանգ առնել հայ մամլուկների վրա, որովհետև նրանք ամենևին կապված չեն եղել եգիպտահայ գաղթավայրի հետ: Ուզում ենք, սակայն, երկու խոսք ասել ծովակալ Նիկողայոսի մասին, որն իր շուրջն է հավաքել եգիպտացի, հուլյն և հայ ծովայիններին և զորավիճ հանդիսացել Եգիպտոսի պաշտպանությանը: Նիկողայոսը կազմակերպել է բավականին ուժեղ նավատորմի՝ զինելով այն ժամանակի լավագույն հրանոթներով: Եգիպտական այս նավատորմի ղեկավարը, որ 1798 թվականին քաջաբար կռվեց Նապոլեոնի զորաբանակի դեմ: Հետագայում, երբ ֆրանսիացիներին հաջողվեց գրավել Եգիպտոսը, Նիկողայոսը բանտարկվեց Կահիրեի միջնաբերդում¹:

XIX դարում Եգիպտոսում քաղաքական և տնտեսական խռոչը վերափոխումներ կատարվեցին Մահմեդ Ալիի կառավարչության շրջանում (1805—1849): Ալբանացի այս զինվորականը, Եգիպտոսում իշխանության գլուխ անցնելուց հետո, իր առջև խնդիր է դնում թոթափել թուրքական լուծը, Եգիպտոսում ստեղծել կենտրոնացված ուժեղ պետություն, Եգիպտոսին միացնել հարևան արաբական երկրները և զարկ տալ երկրի արդյունաբերությանը: Նրա այս ձգտումները լիովին համապատասխանում էին նոր ասպարեզ իջած կալվածատիրական ազնվականության և առևտրական բուրժուազիայի շահերին²:

Ի դեպ, Մարքսը ուշադրություն է դարձրել Մահմեդ Ալիի կառավարչության շրջանում Եգիպտոսում տեղի ունեցող վերափո-

¹ Գ. Մարտյան, Հայագի երևիներ ճապարթի պատմության մեջ (սխոն), 1938, № 1, էջ 22—30):

² Новая история стран зарубежного Востока, т. I, Москва, 1952, стр. 338—339.

խումների վրա և գտել է, որ Մահմեդ Ալիի ժամանակ Եգիպտոսը Քուրքիայի ամենակենսունակ մասն է հանդիսանում: Մարքսի կարծիքով, Մահմեդ Ալին «կարող էր հասնել այն բանին, որ իր հանդիսավոր շալման փոխեր իսկական գլխի»¹: Մարքսն, անշուշտ, նկատի է ունեցել ֆեոդալական հարաբերությունները կապիտալիստականով փոխարինելու հնարավորությունը:

Ձեռնարկվող այս խոշոր բարեփոխությունները, հասկանալի է, հնարավոր չէր կատարել ֆեոդալական հետամնաց, պահպանողական տարրերի աջակցությամբ: Այդ նկատի ունենալով, Մահմեդ Ալին ասպարեղ է տալիս տեղացի և եվրոպացի առաջադեմ տարրերին, այդ թվում՝ նաև հայերին: Վերջիններիս հետ ծանոթ լինելով մանկուց և բարձր կարծիք ունենալով նրանց մասին՝ որպես աշխատասեր և ձեռներեց մարդկանց, առաջ է քաշում պետական բարձր պաշտոնների: Հայերը, եվրոպացիների համեմատությամբ, ունեին այն առավելությունը, որ նրանք քաղաքականապես ավելի վստահելի էին, քան եվրոպացիները, լավ գիտեին արևելյան լեզուները և սովորություններն ու հեշտ էին համակերպվում Մահմեդ Ալիի վարած քաղաքականության հետ: Ահա այս բարեմասնությունները նկատի ունենալով, նա առանձնահատուկ վստահությամբ էր մոտենում հայերին: Ըստ տեղեկությունների, Մահմեդ Ալին պաշտոնյաներ ընդունելիս հանձնարարել է, որ հայերից «պաշտոնյաներ ընտրեցեք, անոնք իրենց պաշտոնը ավելի ճշտությամբ, ավելի խղճով, ավելի անխոնջ և անձնվեր փութով կկատարեն և տերության գործերը հսկա քայլերով առաջ կտանին»²:

Այս իրադրության մեջ գործունեության լայն ասպարեղ է քացվում հատկապես եգիպտահայ խոշաների համար, որոնք կապված էին ասիական և եվրոպական շուկաների հետ: Մի շարք հայ խոշաներ առաջ են քաշվում բարձր պաշտոնների ներքին և արտաքին առևտրի բնագավառներում՝ կատարելով պետության հատուկ հանձնարարությունները: Հայ խոշաներից ոմանք դառնում են Մահմեդ Ալիի խորհրդատուները և գործակիցները առևտրի ասպարեղում: Ըստ որում, Եգիպտոսի արտաքին առևտրի մեջ սկսում են ներգրավվել ո՛չ միայն եգիպտահայ խոշաները, այլև Քուրքիայի ու եվրոպական երկրների աչքի ընկնող հայ առևտրականները և արդյունաբերողները: «Հայ խոշաները,— գրում է ժամանա-

կակից ականատես պատմաբան Ջակարտին,— Մահմեդ Ալիի մոտիկ կանգնած մարդիկն են, նրա շահընկերները առևտրի բոլոր բնագավառներում, նրանք ամենահեղինակավոր մարդիկն են և նրա խորհրդատուները»¹:

Եգիպտահայ խոշաները սակայն, ինչպես Մահմեդ Ալու, այնպես և նրա ժառանգների գահակալության շրջանում, սկսում են աշխույժ գործունեություն ծավալել ո՛չ միայն առևտրի, այլև Եգիպտոսում արդյունաբերական ձեռնարկություններ հիմնելու ուղղությամբ: Ըստ տեղեկությունների, Վերին և Ներքին Եգիպտոսում քսաներորդ դարի առաջին կիսում եգիպտահայ խոշաները գործուն մասնակցություն են ունեցել Եգիպտոսի ավելի քան երեսուն արդյունաբերական ձեռնարկությունները հիմնելու գործում: Նորաստեղծ մետաղամշակման, հյուսվածքեղենի, շաքարի, թղթի, կաշվի, քիմիական նյութերի և այլ արդյունաբերական ձեռնարկությունների մեջ բավականին մեծ բաժին են ունեցել հայ արդյունաբերողները:

XIX դարի առաջին կիսում Եգիպտոսում բացվել են մի շարք մասնագիտական դպրոցներ, որոնց տնօրենները և ուսուցիչները եղել են հայ մանկավարժներ: Նրանց մի մասը հրավիրված է եղել Պոլսից: Եգիպտոսում հիմնված արդյունաբերական ձեռնարկություններում, որպես մասնագետ աշխատելու համար դրսից հրավիրվել են հույն, ֆրանսիացի, իտալացի և այլազգի մասնագետներ: Նրանց մեջ ևս եղել են բավականին թվով հայեր:

Մահմեդ Ալիի և նրա հաջորդների գահակալության տարիներին աշխատանքի են հրավիրվել նաև հայ արհեստավորներ: Ջաբարտիի հաղորդած մի տեղեկությունից երևում է, որ 1817 թվականին Մահմեդ Ալին Քուրքիայից Եգիպտոս է տեղափոխել շուրջ 200 արհեստավորներ՝ հյուաներ, դարբիններ, քարտաշներ և այլ մասնագիտության մարդիկ²:

Եվ այսպես, XIX դարի առաջին կիսում նպաստավոր պայմաններ են ստեղծվում եգիպտահայ գաղթավայրի համար:

Ինչպես հայկական մյուս գաղթավայրերում, այնպես էլ Եգիպտոսում, հայ բնակչությունը միատարր չի եղել. այստեղ մենք մեծահարուստ շահագործող հայ խոշաների և պետական բարձր դիրք

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2, т. IX, стр. 202.
² «Եվրոպա», 1850, № 52:

¹ Абд ар-Рахман ал-Джабарти, Египет под властью Мухаммеда Али, Москва, 1962, стр. 595.
² Տե՛ս Դձաբարտի նշված աշխատությունը, էջ 610:

գրաված հայ պաշտոնյաների կողքին տեսնում ենք օրվա ապրուստը հազիվ հայթայթող հայ արհեստավորներին ու բանվորներին:

Եգիպտոսի հայ բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է հաղորդել եվրոպացի ճանապարհորդ Գևորգ Անդրեասը: «Կահիրեում ապրող հայերը,—գրում է նա,—ամենից աղքատներն են ինչպես և պատիվ ունեցողները. նրանք շարքաշ աշխատում են և համեստ ապրում»¹: Այստեղ «չարքաշ աշխատելու» և «համեստ ապրելու» մասին արված ակնարկը, անշուշտ, վերաբերում է հայ աղքատ բնակչությանը:

Եգիպտոսի հայ գաղթավայրի ամենից արտոնյալ խավը, ինչպես ասել ենք, հանդիսացել են հայ խոջաները, նրանք հսկայական հարստություն են կուտակել և ապրել են շռայլ կյանքով: Հայ խոջաների և պետական ապարատներում աշխատող հայ պաշտոնյաների ճշմարտացի պատկերը տվել է Ջաբարտին: Խոսելով հայ խոջաների նկատմամբ Մահմեդ Ալիի ցուցաբերած արտակարգ հովանավորության մասին, նշում է, որ «նրանք (այսինքն՝ հայ խոջաները—Ա.Ա.) այժմ ազնվականների շարքին են պատկանում. նշանակվում են բարձր պաշտոնների, հազնում են բարձրաստիճան մարդկանց հագուստներ, նստում գեղեցիկ ձիեր և ջորիներ: Նրանց առջևից և ետևից գնում են իրենց ծառաները՝ փայտերը ձեռքերում, որպեսզի ցրեն ժողովրդին և ճանապարհ բաց անեն նրանց համար: Նրանք ունեն սպիտակ և հաբեշ գերուհիներ, ապրում են բարձր և գեղեցիկ տներում, որոնք գնել են թանկ գնով: Նրանց մեջ կան այնպիսիները, որոնք տներ ունեն ոչ միայն քաղաքի մեջ, այլ նեղոս գետի ափին՝ իբրև հաճույքի վայր: Կան այնպիսիները, որոնց կառուցած տները հազարավոր քսակներ արժեն... Նրանց մոտ կան մուսուլման ծառայողներ՝ գրագրի, գրասենյակի ծառայողի, պաշտոնյայի, թղթատարի պաշտոններով: Նրանց մոտ աշխատող բանվորներին ծեծում են, վիրավորում են, բանտ են նստեցնում առանց որևէ մեղք ունենալու: Եվ անհավատների առջև կանգնում են և՛ ազնվատոհմերը, և՛ հասարակ մարդիկ»²:

Մի այլ կապակցությամբ Ջաբարտին խոսելով հայ խոջաների մասին, գրում է, որ նրանք «նեղիկ կառավարության մոտիկ կանգնած մարդիկ են, Կահիրեում կառուցում են տներ, պալատ-

ներ, տնկում այգիներ, որպեսզի հիմնավորվեն այստեղ: Նրանք նույնպես քանդում և տեղափոխում են իրենց կառուցումներն այնտեղ, ուր կամենում են. նրանց համար ոչ մի արգելք չկա. արգելքները, խոչընդոտները, սահմանափակումները միայն մուսուլմաններին՝ տեղի հիմնական բնակիչների համար է»¹:

Ջաբարտի այս տեղեկություններից պարզորոշ երևում է, որ հայ խոջաները, որոնք ղեկավար վարչական աշխատանքի էին նշանակվել Եգիպտոսում, պակաս չափով չէին կեղեքում տեղացիներին, քան այդ անում էին տեղացի պաշտոնյաները: Այդ արդարացի դժգոհություն էր առաջացնում ժողովրդի մեջ, որը և նշել է Ջաբարտին:

Եգիպտահայ համայնքների բնակչության ստվար խավը հանդիսացել է արհեստավորությունը: Սիմեոն Լեհացին, որը 1615 թվականին եղել է Եգիպտոսում, իր «Ուղեգրության» մեջ նշում է, որ Կահիրեի խան խալիլ շուկայի մոտ ապրող հայ բնակչության մեծամասնությունը բաղկացած է հայ արհեստավորներից՝ ոսկերիչներից, դրձձիներից (սուր պատրաստողներից) և դերձակներից, որոնք եկել են Դիարբեքիից, Հալեպից և Պոլսից²:

XIX դարում Եգիպտոսում մեծ հռչակ են ունեցել առանձնապես հայ ոսկերիչները, որոնք եկել են գլխավորապես Պոլսից և հաստատվել Կահիրեում ու Աղեքսանդրիայում: Կահիրեի ոսկերիչների թիվը մեզ հայտնի չէ, բայց դատելով այն փաստից, որ Աղեքսանդրիայում 45 հայ մասնագետներից ութը եղել են ոսկերիչներ, պետք է ենթադրել, որ Կահիրեում, ուր հայկական ավելի մեծ գաղթօջախ է եղել, հայ ոսկերիչների թիվն ավելի շատ պետք է եղած լինի: Պետք է նկատի ունենալ, որ XIX դարում Եգիպտոսի ոսկերչությունը հայերի բացարձակ մենաշնորհն է եղել, միայն վերջին ժամանակներում է, որ հայ ոսկերիչների կողքին սկսել են հանդես գալ նաև տեղացիները:

XIX դարում Եգիպտոսի փոխարքաների պալատական գրեթե բոլոր ոսկերչապետները (չեվահիրչիբաշիները) հայեր են եղել: (Բարսեղ Ջևահիրչյան, Եղիա Ջևահիրչյան, Հովհաննես Նախնուխ և ուրիշները): Ալպոյաճյանը, անուններով թվարկելով տասնյակ մեծ համբավ ունեցող եգիպտահայ ոսկերիչների (ոսկերիչ գծագրիչների, ոսկերիչ-ագուցողների, ոսկերիչ փորագրիչների), գրտնում է, որ «Հայերը ոսկերչությունը Եգիպտոս ներմուծողները

¹ George Sandys, Relation of a Journey Bedan A. D. vol. II, p. 122.

² Ал-Джабарти, նշված աշխատությունը, էջ 685:

¹ Ал-Джабарти, նշված աշխատությունը, էջ 560:

² Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, էջ 610:

եղած են և արհեստին զարգացման, ինչպես նաև բնիկ եգիպտացի տարրին ալ արհեստին մեջ մարզվելուն և սովորելուն պատճառ եղած են»¹:

«Հայերը,— գրում է Գաբամաճյանը,— իբրև արհեստավոր Եգիպտոսի մեջ առաջին տեղը կբռնեն ոսկերչության մեջ, արդարև, հայ ոսկերիչները մասնավոր գաղութ մը ձևացուցած են խան Նալիլի համբավավոր կենտրոնի մեջ և իրենց ճարտարվեստի ընտիր արտադրությունները իրավամբ գնահատված են ճաշակի բոլոր սիրահարներին»²:

Ոսկերիչներից հետո հայ արհեստավորության մեջ սովոր թիվ են կազմել եազմայի մասնագետները (գլխաշորի վրա ասեղնագործողներ):

XIX դարի 20—30-ական թվականներին միայն Կահիրեում հայկական տասը արհեստանոց է բացված եղել, ուր աշխատել են հայ եազմաշիները:

Եգիպտոսի հայ աշխատավորության մեջ զգալի թիվ են կազմել կոշկակարները: Ըստ Ալպոյաճյանի տեղեկության, նրանք իրենց արհեստը հասցրել են այնպիսի կատարելության, որ նրանց պատրաստած կոշիկները, իրենց դիմացկունությամբ, նրբությամբ և ճաշակով, չեն զիջել Անգլիայից և այլ երկրներից Եգիպտոս ներմուծված կոշիկներին: Կահիրեում և Ալեքսանդրիայում եղել են մի շարք կոշկակարական արհեստանոցներ, ուր աշխատել են հայ կոշկակարները:

Կոշկակարությանը հավասար, եթե ոչ ավելի մեծ համարում ստեղծած մյուս արհեստը, որը դարձյալ հայ արհեստավորության մենաշնորհն է եղել, հանդիսացել է ասեղնագործությունը և դերձակությունը: XIX դարում Պոլսի հայկական ասեղնագործական վարժարանն ավարտած շատ մասնագետ կանայք տեղափոխվել են Եգիպտոս և աշխատել այնտեղ:

Եգիպտահայ բնակչության սոցիալական կազմում զգալի թիվ է կազմել նաև հայ բանվորությունը: Նրանք աշխատել են Մահմեդ Ալիի ժամանակ հիմնված արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարությունների մեջ և ագարակներում: Հայ բանվորության թիվն ավելի է մեծանում հատկապես 1895—1896

¹ Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 198:

² Մ. Գաբամաճյան, Հայ տարրը Եգիպտոսի պետական, տնտեսական և առևտրական սուպրեզներու մեջ (Ս. Պարթևյանի «Եգիպտահայ տարեցույց», 1913, էջ 221—222):

թվականներին՝ երբ համիդյան շարժերի հետևանքով հայ գաղթականություն է գալիս Եգիպտոս:

Եգիպտահայ համայնքների ունևոր խավի միանգամայն հակապատկերն է եղել եգիպտահայ աշխատավորությունը, որը գտնվել է ընչազուրկ վիճակում և մեծ դժվարություններով է հայթայթել իր օրվա հացը, պահպանել իր ֆիզիկական գոյությունը:

Եգիպտոսում աշխատող հայ պաշտոնյաների թիվը մասամբ սահմանափակվել է XIX դարի վերջին քառորդին: Դա բացատրվում է նրանով, որ այդ տարիներին սկսեցին ոտքի կանգնել տեղացիները և իրենց ձեռքը վերցրին պատասխանատու կարևոր պաշտոնները:

Գրությունը Եգիպտոսում հիմնովին փոխվում է անգլիական ինտերվենցիայից հետո: Անգլիական զորքերը, ինչպես հայտնի է, 1882 թվականին ներխուժեցին Եգիպտոս և գրավեցին այն: Այսպիսով, մոտ 80 տարի թուրքական հարստահարություններից ազատագրված Եգիպտոսը ընկավ անգլիական գաղութարարների կեղեքիչ տիրապետության տակ: Անգլիական գաղութարարները, ճիշտ է, ձևականորեն պահպանեցին տեղական կառավարությունը, քայքայ պահպանեցին անվանապես, սահմանափակ իրավունքներով՝ երկրի վարչական և տնտեսական հիմնական երասանակները վերցնելով իրենց ձեռքը¹:

Անգլիական նվաճումից հետո Եգիպտոս մուտք գործեցին եվրոպական կապիտալիստները: Տեղի արդյունաբերությունը շկարողացավ դիմանալ մրցությանը: Իրար ետևից փակվեցին տեղական արդյունաբերական ձեռնարկությունները՝ թղթի ֆաբրիկան, թընդանոթներ, հրացաններ և այլ զենքեր պատրաստող գործարաններ, նավաշինության և նավանորոգման արհեստանոցներ, բամբակամանման և գործվածքեղենի ֆաբրիկաներ ու բազմաթիվ այլ ձեռնարկություններ: Այս ամենից, բնական է, տնտեսապես պետք է տուժեր և տուժեց տեղի հայ գաղթավայրը:

XIX դարի երեսնական թվականներից մինչև ութսունական թվականները, մոտ հիսուն տարվա ընթացքում, հայ բնակչության թիվն ավելանում է երեք անգամ: «Արմենիա» թերթում տպագրված մի տեղեկության համաձայն, եգիպտահայության թիվը 1886 թվականին եղել է մոտ վեց հազար հոգի²:

¹ А. Аш-Шафии, Развитие национально-освободительного движения в Египте, Москва, 1961, стр. 22.

² «Արմենիա», 1886, № 63:

Եգիպտոսի հայ բնակչության թիվն ավելի է մեծացել համիդյան շարժերից հետո: Լոնդոնում լույս տեսնող «Նոր կյանք» թերթում հրատարակած մի տեղեկության համաձայն, եգիպտահայության թիվը 1898 թվականին հասել է 9200-ի¹: Հայերը Եգիպտոս են գաղթել գլխավորապես Պոլսից, Զմյուռնիայից, Հալեպից, Տիգրանակերտից, Արաբկիրից, Կեսարիայից և այլ վայրերից: Ըստ տեղեկությունների, հետագայում Եգիպտոս է եկել մի անգամից շուրջ տասը հազար գաղթական: Շուտով սակայն, երբ դուրս են եկել Քուրդիստան փոքր-ինչ խաղաղվել է, այս գաղթականության մի մասը թողել և վերադարձել է իր նախկին բնակավայրը:

Եգիպտոսի հայ գաղթավայրը հնուց ի վեր տեղական իշխանությունների կողմից ճանաչվել է իբրև հոգևոր համայնք և անհրաժեշտ արտոնություն է շնորհվել նրան: Քուրդական տիրապետության շրջանում գաղթավայրը ենթարկվել է Երուսաղեմի պատրիարքությանը, որն ուղարկել է իր հոգևոր հովիվը: Տեղի հայ աշխատավորությունը ոչ մի իրավասություն չի ունեցել մասնակցելու գաղթավայրի կառավարչությանը: Երուսաղեմից ուղարկված հոգևոր հովիվն շրջապատել են տեղի ունևորները, որոնք և ուղղություն են տվել նրա գործունեությանը²:

XIX դարի առաջին քառորդում, երբ Եգիպտոսը սկսեց աչքի ընկնող դեր կատարել քաղաքական կյանքում, Երուսաղեմի պատրիարքարանը Եգիպտոսի հոգևոր հովիվությունը դարձրեց թեմակալություն:

1835 թվականին եգիպտահայերին հաջողվում է, համառ պայքարից հետո, անջատվել Երուսաղեմի հայոց պատրիարքությունից և ենթարկվել Պոլսի պատրիարքությանը:

1860 թվականին, երբ ընդունվեց ազգային սահմանադրությունը, Եգիպտոսի թեմում, ինչպես և Պոլսի պատրիարքության մյուս թեմերում, պիտի կատարվեին թեմական ընտրություններ: Սակայն այդ չէին ցանկանում և թույլ չտվեցին եգիպտահայ մեծահարուստները: Փաստորեն, սկսած այդ թվականից մինչև համաշխարհային առաջին պատերազմը, եգիպտահայ համայնքներում ծավալվել է անհաշտ պայքար տեղի հայ վերնախավի և աշխատավորության միջև՝ թեմական և հոգաբարձական իշխանությունների շուրջը: Տեղի վերնախավը, հենված եգիպտական կա-

¹ «Նոր կյանք», 1898, № 16:

² Ա. Տեր-Չովհաննիսյանց, Ժամանակագրական պատմություն Երուսաղեմի, 1890, հ. Բ., էջ 503—507:

ռավարության վրա, ամեն կերպ աշխատել է զրկել և կամ սահմանափակել եգիպտահայ աշխատավորության իրավասությունը գաղթավայրի վարչական մարմիններում և հասարակական կազմակերպություններում, իսկ աշխատավորությունը պայքարել է իր իրավունքներին տեր դառնալու համար:

Պետք է ասել, որ այդ պայքարը եղել է շատ բուռն, տեղի են ունեցել կռիվներ, միջամտել է կառավարությունը և ձերբակալություններ կատարել¹:

Այս պայքարի արդյունքը եղել է այն, որ վերջապես գաղթավայրի աշխատավորությանը հաջողվել է 1866 թվականին հարկազրկել և անցկացնել ընտրություններ՝ Ազգային սահմանադրության համաձայն: XIX դարի իննսուներկան թվականներին հայ գաղթականական նոր խմբերի ժամանումից հետո գաղթավայրի հակոտնյա խավերի միջև պայքարը ո՛չ թե դադարում է, այլ ավելի է սրվում:

Եգիպտոսի հայ գաղթավայրն անտարբեր չի գտնվել հայրենի երկրի, մասնավորապես Արևմտյան Հայաստանի նկատմամբ, երբ միջազգային դիվանագիտության սեղանի վրա է դրվել և քննարկվել հայկական հարցը:

1885 թվականից, ի պաշտպանություն Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով նախատեսված՝ Արևմտյան Հայաստանում կատարվելիք բարենորոգումների, Եգիպտոսի հայ գաղթավայրում ծավալվում է լայն շարժում: Այդ հարցում ևս բախվում են գաղթավայրի աշխատավոր խավերը և ունևորները: Վերջինները, կապված լինելով անգլիական կապիտալիստական շրջանների հետ, չեն ցանկանում «անհանգստացնել սուլթանին», ուստի խորհուրդ են տալիս սպասել սուլթանի «բարեհաճ կարգադրությանը»: Իսկ ժողովրդի մեջ առաջացած մի շարք ընկերություններ պահանջում են բողոքի ձայն բարձրացնել ընդդեմ թերածին ու թերակատար բարենորոգումների: Այդ ընկերություններից ամենից հետևողականը «Հառաջադիմասերներ»-ի միությունն է, որը սկզբում կապված է եղել Փորթուգալյանի «Հայաստանի զանգվածներու միության» հետ: Այդ ընկերության պայքարը բուռն թափ է ստացել, երբ սկսվել է Աղեքսանդրիայում լույս տեսնել «Նեղոս» շաբաթաթերթը: Պահպանողականների և «Հառաջադիմասերների» բախումները տեղիք են տվել ոստիկանության միջամտության: Ի վերջո, նրանց հաջողվել է կառավարության միջոցով բանտարկել «Հառա-

¹ «Արևելյան մամուլ», 1872, էջ 409:

շաղիմասերներ»-ի ղեկավարներին և փակել տալ «Նեղոս» շաբաթաթերթը¹:

**Եգիպտահայ
հասարակական
և քաղաքական
գործիչները:**

XIX դարում եգիպտահայ գաղթավայրում աչքի են ընկել մի շարք պետական և հասարակական գործիչներ, որոնց մասին կան բազմաթիվ ուսումնասիրություններ ինչպես հայերեն, այնպես էլ արաբերեն ու եվրոպական մի քանի լեզուներով:

Գուցե հարկ չլիներ մեզ կանգ առնել հայազգի այդ գործիչների վրա, որովհետև նրանք եղել են Եգիպտոսի պետական գործիչներ, իսկ մենք Եգիպտոսի քաղաքական պատմությունը չէ, որ գրում ենք: Հարկ չկար կանգ առնել մանավանդ այն պատճառով, որ նրանց գործունեությունը կապված չի եղել տեղի հայ գաղթավայրի հետ: Բայց քանի որ մինչև այժմ հրապարակված հայագիտական գրականության մեջ նշված եգիպտահայերի գործունեությունը կապակցված է ներկայացվել հայ գաղթավայրի պատմության հետ և, կարելի է ասել, նրա կմախքն է կազմել, և ոչ բոլոր ղեպքերում ճիշտ գնահատվել, ուստի անհրաժեշտ ենք համարում փոքր-ինչ կանգ առնել նրանց վրա:

Մի բան անվիճելի է, որ քաղաքական բարձր դիրքեր գրաված եգիպտահայ գործիչները, լինելով Եգիպտոսի պետական պաշտոնյաներ, հանդիսացել են տվյալ իրավակարգի պաշտոնական ներկայացուցիչներ: Նրանք հնազանդորեն կատարել են այն, ինչ բխում էր տվյալ հասարակարգի շահերից և ինչ թելադրվել է իրենց: Այլ կերպ էլ, իհարկե, լինել չէր կարող: Հետևապես, եգիպտահայ պաշտոնյաների գործունեությունը գնահատելիս պետք չէ նրանց կտրել, առանձնացնել իրենց ժամանակից, շրջապատից և սոցիալական պատկանելությունից: Նշված պաշտոնյաների գործունեության մասին խոսելիս մեր խնդիրը պետք է լինի միայն պարզել թե ի՞նչ չափով են նրանք նպաստել Եգիպտոսի զարգացմանը, որքա՞ն շահախնդիր են հանդիսացել Եգիպտոսի քաղաքական անկախության պահպանմանը և ի՞նչ դիրքորոշում են ունեցել եվրոպական գաղութարարների դեմ մղած պայքարում:

XIX դարի առաջին կեսում Եգիպտոսում հայերից բարձր դիրքի հասած անձնավորություններից է Պողոս Յուսուֆյանը², որը

¹ «Արմենիա», 1889, ապրիլի 27:

² Վ. Զարդարյան, Պողոս բեյ Յուսուֆյան (տե՛ս «Էջրատակարան», I, էջ 299—302):

Եգիպտոս է գաղթել Զմյուռնիայից: Մոտիկ փոխհարաբերությունների մեջ գտնվելով Մահմեդ Ալիի հետ և հանդիսանալով նրա գործակիցը առևտրի ասպարեզում, նա նշանակվել է նախ արքունի թարգմանի պաշտոնում, իսկ հետագայում, երբ ավելի մեծ վստահություն է շահել, առաջ է քաշվել որպես արտաքին գործերի և առևտրի տնօրեն: Շուտով նրան վստահվել է ավելի բարձր պաշտոն. նա դարձել է Մահմեդ Ալիի անձնական խորհրդականը և իրավունք ստացել վարելու պետության բոլոր գործերը՝ դառնալով փաստորեն Եգիպտոսի վարչապետը:

Եգիպտահայ գրեթե բոլոր պատմաբանները արտակարգ գովեստով են խոսում Յուսուֆյանի մասին՝ որպես Եգիպտոսին նրավիրված անձնավորության: Ուսումնասիրողներից ոմանք, սակայն, գունազարդում են նրա գործունեությունը՝ ընկնելով չափազանցությունների մեջ: Այսպես, եթե հավատալու լինենք Նազարեթ Աղազարմին, ապա Յուսուֆյանի շնորհիվ «Եգիպտոսի անապատները շենացան, խոպան տեղերը պարարտացան, արվեստները ծաղկեցան, գիտությունը զարգացավ, հարստությունը շատացավ, եկամուտները բազմապատկվեցան, և Մուհամմեդ Ալիի իշխանությունը զորացավ և ընդարձակվեց, ուստի սկսավ թագավորի պես հրամայել և տիրել և իր իշխանության ներքև կարգել զորապետներ, սպարապետներ և փաշաներ»¹: Նույն ձևով է գնահատել Յուսուֆյանի գործունեությունը նաև Ա. Ալպոյաճյանը²: Եվրոպական պատմաբաններից մեկն այնքան է առաջ անցել, որ նրան համարել է «իր ժամանակի Արևելքի ամենամեծ, ամենահավատարիմ և մեծահանճար մարդը»:

Չի կարելի ժխտել, որ Յուսուֆյանը, իրոք, եղել է քաղաքական աչքի ընկնող գործիչ, եգիպտական արքունիքի գործուն պաշտոնյաներից մեկը, սակայն նրան վերագրել Եգիպտոսում կատարվող բոլոր քաղաքական և տնտեսական բարեփոխությունները և ներկայացնել այնպես, որ իբրև թե Յուսուֆյանի ջանքերով Եգիպտոսը դարձավ մի դրախտավայր, բացահայտ անհեթեթություն է: Յուսուֆյանը մոտիկ փոխհարաբերության մեջ է գտնվել տեղի հայ համայնքի հետ: Նրա անվան հետ են կապված եգիպտահայ թեմի առաջնորդարանին եգիպտական արքունիքի շնորհած որոշ արտոնություններ:

Յուսուֆյանը առաջ է քաշել ու հովանավորել բազմաթիվ հայ

¹ Նազարեթ Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութի վրա, Կահիրե, 1911, էջ 27:

² Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 67:

գործիչների: Նա դրական դեր է կատարել նաև հայ երիտասարդ-ների կեղծակերպական բարձրագույն ուսումնական հաստատություն-ները կրթության ուղարկելու գործում: Հայ երիտասարդները Եվրոպայում կրթություն ստանալուց հետո վերադարձել են Եգիպ-տոս և նշանակվել համապատասխան աշխատանքի: Այս հայ երի-տասարդները նույնպես խոշոր դեր են ունեցել Եգիպտոսի հասա-րակական և քաղաքական կյանքում:

Պողոս Յուսուֆյանից հետո նրա պաշտոնի անմիջական շա-րունակողն է հանդիսացել Արթին Զրաքյանը: Նա եղել է Եգիպ-տոսից Եվրոպա սովորելու ուղարկված ուսանողների խմբում և մասնագիտացել է տնտեսագիտության և միջազգային իրավագի-տության մեջ: Վերադառնալով Եգիպտոս, 1844 թվականին նշա-նակվել է միաժամանակ արտաքին գործերի և առևտրի նախարար ու պաշտոնավարել մեծ ձեռնհասությամբ մինչև 1850 թվականը: Արթին Զրաքյանի իրավասության սահմանները հետագայում ավի-լի են ընդարձակվել: Նա ևս, փաստորեն, վարել է վարչապետի պաշտոն և ունեցել է գրեթե այն բոլոր իրավունքները, ինչ նրա-նից առաջ ուներ Պողոս Յուսուֆյանը:

Նրա անվան հետ է կապված առևտրի մենաշնորհի վերացումը Եգիպտոսում, որով հնարավորություն է ստեղծվել երկրի արտա-դրական ուժերի անարգել զարգացման համար: Նա է կարգ ու կանոն ստեղծել պետական գանձարանում, կարգավորել մաքսա-յին անցագրերի վարչությունը և այլն¹:

Պողոս Յուսուֆյանի առաջ քաշած հայ երիտասարդներից է եղել նրա քեռորդիներից մեկը՝ Նուբարը, նախկին ղարաբաղցի, որի ծնողները եկել և բնակություն են հաստատել Զմյուռնիայում: Նուբարը գտնվել է Եվրոպա բարձրագույն կրթության ուղարկված երիտասարդների խմբի մեջ և վերադառնալուց հետո զբաղվել է նշանակվել արքունի դիվանատանը: Մոտիկ փոխհարաբերություն-ների մեջ գտնվելով գահաժառանգ Իսմայիլի հետ, վերջինիս Եգիպ-տոսի փաշա դառնալուց հետո, նշանակվել է Եգիպտոսի արտա-քին գործերի նախարար: Այնուհետև վարել է այդ պաշտոնը մինչև 1878 թվականը, որից հետո առաջ է քաշվել և նշանակվել Եգիպ-տոսի վարչապետ, և այդ պաշտոնը, որոշ ընդհատումներով, վարել է մինչև 1888 թվականը²:

1 «Ազգասեր», 1847, № 93, էջ 166:

2 Նուբարի գործունեության մասին տե՛ս Զարգարյանի «Նուբար փաշա» հոդ-վածը, որը հրատարակվել է «Հիշատակարանում» (էջ 268—298):

Մեր նպատակից դուրս է այստեղ կանգ առնել Նուբարի ընդ-հանուր գործունեության վրա, սակայն ցույց տալու համար նրա մատուցած ծառայությունները եգիպտական ժողովրդին, անհրա-ժեշտ ենք համարում նրա կատարած գործերից մի քանիսը մատ-նացույց անել:

Մեծ ջանք ու աշխատանք է տարել Նուբարը Եգիպտոսում ջրանցքներ անցկացնելու և ջրդի հողերը ընդարձակելու ուղղու-թյամբ: Եգիպտոսի հանրագուտ շինարարության պաշտոնյա եղած ժամանակ, նա մշակել է Եգիպտոսի ոռոգման ընդարձակ մի ծրա-գիր և սկսել նրա իրականացումը: Նրա ժամանակ անց են կացվել մի քանի ջրանցքներ: Ի պատիվ նրա կատարած հանրագուտ աշ-խատանքների, Բեհերա նահանգի նշանավոր ջրանցքը, որը կա-ռուցվել է Նուբարի նախաձեռնությամբ, կառավարության հատուկ հրամանով կոչվել է Նուբարի անունով:

Նուբարը մեծ աշխատանք է տարել նաև Եգիպտոսի քաղա-քական անկախությունը պահպանելու և այն ամրացնելու ուղղու-թյամբ: 1867 թվականին թուրքական կառավարությունը նպատակ է դնում նորից Եգիպտոսը վասալական կախվածության մեջ դնել և ջնջել Մահմեդ Ալիի ձեռք բերած ժառանգական իրավունքը: Այդ կապակցությամբ Նուբարը հարկադրված է եղել Պոլիս գնալ և բա-նակցություններ վարել: Ըստ ժամանակակիցների վկայության, Նուբարն այնպիսի վարպետությամբ է վարել այդ բանակցություն-ները, որ կարողացել է ապահովել Եգիպտոսի կուսակալների ժա-ռանգական իրավունքը: Ֆրանսիացի ակադեմիկոս Մ. դը Վոկյուն, դրվատելով Նուբարին որպես խոշոր դիվանագետի, այդ բանակ-ցությունների առթիվ հետևյալն է գրել. «Նուբար փաշայի ճարտա-րությունը հաջողեցավ նախ ստեղծել այն գործիքը, որուն պետք ուներ գործելու համար: Իսկապես, անկախ Եգիպտոս մը՝ սուլ-թանին անվանական գերիշխանության տակ: Ճարպիկ բանակցողը Պոլիս եկավ ոսկի բանախիներովը, Երկրորդ Դոնեն խլեց 1867—Ֆերմանները և խտիվ երկդիմի տիտղոսը, որ եգիպտական ինք-նորենությունը կնվիրագործեր, հետո՝ իր դիվանագիտական տա-ղանդը»¹:

Նուբարը կատարել է մի շարք բարեփոխություններ արաբ գյուղացու (ֆելլահի) դրության բարելավման ուղղությամբ: Ծիշտ է, այս գործում նա հանդիպել է տեղի ֆեոդալական շրջանների ուժեղ դիմադրությունը, սակայն արել է ամեն հնարավորը՝ սահ-

1 Ա. Ալպոյանյան, Եգիպտոսի միացյալ նահանգը և հայերը, էջ 86:

մանափակելու նրանց կեղեքումները: Եգիպտոսի աշխատավոր ժողովուրդը սիրել է Նուբարին և անվանել «Աբու Ֆելլահ», այսինքն՝ «Ֆելլահների հայր»:

Նուբար փաշան, գրում է Նազարեթ Աղազարմը, «Իր բովանդակ պաշտոնավարության մեջ իրեն նշանաբան ըրած էր, «Ֆելլահին ճակատագրին բարվոքումը», միշտ, մանավանդ նախարարության միջոցին, հետամուտ եղավ այդ նշանաբանի գործադրության՝ այնպես ճարտար և արդյունավետ եղանակով մը, որուն նմանը, ինչպես իրավամբ դիտել կու տա պատմագիր մը, Եգիպտոս շունի իր 6000 տարվա պատմության մեջ»¹:

1882 թվականին, երբ անգլիացիները օկուպացիայի ենթարկեցին Եգիպտոսը, սկսեցին հալածել Նուբարին: Վերջինս կատարեց հնարավոր ամեն ինչ՝ անգլիացիների ձեռքից ազատելու Եգիպտոսի ներքին ինքնավարության որոշ ծվեններ: Անգլիացիներին ցանկալի չէր, իհարկե, Նուբարի նման դիվանագետ ու շրջահայաց անձնավորության առկայությունը Եգիպտոսում, ուստի ամեն կերպ աշխատում էին նրան մեկուսացնել քաղաքական ասպարեզից: Գնալով, նրա և անգլիական գաղութային իշխանության հարաբերություններն ավելի են լարվում: 1888 թվականին Նուբարը վեճի բռնվելով լորդ Կրոմըրի՝ Եգիպտոսի անգլիական կառավարչի հետ, քաջություն է ունենում նրա երեսին ասելու, որ «Դուք (անգլիացիները) արևմուտքի թուրքերն եք» և հեռանում է քաղաքական ասպարեզից:

Եգիպտացիները բարձր են գնահատում Նուբարի՝ իր երկրորդ հայրենիքին մատուցած ծառայությունները: Մուհամմեդ Սաբրին նրան համարում է «Հայկական ծագումով եգիպտական մեծ մի-նիստը, կոփված դիվանագետ», իսկ նրա գործերը՝ «խոշոր բարիք Եգիպտոսի համար»²: Նուբարին բարձր են գնահատում Ահմեդ Շաֆեկը և այլ եգիպտական պատմաբաններ:

Նուբարին միշտ էլ զբաղեցրել է հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը, հասարակական կյանքը, մշակույթի զարգացման խնդիրը, հայ երիտասարդությանը կրթության տալու անհրաժեշտությունը և այլն:

Նա մոտիկից զբաղվել է նաև հայկական հարցով: Բեռլինի կոնֆերանսի նախօրյակին նա հանդիպում է ունեցել Խրիմյանի հետ և վերջինիս խնդրանքով կազմել «Հիշատակագիր մը»՝ վեհա-

ժողովին ներկայացնելու համար, որը սակայն չի ներկայացվել, որովհետև Պոլսի Կենտրոնական վարչությունը հավանություն չի տվել՝ «Հիշատակագրում» առաջադրված պահանջները անբավարար համարելով: Այդ կապակցությամբ Խրիմյանը մի նամակ ունի գրած Նուբարին¹:

Նուբարը դրամական օգնություն է ցույց տվել Պոլսում Շահ-նազարյանի դպրոցը հիմնելու համար, որը սակայն երկար կյանք չի ունեցել²: Նա զգալի միջոցներ է տրամադրել ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգուային՝ գրաբարից ֆրանսերեն թարգմանելու հայկական մի շարք պատմիչների աշխատություններ³: Նուբարի տրամադրած միջոցներով է ֆրանսերեն թարգմանվել նաև Ալիշանի «Սիսվան» աշխատությունը:

1895—1896 թվականի Համիդյան ջարդերից փախած և Փարիզ ապաստանած հայ գաղթականության համար նա հատուկ տուն է բաց արել և նյութապես օգնել գաղթականներին: Նյութական օժանդակություն է ցույց տվել նաև Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողներին:

Խոսելով իր ազգային ծագման մասին, մի կապակցությամբ նա հետևյալն է ասել. «Ես կյանքս նվիրեցի Եգիպտոսին, որովհետև բախտը իմ առջև այս գործս հանեց, հրապուրվեցա անկից և կապվեցա: Բայց օտար երկրի մեջ այդ գործունեությունս երբեք ինձի չմոռացուց, որ հայ մըն եմ»³:

Նուբար փաշայից բացի, արտաքին գործերի, առևտրի, լուսավորության և այլն նախարարություններ գլխավորել են հայ նախարարներ Ստեփան Դեմերջյանը, Տիգրան Ապրոն, Առաքել Նուբարը և ուրիշները⁴, որոնց վրա ավելորդ ենք համարում կանգ առնել:

1907 թվականին Եգիպտական կառավարության կատարած վիճակագրության համաձայն, այնտեղ ապրելիս է եղել 7747 շունչ հայ բնակչություն: Այս մարդահամարի տվյալները՝ եգիպտահայ բնակչության թվի վերաբերյալ, պետք է ասել, որ թերի են. հաշվառման մեջ

1 Գ. Լազյան, Հայաստան և իր դատը, էջ 117—118:

2 Տե՛ս «Բյուզանդիոն», 1899, էջ 248:

3 «Արևելյան մամուլ», 1899, էջ 248:

4 Լ. Աճեմյան, Հայագրի արտաքին գործոց նախարարները Եգիպտոսի մեջ (Տե՛ս Աճեմյանի «Եգիպտահայ տարեցույց», 1924, էջ 61—62):

1 Նազարեթ Աղազարմ, նշված աշխատությունը, էջ 42—43:

2 M. Sabry, L' Empire Egypten. Paris, 1933, p. 237.

են մտել միայն այն հայերը, որոնք իրենց եզիպտական քաղաքացիներ են համարել:

Եզիպտահայ գաղթավայրը XX դարի առաջին քառորդում բավականաչափ մեծանում է՝ Քուրքիայից մի քանի անգամ Եզիպտոս եկող զանգվածային գաղթականությանը:

Եզիպտոսի հայ գաղթավայրը խոշոր թվով գաղթականություն ընդունել է 1909 թվականին՝ Ադանայի ջարդերից հետո: Այդ թվականին Կիլիկիայից և Քուրքիայի տարբեր շրջաններից Եզիպտոս է գաղթել շուրջ երկու հազար հայ գաղթականություն:

Մեծ թվով հայ բնակչություն է եկել Եզիպտոս համաշխարհային առաջին պատերազմի արյունոտ տարիներին, երբ սկսվել են Քուրքիայում հայերի վայրենի ջարդերը: Հայ գաղթականության հոսանքը դեպի Եզիպտոս շարունակվել է նաև զինադադարի սկզբներում ու Զմյուռնիայի և Կիլիկիայի աղետներից հետո¹:

Միայն Սվետիայից միանգամից Եզիպտոս են գաղթել շուրջ 5000 հայեր: Եզիպտոս են տեղափոխվում նաև Քուրքական բանակից դաշնակիցների վերցրած հայ ռազմագերիները: Եզիպտոս են տեղափոխվել նաև շուրջ հազար հայ որբեր:

Քե որքան հայ գաղթականություն է Քուրքիայից Եզիպտոս ապաստանել համաշխարհային առաջին պատերազմի տարիներին ու նրանից հետո և ինչքան է եղել եզիպտահայության ընդհանուր թիվը՝ դժվար է ասել վիճակագրական տվյալների բացակայության պատճառով: Ուսումնասիրողներից ոմանք այդ թիվը 25 000 են հաշվում, ոմանք՝ 30 000, իսկ Գևորգ Մեսրոպը հաշվում է մինչև 50 000: Ըշմարտության մոտիկը, մեր կարծիքով, 20 000-ն է, որից 10 000-ը՝ Կահիրեում, 7 000-ը՝ Աղեքսանդրիայում, իսկ մնացածը՝ այլ վայրերում:

Նոր ժամանակներում ավելի է ընդարձակվում հայերի բնակության քարտեզը Եզիպտոսում. հայերը բնակություն են հաստատել Շարկիում, Ասյութում, էլ-Ֆայումում, Բահարայում, էլ-Մինեյայում, Գիզայում, Պորտ-Սայիդում, Աբու-Գիրգայում, Ասուվանում, Բենի-Սուեյֆում, Իսմայիլյայում և այլ վայրերում:

Նոր ժամանակներում շարունակվում է եզիպտահայ համայնքների ներսում տեղի ունեցող ներքին պայքարը: Ամեն անգամ, երբ ստեղծվում է քաղաքական բարենպաստ իրադրություն, եզիպտահայ աշխատավորները հանդես են գալիս ի պաշտպանություն

արևմտահայ հատվածի ազատագրության, իսկ «չոչեր»-ը կանգնում են շեղոք դիրքի վրա:

1918 թվականին, երբ Եզիպտոսն անկախություն ձեռք բերեց, ազգային սահմանադրությունը կորցրեց իր ուժը: Կազմվեց նոր կանոնադրություն, որը ներկայացվեց կառավարության հաստատմանը, բայց հաստատվեց միայն 1945 թվականին: Եզիպտական կառավարությունը զգալիորեն կրճատել է թեմական իշխանությունների իրավասության սահմանները. 1926 թվականին թեմական իշխանությունների իրավասությանից վերցվել են ժառանգական խնդիրներով զբաղվելու իրավունքը, իսկ հետո՝ նաև ամուսնության գրանցումները¹:

Եզիպտական կառավարության հաստատած կանոնադրության համաձայն, Կահիրեն և Աղեքսանդրիան իրավունք ունեն ընտրել թեմական և քաղաքական ժողովներ: Այդ ժողովներից յուրաքանչյուրը կազմվում է 26 անդամից, որոնցից 24-ը պետք է լինեն աշխարհական, իսկ երկուսը՝ հոգևորական: Ընտրելու իրավունք ունեն 21 տարին լրացած, երկու տարի Եզիպտոսում ապրած և «Ազգային տուրքը» մուծած անձնավորությունները: Ընտրվել կարող են 30 տարին լրացրած անձինք: Թեմական ժողովի անդամներն ընտրվում են 8 տարվա համար, սակայն անդամների կեսի ընտրությունը նորոգվում է 4 տարին մեկ անգամ: Թեմական ժողովներն ընտրում են քաղաքական ժողովներ իրենց անդամներից՝ բաղկացած 7 հոգուց: Քաղաքական ժողովներն իրավունք ունեն փոփոխության ենթարկել կազմական կանոնադրությունը, որոշել համայնքի անդամներից գանձվող «ազգային տուրք»-ի չափը, հաստատել կատարվող կալվածային գնումները և վաճառումները, ընտրել եկեղեցական ժողովների անդամներ և այլն:

Եզիպտահայ աշխատավորության դիրքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ միշտ էլ եղել է բարեկամական: Այդ մասին խոսք կլինի ներկա աշխատության վերջին գլխում: Բայց այստեղ ավելորդ չենք համարում փոքրիկ քաղվածք բերել Աղեքսանդրիայի ՀՕԿ-ի մասնաճյուղի հրապարակած մի կոչից, որը լույս է տեսել Հայաստանի վերականգնման ծանր տարիներին. «Ավերակներու և Հայաստանի միջեն կվերածնի մեր նոր աշխարհը՝ Հայաստանը, — կարդում ենք այնտեղ: — Այն մեղվաջան ու անդուլ աշխատանքը, որ կտանեն մեր եղբայրները հայրենիքին մեջ գերմարդկային ճիգերով, նույնիսկ օտարներու հիացմունքին և գնահատու-

¹ Հ. Մեմյամ, Հայերը Եզիպտոսի մեջ (տե՛ս Ս. Պարթևյանի «Եզիպտահայ տարեցույց», 1918, էջ 140):

¹ «Եզիպտահայ տարեցույց», 1914, էջ 49—50:

մին արժանացած են... Հայրենիքեն օրը օրին հասնող լուրերը մեկ հավատք միայն կներշնչեն գաղութահայ թափառականներուս թե՛ մոտ է այն օրը, որ մենք վերջնականապես պիտի ունենանք մեր երջանկավետ հանգրվանը»¹:

Գաղթավայրում տարբեր ժամանակներում կազմակերպվել են տասնյակ առաջադիմական կազմակերպություններ, որոնց վրա մենք հնարավորություն չունենք կանգ առնելու: Ուզում ենք միայն երկու խոսք ասել Եգիպտահայ ազգային խորհրդի մասին, որը կազմակերպվել է 1945 թվականի հոկտեմբերի 11-ին: Խորհուրդն իր առջև խնդիր է դրել «Նյութական և բարոյական բոլոր միջոցներով աջակցել Մայր հայրենիքի վերաշինական ճիգերին և առաջադիմությունը, մշակույթին, կապ հաստատել և պահել Մայր հայրենիքի հետ՝ հանդիսանալով մնայուն կապ Սովետական Հայաստանի և Եգիպտոսի գաղութի միջև և օժանդակել ներգաղթին»²:

Եգիպտահայ ազգային խորհուրդը միաժամանակ աշխատել է «Ավելի ամրապնդել բարեկամական, մշակութային և հոգեկան կապերը եգիպտական և հայ ժողովուրդների միջև և բարոյապես ու նյութապես աջակցել այդ նպատակին ձգտող ամեն մի ձեռնարկին»³: Այս գործին օգնել են գաղթավայրի բոլոր առաջադիմական կազմակերպությունները:

**Եգիպտահայ
մշակույթը:**

Նոր ժամանակներում եգիպտահայ մշակույթում ամենից խոշոր դերը կատարել և էներգիայումս կատարում են հայկական դրամայի ցուցասերերը:

Ըստ տեղեկությունների, առաջին հայկական դպրոցական շենքը եգիպտահայ գաղթավայրում կառուցվել է 1828 թվականին Կահիրեում, Պեյն էլ-Սուրենի կոչվող տեղամասում՝ Ակնցի բարերար Եղիազար Ամիրյանի կտակով:

Դպրոցական երկրորդ շենքը Կահիրեում կառուցվել է 1854 թվականին Տարպել Կինեան թաղամասում՝ վանեցի բարերար Կարապետ Գալստյանի նվիրատվությամբ: Դպրոցական այս շենքը, առաջինի համեմատությամբ, ավելի ընդարձակ է եղել: Այս դրամայի կոչվել է պատմահայր Մովսես Խորենացու անունով:

Կահիրեի գաղթօջախի մեծանալու հետևանքով՝ այս երկու փոքրիկ դպրոցները այլևս չեն բավարարել, ուստի անհրաժեշտ է

1 ՉՊՀԱ, ֆ. 178, № 431, էջ 36:
2 ՉՊՀԱ, ֆ. 709, № 1, էջ 18—19:
3 Նույն տեղում:

եղել դպրոցական նոր շենք ունենալ: Եվ ժողովրդական հանգանակության ու Պողոս Նուբար փաշայի նյութական օժանդակությամբ, 1907 թվականին Բուլազի թաղամասում կառուցվել է Գալստյան կոչվող ընդարձակ վարժարանի հոյակապ շենքը, իսկ նրա կողքին՝ նույնքան գեղեցիկ մանկապարտեզի շենքը: Նույն բարերարը Կահիրեի Հելիպոլիս արվարձանում կառուցել է հայկական դպրոցական մի այլ շենք, որն իր ընտանիքի անունով կոչել է «Նուբարյան վարժարան»:

1851—1866 թվականներին Աղեքսանդրիայում գործել է «Արամյան» կամ «Պողոսյան» կոչվող դպրոցը, որի շենքը տրամադրել է Պողոս Յուսուֆյանը: Դպրոցը գործում է մինչև այսօր: Դպրոցի շենքը սկզբում փոքր է եղել և հետագայում, երբ մեծացել է Աղեքսանդրիայի հայ գաղթօջախը, անհրաժեշտ է եղել նախկին շենքը վերակառուցել և ընդարձակել:

1890-ական թվականներին հայկական դպրոց է եղել Հեհեայում, ուր սովորող երեխաների թիվը հասել է 150-ի: Կահիրեում և Աղեքսանդրիայում դպրոցներ են ունեցել նաև Մխիթարյանները:

1897 թվականին Կահիրեում բացվում է առաջին հայկական մանկապարտեզը, որն առաջինն է ոչ միայն գաղթավայրում, այլև Եգիպտոսում:

1896—1914 թվականներին հիմնադրվել են յոթ ազգային և երկու մասնավոր դպրոց, որոնք ունեցել են մոտ 1200 աշակերտ¹:

Բացի թվարկված դպրոցներից, տարբեր ժամանակներում Կահիրեում և Աղեքսանդրիայում գործել են մասնավոր անձանց անհատական դպրոցներ ևս, որոնցից անհրաժեշտ է հիշել Սմբատ Բյուրատի վարժարանը՝ Կահիրեում, Մանիսալյան և Քաշճյան քույրերի հիմնած աղջիկների զույգ դպրոցները՝ Կահիրեում, Բերբերյան վարժարանը, Բյուզանդ Գեոզի Պոյուբյանի «Արարատյան կոլեջը»՝ Կահիրեում, Ոսկերչյանի «Հայկազյան» և Վահրամ Արծրունու, «Թարգմանչաց» դպրոցները՝ Աղեքսանդրիայում, Պիոնրյանի, Գուրյանի և Պալունու «Նոր դպրոցը» Հելիպոլիսում և այլն:

Եգիպտահայ մտավորականների մեծ մասը իր կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցներում: Շատ փոքր է Եգիպտոսում այն մտավորականների թիվը, որոնք տեղի հայկական դպրոցների սաներից չեն: Եգիպտոսի հայկական դպրոցները խոշոր

1 Եգիպտահայ դպրոցների մասին տե՛ս Մ. Պետրոսյանի հոդվածը՝ Հարյուրամյակ մը ազգային կրթությունը Գահիրեի մեջ (տե՛ս «Տարեգիրք Արմավենի», 1937—1938):

դեր են կատարել հայկական լեզվի պահպանման, հայ բնակչու-
թյունը ասիմիլյացիայի վտանգից փրկելու, հայերի ինքնագիտակ-
ցության բարձրացման ուղղությամբ և բարձրագույն ուսումնական
հաստատությունների համար մասնագետներ պատրաստելու գոր-
ծում:

Եզիպտոսում հայկական առաջին տպարանը բացվել է 1865
թվականին Կահիրեում Աբրահամ Մուրադյանի կողմից, որը սկսել
է հրատարակել «Արմավենի» անունով կիսամսյա լրագիրը: Եզիպ-
տահայ այս առաջին լրագիրը երկար կյանք չի ունեցել. լույս է
տեսել միայն երեք համար և փակվել՝ տարածման ասպարեզ չու-
նենալու և նյութապես իրեն չապահովելու պատճառով¹:

Եզիպտոսում լույս տեսած հայկական հաջորդ թերթն է «Նե-
ղոս»-ը, որի խմբագիրն է եղել Ղ. Ք. Փափազյանը՝ գործակից ունե-
նալով Վահան Մամուրյանին և Անտոն Ռշտունուն: Փափազյանի
հրատարակած այս թերթը փակվում է թուրք կառավարության
պահանջով, որովհետև այնտեղ տպագրված են եղել թուրք կառա-
վարության դեմ ուղղված հոդվածներ: Խմբագիրը, եզիպտական
կառավարության որոշմամբ, արտաքսվում է երկրից:

«Նեղոս» թերթի փակումից հետո ինչպես Կահիրեում, այնպես
էլ Աղեքսանդրիայում լույս են տեսել մի շարք հայկական թերթեր
և ամսագրեր («Լրաբեր», «Փյունիկ», «Արշալույս», «Նոր օր», «Ար-
տեմիս», «Ազատ բեմ», «Ժողովուրդ», «Պարտեզ», «Լուսաբեր»,
«Շիրակ», «Հորիզոն», «Արև», և ավելի քան 70 անուն այլ թերթեր
և հանդեսներ)²:

Եզիպտոսում տարբեր ժամանակներում գործել են և ներկա-
յումս գործում են բազմաթիվ կրթական, մշակութային ու թատե-
րական միություններ, որոնց բոլորի վրա կանգ առնել չենք կա-
րող: Այդ միություններից աչքի է ընկել Աղեքսանդրիայի «Տիգրան
Երկաթ» մշակութային միությունը, որն ավելի քան վաթսուամյա
անցյալ ունի, Կահիրեի «Գեղարվեստասիրաց»-ը, որը մոտավորա-
պես կես դարի պատմություն ունի, Աղեքսանդրիայի «Հառաջադի-
մասերը», Կահիրեի «Նավասարդ» միությունը և այլն:

Եզիպտոսի և ընդհանրապես հայ բոլոր գաղթավայրերի հա-
սարակական կյանքում կարևոր իրադարձություն է հանդիսացել

1 Վ. Զարգարյան, Եզիպտահայ լրագրության վաթսուամյակը (տե՛ս Ս. Պարթև-
թևյանի «Եզիպտահայ տարեցույց», 1913, էջ 73—77):

2 Ա. Պալյան, Եզիպտահայ լրագրությունը (տե՛ս Ս. Պարթևյանի «Եզիպտա-
հայ տարեցույց», 1913, էջ 147—155):

Հայ բարեգործական ընդհանուր միության ստեղծումը Կահիրե քա-
ղաքում 1906 թվի ապրիլի 5-ին: Միությունը սկզբում ունեցել է
816 անդամ¹:

Միությունն իր առջև դրել է շնորհակալ մի խնդիր. կազմա-
կերպել նվիրատուություններ, հավաքել նյութական միջոցներ՝ օգ-
նություն ցույց տալու համար ծանր վիճակում գտնվող այս կամ
այն հայ հատվածին:

Խոսելով եզիպտահայ մշակույթի մասին, չի կարելի անտեսել
եզիպտահայերի մատուցած ծառայությունները Եզիպտոսի մշա-
կույթին:

Ամենից առաջ, եզիպտահայերը իրենց համեստ մուծումներն
ունեն Եզիպտոսի ճարտարապետության բնագավառում: Եզիպտո-
սի ճարտարապետության հեղինակավոր մի մասնագետ՝ Քաստո-
նը, հայ ճարտարապետության հետքեր է տեսնում Պատր էլ Զա-
մալի ժամանակաշրջանում կառուցված մի շարք մզկիթների վրա:

Մահմեդ Ալիի ժամանակ Եզիպտոսում նախագծված և կառուց-
ված ճարտարապետական մի շարք հուշարձանների հեղինակը Գե-
վորգ Ռաֆայելյանն է եղել:

Կահիրեի իշխանագունների պալատների զգալի մասը կառու-
ցել է ճարտարապետ Զենոբ Միրամեթճյանը: Նա իսմայիլ փաշայի
պալատական ճարտարապետն է եղել: «Կեզիրեի Բալխսի մավ-
րիտանական սյունբարձ ճեմելիքները, Ալհամպարայի նմանողու-
թյամբ, պատիվ կբերեն հայուն տաղանդին»,— գրում է ճարտա-
րապետության պատմության լավագիտակ մասնագետներից մեկը²:

Նոր շրջանում Եզիպտոսի ճարտարապետության մեջ աչքի
ընկնող վաստակ է ունեցել Հրանտ Մերտինյանը, որը դարձյալ
Եզիպտոսի արքունական գլխավոր ճարտարապետն է եղել: Ըստ
Ալպոյաճյանի տեղեկության, «Իր ճարտարապետական հղացում-
ներն են Մոնթազայի պալատին հրաշագեղ միջնադարյան ոճով
նոր պալատը իր հարակից շենքերով, արքայական գրասենյակը,
Ռաս-էլ-Թինի պալատին իշխանուհիներուն և պաշտոնատարներուն
հատկացյալ հարկաբաժինները, Ապտինի պալատին բեմը և ընդու-
նելության սենյակները: Քուպպեյի պալատին ճակատներուն բա-
րեզարդությունը, «կառածները» և փառավոր մուտքերը»:

1 Ա. Հանրմյան Զ. Ք. Ը. Միությունը (տե՛ս Ս. Պարթևյանի «Եզիպտահայ
տարեցույց», 1913, էջ 166—172):

2 Վ. Պալյան, ճարտարապետությունը Եզիպտոսի մեջ և ճարտարապետներին
գերը (տե՛ս Ս. Պարթևյանի «Եզիպտահայ տարեցույց», 1913, էջ 112):

Եգիպտոսի աչքի ընկնող հայ ճարտարապետներից են հանդիսացել Կ. Պալլանը, Հ. Ազնավուրյանը և Լևոն Նաֆլյանը: Վերջինս հանդիսացել է Կահիրեի Լուսավորիչ եկեղեցու ճարտարապետը:

Եգիպտահայերը գործուն մասնակցություն են ունեցել նաև Եգիպտոսի տպագրության և մամուլի ասպարեզում: Հայ խմբագիրների ձեռքբերով են հրատարակվել «Մարր», «Էլ-Քիճարեթ», «Էլ-Ջաման», «Էլ Մուշիր», «Էլ Ֆելլահ», «The Sphinx», «La Bourse Egyptienne» և այլ անուններով արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն պարբերականներ:

Եգիպտահայ արվեստագետների մեջ աչքի են ընկել նաև նրկարիչները: Չնայած միջին դարերում Եգիպտոսում չի խրախուսվել ո՛չ նկարչությունը և ո՛չ էլ արձանագործությունը, սակայն գտնվել են, այնուամենայնիվ, առանձին հայ նկարիչներ, որոնք փայլել են իրենց ժամանակին և թողել են իրենց ստեղծագործություններից որոշ նմուշներ¹:

XIX դարի նկարիչներից մեծ հռչակ է ստեղծել եգիպտահայ Մուսլիմ Եոհաննս էլ-Արմանին, որի նկարները ցրված են Եգիպտոսի եկեղեցիներում: Նրա ձեռքով են կատարված Կահիրեի Մուսլաբա նշանավոր եկեղեցու որմնանկարները:

Նոր ժամանակներում Եգիպտոսի դիմանկարչության ասպարեզում մեծ հաջողությամբ է հանդես եկել Երվանդ Գեմերջյանը: Եղել են ոչ քիչ թվով եգիպտահայ այլ նկարիչներ ևս, որոնք հանդես են եկել տեղի և արտասահմանյան ցուցահանդեսներում ու մրցանակներ շահել:

IV. ՍՈՒԴԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ

Սուդանահայությունը սփյուռքահայության այն հատվածն է, որի կարճատև, բայց հետաքրքիր պատմությունը դուրս է մնացել պատմաբանների ուշադրությունից: Մոտ 80—100 տարվա աշխույժ կյանք ունեցող սուդանահայ գաղթօջախի պատմությանը նվիրված են ընդամենը մի քանի լրագրային հոդվածներ, որոնք ավելի վերաբերում են առանձին անհատների գործունեությանը, քան Սուդանի հայ գաղթօջախների պատմությանն ամբողջությամբ առած:

Սուդանի հայկական գաղթավայրը երկար պատմություն չունի. նա հիմնվել է XIX դարի երկրորդ կիսում: Զարմանալ կարելի է, թե ինչպե՞ս է, որ հայ գաղթականությունը դարեր շարունակ բրնակվել է Եգիպտոսում և Եթովպիայում ու մուտք չի գործել նրանց հարևան Սուդանը:

Առաջին գաղթականները Սուդան են եկել Արաբկիրից և Ակնից ու բնակություն են հաստատել Խարթումում: Գաղթօջախը ստվարացել է Պողոս Նուբարի կառավարչության տարիներին (1857—1858)¹: Սակայն հետագայում գաղթավայրի բնակչությունը զգալիորեն պակասել է: Դրա պատճառը Մեհտիի և Խալֆայի կրոնական կատաղի հալածանքներն են եղել ոչ մահմեդականների նկատմամբ. Սուդանում բնակություն հաստատած շատ հայեր, հույներ, հրեաներ և ասորիներ թողել են և հեռացել:

Սուդանում հաստատված հայ գաղթականների առաջին խմբերի հիմնական զբաղմունքը եղել է առևտուրը և արհեստագործու-

¹ Ե. Սեմիրջյան, Հայ գեղարվեստն ու արվեստագետները Եգիպտոսի մեջ (տե՛ս Ս. Պարթևյանի «Եգիպտահայ տարեցույց», 1913, էջ 246—261):

¹ Հ. Սեմերյան, Սուդանահայ գաղութը (տե՛ս «Ամենույն տարեցույց», Կ. Պոլիս, 1913 թ., էջ 188):

թյունը: Գտնվել են նաև հայեր, որոնք հողամասեր են գնել և զբաղվել հողագործությամբ: Նրանց մեջ, ի դեպ, գտնվել են այնպիսիները, որոնք օրինակելի տնտեսություններ են ստեղծել և գովեստի արժանացել Սուդանի կառավարության կողմից:

Սուդանի հայկական գաղթավայրը բավականաչափ նոր գաղթականներ է ընդունել 1895—1896 թվականներին Համիդյան ջարդերի, հետագայում՝ Ադանայի կոտորածների ժամանակ: Զանգվածային հայ գաղթականություն է եկել Սուդան հատկապես համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և Զմյուռնիայի և Կիլիկիայի դատարկումից հետո: Սուդան եկող հայ գաղթականության հոսանքը մեծ մասամբ անցել է Եգիպտոսի վրայով, այդ պատճառով Սուդանի հայ գաղթավայրը համարվում է Եգիպտոսի գաղթավայրի մի ճյուղը:

Նոր եկող գաղթականությունը զգալիորեն փոխել է Սուդանի հայ գաղթականության սոցիալական պատկերը. եթե առաջ հայ բնակչության մեծամասնությունը կազմել են առևտրականները, ապա այժմ մեծամասնությունը դառնում են արհեստավորությունը և բանվորությունը: Սուդանի հայկական համայնքներում սկըսում են երևալ նաև հայ մտավորականներ՝ բժիշկներ, ատամնաբույժներ, դեղագործներ, գյուղատնտեսներ և այլն:

Սուդանի ժողովուրդը, պետք է ասել, բարյացակամ դիրք է ունեցել իր մոտ ապաստանած հայ գաղթականության նկատմամբ: Տեղի մտավորականներից մեկը, Խարթումից գրած իր թղթակցության մեջ, նկարագրելով սուդանահայ գաղթավայրի վիճակը, իրավացիորեն նկատել է, որ տեղացի ժողովուրդը բարյացակամ դիրք ունի հայերի նկատմամբ, իսկ կառավարությունն այնքան վստահությամբ է վերաբերվում, որ երբեմն պետական պատասխանատու պաշտոններ է վստահում հայերից ոմանց¹:

Սուդանում հաստատված հայ վաճառականներից ոմանք, իրենց գործունեության համար նպաստավոր հող գտնելով, զգալի դեր են կատարում Սուդանի տնտեսական կյանքում²:

Զնայած սկզբնական շրջանի սուդանահայ և ոչ մի գաղթօջախում չի եղել դպրոց, հասարակական կամ մշակութային կազմակերպություն, սակայն սուդանահայերը սերտորեն կապված են եղել Եգիպտոսի և Եթովպիայի հայ գաղթօջախների հետ և նրանց

միջոցով հաղորդակից եղել հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող գրեթե բոլոր իրադարձություններին:

Սուդանի հայ գաղթօջախներում եղել են եվրոպական բարձրագույն կրթություն ստացած և մի շարք լեզուներ տիրապետող մարդիկ: Այդ հանգամանքը հնարավորություն է տվել Խարթումում և Օմդուրմանում ստեղծելու մտավորականների կամ, ինչպես իրենք էին ասում՝ «կոլեջականների» մի մեծ խմբակ՝ պրոֆ. Գր. Ճերեճյանի գլխավորությամբ:

Մինչև ներկա դարի սկիզբը, հայ բնակչության ցրվածության հետևանքով, հնարավոր չի եղել Սուդանում ստեղծել հայ գաղթավայրի հավաքական կյանք և կազմակերպել գաղթավայրը դեկավարող վարչություն: Մասամբ այդ բացատրվում է նաև նրանով, որ նորեկ գաղթականության աչքը դեպի ետ է եղել. դեռ նրանք ապրել են այն հույսերով, որ կստեղծվեն քաղաքական նպաստավոր պայմաններ և իրենք ի վիճակի կլինեն վերադառնալու նախկին բնակավայրերը: Սկզբնական շրջանում որևէ շատ ու քիչ բազմաբնակիչ հայ գաղութ Աֆրիկայի կենտրոնում համարվել է անհեթեթություն: Բայց երբ հայերի թիվը մեծացավ երկրի զանազան քաղաքներում, առաջ եկան համայնքի հետ կապված հրամայական լուծում պահանջող հարցեր, որոնք պետք է պատասխան ստանային. օրակարգի առաջին հրատապ հարցը դառնում է հայկական դպրոցի հիմնադրման հարցը: Զբնկնելով մանրամասնությունների մեջ, ասենք, որ ժողովրդի հանգանակած գումարի, բարեգործների նվիրաբերումների շնորհիվ շատ ուշ, 1953 թվին միայն սկսվում է և 1956 թ. ավարտվում Խարթումի հայկական դպրոցի շենքի կառուցումը: Ընդհանուր կրթական առարկաներից բացի, դասավանդվում են մի շարք հայագիտական առարկաներ: Դպրոցին կից կա «Պարսամյան» անունով հայկական մանկապարտեզ:

XX դարի սկզբներում սուդանահայերն այնքան են բազմացել, որ ձեռնամուխ են եղել կենտրոնական վարչական մարմնի ստեղծմանը: Նման կազմակերպությունն անհրաժեշտ էր հայկական համայնքը տեղական իշխանություններին ներկայացնելու և հայ համայնքի շահերը պաշտպանելու համար:

Անգլիական գաղութային իշխանությունները արժանի չէին համարել, որ հայերն իրենց առանձին ներկայացուցիչներն ունենան տեղական կառավարության մեջ: 1912 թվականին Սուդան ժամանած նշանավոր Յագուպ Արթին փաշան, երբ հետաքրքրվում է սուդանահայերով և իմանում է, որ նրանք ազգային կենտրո-

1 «Պայքար», 1960 թ., հուլիսի 24:

2 Գ. Փալադեան, Սուդանի հայ գաղութը (տե՛ս «Պայքար», 20 հուլիսի, 1960 թ.):

նական կազմակերպություն և ներկայացուցիչ շունեն տեղական իշխանություններում, խորհուրդ է տալիս Սուդանի կառավարության նշանավոր իրավաբաններից մեկին՝ Աբգարին, օգնել հայերին այս գործում¹:

1917 թվականին սուդանահայությունն ընտրում է հինգ հոգուց բաղկացած գաղութային վարչական մարմին: 1917—1918 թթ., իրենց շինարնակ և ինդոնեզարնակ հայրենակիցների նման, Սուդանի հայերը կազմում են իրենց «Կանոնադրությունը» և ներկայացնում տեղական իշխանությունների հաստատմանը²:

Ըստ այդ «Կանոնադրության», հայկական վարչական ժողովի նախագահը հանդիսանալու է հայոց ներկայացուցիչը տեղական իշխանությունների առջև: Ժողովը՝ սուդանահայ գաղութների գերագույն օրգան է համարվում:

Սուդանահայ գաղութային ժողովը իրավասու է նաև հսկելու գաղթօջախների համերաշխության վրա: Նա պարտավոր է նաև գլխավորել և կազմակերպել գաղթօջախում տեղի ունեցող ազգային բնույթի այս կամ այն միջոցառումները, տնօրինելու կտակների, ամուսնության, ամուսնալուծության և զանազան այլ հարցեր: Հետաքրքիր է, որ սուդանահայերը առաջնորդվում են Մխիթար Գոշի «Դատաստանագրքով»:

Սուդանահայ «Կանոնադրության» համաձայն, «Վարչական ժողովը» պարտավոր է հսկել Սուդանի հայ գաղթօջախների բոլոր հասարակական կազմակերպություններին: Ըստ վերջին տեղեկությունների, Սուդանում այժմ գործում են հետևյալ կազմակերպությունները՝ «Դպրոցի հոգաբարձություն», «Խարթումի ազգային վարժարան», «Հայկական ակումբ», «Հայ երիտասարդաց միություն» և «Հայ բարեսեր տիկնանց միություն»³:

Սուդանի հայ բարենպատակ կազմակերպությունների թվին է պատկանում հայ բարեգործական ընկերությունների մասնաճյուղը: Այն ստեղծվել է դեռևս 1911 թվականին:

Այստեղ գործում է «Հայկական ակումբը»: Նրա գործունեության շրջանակները սահմանափակ են. ակումբը զուրկ է գրադա-

1 Գ. Փոլադյան, Սուդանի հայ գաղութը (տե՛ս «Պայքար», 1958 թ., 25 հուլիսի):

2 Զ. Արզումանյան, Սուդանահայ գաղութն այսօր (տե՛ս «Էջմիածին», 1959 թ., էջ 41—42):

3 «Պայքար», 1950, հուլիսի 26:

րան-ընթերցարանից: Նա մի տեսակ հավաքատեղի է Խարթումի և Օմդուրմանի հայության համար¹:

Խարթումից և Օմդուրմանից հետո Սուդանի հայ գաղթօջախներից երրորդը՝ Գեդարեֆի գաղթօջախն է: Գեդարեֆի գաղթօջախը նկարագրել է Գ. եպ. Փոլադյանը: Գեդարեֆի հայկական գաղթօջախը կազմակերպվել է XX դարի սկզբներին:

Հիմնականում առևտրով զբաղվող Գեդարեֆի հայերը արտահանում էին հացահատիկ և խեժ:

Գաղթավայրը ստվարացել է 1915 թվականից հետո, երբ Աֆրիկայի կենտրոն հասան արևմտահայ գաղթականների որոշ խումբեր: Այս գաղթականների գալով ոչ միայն ավելացավ համայնքի թիվը, այլև փոխվեց նրա սոցիալական պատկերը: Եկողների մեջ եղել են բազմաթիվ արհեստավորներ և հողագործներ²:

Աֆրիկայի խորքերում ընկած այս հայ համայնքը կազմել է իր «Կանոնադրությունը», որի հիմնական նպատակն է հսկել գաղթօջախի կյանքի զանազան բնագավառների վրա, թույլ չտալ նրա ձուլումը: Ըստ կանոնադրության, համայնքի գերագույն օրգանն է «Վարչական ժողովը», որն ընտրվում է տեղի հայերի ընդհանուր ժողովում՝ երկու տարին մեկ անգամ:

Հայ դպրոցի ստեղծման գործը կազմակերպվում է 1930 թվականից: 1937 թվականի մարտի 17-ին կառավարության նվիրած հողակտորի վրա հայերը կառուցել են հայկական դպրոցի շենք:

Սուդանի հայ համայնքներից է եղել նաև Կասսալան: Տեղական իշխանությունները 1936 թ. տրամադրել են հայերին հատուկ հողամաս՝ հայկական թաղամաս կառուցելու համար: Սակայն հայերը ինչ-ինչ նկատառումներով հրաժարվել են նրանից: Հայ գաղթօջախի վերացումը արագացրել են 1940 թվականի իտալական զավթումները:

Սուդանի արդեն անհետացած գաղթօջախներից է Գիզիրայի մայրաքաղաքի՝ Ուադ-Մեգանիի գաղթօջախը: Այսօր անհատ հայ ընտանիքներ են ապրում Սուդանի մի քանի այլ քաղաքներում:

Այժմ Խարթումում և Օմդուրմանում 700 հայեր են ապրում, որոնք պարապում են գլխավորապես վաճառականությամբ և արհեստներով:

Սուդանի քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո սուդանահայերի դրությունը զգալիորեն բարելավվել է: Ըստ Փո-

1 «Պայքար», 1950, հուլիսի 26:

2 Նույնը, 1950, օգոստոսի 2:

լադյանի վկայության, որն այցելել է Սուգանի հայ գաղթավայրը, «Հայերը կվայելեն կատարյալ ազատություն և իշխանությունների կողմից կատարյալ վստահություն»: Հայկական գաղթօջախներն ունեն իրենց դպրոցները և հասարակական կազմակերպությունները¹:

Մի քանի տարի առաջ, երբ Սուգանի հայ գաղթավայրի ներկայացուցիչները պաշտոնապես ներկայացել են կառավարությանը և համայնքի անունից իրենց շնորհակալությունն են հայտնել կառավարությանը՝ սուգանահայերի նկատմամբ ցուցաբերած հոգատարության առթիվ, կառավարության ներկայացուցիչը պատասխանել է. «Հայերը մեր եղբայրներն են, ինչ որ անում ենք, մեր պարտականությունն ենք միայն կատարած լինում»²:

Չնայած այսպիսի վերաբերմունքին, այնուամենայնիվ հայ գաղթավայրը գոյատևելու հեռանկարներ չունի: Անհիմն չէ խարթունաբնակ հայ թղթակիցներից մեկը նկատել. «Սուգանի մեջ զորավոր հայ գաղութի մը երևակայելը անհեթեթություն պիտի ըլլա»³:

Սա է, իհարկե, Սուգանի հայ գաղութի իրական վաղը, որքան էլ վարդազուն չերևա այսօրը:

1 «Ամենուն տարեցույց», 1913, էջ 142:

2 «Արև», 1957, մարտի 3:

3 «Պայքար», 1960, հուլիսի 31:

V. ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ¹

Եթովպիայի հայ գաղթավայրի նոր շրջանի պատմությունը սկսում է փաստորեն XIX դարի երկրորդ կեսից, իսկ մինչ այդ հայ բնակչության թիվն այնքան է փոքր եղել, որ գաղթավայրը ի վիճակի չի գտնվել հավաքական կյանք կազմակերպելու: XIX դարի երկրորդ կեսում, երբ Եթովպիա են գալիս գաղթականական նոր հոսանքներ և ստվարանում է գաղթավայրը, նորից կազմակերպվում է գաղթավայրի հասարակական կյանքը:

Եթովպիայի պատմության լավատեղյակ մասնագետներից մեկը՝ Հայկ Բաթբաբանը, Եթովպիայի հայ գաղթավայրի կազմակերպված նոր շրջանի սկիզբը համարում է 1866 թվականը և այն կապում Պողոս Մարգարյանի անվան հետ, որը հաստատվելով Եթովպիայում, գործուն աշխատանք է կատարել եթովպահայ համայնքները կազմակերպելու ուղղությամբ²:

XIX դարի վերջին տասնամյակում, հատկապես 1895—1896 թվականներին, Եթովպիայի հայ գաղթավայրի բնակչությունն ավելի է ստվարացել համիդյան վայրագություններից հետո, երբ Թուրքիայից փախած հայ գաղթականական խմբերը զանգվածա-

1 Մենք հրաժարվում ենք գործածել «հարեշ» և «Հարեշտան» անվանումները: Նրանք ծագել են Ակսումի ցեղերից մեկի «հարաշատ» անունից: Եթովպացիները «հարաշ» և «Հարաշտան» բառերում վերավորական երանգ են տեսնում (արաբերեն «հարաշ»-ը նշանակում է «խառնել», «խառնված ժողովուրդ», «խառնածին»: Վաղուց ի վեր պաշտոնապես երկիրը կոչվում է Եթովպիա: Այդ անունը հունարեն է «Ալթոպիա» ձևով և ունի «թրծած երես», «թխամորթ», «թխամորթ մարդկանց երկիր» իմաստը:

2 Հայկ Բաթբաբան, Արդի Եթովպիա և հայ գաղութը, Ատիս Ապեպա, Վենետիկ, 1930 թ., էջ 165:

բար սկսում են գալ և հաստատվել Եթովպիայի զանազան քաղաքներում:

Ադիս-Աբեբայի ուսական դեսպանատան բժիշկը ցարական արքունիք ուղարկած իր մի ղեկուցագրում հետևյալ ուշադրավ տեղեկությունն է հաղորդել հայ գաղթականների գալու և բնավորվելու մասին. «Յոթ մի նոր հայ գաղթական է գալիս, նրա առաջին գործը լինում է իր համար ապրուստի հարմարությունները վերցնում է մի կտոր ամառի հող, որի վրա նա մի համեստ, բայց մաքուր բնակարան է կառուցում, հետո սկսում է շուրջը ցանկապատելով պտղատու ծառեր տնկել կամ բանջարանոց մշակել, այնպես որ՝ մի քանի ժամանակից հետո կտեսնեք հանկարծ, որ ամառի հողը դարձել է գեղեցկություն ներկայացնող մի տեսարան»¹:

Նոր եկող հայ գաղթականության մեծ մասը եղել են արհեստավորներ և գյուղացիներ: Այս գաղթականության ժամանակից հետո հիմնովին փոխվել է հայ գաղթականության սոցիալական կազմը. եթե առաջ գաղթավայրի բնակչության հիմնական մասը կազմել են առևտրականները և պետական պաշտոնյաները, ապա այժմ դառնում են արհեստավորները և գյուղատնտեսության մեջ աշխատողները: Հայ արհեստավորները զբաղվել են 28 զանազան մասնագիտություններով: Առանձնապես մեծ թիվ են կազմել ոսկերիչները, զինագործները և երկաթագործները: Հայ արհեստավորներից ոմանք զբաղվել են նաև փղոսկրի մշակությամբ:

Հայ արհեստավորները շնայած Եթովպիայում համբարություններ չեն կազմել և աշխատել են առանձին-առանձին, սակայն մրցակիցներ չեն ունեցել և երկար ժամանակ որոշ արհեստների մեծատիրությունը գտնվել է նրանց ձեռքում:

Ռուսական դեսպանատան բժիշկը վերը հիշված ղեկուցագրում, մասնավորելով իր տեղեկությունը Եթովպիայի հայ արհեստավորության մասին, գրում է. «Արհեստների մեջ ավելի նշանակալի է հայերի մատուցած ծառայությունները: Նրանք են եղել Մենելիք թագավորի մոտ կատարելագործված արհեստների մասին առաջին գաղափար տվողները: Շատ անգամ նյութական վնաս կրելով, նրանք աշխատում են ցույց տալ իրենց ընդունակությունները»²:

¹ Գ. Արաբյան, Աբեսինայի հայ գաղթականությունը (տե՛ս «Մուրճ», 1904, № 7, էջ 66):

² «Մուրճ», 1904, № 7, էջ 65:

Հայ արհեստավորները շատ հաճախ վերցրել են Եթովպացի աշակերտներ և սիրով սովորեցրել իրենց արհեստը: Պետական ծառայության մեջ գտնվող հայ արհեստավորներն արդեն ի պաշտոնն սովորեցրել են տեղացիներին իրենց արհեստների նրբությունները: Եթովպաբնակ Բաթբաբան Հայկը այդ մասին հետևյալն է գրում. «Հայն ըլլալով մեծ մասամբ արհեստավոր և անմիջական շփման մեջ գտնվելով բնիկ տարրին հետ, անոր սովորեցուցած է իր արհեստը, հասուցած է շատ մը արհեստավորներ և օգտակար հանդիսացած է Եթովպացիներուն ոսկերչութեան, թիթեղագործութեան, կահույքագործութեան, գորգագործութեան և այլնի մեջ»¹:

Մեծ է եղել հատկապես ոսկերիչ Տիգրան Հեպեյանի գործունեությունը. նրա ջանքերով տասնյակ Եթովպացիներ սովորել են ոսկերչություն և տարածել այդ արհեստը երկրում:

Հայ արհեստավորները, պետք է ասել, սպառման շատ լայն շուկա չեն ունեցել. նրանց պատրաստած ապրանքների համար առանձին շահագրգռվածություն չեն ցուցաբերել վաճառականները, ուստի արհեստավորները հաճախ իրենք են ստիպված եղել իրենց արտադրանքը շուկա հանելու:

Եթովպահայ գաղթավայրի սոցիալական կազմում զգալի թիվ են կազմել հայ գյուղացիները: Նրանք հաստատվել են գլխավորապես քաղաքամերձ վայրերում:

Արհեստավորներից և գյուղացիներից բացի, Եթովպիայում եղել են այսպես կոչված ազատ մասնագիտության տեր մարդիկ՝ ճարտարապետներ, դեղագործներ, ատամնաբույժներ, մեքենագետներ և այլ մասնագետներ:

Պետք է նշել, որ Եթովպահայերը զգալի դեր են կատարել ո՛չ միայն Եթովպիայի արհեստագործության գործում, այլև կատարել են նաև կուլտուրական որոշ դեր հյուրընկալ երկրում: Այդ փաստը, ի դեպ, նշել են անգամ օտարները: «Անուրանալի է,— գրում է եվրոպացի մի ճանապարհորդ,— որ հայերը որոշ կուլտուրական դեր են կատարում... Նրանք, մյուս եվրոպացի, հնդիկ կամ արաբ գաղթականների նման, միմիայն շահագիտական ձգտումներն չեն առաջնորդուած. իրենց ամենահամեստ դիրքում անգամ, խրատական օրինակ են ներկայացնում բնիկների վերաբերմամբ...»²:

¹ Զ. Բաբբան, նշված աշխատությունը, էջ 268—269:

² Գ. Արաբյան, Աբեսինայի հայ գաղթականությունը (տե՛ս «Մուրճ», 1904, № 7, էջ 66):

Գաղթավայրի բնակչության սոցիալական կազմում թեպետ մեծ թիվ չեն կազմել վաճառականները, բայց նրանք խոշոր դեր են խաղացել Եթովպիայի տնտեսական կյանքում, մասնավորապես արտաքին առևտրի ասպարեզում:

XIX դարի վերջերում և XX դարի սկզբներում Եթովպիայում գործել են հայկական տասը առևտրական տներ, որոնք իրենց մասնաճյուղերն են ունեցել ասիական և եվրոպական մի քանի երկրներում: Հայ առևտրականները ներմուծել են երկաթեղեն, զենք, զինամթերք, մետաքս, կապար, բամբակեղեն, ապակեղեն, ներկեր, զանազան մեքենաներ, գործիքներ և այլն: Արտահանել են մորթեղեն, սուրճ և այլն: Նրանք փաստորեն գտնվել են կոմպրոդորական դերում:

Հատկապես մեծ է եղել հայերի դերը զենքի և ռազմամթերքի մատակարարման ասպարեզում: Սկսած XIX դարի վերջից, տարիներ շարունակ հայերի ձեռքումն է գտնվել եթովպական բանակին հրետանի և այլ զենքեր մատակարարելու գործը:

Առաջին տարիներին հայերը ներմուծված զենքը, ռազմամթերքը և մյուս ապրանքները փոխանակել են փղոսկրի, մեղրամոմի և այլ արտահանվող ապրանքների հետ:

Երբ հիմնվեց նոր մայրաքաղաքը՝ Ադիս-Աբեբան և առաջացան որոշ դժվարություններ հաղորդակցության ու մատակարարման գործում, հայ վաճառականներն առաջիններից են եղել, որ հմտորեն կարողացել են կազմակերպել ապրանքների փոխադրումը Ադիս-Աբեբա—Դերե-Դավա—Ջիբութի գծով՝ հնարավորություն տալով ստեղծելու անխափան կապ երկրի կենտրոնի, Կարմիր ծովի և Ադենի ծոցի միջև: Այս ձեռներեցությունն էլ ավելի է բարձրացրել նրանց հեղինակությունը տեղացիների և կառավարության մոտ:

Եթովպիայի հայ բնակչության կազմում զգալի թիվ են կազմել նաև պետական հիմնարկներում աշխատող պաշտոնյաները:

Մինչև XIX դարը, ինչպես ասել ենք, բավականին սերտ, բարեկամական հարաբերություններ են գոյություն ունեցել հայերի և եթովպացիների միջև: Դրանում, անշուշտ, որոշ նշանակություն է ունեցել երկու ժողովուրդների դավանակից լինելը:

Թե ինչպիսի մեծ վստահությամբ են վերաբերվել եթովպացիները հայերին, կարելի է դատել այն փաստից, որ այն ժամանակ, երբ եվրոպացիների մուտքը արգելված է եղել Եթովպիա, հայերն ազատ ելումուտ են ունեցել այնտեղ:

Ձեռներեց մի շարք հայեր, շահելով եթովպական արքունիքի վստահությունը, առաջ են քաշվել պետական ղեկավար աշխատանքների: Բավական է ասել, որ այնպիսի կարևոր պաշտոն, ինչպիսին արքունիքի գանձարանի կառավարչությունն է, վստահվել է հայ պաշտոնյանների¹: Քսան տարուց ավելի երկրի գլխավոր ճարտարապետն է եղել Գրիգոր Հովյանը: Նրա կառուցած բազմաթիվ շենքերը, հատկապես առողջապահական հիմնարկները, մինչև հիմա աչքի են ընկնում Եթովպիայի զանազան քաղաքներում: Ավելի ուշ շրջանում ճանաչված ճարտարապետներից է եղել Մինաս Խերպիկյանը: Նրա ստեղծած հատակագծերով, Եթովպիայի զանազան վայրերում կառուցվել են բազմաթիվ ճանապարհներ, կամուրջներ և ճանապարհաշինության հետ կապված այլ կառույցներ:

Եթովպիական Հովհան թագավորի մոտիկ խորհրդականներն են եղել եղբայրներ Կապրո Որգեն և Միրաճ Որգեն²: 1874 թվականից սկսած Մենելիք թագավորի բժշկապետն է հանդիսացել Պաղոս Մարգարյանը³: Ավելի նոր ժամանակներում Մենելիք երկրորդի ոսկերչապետն է եղել Տիգրան Հեպեյանը⁴: Նրա ձեռքով են պատրաստվել Մենելիքի թագերը, որոնցից ամեն մեկը, ըստ ականատեսների վկայության, ոսկերչական արվեստի գլուխ գործոցներից է:

Անձնվեր և հավատարիմ ծառայության համար բազմաթիվ հայեր արժանացել են եթովպական կառավարության բարձր շքանշաններին և պարգևներին: Եղել են հայեր, որոնք պարգևատրվել են անգամ «Սողոմոնյան» կոչվող շքանշանով, մի շքանշան, որը թագավորական տան անդամներին է միայն շնորհվել:

Եթովպահայ համայնքները երախտագիտորեն գնահատելով հյուրասեր եթովպացիների բարյացակամ վերաբերմունքը, աշխատել են հարմար ժամանակներում վարձահատույց լինել: Այդ ավելի ցայտուն նկատվում է Եթովպիայի համար ստեղծված ծանր փորձությունների ժամանակ, երբ եթովպացի ժողովուրդը զենք է վերցրել պաշտպանելու իր ազատությունը և քաղաքական անկախությունը:

Օտար նվաճողների դեմ Եթովպիայի մղած պայքարի պատմության մեջ նշանակալից տեղ ունի Սարգիս Թերզյանը, որը

1 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 471:

2 Տ. Վ. Սափրիչյան, Երկամյա պանդխտություն ի Հապեշտան, էջ 136—139:

3 Հայկ Բաբաբաճ, նշված աշխատությունը, էջ 170:

4 Տե՛ս «Պայքար» օրաթերթ, 1960, մայիսի 10:

Եթովպիայում հայտնի է Սարգիս Թրլլիբ («Մեծ») մականունով:

Թերզյանը Եթովպիա է եկել 1882 թվականին: Նա սկզբում հաստատվել է Հարարում, իսկ հետո զինվորական ծառայության է մտել Մենելիբ թագավորի զորաբանակում: Պատերազմներում ցույց տված իր արտակարգ քաջության և ձեռներեցություն համար նա առաջ է քաշվում պետական բարձր պաշտոնի և նշանակվում Կելեսասայի ու Բելյոկաբուպայի կարևոր շրջանների կառավարիչ: Արևելյան շրջանների միավորման համար Մենելիբ II-ի կատարած արշավանքների ժամանակ դարձյալ դրսևորվել է Թերզյանի կազմակերպչական, վարչական և ռազմական տաղանդը: Սոմալիների հակաեթովպական ելույթները զսպելուց հետո, Մենելիբ II-ը նրան, որպես Հարարին քաջատեղյակ անձի, հանձնարարել է գրավել քաղաքը, որն այն ժամանակ գտնվում էր էմիր Աբդուլլայի իշխանության տակ: Թերզյանը, մի խումբ երիտասարդներով, գիշերային հարձակումով, գրեթե առանց կռվի զինաթափ է անում քաղաքը պաշտպանող կայազորը և հնարավորություն ստեղծում, որ Մենելիբն իր զորքերով մտնի քաղաք: Այս հաղթանակից հետո, տարիներ շարունակ, նա մեծ հմտությամբ վարել է Նալեի, Կամպուլայի, ապա Կելեսայի կառավարչի պաշտոնները՝ հսկելով երկրի ապահովությունն ու անկախությունը:

Զինվորական և վարչական ընդունակություններից բացի, նա օժտված է եղել նաև դիվանագետի մեծ շնորհքով: Թերզյանը նշանակվել է Լոնդոն, Բեռլին, Վիեննա, Հռոմ, Բրյուսել, Վաշինգտոն և այլ երկրներ ուղարկվող եթովպական դիվանագիտական, առևտրական խմբերի ղեկավար: Նա է առաջին անգամ կազմակերպել Եվրոպայից մեքենաների ներմուծումը, երկաթգծի կառուցումը Ջիբութի—Ադիս-Աբեբա գծով և ապրանքների տեղափոխումը երկաթուղով¹: Նա կազմակերպել է եթովպական բանակի զինումը ժամանակակից զենքով, հատկապես հեռահար հրետանիով և արագահարված հրացաններով: Ամերիկյան «Վաշինգտոն պոստ» թերթը հաղորդելով Եթովպիայի կառավարական պատվիրակի ԱՄՆ-ի մայրաքաղաքը ժամանելու լուրը, հետևյալն է գրել Եթովպիայի պատվիրակի անձնավորության մասին. «Սարգիս Թերզյանը պատերազմների հերոս է: Եթովպիայի պատվիրակը ունեցել է վիպական կյանք: Անվախ և անխոց մարտիկ Սարգիս Թերզյանը, թեև ծնունդով հայ է, իրականության մեջ՝ Եթովպիոյ Բիսմարկն է... մասնակցել է Մենելիբ II-ի պատերազմներին, սովորեցրել է նրան

օգտագործել ֆրանսիական արագահարված զենքը, որով բնաջինջ արեցին Իտալիայի լավագույն զինվորներից 10 000 հոգի մի քանի տարի առաջ» (խոսքը 1895 թվականի դեկտեմբերին Ամբա Ալագայի մոտ Ռասա Մակոնենի կողմից իտալական զորքերի ջարդի մասին է, որտեղ եթովպացիները իտալացիների համար անսպասելի օգտագործեցին Թերզյանի գնած նորագույն զենքերը—Ռ. Ա.)¹:

Եթովպիայի համար Սարգիս Թերզյանի կատարած մեծ դերի մասին է խոսում այն փաստը, որ երկրի թշնամիները նրա գլխի համար խոստացել էին հսկայական գումար: Չկարողանալով ուրիշ ճանապարհով նրան դուրս վանել ասպարեզից, նրանք հազար փորձանք անցած, պատերազմներում մահացու վերքեր ստացած, բայց ողջ մնացած հերոսին դավադրաբար սպանում են գերմանական դեսպանատան բակում:

Թերզյանը, բարձրանալով Եթովպիայի առաջին քաղաքացու աստիճանին, մնացել է հայ գաղթավայրի ամենից ակտիվ, ամենից հայրենասեր անդամներից մեկը: Նա երբեք չի կտրվել գաղթավայրի ամենօրյա կյանքից և հոգսերից: 1895—1896 թվականներին համիդյան սպանդից ազատված բազմաթիվ հայ ընտանիքների նա իր սեփական ծախսով բերել և հաստատել է տվել Հարարում:

Ի դեպ, համիդյան ջարդերից փրկված հայերին բարյացակամ ընդունել և հովանավորել է ինքը՝ Եթովպիայի գահակալ Մենելիբ II-ը: Զայրացած թուրք բարբարոս ջարդարարների վայրագություններից և եվրոպական տերությունների անտարբերությունից, հայտնի կայսրը ցավով է հայտնել, թե սահմանակից չէ թուրքիային, որ կարողանա պաշտպանել հայերին կոտորածից:

Եթովպիայում հաստատված հայ գաղթականները միշտ էլ անխզելի կապ են պահել իրենց հայրենակիցների ու հայրենիքի հետ: Նրանք ակտիվ մասնակցություն են ցույց տվել հայրենիքում տեղի ունեցած այս կամ այն իրադարձությանը: 1913 թվականին, երբ սկսվել է արձարծվիլ Թուրքիայում ապրող հայության հարցը, Եթովպիայի հայերը հանգանակություն են կատարել և հավաքած գումարը մի հանրագրով, որի տակ ստորագրել են 64 հոգի, ուղարկել են էջմիածին կաթողիկոսին՝ խնդրելով օգտագործել «ցավատանջ հայրենյաց» կարիքների համար: Հանրագրության մեջ եթովպահայերը խնդրել են նաև կաթողիկոսից, որ նա «Ամեն միջոցներով բարեհաճի ձեռք բերել իրականացումն ապահովության Թուր-

¹ 2. Բարբաբան, նշված աշխատությունը, էջ 215:

¹ «Պայթաբ», 12 մայիսի, 1960 թ.:

քիտ հայոց կյանքին ու պատիվին՝ շահագրգռելով այդ սուրբ դատին Արևելքից քրիստոնյաներու պատմական պաշտպան սրբազան Ռուսաստանը»¹։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եթովպահայերը բազմաթիվ կամավորներ են տվել Եգիպտոսի ռազմաճակատում թուրքական բանակների դեմ կռվող զորամասերին։ 1915 թ., աղետալներին օգնելու նպատակով, Ադիս-Աբեբայում կազմակերպվել են հայրենակցական միություն մի քանի մասնաճյուղեր, որոնք ընդունել, տեղավորել և աշխատանքով ապահովել են հայ գաղթականներին²։

Թեֆերի Հայլե Սելասիե առաջինը, Երուսաղեմում գտնված ժամանակ, որդեգրել և իր հետ Ադիս-Աբեբա է տարել քառասուն հայ որբերի։ Կայսրը նրանց տեղավորել է քաղաքի կենտրոնում, երկրի մեծահարուստներից մեկի առանձնատանը և նրանց սովորեցնելով կազմել արքունիքի նվազախումբը։ Այդ խումբը հայտնի է «Արպա լիճոճ» (40 մանկունք) անունով։ Այդ նվազախումբի ղեկավար Գ. Նալբանդյանի գրչին է պատկանում Եթովպիայի պետական հիմնի երաժշտությունը, որն առաջին անգամ կատարել է նվազախումբը՝ հեղինակի ղեկավարությամբ³։

«40 մանուկներ»-ից շատերը հետագայում վարել են պետական և կառավարական մի շարք պաշտոններ։

1935 թվականին, երբ Եթովպիան մահվան ու կենաց կռիվ էր մղում իտալական գաղութարարների դեմ, բոլոր քառասուն որբերն էլ մեկնել են ռազմաճակատ և մասնակցել կռիվներին։ Եղել են նրանցից նաև սպանվածներ։ Հայլե-Սելասիեն ռազմաճակատում անգամ հոգատարությամբ էր շրջապատել իր սաներին։ Ականատեսների վկայությամբ, աշխատել է նրանց իրեն մոտ պահել, նահանջի ծանր օրերին հետաքրքրվել է նրանցից յուրաքանչյուրի ամենօրյա ճակատագրով, աշխատել է նրանց տեղավորել ռազմաճակատի ապահով տեղերում և խիստ վշտացել է, երբ հայ երիտասարդներից մեկն ու մեկը սպանվել է։

Եթովպիայի հայ գաղթականությունը ցրված է եղել երկրի տարբեր քաղաքներում։ Ադիս-Աբեբայից բացի, հայ գաղթօջախներ են եղել Դերե-Դավա և Հարար քաղաքներում։

Դերե-Դավայում հայ բնակչություն է հաստատվել 1902 թվա-

1 Հ. Բաբաբան, նշված աշխատությունը, էջ 290;
2 ՀՊՊԱ, ֆ. 57, ց. 2, № 677, էջ 79—80;
3 Հ. Բաբաբան, նշված աշխատությունը, էջ 270։

կանին՝ երկաթուղու շինարարության ժամանակ, որին հայերը գործուն մասնակցություն են ունեցել։ Հետագայում, երկաթուղու շինարարությունը վերջանալուց հետո, հայերից ոմանք մնացել են այդ քաղաքում և հիմք դրել հայկական փոքրիկ գաղթօջախի։ Հայ համայնքն այստեղ ստեղծել է իր վարչական մարմինը, կառուցել է փոքրիկ մատուռ։ Գաղթօջախը նոր գաղթականություն է ընդունել 1916 թվականին։

Հարարի հետ հայերը ծանոթ էին համեմատաբար վաղուց։ 1895 թ. ջարդերից ազատված հայերն են հանդիսացել հիմնական այն կորիզը, որի շուրջը հետագայում համախմբվել է հայ գաղթօջախը։ 1916 թվին Հարար են եկել 200-ի շուրջ նոր հայ գաղթականներ։ Այս երկու քաղաքների հայ գաղթականության մեծ մասը զբաղվել է արհեստագործությամբ։ Եղել են նաև առևտրով զբաղվող առանձին անհատներ։

Եթովպահայ գաղութի հասարակական և կրթական կյանքը ձևավորված հունի մեջ է մտել միայն 1920—30-ական թվականներին։

Այս տարիների եթովպահայ համայնքները հիմնել են իրենց ղեկավար մարմինը, որը կոչվել է «Եթովպահայ գաղութային ժողով»։ Այն ընտրվում է եթովպահայերի ընդհանուր ազգային ժողովի կողմից շորտ տարին մեկ անգամ և բաղկացած է յոթ հոգուց։ Ազգային ժողովը հաստատվել և օրինականացվել է Եթովպիայի ներքին գործերի նախարարության կողմից։ Եթովպիայի համայնքի հովվությունը ենթակա լինելով Եգիպտոսի թեմին, «գաղութային ժողովը ընտրվելուց հետո հաստատման է ներկայացվում Եգիպտոսի հայոց ազգային ժողովին։ «Գաղութային ժողովի» մեջ մըտնում են «Ուսումնական խորհուրդը», «Եկեղեցական հոգաբարձությունը», «Հայ տիկնանց միությունը»։

Ադիս-Աբեբայի հայ գաղթօջախը մինչև 1923 թվականը չի ունեցել աղթատուն։ 1923 թվականին կառուցվել է փոքրիկ մի մատուռ, իսկ 1934 թվականին՝ Գ. Մուրատյանի միջոցներով, կառուցվել է տեղի հայկական եկեղեցին։

Եթովպահայերը, պետք է ասել, սիրով են կապված եղել Մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։ 1925 թվականին Ադիս-Աբեբայի բնակիչ Գրիգոր Հովյանը իր թողած կտակում խոշոր գումար է հատկացրել Սովետական Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևանում, շատրվան կառուցելու կամ գրադարանների համար գրականություն գնելու։ Կատարված է կտակատուի ցանկությունը¹։

1 ՀՊՊԱ, ֆ. 178, № 434, էջ 12—13։

1927 թվականի դեկտեմբերի 27-ին Ադիս-Աբեբայից ՀՕԿ-ի կենտրոնական վարչության հասցեով Զամանյանի ուղարկած մի նամակից երևում է, որ Եթովպիայի հայ համայնքը, լսելով Շիրակի երկրաշարժի մասին, անմիջապես ձեռնարկել է հանգանակություն՝ աղետալիներին օգնելու համար, և հավաքած դրամը փոխադրել Փարիզ՝ Սովետական Հայաստան ուղարկելու համար:

Տեղացի ժողովրդի նկատմամբ Եթովպիայի հայերի ունեցած նվիրվածությունը ցայտուն դրսևորվել է 1935 թվականին՝ իտալական ֆաշիզմի դեմ եթովպական ժողովրդի մղած ազգային ազատագրական պատերազմում:

Եթովպիայի վրա Իտալիայի կատարած հարձակման նախօրյակին, համայնքում կազմակերպվել է «Եթովպիայի գերիշխանությունը և հառաջագիմությունը պաշտպանող» միություն, որի նպատակն էր ամեն կերպ կամավորներով, նյութապես և այլ միջոցներով օգնել եթովպական ժողովրդին զորավիգ կանգնելու երկրի պաշտպանությունը:

1935 թվականի հուլիսի 28-ին միության ներկայացուցիչներն այցելել են Հայլե Սելասիե թագավորին և եթովպահայերի անունից վստահեցրել, որ իրենք պատրաստ են ամեն տեսակ զոհաբերությունների՝ ներկիրը թշնամուց պաշտպանելու համար: Նրանք իրենց հետ պալատ են տարել երկրի պաշտպանության համար եթովպահայերի շրջանում հանգանակված պատկանելի մի գումար¹:

Թագավորը, հուզված հայ կամավորներից մեկի ելույթից, հայտարարել է. «Ձեր այս բացառիկ ցույցը զիս խորապես կհուզե, այլ նաև զգացուած եմ անծայր աստիճան Ձեզի յայտնելու, որ եթե ի սկզբանե ի վեր իմ զգացումներովս հայասեր մը եղած եմ, բան մը, որ իմ երջանկահիշատակ հորս ալ հատուկ մեկ պարագա էր, սխալած չեմ իմ այդ տածած սիրույս մեջ: Ես ոչ միայն զձեզ կսիրեմ իբրև իմ հպատակներս և իբրև Եթովպիոյ բնակչության մաս կազմող մեկ տարր մը, այլ նաև ես կսիրեմ հայ ժողովուրդը, որ միշտ սիրով և համակրանք կվերաբերվի Եթովպիո մեր այս սիրելի հայրենիքին հանդեպ: Ես սիրով կընդունիմ ձեր այսօրվան պատրաստակամությունը, զոր այս վայրկյանեն իմ տրամադրության տակ կդնեք: Երբ դուք, ինքնաբեր, կամավոր պատրաստակամությամբ կուզաք միանալ մեր սիրելի Եթովպիոյ նվիրական պաշտպանության, ես կզովեմ և կգնահատեմ ձեր այս քայլը և

¹ «Փյունիկ», 1958, 12, էջ 24:

սիրեմ զձեզ իբրև իմ հարազատ ժողովրդեանս զավակները»¹:

Հայ կամավորների խումբը կազմվել է Ադիս-Աբեբայի, Ասմարայի և այլ վայրերի երիտասարդներից:

Հայերի մի այլ խումբ կատարել է ոչ պակաս պատասխանատու առաջադրանք. նա ղեկավարել է բանակին ռազմամթերքով, հանդերձանքով, սննդով ապահովելու դժվարին գործը: Փակելով երկաթուղային ճանապարհները և խճուղիները, թշնամին հավատացած էր, որ նահանջող եթովպական բանակը, զինամթերքի և սննդի պակասի հետևանքով, կքայքայվի: Սակայն մատակարարման գործի եթովպացի և հայ ղեկավարները, դժվարին, զրեթե անանցանելի ճանապարհներով, իտալական սավառակների կրակի տակ, կարողացել են շատ խելոք կազմակերպել եթովպական բանակի մատակարարումն այնպես, որ դժվարություններ չեն առաջացել ո՛չ նահանջի և ո՛չ էլ ձակատամարտի ժամանակ:

Իտալական ֆաշիզմի դեմ մղած պատերազմի ընթացքում հերոսի մահով ընկել են տասնյակ հայ երիտասարդներ: Հայ երիտասարդներից արտակարգ հերոսությամբ աչքի է ընկել կամավոր Բաբկեն Սեֆերյանը: Նա մեն-մենակ, իր գնդացրով, կարողացել է կասեցնել թշնամու գերակշիռ ուժերի գրոհը և հարավորություն տվել իր գնդին կանոնավոր նահանջել: Եվ երբ թշնամին գլխի է ընկել, որ տարբեր տեղերից կրակ տեղացողը մի գնդացրորդ է, անցել է գրոհի: Անհավասար մարտում զոհվել է հայ կամավորը: Եթովպացիները հայ ռազմիկի դիակը թաղել են արժանավայել հարգանքով՝ եղբայրական գերեզմանում: Սեֆերյանի անունը մտել է Օկդենի ձակատամարտի հերոսների ցուցակի մեջ²:

Բաբկեն Սեֆերյանը եզակի չի եղել. նման ճակատագիր է ունեցել նաև գնդացրորդ Ստեփան Փափազյանը: Վոլվուլի ճակատամարտում, հակառակ նահանջի հրամանի, նա շարունակել է կռվել երկու օր՝ կասեցնելով թշնամու առաջընթացը՝ հնարավորություն տալով իր զորամասերին նահանջելու: Նա ևս զոհվել է Եթովպիայի ազատության համար³:

Իտալական զորքերը երբ մոտեցել են մայրաքաղաքին, 12 հայ

¹ «Փյունիկ», 1958, № 12, էջ 25:

² Դ. Եպ. Փոլատեան, Եթովպահայերն իտալական զրավումներն առաջ (Տե՛ս «Պայքար», Բոստոն, 1960, 10 ապրիլի):

³ «Փյունիկ», 1958, էջ 25:

երիտասարդներ, Գեհերյանի ղեկավարությամբ, իրենց հետ առնելով զենք ու զինամթերք և ուտելիքի մեծ պաշար, փակվել են հայոց եկեղեցում և կռվել ֆաշիստների դեմ:

1936 թ. մայիսի 19-ի, շրջապատման մեջ գտնված ժամանակ, Գեհերյանը իր մի նամակում հետևյալն է գրում. «Գիշեր ցորեկ հրաձգությունները, պատերազմի դաշտի վերածած էին ամբողջ մայրաքաղաքը, եկեղեցվո ապաստանածներս, արևելք և արևմուտք, հյուսիս և հարավ, դռները պատնեշներով պահպանած և պատնեշներու ետին զորավոր հրացաններով կծկված, առավոտեն մինչև երեկո տասնյակ անգամներ հարձակվող խուժանի վրա կրակելով, թե եկեղեցին և թե մեզ կպաշտպանեինք: ...Գիշերը հարձակումները գրեթե կդադարեին, սակայն ցերեկը հրացաններու և գնդացիրներու համար ստիպված էինք պոռալով խոսիլ: Աննկարագրելի էր, խժոժությունները աչքերնուս առջև, ճամփու վրա, ուր կդիտեինք պատնեշի ծակերեն»¹:

Հայ ընտանիքների զգալի մասը, Ադիս-Աբեբան գրավելուց առաջ, իսկ մի մասը՝ դրանից հետո, հեռացել են քաղաքից: Հեռանալու հիմնական պատճառը պարենմթերքի ծանր վիճակն է եղել և հայերի նկատմամբ ֆաշիստների կիրառած դաժանությունները:

Իտալական օկուպացիոն զորքերը Ադիս-Աբեբայում բռնագրավել են հայկական դպրոցը և նրա հարակից շենքերն ու հայերից ումանց ձերբակալել:

Իտալիան գրավեց Եթովպիան, բայց, ինչպես հայտնի է, Եթովպական ժողովուրդը ծնկի չեկավ. օկուպանտների դեմ դուրս եկան տասնյակ պարտիզանական ջոկատներ, որոնք հերոսաբար մաքառեցին ֆաշիստների դեմ: Այս պայքարում իրենց համեստ մասնակցությունն ունեցան նաև Եթովպահայերը:

1936 թ. իտալական գաղութային իշխանություններին հաջողվել է ձերբակալել երկրի 10 աչքի ընկնող քաղաքական խոշոր դեմքերի, որոնք մեղադրվում էին մարշալ Գրացիանի՝ իտալական գաղութային զորքերի զլխավոր հրամանատարի դեմ մահափորձ կատարելու մեջ: Ձերբակալվածների մեջ է եղել Աբրահամ Քյորհենճյանը: Իտալական իշխանությունները Քյորհենճյանին, որպես առավել վտանգավոր թշնամու, իր ընտանիքի հետ միասին տեղափոխում են Իտալիայի բանտերից մեկը: Քյորհենճյանը և նրա ընտանիքը մնացել են բանտում 7 տարի և ազատվել ու Եթովպիա

¹ «Պայքար», 1960, ապրիլի 30:

վերադարձել միայն ֆաշիստական Իտալիայի պարտությունից հետո:

Իտալական ֆաշիստների դեմ Եթովպայի մղած պայքարի այդ օրերին հայերը ցուցաբերել են անօրինակ նվիրվածություն իրենց երկրորդ հայրենիքի նկատմամբ:

Եթովպահայերն անտարբեր չեն գտնվել հայրենիքի նկատմամբ՝ համաշխարհային երկրորդ պատերազմի ծանր տարիներին: Նրանք իրենց նյութական համեստ մասնակցությունն են ունեցել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցմանը: Միայն Ադիս-Աբեբայում հանգանակվել է 1300 անգլիական ոսկի: 1944 թվականի ապրիլի 13-ին Ադիս-Աբեբայի Մուրադյան երգչախմբի՝ կաթողիկոսական տեղապահ Չորեքչյանին ուղարկված գրության մեջ հետևյալն է ասված. «Եթովպիո մայրաքաղաքի՝ Ատտիս-Ապպապայի Մուրադյան երգչախումբի վարչությունս շէր կրնար լուռ հանդիսատես ըլլալ այն անօրինակ ոգորումներուն և հերոսական մարտնչումներուն, որոնք կմղվեն մեր զինվորյալ եղբայրներուն կողմն արդարության հաղթանակին և հայրենիքին ու հայ ժողովրդին ալ անկորուստ պահպանության համար»: Նրանք հայտնել են, որ խմբի տված ցերեկույթից հավաքած գումարը՝ 200 անգլիական ոսկի, հատկացնում են «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ֆոնդին:

Եթովպահայերի մտահոգության առաջնահերթ խնդիրներից է եղել մանուկ սերնդի դաստիարակության հարցը: Հայկական առաջին դպրոցը Ադիս-Աբեբայում հիմնվել է 1918 թվականին: Այն կոչվել է «Ազգային արարատյան վարժարան»: Կարճ ժամանակ անց, դպրոցը, գաղթավայրում առաջացած ինչ-որ անհամաձայնության պատճառով, բաժանվում է երկու դպրոցների՝ «Սահակ-Մեսրոպյան» և «Արարատյան»¹: Երկու դպրոցների ծախսերն էլ ապահովում է «Եթովպահայ գաղութի ժողովին» կից «ուսումնական խորհուրդը»՝ հայերի նվիրաբերած գումարներով:

1932 թ. Գեորգովի նվիրաբերությամբ կառուցվում է հայկական դպրոցի երկհարկանի նոր շենքը՝ իր բոլոր հարմարություններով²: Նոր շենքը միավորում է բաժանված դպրոցները:

Դպրոցի երկսեռ աշակերտության թիվը առ այսօր տատանվում է 170—200-ի միջև: Դպրոցին կից գոյություն ունի մանկապարտեզ:

¹ «Էշմիածին», 1945, № 4, էջ 40:

² Հ. Ռաքարան, նշված աշխատությունը, էջ 192:

Դաստիարակության գործին անհունորեն նվիրված մի խումբ հայ մանկավարժներ ոչ մի ջանք չեն խնայել և ներկայումս չեն խնայում հայրենասիրական ոգով դաստիարակելու հայ տղաներին և աղջիկներին: Դպրոցում դասավանդվում են հայոց լեզու, հայոց պատմություն, հայ գրականություն, եթովպերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, քիմիա, աշխարհագրություն և հանրակրթական այլ առարկաներ¹: Զգալի տեղ է հատկացվում նաև աշակերտների գեղագիտական ճաշակի զարգացմանը: Դասավանդվում է երաժշտություն և այլ առարկաներ:

Եթովպահայ մշակութային կյանքի կարևոր երևույթներից է «Փիւնիկ» ամսաթերթը, որը սկսել է հրատարակվել 1958 թվականից²: Ամսաթերթը չի սահմանափակվում միայն հայկական և եթովպական ազգային շրջանակներով, այլ արժարժում է նաև գիտական հարցեր: Աղայանի «Անահիտ» հեքիաթի կողքին այնտեղ կարելի է կարդալ տիեզերական ճառագայթներին նվիրված գիտական հոդվածներ: «Հայերեն ուղղագրության համառոտ դասընթացի» կողքին՝ ամենաարդիական գիտական հարցերին նվիրված հոդվածներ և այլն:

Գաղութում գործում են մի շարք կազմակերպություններ՝ «Մուրադյան երգչախումբը», «Հայ բեմը», որը պարբերաբար կազմակերպում է թատերական ներկայացումներ: Եթովպահայերն ունեն նաև մարմնամարզական «Արարատ» միությունը՝ որն ունի իր մարզադաշտը և երկհարկանի շենքը:

¹ «Պայքար» օրաթերթ, 1950, հունիսի 13—17:

² «Փյունիկ», 1958, № 11, էջ 17:

VI. ՀԱՅ ԳԱՂՔԱՎԱՅՐԵՐԸ ԱՖՐԻԿԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ:

Բացի Եգիպտոսից, Եթովպիայից և Սուդանից, աֆրիկյան մայրցամաքի գրեթե մյուս բոլոր հայ գաղթավայրերը հիմնվել են նոր ժամանակներում: Հայ գաղթականությանը հեռավոր այս աշխարհն են նետել Թուրքիայում տեղի ունեցող անլուր խժոժությունները և կոտորածները: Ըստ որում, պետք է նկատի ունենալ, որ Աֆրիկայի երկրների հայկական այս գաղթօջախները շատ մեծ չեն ու հավաքական կազմակերպված կյանք չեն ունեցել և այժմ նրանց մասին շատ բան ասել չենք կարող:

Աֆրիկայի երկրներից հայկական մատենագրության մեջ հիշվում են միայն չորսը՝ Թունիսը, Ալժիրը, Մարոկկոն և Տրիպոլիս՝ Թունուզ, Ճեզայն, Մարոք և Թարապուս ձևով:

Հյուսիսային Աֆրիկայի այս երկրների հետ հայերը ծանոթ են եղել շատ վաղուց՝ դեռևս հռոմեական կայսրության շրջանում: Տեղեկություններ կան այն մասին, որ Հռոմի կողմից Աֆրիկա ուղարկված զորաբանակների մեջ եղել են նաև հայկական զորագնդեր: Հայ զինվորներից ոմանք ամուսնացել են տեղացիների հետ, տնավորվել և մշտական բնակություն հաստատել այնտեղ: Սրանք բոլորը հետագայում ձուլվել են տեղացիների հետ և գաղթավայրեր չեն կազմել¹:

Հետագա դարերում, երկար ժամանակ, Աֆրիկայի այս մասերում հայեր ապրելու մասին տեղեկություններ չկան: Միայն ակադ. Հ. Աճառյանը, հենվելով արաբական աղբյուրների միջան-

¹ Մ. Զամյան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 249:

ցիկ տեղեկությունների վրա, ենթադրում է, որ արաբական խալիֆայության շրջանում հայ գերիներ են բերվել Աֆրիկայի ստրկավաճառական շուկաները և վաճառքի հանվել¹:

XIX դարի կեսերին հայկական գաղթավայրեր են ստեղծվում Ալժիրում և Տրիպոլում (Լիբիա): Ալժիրի հայ գաղթականության վիճակը, ինչպես երևում է, բավականաչափ լավ է եղել, որովհետև «Մասյաց աղավին» կոչ է հրատարակել, որով խորհուրդ է տալիս ծանր վիճակում գտնվող հայերին տեղափոխվել և բնակություն հաստատել Ալժիրում²:

XIX դարի վերջին քառորդում հայկական գաղթօջախներ են հաստատվում Լիբիայի երկու քաղաքներում՝ Տրիպոլում և Բենգալիում: Տրիպոլի հայ գաղթականությունը եկել է գլխավորապես համիդյան ջարդերից հետո, իսկ Բենգալին հանդիսացել է թուրքական կառավարության աքսորավայրերից մեկը, ուր և աքսորվել են բավականի թվով հայ քաղաքական աքսորականներ: Նրանցից ոմանք հետագայում մշտական բնակություն են հաստատել այստեղ:

Այս նույն ժամանակ Թուրքիայից եկած փախստականներից կազմվել է նաև Մարոկկոյի հայկական գաղթավայրը: Այստեղ եկող հայ տարագիրները հաստատվել են գլխավորապես Կասաբլանկայում: Նրանց մեծ մասը եղել է արհեստավոր: Հայտնի է, որ հայ շինարարները գործուն մասնակցություն են ունեցել Կասաբլանկայի կառուցումներին:

XIX դարի վերջերում հայկական փոքրիկ գաղթօջախ է ստեղծվել արևելյան Աֆրիկայի հեռավոր երկրներից մեկում՝ Քենիայում: Այստեղ հայերը կենտրոնացել են մայրաքաղաքում՝ Նայրոբիում: Հայ բնակչությանը այստեղ բերողը, իհարկե, նոր շուկաներ գրտնելու հայ վաճառականների փնտրտուկը չի եղել և ոչ էլ առևտրական մրցակցությունը. նրանք եկել են թուրքական սպանդից ազատվելու համար: Այստեղ բնակություն հաստատած հայերը ևս մեծ մասամբ զանազան արհեստներով ու մասնագիտություններով զբաղվող մարդիկ են եղել: Նրանց մեջ եղել են մեքենագետներ, լուսանկարիչներ, էլեկտրիկներ և այլն:

Քենիայի հայերը կապված չեն եղել որևէ հայկական խոշոր գաղթավայրի հետ, հայկական գաղթականական թարմ հոսանք չի եկել Քենիա և հաճախակի դարձած խառն ամուսնությունների

1 ՀՄՍՌ ԳԱ ՊԻ արխիվ, գ. № 63:

2 «Մասյաց աղավին», 1855, № 5, էջ 8:

հետևանքով հայ գաղթօջախը կանգնել է լուծարքի ճանապարհին: Կարելի է ասել, որ Նայրոբի հայ բնակչության կեսից ավելին արդեն ձուլման է ենթարկվել:

Սփյուռքահայ մամուլում, Քենիայի հայ գաղթավայրի մասին խոսող թղթակցությունների մեջ, արտակարգ գովեստով է խոսվում Հովսեփ Թրագյանի մասին, որը խոսքով և գրչով պայքարում է ձուլման դեմ¹:

Աֆրիկյան հայ գաղթավայրերից բոլորովին երիտասարդ է նիգերիայի հայկական գաղթավայրը: Այն ստեղծվել է գլխավորապես 1921—1922 թվականներին՝ Զմյուռնիայի և Կիլիկիայի աղետից հետո: Բնակչության ճնշող մասը կազմում է աշխատավորությունը²: Հայերը կենտրոնացած են գլխավորապես նավահանգստային կազու քաղաքում³:

Փոքրիկ խմբերով հայեր են ապրում Աֆրիկայի այլ երկրներում ևս, որոնք, սակայն, հավաքական հասարակական կյանք չունեն և մեծ մասամբ գտնվում են ձուլման ճանապարհին:

1 Ս. Ա. Տատրյան, Նիկերահայ գաղութը, էջ 115:

2 «Արև», 1958, մարտի 7:

3 Ս. Ա. Տատրյան, Նիկերահայ գաղութը, էջ 115:

VII. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆ

Հայկական նոր գաղթօջախներ թրակիայում և Մակեդոնիայում ստեղծվում են թուրքական տիրապետության շրջանում: Թրակիան և Մակեդոնիան, ինչպես հայտնի է, մտնում էին թուրքական տիրապետության այսպես կոչվող եվրոպական խմբի մեջ, որը կոչվում էր Ռումելի:

Ռումելիի հայկական հին գաղթօջախներից է Ադրիանապոլիսը: Տեղեկություններ կան, որ սուլթան Սելիմը (1512—1520) նրանց հայտնի Ադրիանապոլիս է տեղափոխել 250 հայ արհեստավորների ընտանիք, աշխատելու այնտեղ կառուցվող մզկիթի վրա: Նրանց մեջ եղել են քարտաշներ, որմնադիրներ և ծեփագործ բանվորներ: Շինարարությունը վերջանալուց հետո սուլթանը թույլ է տվել նրանց մշտական բնակություն հաստատել Ադրիանապոլիսում՝ բնակության վայր հատկացնելով քաղաքի «Այլլար» կոչվող թաղամասը¹:

Ռումելիի հայկական գաղթօջախների մեծ մասը ստեղծվել են XVI դարի վերջերում և XVII դարի սկզբներում՝ Թուրքիայում առաջացած սովի և ջալալիների կատարած վայրագությունների հետևանքով: Ժամանակակից պատմիչ Առաքել Դավրիժեցին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Առջևում մեր պատմած սովի և ջալալիների պատճառով մեր ողջ (հայ) ժողովուրդը դարձավ վտարանդի. դուրս գալով ամեն մի տեղից, հայրենի բնակությունից և աշխարհից, հակառակ իր կամքի, տարադեմ ցիր

ու ցան եղավ ողջ աշխարհի վրա՝ Կիպրոս, Բաղդադ, լեհերի երկիրը, Պոնտական ծովեզերքի Կաֆա քաղաքը»¹:

Գրիգոր Դարանաղեցու տեղեկություններից երևում է, որ այդ ժամանակներում է հիմնվել նաև Ռոդոստոյի հայկական գաղթօջախը՝ պատմիչի հայրենի գավառի՝ Դարանաղի, բնակչության 1608 թ. այստեղ գաղթելու հետևանքով: Դարանաղեցին Ռոդոստոն անվանում է «Նրկորոզ հայրենիք» և նշում, որ այնտեղ բնակվողներից «Շատ ազգ և ազինք մեր էին»²:

XVIII դարում Ռումելիի հայկական գաղթօջախների թիվն ավելանում է: Մեզ է հասել Աբրահամ կաթողիկոսի 1737 թվականին գրած մի կոնդակը, որն ուղղված է Թեքերդաղին: Այս կոնդակում թվարկված են բոլոր այն գաղթօջախները, որոնք այդ ժամանակ եղել են Ռումելիում: Կոնդակն ուղղված է՝ «Ի վերայ տիրապահ և աստուածախնամ քաղաքիդ Թեքերտաղու և շրջակայ թեմից, — ասված է այնտեղ — գյուղաքաղաքաց և գիւրդէից՝ Սիլիվրիու, Զորիու, Զաթաճալայու, Ղարըշտընու, Պուղլու, Պապաէսքիու, Առակլու, Մալղարայու, Տիմեթուխայու, Ուզունքորիու, Հայգեղու, Կելիպոյսոյ, Պողովայու, Այնայու, Պողահիսարու, շորից բերթից զետեղելոց, Պողայատայու, Սեմետրիու, Իլմինու այլև՝ Կեմիրճիւնու, էսկիճեու, Տրամայու, Ղավալայու, Սերեղու, Մեյրու, Սելանիկու, էնկիշեհերու և կղզոցն Մոռայիս, Մենեշիու և այլոց աւանաց և գեղջաց, որում գտանին ազգս Հայոց»³:

Ռումելիում հաստատված հայ բնակչության դրությունը թուրքական տիրապետության տակ ծանր է եղել: Նրանք, բաժանելով տեղացի հույն ժողովրդի ճակատագիրը, ենթարկվել են թուրքական իշխանությունների անասելի կեղծբումներին ու վայրագություններին: Փաստորեն, թուրք տիրապետության շրջանում հայ և հույն ժողովուրդներն ինչպես Պոլսում, այնպես էլ Ռումելիում, դարձել են տիրակալների անպաշտպան զոհեր, և մեկ անգամ չէ, որ նրանք ենթարկվել են ջարդերի և կողոպուտի:

Հույն և հայ ժողովուրդները, բնական է, չէին կարող տանել թուրքական արյունոտ լուծք, ուստի նրանց հայրենասեր զավակները հաճախ են դուրս եկել անհավասար գոտեմարտի իրենց հարստահարիչների դեմ: Եվ ազատագրական պայքարի այս ճանապարհին քիչ թվով հայրենասերներ չեն զոհել իրենց կյանքը:

¹ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 147—148:

² Գրիգոր Դարանաղեցի, Ժամանակագրութիւն, էջ 108:

³ Ա. Մակարյան, Հուշագիր Թրակիս և Մակեդոնիո հայ գաղութներու, Սելանիկ, 1929, էջ 84:

Ի Տե՛ս Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից, Երևան, 1965, էջ 8—9:

Հայ և հույն ժողովուրդների ազատագրական շարժումների պատմության մեջ հայտնի է ուշագրավ մի ծրագիր, որը 1666 թվականին կազմել են հույն և հայ ղեկավար քաղաքական ու հոգևոր շրջանները: Այդ ծրագրի վերաբերյալ կցկտուր մի տեղեկություն պահվել է Գոմինիկ Օտտոմանի կենսագրության մեջ, որն իր ժամանակին գրի է առել Հ. Բուլգարինինը: Ահա այդ կենսագրության մեջ արձանագրված է, որ Օտտոմանի մոտ քաղաքական հանձնառությամբ 1666 թվականին Փարիզ է եկել մի հայ դիվանագետ և բանակցություններ վարել: Այդ անձնավորությունն իր հետ բերել է հանձնարարական գրություններ Ալեքսանդրիայի հունական պատրիարքից և նրա տեղապահ Կողմա Պալիոլոգից: Հույները և հայերն Օտտոմանին առաջարկել են գլխավորել փոքրասիական ժողովուրդների պայքարն ընդդեմ թուրքական կառավարության և տապալել այն: Նրանք հավաստիացրել են Օտտոմանին, որ Հունաստանի նահանգները և Հայաստանի այն բոլոր շրջանները, ուր հիմնական բնակչությունը հայերն են, կօգնեն նրան և միացյալ ուժերով կթոթափեն օսմանյան լուծը: Գործն ավելի հաջող կազմակերպելու համար նրանք խորհուրդ են տվել Օտտոմանին բանակցություններ վարել Մոսկվայի, Վալախիայի և Եթովպիայի թագավորների հետ ու խնդրել նրանց աջակցությունը¹:

Իժեքատաբար, քաղաքական բարենպաստ պայմաններ չստեղծվեցին այս ծրագրի իրագործման համար:

Հունահայ գաղթավայրի համար շրջադարձային կարևոր նշանակություն ունեցավ թուրքական հարստահարիչների դեմ 1821—1829 թվականներին հույն ժողովրդի մղած հերոսական կռիվներից հետո, Ադրիանապոլսի պայմանագրով, հունական թերակղզու անկախանալը: Այդ ժամանակից սկսած հայ գաղթականները սկսում են բնակություն հաստատել հունական քաղաքներում:

Մինչև XIX դարի ութսունական թվականները հունական թերակղզում շատ ու քիչ աչքի ընկնող, ստվարաթիվ ու կազմակերպված հայկական գաղթօջախներ չեն եղել: Աթենքի հայկական գաղթօջախը, որ համարվել է հնագույն և մեծ գաղթօջախներից մեկը, շատ քիչ բնակչություն է ունեցել: Աթենքի հայ համայնքն այնքան խզուկ վիճակում է գտնվել, որ մինչև 1884 թվականը չի ունեցել

1 Հ. Անասյան, Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (տե՛ս «Հայկ. ՍՍՀ ԳԱ տեղեկագիր», 1954, № 3, էջ 85—99):

անգամ իր աղոթատունը, և այդ թվականին է, որ մի մատուռ է կառուցել¹:

Հայկական փոքրիկ մի օջախ 1872—1874 թվականներին ըստեղծվում է Ալեքսանդրուպոլսում (Դեդե-Աղաջում): Գաղթօջախի բնակչությունը բաղկացած է եղել մշեցի հայ բանվորներից, որոնք եկել են աշխատելու գերմանական երկաթուղային ընկերության կողմից կառուցվող Պոլիս-Սալոնիկի երկաթգծի վրա: Երկաթգծի կառուցումն ավարտելուց հետո, հայ բանվորությունը մշտական բնակություն է հաստատել հունական քաղաքներում²:

XIX դարի ութսունական թվականներին մեծ գաղթօջախ է դարձել հատկապես Սալոնիկը: Այնտեղ, ըստ տեղեկությունների, ապրելիս է եղել շուրջ հինգ հազար հայ բնակչություն:

Մշեցի բանվորների մի այլ խումբ Հունաստան է եկել 1882 թվականին՝ աշխատելու Կորնթոսում կառուցվող ջրանցքի վրա: Այս բանվորների մեծ մասը ևս, շինարարությունը վերջանալուց հետո, մնացել և մշտական բնակություն է հաստատել Աթենքում ու մյուս քաղաքներում³:

XIX դարի ինսունական թվականներից սկսած հիմնովին փոխվում է հունահայ գաղթավայրերի պատկերը. նրանք անընդմեջ սկսում են գաղթականություն ընդունել Թուրքիայից:

Չանվաճային ամենից խոշոր գաղթականությունը Թուրքիայից Հունաստան է եկել 1895—1896 թվականներին՝ Համիդյան ջարդերից հետո: Ոչ լրիվ տվյալներով, այդ տարիներին Հունաստան են եկել ավելի քան հազար հոգի հայ գաղթական:

Հույն ժողովուրդը հայ գաղթականությանն ընդունել է եղբայրական սիրով. ժամանակավոր բնակության համար զինվորական վրաններ է հատկացրել և նյութական օժանդակություն ցույց տվել: «Անկեղծ ըլլալու համար պետք է ըսեմ — գրել է Ե. Օտյանը, որն այդ տարիներին գտնվել է Հունաստանում — թե ո՛չ միայն վարչապետը, այլ նաև հույն ժողովուրդն ու կառավարությունը խիստ բարյացակամ գտնվեցան հայ փախստականներու մասին»⁴:

Հույն ժողովրդի բարյացակամ վերաբերմունքը երախտագիտորեն հատուցեցին հունահայերը. 1897 թվականին, երբ բռնկվեց

1 Ս. Հ. Մակարյան, Հուշագիր Թրակիո և Մակեդոնիո, էջ 86—87:

2 «Հունահայ տարեգիրք», 1927, Աթենք, էջ 368—369:

3 Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1924, էջ 230:

4 Ե. Օտյան, Տասներկու տարի Պոլսեն դուրս (տե՛ս «Հունահայ տարեգիրք», 1929, էջ 287):

հույն-թուրքական պատերազմը, հունահայերը կազմեցին 600 հոգուց բաղկացած մի զորամաս և հունական բանակի կազմում կռվեցին թուրքերի դեմ: Հայ զինվորականներից շատերը աչքի ընկան կոիվներում և պարգևատրվեցին հունական կառավարության կողմից:

Հունահայերի մասնակցությունը այդ կոիվներում հակառակ ձևով ընդունեցին թուրքերը. պատերազմից հետո, հույների և թուրքերի բանակցությունների ժամանակ, թուրքական կողմը պահանջեց հույներից իրենց հանձնել այն հայերին, որոնք կռվել էին իրենց դեմ: Հետագայում, հունահայ այդ զինվորականները, թուրքական վրեժխնդրությունից խուսափելու համար, թողեցին Հունաստանը և տեղափոխվեցին այլ երկրներ:

Հայ գաղթականության հոսանքները Թուրքիայից Հունաստան էին գալիս XX դարի առաջին քառորդում ևս: Հայ գաղթականություն է եկել Հունաստան Ադանայի 1909 թվականի կոտորածներից հետո և 1913 թվականին Բալկանյան պատերազմի վերջում՝ Սալոնիկի շրջանը Հունաստանին միացվելուց հետո: Հայ գաղթականության մեծ զանգված Հունաստան է եկել համաշխարհային առաջին պատերազմի տարիներին:

Հայ գաղթականության այս հոսանքները, սակայն, աննշան էին այն գաղթականության համեմատությամբ, որ Հունաստան եկավ 1922 թվականի սեպտեմբերին՝ Զմյուռնիայի և նույն թվականի հոկտեմբերին՝ Թրակիայի շրջանի դատարկելուց հետո:

Երբ հունական բանակը, թուրքականի ճնշման տակ, հարկադրված էր նահանջել Փոքր Ասիայից և Թրակիայից, հայ ու հույն բնակչությունը, թուրքական վայրագություններից սարսափահար, հետևում է նահանջող հունական զորամասերին և գաղթում Հունաստան:

Հույն բախտակից ժողովուրդը, պետք է ասել, հայ գաղթականության առջև լայնորեն բաց է անում իր դռները և ընդունում չեքմություններ¹:

Հայերը Հունաստան են գաղթում երկու ուղղությամբ՝ Զմյուռնիայից և Թրակիայից: Զմյուռնիայի գաղթականությունը տեղավորվում է գլխավորապես Աթենքում, նրա մոտիկ քաղաքներում, Կրետեում և Հունաստանի արևելյան կղզիներում:

Հայ գաղթականության մյուս հոսանքը գալիս է Թրակիայից: 1923 թվականի հուլիսի 24-ին, Լոզանում կնքված պայմանագրով,

Թրակիայի արևելյան մասն ամբողջապես Թուրքիային վերադարձնելուց հետո, այնտեղ ապրող և պատերազմի ընթացքում այնտեղ տեղավորված հայ գաղթականությունը չի ցանկանում այլևս մնալ թուրքական տիրապետության տակ, անցնում է Մարիցա գետը և ցրվում Հյուսիսային Հունաստանի գրեթե բոլոր քաղաքներում՝ Ալեքսանդրուպոլում, Գյումուրջինայում, Կավալայում և այլն:

1921—1923 թվականներին Թուրքիայից Հունաստան եկած հայ գաղթականության ճիշտ թիվը դժվար է ասել՝ վիճակագրության բացակայության և գաղթականության հոսունության պատճառով: Ըստ Հունաստանի արտաքին գործերի մինիստրության տվյալների, հայ գաղթականության թիվը հաշվում է 120 հազար հոգի: Այդ թիվը ոմանք հասցնում են 150 հազարի, իսկ «Ջորնալ դ'Իտալիա» թերթը հասցրել է 200 000-ի: Ծճարտությանն ավելի մոտիկ են Հին և Նոր Հունաստանի հայ ազգային մարմինների տվյալները, որոնք հաշվել են հարյուր հազար հոգի²:

Հայ գաղթականության վիճակը Հունաստանում այնքան էլ միաթարական չի եղել: Պետք է նկատի ունենալ, որ 1922—1923 թվականներին հայերի հետ միասին Թուրքիայից Հունաստան էր գաղթել նաև կես միլիոնից ավելի հույն գաղթականություն: Հեշտ գործ չէր այդ ամբողջ գաղթականությանը օթևան տալ և սննդամթերքով ապահովել այնպիսի լեռնոտ ու աղքատ երկրում, ինչպիսին Հունաստանն է: Զպետք է նաև մոռանալ, որ ժողովուրդը խուճապահար էր փախել Հունաստան՝ ոչինչ չբերելով իր հետ:

Օթևանի, հագուստի և սննդամթերքի պակասության հետևանքով ծայր են առել մահացություններ: Նոր Հունաստանի հոգևոր առաջնորդ Ղևոնդ եպ. Դուրյանը 1922 թվականի դեկտեմբերի 23-ին հեռագրել է Փարիզ՝ Պողոս Նուբար փառային, որ իր թեմում սննդի և հագուստի պակասության պատճառով օրական 30—40 հոգի մահանում են²: «Ճակատամարտ» թերթի աշխատակցի հաշվումներով, 1922 թվականի վերջին ամիսներում Հունաստանում մահացել են ավելի քան 3000 հայ գաղթականներ³:

1922 թվականի վերջերին հունահայ թեմական իշխանությունների հրապարակած տվյալների համաձայն, միայն Հին Հունաստանում և կղզիներում գտնվող հայ գաղթականներից 30 000 հոգի

1 «Նոր օր», Աթենք, 1925, № 411 (օգտվել ենք Կոկինոսի աշխատությունից):

2 «Ապագա», 1922, դեկտեմբերի 23:

3 «Ճակատամարտ», 1923, հունվարի 4:

1 Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից, էջ 14:

կարոտ են հացի, 35 000 հոգի՝ հագուստի, 30 000 հոգի՝ անկողնու, 5 000 մանուկների՝ կաթի և սննդի, 1500 որբեր գտնվում են բոլորովին անապաստան վիճակում և տասը հազար երկսեռ երիտասարդներ գործազուրկ են ու ապրելու միջոցներ չունեն¹:

Հունաստանը Թուրքիայից եկած հայ գաղթականության համար փաստորեն յուրատեսակ կայան, կանգառ է եղել: Այստեղ եկած հայ գաղթականությունը որոշ ժամանակ մնալուց հետո տեղափոխվել է Ֆրանսիա, Ռումինիա, Բուլղարիա և այլ երկրներ: Երկու տարի հետո Հունաստան եկած հայ գաղթականության մոտ 40 տոկոսը գաղթում է: Համենայն դեպս, ըստ Թեոդիկի «Ամենայն տարեցույց»-ի մեջ 1924 թ. տպագրված տվյալների, հայ բնակչության թիվը մեկ հարյուր հազարից իջել է 64 881-ի, որից Հին Հունաստանում և կղզիներում՝ 36 586, իսկ Մակեդոնիայում և Թրակիայում՝ 28 295²:

Կայուն և խոշոր հայկական գաղթօջախներ հունական հողի վրա, ինչպես տեսնում ենք, ստեղծվել են նոր ժամանակներում. համաշխարհային առաջին պատերազմի դաժան տարիներին և նրանից հետո: Այդ ծանր օրերին հույն ժողովուրդը սիրահոժար բաց է արել իր դռները հալածական հայ գաղթականությանը և ապաստան տվել նրան:

Հունաստանում են գտնվել նաև մեծ թվով հայ որբեր: 1923 թվականին, ոչ լրիվ տվյալների համաձայն, Հունաստանում գտնվել են 17 520 որբեր՝ տեղաբաշխված հետևյալ որբանոցներում՝ Եսոպոսի որբանոցում՝ 7500 հոգի, Լուտրաքիայում՝ 3300, Կորֆուում՝ 2720, Օրոպոսում՝ 2000, Զափոնում՝ 2000: Հետագայում այդ թիվը աճելով հասել է 20 000-ի: Կազմակերպվել են նոր որբանոցներ Սիրա կղզում, Կորնթոսում և այլ վայրերում: 1924 թվականին չափահաս որբերից որբանոցներից դուրս են գրվել 12 212 հոգի³:

Հունահայ գաղթականության զբաղմունքը և սոցիալական կազմը պատկերացնելու տեսակետից ուշագրավ է Սելանիկից Հայաստան ուղարկված մի տեղեկություն, ուր թվարկված են տեղի բնակիչներն ըստ մասնագիտությունների: Գրությունը Հայաստան է ուղարկված 1925 թվականի փետրվարի 28-ին: Այնտեղ թվարկված են հետևյալ մասնագիտության տեր մարդիկ՝ ուսուցիչներ, մեքենավարներ, երկաթագործներ, պղնձագործներ, պայտատներ:

1 Թեոդիկ «Ամենուն տարեցույցը», 1924, էջ 228—229:

2 Նույն տեղում, էջ 228:

3 Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից, էջ 43:

ատաղձագործներ, հյուսներ, որմնադիրներ, դերձակներ, կոշկակարներ, հացագործներ, ծխախոտագործներ և այլն¹:

1924 թվականի դեկտեմբերի 15-ին Հայաստան ուղարկած գեկուցագրում Հ. Տ. Նիկողոսյանը նշում է, որ հայ գաղթականության մեջ կան բազմաթիվ ծխախոտագործներ, շերամապահներ, վարպետ գորգագործներ և այլ մասնագիտության մարդիկ: Զեկուցագրում մատնացույց է արվում մասնավորապես հախճապակու հոշակված մասնագետ Մինասյանների գերդաստանը²:

Հունաստանի կառավարությունը առաջարկում է հայ գաղթականությանը հունական քաղաքացիություն ընդունել: Հայերը վրձնականորեն հրաժարվում են: Հունական կառավարության ցանկությունն է եղել, ինչպես երևում է, հայ և հույն գաղթականներին բնակեցնելով, սովոր բնակչություն ստեղծել Արևելյան Թրակիայում և Մակեդոնիայում ու ապահովել այդ երկրամասերի անվտանգությունը: Սակայն երբ հայերը հրաժարվում են հունական քաղաքացիություն ընդունելուց, հունական կառավարությունը որոշում է Հունաստան եկած նորեկ գաղթականությանը դուրս անել երկրից: Նա պաշտոնապես դիմում է Ազգերի լիգային և պահանջում համապատասխան տեղ որոշել հայ գաղթականությանը: Հունաստանից դուրս բերելու և տեղավորելու համար: Ազգերի լիգան ցանկանալով ընդառաջել Հունաստանին, հատուկ հանձնաժողով է ուղարկում Հունաստան: Հանձնաժողովը հարցաքննության է ենթարկում հայ ընտանիքներին, որոշելու՝ թե ուր են ցանկանում գնալ: Ըստ որում, որպես նոր բնակավայր մատնացույց են արվում հետևյալ վայրերը՝ Սովետական Հայաստան, Կովկաս, Ֆրանսիա, Թուրքիա և Հարավային Ամերիկա: Հունահայ բնակչությունը, շատ քիչ բացառությամբ, արձանագրվում է Սովետական Հայաստան գաղթողների ցուցակում:

Սալոնիկ տեղափոխման կապակցությամբ հրավիրվել է հայ գաղթականության ներկայացուցիչների խորհրդակցական ժողով, ուր բնության առնելով Ազգերի լիգայի հարցումները՝ գաղթվայրի տեղը որոշելու հարցում, ժողովականները միաձայնությամբ որոշել են, որ «Միակ փրկությունը անտեր և անտուն հայության փոխադրություն է իր հայրենիքը»³:

Գաղութահայ հասարակական ղեկավար շրջանները ո՛չ միայն

1 ՀՊՊԱ, ֆ. 178, № 109, էջ 52—55:

2 Նույնը, ֆ. 178, № 396, էջ 78—81:

3 Նույնը, ֆ. 178, № 394, էջ 11:

որոշակի դիրք են վերցնում հայ գաղթականությունը Հայաստան տեղափոխելու հարցում, այլ նյութական միջոցներ են փնտրում՝ ապահովելու Խորհրդային Հայաստան մեկնող գաղթականության ճանապարհածախսը: Սալոնիկի հայ համայնքի ներկայացուցիչներն այդ առթիվ հատուկ կոչ են հրապարակել՝ ուղղված սփյուռքահայ շրջաններին:

Կոչում ասված է. «Փոքր Ասիայի աղետն հրաշքով ազատվածներ ամենայն հյուրասիրություն, եղբայրական ամենագործվալի վերաբերում գտած են Հելլադային մեջ, ուր միջոց ունեցան հանգչեցնելու իրենց խուճապահար գլուխը, դարմանելու իրենց վերքերը... Հունաստանի սրտագին հյուրասիրությունը պիտի մնա անջնջելի հայության խորագետ սրտում»: Այնուհետև կոչում նշվում է, որ դժվար է բոլոր հայ գաղթականներին տեղավորել Հունաստանում և չի կարելի ընդունել Հունաստանի կառավարության առաջարկը՝ Թրակիայում գտնվող հայ գաղթականությանը Պելեպոնեսի անհյուրընկալ ժայռերը տեղափոխելու մասին, ուստի հայերը որոշել են մեկնել Հայաստան: «Այսօր հայ ազգային գիտակցությունը իր վճիռն արձակած է, — ասվում է կոչում, — ամբողջ ազգը իր բոլոր հատվածներով, կփափագի հայ ժողովուրդը — իր բոլոր հատվածներով տեղափոխված տեսնել իր հայրերու պատմական օձախին մեջ»¹: Սակայն, Հայաստան մեկնելու համար, գտնում են կոչի հեղինակները, անհրաժեշտ են միջոցներ, ուստի և դիմում են հայ գաղթավայրերին ու խնդրում նյութական աջակցություն ցույց տալ Հայաստան մեկնելու համար:

Հունահայ գաղթավայրի ներքին կյանքը եղել է վերին աստիճանի խռովահույզ: Հունահայությունը, քաղաքական համոզմունքներով, բաժանված է եղել հիմնականում երկու խմբի՝ Խորհրդային Հայաստանի բարեկամների և հակառակորդների: Վերջիններս համախմբվել են դաշնակցականների շուրջը: Քիչ թվով եղել են այսպես կոչված «չեզոք»-ներ:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո ինչպես հայկական մյուս գաղթավայրերում, այնպես և հունահայ գաղթավայրում, ծավալվել է բուռն և անհաշտ պայքար սովետական Հայաստանի համակիրների և ոչ համակիրների միջև: Սակայն այդ պայքարը ոչ մի տեղ այնքան սուր բնույթ չի ստացել, որքան հունահայ գաղթավայրում:

Հունահայ աշխատավորությունը կողմնորոշվել է սովետական

Հայաստանի կողմը: Նա Հոկտեմբերյան հեղափոխության մեջ է տեսել աշխարհի բոլոր աշխատավորների, այդ թվում և հայ աշխատավորների հեռանկարը: Հունահայ դեմոկրատական շրջանների հրատարակած «Նոր ալիք» թերթը, թարգման հանդիսանալով հունահայ աշխատավորության այդ մտայնությանը, գրել է. «Տառապող մարդկությունը իր պայքարի ձեռնոցը նետած է ներկա իրավակարգի անարդար կառուցվածքին դեմ: Ծակատագրականորեն հայ ժողովրդին վիճակված է այդ պայքարի ուղին ընդգրկելու»¹:

Հայաստանի կողմնակիցների և դաշնակցականների միջև ծավալվել է պայքար գաղթավայրի վարչական կազմակերպությունների, թաղային մարմինների և հոգաբարձուների ընտրության շուրջը: Դեմոկրատական տարրերն աշխատել են այդ մարմիններում ընտրել հայրենի երկրին համակիր անձնավորություններին, իսկ դաշնակցականներն աշխատել են խափանել նրանց ձգտումը:

Հայաստանի բարեկամներին հաջողվել է իրենց շուրջը համախմբել հունահայ աշխատավորությանը և 1924 թ. սեպտեմբերի 7-ին մեծ հաղթանակ տանել Մակեդոնիայի ու Թրակիայի առաջին պատգամավորական ժողովում. ընտրված 22 պատգամավորներից 18-ը հանդիսացել են նրանց թեկնածուները: Հին Հունաստանի գաղթավայրում 1925 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցած պատգամավորական ընտրությունների ժամանակ Հայաստանի բարեկամներին հաջողվել է լիակատար հաղթանակ տանել և մեծամասնությունը կազմել²:

Հունաստանի հայ գաղթավայրում պայքարն ավելի է սրվել 204-երի կազմակերպման (1924 թ.) և ներգաղթի աշխատանքների կազմակերպման ժամանակ (1924—1925 թ.թ.). սովետական Հայաստանի ընդդիմադիր տարրերն ամեն կերպ աշխատել են խանգարել Հայաստանի կողմնակիցներին, դիմել են մատուցությունների և սպանությունների: Այս ամենը, սակայն, անկարող են եղել խախտել հունահայ աշխատավորության հաստատուն հավատքը հայրենի երկրի՝ սովետական Հայաստանի նկատմամբ:

Հունահայ գաղթավայրի ընդհանուր ղեկավար մարմինը մինչև 1923 թվականը հանդիսացել է թեմական խորհուրդը, որի կազմում ընտրվել և կամ նշանակվել են մեծահարուստ մարդիկ: Հու-

1 «Նոր ալիք», Սալոնիկ, 1924, № 1:

2 Հունահայ հայրենասերների և հակահայրենասերների այս պայքարը հանգամանորեն շարադրված է Պ. Կոկինոսի «Հունահայ գաղութի պատմությունից» աշխատության մեջ:

1 ՀՊՀԱ, ֆ. 178, № 394, էջ 85:

նահայ թեմական իշխանությունները կազմել են իրենց կանոնադրությունը, որը հաստատվել է հունական կառավարության կողմից 1908 թվականին: Այս կանոնադրությունով են առաջնորդվել հունահայ գաղթավայրում մինչև 1923 թվականը:

1922 թվականից հետո, երբ տասնյակ հազարավոր հայ գաղթականներ են ապաստանել Թրակիայում և Մակեդոնիայում, դժվարացել է կազմակերպել նրանց ղեկավարությունը, ուստի 1923 թվականին, Պոլսի պատրիարքարանի կարգադրությամբ, Հունաստանում կազմակերպվել է երկրորդ թեմը, որը կոչվել է Հյուսիսային Հունաստանի կամ Թրակիա-Մակեդոնիայի թեմ:

Հունաստանի հայ աշխատավորությունը սերտորեն կապված է եղել տեղի հույն աշխատավորության հետ ու նրա կողքին գտնվել և սոցիալական, և ազատագրական պայքարի ծանր օրերին: Հունահայ բնակչությունը իր հավատարմությունը ապանտանած երկրի նկատմամբ ցուցաբերեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:

1941—1944 թվականներին՝ ֆաշիստական օկուպացիայի տարիներին, երբ ազատասեր հույն ժողովուրդը ոտքի կանգնեց պայքարելու ֆաշիստական հարստահարիչների դեմ և կազմակերպեց ժողովրդա-ազատագրական ճակատը՝ էԱՄ-ը, նրա շարքերում ակտիվ մասնակցություն ունեցան հունահայ աշխատավորները: Նրանցից շատերը մասնակցեցին պարտիզանական կռիվներին և բավականին զոհեր տվեցին: Հերոսի մահով զոհվեցին Արամ Կեռքչյանը, Վահրամ Սագայանը և շատ ուրիշներ: Հունաստանի կոմունիստական կուսակցության պատասխանատու գործիչներից մեկը՝ նապոլեոն Սոկաչիդեսը, գնահատելով հայ պարտիզանների անձնուրաց քաջագործությունը, հայտարարել է հետևյալը. «Հայերը հպարտ պաշտպանները և առաջամարտիկները հանդիսացան հելլեն ազատագրական պայքարին»¹:

Հունահայ
մշակույթը:

Նոր և նորագույն ժամանակաշրջանների հունահայ մշակույթի մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում ստորև որոշ տեղեկություններ տալ հունահայ կարևոր գաղթօջախների մասին՝ կանգ առնելով նրանց յուրաքանչյուրի բնակչության թվի և մշակութային կյանքի վրա ըստ 1927—1928 թվականների տվյալների:

Հունահայ կենտրոնը հանդիսացել է Աթենքը: Այնտեղ

¹ Թոփուզյան Օ., Հայ-հունական կապերի պատմությունից (տե՛ս «Սովետական Հայաստան», 1959, XII, էջ 26):

1927 թ. հաշվվել է 5700 հայ բնակչություն՝ գլխավորապես արհեստավորներ, բանվորներ և մանր առևտրականներ: Գաղթօջախն ունեցել է երեք դպրոց՝ նախակրթարան 350 երկսեռ աշակերտներով և երկու հայկական մանկապարտեզ՝ 180 երկսեռ երեխաներով: Ունեցել է թատերասիրաց խումբ, հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղ և հասարակական այլ կազմակերպություններ:

Լիբազմա (Պիրեայից արևմուտք՝ ծովեզերքին):— Հայ բնակչությունը 1927 թ. այստեղ հաշվվել է 6000՝ մեծ մասամբ արհեստավորներ: Գաղթօջախն ունեցել է հայկական երկու վարժարան, ուր սովորել են 550 երկսեռ աշակերտ: Դպրոցին կից գործել է նաև մանկապարտեզ: Գաղթօջախն ունեցել է հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղ և հասարակական այլ կազմակերպություններ ու հայրենակցական միություններ:

Կոկինա (Պերիայից հյուսիս-արևմուտք):— 1927 թ. հայերի մոտավոր թիվը այստեղ հաշվվել է 5000: Բնակչությունը բաղկացած է եղել արհեստավորներից, մանր առևտրականներից և բանվորներից: Գաղթօջախն ունեցել է հայկական վարժարան՝ 160 աշակերտներով և երկու մանկապարտեզ՝ 210 երեխաներով: Ունեցել է թատերական խումբ, հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղ և հասարակական մի քանի այլ կազմակերպություններ:

Սինկրո (Աթենքից արևմուտք):— 1927 թվականին հայ գաղթականություն այստեղ հաշվվել է 3000 հոգի: Բնակչության մեծամասնությունը կազմել են արհեստավորները, բանվորները, և մանր առևտրականները: Գաղթօջախն ունեցել է նախակրթարան՝ 150 երկսեռ աշակերտների համար:

Լավրիոն (Գամորից):— 1927 թ. տեղի հանքերում և գործարաններում, ծանր պայմաններում, աշխատել են ավելի քան 650 հայ բանվորներ: Գաղթօջախն ունեցել է երկու մանկապարտեզ:

Քալամաթա (Կորնթոսի ջրանցքի մոտ):— Այստեղ եղել է 1000 հոգի հայ բնակչություն: Գաղթօջախն ունեցել է նաև մի մանկապարտեզ:

Փաթրաս (Հունաստանի հարավ-արևմուտքի ամենից մեծ նավահանգիստը):— Այստեղ 1922 թ. եղել է մի քանի հազարի հասնող հայ գաղթականություն, սակայն, հետագա տարիներին նրանց մեծ մասը գաղթել են Ֆրանսիա և այլ երկրներ, 1927 թ. մնացել են միայն 600 հոգի: Բնակչությունը բաղկացած է եղել արհեստավորներից և մանր առևտրականներից: Գաղթօջախն

ունեցել է հայկական վարժարան, ուր սովորել են 70 աշակերտ:
Վ ո լ ո (Սալունիկից հարավ, Հոնիական արշիպելագոյի դի-
մաց):— Քաղաքում եղել է 730 հայ բնակիչ: Գաղթօջախն ունեցել
է փոքրիկ մանկապարտեզ:

Հայ բնակչութիւնն է եղել Կրետեի երեք քաղաքներում՝ Գա-
դիայում, Ուլիթմայում և Հանիայում: Հայ գաղթականութիւնն
այստեղ հաստատուել է 1922 թ.՝ զանգվածային գաղթի ժամանակ:
Բնակչութիւնը բաղկացած է եղել արհեստավորներից և մանր
առևտրականներից: Կղզու հայ բնակչութիւնը 1927 թ. հաշվվել է
1000 հոգի: Կրետեում գործել են երեք հայկական դպրոցներ:
Հայկական մարզական խմբեր են եղել Ռիթմնայում և Գան-
դայում:

Մ ա կ ե դ ո ն ի ա յ ու մ ամենից մեծ հայկական գաղթօջախն
է եղել Սալունիկը: Այստեղ հայ բնակչութիւնը գտնվել է ո՛չ միայն
քաղաքում, այլև խորամանքեռ և խորհրարոս արվարձաններում: Ողջ
հայ բնակչութիւնն թիվն այստեղ 1927 թ. հաշվվել է մոտ 5000—
6000: Գաղթօջախն ունեցել է հայկական վարժարան, ուր սովորել
են 175 աշակերտ: Սալունիկում եղել է հայկական մանկապարտեզ՝
45 երկսեռ երեխաների համար: Հայկական մանկապարտեզ է եղել
նաև քաղաքի արվարձանում: Այստեղ բացված է եղել նաև հայկա-
կան մի այլ նախակրթարան, ուր սովորել են 180 երկսեռ աշա-
կերտներ: Գաղթօջախում գործել են հայ հասարակական և բարե-
գործական մի շարք կազմակերպութիւններ:

Ս եր ե զ (Թրակիայի երկաթուղու վրա):— 1927 թ. ունեցել է
շուրջ 400 հոգի հայ բնակչութիւն, որոնց մեջ զգալի թիվ են կազ-
մել արհեստավորները: Շրջանի գյուղերում գտնվել են մոտ հա-
զար շափահաս որբեր, որոնք աշխատել են դաշտերում և կամ
զբաղվել արհեստներով: Գաղթօջախն ունեցել է իր դպրոցը:

Գ ա վ ա յ ա (Միջերկրականի հունական նավահանգստային
քաղաք):— 1927 թ. այստեղ եղել են մոտ 1000 հայ: Մեծ թիվ են
կազմել ծխախոտի պահեստներում աշխատող հայ բանվորները:
Գաղթօջախն ունեցել է հայկական երկու վարժարան:

Տրամա (Սերեզից արևելք):— 1927 թ. այստեղ եղել են մո-
տավորապես 800 հայ: Գաղթօջախն ունեցել է հայկական վար-
ժարան, ուր սովորել են մոտ 100 երեխա:

Ք ս ա ն թ ի (Տրամայից արևելք):— Այստեղ գտնվել է մոտ
1000 հայ գաղթական: Նրանք եկել են գլխավորապես Ադրիանա-
պոլսից: Գաղթօջախն ունեցել է հայկական վարժարան, ուր սովո-
րել են շուրջ 120 երեխա:

Ք ո մ ո դ ի ն ի (Գյումյուլչին):— Այս քաղաքում ապրող հայ
բնակչութիւնն մի մասը հին բնակիչներ են, իսկ մյուս մասը եկել է
1922 թվականին: Այստեղ հայ բնակչութիւնն թիվը 1927 թ. եղել է
900: Զգալի թիվ են կազմել արհեստավորները: Գաղթօջախն ունե-
ցել է վարժարան և դասախոսութիւնների համայնքին պատկանող
Քատրոնի սեփական շէնք:

Ա լ ե բ ս ա ն դր ու պ ո լ ի ս (Դեղե Աղաջ, Միջերկրական ծովի
ափին):— 1927 թ. ունեցել է 900 հոգի հայ բնակչութիւն, որի
զգալի մասը կազմել են նավահանգստում աշխատող հայ բանվոր-
ները: Գաղթօջախը 1927 թ. ունեցել է հայկական վարժարան 110
աշակերտների և մանկապարտեզ՝ 60 երեխաների համար: Ունեցել
է հայկական երգչախումբ, և հայ բարեգործական ընդհանուր միու-
թիւն մասնաճյուղ:

Տ ի մ ո թ ի ք ա (Ալեքսանդրոպոլսից ոչ շատ հեռու գտնվող
փոքրիկ քաղաք):— Հայ գաղթականութիւնն այստեղ հաստատուել
է տարբեր ժամանակներում: 1927 թ. այստեղ գտնվել են 300 հա-
յեր: Գաղթօջախն ունեցել է իր դպրոցը:

Մակեդոնիայի 30-ից ավելի գյուղերում ցրված են եղել մոտ
2000 հայեր, սակայն նրանք բոլորն էլ զրկված են եղել հավաքա-
կան կյանքից, չեն ունեցել հայկական դպրոցներ և հասարակական
կազմակերպութիւններ:

Վերը բերված տեղեկութիւնների մեջ ամենից ցուցանշականը
հայկական վարժարանների և մանկապարտեզների առկայութիւնն
փաստն է: Թուրքիայից Հունաստան գաղթած հայ բնակչութիւնը
կողոպտված, արյունաքամ վիճակում, նյութական ծանր պայման-
ների մեջ, այնուամենայնիվ, չի մոռացել երեխաների դաստիարա-
կութիւնն գործը, և ուր որ կանգ է առել իր գաղթի ճանապարհին,
բաց է արել հայրենի դպրոցը և կրթութիւն տվել երեխաներին:
Անգնահատելի մեծ աշխատանք են կատարել հատկապես հայ
ուսուցիչները, որոնք կիսաքաղց, գրեթե մուրացիկ վիճակում, եր-
բեմն շնչին աշխատավարձով կամ ձրի, հանձն են առել հայ մա-
նուկների դաստիարակութիւնն պատվաբեր գործը:

Անվերապահ կարելի է ասել, որ նորագույն ժամանակաշր-
ջանում հունահայ մշակութային կյանքում ամենից նշանակալից
դերը կատարել են հայկական դպրոցները, որոնք բացվել են հու-
նական բոլոր մեծ ու փոքր գաղթօջախներում:

Ինչ վերաբերում է պարբերական մամուլին, ապա այն բա-
վականին հարուստ է: Հունահայ գաղթօջախներում լույս տեսած
բոլոր պարբերականների մասին խոսելու հնարավորութիւն չու-

նենք. կանգ կառնենք միայն մի քանիսի վրա, որոնք առաջադիմական ուղղություն են ունեցել և նշանակալից դեր են կատարել գաղթավայրի պատմության մեջ:

Առաջին հայ պարբերականը, որ լույս է տեսել հունական հողի վրա, եղել է «Ասպարեզ» կիսամյա հանդեսը: Այն լույս է տեսել 1890 թվականին Աթենքում: Այս հանդեսի խմբագիրն է եղել Անտոն Ռշտունին: Հայկական տպարան չլինելու պատճառով, այն լույս է տեսել վիմատիպ: Հանդեսն ունեցել է երգիծական բնույթ. այնտեղ զետեղվել են ընտիր ծաղրանկարներ և սրամիտ զավեշտական հոդվածներ¹:

1894 թվականին Աթենքում սկսում է հրատարակվել «Գաղափար» անունով մի ամսագիր՝ «Հանդես գիտական սոցիալիզմի» ընդհանուր խորագրի տակ: Ամսագիրը լույս է տեսել երեք ամիսը մեկ անգամ:

1896—1901 թվականներին դարձյալ Աթենքում լույս է տեսել «Միություն» անունով ամսագիր, որը խմբագրել են մի քանի անձնավորություններ: Վերջում այդ ամսագիրը խմբագրել է արևմտահայ ահանավոր երգիծարան Ծ. Օտյանը:

Հետագա տարիներին Աթենքում և Սալոնիկում լույս են տեսնում քաղաքական տարբեր ուղղություն ունեցող տասից ավելի թերթեր և ամսագրեր: Այդ մասամբ հետևանք էր այն սուր պայքարի, որ ծավալվում է հունահայ գաղթավայրում Սովետական Հայաստանի կողմնակիցների և դաշնակցականների միջև:

Նորագույն ժամանակներում Հունաստանում լույս տեսնող հայկական առաջադիմական ուղղություն ունեցող պարբերականներից անհրաժեշտ է հիշել «Հաղթանակ» օրաթերթը, որը լույս է տեսել 1926—1927 թվականներին: Թերթը մեծ դեր է կատարել ճշմարտացիորեն ներկայացնելու Սովետական Հայաստանը հունահայ աշխատավորության և կազմակերպելու հունահայ աշխատավորության պայքարը Սովետական Հայաստանի թշնամի տարրերի դեմ:

Հունահայ աշխատավորության մարտական լավագույն պարբերականներից է հանդիսացել «Աշխատանք» եռօրյա թերթը, որը լույս է տեսել Սալոնիկում 1926—1927 թվականներին:

¹ Այս և հաջորդ հրատարակությունների մասին տե՛ս Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բերլիոգրաֆիա», հ. 1, էջ 615, 641 և 671:

VIII. ԲՈՒՂԱՐԱԿԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Բուլղարահայ գաղթավայրը նոր ժամանակներում կարողացավ ո՛չ միայն պահպանել իր գոյությունը, այլև ավելի ստվարացավ: Ամեն անգամ, երբ Թուրքիայում սկսվել են կոտորածները, յաթաղանից ազատված հայ փախստականները արևմտյան վիլայեթներից եկել և բնակություն են հաստատել այս հյուրընկալ երկրում:

Թուրքական հարստահարությունները ճաշակած բուլղար ժողովուրդը սիրով է ընդունել և տեղավորել հայ գաղթականությանը: Պետք է նշել, որ Բուլղարիան Արևմտյան Եվրոպայի այն երկրներից է հանդիսացել, ուր հայ գաղթականությունը ձուլման վտանգի առջև կանգնած չի եղել, քանի որ բուլղարահայ գաղթօջախները անընդմեջ թարմ գաղթականություն են ընդունել և ապա՝ Բուլղարիայում դավանափոխության ճնշումներ ու պարտադրանքներ չեն եղել:

XVIII դարում պահպանված են եղել հայկական այն բոլոր գաղթօջախները, որոնք գոյություն ունեին նախորդ դարերում: Միայն XIX դարի վերջերում, Բալկանյան պատերազմի տարիներին, հայ բնակչությունը մասամբ նոսրացել է գլխավորապես այն վայրերում, ուր տեղի են ունեցել պատերազմական գործողություններ:

Մ. Բժշկյանը, որը 1808 թվականին եղել է՝ Բուլղարիայում և շրջել հայկական գաղթօջախներում, հայ բնակչություն է հիշում հետևյալ վայրերում.

Ռուշուկ	— 150 տուն,
Ռազգրադ	— 20 տուն,
Շումել	— 200 տուն,
Սիլիստրե	— 20 տուն,
Այտոս	— «Սակաւ տունք հայոց»,
Բուրգաս	— 20 տուն,
Բաբա դադ	— 40 տուն,
Դիմոթոբա	— 20 տուն,
Բազարջուխ	— 30 տուն,
Դրոնովո	— «Սակաւ են Հայք»,
Ֆիլիպոպոլիս	— 100 տուն (նշում է թե՛ «Յառաջ աւելի էին»),
Թաթար Բազար	— 30 տուն,
Կյումյուլճինա	— 20 տուն,
Զոուու	— 100 տուն,
Սոֆիա	— (նշում է թե՛ «Յառաջագոյն բազմութիւն Հայք»),
էդրինե	— 1000 տուն,
Վաննա	— 150 տուն (նշում է, որ՝ «Յառաջ բազում էին աստ Հայք, որք ի ժամանակս պատերազմաց ցիրկացան եղէն» ¹):

Եթե Բժշկյանի հիշած հայկական տների թիվը հաշվենք մտաւորապես 200 տուն և ընդունենք, որ ամեն մի տուն ունեցել է միջին հաշվով 5 շունչ, ապա ողջ Բուլղարիայում XIX դարի սկզբներում գտնվելիս պետք է լինէր մոտ 10 000 հայ բնակչություն: Այս վիճակագրությունը թերի է, որովհետև փոքրաթիվ հայ բնակչություն է եղել նաև գյուղական վայրերում, իսկ Բժշկյանը գյուղեր չի այցելել և գյուղացի բնակչությանը չի հիշատակում:

Անհրաժեշտ է նշել, որ Բուլղարիայի հայ բնակչությունն անկեղծ սիրով է կապված եղել Բուլղարիայի՝ իր երկրորդ հայրենիքի հետ և գործուն մասնակցություն է ցուցաբերել թուրք հարստահարիչների դեմ բարեկամ բուլղար ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարում: Պետք է նկատի ունենալ, որ բուլղար ժողովրդի պայքարը թուրքական լծի դեմ, նրանց ձգտումները և երազանքը միանգամայն հարազատ էին բուլղարահայությունը:

¹ Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 209—215:

Կարելի է ասել, որ չի եղել պայքարի մի թատերաբեմ, որին տեղացի հայրենասերների հետ ուսուսի մասնակցած չլինեն բուլղարահայերը: Փոքր թիվ չեն կազմում պայքարին մասնակից այն հայերը, որոնք իրենց կյանքը զոհել են բուլղար ժողովրդի ազատագրական պայքարում:

Բուլղարահայերի նվիրվածությունն իրենց երկրորդ հայրենիքին ակներև դրսևորվեց Բուլղարիայի փորձութիւնի ժանր շրջանում՝ 1875—1877 թվականներին, երբ բուլղար ժողովուրդը զենք էր վերցրել և քաջաբար ազատագրական պայքար էր մղում թոթափելու Թուրքիայի արյունոտ լուծը: Այս տարիներին հայրենիքի ազատագրության համար կովոդ բուլղար հայրենասերների շարքում տեսնում ենք նաև բազում հայերի:

1877 թվականին Կավարնա քաղաքի բուլղար հայրենասերների հետ թուրք բաշիբոզուկների դեմ կովոդ երիտասարդ Կարապետ Երանոսյանը գերի ընկնելով թուրք դահիճների ձեռքը, դատավարության ժամանակ նրան տրված այն հարցին՝ թե ինչու է կովում թուրքերի դեմ, նա պատասխան է տալիս. «Զգտում եմ ազատ ու անկախ հայրենիքի՝ Բուլղարիայի, ուր ծնվել և ուր ցանկանում եմ մեռնել»¹:

Տեղացի ժողովրդի նկատմամբ բուլղարահայությունից ցուցաբերած երախտագիտական վերաբերմունքի ցուցանշական փաստ է նաև Հովհաննես Սվաճյանի անձնագոհությունը, որի մասին առանձին ջերմություններ են հիշում բուլղարացիները: 1878 թվականի սկզբներում, երբ թուրքական բանակը ուսական զորքերի և բուլղար կամավորական զորամասերի ճնշման տակ նահանջում էր դեպի հարավ, Բազարջուկ քաղաքի կայարանում հավաքված են լինում մեծաթիվ բուլղարացիներ՝ տեղից և հարևան գյուղերից: Ռուսական զորքերը հասնելով Մարիցա գետը, դժվարանում են անցնել այն՝ կամուրջը քանդված լինելու պատճառով: Բազարջուկի թուրքական զորամասի հրամանատարը հեռագրում է Ֆիլիպոպոլիս՝ թուրքական բանակի հրամանատարությունը, և հարցնում, թե ինչպե՞ս վարվել Բազարջուկի կայարանում կուտակված գաղթականության հետ: Թուրքական կատաղած հրամանատարությունը պատասխանում է. «Կայարանի շուրջը հավաքված ժողովրդին բնաջնջել»: Հեռագիրն ընդունում է Բազարջուկի փոստի աշխատակից Հովհաննես Սվաճյանը, որն իր կյանքը վտանգի ենթարկելով,

¹ Կ. Գաբրիելով, Հայերը Բուլղարիայում (տե՛ս «Սովետական Հայաստան», 1966, մայիսի 17):

խղճի կատարյալ հանգստութեամբ, փոխում է հեռագրի «բնաջըն-
ջել» բառը «խնայել» բառով և այդպիսով փրկում հազարավոր
մարդկանց կյանք: Մի քանի օր հետո, երբ ուսական և բուլղա-
րական զորամասերն անցնում են Մարիցա գետը, նոր միայն
հայտնի է դառնում Սվաճյանի հանդուգն սխրանքը¹:

1925 թվականին, Բազարջրկի թաղապետական խորհրդի որոշ-
մամբ, Սվաճյանի հիշատակը հավերժացնելու համար, քաղաքի
փողոցներից մեկը կոչել են նրա անունով, որ և պահպանվել է
առ այսօր:

Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի հայկական գաղթօջախի բնա-
կիչ Արթին Գրգիկովը, որն իր ժամանակի հեղինակավոր անձնա-
վորություններից մեկն է եղել և մոտ բարեկամը բուլղար լուսա-
վորիչ ու բանաստեղծ Նայդեն Գերովի, գործի ղեկավար իր անձնա-
կան հեղինակությունը, կարողացել է թուրք դահիճների ձեռքից
ազատել ավելի քան հիսուն բուլղար հայրենասերների, որոնց կա-
խաղան պետք է բարձրացնեին²:

Շումենի հայկական գաղթօջախի բնակիչ Հովհաննես Ալաջաջ-
յանը իր տանը թաքցրել և ձերբակալությունից ազատել է բուլղար
ժողովրդի ազատագրական շարժումների աչքի ընկնող գործիչ բա-
նաստեղծ Գյորգի Ռակովսկուն: Բուլղար հեղափոխականներից մե-
կը՝ Դանաիլ Պոպովը, 1872 թվականի դեկտեմբերի 2-ին Բուլղա-
րիայի հեղափոխական կոմիտեի անդամ Լ. Կարավելովին ուղար-
կած իր նամակում Ալաջաջյանի մասին գրել է. «Ծն վաղուց է ճա-
նաչում եմ նրան (այսինքն՝ Ալաջաջյանին), չափազանց լավ մարդ
է և հայրենասիրական զգացմունքների տեր, որը չնայած օտար
ազգից է, բայց ես համոզված եմ, որ նա վատը չի ցանկանում
մեզ՝ բուլղարներին: Մի անգամ Շումենում նա իր տանը թաքցրել
ու փրկել է Ռակովսկուն այն պահին, երբ քիչ էր մնացել, որ թուր-
քերը ձերբակալեին նրան: Այս հայը նրա զգեստները փոխելով,
տարել է Ռումինիա»³:

Բուլղարիայի հայ բնակչության վիճակը հիմնովին փոխվեց
1878 թվականին, երբ բուլղարական ժողովուրդը, ուսա ժողովրդի
գործնական աջակցությամբ, դեն նետեց թուրքական լուծը և քա-

ղաքական անկախություն ձեռք բերեց: Այժմ ո՛չ միայն բարեկա-
վեց բուլղարահայերի վիճակը, ո՛չ միայն վերացան հալածանք-
ները, այլև Բուլղարիան դարձավ հուսալի մի հենարան Թուրքիա-
յում հալածվող հայ բնակչության համար, ուր և ծանր օրերին՝
ուղղվեցին հայ գաղթականական հոսանքները:

XIX դարի վերջին քառորդում գրեթե ամեն տարի հայ բնակ-
չություն է եկել Բուլղարիա Թուրքիայից, սակայն զանգվածային
առաջին խոշոր գաղթականությունը եկել է 1895—1896 թվական-
ներին՝ համիդյան ջարդերից հետո: 1895—1896 թվականներին
Թուրքիայից Բուլղարիա եկած հայ գաղթականության ստույգ թիվը
դժվար է ասել. հրապարակված տվյալները, վիճակագրության
բացակայության պատճառով, շատ են տարբերվում իրարից: Մո-
տավոր հաշիվներով, համիդյան ջարդերից հետո Բուլղարիա գաղ-
թած հայ բնակչության թիվը պետք է եղած լինի շուրջ 5000—6000:

Բուլղարահայությունը իրեն ապաստանած երկրի նկատմամբ
իր հավատարմության նոր ապացույց տվեց Բալկանյան առաջին և
երկրորդ պատերազմների ժամանակ՝ 1912—1913 թվականներին:

1912—1913 թվականներին, Բալկանյան պատերազմների ժա-
մանակ, բուլղարական զորաբանակում գործել են 229 հոգուց
բաղկացած հայ կամավորական մի վաշտ: Թրակիայում վաշտին
միացել են 42 կամավորներ ևս: Հայ կամավորների այդ զորամա-
սը 1912 թվականին մասնակցել է մի շարք ճակատամարտերի և
աչքի ընկել իր քաջագործություններով: Նոյեմբերի 5-ին հայ զո-
րամասի գործուն աջակցությամբ հաջողվել է գերի վերցնել Յավրի
փաշային, որի գլխավորած զորաբանակում եղել են 10 000 զին-
վոր, 242 սպա, 3 գնդապետ և մեկ փաշա¹: Հայկական զորա-
մասը մասնակցել է նաև 1913 թվականի մի քանի ճակատամար-
տերին: Պատերազմից հետո հայ կամավորներից շատերը պար-
գևատրվել են բուլղարական կառավարության շքանշաններով և
մեդալներով: «Հայկական վաշտը,— նշված է բուլղարական հրա-
մանատարության հրամանագրում,— չնայած վատ հանդերձավոր-
ման, ընդհանրապես եղած է միշտ ուժեղ իր տոկունությամբ,
կարգապահությամբ և շարքաշուկայամբ և չափազանց քաջ՝ կովի-
մեջ»²:

Բուլղարիայի հայ աշխատավորությունը տեղացի բուլղար ժո-
ղովրդի հետ է եղել ոչ միայն ժողովրդա-ազատագրական, այլև

1 «Մասիս» տարեգիրք, 1935, էջ 200—202:

2 Կ. Հ. Ճինգոլյան, Հայ-բուլղարական կապերի պատմությունից, Երևան,
1966, էջ 55—56:

3 Նույն տեղը, էջ 54—55:

1 «Պուլկարահայ տարեգիրք» («Վետոշ Արարատ»), 1935, էջ 195—197:

2 Նույն տեղում, էջ 193:

սոցիալական շարժումների ժամանակ և տվել հեղափոխական աշ-
քի ընկնող մի շարք գործիչներ:

XIX դարի վերջին քառորդին, ինչպես հայտնի է, Բուլղարիա-
յում զարգանում է կապիտալիզմը: Հիմնվում են մի շարք գործա-
րաններ և ֆաբրիկաներ: Ֆաբրիկա-գործարանային բանվորների
շարքերն են սկսում ներգրավվել նաև զգալի թվով բուլղարահայեր՝
գլխավորապես արհեստավորներից:

Պլովդիվի հայկական գաղթօջախում այնքան շոշափելի թիվ
ներկայացնող բանվորություն է եղել, որ 1896 թ. այնտեղ ստեղծ-
վել է հայ երիտասարդ բանվորների հեղափոխական մի խմբակ,
որը կոչվել է «Երիտասարդ հայ սոցիալիստների խմբակ»: Այս
խմբակի կազմակերպմանը մասնակցել է Դմիտրի Բլագոևը: Խմբ-
բակի ակտիվ գործիչներից են հանդիսացել Տիգրան Իսմիլյանը՝
Պլովդիվի պրոլետարիատի սիրված ղեկավարներից մեկը և բոցա-
շունչ հեղափոխական Ստեփանոս Շահբազյանը:

1909 թվականին դարձյալ Պլովդիվում, ուր կենտրոնացված
են եղել մեծ թվով հայեր, կազմակերպվել է «Հայ բանվորների
լուսավորման» խմբակ: Խմբակն իր առջև խնդիր է դրել հեղափո-
խական աշխատանք ծավալել գաղթավայրի հայ աշխատավորու-
թյան մեջ¹:

Բուլղարահայերն արտակարգ հոգատարություն են ցուցաբե-
րել նաև համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին ու
նրա ընթացքում իրենց հայրենակիցների նկատմամբ: Սոֆիայից,
Ռուշուկից և այլ վայրերից դիմումներ են ուղարկվել էջմիածին՝
խնդրելով միջնորդել ուսական կառավարության առջև՝ կանխելու
հայ բնակչության կոտորածները Թուրքիայում:

Բավական մեծ է եղել 1912—1913 թվականներին՝ երկրորդ
Բալկանյան պատերազմի տարիներին, Թուրքիայից Բուլղարիա
եկած հայ գաղթականությունը: Եթե 1910 թվականին Բուլղարիա-
յում գտնվել է շուրջ 13 000 հայ բնակչություն², ապա Բալկանյան
պատերազմից հետո հայ բնակչության թիվը մեկեն բարձրացել է
35 000-ի³: Այս թվի մեջ հաշվի է առնված նաև Դորբուշի մարզի
հայ բնակչությունը, որը բալկանյան երկրորդ պատերազմից
հետո միացվեց Բուլղարիային: Բուլղարիայի այցելու հովիվ Գնել
Կպիսկոպոսի 1914 թվականի մայիսի 8-ին էջմիածին ուղարկած

¹ ՀՊՊԱ, ֆ. 57, ց. 2, № 677, էջ 11:

² «Հայրենի տարեցույց», 1938:

³ «Ալիք», Սալոնիկ, № 106:

զեկուցագրից երևում է, որ հայ բնակչություն է եղել Դորբուշի-
մարզի Սելեսուրի քաղաքում, նրա հարևան գյուղերում, Դորբու-
շում և Պալչեկում¹:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Թուր-
քիայից փախել և Բուլղարիա են ապաստանել շուրջ 2000—3000
հայեր, մեծ մասամբ զինվորականներ, որոնք չէին ուզում կովել
Կովկասյան ռազմաճակատում ռուսների դեմ, ինչպես նաև թուր-
քական կոտորածից մազապուրծ փախած-ազատվածներ: Չնայած
համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Բուլղարիան
Թուրքիայի դաշնակիցն էր, բայց, այնուամենայնիվ, բուլղար ժո-
ղովուրդը մարդասիրաբար իր հարկի տակ ընդունեց և ապաստա-
նեց հայ փախստականներին:

Համաշխարհային առաջին պատերազմը վերջանալուց և զի-
նազաղարը կնքելուց հետո Բուլղարիա գաղթած հայ գաղթակա-
նության որոշ մասը՝ մոտ 10 000 հոգի, վերադարձել են իրենց
նախկին բնակավայրերը: Այդ գաղթականների վերադարձից հետո
Բուլղարիայի հայ բնակչության թիվը իջել է 25 000-ի:

Ամենից խոշոր հայ գաղթականությունը Թուրքիայից Բուլ-
ղարիա է եկել 1922 թվականին՝ հունական բանակի նահանջի և
քամալական իշխանությունների ձեռնարկած հայ բնակչության
նոր տեղահանությունների ու կոտորածների հետևանքով: Թրա-
կիայի ճանապարհով 1922 թվականին Թուրքիայից Բուլղարիա է
եկել ավելի քան 22 000 հայ գաղթականություն: Այդ նույն տարին
ծովային ճանապարհով եկել և Վառնայում ու Բուրգասում ցամաք
են իջել 2000—3000 հայ փախստական: 1922 թվականին Բուլղա-
րիայի հայ բնակչության թիվը հասել էր 52 հազարի:

Մեր նպատակից դուրս է այստեղ մեկ-մեկ թվարկել այն
գաղթավայրերը, ուր հայ բնակչություն է եղել ներկա դարի քսա-
նական թվականներին, սակայն ցույց տալու համար, թե ինչ շա-
փով են ստվարացել այդ գաղթօջախները, ուզում ենք բերել մի
քանի տվյալներ:

Եթե Բուլղարիայի մայրաքաղաքում՝ Սոֆիայում, մինչև 1880
թվականը եղել է ընդամենը 100 տուն հայ բնակչություն, ապա
նորագույն ժամանակներում այն հասել է 4000-ի: Եթե Ռուշուկում
մինչև 1895 թվականը եղել է ընդամենը 140—150 տուն հայ բնակ-
չություն, ապա 1922 թվականին այն հասել է 4800—5000 շունչ
բնակչության: Ֆիլիպպոպոլիսում Բժշկյանի հիշած 100 տուն հայ

¹ ՀՊՊԱ, ֆ. 57, ց. 2, № 677, էջ 11:

բնակչությունը 1922 թվականին աճել և հասել է 10 000 շնչի: Խասքովոյում, ուր 1895 թվականից առաջ եղել է ընդամենը 28 ընտանիք հայ բնակչություն, 1922 թ. աղետից հետո այդ թիվը հասել է 532-ի՝ 1800 շունչ բնակչությամբ: Ստարո Զագորայում 1895 թվականից առաջ եթե եղել է 7—8 հայ տնտեսություն, ապա 1922 թվականին այն հասել է 1200-ի¹: 1895 թվականից առաջ Եթե Բուրգասում եղել է ընդամենը 432 հոգի հայ բնակչություն, ապա 1922 թվականին հասել է 1138-ի²: Նման հարաբերությամբ աճել է նաև մյուս գաղթօջախների հայ բնակչությունը:

Ըստ բուլղարական պաշտոնական տվյալների, որոնք լրիվ չի կարելի համարել, Բուլղարիայում ապրող հայ բնակչության թիվը տարբեր ժամանակներում հետևյալն է եղել. 1892 թվականին՝ 6643, 1900-ին՝ 13 809, 1905-ին՝ 12 932, 1920-ին՝ 11 509, 1926-ին՝ 2732³:

Ի՞նչ սոցիալական կազմ է ունեցել բուլղարահայ բնակչությունը նոր ժամանակներում, ո՞րն է եղել բուլղարահայ բնակչության հիմնական զբաղմունքը: Այս հարցի պարզաբանումը կարևոր է, որովհետև եվրոպական պատմագրության մեջ քաղաքացիություն ունի այն սխալ տեսակետը, թե Բուլղարիայում և եվրոպական մյուս երկրներում ապաստանած հայերի ճնշող մեծամասնությունը հանդիսացել են առևտրականներ: Դժբախտաբար, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Սլավոնագիտության ինստիտուտի հրատարակությամբ 1954 թվականին լույս տեսած «История Болгарии» առաջին հատորի հեղինակները ևս մասամբ բաժանում են այդ տեսակետը: Բուլղարիայի տնտեսական կյանքի զարգացման կապակցությամբ խոսելիս, նրանք հիշում են միայն հայ առևտրականներին՝ մոռացության տալով հայ բնակչության հիմնական զանգվածը՝ արհեստավորությունը և բանվորությունը⁴:

Զենք ուզում ասել, թե հայկական գաղթավայրերում, այդ թվում նաև Բուլղարիայում, հայ առևտրականներ չեն եղել և կամ նրանք երկրորդական դեր են խաղացել տվյալ երկրի տնտեսական կյանքում. անվիճելի է, եղել են: Այդ մասին խոսվել է ո՛չ միայն օտար տեղեկագրերում, այլ հենց Բուլղարիայում տպագրեր-

ված հայկական տարեգրքերում, որոնք հրատարակվել են նույն առևտրականների նյութական օժանդակությամբ: Սակայն հիմնովին սխալ է հայ գաղթավայրի բնակչությանը համատարած առևտրականներ համարելը. վիճակագրական անվիճելի տվյալներից երևում է, որ Բուլղարիայի հայ գաղթօջախների բնակչության ճնշող մեծամասնությունը եղել են արհեստավորները և բանվորները: Մեր այս կարծիքը հաստատելու համար անհրաժեշտ ենք համարում ստորև բերել Բուլղարիայի խոշոր գաղթօջախներից մեկի՝ Սոֆիայի գաղթօջախի բնակչության զբաղմունքի ցանկը ըստ առանձին մասնագիտությունների, որոնք պաշտոնապես գրանցվել են պետական համապատասխան գրասենյակներում: Ճիշտ է, այդ տվյալները վերաբերում են քիչ ավելի ուշ շրջանի, բայց, այնուամենայնիվ, նրանք որոշ պատկերացում տալիս են մեզ: Հրապարակված այդ ցանկից բերում ենք կարևորները:

1934 թվականին Սոֆիայում ապրել են 4000 հայեր, որոնցից պետական գրասենյակներում պաշտոնապես գրանցվել են 1300 հոգի: Գրանցման քարտերում նշվել է յուրաքանչյուրի զբաղմունքը, որը կարևոր է բնակչության սոցիալական պատկերը պարզելու համար: Այդ ցանկում հիշված են՝ ատաղձագործներ՝ 38 հոգի, գերծակներ՝ 22 հոգի, բանվորներ՝ 90 հոգի, կոշկակարներ՝ 260 հոգի, ոսկերիչներ՝ 49 հոգի, երկաթագործներ՝ 19 հոգի, լուսանկարիչներ՝ 19 հոգի, մեծ և փոքր առևտրականներ՝ 150 հոգի, ազատ արհեստի մարդիկ՝ 28 հոգի, սրճագործներ՝ 28 հոգի, պաշտոնյաներ՝ 149 հոգի և այլն¹:

Եթե մենք վերցնենք միայն այս ցուցակը և զանց առնենք անգամ հաշվից դուրս թողած քաղաքամերձ վայրերում աշխատող հայ գյուղացիներին և մասնավոր տներում աշխատող հայ ծառայողներին, ապա 1130 հոգու կեսից ավելին կլինի արհեստավորությունը, մեկ քառորդը՝ բանվորությունը և միայն մնացած 180 հոգին է, որ զբաղված են եղել մեծ և փոքր առևտրով:

Պետք է նկատի ունենալ, որ այս տվյալները վերաբերում են Բուլղարիայի շատ ու քիչ բարեկեցիկ վիճակում գտնվող հայ գաղթօջախին՝ մայրաքաղաքին, ուր կենտրոնացած են եղել զբլխավորապես ունևոր հայերը, իսկ մյուս գաղթօջախների բնակչության աշխատավոր խավերը շատ ավելի մեծ թիվ են կազմել:

Հայ առևտրականների մասին խոսելիս նկատի պետք է ունենալ նաև այն, որ Թուրքիայից Բուլղարիա կամ այլ երկրներ գաղ-

1 «Վիթո-Արարատ» Պուկարահայ տարեգիրք, 1935, էջ 111:

2 «Մասիս» տարեգիրք, 1934, էջ 285—308:

3 Ն. Գասալյան, Ակնարկ մը պուկարահայ գաղութին անցյալին և ներկային վրա («Հայ մամուլ», 1937, հոկտեմբեր):

4 «История Болгарии», т. I, Москва, 1954, էջ 132 և այլք:

1 «Մասիս» տարեգիրք, 1934, էջ 257—258:

թող հայ բնակչության մեծ մասը եղել են գյուղացիներ, որոնք գաղթավայրերում գրկված լինելով հող ունենալու և հողի մշակությամբ զբաղվելու սիրած զբաղմունքից, իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար հարկադրված են եղել կա՛մ արհեստ բանեցնել և կա՛մ փոքրիկ մի գումար ձեռք գցելով՝ մանրավաճառ առևտրով զբաղվել:

Նորագույն շրջանում բուլղարահայ գաղթավայրում կազմակերպվում են մի շարք հասարակական, քաղաքական և բարեգործական կազմակերպություններ, որոնցից առանձնապես աչքի ընկնող գործունեություն է ունեցել «Հայ բանվորական կոմունիստական ինքնազարգացման միություն»-ը, որը կազմակերպվել է Պլովդիվում 1919 թվականին: Միությունն իր առջև խնդիր է դրել՝ տարածել կոմունիստական գաղափարները հայ աշխատավորության մեջ: Միությունը հրապարակել է իր կոչը գրքույկի ձևով, որը պատմական կարևոր նշանակություն ունեցող վավերագիր է հանդիսանում¹: Կոչն ուղղված է Բուլղարիայի և արտասահմանի հայ աշխատավորությանը և տարածվել է բալկանյան բոլոր երկրներում:

1919 թվականին, այս կոչի անմիջական ազդեցության տակ, ստեղծվում են հայկական կոմունիստական մի շարք կազմակերպություններ ինչպես Բուլղարիայում, այնպես և Հունաստանի ու Թուրքիայի որոշ գաղթավայրերում²:

Բուլղարիայի կոմունիստական կազմակերպությունները մեծ աշխատանք են տանում բուլղարահայ աշխատավորության շրջանում բուրժուական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականության մերկացման գործում: Նրանք ղեկավարում են հայ աշխատավորության պայքարը՝ գաղթավայրի վարչական, հասարակական, դպրոցական մարմիններում պատշաճ տեղեր գրավելու համար:

Բուլղարիայի հայ կոմունիստների խնդիրն ավելի է մեծանում և լրջանում Հայաստանում սովետական կարգեր ստեղծվելուց հետո, երբ սրվում է պայքարը Սովետական Հայաստանի կողմնակիցների և հակառակորդների միջև: Բուլղարահայ կոմունիստները իրենց մամուլում և առանձին հրապարակված կոչերում հանդես են գալիս որպես սովետական կարգերի ջերմ պաշտպաններ: Նրանք նշում են սովետական կարգերի հաստատման պատմական

նշանակությունը, մերկացնում թշնամիներին և կազմակերպում բուլղարահայերի նյութական օգնությունը Սովետական Հայաստանին՝ նրա վերականգնման ծանր շրջանում:

Բուլղարիայի հայկական գաղթավայրն անշափ ծանր վիճակի մեջ է գտնվել Բուլղարիայում հաստատված ֆաշիստական ռեժիմի տարիներին: «Երևան» առաջադիմական միության կենտրոնական վարչության 1945 թվականի ապրիլի 6-ին Սոֆիայից ԱՕԿՍ-ին ուղարկած գրության մեջ հետևյալ կերպ է ներկայացված հայ գաղթավայրի վիճակը ֆաշիստական իշխանության շրջանում. «Ֆաշիստական ռեժիմը լուծարքի ենթարկած էր գաղութի բոլոր հառաջադիմական միությունները և ոտնակոխած ու բռնաբարած անոր ամենատարրական մարդկային իրավունքները: Տասնյակ տարիներու ընթացքին մենք ապրեցինք շատ ծանր պայմաններու տակ: Կրեցինք ֆաշիստական ռեժիմներու կրկնակի լուծը թե՛ որպես երկրին քաղաքացիներ և թե՛ որպես ազգային փոքրամասնություն: Տառապանքի ամենածանր օրերուն իսկ սակայն պուլկարահայությունը երբեք չդադրեցավ խանդավառվելիս Սովետական Հայաստանի պայծառ իրականությունից և ոչ մեկ հալածանք ի վիճակի եղավ արմատախիլ ընելու անոր սրտին անսահման սիրո զգացմունքները հանդեպ սովետական հայրենիքին»¹:

Բուլղարահայ «Երևան» կուլտուր-լուսավորական կազմակերպության կենտրոնական ղեկավարության նախագահ Կ. Գաբրիելովը խոսելով հայ գաղթավայրի մասին Բուլղարիայի ժողովրդական հանրապետությունում, նշում է հետևյալը. «Փաշիզմի և կապիտալիզմի շղթաներից ազատագրված մեր հայրենակիցները, իբրև իրավահավասար քաղաքացիներ, ակտիվ մասնակցություն են ունենում երկրի հասարակական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում: Ամենակտիվ հակաֆաշիստների ջանքերով Բուլղարիայում ստեղծվեց հայերի կուլտուր-լուսավորական «Երևան» կազմակերպությունը, որն իր շարքերում միավորեց բոլոր առաջադեմ հայերին: Երբ նայում ենք անցած 21 տարվա հեռավորությունից, ապա տեսնում ենք, թե ինչպիսի մեծ օգուտ տվեց նա ինչպես հայկական բնակչությանը, այնպես էլ բուլղար և հայ ժողովուրդների միջև բարեկամության ու եղբայրության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը»²:

¹ Կ. Գաբրիելով, Հայերը Բուլղարիայում (տե՛ս «Սովետական Հայաստան», 1966, մայիսի 17):

² 2ԳՀԱ, ֆ. 709, գ. 30, էջ 1:

¹ 2ԳՀԱ, ֆ. 4—114, ց. 1, գ. № 63, էջ 9—17:

² Պ. Կոկինսու, Հունահայ գաղութի պատմությունից, էջ 76:

**Բուլղարահայ
մշակույթը:**

Բուլղարահայ մշակույթի զարգացումը նոր ժամանակաշրջանում հիմնականում կապված է XIX դարի ութսունական թվականների վերազարթումի շրջանի հետ, երբ հանդես են գալիս հայ դպրոցները, տպագրությունը, պարբերական մամուլը, թատրոնը և այլն: Բուլղարահայ մի քանի գաղթօջախներում դպրոցներ են եղել XIX դարի առաջին կիսում: Հայտնի է, օրինակ, որ Ֆիլիպսում հայկական վարժարան է եղել 1828 թվականից սկսած: Սակայն հայկական դպրոցների մեծ մասը բուլղարահայ գաղթօջախներում բացվել են գլխավորապես XIX դարի ինսունական թվականներին, այսինքն՝ այն ժամանակ, երբ նոր գաղթականություն է գալիս Թուրքիայից և աշխուժացնում գաղթավայրի համայնքների ներքին կյանքը¹: Ցանկանալով բուլղարահայ դպրոցական ցանցի վերաբերյալ որոշ պատկերացում տալ, անհրաժեշտ ենք համարում հրատարակել համառոտ մի տեղեկագիր, որը լույս է տեսել «Մասիս» տարեգրքում 1935 թվականին:

1. Այթոս — Խորենյան դպրոց,
2. Թաթար Բազարչուկ — Խորենյան »
3. Բուրգաս — Հայկազյան դպրոց,
4. Ծամբուլ — Օշականյան »
5. Նովո Զագորա — Մամիկոնյան »
6. Ստարա Զագորա — Մեսրոպյան »
7. Խասկովոյ — Մեսրոպյան »
8. Շումեն — Վարդանյան »
9. Պլովդիվ — Վառվառյան և Մխիթարյան դպրոց,
10. Ռուսչուկ — Մեսրոպյան դպրոց,
11. Սլիվեն — Լուսավորչական դպրոց,
12. Սոֆիա — Արամյան դպրոց և Մեսրոպյան ճեմարան,
13. Վառնա — Մխիթարյան դպրոց:

Բուլղարահայ 13 հայկական համայնքներում՝ գործել են 15 դպրոց, ուր աշխատել են 91 ուսուցիչ: Բուլղարահայ դպրոցներում սովորել են 2355 երեխա²:

XIX դարի 80-ական թվականների Բուլղարիայի հայ գաղթավայրի վերազարթումի հետ է կապված նաև բուլղարահայ պարբե-

¹ ՉՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. № 295, էջ 37ա:
² «Մասիս» տարեգիրք, 1935, էջ 248:

րական մամուլը: Առաջին անգամ Անդրանիկ Եռանասկուն Վառնայում 1883 թվականին հիմնում է տպարան և լույս ընծայում անդրանիկ բուլղարահայ շաբաթաթերթը «Huis» անունով: Շաբաթաթերթի լեզուն հայերեն է, սակայն տառերը՝ լատիններեն: Առաջին համարը լույս է տեսել 1884 թվականի հունվար ամսին: Եռանասկուի այս փորձը՝ մեսրոպյան տառերը փոխարինելու լատիններենով, հաջողություն չի ունեցել: Շաբաթաթերթը 9 ամիս հրատարակվելուց հետո դադարել է¹:

Հաջորդ տարին՝ 1885 թվականին, դարձյալ Վառնայում լույս է տեսնում «Իրավունք» շաբաթաթերթը և շարունակվում մինչև 1900 թվականը: Թերթը հայերեն է եղել, սակայն տպագրվել են հողվածներ նաև հայատառ թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով:

1897—1898 թվականներին Վառնայում լույս է տեսել վեց անուն հայկական շաբաթաթերթ՝ «Խուզակ» (կիսամյա հանդես 1897—1898), «Կատակ» (շաբաթաթերթ, 1897), «Հայելի» (շաբաթաթերթ, 1897—1903), «Շարժում» (շաբաթական երկու անգամ, 1898—1907), «Աշխարհ» (շաբաթաթերթ, 1898) և «Տավրոս» (շաբաթաթերթ, 1898):

1891 թվականին Ռուսչուկում, Մ. Թյունյունձիեֆի խմբագրությամբ, նրա սեփական տպարանում լույս է տեսնում «Դանուբ» երկշաբաթաթերթը, որը, հաջողություն չգտնելով, փակվում է:

Նորագույն շրջանում Բուլղարիայում հրատարակվել է շուրջ 80 անուն թերթ և ամսագիր:

1920 թվականին հուլիսի 15-ից Պլովդիվ քաղաքում սկսել է լույս տեսնել «Կարմիր լուրեր» ամսաթերթը, որը հայերեն լեզվով առաջին կոմունիստական պարբերականն է սփյուռքահայ իրականության մեջ և բացառիկ խոշոր դեր է կատարել սփյուռքահայ աշխատավորությանը Սովետական Հայաստանի շուրջը համախրմբելու և արտասահմանի հետադիմական ուժերի դեմ գաղափարական պայքար կազմակերպելու գործում: Ամսաթերթը խմբագրել է Բուլղարիայի հեղափոխական շարժման ականավոր գործիչ Ստեփանոս Շահբազյանը, որը մի շարք հեղափոխական բուլղարացիների հետ գազանաբար սպանվեց 1923 թվականին ֆաշիստների կողմից²:

1922 թվականի մարտի 15-ից ամսաթերթը վեր է ածվել երկ-

¹ Ն. Գասպարյան, Հայ լրագրության ծագումը Պուլկարիո մեջ (տե՛ս «Պուլկարահայ տարեգիրք», 1935, էջ 277):
² Ռ. Լ. Խաչատրյան, Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Երևան, 1960, էջ 73—121:

շաբաթաթերթի և հրատարակվել «Նոր աշխարհ» անունով: Այս արդեն սփյուռքում հրատարակված երկրորդ հայկական կոմունիստական պարբերականն է հանդիսացել, որը սակայն երկար կյանք չունեցավ՝ Բուլղարիայում հետադիմական շրջանների ուժեղացման հետևանքով և փակվեց 1923 թվականին:

Կոմունիստական այս երկու հայկական պարբերականների նշանակությունը չի սահմանափակվում միայն բուլղարահայ գաղթավայրի շրջանակներում: Այն տարածվել և խոշոր դեր է կատարել Բալկանյան բոլոր երկրների հայկական գաղթավայրերում, իսկ 1920—1921 թվականներին՝ նաև Պոլսում:

Այս երկու պարբերականներից բացի, 1919 թվականին խմորատիպ լույս է տեսել նաև «Նոր հոսանք» անունով կոմունիստական թերթ:

1944 թվականի դեկտեմբերի մեկից «Հայրենիքի ճակատ» հայկական կոմիտեն սկսում է հրատարակել «Երևան» առաջադիմական թերթը՝ շաբաթական երկու անգամ, որն արտակարգ խոշոր գործունեություն է ունեցել գաղթավայրի հայ բնակչությանը կազմակերպելու, գաղափարապես զինելու, Սովետական Հայաստանի մասին ճշմարտացի տեղեկություններ հաղորդելու, հայբուլղարական ժողովուրդների հարաբերությունները սերտացնելու գործում և այլն:

XIX դարի 80-ական թվականների հետ է կապված նաև բուլղարահայ թատրոնի կազմակերպումը: Ըստ տեղեկությունների, բուլղարահայ առաջին ներկայացումը կազմակերպվել է 1891—1892 թվականներին Ռուսչուկ քաղաքում Հայոց թաղի մի տան պարտեզի մեջ: Խաղացվել է Պետրոս Գուրյանի «Աև հող»-ը և այլ պիեսներ: 1897 թվականին Ռուսչուկում Մ. Մինասյանը և Ֆ. Ոսկերչյանը կառուցում են թատրոնի հատուկ շենք, որը հայկական առաջին թատրոնը կարելի է համարել բուլղարական հողի վրա¹:

¹ Վ. Շանիբյան, Պուլխուսահայ թատրոնը («Աստի» տարեգիրք, 1935, էջ 207—211):

IX. ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ¹

Ռումինահայ գաղթավայրը XVIII դարում գտնվել է ծանր վիճակում: Պատճառը՝ Թուրքիայի վարած վայրագ քաղաքակառույցությունն է հանդիսացել, որը վոյեվոդոսթյան իրավունքը, սկսած 1711 թվականից, աճուրդով հանձնել է Պոլսի Ցանար կոչվող թաղամասի հույն վաճառականներին: Վերջիններս ստանձնելով այդ պաշտոնը, հարստանալու տենչով տարված, կեղեքել են ուումին ժողովրդին, այդ թվում նաև ուումինահայերին՝ իրենց տված կապալի կրկնակին, եռակին շորթելով հարկատուներից²:

Կապալառու վոյեվոդոսթյան առանձնապես թշնամաբար էին տրամադրված ուումինահայերի նկատմամբ, նպատակ ունենալով իրավազրկելու և տնտեսապես քայքայելու ճանապարհով ասպարեզից դուրս վտարել մրցակից հայ վաճառականներին: Նրանք ուումինահայերին զրկել են քաղաքացիական իրավունքից, դասել են օտարների շարքը և արգելել հող գնել:

Ռումինահայերի այս ծանր վիճակը հանգամանորեն պատկերված է Բըյրկլյան գերդաստանին նվիրված հատորի առաջաբանում, որը հրատարակել է Ռումինիայի գիտությունների ակադեմիան 1914 թվականին. «Մոլդավիո հայոց վիճակը մինչև XIX դարի բառասնական թվականները, — կարդում ենք այնտեղ, — շատ տխուր էր: Թեպետ իշխանապետությանց մեջ հաստատված դարերի

¹ Միացյալ Ռումինիայի պետական կազմավորումը, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել նոր ժամանակներում: Տվյալ դեպքում «Ռումինիա» ասելով, մենք նկատի ենք ունեցել Վալախիան, Մոլդավիան և Բուկովինիան միասին վերցրած: ² В. Н. Виноградов и другие, История Руминии нового и новейшего времени, Москва, 1934, էջ 9:

ի վեր, առանց մտածելու իրենց երկիրը դառնալ, հայերն իրենց որդեգրած հայրենիքին մեջ հավիտենական նկատված էին օտարական: Ժողովուրդը, հույն կրոնական մոլորութեան ազդեցութեան տակ, զանոնք կնախատեր ու կանարդեր առանց որևէ պատճառի: Երկրին մետրիպոլիտը կարգելեր հավատացյալներուն սեղան նրստել հայերուն հետ և բնակիլ միեկնույն հարկի տակ: Վեհապետներն անոնց կղանային ամեն քաղաքացիական իրավունքն զորու եղող օրենքու հիման վրա, որոնք ժառանգած էին հույն ժազումով իշխաններեն»¹:

Ռումինահայությունը, որ վաղուց ի վեր ճաշակել էր և այժմ ճաշակում էր թուրքական դաժան հարստահարությունը, հասկանալի է, որ չէր կարող հաստատակամ չկանգնել ումինացի ժողովրդի կողքին՝ նրա ազգային անկախության համար մղած ազատագրական պայքարում, և գործուն աշակցություն ցույց չտալ Բալկաններն արշավող ուսական բանակին՝ 1806—1812 և 1828—1829 թվականների ուս-թուրքական պատերազմների ժամանակ:

1809—1811 թվականներին ուսական հրամանատարությանն օգնող ումինահայ շրջաններում առանձնապես աչքի ընկնող ծառայություն է մատուցել Ռուսչուկի հայ համայնքի ղեկավար Մանուկ բեյը: Գեներալ Բագրատիոնը, 1810 թվականի մարտի 12-ին Մանուկ բեյին տված իր վկայականում հետևյալն է նշել. «Մանուկ բեյն առանձնահատուկ և արդյունավոր ջանադրությամբ, կարևոր և օգտակար գործունեություն ցուցադրեց և շնորհակալ ծառայություն մատուցեց մեր օգոստոսափառ կայսրին: Նա միշտ կարևոր խորհուրդներ էր տալիս Դանուբից այն կողմը գտնվող քաղաքների մասին... Բայց անկախ այդ հատուկ ծառայությունից, նա ամենակարևոր և վստահավոր պահին մեծապես նպաստեց մեզ Վալաքիայում՝ հոգալով կայսեր զորքերի կարիքները»²:

Մանուկ բեյը մեծ աշակցություն է ցույց տվել նաև գեներալ Ն. Մ. Կամենսկուն՝ Ռուսչուկ քաղաքի գրավման ժամանակ: Իր ծառայությունների համար Մանուկ բեյը, գեներալ Կամենսկու միջնորդությամբ, պարգևատրվել է Վլադիմիրի երրորդ աստիճանի շքանշանով³:

1 «Արազ» տարեգիրք, 1934 թ.:

2 Ս. Աղամյան, Վալերագիր ուս-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (տե՛ս «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1954, № 9, էջ 96):

3 Ղ. Վ. Հովնանյան, Միրզայան Մանուկ պեյին վարուց պատմությունը, Վիեննա, 1852, էջ 74:

Ռուսչուկի համար մղված կռիվներում մասնակցել է նաև Գրիգոր արքեպ. Զաքարյանը՝ 150 հոգուց բաղկացած մի զորամասով և վիրավորվել: Զաքարյանը և տեղացի մի քանի հայեր, Ռուսչուկը վերցնելուց հետո ուսական կառավարության կողմից պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով¹:

Ռումինահայերը թուրքերի դեմ կովոդ ուսական բանակին գործուն աշակցություն են ցույց տվել նաև 1828—1829 թվականների ճակատամարտերում: Ռուսական բանակի հրամանատարությունը, նկատի ունենալով այդ, իր 1828 թվականի սեպտեմբերի 5-ի գրությամբ հանձնարարել է բալկանյան բանակի իր զորահրամանատարներից մեկին՝ Խաչիկ Հովակիմյանին, միջնորդելու տեղական իշխանությունների առջև, որ ումինահայերի դրությունը բարելավվի²:

Ռումինիայի հայ գաղթավայրի վիճակը հիմնովին փոխվել է 1829 թվականի սեպտեմբերի 14-ին՝ Ադրիանապոլսում կնքված ուս-թուրքական դաշնագրից հետո, երբ Մուրադիան և Վալախիան դուրս եկան թուրքական գերիշխանությունից և ներքին անկախություն ձեռք բերեցին:

Ռումինահայերը զարթոնքի նոր շրջան են ապրում XVIII դարի քառասնական թվականներին: Այս շրջանում ումինահայության շարժման կենտրոն է դառնում Յաշ քաղաքը, ուր բավական թվով հայ բնակչություն է կենտրոնացված եղել: Շարժման ղեկավարներից է հանդիսացել Ռումինիայի պետական և հասարակական լայն շրջաններում մեծ հեղինակություն վայելող, ումինահայ աչքի ընկնող իրավաբան Հակոբ Բըլըկլյանը:

1840 թվականի մարտի 3-ին, Հակոբ Բըլըկլյանի նախաձեռնությամբ, Յաշում հրավիրվում է տեղի հայ բնակչության ընդհանուր ժողով, ուր ընտրում են գաղթօջախը ղեկավարող վարչություն: Ժողովը հանձնարարում է նորընտիր վարչությանը՝ հայկական դպրոցներ բաց անել, հոգ տանել նրանց նյութական ապահովությանը, խնամել հայ որբերին և այրիներին, վերջ տալ հայ համայնքի ներսում առաջացած վեճերին և այլն: Վարչությունը մշակում է գաղթօջախի համար ներքին կանոնադրություն³:

1 Ս. Աղամյան, Վալերագիր ուս-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (տե՛ս «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1954, № 9, էջ 97):

2 Ս. Քոլանջյան, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան (տե՛ս «Էջմիածին», 1951, I—III, էջ 50):

3 «Արազ» տարեգիրք, 1934, էջ 50—70:

Ռուսինահայ գաղթավայրի համար, սակայն, էական նշանակություն ունեցող հարցը, այդ քաղաքական իրավունքը վերականգնելու հարցն էր, որից նրանք զրկվել էին հույն վոյեվոդների շրջանում: Այս գործի նախաձեռնությունը դարձյալ իր վրա է վերցնում Հակոբ Բըրլիլյանը: 1857 թվականի ապրիլի 25-ին Յաշում գումարվում է Ռուսինահայ համագումար, որին մասնակցում են գաղթօջախների բոլոր ներկայացուցիչները: Համագումարը որոշում է դիմել Ռուսինական կառավարությանը և եվրոպական պետությունների հանձնաժողովին՝ Ռուսինահայության քաղաքական իրավունքները վերականգնելու համար: Ռուսինահայ ներկայացուցիչները մի շարք դիմումներ են ուղարկում տեղական իշխանություններին և Փարիզում 1858 թվականի օգոստոսի 7—19-ին գումարված եվրոպական յոթ երկրների կոնֆերանսին: Վերջապես նրանց հաջողվում է ստանալ կոնֆերանսի հետևյալ որոշումը. «Քրիստոնյա դավանանք ունեցող բոլոր մոլդավացիները և վալաքացիները պիտի վայելեն լիիրավ քաղաքացիական իրավունքներ»¹: Այս որոշումը, առաջին հերթին, վերաբերում էր Ռուսինահայերին:

Այժմ արդեն Ռուսինահայերի առջև լայնորեն բացվում են քաղաքական, հասարակական և մշակութային բոլոր ասպարեղները:

1848 թվականի Ցրանսիական հեղափոխությունը, ինչպես հայտնի է, ցնցեց եվրոպական բոլոր ժողովուրդներին, այդ թվում՝ Ռուսինացիներին: Ցրանսիական հեղափոխության անմիջական ազդեցության տակ, Բուխարեստում կազմակերպվում է գաղտնի մի խմբակ, որը հեղափոխական լայն աշխատանք է ծավալում երկրում: Ռուսինացի ականավոր պատմաբան պրոֆ. Յորգան բազմաթիվ փաստերով ցույց է տվել, որ Ռուսինական ժողովրդի հեղափոխական շարժումներին գործուն մասնակցություն են ցույց տվել նաև բազմաթիվ Ռուսինահայեր: Պարզվում է, որ Բուխարեստի հեղափոխական կազմակերպության աչքի ընկնող դեմքերից է եղել Ռուսինահայ նշանավոր ճարտարապետ Հակոբ Մելիքը: Նա 1848 թվականին իր բնակարանի ձեռնահարկում թաքցրել է Վալախիայի հեղափոխական կազմակերպությունների ղեկավարներ Հելիադե Ռեզուլեսկուին, Կ. Ա. Ռոսետին և այլ հեղափոխական գործիչներին: Ռուսինիայի հեղափոխական կազմակերպությունների ջախջախումից հետո Հակոբ Մելիքը փախել է Պոլիս, իսկ այնտեղից՝ Փարիզ: Հեղափոխական շարժումներին մասնակցելու մեղադրանք

1 «Արազ» տարեգիրք, 1934, էջ 66:

քով ձերբակալվել և պատժի են ենթարկվել մի շարք Ռուսինահայեր¹:

Հակոբ Մելիքը, ինչպես երևում է, սերտորեն կապված է եղել տեղի հայ համայնքի հետ և երազել հայ ժողովրդի ազատագրությունը թուրք հարստահարիչներից: 1856 թվականին Փարիզում, որպես քաղաքական փախստական ապաստանած ժամանակ, ֆրանսերեն լեզվով հրատարակել է ուշագրավ մի աշխատություն՝ «Արեվելքն Արևմուտքի առջև» խորագրով: Նա իր աշխատության մեջ արժեքավոր նյութեր է զետեղել 1848 թվականի հեղափոխական շարժումների վերաբերյալ:

Ռուսինահայ գաղթավայրը, ինչպես ասացինք, Ռուսինիային տվել է մի շարք աչքի ընկնող քաղաքական, հասարակական և գիտական գործիչներ, որոնք հանդիսանալով տվյալ գաղթավայրի գործուն ներկայացուցիչները, իրենց գործունեությամբ, իրենց մատուցած վաստակներով Ռուսինահայության երախտագիտության տուրքն են հատուցել իրենց երկրորդ հայրենիքին՝ Ռուսինիային և նշանակալից դեր խաղացել հայ-Ռուսինական հարաբերությունների սերտացման գործում: Մենք նկատի ունենք Սիպրու Հարեթին, Վասիլի Քոնթային, Կարապետ Իբրըլիանուին, Գրիգոր Բըրլիլյանին և ուրիշներին:

Որքա՞ն հայ բնակչություն է եղել Ռուսինիայում XIX դարում: Վիճագրության բացակայության պատճառով դժվար է ճիշտ պատասխանել այս հարցին: Սակայն որոշ պատկերացում տալու նըպատակով, անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել երկու տեղեկություն, որոնցից մեկը վերաբերում է դարի սկզբներին, մյուսը՝ վերջերին:

Առաջին տեղեկության հեղինակն է Մինաս Բժշկյանցը, որը 1808 թվականին շրջագայել է Վալախիայում և Մոլդավիայում և այստեղ ապրող հայ բնակչության մասին տեղեկություններ հավաքել ու հրատարակել: Դժբախտաբար նրա տեղեկությունների մի մասը ընդհանուր բնույթ ունեն, իսկ մյուսը՝ տնահաշվով են: Բերում ենք Բժշկյանցի տեղեկությունները:

Բուխարեստ—«Յառաջագոյն,— գրում է նա,— բազում էին աստ հայք», իսկ այժմ՝ «տունք հայոց են 120»:

Յոկշան:—«Հայք յառաջագոյն բազում էին անդ», իսկ այժմ միայն 60 տուն:

1 Ս. Քոլանջյան, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան (տե՛ս «Էջմիածին», 1951, I—III, էջ 51—52):

Յաշ:—Անցյալում հայերը շատ են եղել, մի քանի եկեղեցի են ունեցել, իսկ այժմ՝ «Հազիւ գտանին աստ 150 տունք հայոց»:

Տեկուշ:—«Յառաջագույն հայք բազում էին աստ», այժմ հազիւ գտանին 200 անձինք»:

Ռուման:—Անցյալում տեղի 1500 տուն բնակչության կեսը հայեր են եղել, իսկ այժմ մնացել է միայն 110 տուն:

Պոտոշան:—Գտնվում է 400 տուն:

Օկնա:—Գտնվում է 60 տուն:

Գալաց:—Գտնվում է 30 տուն¹:

Ռումինիայի հայ բնակչությունը XIX դարի կեսերից սկսած աճում է Բուլղարիայից և Քուրդիայի տարբեր մասերից եկած գաղթականությամբ: Պրոֆ. Սիրունու հաշվումներով, դարի կեսերին ողջ Ռումինիայում եղել է 21 000 հայ բնակչություն, որից 5000՝ Մուրադիայում, 8000՝ Տրանսիլվանիայում, 3000՝ Բուկովինայում, 2000՝ Բեսարաբիայում, 1500՝ Մունթենիայում, 1500՝ Դոբրուջայում:

Ռումինիայի հայ բնակչության վիճակագրությունը 1894 թվականին կազմել է Պ. Ք. Մամիկոնյանը: Նրա տվյալներով հայ բնակչություն է ապրել հետևյալ վայրերում.

Բուխարեստ — 180—200 տուն,

Յաշ — 70 տուն, 315 հոգի՝ շրջակա գյուղերում,

Բդոշան — 150 տուն, շրջակայքում՝ 100 տուն,

Ռուման — 70 տուն,

Բակրու — 40 տուն, շրջակայքում ևս 40 տուն,

Տրոգու-Օկնա — 600 տուն (300 հոգի),

Տոկշան — 100 տուն, շրջակայքում ևս՝ 100 տուն,

Գալաց — 50 տուն (200 հոգի),

Բրայիլա — 40 տուն, նավահանգստում՝ 400—500 հայ բանվոր,

Քուլչա — 80 տուն,

Բաբադաղ — 44 տուն,

Սուլինա — 20 տուն,

Կոստանցա — 70—75 տուն,

Պիթշետ — 20 տուն²:

Ռումինիայի հայ գաղթավայրի բնակչությունը զգալի շափով ավելացավ 1895—1896 թվականներին՝ համիդյան շարժերի, 1909 թվականին՝ Ազանայի կոտորածների, 1916—1918 թվականներին՝

¹ Մ. Քոչկյան, Ճանապարհորդություն ի Լեհաստան, էջ 206—209.

² Պ. Մամիկոնյան, Ռումինահայ ներկան և ապագայն, Գալաց, 1895, էջ 117—174.

մեծ եղեռնի ու 1921—1922 թվականներին՝ Կիլիկիան և Զմյուռնիան դատարկվելուց հետո՝ Ռումինիա եկած զանգվածային խոշոր գաղթականության հետևանքով:

Ռումինահայ բնակչության հիմնական մասը հանդիսացել են արհեստավորները և առևտրականները, որոնք համախմբված են եղել «բրիսլա»-ների (միությունների) մեջ: Մուրադիայում և Վալախիայում արհեստավորներին և առևտրականներին պարտադրել են միությունների մեջ մտնել և հավաքական ձևով վճարել սահմանված տուրքերը, ինչպես և պատասխանատու լինել իշխանությունների առջև:

Բուխարեստում հայ «բրիսլայի» մասին տեղեկություն ունենք 1739 թվականից: Հիշվում է Շիրին անունով մեկը, որպես դերձակների «բրիսլայի» պետ՝ «ստարոստե»: Հայկական «բրիսլաներ», անշուշտ, եղել են դրանից առաջ ևս: Հետագա շրջանում հիշվում են զանազան մասնագիտություններ ունեցող այլ «բրիսլաներ»: 1775 թվականին, երբ Ալեքսանդրու իշխանը հանդիսավոր մուտք է գործել Բուխարեստ, տեղեկություն կա, որ նրան դիմավորողների մեջ եղել են հայկական մի քանի «բրիսլաներ»: 1714 թվականին Բուխարեստ քաղաքի կարիքների համար առևտրական «բրիսլաներից» վերցրած տուրքերի ցանկից երևում է, որ ուսմինացիները վճարել են 574 տալեր դրամ, հրեաները՝ 150 տալեր, իսկ հայերը՝ 200 տալեր:

Հայկական «բրիսլաները», ինչպես երևում է, սկզբում ունեցել են միանձնյա ղեկավարություն, ընտրել են միայն «ստարոստին», բայց հետագայում ղեկավարությունը դարձել է կոլեգալ: Մեզ է հասել 1820 թվականի սեպտեմբերի 22-ին Շուցու իշխանի կողմից հայ ներկարարների «բրիսլայի» հաստատած կանոնադրությունը, ուր նախատեսված են հետևյալ հինգ կարևոր պայմանները.

1. Հայկական «բրիսլայի» բոլոր անդամները հավաքվում են ժողովի և ընտրում մեծ վստահություն ունեցող չորս խնամակալների (թաղականների), իսկ սրանք ընտրում են ստարոստին,

2. Այս չորս խնամակալները և ստարոստը պատասխանատու են իշխանական զանձարանի առջև և պարտավոր են հավաքել և վճարել պահանջվող հարկը,

3. Այս չորս խնամակալները, ստարոստի հետ միասին, վրձ-

¹ Մ. Քոչկյան, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան (տե՛ս «Էջմիածին», VII—VIII, 1950, էջ 62—63):

ուում են «բրիւլայի» ներսում առաջացած բոլոր վեճերն ըստ հայկական ավանդական սովորության,

4. Ստարոստն իրավասու չէ որևէ հարց լուծել ինքնուրույն, առանց խնամակալների գիտության և մասնակցության,

5. Եթե որևէ մեկը դժգոհ է ստարոստի և խնամակալների որոշումներից, կարող է դիմել իշխանական գիվանատանը¹:

Սոցիալական ի՞նչ խավերի պատկանող և ի՞նչ մասնագիտություն ունեցող մարդկանցից էին կազմված հայկական «բրիւլաները»: Այս հարցի պատասխանը մասամբ մենք գտնում ենք Բուխարեստի 1832 թվականի առևտրական մատյանում գրանցված ցանկում: Այնտեղ նշված են այն մարդկանց անունները, որոնց արտոնագիր է տրվել առևտուր անելու և կամ արհեստագործությամբ զբաղվելու: Այդ ցանկում մենք հանդիպում ենք 111 հայ ազգանունների, որոնցից 26-ը առևտրականներ են, 6-ը սեղանավորներ (սարաֆներ), 7-ը՝ թուֆյունչի, 17-ը՝ սրճագործ, 10-ը՝ դերձակ և այլն:

Այս տվյալները, անշուշտ, հեռու են Բուխարեստի կամ ընդհանրապես ուումինահայերի ճիշտ պատկերը տալուց, որովհետև տնայնագործ բազմաթիվ արհեստավորներ, ֆիզիկական ծանր աշխատք կատարող շատ հայեր պատենտի կարիք չեն ունեցել և հասկանալի պատճառով չեն գրանցվել իշխանությունների մոտ, իսկ վերջինների թիվը, կասկած լինել չի կարող, ավելի մեծ է եղել, բան արտոնագիր ունեցողներին: Պետք է նկատի ունենալ, որ քաղաքամերձ գյուղերում ևս ապրել են հայ գյուղացիներ, որոնք երբեք հաշվառման մեջ չեն մտել ոչ այստեղ և ոչ էլ մյուս գաղթավայրերում:

Ռումինիայի հայ գաղթավայրի բնակչության վիճակագրությունը հանգամանորեն ներկայացված է Գ. Վ. Գալեմբերյանի 1913 թվականի փետրվարի 15-ին կազմած տեղեկագրության մեջ: Նա տվել է հետևյալ վիճակագրությունը.

Բուխարեստ—950

Կոստանցա—377 (500 պանդուխտ)

Ֆոքշան—126

Տրբիուլ-Օկնա—55

Բակեու (Պագով)—60 (10 պանդուխտ)

Ռոման—60 (5 պանդուխտ)

Յաշ—100 (20 պանդուխտ)

1 Ս. Քոլանջյան, նշված աշխատությունը, էջ 63—64:

Բոտոշան—108 (15 պանդուխտ)

Գալաց—50 (200 պանդուխտ)

Բրայիլա—66 (200 պանդուխտ)

Թուլչա—50

Սուլինա—25 (250 պանդուխտ)

Բաբադադ—53

Փիտեշտ—12¹:

Նշված 14 գաղթօջախներից դպրոցներ են ունեցել միայն 3-ը, Բուխարեստը («Մեսրոպյան» վարժարան), Կոստանցան («Հայկազյան» վարժարան) և Ֆոքշանը («Ղևոնդյանց» վարժարան): Չեռնարկվել է մանկապարտեզներ բաց անել Գալացում, Բոտոշանում, Թուլչալում և Բրայիլայում:

Գալամբերյանը նշում է, որ գաղթավայրի բնակչության կազմում մեծ թիվ են կազմել ընչազուրկ պանդուխտները: Նա գրում է. «Հայաստանցի պանդուխտ ազգայինք, որոնք բավականի մեծ թիվ կկազմեն, ընդհանրապես կբնակին Գանուբյան քաղաքներում՝ Սուլինայի, Կալացի, Պրայլի մեջ և մեծագույն մասի զբաղումն է բեռնակրություն և զանազան գործատներու մեջ բանվորություն, իսկ ցամաքային քաղաքներու մեջ անոնցմեն գտնվողներն են հացագործ, նպարավաճառ, թրբական սուրճ խարկող և վաճառող»²:

Գալեմբերյանը իր տեղեկագրում գովեստով է խոսում հայ ընտանիքների անաղարտության, նրանց բարոյական բարձր վիճակի մասին. «Սրտի անհուն գոհունակությամբ և ոչ նվազ պարծանքով արժան կդատեմ հիշատակել թե Ռումինիո պես շատ ազատ երկրի մը մեջ հայ ընտանեկան հարկերը՝ իրենց անվթար պահած են մաքուր բարոյականով ու հայկական պարկեշտությամբ հիացում առթած են ամեն ազգերու»³:

Գալեմբերյանի տեղեկություններից երևում է, որ ուումինահայերը գտնված են եղել ձուլման վտանգի առջև և քչերն են, որ գիտցել են մայրենի լեզուն: «Արդարև,— գրում է նա,— դժբախտություն մ'է, որ հայ շքնաղ լեզուն Ռումինիո մեջ և ոչ մեկ ասպարեզի համար կարևորություն չունենալիս զատ, նույնիսկ հայ ընտանեկան հարկերու տակ դադրած է խոսվելիս. ոչ ոք զայն չի հասկընար ի բացառյալ ծերունիներե»⁴:

1 ՀՊՊԱ, ֆ. 57, № 278, էջ 22ա:

2 Նույն տեղը, էջ 20բ:

3 Նույն տեղը, էջ 20բ:

4 Նույն տեղը, ք. 21ա:

Գալեմքերյանն իր տեղեկագրության մեջ հանդիմանական խոսքեր է գրել հայ հոգևորականության հասցեին, որոնք Ռումինիա են գալիս պաշտոնավարելու գլխավորապես Պոլսից. «Որևէ շինիչ դեր չեն կրցած կատարել» և ավելի շատ հետաքրքրվում են անձնական շահով:

Ռումինահայ աշխատավորությունը սերտորեն կապված է եղել հայրենի երկրի հետ, աշխուժորեն հետաքրքրվել այնտեղ տեղի ունեցող իրադարձություններով և աշխատել օգտակար լինել իրենց հայրենակիցներին՝ վերահաս ծանր օրերին:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ արևմտահայությունը կանգնած էր ծանր փորձության առջև, Ռումինիայի հայկական գրեթե բոլոր գաղթօջախներում տեղի են ունեցել մասսայական ժողովներ, ընդունվել են բանաձևեր՝ հայկական հարցի արդարացի լուծման համար¹:

Ռումինահայերն արտակարգ կարեկից վերաբերմունք են ցուցաբերել թուրքական կոտորածներից ազատված և իրենց մոտ ապաստանած գաղթականության նկատմամբ: Նրանք ապաստան են տվել, օգնել են նյութապես, գործ են հայթհայթել աշխատողների համար, որբերին և այրիներին հավաքել են և խնամել: Տեղացի ուումին ժողովուրդը ևս բարյացակամ վերաբերմունք է ունեցել դեպի հայ գաղթականությունը: Այս ամենից հետո պատահական չէ, որ շատ ժամանակ շանցած, ուումինահայ գաղթավայրը նորագույն շրջանում դառնում է հայկական կազմակերպված և բարեկեցիկ վիճակ ունեցող գաղթավայրերից մեկը:

Ռումինահայ գաղթավայրի կապը հայրենի երկրի՝ Սովետական Հայաստանի հետ, վերակառուցման տարիներին շատ թույլ է եղել: Հայրենի երկրի մասին շփոթ տեղեկություններ են հասել գաղթավայրի հայ բնակչությանը:

Առաջին հասարակական միջոցառումը, որ ձեռնարկվել է գաղթավայրում և անմիջապես կապված է եղել Սովետական Հայաստանի հետ, Հայաստանի օգնության կոմիտեի կազմակերպումն է եղել, որն իր առջև խնդիր է դրել հանգանակություն կազմակերպել և օգնել Հայաստանի վերականգնման աշխատանքներին: Հետագա տարիներին, սակայն, երկրում ստեղծված անբարենպաստ քաղաքական պայմանների հետևանքով, այդ կազմակերպությունն ի վիճակի չի գտնվել շարունակելու աշխատանքները և լուծարքի ենթարկվել:

¹ ՀՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. № 677, էջ 22—23:

Ընդհատված կապը հայրենի երկրի հետ վերականգնելու նոր փորձ է տարվել 1931 թվականին: Տեղական կառավարության թույլտվությամբ մի խումբ հայրենասեր երիտասարդներ եռանդուն գործունեություն են ծավալել Հայաստանի օգնության կոմիտեի աշխատանքը վերակազմելու և կապը հայրենի երկրի հետ վերականգնելու ուղղությամբ: 1931 թվականի հուլիսի 21-ին Բուխարեստի հայ գաղթավայրից հայտնվել է 204-ի կենտրոնական վարչությունը, որ վերակազմվել է Հայաստանի օգնության մարմինը և նրան անդամակցում են 230 հոգի: Ըստ որում, գրության մեջ նշվում է, որ այդ մարմինը կազմված է «Հայաստանի հարազատ և բարեկամ տարրեր, որ միայն կհրճվին ու կհպարտանան Հայաստանի աշխատավորներու ձեռք բերած հաջողություններով»¹:

Այդ նույն տարում, երբ ուումինահայ գաղթավայրում հայտնի են դառնում Զանգեզուրի երկրաշարժի հետևանքով տեղի ունեցած ավերածությունները, Հայաստանի օգնության կոմիտեն անմիջապես ձեռնարկում է հանգանակություն և գոյացած գումարը՝ 30 000 բուլղարական լևա, ուղարկում է Հայաստան՝ օգնելու աղետյալներին²:

1945 թվականին Ռումինիայի Հայաստանյան ճակատի վարչության՝ Հայաստանի հետ կուլտուրական կապի միությունը հասցեագրված պաշտոնական մի գրության մեջ խոսվում է 1931 թվականի Ռումինիայի 204-ի գործունեության մասին, նշվում է, որ նա խոշոր դործ է կատարել ուումինահայ աշխատավորությանը ծանոթացնելու այն «հսկայական վերաշինության ու կուլտուրական նվաճումների հետ, որոնք տեղի կունենային Սովետական Հայաստանի մեջ: 204-երու միջոցով հաջողեցավ մասսաները մոտեցնել և սերտորեն կապել մեր սիրելի հայրենիքին այնպիսի անբակտելի կապերով, որ ստեղծված քաղաքական դեպքերի բերումով իր գործունեության մոտավորապես եոթը տարի մը մեջ, օգոստոսի 23-ին ձեռք վերցրին Սովետական Հայաստանի բարեկամ տարրերը»³:

Ռումինահայ
մշակույթը:

Նոր ժամանակներում ուումինահայ մշակույթի ամենից ակնառու երևույթը աշխարհիկ բնույթի դպրոցների հանդես գալն է գաղթավայրերում: Ռումինահայ գաղթօջախներում եկեղեցիներին

¹ ՀՊՊԱ, ֆ. 178, գ. № 501, էջ 6:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, ֆ. 709, գ. № 31, էջ 4:

կից կրոնական բնույթի փոքրիկ դպրոցներ եղել են շատ վաղուց, կարելի է ասել՝ գաղթօջախների հիմնադրման օրից, սակայն աշխարհիկ շեշտով հայկական նոր դպրոցներ ստեղծվում են միայն XIX դարում:

Առաջին գաղթօջախը, ուր դպրոցի հարմարավետ շենք է կառուցվել, հանդիսացել է Սուշավան: Դիմիդրիոս Դանը, խոսելով հայկական այս դպրոցի կառուցման մասին, բերում է նրա կառուցման արձանագրությունը, որի մեջ ասված է. «Այս դպրոցն հանդերձ ամենայն կազմածովք շինուեցաւ... յօգուտ հայ մանկըտուոյ քաղաքին Սուշավա»¹: Դպրոցը կառուցվել է 1824 թվականին:

Ռումինահայ շրջանում դպրոցների բացման և հայ մանուկների հայեցի դաստիարակության վրա հատուկ ուշադրություն է դարձվում XIX դարի 40—50-ական թվականներին: Այս տարիները, ինչպես իրավացի նկատել է Վ. Վ. Պայճյանը, Ռումինիայի հայ գաղթավայրի համար «Տեսակ մը վերածննդի շրջան եղած են մշակութային և ազգային իմաստով»²:

Ռումինիայի լավագույն հայկական դպրոցներից մեկը գտնվել է Յաշում: Դպրոցի ծրագիրը կազմել է Հակոբ Բըշըկլյանը 1841 թվականին և հաստատել տվել կառավարությանը: Հայկական դպրոցում, ժամանակակից հանրագիտական առարկաներից և ումինական լեզվից բացի, դասացանկում լայն տեղ է տրված եղեջ հայոց լեզվին և հայ ժողովրդի պատմությանը:

Ըստ տեղեկությունների, XIX դարի երկրորդ կիսում հայկական դպրոցներ են եղել նաև Պոթոշանում, Ռոմանում, Ֆոկչանում, Տրևո-Օկնայում և Բակլուում:

Հայկական առաջին տպարանը ումինական հողի վրա հիմնվել է 1847 թվականին Յաշ քաղաքում: Այնուհետև հայկական տպարաններ են ստեղծվել Գալաց և Տուլչա քաղաքներում:

Հրատարակչական արդյունավոր գործունեություն է ծավալել Գալացի հայկական հրատարակչությունը, որ կազմակերպել է Ղ. ք. Փափազյանը: Այս տպարանը կոչվել է «Անի»: Փափազյանն է փաստորեն առաջին անձնավորությունը, որ հիմք է դրել հայ պարբերականի հրատարակչությանը Ռումինիայի գաղթավայրում: Նա Գալայում 1895—1899 թվականներին հրատարակել է երկու

լեզվով՝ հայերեն և ումիներեն, «Հայկական տարեցույց», որը բավականին հարուստ բովանդակություն է ունեցել¹:

1906 թվականին Բուխարեստում ումիներեն լեզվով հրատարակվել է սկսել «Aurore» (Արշալույս) պարբերականը, որը հայագիտական բովանդակություն է ունեցել: Այդ պարբերականը խմբագրել է ումինահայ նշանավոր հրապարակախոս, մի շարք աշխատությունների հեղինակ Վ. Մեշտուճյանը²:

XIX դարում Ռումինիայի հայ գաղթավայրում գործել են մի շարք հասարակական կազմակերպություններ: Բուխարեստում կազմակերպված միություններից կարելի է հիշել «Արարատյան ընկերություն»-ը՝ 1838 թ., «Արարատ» ուսումնասիրաց ընկերությունը՝ 1843 թ., «Հայրենասիրաց» ընկերությունը՝ 1887 թ., Սուշավայում՝ «Անի» ընկերությունը, Կոստանցայում «Արաքս» գրադարանային ընկերությունը և այլն³:

1 Ս. Քոլաբջյան, Ռումինահայ առաջին պարբերականի հրատարակման հարցի շուրջը (տե՛ս ՆՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 8, էջ 52—58):

2 Նույն տեղը:

3 Ս. Քոլաբջյան, Ռումինահայ մտքի գանձարան «Հայ մշակույթի տունը» (տե՛ս «Էջմիածին», 1948, X—XI, էջ 62—70):

1 Դեմետրիոս Տան, Արևելյան հայքի Պուրովինիա, էջ 61:

2 Վ. Մ. Վ. Պայճյան, Ռումինահայ թեմը երեկ և այսօր (տե՛ս «Էջմիածին», 1948, № 11—12, էջ 67):

Մ. ՊՈՏՏՈՐՅԱՆԻ ԶՆՆՈՒՄ

Հունգարիայի հայկական գաղթավայրի մասին մասամբ խոսք եղել է Տրանսիլվանիայի կապակցությամբ: Այնտեղ ասվել է, թե երբ և ինչ պարագաններում են հայերը գաղթել ու հաստատվել Հունգարիայում: Այժմ մենք ցանկանում ենք կանգ առնել հունգարահայ գաղթավայրի նոր շրջանի պատմության վրա:

Թյուրիմացություններ շատեղծելու համար պետք է ասենք, որ հունգարահայ գաղթօջախների մեծ մասը գտնվել են Տրանսիլվանիայում, որը որոշ ժամանակ գտնվել է Հունգարիայի կազմում, հետո անցել է Ավստրիային, իսկ 1921 թվականին Քրիանոնի դաշնագրով միացվել է Ռումինիային:

Հունգար ժողովուրդը հանդիսացել է եվրոպական այն ժողովուրդներից մեկը, որի հյուրասեր հարկի տակ հաճախ է ապաստանել տարագիր հայությունը՝ առանց ակնառու խորթություն և հալածանք տեսնելու:

Հունգարահայ գաղթավայրի ամենից ծաղկուն շրջանը, ինչպես ասվել է, եղել է XVIII դարը: Հայ գաղթականությունն այդ ժամանակ կենտրոնացված է եղել հիմնականում շորս գաղթօջախներում՝ Գերլայում, որը կոչվել է Հայթաղաբ (գերմաներեն՝ Armesstadt), Նդիսաբեթուպոլսում (նախկին Քաշբալով, ներկայիս՝ Դումբրովեն), Ջուրջովում և Սերվիզում: Ըստ Մ. Բժշկյանի տեղեկության, 1808 թվականին միայն Գերլայում ապրելիս է եղել շուրջ 6000 շունչ հայ բնակչություն: Նշված քաղաքներից բացի, Բժշկյանը հայ բնակչություն է հիշում Մաշարստանի (Հունգարիայի) հետևյալ վայրերում՝ Դեայում, Այնուտում, Աբրուտում, Գեզտի վաշերհելում, Մորուշ վաշերհելում, Նայսոցում Օրդայում, Դեմ-

նայում, Սիբիում, Սաս Սեբեշում և Բրաշովում¹: Ըստ նրա հաշվումների, ողջ Հունգարիայում XIX դարի սկզբներում եղել է 15 000 հայ բնակչություն: Բացահայտ թյուրիմացության արդյունք է, իհարկե, Մ. Պոտտոյանի 200 000 թիվը¹:

Հունգարիա եկող հայ գաղթականության առջև մեծ դժվարություններ են կանգնած եղել: Հայ բնակչությունը իր արտակարգ աշխատասիրության, իր ցուցաբերած նախաձեռնության շնորհիվ է, որ կարողացել է տուն-տեղ ստեղծել: Հ. Գ. Գոլրիկյանը, որ երկար տարիներ ուսումնասիրել է Հունգարիայի հայ գաղթականության պատմությունը, խոսելով Հունգարիայում հայ գաղթականությանը բաժին ընկած դժվարությունների մասին, հետևյալն է գրել. «Հունգարիո հարավային մասը, որ ճախճախուտ էր և անբնակելի, Կերլայեն Նդիսաբեթուպոլսեն, Ճուրճովեն հայ ընտանիքներ գաղթեցին և գնեցին մեծ հողեր, շորացուցին, թումբեր կանգնեցին, առվակներ բացին և այսօր այդ մահաբույր և ամայի տարածությունը Հունգարիայի ամենապարարտ հողն է, որ մեղր և կաթ կձորե»²:

Հունգարահայերը, ինչպես ասվել է, ունեցել են իրենց ինքնավարությունները շորս քաղաքներում՝ Գերլայում, Նդիսաբեթուպոլսում, Ջուրջովում և Սերվիզում: Բժշկյանը յուրատեսակ հպարտությամբ է նշում, թե հունգարահայերը «կայսերական հրովարտակօք ունին ոչ միայն զմասնաւոր ատեանս և ատենակալս, այլև զաւառական ժողովս և ատենաս. զի զամենայն վէճս ազգին և քաղաքաց իւրեանց ինքեանք վճռեն»³:

Հունգարիայի հայ բնակչությունն ինչպես մյուս գաղթավայրերում, այնպես և այստեղ, միատարր չի եղել. մենք հայ կալվածատիրոջ և վաճառականի կողքին տեսնում ենք նաև աշխատավոր խավերի ներկայացուցիչներին՝ հայ արհեստավորությանը և գյուղացիներին:

Հունգարահայ ունևոր տարրը բաղկացած է եղել երկու խավից՝ կալվածատերերից և առևտրականներից:

Հունգարահայ կալվածատերերը XVIII դարում հողային մեծ տարածություններ են ունեցել հատկապես Տարոնոտալ (Բանատ) կոչվող շրջանում: Հայ կալվածատերերի այս կալվածներում աշխատել և շահագործման են ենթարկվել ոչ միայն տեղացի հուն-

1 Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 193—209:

2 Տե՛ս Պոտտոյանի հոդվածը «Նոր կյանք» թերթում, 1958, հունիսի 20:

3 Մ. Բժշկեան, նշված աշխատությունը, էջ 193:

գար և ումինացի գյուղացիները, այլև ընչազուրկ հայ աշխատավորությունը:

Հունգարահայ համայնքներում մեծահարուստ մյուս խավը հայ վաճառականներն են, ունեցել են իրենց միությունները և ղեկավար ավագները: Ապաֆի կառավարությունը հայ առևտրականներին տվել էր ազատ առևտրի իրավունք, որոնք և գործում էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: Ըստ տեղեկությունների, հայ վաճառականների կողմից Իտալիա և Գերմանիա արտահանված խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը հասել է հարյուր հազարի: Նրանք նավեր կառուցելու համար սոսու փայտ էին հասցնում մինչև Անզլիա, Ֆրանսիա և Թուրքիա: Առևտրական խոշոր կենտրոն է դարձել մանավանդ Գերլան: Ֆրանսիացի հայտնի հայագետ Ֆր. Մակլերը գրում է. «Գերլան գարձել էր առևտրի և արդյունաբերության ամենախոշոր կենտրոններից մեկը Հունգարիայում»¹:

Հունգարահայ բնակչության սոցիալական կազմում զգալի թիվ են կազմել հայ արհեստավորները: Սկզբնաղբյուրներում հիշվում են դերձակներ, կոշկակարներ, հյուսներ, որմնադիրներ, ատաղձագործներ, երկաթագործներ և այլ մասնագիտության տեր մարդիկ: Հայ արհեստավորության մեջ լավ կազմակերպված են եղել խաղախորդները՝ կաշեգործները, որոնք ունեցել են իրենց համբարական կազմակերպությունները: Նրանց ներքին կանոնադրությունը հաստատել է Վլորյանը 1700 թվականին: Հայ կաշեգործ արհեստավորների արտադրանքի մասին պատկերացում կազմելու համար բավական է ասել, որ միայն Գերլայում նրանց ձեռքով պատրաստվել ու վաճառքի է հանվել տարեկան մոտ 30 000 կաշի: Հայ արհեստավորությունը մեծ հաջողություն է ունեցել նաև մոմագործության բնագավառում:

Հունգարահայ բնակչության մեջ եղել են փոքրաթիվ գյուղացիներ, որոնք բնակություն են հաստատել մեծ մասամբ հայ կալվածատերերի հողերում և աշխատել կալվածատիրոջ համար:

Քաղաքների հայ շքավորությունը ապրել է առանձին թաղամասերում և մեծ մասամբ հյուղակիներում: Հայ բնակչության այդ խավը հնարավորություն չի ունեցել քարաշեն տներ կառուցելու: Հայտնի է, օրինակ, որ Նդիսաբեթուպոլսում քաղաքային վարչությունը հրդեհից խուսափելու համար որոշում է կայացրել և պարտադրել տեղում ապրող շքավոր հայ բնակչությանը փոխել եգիպտա-

ցորենի ցողուններից պատրաստած տանիքը, սակայն շքավորությունը ի վիճակի չի եղել կատարելու քաղաքային վարչության որոշումը:

Հունգարահայ բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ մեզ որոշ պատկերացում է տալիս Բիստրիցայից Գերլա գաղթող հայ ընտանիքների զբաղմունքների մասին պահված արժեքավոր մի տեղեկություն: Բիստրիցայից եկած այդ գաղթականությունը, ըստ տեղեկությունների, բաղկացած է եղել 73 ընտանիքից և բաժանվել է վեց խմբի: Առաջին խմբի մեջ մտել են 10 ընտանիք՝ դատավորի և մյուս ղեկավար մարդկանց ընտանիքները, երկրորդում—յոթ ընտանիք՝ առևտրականների և կապալառուների, երրորդում—5 ընտանիք՝ աղքատ կապալառուների, չորրորդում—16 ընտանիք՝ ֆիզիկական ծանր աշխատանքով զբաղվողների, հինգերորդում—32 ընտանիք՝ արհեստավորների, վեցերորդում՝ որբեր և այրիներ¹:

Հայտնի է, որ մեծահարուստ հայկական շրջանները սերտորեն կապված էին տեղի ունեւոր խավերի հետ, ինչպես և հայ շքավորությունը՝ տեղի վալախ և հունգար աշխատավորության հետ: Պատմական գիտությունների թեկնածու Ս. Քոլանջյանը հրատարակել է ուշագրավ մի փաստ, որը ցուցանչական է հայ և վալախ աշխատավորության միջև գոյություն ունեցող զաղափարական միասնության տեսակետից: Կլուծում ներկայումս գտնվող հայկական մի ձեռագրում ընդօրինակված է հայկական տառերով ումիններեն մի բանաստեղծություն՝ «Նոռվարարների պարը» վերնագրով, որը պարունակում է հարստահարվող գյուղացիության երազանքը՝ ազատագրվելու ճորտական կախվածությունից²: Նման բանաստեղծության առկայությունը հայկական ձեռագրում ապացուցում է, որ այդ բանաստեղծությունը սիրված է եղել նաև հայ աշխատավորության շրջանում:

Հայերը դարեր շարունակ ապրելով Հունգարիայում, այդ երկիրը համարել են իրենց երկրորդ հայրենիքը, և գործուն մասնակցություն ցուցաբերել հունգար ժողովրդի ազատագրական հերոսական պայքարին՝ ընդդեմ թուրք հարստահարիչների:

Հունգար պատմաբան էդմոնդ Շյուցի վերջերս հրատարակած մի ուսումնասիրությունից պարզվում է, որ 1686 թվականին թուրքական լծից Հունգարիայի հնագույն քաղաքի՝ Բուդայի, ազա-

¹ Տե՛ս «Բանքեր մատենադարանի», VI, էջ 504:

¹ С. Э. Коланджян, Армяне в Трансилвании, էջ 19—20:

² Նույն տեղը, էջ 19:

տագրման գործում իր համեստ մասնակցությունն է ունեցել Բուդապեշտում ապրող մի հայ դերձակ, որը ռազմական նշանակություն ունեցող կարևոր տեղեկություններ է հաղորդել թուրքական զորքերի դեմ կովոզ դաշնակիցների զորքերին և մարտի վճռական պահին պայթեցրել Բուդապեշտում գտնվող թուրքական վառոդի պահեստը: Այդ անձնավորությունը հանդիսացել է Գաբրիել Թոխաթեցին: «Գաբրիել Թոխաթեցին,— գրում է էդմոնդ Շյուպը,— այդ հասարակ հայ մարդը, քիչ գործ չի կատարել այդ քաղաքի (այսինքն՝ Բուդապեշտում) ազատագրության գործում»¹:

Թուրքերի դեմ մղած կռիվների ժամանակ, երբ դատարկված է եղել պետական գանձարանը, հայ համայնքը արքունիքին տվել է 100 000 ֆլորին: Կռիվներից հետո նրանք անձնական նախաձեռնությամբ 15 000 ֆլորին են ծախսել Գերլայի ամրոցը վերականգնելու համար: Հայերն օգնել են կառավարությանը Շլիզիական և Յոթնամյա պատերազմներում՝ մատակարարելով բանակին ձի, զենք, հանդերձանք, պարենամթերք և կովոզ զինվորներ: Տնտեսական տագնապի ժամանակ Տրանսիլվանիայի հայ բնակչությունը արքունիքին փոխարինաբար տվել է 112 000 ֆլորին և հետագայում հրաժարվել այդ գումարը ետ ստանալուց՝ համարելով այն հունգարահայության քաղաքացիական պարտքը իրենց երկրորդ հայրենիքի հանդեպ:

Հունգարահայերն առանձնապես ակնառու գործունեություն են ունեցել 1848—1849 թվականներին՝ Հունգարիայում ծավալված հեղափոխական պայքարի փոթորկոտ օրերին: Հայ աշխատավորությունը հեղափոխությունը սկսելու առաջին իսկ օրից հարել է հեղափոխական ուժերին և կովել նրա հաղթանակի համար: «Բովանդակ հայությունը,— գրում է Արամ Վտարանդին,— առանց սակարկելու, անցած է հունգար հեղափոխության կողմը և դարձած է անոր աջ բազուկը, զոհելով իր ամբողջական առանձնաշնորհումները և բարեկեցիկ վիճակը»²:

1848—1849 թվականների Հունգարիայի հեղափոխական պայքարի ընթացքում տեղի հայերը տվել են հազարավոր մարտիկներ, որոնք զենքը ձեռքներին կռվեցին հեղափոխության համար: Նրանք տվել են նաև երեք ակնանավոր զենքերակներ՝ էրնեստ Քիշը (Պլզտիկ-

յան), Կյուլէլմոս Լազարը (Ղազարյան) և Հովհաննես Յեցը (Յեցյան): Առաջին երկուսը հեղափոխության պարտությունից հետո մահվան դատապարտվեցին, իսկ երրորդը՝ Յեցյանը, որը Հունգարիայի հեղափոխական բանակի շտաբի պետն է եղել և հեղափոխության անկույտն ղեկավար Յոսիֆ Քեմի աջ բազուկը, կարողացավ փախչել Արգենտինա ու այնտեղ հիմնեց ռազմական նշանավոր ակադեմիան:

Յեցյանը 1892 թվականի մարտի 5-ին «Armenia» ամսագրի խմբագիր Սոնկոտյանին գրել է. «Մեծագույն բաղձանքս է անգամ մը ևս տեսնել անուշ հայրենիքս և սիրելի ծնողքի զավակներս»¹:

Հեղափոխության պարտությունից հետո հետադիմական ուժերը դաժան վարվեցին հունգարահայերի հետ. հայկական խոշոր գաղթօջախները որպես հեղափոխական կենտրոններ քարուքանդ արվեցին: Հետադիմական ուժերի հրամանատարությունը կարգադրեց իր զորքերին՝ «Կողոպուտի ենթարկել հայերի տներն առանց խտրանքի»: Պատմում են, որ զինվորները մտնելով հայերի տները, իրենց ավարը դնում էին տանտիրոջ մեջքին և տեղափոխում զինվորական բանակատեղին²:

1848—1849 թվականներին Հունգարիայի հեղափոխության պարտությունից հետո հունգարահայ գաղթավայրը ծանր հարված ստացավ. «1848-ի հունգարական հեղափոխությունը,— գրում է Հ. Ս. Ռշտունին,— որի ատեն հայերը դեռ պատկառելի հարստության տեր էին, բայց, բառիս բովանդակ առումով, մուրացկան դարձան, որովհետև այդ երկու հայաշատ քաղաքները եղան ամենից շատ տուժողները»³:

Հունգարահայ գաղթավայրն իրապես խամրեց, սակայն դրա պատճառը, ինչպես կտեսնենք քիչ հետո, միայն հեղափոխության պարտությունը չէր:

Ի դեպ, հունգար ժողովուրդը, երախտագիտորեն գնահատեց հունգարահայերի մասնակցությունը հեղափոխությանը: Հայտնի է, որ հեղափոխության համար մահվան դատապարտված 13 հունգար առաջնորդների հիշատակին Արադ քաղաքում կանգնեցված

1 Эдмонд Шюп, Новые данные о Габриеле Токатеци. (Տե՛ս Հայկ. ՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 1, էջ 106):

2 Արամ Վտարանդի, Տրանսիլվանիայի հայության օտարացման պատճառները (տե՛ս «Ծակատամարտ», 1920, սեպտ. 5):

1 Մ. Պատուրյան, Քրանսիլվանիո հայերուն անցյալեն («Նոր կյանք» 1958, հունիսի 20):

2 Ե. Վտարանդի, Օտարացած բեկորներ (տե՛ս «Ծակատամարտ», 1920 թ., սեպտ. 25):

3 Հ. Ս. Ռշտունի, Հայերը Քրանսիլվանիո մեջ (տե՛ս «Ծակատամարտ», 1920 թ., հուլիսի 23):

հուշարձանի վրա նշվել է նաև հայ գեներալների սխրագործությունները. «Այս երեք հայկազն մեծ անմահները,— գրել է Արամ Վտարանդին,— որոնցմե ընդամենը 13 հոգի ունի Հունգարիան և զօրս դեռ այսօր Արագ քաղաքի հրապարակներեն մեկու վրա ազատության աստվածացումից իր պատվանդանին շուրջը պրոնդե մետալիոններու ձևով կցուցադրե հպարտ սավառնանքով մը՝ հավերժության և գալիք մարդկության սերունդներուն»¹:

Հունգարահայերն անտարբեր, անկարեկից շեն գտնվել նաև իրենց բուն հայրենիքի՝ Հայաստանի նկատմամբ: Նրանց նվիրական երազանքն է եղել ազատագրված տեսնել իրենց հայրենի երկիրը պարսկա-թուրքական տիրապետությունից, որպեսզի հնարավոր լինի իրենց վերադարձը:

Հունգարահայ դիվանագետներից է Ապետիքը (Petrus Bedik-ը), որը մեծ հեղինակություն է ունեցել եվրոպական արքունիքներում, եռանդուն գործունեություն է ծավալել հակաթուրքական կռաւիցիա կազմակերպելու համար, որի խնդիրը պիտի լինէր ոչ միայն ազատագրել Բալկանները թուրքական լծից և ամուր պատվար ստեղծել թուրքական հարձակումների դեմ, այլև հնարավորություն տար ազատագրելու իր թշվառ հայրենիքը՝ Հայաստանը: Ապետիքը դիվանագիտական բանակցություններ վարելու նպատակով եկել է Հայաստան և բանակցություններ վարել Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հետ²:

Հայտնի է նաև, որ հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրին գտնվել է Հունգարիայում, իր ծրագրի հետ ծանոթացրել և նրանց հավանությունն ու աջակցությունը ստացել: Եվ հունգարահայերի մեջ գտնվել են ոչ քիչ թվով հայեր, որոնք ցանկություն են հայտնել գնալ Հայաստան ու մասնակցել ազատագրական պայքարին: Պատահական չէ, որ Իսրայել Օրին 1707 թվականին Պարսկաստան դեսպանության գնացած ժամանակ, իր շքախմբում ունեցել է երկու հունգարացի՝ Սիմեոն Վեսներին և Անդրեյ Խարիտոնովին³:

1 Ա. Վտարանդի, Օտարացած բեկորներ (տե՛ս «Ճակատամարտ», 1920 թ., սեպտ. 25):

2 Հ. Ա. Ֆոլոյան, Ապետիք կոմսի զարմանալի կյանքը (տե՛ս «Բազմավեպ», 1946—1948, 1953—1956 թվականները):

3 Эзов, Сношения Петра Великого с армянским народом, էջ 239:

1848—1849 թվականի հունգարական հեղափոխությունից հետո, երբ երկու հայաքաղաքները տակնուվրա եղան, հայ բնակիչներից շատերը կորցնելով իրենց գույքն ու կարողությունը, հարկադրված եղան նոր աշխատանք փնտրել՝ ցրվելով երկրի զանազան մասերը: Արշակ Աթուռյանը, որ 1876 թվականին շրջել է Հունգարիայում, հայ բնակչություն է հիշում հետևյալ քաղաքներում և ավաններում՝ Բրաշով, Հորթին, Ֆոլվարգ, Ապադա, Ակաստոնվոլո, Ալշորաքոշ, Հոմորտեսբ, Քաձա, Բենե, էրկետթ, Հեյաշվալվա, Շակեշվաո, Դանուշ, Բաշպալով, էձեր, Մեյդաշ, Դիշկաբուշ, Միքսաս, Դևո, Պոլաշֆոլո, Նոտինենգ, Ֆելվից, Մորոշոյիվար, Քոչաոթ, Կիրաշ, Վիրակուշվե, Քոլոշբարա, Օրոյիտո, Սենտ-Միքլոշ, Սիբվիգ, Դեվա, Նասսո, Պրիսոցից, Այնուտ, Աբրուտ, Դուրտա, Ռեկին, Գեդտի-Վաշարհել, Մորուշ-Վաշարհել, Նոքվառոգ, Դեմինա, Սիբին, Դեժ¹:

Առերևույթ կարող է թվալ, թե հունգարահայ գաղթավայրը դարի երկրորդ կիսում ավելի մեծ է եղել, քան դրանից առաջ: Սակայն այդպես չէ. հայ բնակչության մեծ մասը այդ ժամանակ ձուլված է եղել տեղացիների՝ հետ և անուններով է միայն հայ մնացել:

Հայ բնակչության ձուլման խնդրում նողկալի դեր է կատարել կաթոլիկ հայ կղերականությունը, որն ամեն ջանք գործ է դրել հայերին դավանափոխ անելու համար: Հունգարահայ պատմության մեջ հայտնի են երկու հայ կղերականների անուններ՝ Վարդան Հունանյանը և Օգեսնտ Վրզարյանը, որոնք փաստորեն կատարել են այն դերը, ինչ կատարել է վատանուն Նիկոլը՝ Լեհաստանի հայ գաղթավայրում: Պապական ու կայսրության ուժերին հենված, նրանք խոստումների և տեսակ-տեսակ սպառնալիքների ու բռնությունների միջոցով ստիպել են հունգարահայ բնակչությանը կաթոլիկություն ընդունել: Դավանափոխությունը Հունգարիայի հայ բնակչության համար ուներ ճակատագրական նշանակություն. վերացնելով հայ և հունգար ժողովուրդների միջև գոյություն ունեցող դավանական սահմանագիծը, այն հնարավորություն ստեղծեց խառն ամուսնությունների համար: Եվ հետևանքը եղավ այն, որ մի քանի սերունդ հետո, ներկա դարի սկզբներում, երբեմնի 15 000 հունգարահայ գաղթավայրից խլճուկ բեկորներ միայն մնացին:

1 Ա. Մ. Ալբուլյան, Տեղեկագրություն հայոց գաղթականության, որը ի Մոսկովա Վալաբիա, Հունգարիա և ի Լեհաստան, Ֆորշան, 1877, էջ 65—103:

1908 թվականին «Հանդես ամսօրյա»-ում տպագրվել է մի թղթակցություն Հայաքաղաքից, որն ասես դամբանական խոսք է՝ ձուլվող և անհետացող հայ գաղթավայրի հասցեին: Թղթակիցը գրում է. «Հայերեն լեզուն այսօր այս քաղաքի մեջ ալ, մեկդի թողնելով մեկալ քաղաքները, հազվագյուտ բան մըն է: Ծերերը, իրենք իրենց մեջ, երբ որ կուզեն, որ ուրիշները խոսակցություննին չհասկնան, ողորմելի հայերեն լեզու մը կգործածեն»¹:

Թղթակիցն այնուհետև մեկ առ մեկ թվարկում է, թե ինչ վիճակում են գտնվում հայկական դպրոցները և հասարակական կազմակերպությունները: Նա խոսում է բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողների մասին և հայտնում, որ նրանց կեսն էլ հայերեն չգիտե: Հիշում է հայկական որբանոցի աշակերտներին, որոնց հայերեն գիտցածը «Զերոյի է հավասար»: Հիշում է եկեղեցին, ուր թեպետ հայերեն են կարդում, սակայն ոչ կարդացողն է հասկանում և ոչ էլ լսողները: Քաղաքում կա հայ բարերարների կտակներով պահվող հայկական երկու դպրոց, ուր երեխաները հայերեն չեն սովորում...

Հայաքաղաքի բնակչությունը 1904 թվականին կազմակերպել է «Թանգարանային ընկերություն» և հիմնել հայկական թանգարան: Ի՞նչ նպատակ են դրանով նրանք հետապնդել: Այդ հարցի պատասխանը գտնում ենք թանգարանի կանոնադրության մեջ. «Հունգարիայի և Դրանսիլվանիայի ազգային հայ հիշատակներն, — գրել են նրանք, — ինչպես նաև դրսի երկրները բնակող ազգայնոց վերաբերյալ առարկաները, գրավոր հիշատակարանները, հիշատակի արժանի նյութերը ժողովել և ինքնակաց թանգարանի մը մեջ՝ ի հրապարակ դնել, պահպանել և ծանոթացնել: Ասկից զատ հայ ավանդության և հասարակաց զգացումը տարածել: Միով բանիվ՝ հայրենական կրթության զգացմունքը հոս՝ տեղի հայոց մեջ վառ պահել և տարածել»¹:

Իրականում, հունգարահայերի հասարակական այս վերջին ջանքը՝ թանգարանի կառուցումը, անհետացող հայ գաղթավայրի հիշատակը հավերժացնող վերջին կոթողն է հանդիսացել:

Հունգարահայ գաղթավայրը ունեցել է մշակութային հարուստ կյանք: Նա հայկական այն գաղթավայրերից է, ուր դպրոցներում կրոնական առարկաների կողքին լայն տեղ է հատկացված եղել լեզուներին և գիտական դասընթացներին:

Հունգարահայ հնագույն դպրոցը հիմնվել է Եղիսաբեթուպոլսում՝ 1685 թվականին: Քիչ ավելի ուշ՝ 1700 թվականին, հայկական դպրոց է հիմնվել նաև Հայաքաղաքում (Գեուլայում): Հայկական այս դպրոցը եղել է տղաների համար: 1724 թվականին Հայաքաղաքում հիմնվել է նաև հայկական դպրոց աղջիկների համար: Հայկական դպրոցներում դասավանդվել են հայերեն, հունգարերեն և լատիներեն լեզուները, իսկ ուշ ժամանակներում՝ նաև գերմաներեն: Այս դպրոցն են ավարտել Հունգարիայի պետական, գիտական և մշակութային կյանքում աչքի ընկած և խոշոր դեր կատարած մի շարք հայ գործիչներ: Մրագիր է մշակվել, որ Եղիսաբեթուպոլսի հայկական դպրոցը վերածվի հայկական բարձրագույն դպրոցի: Նախատեսվող հայկական բարձրագույն այդ դպրոցի ծրագիրը կազմել է հայ հանրածանոթ պատմաբան Միքայել Չամչյանը, սակայն այն չի իրականացվել:

Հայաքաղաքի նշանավոր մանկավարժներից է Զաքարիա Կապրուշյանը (1794—1870), որը եղել է աչքի ընկնող բանաստեղծ, թատերագիր և նկարիչ: Նույն քաղաքի երկարամյա և մեծ վաստակ ունեցող ուսուցիչներից էր Գրիգոր Ցեցյանը (1822—1889), որը 40 տարի անընդմեջ դասավանդել էր հայկական դպրոցում:

XVIII դարում հայկական դպրոցներ են եղել նաև Զուրջովում և Սեպվիզում:

Հունգարիայի հայկական գաղթօջախներում, ըստ հին ավանդության, գրվել և ընդօրինակվել են ձեռագրեր: 1647 թվականին հայկական ձեռագիր է գրվել Վաշարհեյում: XVII դարում հայկական ձեռագրեր են գրվել Զուրջովայում, XIX դարում՝ Եղիսաբեթուպոլսում, Հայաքաղաքում, Բրաշովում, Սեպվիզում և Կլուժում¹:

Հունգարահայ գիտնականները մեծ աշխատանք են կատարել հայ մշակույթը տեղացիներին ներկայացնելու, ինչպես և լատիներենից ու հունգարերենից հայերեն թարգմանություններ կատարելու գործում: Աչքի ընկնող թարգմանիչներ են եղել Բարսեղ Լասլոֆյանը, Վարդան Ագոնցը և Թեոդորոս Մեդիաշցին: Վերջինս հայերեն է թարգմանել Անտոն Գովտնի փիլիսոփայական նշանավոր աշխատությունը՝ շորս հատորից: Հայ գիտնականներից ոմանք կազմել են նաև բառարաններ, որոնցից առանձնապես բարձր գնա-

1 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1908, էջ 125:

2 Տե՛ս նույն տեղը, 1908, էջ 32:

հատականի է արժանի Չ. Կապրուշյանի կազմած հայերեն-լատիներեն-հունգարերեն բառարանը¹:

Հայ-հունգարական մշակութային հարաբերություններում արտակարգ խոշոր դեր է կատարել հունգարերեն լեզվով Գեոլոյում հրատարակվող «Armenia» ամսագիրը, որը սկսել է լույս տեսնել 1887 թվականին և անընդմեջ շարունակվել 21 տարի՝ մինչև 1907 թվականը: Ամսագիրը խմբագրել է մեծ հայրենասեր իտալիկ Սոնկոտյանը (1843—1907), որը բազմաթիվ հայագիտական մենագրությունների հեղինակ է: Նա գրել է Գեոլոյա քաղաքին նվիրված երեք հատորից բաղկացած մենագրություն, կազմել է Տրանսիլվանիայի գերդաստանների տոհմագրությունը, գրաբարից հունգարերեն է թարգմանել և 1892 թվականին հրատարակել Խորենացու «Հայոց պատմությունը» և այլն: Հունգարահայ կյանքում ամենից խոշոր դերը կատարել է, իհարկե, նրա խմբագրած «Armenia»-ն:

Հունգարահայ աչքի ընկնող հրապարակախոսներից է Անտոն Մոլնարյանը (1847—1902), որը խմբագրել է հունգարերեն մի քանի թերթ և դասախոսել Բուդապեշտի համալսարանում:

Հունգարիայի հայաշատ քաղաքներում XVII—XVIII դարերում կառուցվել են ճարտարապետական մի շարք հուշարձաններ՝ եկեղեցիներ և դպրոցական շենքեր, որոնք կրում են հին հայկական և տեղական ճարտարապետության կնիքը: Գեոլոյի Ս. Նրորոդություն եկեղեցին ժամանակին նվեր է ստացել Ռուբենսի «Խաչելություն» հուշակավոր նկարը², որը գնահատված է եղել մեկ և կես միլիոն ֆրանկ: (Այժմ այդ նկարը տեղափոխված է Կլուժի թանգարանը):

Հունգարահայերն ունեցել են իրենց գաղթավայրի պատմությունն ուսումնասիրող պատմաբաններ: Դրանցից մեկը հանդիսացել է Խաչիկ Լուկաչյանը (1804—1876), որը գրել է Տրանսիլվանիայի հայ գաղթավայրի պատմությունը և պատմագիտական արժեքավոր այլ աշխատություններ: Նա է հիմնել Հայաքաղաքի որբանոցը: Հունգարահայ մյուս պատմաբանը հանդիսացել է Գրիգոր Գովրիկյանը (1841—1931), որը հեղինակ է Տրանսիլվանիայի հայ գաղթավայրին նվիրված տասնյակ գրքերի ու հոդվածների:

Հունգարահայ գաղթավայրը Հունգարիային տվել է մի շարք աչքի ընկնող դեմքեր՝ նախարարներ, բարձրաստիճան գինվորա-

կաններ, գիտնականներ, թատերական գործիչներ, բժիշկներ, փաստաբաններ և այլ բնագավառի աշխատողներ:

Հունգարահայ աչքի ընկնող գիտնականներից է հանդիսացել Հունգարիայի ճարտարապետական ակադեմիայի անդամ Միքայել Մալիյանը (1799—1858), որի անվան հետ են կապված Հունգարիայի մի շարք նշանավոր կառույցները:

Հունգարահայերը տվել են նաև շնորհալի գրողներ, հրապարակախոսներ և արվեստագետներ: Նրանցից կարելի է հիշել Կորոլի Լասլոյին (1780—1839), դոկտ. Բանյա էլմերին (1873—1915), Քեոզորոս Տիվադարին (1854—1895), դոկտոր Գուլյա Լասլոյին (1865—1933): Որպես թատերական քննադատ, մեծ համարում է ունեցել Գրիգոր Չիբիյանը: Հունգարական բեմի աչքի ընկնող երգչուհիներից է հանդիսացել հայազգի Կորնելիա Հոլոշին, որը համարվել է «Մաջար ժողովրդի սոխակը» և այլն:

Հունգարահայ գաղթավայրերի պատմության համառոտ այս ուրվագիծը ցանկանում ենք ավարտել հունգարահայերի մասին հունգար հայտնի պատմաբան Յակոֆ էլեքի հայտնած կարծիքով. «Անտառոտ փոքրիկ հայրենիքիս (Տրանսիլվանիո) պատմությամբ շատ զբաղված եմ,— գրել է նա,— անոր քաղաքներուն և ժողովուրդներուն մասին շատ բան մթերած եմ հիշողությանս և գրութայնս մեջ, բայց անկե ի վեր, որ հայերը մեզի հայրենակից դարձան՝ ներմուծելով վաճառականությունը բոլոր հունգարական քաղաքներուն մեջ և կազմելով մաճառ թագավորության մեկ երկու գորեղ և հնագույն կենտրոններ, անկե ի վեր ավելի գեղեցիկ, ավելի հրահանգիչ և հետաքրքրական բան մը չեմ տեսած, քան մեր հայազգի մաճառ եղբայրներուն անցյալ կյանքը... Իմ ժամանակակիցները և ինձմե հնագույնները տեսան այս ժողովրդին մեզի և մեր հայրենիքի հանդեպ ունեցած անկեղծ, ներթին և ջերմ եղբայրական հարումը դարուն առաջին կիսուն՝ քաղաքական մաքառումներուն ընթացքին...»

Մի՞թե մեր հայ քաղաքացիները չեն, որ այն ծաղկյալ քաղաքներուն բնակչության ողնաշարը կկազմեն: Վիճակագիրն ու ազգային տնտեսագետը շատոնց արդեն իրազեկ եղած են այդ մասին, բայց ժամանակն է, որ պատմագետն ու քաղաքագետն ալ արժանապես գնահատելով, զայն նկատի ունենան:

Նայե շուրջդ, շուկաներու վրա, գնա թատրոնները, ուշի ուշով հետևի ժողովներու, ուշադրությամբ աչքի անցուր բարեգործական ընկերություններու ցուցակները... ամեն տեղ ու ամեն քայլիդ, քո ճշմարիտ ընկերդ, արևելքի հայ եղբայրդ կտեսնես: Սրտի և հո-

1 Ս. Քալանջյան, «Ռումինահայ մտքի գանձարան» (տե՛ս «Էջմիածին», 1848, V—VI, էջ 67):

2 «Ճակատամարտ», 1920 թ., հուլիսի 20:

գիտի ազգակցութիւն պիտի գտնես անոնց ներսը, որոնց հայրենական զգացումները և ձգտումները, այժմյան մաքառումի նպատակը ու ապագայի հույսերը, քո ունեցվածներուդ միկնուլն են...»¹:

«Հայերը,— շարունակում է նա,— հայրենիքին սքանչելի ծառայութիւն մատուցած են մեզի պետական, կառավարչական անհատներ, զորական և զինվոր, կրթյալ և մեր հանրութեան շահերուն ծառայող վաճառականներ տված է: Դեռ այսօր ալ (1888) այդ ցեղին ազնիւ գավակներին մեջ Կոռպյալ Պոկտանը, Պոռպալյան Աստվածատուր մեր ամենահին թատրոնը իր հոգածու ձեռքերուն մեջ կպահէ... Հարգանք այդպիսի հայրենակիցներուն»²:

Թուրքիայում տեղի ունեցող կոտորածներից հետո տարբեր ժամանակներում Հունգարիա են եկել փոքր թվով հայ գաղթականներ՝ տեղավորվելով գլխավորապես Հայաքաղաքում: Նրանք փորձել են նոր շունչ ներարկել խամրող հայ գաղթօջախին. 1927 թվականին հայերեն հրատարակել են «Կեռլայի ձայն» անունով խմորատիպ մի թերթ, հիմնել են «Դանիել Վարուժանի» անվան ընթերցարանը, սակայն այս ամենը շոշափելի արդյունքներ չեն տվել:

Այժմ Հայաքաղաքում մայրենի լեզուն գիտցող սակավաթիվ հայեր են մնացել: Ծերունիները միայն հիշում են հայերեն առանձին բառեր: Երբեմն երգում են հայկական երգեր, առանց նրանց իմաստը հասկանալու:

¹ «Ճակատամարտ», 1920 թ., օգոստոսի 21:

² Նույն տեղը:

XI. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ֆրանսիայի հայկական գաղթավայրը ներկայումս հայկական խոշոր և կազմակերպված գաղթավայրերից մեկն է: Բնակչության թվով նա իր տեղը զիջում է միայն Միացյալ Նահանգների և Սիրիա-Լիբանանի գաղթավայրերին: Սակայն նա անմիջական շարունակությունը չի հանդիսանում մեզ ծանոթ ֆրանսահայ միջնադարյան գաղթավայրի, այլ, հիմնականում, ստեղծվել է համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և նրանից հետո:

Ֆրանսիայի հայկական գաղթօջախները ուշ միջնադարում գաղթականական նոր հոսանքներ չընդունելու հետևանքով խամրել են: Ֆրանսահայ նախկին ստվար ու գործուն գաղթօջախներից XVII դարում իրենց գոյությունը պահպանել են միայն երեքը՝ Փարիզի, Մարսելի և Մոսկոնի գաղթօջախները: Փոքր թվով և անկազմակերպ համայնքներով հայ գաղթականներ են եղել Ֆրանսիայի այլ քաղաքներում ևս: Տեղաբնակ հայերի թիվը, եթե չհաշվենք երթեվել հայ առևտրականներին և ուսանողությանը, XIX դարի սկզբներում հազար հոգուց ավելի չի եղել:

Չնայած իր փոքրությունը, Ֆրանսիայի գաղթավայրը XIX դարի կեսերից սկսած խոշոր դեր է կատարել հայ երիտասարդության ուսուցման և նոր ու առաջադեմ գաղափարների արծարծման խնդրում: Հայ արևմտահայ շրջանում առաջադեմ գաղափարների կրողները ֆրանսիական բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած մարդիկ են եղել:

Ֆրանսահայ գաղթավայրի աշխուժությանը նոր ժամանակներում զգալիորեն նպաստում է հայերի նկատմամբ ֆրանսիական իշխանությունների ցուցաբերած ուշադրությունը: Հայտնի է, որ Նապոլեոն Բոնապարտի անմիջական նախաձեռնությամբ 1810

թվականին Փարիզի Արևելյան լեզուների վարժարանում հիմք է դրվում հայկական լեզվի ամբիոնին: Ամբիոնը ղեկավարելու համար հրավիրվում է Հակոբ Շահան Զրպետյանը, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Շահան-Զրպետ անունով:

Շահան-Զրպետն իր ժամանակի աչքի ընկնող գիտնականներից մեկն է հանդիսացել: Նա, մայրենի լեզվից բացի, կատարելապես տիրապետել է մի շարք լեզուների՝ պարսկերենի, իտալերենի, ֆրանսերենի, հունարենի և այլն¹: Փարիզի Արևելյան լեզուների հայկական լեզվի ամբիոնը նա ղեկավարել է մինչև 1826 թվականը՝ մինչև իր տեղափոխվելը Թբիլիսիում բացված Ներսիսյան դպրոցը: Փարիզում նրա մոտ սովորող մի շարք հայ ուսանողներ աչքի ընկնող քաղաքական և դիվանագիտական գործիչներ են դարձել: Շահան-Զրպետը հանդիսացել է հայագիտության առաջին հիմնադիրներից մեկը Ֆրանսիայում: Նա հրատարակել է 16 անուն աշխատություն՝ մեծ մասամբ ֆրանսերեն՝ ծանոթացնելով եվրոպացիներին հայ ժողովրդի պատմության և մատենագրության հետ: Շահան-Զրպետը, որպես մեծ վաստակ ունեցող արևելագետ, ընտրվել է Ֆրանսիական հնագիտական ընկերության անդամ: Շահան-Զրպետից հետո հայկական լեզվի այդ ամբիոնը ղեկավարել են Լը Վայան դը Տլորիվալը (1828—1862), Էդուարդ Դելյորեն (1862—1881), Ա. Կարիերը (1881—1905), նշանավոր լեզվաբան Ա. Մեյեն (1905—1936) և վերջերս՝ Ֆրիդրիկ Ֆեյդին:

Ֆրանսիական կառավարության ուշադրությունը հայերի նրկատմամբ չի կարելի բացատրել նրանով, որ ֆրանսիական իշխանություններն այդ քաղաքականությամբ ցանկանում էին իբրև թե սիրաշահել հայ վաճառականներին՝ առևտուրը Ֆրանսիայում զարգացնելու համար, ինչպես փորձում են բացատրել պատմաբաններից ոմանք: Իրականում, այդ կապված էր Արևելքում Ֆրանսիայի վարած ընդհանուր քաղաքականության հետ:

Շահան-Զրպետը միակ անձնավորությունը չէր, որ ֆրանսիական իշխանությունների կողմից առաջ էր քաշվել պատասխանատու աշխատանքի. իրեն՝ Նապոլեոնի անձնական շքախմբում և զորաբանակում կային մի շարք բարձրաստիճան հայ ղեկավարականներ²: Այդ ղեկավարականների մի մասը ծառայության մեջ էր ընդունվել Նապոլեոնի եգիպտական արշավանքի ժամանակ:

1 Գ. Ա. Շուսթ. Հայկաբանությունը Եվրոպայում (տե՛ս «Մուրճ» ամսագրի 1881 թվականի համարները):

2 Macler, Fr., La France et l' Arménie, Pa is, 1917, p. 59.

Դրանցից են օրինակ, Ռոստանը (Ռուստամը), Միր Գավիթը, Հովհաննես Մուրադյանը և շատ ուրիշներ:

Մամլուկ Ռուստամը, ի դեպ, Նապոլեոնի պաշտոնանկ լինելուց հետո, փարիզաբնակ հայրենակիցների աջակցությամբ, փախել է Ղարաբաղ՝ իր ծննդավայրը և մասնակցել 1826 թվականին ռուսական բանակի կազմում կովոդ հայ հեծելազորային մի ջոկատ:

XIX դարի քառասնական թվականներից սկսում է հայ երիտասարդների հոսանքը դեպի Ֆրանսիա՝ բարձրագույն կրթություն ստանալու համար: Ֆրանսիա սովորելու է եկել գլխավորապես արևմտահայ երիտասարդությունը, որն ունեցել է որոշ դյուրություն, որովհետև 1830—1840 թվականներին արևմտահայ դրպրոցներում ընդունված է եղել և դասավանդվել է ֆրանսերեն լեզուն:

1830—1839 թվականներին Ֆրանսիա սովորելու գնացող ուսանողների մեջ են եղել Պողոս Շանշյանը, Սերվիլեն (Սերոբե Վիչենյանը), Գասպար Գասպարյանը և ուրիշներ: Արևմտահայ ուսանողության մի մեծ խումբ Ֆրանսիա է եկել սովորելու երկրաչափ Խաչատուր Պարտզպանյանի գլխավորությամբ: Այս խմբի մեջ են գտնվել Նիկողայոս Պալյանը, Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Աղաթոնը, Հակոբ Ամասյանը, Ստեփան Ոսկանը և ուրիշներ: Հայ ուսանողության երկրորդ խոշոր խումբը գնացել է 1848 թվականին, իսկ երրորդը՝ 1856 թվականին¹: Այնուհետև արևմտահայ ուսանողությունը տասնյակներով անընդմեջ շարունակել է գալ Ֆրանսիա: Հայ ուսանողությունը մեծ մասամբ ուսանել է բժշկություն. հաշվված է, որ 1843 թվականից մինչև 1914 թվականը Ֆրանսիայի բժշկական ֆակուլտետներն են ավարտել 122 հայեր²: Արևմտահայ այս ուսանողությունն է, որ ֆրանսիական հեղափոխության ետևն օրերին գտնվելով Ֆրանսիայում, հաղորդակից է եղել նոր առաջադիմական գաղափարներին և նրա արտահայտիչն է հանդիսացել հայ իրականության մեջ:

Հայ ուսանողների այս ներկայացուցիչներն են, որ առաջին անգամ Փարիզում 1849 թվականին՝ ֆրանսիական հեղափոխության հաջորդ տարին, հիմնում են իրենց անդրանիկ կազմակերպությունը «Արարատյան ընկերություն» անունով³: Կազմակերպությունն իր առջև խնդիր է դնում «Սատարել Հայաստանի հառաջա-

1 «Զարթոնք»-ի բացատիրը, 1962, էջ 104:

2 «Ընդարձակ օրացույց» 4. Պոլիս, 1910, էջ 226—236:

3 «Ֆրանսահայ տարեգիրք», 1925, էջ 105—108:

դիմությունը»¹: Ընկերության կազմակերպիչներն են հանդիսացել Հակոբ Կրճիկյանը, Գրիգոր Աղաթոնը, Նահապետ Ռուսինյանը, Նիկողայոս Զորայանը, Նիկողայոս Պալյանը, Շիշմանյանը (Սեբեռենցը), Սեբոբե Վիչենյանը և ուրիշներ: Այս խմբին է միանում նաև Ստեփան Ոսկանը:

1846 թվականին Փարիզում բացվում է Զանիկ Արամյանի տպարանը, որն անխափան գործում է մինչև 1862 թվականը և բազմաթիվ հայկական գրքեր ու մի քանի անուն հայկական պարբերականներ հրատարակում: Այնուհետև Արամյանն իր տպարանը տեղափոխում է Մարսել, իսկ 1864-ին՝ Կ. Պոլիս: Արամյանն իր այդ տպարանում ստեղծում է հայկական տառերի մի տեսակ, որը հայկական տպագրության մեջ հայտնի է «Արամյան» անունով²:

Զանիկ Արամյանի այս տպարանում են տպվել Միքայել Նալբանդյանի երկու աշխատությունը՝ «Երկու տող» նշանավոր պամֆլետը (1861 թ.) և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» (1862 թ.): Ի դեպ, Նալբանդյանը 1859 թվականին, Փարիզում գտնված ժամանակ, այցելել է Արամյանի տպարանը և իր «Հիշատակարանում» գովեստով է խոսում նրա մասին՝ որպես հայկական հարուստ և բազմատեսակ տառեր ունեցող տպարանի: Արամյանը Նալբանդյանին խոստացել է իր տպարանում հրատարակել հեղափոխական բնույթի ամեն տեսակ աշխատություն, բացի ֆրանսիական իշխանությունների դեմ ուղղված գործերից: Այդ նկատի ունենալով է, որ Նալբանդյանը գրել է. «Շնորհակալություն պարոն Արամյանին, և առավել շնորհակալ կլինենք, եթե բոլորովին ազատորեն և անկախաբար լցուցանի իր խոստումը»³:

Երկար տարիներ Փարիզում է գործել «Մուրադյան» կոչվող հայկական դպրոցը: Այդ դպրոցը, ինչպես հայտնի է, հիմնվել է հնդկահայ Սամվել Մուրատի կտակով Իտալիայում 1835 թվականին: Հայկական դպրոցի նկատմամբ իտալական կառավարության գործադրած ճնշումներից հարկադրված, Վենետիկի Մխիթարյանները դպրոցը 1846 թվականին տեղափոխում են Փարիզ՝ Գաբրիել Այվազովսկու տեսչության տակ⁴:

1 «Արշալույս Արարտյան», 1850, հունիսի 23:

2 Հ. Վարժապետյան, Ֆրանսահայ գաղութը (տե՛ս «Ժամանակ», 1960, հունվարի 1):

3 Կոմս Էմանուել, Հիշատակարան (տե՛ս «Հյուսիսափայլ», 1859, էջ 744):

4 Վ. Քոզմովան, Փարիզի Մուրադյան վարժարանը (տե՛ս «Ֆրանսահայ տարեգիրք», 1927, էջ 94—95):

Մուրադյան վարժարանը խոշոր դեր է խաղացել ինչպես ֆրանսահայ երիտասարդության, այնպես և Արևմտյան Հայաստանից, Քուրքիայից ու հայկական մյուս գաղթօջախներից Ֆրանսիա սովորելու եկած հայ ուսանողների դաստիարակության գործում: Այդ դպրոցն են ավարտել իր ժամանակին հայ հասարակական-քաղաքական ասպարեզ մտած բազմաթիվ գործիչներ, որոնցից շատերը տոգորված են եղել հեղափոխական բուրժուական գաղափարախոսությամբ: Նրանցից ոմանք մասնակցել են Ֆրանսիայի 1848 թվականի հեղափոխությանը:

Մուրադյան վարժարանը սակայն աղմկոտ շրջանում է գտնվել 1852—1855 թվականներին: 1852 թվականին Մխիթարյան միաբանության մեջ ծայր է առել կրոնա-գավառաբանական վնասակար մի վեճ, որին տեղիք տվողը հանդիսացել է Լիբանանի հայ կաթոլիկների Հասունյանի խումբը: Վերջինս պահանջում է հայ կաթոլիկներից վերջնականապես հրաժարվել հայկական ծիսական ավանդություններից և միանալ պապական եկեղեցուն: Այդ առաջարկի դեմ է արտահայտվում Մուրադյան վարժարանի տեսուչ Գաբրիել Այվազովսկին՝ հրապարակելով այդ առթիվ հատուկ հայտարարություն: Վեճին միջամտում է Վենետիկի միաբանության աբբահայր Գևորգ Հյուրմուզը, որը Այվազովսկուց պահանջում է ո՛չ միայն ետ վերցնել իր հայտարարությունը, այլև վերանայել վարժարանի ծրագիրը այնպես, որ ուսուցումը տարվի նեղ կաթոլիկ ոգով՝ դպրոցը դարձնելով կաթոլիկ վարդապետություն պրոպագանդող մի հաստատություն¹: Աբբահայր առաջարկությունը դժգոհություն է առաջացնում ինչպես դպրոցի ուսուցչության, այնպես էլ աշակերտության մեջ: Աշակերտներից 20 հոգի, իսկ ուսուցիչներից 2 հոգի և Գաբրիել Այվազովսկին հեռանում են դպրոցից: Այս վեճը, իհարկե, կրոնա-գավառաբանական սխալաստիկ վեճ էր, սակայն նրա հիմքում որոշակի ընկած են եղել հասարակական և քաղաքական շարժառիթներ:

Այվազովսկին և նրա համախոհները 1856 թվականին Փարիզում հիմնում են հայկական մի նոր դպրոց՝ «Հայկազյան վարժարան» անունով²: Այս դպրոցում սովորելու են գալիս Պոլսից և այլ վայրերից 70-ից ավելի երեխաներ: 1857 թվականին Այվա-

1 Ս. Քեզորյան, Պատմություն Մուրադյան և Հայկազյան վարժարանաց. հ. Բ, 2Ա և 1Թ գլուխները:

2 «Ընդարձակ օրացույց», 1901, էջ 44:

զովսկին նշանակվում է նոր նախիջևանի թեմական առաջնորդ և մեկնում իր պաշտոնատեղին: Դպրոցի տեսչությունը մնում է Խորեն Գալֆայանի վրա, որը գրական անունով հայտնի է Խորեն նարբեյ:

Հայկազյան վարժարանը, սակայն, երկար կյանք չի ունենում. կաթոլիկ կղերականությունը, տեղի կաթոլիկ իշխանությունների աջակցությամբ, ամեն տեսակ դժվարություններ է հարուցում: Որոշ բարերարներ դադարում են դպրոցին նյութական աջակցություն ցույց տալ, և դպրոցն ընկնում է ծանր դրության մեջ: Մեծ պարտքի տակ ընկնելով, նա հարկադրված է լինում 1858 թվականին դադարեցնել իր աշխատանքները:

Գարբիել Այվազովսկու խմբագրությամբ 1855 թվականին Փարիզում լույս է տեսել «Մասյաց աղավնի» անունով ամսագիր՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով զուգահեռ: Այս ամսագիրը ունեցել է կղերա-պահպանողական ուղղություն: Այն Փարիզում լույս է տեսել մինչև 1858 թվականը. իսկ երբ Այվազովսկին նոր նախիջևանի առաջնորդ է նշանակվում և տեղափոխվում իր պաշտոնավայրը, նա ամսագրի հրատարակությունը տեղափոխում է Թեոդոսիա և հրատարակում այնտեղ մինչև 1865 թվականը՝ այս անգամ հայերեն և ռուսերեն լեզուներով: Իր հետադիմական ուղղությամբ Այվազովսկու այս ամսագիրը, ինչպես հայտնի է, մեծ անախորժություն է պատճառել Միքայել Նալբանդյանին:

Յրանսահայ գաղթօջախները նոր ժամանակներում հիմնովին փոխել են իրենց բնույթը: Եթե նախկինում գաղթավայրի բնակչության հիմնական մասը կազմում էր վաճառականությունը, ապա նոր ժամանակներում դառնում են ուսման ծարավ երիտասարդությունը և ընչազուրկ բանվորությունը: Եթե նախկինում հայ համայնքները ցրված էին և անկազմակերպ, ապա նոր ժամանակներում սկսում են կազմակերպվել: Եվ վերջապես, եթե անցյալում գաղթօջախներն առանձին ակտիվություն չեն ցուցաբերել հայ հասարակական կյանքում, ապա այժմ նրանք հանդես են գալիս հասարակական եռանդուն գործունեությամբ: Եվ փոքրիկ, առերևույթ աննշան երևացող ֆրանսահայ գաղթավայրը խոշոր դեր է կատարում հայ առաջադեմ մտքի ձևավորման գործում: Յրանսիայի հայ գաղթավայրը փաստորեն դեմոկրատական առաջադեմ գաղափարների ջահակիրն է դառնում հայ հասարակական կյանքում: XIX դարի վաթսուևական թվականներին ֆրանսահայ գաղթօջախներից խոշոր դեր է կատարել մանավանդ Փարիզը:

Փարիզի հայ բնակչությունը, գրում է Նալբանդյանը՝ 1859 թ.

այնտեղ այցելելուց հետո, շատ փոքր է, բայց այս փոքրի մեջ ավելի շատ հայրենասիրություն է նկատվում, «բան թե բազմահայ քաղաքներում, ուր շատ անգամ ձգել է մեզ բախտը»¹:

Յրանսահայ մշակույթի, ինչպես և հայ պարբերական մամուլի պատմության հետ կապված ամենից նշանակալից երևույթը՝ Փարիզում Ստեփան Ոսկանի խմբագրությամբ լույս տեսած «Արևելք» (1855—1856) և «Արևմուտք» (1859—1865) կիսամյա հանդեսներն են: Այս հանդեսները, փաստորեն, Արևմտյան Եվրոպայում լույս տեսած առաջին հայ առաջադիմական պարբերականներն են, որոնց մեջ անողոք քննադատության են ենթարկվում հայ կղերա-պահպանողական ուղղության ներկայացուցիչները, բացահայտվում են նրանց հիմնական սխալները և պրոպագանդվում հայ առաջադեմ բուրժուա-դեմոկրատական գաղափարասուսությունը:

Յրանսահայ այս գործիչը հետաքրքիր և ուսանելի կենսագրություն ունի, ուստի անհրաժեշտ ենք համարում փոքր-ինչ խոսել ինչպես նրա անձնավորության, այնպես և որդեգրած ուղղության մասին:

Ստեփան Ոսկանը ծնվել է Ջմյունիա քաղաքում 1825 թվականին: Նախնական կրթությունը ստացել է տեղի «Մեսրոպյան» վարժարանում, իսկ բարձրագույնը՝ Փարիզի Սորբոնի համալսարանում՝ հետևելով պատմա-փիլիսոփայական ճյուղին: Նա լսել է ժամանակի խոշոր գիտնականներ Միշեի, էդգար Կինեի, Ժյուլ Սիմեոնի դասախոսությունները: 1848 թվականի ֆրանսիական հեղափոխության անմիջական ազդեցության տակ կազմավորվել են նրա հասարակական և քաղաքական հայացքները:

Ստեփան Ոսկանը անձամբ գործուն մասնակցություն է ունեցել 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանը. նա զենքը ձեռքին կռվել է հեղափոխականների շարքում և առաջիններից մեկը մտել Քյուլլրի պալատը: Տարիներ հետո, վերհիշելով հեղափոխությանը ունեցած մասնակցության մասին, նա հետևյալն է գրել. «Փետրվարյան ազատության առաջին որոտումը մեր վրային արեւելյան գերության մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ակամա ասպարեզի մեջ նետեց: Այո՛, Լուի Ֆրիլպի դեմ ապստամբներուն հետ էինք, այո՛, ըրինք ազատության համար, ինչ որ ամեն մար-

¹ Կոստ Էմանուել, Հիշատակարան (տե՛ս «Հյուսիսփայլ», 1859, էջ 745):

դու պարտքն է ընել, և զեն ի ձեռին Թյուլլրի պալատը մտնելու պատիվն ունեցանք»¹։

Ստեփան Ոսկանը մասնակցել է 1849 թվականին հեղափոխական բանվորության և ուսանողության հունիսյան ցույցերին, որի համար բանտարկվել է և 6—7 ամիս նստել բանտ։ Տեղեկություններ կան այն մասին, որ բանվորության և ուսանողության հեղափոխական այդ ելույթի ժամանակ Ստեփան Ոսկանը դրոշակակիր է եղել։

1852 թ. Ստեփան Ոսկանը, որպես քաղաքական անբարեհույս անձնավորություն, քստրվել է Ֆրանսիայից։

Միքայել Նալբանդյանը, Փարիզում գտնված ժամանակ, հանդիպել է Ստեփան Ոսկանին և իր «Հիշատակարան»-ի մեջ հետևյալն է գրում. «Փարիզում է գտնվում քանքարավոր պ. Ստեփան Ոսկան ուսումնական ազգայինը, որ քանի մը ամիս սորանից առաջ հրատարակելով «Արևելք» անուն օրագիր (խափանված է մի հայ ճիզվիթի դարանագործությանը, ամոթ և խայտառակություն այդ սեահոգի անպիտանին) այժմ հրատարակում է «Արևմուտք» անունով կիսամսագիր»²։

Ինչպիսի՞ խնդիրներ է արծարծել Ստեփան Ոսկանը իր հանդեսում։

Ամենից առաջ, նա հայ այն հրապարակախոսներից մեկն է, որն առանց վարանելու բաց է արել հայ հասարակության արատները և համարձակ քննադատության ենթարկել դրանք։ Իր «Ազգային պակասություն» խորագրով հոդվածում նա գրել է. «Վերջ մը, թե բարոյական և թե նյութական, պետք է հայտնվի, որ բուժ գտնե։ Մեզի համար ազգասեր է այն մարդը, որ պակասություն մը կհայտնե, կնկարագրե և դարման կփնտրե, և շազգասեր է այն, որ ջանք կընե ամեն բան ծածկելու... Հայրենասիրության թյուր ըմբռնումն է՝ իր ազգը միշտ գովել, համենայնի արդարացնել և հին նախապաշարումով օտարը թշնամի սեպել»³։

Ստեփան Ոսկանը անողոք քննադատության է ենթարկել հայ աշխատավորությանը շահագործող ազգայիններին, որոնց նա որակել է «ներքին թշնամիներ»։ «Մեր ազգին արտաքին թշնամիները,—գրել է նա,— բազմաթիվ և ահարկու են արդարև, այլ ներքին թշնամիներն ավելի վնաս կու տան և մեր էությանըն ուղղակի

1 «Արևմուտք», 1859, № 1, էջ 59

2 Կոմս Էմանուել, Հիշատակարան (տե՛ս «Հյուսիսափայլ», 1859, էջ 745)։

3 «Արևմուտք», 1859 թ., № 3։

կսպառնան հիմա, և եթե դարման չի տարվի, հայ անունը լիաջինջ պիտի բառնան երկրի երեսե»¹։

Նա կոչ է արել հայ աշխատավորությանը՝ սթափվելու և իր ձեռքը վերցնելու իր ճակատագիրը. «Ժամանակը եկավ,— գրել է նա,— որ հայ ռամիկն ալ զգա, որ իր ռամկությունովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովուրդներե վար շմնար թե ազգային և թե օտարազգի բռնավորներու դեմ զինելու ատեն»²։

Ոսկանը առաջ է քաշել իր ժամանակի համար առաջադիմական մի շարք այլ խնդիրներ և՛ եկեղեցին պետությունից անջատելու, լուսավորությունը Հայաստանում տարածելու, հայկական լեզվից խճողված բառերը դուրս հանելու, գրաբարից վերջնականապես ազատվելու, թուրք բռնակալության դեմ պայքարելու և այլ խնդիրներ։

Իր ժամանակի առաջադեմ մտավորականները բարձր են գնահատել Ոսկանի որդեգրած գաղափարական ուղղությունը։ Միքայել Նալբանդյանը, օրինակ, նրան անվանել է «Ազատախոս հեղինակ», «Մեծ հայ», «Քանքարավոր ուսումնական»։ Միանգամայն հակառակն են վարվել պահպանողական հետադիմական տարրերը։ Նրանք ամեն կերպ աշխատել են զրպարտել Ոսկանին, ամեն տեսակ հերյուրանքներ են տարածել նրա հասցեին, մատնել են ֆրանսիական կառավարությանը և փակել տվել նրա թերթերը։ Պոլսի պահպանողականներից մեկը ցինիկորեն պահանջել է՝ «Այրել, մրկել, փոշի դարձնել նրա (այսինքն՝ Ստեփան Ոսկանի—Ա. Ա.) դժոխային, անիծյալ թերթը»։

Ոսկանի խմբագրած «Արևելք» և «Արևմուտք» պարբերականները խոշոր ազդեցություն են գործել արևմտահայ հասարակական մտքի զարգացման վրա։ Նրանք առաջին ազատամիտ պարբերականներն են հանդիսացել արևմտահայ իրականության մեջ և առաջադիմական դեր են կատարել լուսավորության պրոպագանդան բնագավառում։

«Արևելք» և «Արևմուտք» թերթերից բացի, Ստեփան Ոսկանը խմբագրել է նաև ֆրանսերեն լեզվով «L'Italie» 1861 և «La Reforme» անուններով թերթեր ու աշխատակցել «La Nationale» անունով բուրժուական օպոզիցիոն թերթին։

1860—1863 թվականներին Փարիզում հրատարակվել է «Փարիզ» անունով հայկական մի շաբաթաթերթ։ Թերթի խմբագիրն է

1 «Արևմուտք», 1859, № 1։

2 Նույնը, 1859, № 7։

հանդիսացել Աբրահամ Մուրադյանը, որը մինչ այդ նիկողեմիայում հրատարակել է «Հայրենասեր» փոքրիկ լրագիրը: Հետագայում «Փարիզ»-ի հրատարակությունից հետո նա տեղափոխվել է Եգիպտոս և այնտեղ հրատարակել «Արմավենի» պարբերականը: Մուրադյանի «Փարիզ» շաբաթաթերթը ունեցել է բուրժուա-դեմոկրատական ուղղություն: Նրա հովանավորողներից մեկն է հանդիսացել հայագետ Վիկտոր Լանգլուան: Շաբաթաթերթը հրատարակվել է Ջանիկ Արամյանի տպարանում: Շաբաթաթերթում ընդարձակ տեղեկություններ են զետեղվել ինչպես քաղաքական իրադարձությունների, այնպես և վաճառականության վերաբերյալ:

XIX դարի 50—60-ական թվականներին ֆրանսահայ գաղթավայրը այնքան է մեծանում, որ փարիզահայերը հիմնում են «Ս. էջմիածին» անունով մի մատուռ: Փարիզի հայ բնակչության հոգևոր հովիվն է նշանակվում Կարապետ վարդապետ Շահնազարյանը¹:

Կարապետ վարդապետ Շահնազարյանը աչքի ընկնող բանասեր է հանդիսացել: Նա խոշոր գործ է կատարել ինչպես հայ մատենագրությունը եվրոպական գիտությունը ներկայացնելու, այնպես և հայ բանասիրության մեջ ուշագրավ ուսումնասիրություններ կատարելու ուղղությամբ: Շահնազարյանը Փարիզում գտնված տարիներին հրատարակել է մի քանի հայ պատմիչների աշխատություններ: Նա հայկական բնագրերին կցել է բազմաթիվ ծանոթագրություններ, որոնք գիտական մեծ արժեք են ներկայացնում:

Շահնազարյանը մեծ հեղինակություն է վայելել ֆրանսիացի արևելագետների շրջանում և ընտրվել է Փարիզի արևելյան գիտական ընկերության անդամ²: Շահնազարյանն իր հրատարակատեսակական աշխատություններով դրական կարծիք է ստեղծել իր շուրջը իբրև ազատամիտ հոգևորականի և դարձել լիբերալ հովիտով տարված հայ մտավորականների գաղափարախոսը: Մանչեստրի որոշ հայեր նյութապես աջակցել են նրա գրական և հրատարակատեսակական ձեռնարկումներին:

XIX դարի վերջին քառորդում հայ բնակչության թիվը մասամբ ավելանում է նաև Մարսել նավահանգստային քաղաքում: 1877 թվականին Մարսելում մշտական բնակություն հաստատած հայերի թիվը, 1882 թվականի համեմատությամբ, ավելանում է

1 Կ. Փետրյան, «Ամենու տարեգիրքը», 1959, էջ 268:

2 Ս. Գուլամիրյան, Կարապետ Վ. Շահնազարյանը, Քիֆլիս, 1889:

քառապատիկ¹: Մարսելի հայ բնակչության թիվը մեծանում է հետագա տարիներին ևս:

Ի տարբերություն Փարիզի հայ գաղթօջախի, որի բնակչության մեծամասնությունը կազմել է արևմտահայ ուսանողությունը, Մարսելում բնակություն են հաստատել գլխավորապես բրդի, շերամի և գանգրաթավի (դՖտիկի) վաճառքով զբաղվող արևելահայերը:

Մարսելը շուտով դառնում է հայ մշակույթի և հայ բուրժուական գաղափարախոսության ձևավորման կարևոր կենտրոնավայրերից մեկը: 1885 թվականի օգոստոսի 20-ից սկսած այստեղ սկսել է լույս տեսնել «Արմենիա» անունով փոքրածավալ մի թերթ՝ շաբաթական երկու անգամ: Խմբագիրն է հանդիսացել հայտնի մանկավարժ Մկրտիչ Փորթուզալյանը: Այս շաբաթաթերթը բավական երկար կյանք է ունեցել: Փորթուզալյանի մահից հետո ևս (1923 թ.) այն շարունակել են լույս ընծայել նրա ընկերները և համախոհները:

Մկրտիչ Փորթուզալյանի նախաձեռնությամբ Մարսելում կազմակերպվում է «Հայոց հայրենասիրական միություն»-ը, որը իր առջև նպատակ է դնում հայ ժողովրդի ազատագրությունը: Այդ կազմակերպության ծրագիրը հրատարակվել է «Վարդապետարան Հայաստանի ազատության» մեջ: Լեոն, քննության առնելով այս ծրագիրը, հետևյալն է գրում. «Նրա հիմքը (այսինքն այդ ծրագրի հիմքը—Ա. Ա.) ու կենտրոնը ազգայնամոլությունն էր իր բոլոր հետադիմական զարդ ու պաճուճանքներով: Բայց և այնպես նա հայդուկային չէր, ազատարար կռիվը միշտ չէր հայտարարում, այլ ամենքի համար քաղցր ու հաճելի եղանակով պարտք էր դնում ամենքի վրա, որ երբ պատերազմը կբացվի մեծ պետությունների մեջ, ամենքը լավ զինված, մարզված, ոտքի ելնեն և ազատեն Հայաստանը»²:

Փորթուզալյանը Մարսելում հիմնել է տպարան և հրատարակել մի շարք գրքեր՝ «Արմենիայի հուշարար», «Հայ դյուցազնուհի մը», «Հայ գյուղացի», «Ազատություն Պուլղարիո և կենսագրություն Պուլղար ապստամբտեղից», «Հայ թշվառներ», «Լինչի օրենքը Տաճկաստանում»: Նրա հրատարակած «Արմենիա» թերթը դարձել է կազմակերպության պաշտոնական օրգանը և նրա հետևողները կոչվել են «արմենականներ»³:

1 «Արևելյան մամուլ», 1883, էջ 42—46:

2 Լեո, Անցյալից, Երևան, 1925, էջ 49—53:

3 «Հորիզոն», 1913, էջ 392 (տե՛ս Մինասյանի հոդվածը):

Ֆրանսիական դիվանագիտության արտաբուստ ցուցադրած բարյացակամ դիրքը, ֆրանսիական կառավարության կեղծ խոստումները, Ֆրանսիայում սովորած հայ ուսանողների նկատմամբ ֆրանսիացի գիտնականների սիրալիր վերաբերմունքն արևմտահայ շրջանակներում այն սխալ տպավորությունն է ստեղծում, որ հայ ժողովրդի ազատագրական ձգտումների իրականացման գործի անխաղախ բարեկամը ֆրանսիական կառավարությունն է: Դրանով պետք է բացատրել այն փաստը, որ ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Զեյթունում կազմակերպվում է հայ բազմիկներից բաղկացած մի խումբ և ուղարկվում Ֆրանսիա՝ կովելու պրուսացիների դեմ¹:

Ֆրանսիայի հայ գաղթավայրում XIX դարի վերջին քառորդից սկսած կազմակերպվում են մի շարք հասարակական կազմակերպություններ: Դրանցից հնագույնը հանդիսանում է «Հայկազյան ուսումնասիրաց ընկերությունը», որը կազմակերպվել է Փարիզում՝ 1879 թվականին: Ընկերությունը նպատակ է դրել իր առջև նյութապես օգնել Ֆրանսիայում սովորող ազքատ ուսանողությանը: Ընկերությունը Փարիզում բաց է արել նաև հայկական գրադարան, որը չնայած այնքան էլ հարուստ չի եղել, սակայն զգալի դեր է կատարել հայ երիտասարդության դաստիարակության գործում: Նա պահպանել է իր գոյությունը բավականին երկար տարիներ:

Ուսանողական փոքրիկ մի կազմակերպություն հիմնվում է 1885 թվականի Մոնփելիե քաղաքում, որն ունեցել է իր սեփական ակումբը²: Նույն քաղաքի համալսարանում սովորող պարսկահայ ուսանողները կազմակերպում են իրենց սեփական միությունը:

Ի դեպ, այդ տարիներին, հայկական մամուլում հարց է բարձրացվում Ֆրանսիայի նանսինի քաղաքի (Փարիզից դեպի արևելք, Գերմանիայի սահմանի վրա) համալսարանում հայ մանկավարժներ պատրաստելու համար:

Ունճյանը արտակարգ գովեստով է խոսում Փարիզի «Աշխատավորական միության» մասին, որը հիմնվել է 1904 թվականին՝ նպատակ ունենալով կազմակերպել փոխադարձ օգնություն: Այս կազմակերպությանն անդամակցել են բանվորները և արհեստավորները: Կազմակերպությունը, Ունճյանի ասելով, կարելի չափ օգտակար է հանդիսացել իր անդամակիցներուն³:

¹ Նուրիխան, Պատմություն, Բ, 830 էջի ծանոթություն:

² «Արմենիա», 1886, № 6:

³ Արքալի Ունճյան, Հայերը Բարիզի մեջ (տե՛ս «Բազմավեպ», 1910, էջ 285):

1913 թվականին հիմնվել է «Ֆրանսահայ տիկնանց միությունը», որն ունեցել է մի քանի մասնաճյուղեր՝ որբերի օգնության, ուսանողների օգնության և Հայաստանի օգնության: Սկզբում ունեցել է նաև գաղթականության օգնության առանձին մասնաճյուղ:

XIX դարի վերջին քառորդում, երբ ավելանում է հայ բնակչության թիվը Ֆրանսիայում և եվրոպական մյուս երկրներում (Անգլիայում, Գերմանիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ավստրիայում, Հունաստանում և այլն), որոշվում է հայկական թեմ ստեղծել Եվրոպայում: Թեմական կենտրոն է ընտրվում Մարսելը:

1902 թվականին Մանթաշյանը Փարիզի Ժան-Գու-Ժոն փողոցի վրա իր ծախսով կառուցում է հայկական եկեղեցի՝ Ս. Հովհաննես անունով: Տաճարի ճարտարապետական կառույցը վերցվում է Աղթամարի տաճարի ձևը:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին ֆրանսահայերը գործուն մասնակցություն են ունեցել ֆրանսիական բանակների շարքերում՝ կովելով Գերմանիայի դեմ: Ֆրանսիական քաղաքացիություն ունեցող հայ երիտասարդները ենթարկվել են զորակոչի, իսկ քաղաքացիություն չունեցող հայ երիտասարդները մտել են կամավորական խմբերի մեջ: Հայ կամավորական ջոկատները գտնվել են ռազմական գործողությունների վտանգավոր վայրերում և աչքի ընկել քաջագործություններով: Ֆրանսահայ համայնքները կազմակերպել են նաև հանգանակություն հօգուտ վիրավորների և հավաքված դրամը հանձնել Ֆրանսիային օժանդակող հանձնաժողովներին:

Ֆրանսիայի հայ գաղթավայրի բնակչությունը նորագույն շրջանում զգալի չափով ստվարանում է: Համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո անընդմեջ հայ գաղթականություն է գալիս Ֆրանսիա: Ըստ տեղեկությունների, 1921—1925 թվականներին Ֆրանսիա է եկել շուրջ 50 000 հայ գաղթականություն¹: Այս թվի մեջ չեն հաշվում հայ որբերին, որոնց թիվը հասել է մոտ 5000-ի:

Հայ գաղթականության հոսքը դեպի Ֆրանսիա շարունակվում է հետագա տարիներին ևս: 1936 թվականին հայ գաղթականության նախկին թիվը հասնում է մինչև 70 000-ի²:

¹ «Ժամանակ», Պոլիս, 1960, հունվարի 7—12:

² ՀՊՀԱ, ֆ. 178, № 393, էջ 20ա:

Ֆրանսիական կառավարությունը առանձին արգելքներ չի հարուցում եկող հայ գաղթականության առջև, որովհետև համաշխարհային պատերազմից հետո Ֆրանսիան կարիք էր զգում բանվորական ձեռքերի, և քանի որ եկող հայ գաղթականության ավելի քան 75 տոկոսը կազմում էր գյուղացիությունը¹, որը հաճույքով էր աշխատանքի մատնում գործարաններում և էժան բանվորական ուժ էր մատակարարում, ուստի ֆրանսիական կառավարությունը աշխատում է դյուրացնել հայերի գաղթը դեպի Ֆրանսիա:

Հայ բանվորությունը հեշտությամբ է աշխատանք ճարում գլխավորապես արտադրության այնպիսի բնագավառներում, ուր պահանջվում էր ֆիզիկական ծանր աշխատանք: Ըստ հրապարակված վիճակագրության, 1924 թվականին Ֆրանսիայում աշխատող 13 330 հայ բանվորներից 1143-ը աշխատել են հանքահորերում, 2000-ը՝ մետաղագործական գործարաններում, 572-ը՝ երկաթգծի շինարարության մեջ, 5693-ը՝ ծանր արդյունաբերության մեջ, իսկ մնացած 3922-ը եղել են սևագործ բանվորներ²: Հայ բանվորներին, սովորաբար, տեղացի բանվորների համեմատությամբ, 10—15 տոկոսով ավելի պակաս աշխատավարձ են վճարել:

Բանվորություն անող նորեկ հայ գաղթականները խեղճ վիճակում են գտնվել, մեծ մասամբ ապրել են հանրակացարաններում, չեն իմացել տեղական լեզուն, արհեստակցական միության անդամ չեն եղել և զրկված են եղել կենսաթոշակ ստանալու իրավունքից: Տարիներ հետո դրությունը որոշ շափով փոխվում է հայ բանվորությունը ևս սկսում է կազմակերպվել, մերվում է տեղացի բանվորության հետ և Ֆրանսիայի բանվոր դասակարգի լիիրավ անդամը դառնում:

Ֆրանսիա եկող գաղթականության մի մասն աշխատում է նաև գյուղատնտեսության մեջ, մասնավորապես՝ շերամապահության: Եղել են հայ արհեստավորներ, մանավանդ՝ գորգագործությամբ զբաղվողներ:

Ֆրանսիական համայնքները ևս, հայկական մյուս գաղթավայրերի նման, իրենց քաղաքական հայացքներով բաժանվում են երկու հիմնական խմբի՝ Սովետական Հայաստանի համակիրների և հակառակորդների: Վերջինս գլխավորողները հանդիսացել են

¹ «Ձանգու», Փարիզ, 1937, հոկտեմբերի 16:

² Т. С. Драмбян, Деятельность армянской секции компартии Франции, Ереван, 1965, (автореферат). стр. 6.

գաղնակցականները: Ֆրանսահայ աշխատավորության ճնշող մեծամասնությունը հարում է համակիրների խմբավորմանը:

Սովետական Հայաստանի համակիրների և հակառակորդների միջև տարիներ շարունակ տեղի է ունեցել և ներկայումս շարունակում է տեղի ունենալ լարված պայքար: Այդ պայքարը առանձնապես սուր բնույթ է ստացել 1923—1924 թվականներին՝ 204-ի կազմակերպման շրջանում: Սովետական Հայաստանի թշնամական տարրերը հաճախ դիմել են զրպարտության, մատնության և սպանությունների:

Ֆրանսահայ առաջադիմական գործիչները հսկայական աշխատանք են տարել հայրենի երկիրը՝ Սովետական Հայաստանը, ճշմարտացի ներկայացնելու գաղթավայրի հայ աշխատավորությանը և մերկացնելու թշնամական տարրերի հայրենադավ գործունեությունը: Մեծ աշխատանք է կատարել այդ ուղղությամբ, հատկապես Փարիզում 1924 թվականի հունիս ամսի 1-ից լույս տեսնող «Բանվոր» թերթը, որը տարածվում էր ո՛չ միայն Ֆրանսիայում, այլև Բալկաններում, Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում և այլ երկրներում: «Բանվոր»-ը խոշոր դեր է կատարել գաղութահայ աշխատավորությանը կազմակերպելու և գաղափարապես զինելու գործում:

Ֆրանսահայ աշխատավորությունը սերտորեն կապված է եղել տեղի ֆրանսիացի աշխատավորության հետ և գործուն մասնակցություն ունեցել հեղափոխական շարժումներին: 1936—1939 թվականներին, երբ Իսպանիայում տեղի է ունեցել ազգային-հեղափոխական պատերազմը և հարյուրավոր կոմունիստներ կոմինտերնի կողով մեկնել են Իսպանիա և կոմունիստական բրիգադներում կռվել հանրապետական Իսպանիայի համար, նրանց շարքերում գտնվել են նաև ֆրանսահայ կոմունիստներ: Իսպանիայի այդ պատերազմում ֆրանսահայերը տվել են բավականին զոհեր. կռվում սպանվել են XIV ինտերբրիգադի VI գումարտակի կոմիսար Գրիգոր Հարոյանը, հինգերորդ գնդի XII բատալիոնի լեգենդար հրամանատար կապիտան Վահան Զրաբյանը և մի շարք այլ կամավորներ¹:

Ֆրանսահայ բանվորության համար ծանր դրություն է ըստեղծվում 1933—1934 թվականին, երբ երկրում սկսում է մուլեգենի տնտեսական ճգնաժամը և առաջանում է մասսայական գործադրկություն, աշխատանքից ազատվում են գլխավորապես օտար-

¹ Т. С. Драмбян, Автореферат, стр. 7—9.

ազգի բանվորները: Կառավարության ընդունած հատուկ որոշման համաձայն, աշխատանքի մեջ թույլատրվում է թողնել օտարազգի բանվորների միայն տասը տոկոսին: Ըստ որում, օտարազգի այն բանվորներին, որոնք չունենին աշխատանք, առաջարկվում է հեռանալ Ֆրանսիայից:

Ծանր դրություն է ստեղծվում հատկապես հայ այն բանվորների համար, որոնք զրկվել էին աշխատանքից: Ո՛ւր գնալ. ոչ մի երկիր չէր ընդունում նրանց: Նանսենյան անձնագիրն իրավունք չէր տալիս այլ երկիր մուտք գործել: Դրությունն ավելի է լրջանում, երբ Ֆրանսիական ոստիկանական մարմինները սկսում են հայ մարդկանցից խլել անցյալում Ֆրանսիական իշխանություններից ստացած նրանց ինքնության վկայականները: Ինքնության փաստաթղթեր չունեցողներին առաջարկում են հեռանալ երկրից: «Եվ որովհետև այդ թշվառները հեռանալու հնարավորություն չունեն — գրում է իր նամակում Ֆրանսահայ բանվորներից մեկը՝ 1935 թ. Հայաստան 204-ի վարչությանն ուղարկած իր մի նամակում — երկրորդ անգամ ձերբակալելիս գցում են նրանց բանտ որպես օրինազանցի: Նեղում են բանտում, ծեծում և արձակում՝ հրամայելով, որ մի քանի օրվանը թողնի երկիրը: Պայմանաժամեն հետո նորից են ձերբակալում, նորից բանտարկում և խոշտանգում»¹:

Ֆրանսահայությունը միշտ էլ հավատարիմ է գտնվել Ֆրանսիայի նկատմամբ, համարել է այն իր երկրորդ հայրենիքը և փորձության ծանր պահին հաստատակամ կանգնել ֆրանսիական ժողովրդի կողքին: Ֆրանսահայությունը իր հավատարմության փայլուն օրինակը ցույց տվեց համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, երբ Ֆրանսիան նվաճվել էր գերմանացիների կողմից և ֆրանսիական ժողովուրդը պայքարի էր դուրս եկել ֆաշիզմի դեմ հայրենիքի ազատագրության համար:

Երբ գերմանական ֆաշիստները զրավեցին Ֆրանսիան, ֆրանսահայերը Փարիզում և նրա շրջակայքում կազմակերպում են «Ֆրանսահայ ազգային ճակատ» անունով ընդհատակյա մի կազմակերպություն, որը դառնում է Ֆրանսիայի դիմադրական շարժման առաջավոր ջոկատներից մեկը: Կազմակերպությունն իր շուրջըն է համախմբում ֆաշիզմի դեմ պայքարող բոլոր հայ մարտիկներին:

«Ֆրանսահայ ազգային ճակատը» Ֆրանսիային տվել է այն-

¹ 202Ա, ֆ. 178, գ. № 247, էջ 48:

պիսի աչքի ընկնող գործիչներ, ինչպիսին Միսաք Մանուշյանն է, Հայկ Դպիրյանը, Արսեն Զաքարյանը, Ալեքսանդր Կոստանդինյանը և շատ ուրիշներ, որոնցից շատերն ընկել են ֆաշիզմի դեմ մղված պայքարում: Ֆրանսիայի կոմունիստների աշխատանքի կենտրոնական հանձնախմբի պատասխանատու Ազատյանը, Փարիզից 1945 թվականի հունիսի 11-ին Հայաստան ուղարկած իր գրուկյան մեջ խոսելով ֆրանսահայ ճակատի գործունեության մասին, գրում է. «Հայաշատ կենտրոններու մեջ կազմվեցավ արձակագններու և բարձրագաններու խմբեր, որոնք մաքառեցան խիզախորեն՝ մեծ վնասներ տալով թշնամիին: Շատ մը թանկագին ընկերներու կարգին կորսնցուցինք ազգային հերոս, հրամանատար Մանուշյանը, որուն քաջագործությունները ոսկիե տառերով արձանագրեցին ֆրանսահայերը»¹:

Ֆրանսահայությունը, իհարկե, գիտակցում էր, որ ֆաշիզմի դեմ մղած պայքարը ոչ միայն իր քաղաքացիական պարտականության կատարումն էր հանդես բերելու ֆրանսիայի, իր հավատարմության ապացույցը ապաստանած երկրին, այլև իր համեստ աջակցությունը Սովետական Միությանը, որը գոտեմարտի էր բռնվել գերմանական ֆաշիզմի դեմ և իր վրա վերցրել պատերազմի ողջ ծանրությունը: «Ուրախ ենք ձեզ հայտնելու, — գրում է Ազատյանը վերև հիշված նամակում, — թե ֆրանսահայ աշխատավորությունը այս վիթխարի պատերազմին բերավ իր համեստ աջակցությունը լիովին համոզված, թե իր նվիրական պարտականությունն է օգնել իր խորհրդային հայրենիքին»²:

XII. ՀԱՅԵՐՆ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

Հայկական գաղթավայրը Ավստրիայում շատ հին չէ. այն հիմնականում ստեղծվել է XIX դարի առաջին քառորդում և կազմակերպված բնույթ է ստացել, երբ Մխիթարյանները 1811 թվականին Տրիեստից փոխադրվեցին Վիեննա: Սակայն, ինչպես երեւում է պատմական աղբյուրներից, Մխիթարյաններից առաջ ևս Վիեննայում հիշվում են մշտական բնակություն հաստատած հայեր:

¹ 202Ա, ֆ. 709, № 14, էջ 3:

² Նույն տեղում:

Հայ-ավստրիական փոխհարաբերությունների հնագույն փաստը Ղ. Ալիշանը համարում է ավստրիական դուքսի՝ Կիլիկյան Հայաստան գալը որպես դեսպան և հայոց Լեոն թագավորի (1198—1219) հետ նրա վարած բանակցությունները¹, թեպետև մեզ հայտնի չէ այդ բանակցությունների բնույթը:

Ավստրիական հող ոտք դնող առաջին հայերը արհավիրքից խույս տվող սովորական գաղթականներ չեն եղել, այլ հայ առևտրականներ, որոնք հաճախ են սկսել երևալ հատկապես XVII—XVIII դարերում՝ գալով Պարսկաստանից, Ռումինիայից, Հունգարիայից և այլ երկրներից: Վիեննայում բավականի աշխույժ գործունեություն են ունեցել մանավանդ բազմաշրջիկ ջուղայահայերը, որոնք Ավստրիա էին բերում Պարսկաստանի մետաքսը, Հնդկաստանի թանկարժեք քարերը, համեմունքներ և արևելյան այլևայլ ապրանքներ: XVIII դարում փոքրիկ համայնքն արդեն գոյություն է ունեցել Վիեննայում: Ալիշանի հրապարակած մի տեղեկությունից երևում է, որ 1715 թվականին Վիեննայի հայ համայնքի մի քանի անդամներ երգում են տվել տեղի նոտարի առջև, որ Վիեննա եկած իրենց ազգակից ոմն Հովհաննես, Ավետի որդի «բարեմիտ մարդ է և ուղղափառ քրիստոնյա»²:

Այդ նույն ժամանակ Վիեննայում հիշվում են հայկական երկու քահանա: Քահանաների առկայությունն ինքնին ապացույց է համայնքի գոյության:

Վիեննայում XVIII դարի կեսերում հիշվում են տասնյակ հայ անձնավորություններ, որոնք պարապում էին առևտրով ու արհեստներով և կամ պետական պաշտոնյաներ էին: Այդ անձնավորությունների թվում հիշվում է Օզոստինոս Աղամալյան անունով մեկը, որը հանդիսացել է ավստրիական արքունիքի թարգմանը³:

Վիեննայում հաստատված հայ առևտրականները 1771 թվականին ավստրիական արքունիքից առանձնաշնորհումներ են ստացել՝ պարապելու ոսկերչությամբ, ակնավաճառությամբ և այլ ապրանքների առևտրով⁴:

Վիեննայի հայ գաղթավայրը, որպես հայ մշակույթի օջախ, իր ձևավորումն է ստանում XIX դարում՝ Մխիթարյանների այնտեղ տեղափոխվելուց հետո: Ավելորդ չենք համարում այստեղ մի

1 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 463:

2 Նույն տեղը:

3 Եփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, էջ 333—334:

4 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 464:

քանի խոսք ասել Մխիթարյանների պառակտման, Տրիեստում հաստատվելու և ապա այստեղ տեղափոխվելու մասին:

Վենետիկի Մխիթարյանների պառակտումը տեղի է ունեցել 1772 թվականին. միաբանների մի մասը, Աստվածատուր Բաբիկյանի գլխավորությամբ, չցանկանալով Ս. վ. Մելքոնյանին ճանաչել միաբանության արբա, թողնում և հեռանում են Տրիեստ: Ավստրիական արքունիքը, որի տիրապետության տակ էր այդ ժամանակ գտնվում Տրիեստը, հովանավորում է պառակտված Մխիթարյաններին և թույլ տալիս այնտեղ վանք կառուցել, դպրոց և տպարան հիմնել ու կազմակերպել Տրիեստի հայկական համայնքը: Տրիեստի Մխիթարյանները մեծ գումարի պարտքեր վերցնելով սկսում են իրենց կազմակերպչական առաջին աշխատանքները: Սակայն նրանք շուտով անհաջողության են հանդիպում: Շեռնբրունի խաղաղության պայմանագրով Տրիեստը հանձնվում է Նապոլեոնին, որը միացնում է այն Իլլիրիային և կառավարիչ նշանակում մարշալ Մարմոնին¹: Ֆրանսիական նոր իշխանությունները բարյացակամ դիրք չեն վերցնում Մխիթարյանների նկատմամբ, և երբ պարտքերը սկսում են նեղել Մխիթարյաններին, նրանք ստիպված են լինում աճուրդի հանել Մխիթարյանների շարժական և անշարժ ողջ գույքը: Տրիեստի Մխիթարյանները զրկվելով նյութական հնարավորությունից, ցրվում են զանազան կողմեր:

Տրիեստի Մխիթարյաններից ոմանք, որպես ավստրիական հպատակներ, գնում են Վիեննա, դիմում ավստրիական կառավարությանը և խնդրում նրա օգնությունը: Ավստրիական արքունիքն ընդառաջում է Մխիթարյաններին և թույլ տալիս հաստատվել Վիեննայում: Ահա այս թվականին Մխիթարյանները հիմնվում են Վիեննայում: Որոշ բարերարների օժանդակությամբ նրանք կառուցում են եկեղեցի, տպարան, դպրոց, գրադարանի և Գանգարանի շենքեր Վիեննայի յոթերորդ թաղամասի մի փողոցի վրա, որն այժմ կոչվում է Մխիթարյան փողոց (Mechitharistengasse):

Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, ինչպես հայտնի է, հանդիսացել է կաթոլիկ միաբանություն և ըստ պատշաճին իր սուրբը տվել է կաթոլիկությանը: Սակայն ի պատիվ Վենետիկի և Վիեննայի միաբանության, պետք է ասել, որ Մխիթարյանները՝ Հասունու և վատանուն նիկոլի կարգի կղերականներ չեն հանդի-

սացել, այլ ժողովրդից ստացածի մի մասը, ինչպես ճիշտ նկատել է Միքայել Նալբանդյանը, վերադարձրել են ժողովրդին:

Մխիթարյանները խոշոր գործ են կատարել հայ մատենագրության հավաքման, խնամածու պահպանման, ուսումնասիրության և հրատարակության գործում: Հայագիտական իրենց ուսումնասիրություններով նրանք մեծ շահերով նպաստել են հայ ժողովրդի ինքնաճանաչության և ինքնագիտակցության բարձրացմանը, իսկ այդ ամենով ո՛չ թե նպաստել, այլ խոչընդոտել սփյուռքահայության ձուլմանը: Նրանք թարգմանել են համաշխարհային հռչակ ունեցող բազմաթիվ կլասիկների աշխատություններ: Եվ, վերջապես, նրանք շնորհակալ գործ են կատարել հայ ժողովրդի մշակույթը եվրոպական ժողովուրդներին ներկայացնելու, նրանց ծանոթացնելու՝ հայ մատենագրության հազվագյուտ գործերի հետ:

Ցուցանշական է նաև այն, որ Վիեննայի Մխիթարյանները հայ մատենագրության ուսումնասիրության գործում, պետք է ասել, ցուցաբերել են քննադատական, վերլուծական ոգի:

Մխիթարյանների գործունեության կարևոր բնագավառներից մեկն է հանդիսացել մանկավարժական աշխատանքը: Նրանք Վիեննայում 1820 թվականին բացել են գիշերօթիկ դպրոց, հայ երեխաներ հավաքել Քուրքիայից և այլ երկրներից ու զբաղվել նրանց դաստիարակությամբ: Հետագայում այն վեր է ածվել միջնակարգ դպրոցի՝ լիցեյի: Մխիթարյանները դպրոցներ են բաց արել նաև Զմյուռնիայում (1846 թվականին, որը գոյատևել է մինչև 1922 թվականը), Տրիեստում (1858—1875 թվականներին), Կոստանդնուպոլսում (1870 թվականից): Վիեննայի Մխիթարյանների այս դպրոցներում մեծ ուշադրություն է դարձվել հայագիտական առարկաների և լեզուների դասավանդմանը: Ուստի պատահական չէ, որ Մխիթարյան դպրոցներում սովորողներն անխտիր տիրապետում են մի քանի լեզուների: Այդ դպրոցները լավագիտակ շրջանավարտներ են տվել մանավանդ հայերեն լեզվի և մատենագիտության գծով:

Վիեննայի Մխիթարյանների գործունեության մյուս կարևոր բնագավառը հանդիսացել է տպագրությունը, որը նրանց եկամտի հիմնական աղբյուրներից մեկն է եղել: Այս եկամտով է, որ նրանք կարողացել են ծածկել իրենց դպրոցների ծախսերը, հրատարակել հայ մատենագրեր ու եվրոպական լեզուներից կատարած թարգմանությունները:

Վիեննայի Մխիթարյաններն իրենց տպարանն են ունեցել դեռ Տրիեստում գտնված ժամանակ և հրատարակել մի շարք գրք-

քեր: Հետագայում տեղափոխվելով Վիեննա, նրանց հոգածության առաջին խնդիրն է եղել կազմակերպել իրենց տպագրությունը: Եվ ժամանակի ընթացքում նրանց հաջողվել է կազմակերպել բազմաթիվ արևելյան և եվրոպական լեզուների համար և բազմաթիվ գրատեսակներ ունեցող տպարան, որը դարձել է ամենահարուստ տպարաններից մեկը Արևմտյան Եվրոպայում: Այդ տպարանում տպվել են հարյուրավոր գրքեր ո՛չ միայն հայերեն, այլև բազմաթիվ այլ լեզուներով¹:

Վիեննայի Մխիթարյանները մեծ աշխատանք են կատարել հայ հին և միջնադարյան մատենագրերը հրատարակելու ուղղությամբ: Նրանց հրատարակությամբ լույս են տեսել մի շարք հայ պատմիչների և տաղերգուների աշխատությունները: Նրանք հին հունարենից և լատիներենից հայերեն են թարգմանել բազմաթիվ անտիկ հեղինակների աշխատություններ:

Վիեննայի Մխիթարյանների գործունեության մասին խոսելիս, չի կարելի նաև զովեստով չխոսել այն շնորհակալ աշխատանքների մասին, որ կատարել են նրանք հայկական ձեռագրերը և հայկական հնատիպ գրականությունը և պարբերական մամուլը Քուրքիայից և այլ երկրներից հավաքելու և պահպանելու գործում: Վիեննայի Մխիթարյանների մատենադարանն այժմ ունի շուրջ 1500 հայկական ձեռագիր, որոնց մեջ քիչ չեն համաշխարհային արժեք ունեցող ունիկոմները: Հայագիտությունը Մխիթարյաններին է պարտական հայկական այդ ձեռագրերի հավաքման և կորուստից փրկելու համար: Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանում կան հայ պարբերական մամուլի հազվագյուտ օրինակներ:

Մխիթարյաններն ունեն նաև բավականին հարուստ թանգարան, ուր հավաքված են և ցուցադրվում են ժողովածուներ գիտության և արվեստի տարբեր բնագավառներից՝ հանքաբանության, բուսաբանության, կենդանաբանության և այլն: Թանգարանն ունի եգիպտական մոմիաներ, հին հունական, հռոմեական և միջնադարյան եվրոպական ժամանակաշրջանի արձաններ, հայ և օտար ասեղնագործության ընտիր նմուշներ, տարբեր ժամանակների մեծադիր գեղարվեստական նկարներ և այլն: Արժեքավոր է առանձնապես հին դրամների ժողովածուն, որն իր հարստությամբ կարող է

1 Վիեննայի Մխիթարյանների մասին խոսելիս, մենք օգտվել ենք Հ. Ն. Ակինյանի «Ակնարկ մը Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա» խորագրով աշխատությունից:

մրցել աշխարհի դրամական մեծագույն ժողովածուների հետ: Այն հարուստ է առանձնապես հայկական դրամներով:

Վիեննայի Մխիթարյաններն հանդես են եկել հայ պարբերական մամուլի հրատարակության առաջին նախաձեռնողների շարքում: Նրանց դրոշմով հրատարակված հայ առաջին պարբերականներից մեկը՝ «Սանուցմունք վաճառականության», լույս է տեսել 1819 թվականին: Ամսագիրը նպատակ է ունեցել տեղեկատու հանդիսանալ առևտրականների համար ընթացիկ վաճառականության բնագավառում, որը սակայն քաջալերության չի արժանացել և առաջին համարից հետո դադարել է:

1847 թվականին Վիեննայի Մխիթարյանները, Պոլսի Տուզյան Զելեբու հորդորանքով, սկսում են լույս ընծայել «Եվրոպա» անունով շաբաթաթերթը, որը պարունակում է քաղաքական լուրեր և գիտական ու բանասիրական բնույթի հոդվածներ: Այս շաբաթաթերթը ևս սպառողների լայն շրջան չգտնելով, 1858 թվականին վեր է ածվում երկշաբաթաթերթի և լույս տեսնում մինչև 1863 թվականը: «Եվրոպա» շաբաթաթերթը, պետք է ասել, դգալի դեր է կատարել արևմտահայ գրական լեզվի մշակման գործում:

Վիեննայի Մխիթարյանները 1887 թվականից սկսում են հրատարակել «Հանդես ամսօրյա» ամսագիրը, որն անընդմեջ շարունակվում է մինչև այսօր: Նա հայկական երկարակյաց ամսագրերից մեկն է: Սկզբում նախատեսված է եղել, որ նա լինի «բարոյական, ուսումնական և արվեստագիտական», բայց շատ շանցած այն փոխում է իր բնույթը և վերածվում միջնադարյան հայկական բնագրեր հրատարակելու, բանասիրական հարցեր ուսումնասիրելու, աղբյուրագիտական հարցեր բարձրացնելու և լուծելու պարբերականի: Նրան ժամանակին աշխատակցել են աչքի ընկնող հայագետներ Գ. Գալեմբարյանը, Կ. Բասմաջյանը, պրոֆ. Հ. Ադոնցը, Հ. Տաշյանը, պրոֆ. Հ. Մարկվարտը, Գ. Հովսեփյանը, պրոֆ. Գ. Խալաթյանցը, Ն. Վ. Ակինյանը, Հ. Վ. Ոսկյանը, Ս. Տեր-Ներսիսյանը և անվանի այլ հայագետներ: «Հանդես ամսօրիային» սովետական հայագետներից աշխատակցել են նաև ակադ. Հ. Աճառյանը, ակադ. Հ. Մանանդյանը և Թ. Ավդալբեկյանը:

Վիեննայի Մխիթարյանները տվել են մի շարք աչքի ընկնող հայագետներ, որոնցից կարելի է հիշել Հովսեփ Գաթրոյանին, որն առաջին անգամ հունարենից հայերեն է թարգմանել Քսենոֆոնի «Կիրոպեդիա»-ն, լատիներենից՝ Ցիցերոնի և կլասիկ հեղինակների այլ գործեր, գրել է իր նշանավոր երկհատոր «Տիեզերական

պատմություն»-ը, ուր արժեքավոր փաստական նյութեր են զետեղված հայ ժողովրդի պատմության վերաբերյալ:

Մխիթարյանների աչքի ընկնող լեզվաբաններից է Հ. Ա. Այտրնյանը, որի «Քննական քերականություն արդի աշխարհաբար լեզվի» վերնագրով ուսումնասիրությունը՝ բաղկացած մեկ հազար մանրատառ մեծադիր էջերից, հայ քերականության լավագույն աշխատություններից մեկն է համարվում: «Քննական քերականությունը», — գրում է Ա. Գ. Վարդանյանը, նշանակալից դեր է խաղացել աշխարհաբարի հաղթանակի գործում և դրանով նպաստել մեր նոր գրական հայերենի, առավելապես գրական արևմտահայերենի զարգացման ճիշտ ուղու ընտրությանը և հետագա մշակմանը»:

Մխիթարյանների աչքի ընկնող աղբյուրագետներից է Հ. Հ. Տաշյանը, որի կազմած Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրերի ցուցակը իր հարստությամբ և մանրամասնությամբ մնում է չգերազանցված մինչև այժմ կազմված բոլոր հայկական ձեռագրերի ցուցակների մեջ: Նա է հանդիսանում հայ հնագրության առաջին դասընթաց կազմողը՝ «Ակնարկ մը հայ հնագրության վրա» խորագրով: Տաշյանը հեղինակ է նաև հայագիտական մի շարք արժեքավոր ուսումնասիրությունների:

Վիեննայի Մխիթարյանները տվել են իրենց ներկայացուցիչը նաև հայ դրամագիտության բնագավառում: Հ. Կղեմես Սիպիլյանն առաջին հայ դրամագետն է հանդիսացել, որը մշակել և դասավորել է իրենց մոտ գտնվող Կիլիկյան հայկական դրամաների հարուստ ժողովածուն: Նրա այդ ուսումնասիրությունը հրատարակվել է 1892 թվականին, հետմահու:

Հայ բանասիրության մեղվաջան աշխատողներից է Հ. Ն. Ակինյանը, որի ջանքերով հայտնաբերվել և գիտական լայն շրջանի սեփականություն են դարձել տասնյակ պատմիչներ, ուղեգիրներ և տաղերգուներ: Նա է կազմել մի շարք հայկական ձեռագրական ժողովածուների ցուցակները: Նրան ենք պարտական հարյուրավոր բանասիրական-աղբյուրագիտական կնճոռոտ հարցերի լուծումով: Ակինյանի բանասիրական աշխատանքի ծավալը պատկերացնելու համար բավական է ասել, որ նրա հեղինակությամբ լույս են տեսել ավելի քան չորս հարյուր ուսումնասիրություն՝ առանձին գրքերով և կամ հոդվածներով:

Վիեննայի աչքի ընկնող հայագետներից է Հ. Հ. Ոսկյանը: Նա հեղինակ է մի քանի հարյուրի հասնող հայագիտական ուսումնասիրությունների, որոնք գլխավորապես նվիրված են հայ մա-

տենագրութեանը: Նրա մեծարժեք գործերից է հայ գրչութեան օջախներին նվիրված ուսումնասիրութիւնների շարքը: Վերջերս Հ. Ոսկյանը հրատարակեց Վիեննայի Մխիթարյանների մատենագարանի ձեռագրերի ցուցակի երկրորդ հատորը՝ Տաշյանից որդեգրած մանրամասնութեամբ և բարեխղճութեամբ:

Տասնիններորդ դարի վերջին քառորդում Վիեննայի հայ բնակչութեան թիվը զգալիորեն ավելացել է: Ա. Ալթունյանի ուղեգրութիւնից երևում է, որ 1876 թվականին, իր Վիեննա այցելած ժամանակ, այնտեղ են եկել և բնակութիւն են հաստատել հայեր տարբեր վայրերից՝ 20—25 ընտանիք եկած է եղել Հունգարիայից, 15 ընտանիք՝ Լեհաստանից, 30 ընտանիք՝ Մոլդավիայից և Թուրքիայից, 15 ընտանիք՝ Ռուսաստանից և այլն¹:

Մեծ թվով հայ գաղթականութիւն է եկել Ավստրիա համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և նրանից հետո: Վիեննայի հայկական գաղթօջախի բնակչութիւնն զգալի չափով մեծացել է: Այժմ կաթոլիկ համայնքի կողքին կազմավորվել է նաև լուսավորչական համայնքը, որի հոգևոր հովիվն է ներկայումս շնորհալի հայագետ Մ. Վ. Գրիգորյանը:

Գաղթավայրում զանազան ժամանակներում ստեղծվել են մի քանի հասարակական կազմակերպութիւններ, որոնցից համագաղութային լիազորութիւններով է օժտված «Ավստրիական հայկական միութիւնը», որը խնդիր է դրել իր առջև կապ հաստատել Սովետական Հայաստանի գիտական, հասարակական և մշակութային հիմնարկութիւնների հետ: Միութիւնն աշխատում է նաև պայքարել ասիմիլիացիոն երևույթների դեմ և անաղարտ պահել մայրենի լեզուն:

¹ Ա. Ալթունյան, Տեղեկագրութիւն հայ գաղթականութեան՝ որք է Մոլտավիա-Վալաքիա, Հունգարիա և Լեհաստան, էջ 152:

XIII ՀԱՅՎԱԿԱՆ ՓՈՐՐ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ¹

Հայերն Անգլիայում:

Անգլիայի հայ գաղթավայրը հայկական երիտասարդ գաղթավայրերից է. նա ձևավորվել է նոր ժամանակներում՝ XIX դարում: Սակայն մինչ այդ հայերի և անգլիացիների միջև գոյութիւն են ունեցել քաղաքական և տնտեսական բնույթի որոշ հարաբերութիւններ՝ ինչպես բուն Անգլիայում, այնպես և նրանից դուրս, ուստի անհրաժեշտ ենք համարում, նախքան Անգլիայի հայ գաղթավայրի մասին խոսելը; փոքր-ինչ անդրադառնալ հայ-անգլիական հարաբերութիւնների պատմութեանը:

Բրիտանական կղզիների մասին հայ մատենագրութեան մեջ հնագույն և հավաստի տեղեկութիւններ կան VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի մեջ: Եվրոպական երկրների աշխարհագրութեան բաժնում, Իսպանիայի նկարագրութիւնից հետո, Շիրակացին անցնում է Բրիտանական կղզիների նկարագրութեանը և հետևյալ տեղեկութիւնը տալիս. «Բրիտանիան երկու կղզիներ են, որոնք գտնվում են Հյուսիսային օվկիանոսում՝ Իսպանիայից վերև: Արևմտյան կղզու անունն է Յուբաոնիա (Heberinia): Նա ունի ճյուղատված գարեհատի ձև: Այնտեղ կան 16 խոշոր գետեր և բազմաթիվ ժողովուրդներ: Իսկ արևելյան կղզու անունն է Ալվիոն (Albion), որն ավելի մեծ է, քան առաջինը: Նա ունի բազմաձյուղ տղրկի ձև: Կան այնտեղ 25 խոշոր գետեր և խիտ

¹ Արևմտյան Եվրոպայի փոքր հայ գաղթավայրերից ոչ մեկի միջնադարյան պատմութեան մասին չի խոսվել ներկա աշխատութեան առաջին հատորում, ուստի անհրաժեշտ ենք համարում այստեղ փոքր-ինչ կանգ առնել նոր շրջանի հետ միասին:

անտառներ: Այս կղզու շուրջը կան քառասունմեկ մանր կղզիներ, ինչպես և՛ Փունիս մեծ կղզին»¹:

Բրիտանիայի մասին հայ գիտնականի հաղորդած այս տեղեկության սկզբնաղբյուրը, ըստ երևույթին, միայն անտիկ հունական հեղինակները չեն եղել, այլև հայ բազմաշրջիկ առևտրականները, որոնք բյուզանդական կայսրության շրջանում հեռագնաց ճանապարհորդություններ էին կատարում և, անշուշտ, ոտք էին դրել նաև բրիտանական կղզիները:

Բանասեր Գ. Խանամիրյանը «Պայքարի»-ի բացատրելով զետեղված իր մի ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ հայերը Անգլիայում հիշվում են VII դարում գրված իուլանդական մի հիշատակարանում²:

Բանասեր Խանամիրյանի մատնացույց արած տեղեկությունները մասամբ հավաստվում են հնագետ Ֆրանսուազ Հանրու ուսումնասիրությամբ, որը ազգակցական կապեր է տեսնում իուլանդական և Անիի ճարտարապետության, մասնավորապես քանդակագործության միջև³:

Հայերը անգլիացիների հետ մոտիկից ծանոթացել են XIII դարում Կիլիկյան Հայաստանում՝ խաչակրաց սարձավանքների ժամանակ: Մեզ է հասել անգլիական Հենրիկոս երրորդ թագավորի նամակը՝ հայոց Հեթում թագավորին, որով հայտնում է իր ձեռնարկած խաչակրաց արշավանքի մասին և խնդրում համագործակցել: Պատմական գրականության մեջ հայտնի են տասից ավելի նամակներ, որոնք փոխանակվել են անգլիական և հայկական արքունիքների միջև:

Ղ. Ալիշանի հրատարակած նյութերից երևում է, որ XIII դարում հայեր են բնակվել Անգլիայում, ուր փախել են Մեծ Հայքից՝ մոնղոլական արշավանքների ժամանակ:

Կիլիկյան Հայաստանի անկումից հետո դադարում են հայ անգլիական առևտուրները: Հայտնի է միայն, որ Լեոն VI Լուսինյանը, երբ ազատվեց եգիպտական զերությունից և եկավ Ֆրանսիա, 1385 թվականին գնաց Անգլիա, խնդիր ունենալով հաշտեցնել անգլո-ֆրանսիական քաղաքական շրջանները և միավորել նրանց ուժերն ընդդեմ եգիպտական սուլթանության⁴:

1 Անանիա Շիրակացու մատենագրությունը (բնագրերի բաժին), էջ 341»

2 Գ. Խանամիրյան (տե՛ս «Պայքարի» բացատրիկ, 1951, էջ 10):

3 «Հանդես ամսօրյա», 1936, էջ 366:

4 Կ. Բասմաջյան, Լեոն Լուսինյան, էջ 63—64:

Հայ-անգլիական հարաբերությունների ամենից գործուն շրջանը եղել են XVI—XVIII դարերը, և ո՛չ թե բուն Անգլիայում կամ Հայաստանում, այլ Հնդկաստանում, որը գաղութացվել էր Բրիտանիայի կողմից: Անգլիացիները, իրենց գաղութատիրության առաջին շրջանում, երբ դեռ նոր էին ոտք դնում հնդկական հողի վրա, վարպետորեն օգտագործեցին հնդիկ ժողովրդի մաս հնդկահայ վաճառականների ունեցած վստահությունը և հեղինակությունը:

Պատմական աղբյուրներում բավականի տեղեկություններ կան հայ առևտրականների գործարքների մասին Անգլիայում: Նրանք Անգլիա էին բերում պարսկական մետաքսը, արևելյան համեմունքներ և այլ ապրանքներ, իսկ այնտեղից արտածում արգյունաբերական ապրանքներ:

Հայ տաղերգուներից մեկը՝ Գրիգորյանը, որը 1675 թվականին եղել է Անգլիայում, գրել է մի տաղ հետևյալ վերնագրով. «Անարհեստ ոտնաուրս ասեցեալ... վասն այսմ Պրիթանիա կղզւոյ» և այլոց բանականաց մեծ և փոքու առ հասարակ ամենեցուն, որք էին ներկայ այժմ ժամանակի»: Գրիգորյանի այս տաղը բաղկացած է 9 գլուխներից, որոնց մեջ կան տեղեկություններ Կարլոս II թագավորի, պապամենտի, դատավորների, վիցեկանցյերի, իշխանների, ուսուցիչների, եկեղեցական ծիսակատարությունների, բանակի, վաճառականության, արհեստագործության, հասարակ աշխատավորների կանանց, երեխաների, ծառայողների մասին և այլն: Արևելյան միապետական երկրից եկած մարդու համար, բնական է, մեծ հետաքրքրություն է ներկայացրել ժամանակի զարգացած Անգլիան: Ըստ տաղերգուի տեղեկության, նա եկել է Անգլիայի Հարվիճ քաղաքը, հետո ցամաքով գնացել Լոնդոն¹:

Անգլիական պատմական գրականության մեջ քաղաքացիություն է ստացել մի տեղեկություն, որ Կրոմվելի ժամանակ (1599—1658) Հոլանդիայի Ամստերդամ քաղաքից բավականին թվով հայ գաղթականություն է եկել Անգլիա և բնակություն հաստատել Փրլլեյմթհի մոտերքում: Հայ գաղթականությունը ունեցել է առանձնացած թաղամաս, աղբյուր է շինել հայկական արձանագրությամբ: Հայերը, սակայն, երկար չեն մնացել այդտեղ: Պատմում են, որ մի օր Կրոմվելը, հայկական այդ թաղամասով անցնելիս, հետաքրքրվել է հայ բնակչության քաղաքական հայացքներով:

1 Բ. Սուրգյան, Մայր ցուցակ հայերն ձեռագրից Մատենադարանին Մխիթարյանց, հ. II, էջ 1196:

«Ո՛ր կուսակցութեանն եք հարում դուք»,— հարցրել է նա հայերին: Նրանք պատասխանել են աստվածաշնչի նշանավոր ասած վացքով՝ «Տուք զկայսերն կայսեր և զաստծոյն՝ աստծոյ»: Կրոն վելը դժգոհ է մնացել նրանց պատասխանից և հանձնարարել է մինչև իր վերադառնալը պարզ կողմնորոշվել, այլապես խիստ կվարվի նրանց հետ: Հայ գաղթականները, վախենալով թագավորից, մինչև նրա վերադարձը ետ են գաղթել Հոլանդիա: Իբրև ապացույց այդ իրողության, մատնացույց է արվում Ստիրթ քաղաքում հայերի շինած աղբյուրի հայկական արձանագրությունը:

XVII դարում պարսկահայ առևտրականները հաճախակի են սկսում երևալ Անգլիայի շուկաներում, մասնավոր՝ 1634 թվականից հետո, երբ ֆրանսիական կառավարությունը Պարսկաստանից բերված մետաքսի մաքսը 16-ից բարձրացրել է 112 ֆրանկի: Հայ առևտրականներն իրենց ճանապարհը Մարսելից թեքել են դեպի Անգլիա և Հոլանդիա: Ըստ որում, պարսկահայ վաճառականները եկել են երկու ճանապարհով՝ Թուրքիայի վրայով և Ռուսաստանի¹:

Ուշագրավ է այն, որ հայ առևտրականները ապրանքներ էին բերում Անգլիա ո՛չ միայն Պարսկաստանից և արևելյան մյուս երկրներից, այլև՝ Իտալիայից:

XVIII դարում արդեն գտնվում են հայեր, որոնք զանազան գաղթավայրերից, մասնավորապես Հնդկաստանից, գալիս և բնակություն են հաստատում Անգլիայում:

XVIII դարում Անգլիայի արևելագետների շրջանում սկսվում է հետաքրքրություն առաջանալ հայագիտության նկատմամբ: Նրանց մեջ գտնվում են առանձին անձինք, որոնք ուսումնասիրում թե՛ն հայոց լեզուն և հայ մատենագրությունը: 1736 թվականին Անգլիայում լատիներեն է թարգմանվում Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը և Շիրակացու «Աշխարհացոյց»-ը: Նշված աշխատությունների թարգմանությունը և հրատարակությունը կատարել են Վիստոն եղբայրները՝ Գեորգը և Գուլելմոսը: Սրանց հայրը՝ Գուլելմոս Վիստոնը, Մադրասի հնդկահայ Գրիգոր Աղափիրյանի տղաների ուսուցիչն է եղել, այնտեղ է սովորել հայերենը և գալով Լոնդոն, սովորեցրել է այն իր որդիներին, որոնք և կարողացել են ինքնուսուցմամբ այնքան խորանալ, որ կարողացել են Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը և Շիրակացու «Աշխարհա-

¹ Ա. Հովհաննիսյան, Գրվազներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, էջ 183:

ցոյց»-ը թարգմանել և հրատարակել լատիներեն: Խորենացու և Շիրակացու այս պատմությունների հրատարակությունը պետք է ասել առաջին թարգմանությունն է և մեծ հետաքրքրություն է առաջացրել այն ժամանակի եվրոպական արևելագետների շրջաններում, որոնք ծանոթ չէին հայոց հարուստ մատենագրության հետ:

Լոնդոնի հետ է կապված հայ ազատագրական շարժումների ակնավոր գործիչ Հովսեփ էմինի գործունեության առաջին շրջանը: Նա, ինչպես հայտնի է, 1754 թվականին, լորդ Նորտենբերլենդի միջնորդությամբ, սովորել է Լոնդոնի Վուլվիչի զինվորական ակադեմիայում՝ ցանկանալով տիրապետել անգլիական զինվորական արվեստին և վերադառնալով Հայրենիք՝ օգտակար լինել իր ժողովրդի ազատագրության գործին: Լոնդոնում եղած տարիներին նա մոտիկ փոխհարաբերության մեջ է մտել ժամանակի հայտնի գործիչներ Բյորքի և Մոնտբլուի հետ¹: Էմինն աշխատել է մոտենալ Լոնդոնի քաղաքական բարձր շրջաններին և ներկայացնելով հայ ժողովրդի ողբերգական ծանր վիճակը պարսկա-թուրքական տիրապետության տակ, նրանց կարեկցությունը հայցել. միամտորեն կարծելով, որ այդ ճանապարհով կարող է շարժել անգլիական քաղաքական գործիչների զգացմունքները, մոռանալով, որ անգլիական կառավարությունը Մերձավոր Արևելքում ունի իր սեփական քաղաքական նպատակները, որոնց ելակետը ոչ թե զգացմունքներն են, այլ Բրիտանական գաղութարարների կոնկրետ շահերը:

Եվ, վերջապես, Անգլիայի հետ է կապված XVIII դարի կուլտուրական կարևոր մի այլ երևույթ՝ Գրիգոր Խալդարյանի հայկական տպարանի հիմնումը Լոնդոնում 1780 թվականին: Խալդարյանը իր տպարանի ստեղծման համառոտ պատմությունը շարադրել է 1783 թվականին Պետերբուրգում հրատարակած գրքի հիշատակարանում: Այդտեղ հետևյալն է ասված. «Որոշ հանգամանքներ ստիպեցին ինձ դուրս գալ Հնդկաստանից և գնալ անգլիացիների երկիրը և նրանց մեծ քաղաքը՝ Լոնդոն: Այստեղ ես մնացի մոտ տասը տարի: Եվ այս տասը տարվա ընթացքում անդադար որոնում էի մի արհեստավոր, որին կարողանայի փորագրել տալ ինձ համար հայկական տառեր: Չնայած նման արհեստավորների շատ կային, սակայն չէին ցանկանում՝ պատրաստել և ինձ տալ ոչ պողպատյա տառեր և ոչ նրանց մայրերը՝ այլ միայն՝ կաղապարները: Եվ այսպես դեռ մնում էր իմ տենչանքն անկատար

¹ Այս մասին տես „The life and adventures of Joseph Emin“, Calcutta, 1918

Քայց բոլոր տեսակի կարոտություններին հասնողը կատարեց և իմ բազմամյա փափագը՝ ինձ մոտ ուղարկելով անակընկալ ժամում մի անգլիացի արհեստավոր, որ գալով և իմանալով իմ սրբտիս խորհուրդը, հանձն առավ շինել տալ այն, ինչ որ ես էի խնդրում»¹։

Խաղաղարյանը, հայկական տառերը պատրաստել տալուց և անհրաժեշտ տպագրական մեքենաներ ձեռք բերելուց հետո, Լոնդոնում հրատարակում է իր առաջին գիրքը։ Այս գիրքը պարունակում է նաև ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը՝ լատիներեն, ֆրանսերեն և անգլերեն։

Խաղաղարյանը, սակայն, երկար չի մնում Լոնդոնում, որովհետև այնտեղ իր հրատարակած հայերեն գրքերի համար սպառման շուկա գոյություն չունի, իսկ առանց դրան չէր կարող երկար պահել տպարանը և չէր կարող օգտակար լինել այն նպատակին, որին նվիրվել էր, ուստի հաջորդ տարին՝ 1781 թվականին, իր տպարանը տեղափոխում է Պետերբուրգ։

Մինչև XIX դարը հայկական գաղթօջախը Անգլիայում շատ փոքր է եղել։ Անգլիա են եկել առանձին հայ առևտրականներ, կատարել են իրենց առևտրական գործարքները և թողել վերագործել։ Առաջին գաղթօջախները Անգլիայում ստեղծվում են XIX դարի երեսնական թվականներին։ Պոլսեցի որոշ վաճառականներ, որոնք իրենց առևտրական գործարքներով կապված էին Անգլիայի հետ, սկզբում իրենց գրասենյակները և առևտրական գործակալություններն են ստեղծում Անգլիայի որոշ քաղաքներում, իսկ հետո՝ հիմնական բնակություն են հաստատում այնտեղ։ Մշտական բնակություն հաստատած հայ վաճառականների թիվն ավելանում է նույն դարի հիսուն-վաթսունական թվականներին։ Այժմ բնակություն հաստատողների մեջ սկսում են երևալ ո՛չ միայն Պոլսից, այլև Զմյուռնիայից և այլ վայրերից եկած վաճառականներ²։ Անգլիայում ստեղծված հայկական գաղթօջախները, մեզ ծանոթ մյուս գաղթօջախների համեմատությամբ, փոքր են եղել։ Երբ Մանչեստրում հայ բնակչության թիվը շատացել է, անհրաժեշտություն է առաջացել աղոթարան ունենալ և հոգևոր հովիվ հրավիրել։ Դա եղել է հայագետ Կ. Վ. Շահնազարյանը։

Շահնազարյանը, Մանչեստրում պաշտոնավարած տարիներին հրատարակել է «Երկրագունդ» անունով մի շաբաթաթերթ, որը

¹ Գ. Վ. Քեռզյան, Հովսեփ արքեպ. Արղուիսյան և հայ տպագրությունը Պուսաստանում (տե՛ս «Էջմիածին», 1954, IX, էջ 45—46)։

² Մուշեղ եպ., Մանչեստրի հայ գաղութը, Պոստոն, 1911, էջ 17։

փաստորեն առաջին հայ պարբերականն է անգլիական հողի վրա՝ «Երկրագունդ»-ը լույս է տեսել 1863—1864 թվականներին, ընդամենը երեսուն համար և փակվել¹։

«Երկրագունդ»-ը եղել է պահպանողական ուղղություն ունեցող թերթ և տեղին քննադատության է ենթարկվել Ստեփան Ոսկանի կողմից։

Հայ բնակչության թիվը Մանչեստրում ավելանում է XIX դարի 70-ական թվականներին։ Ուստի Մանչեստրի հայ համայնքը որոշում է փոքրիկ մատուռ կառուցել։

1875 թվականին Մանչեստրում հիմնվում է հայկական բարեգործական մի ընկերություն՝ իր առջև խնդիր դնելով՝ «Հայաստանի աղքատ դպրոցաց օգնել, հայ իրավանց պաշտպան կալ, ազգային օգտակար գործոց բարոյապես և նյութապես ըստ կարողության և արժան դատել հրատարակությունս ի ձեռին ունենալ»²։

XIX դարի ութսունական թվականներին փոքր է եղել նաև Լոնդոնի գաղթօջախը։ 1886 թվականին Մարսելի «Արմենիան» հրատարակել է լոնդոնաբնակ իր թղթակցի ուղարկած վիճակագրությունը, որից երևում է, որ Լոնդոնում մշտական բնակություն են հաստատած եղել ընդամենը 126 հոգի։ Լոնդոնի հայերը հավաքված են եղել աշխարհի բոլոր մասերից՝ Պոլսից, Զմյուռնիայից, Կալկաթայից, Ճավայից, Քեիլիսիից, Վանից, Ղարաբաղից, Բաղդադից, Պարսկաստանից և այլ վայրերից³։

Մանչեստրի, ինչպես և Լոնդոնի հայ գաղթօջախները նոր ժամանակներում հանդես են գալիս բավականին գործուն դերով հայկական հարցում՝ Բեռլինի կոնգրեսի նախօրյակին, երբ իրենց այցի է գալիս Նիդրլանդների Հայրիկը։ Մեծ աշխատանք է տարվում Անգլիայի քաղաքական շրջաններում, որպեսզի անգլիական դիվանագիտությունը Բեռլինի կոնգրեսում, հայկական հարցի քննության ժամանակ, բարյացակամ մոտեցում ցուցաբերի։ Լոնդոնի և Մանչեստրի հայկական շրջանների նախաձեռնությամբ կազմակերպվում են մի շարք գեկուցումներ հայ ժողովրդի մասին, դիմումներ են կատարվում դեկավար անգլիացի քաղաքական գործիչներին և այլն, սակայն այդ բոլորը, ինչպես հայտնի է, անցնում է ապարդյուն, որովհետև անգլիական դիվանագիտությունը նպատակ չի ունեցել

¹ Մուշեղ եպ. Մանչեստրի հայ գաղութը, Պոստոն, 1911, էջ 28—29։
² Նույն տեղում, էջ 28—29։
³ «Արմենիա», 1886, հունվարի 16։

ձեռք մեկնելու փոքրիկ, անպաշտպան ժողովրդին: Անգլիական բաղաբաղանությունը այդ ժամանակ անհրաժեշտ էր թույլ շտալ հայ ժողովրդին միավորվել ուսական հովանավորություն տակ, ուստի նա Բեռլինի կոնգրեսում բացասական դիրք գրավեց:

1888 թվականի հոկտեմբերի 12-ին Լոնդոնում կազմակերպվում է «Հայկական հայրենասիրական ընկերություն», որը նույն տարվա նոյեմբերի մեկից սկսում է հրատարակել իր պաշտոնական օրգանը՝ «Հայաստան» անունով: Շաբաթաթերթը հրատարակվում է հայերեն և ֆրանսերեն լեզուներով: Շարունակվում է նրա հրատարակությունը մինչև 1892 թվականը:

Անգլիայում լույս են տեսել հայկական մի շարք պարբերականներ, որոնցից կարելի է թվել «Ապտակ» երգիծական-բաղաբաղան միամսյա հանդեսը 1894—1896 թվականներին, «Մարտ» ամսաթերթը՝ 1897—1901 թվականներին, «Վաղվա ձայնը» ամսագիրը՝ 1898 թվականին, «Արշալույս» շաբաթաթերթը՝ 1899—1905 թվականներին և այլն:

Լոնդոնում տարբեր ժամանակներում հրատարակվել են պարբերականներ ֆրանսերեն և անգլերեն լեզվով: Դրանցից կարելի է մատնացույց անել հետևյալները. «L'Arménie» (1889—1905), «Le Hayastan» (1888—1892), «Ararat» թերթը (1917) թվականին և այլն:

Անգլիայի մի խումբ հայ երիտասարդների ջանքերով 1902—1907 թվականներին լույս է տեսել պատմական, բարոյա-կրթական բովանդակությամբ «Պատանի» հանդեսը:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և նրանից հետո, ոչ մեծ թվով գաղթական հայեր եկել և հասել են հեռավոր Բրիտանական կղզիները: Ըստ 1925 թվականի վիճակագրական տվյալների, Անգլիայի երբեմնի մի քանի հարյուր հոգուց բաղկացած գաղթօջախների բնակչությունը մեկեն հասել է երեք հազարի¹: Եկող գաղթականները բնակություն են հաստատել գլխավորապես Լոնդոնում, Մանչեստրում և փոքր թվով՝ նաև Լիվերպոլում:

Անգլիայի հայ գաղթավայրում նորագույն շրջանում ստեղծված հասարակական կազմակերպություններից կարելի է հիշել ՀՕԿ-ի մասնաճյուղը, որը կազմակերպել է 1925 թվականին Արամայիս Երզնկյանը՝ Լոնդոն այցելած ժամանակ²:

Հայ-գերմանական առնչումները և հարաբերու- թյունները:

Գերմանիայի հայ գաղթավայրը, իր գոյություն ունեցող ընթացքում, այնքան փոքր է եղել և այնքան աննշան դեր է կատարել սփյուռքահայ պատմության մեջ, որ կարելի էր և այն շրջանցել: Սակայն նկատի ունենալով, որ նորագույն շրջանում Գերմանիայում սովորող հայ ուսանողները այնուամենայնիվ սկսում են որոշ դեր խաղալ հայ հասարակական կյանքում, ուստի անհրաժեշտ համարեցինք նրա վրա կանգ առնել՝ ծանրանալով գլխավորապես հայ-գերմանական առնչումների և հարաբերությունների վրա:

Հայ-գերմանական հարաբերությունները սկսվել են ո՛չ թե տնտեսական հողի վրա՝ առևտրական կապերի միջոցով, ինչպես եղել է մյուս գաղթավայրերում, այլ դիվանագիտական հարաբերությունների ուղիով: Գերմանիայի Ֆրիդրիխ Շիկամուրուս թագավորը, երբ խաչակրաց արշավանքի գլուխ անցած 1190 թվականին մոտենում է Կիլիկիային, դիմում է Կիլիկիայի Լևոն իշխանին և առաջարկում միանալ արշավանքին, ճանապարհ տալ Կիլիկիայից անցնելու համար և ապահովել իր բանակը սննդամթերքներով: Պաշտոնական բանակցությունները Ֆրիդրիխ Շիկամուրուսի և Լևոն իշխանի դեսպանների միջև տեղի են ունենում 1190 թվականի հուլիսի 8-ին: Չնայած Լևոնը դաշնակցային կապերի մեջ էր գտնվում Սալահզեդդինի հետ, սակայն այդ չի խանգարում, որ նա ընդառաջի գերմանական թագավորի խնդրանքին և խոստանա աջակցել նրան:

Ի դեպ, խաչակրաց արշավանքների պատմությունը ուսումնասիրելիս, Մարքսի ուշադրությունից չի վրիպել Ֆրիդրիխի և հայոց իշխանի միջև կնքված այս համաձայնությունը: Նա այդ մասին հետևյալն է նշել. «Մորուքավորը (այսինքն՝ Ֆրիդրիխ Շիկամուրուսը—Ա. Ա.), առաջանում է մեծ ավարով, հետո գալիս է Բրիտանիայի հայաստան (Փոքր Հայաստան), այսինքն Կիլիկիա (ընդգծումները հեղինակինն է—Ա. Ա.): Հայերը, որոնք Սալահզեդդինի դաշնակիցներն էին, միաժամանակ ուղեկցում են գերմանացի խաչակիրներին՝ ոչ մի վնաս չպատճառելով նրանց»¹:

Ֆրիդրիխ Շիկամուրուսն ամեն կերպ աշխատել է սիրաշահել հայոց թագավորին, որպեսզի նա եռանդուն աջակցություն ցույց տա արշավանքին: Վարդան պատմիչի հաղորդած մի տեղեկություն

¹ «Ամերիկահայ հանրագիտակ», 1945, էջ 32—33:

² ՀՊՀԱ, ֆ. 178, № 414, էջ 3—5:

¹ Архив Маркса и Энгельса, т. V, Ленинград, 1938, стр. 169.

ինից երևում է, որ Ֆրիդրիխը նամակ է գրել ու հայտնել, որ ինքը և կենսական համար թագ և զգեստներ է բերել և ցանկանում է, որ նրան հայոց թագավոր օծի¹:

Ֆրիդրիխ Շիկամուրուքը, սակայն, չկարողացավ խոստացած թագը և թագավորական զգեստներն իր տիրոջը հասցնել, որովհետև հայ պատգամավորության հետ բանակցություններ վարելուց ընդամենը երկու օր հետո խեղդվեց գետում: Այդ խոստումը կատարեց նրա որդին՝ Հենրիկոսը՝ 1197 թվականին:

Գիվանագիտական բանակցությունները գերմանական թագավորների հետ շարունակվեցին հետագայում ևս: Հայտնի է օրինակ, որ Հեղի-Հեթումը՝ Ներսես Լամբրոնացու եղբայրը, Գերմանիա է մեկնել դիվանագիտական բանակցություններ վարելու համար: Գերմանիայի հետ դիվանագիտական բանակցություններ է վարել նաև Հեթում հայոց թագավորը:

Հայ դիվանագետների հետքերով Գերմանիա են սկսել գալ նաև Կիրիկիայի հայ առևտրականները: Այդ մասին են վկայում Հյուսիսային Գերմանիայում գտնված Կիրիկյան Հայաստանի հայկական դրամները²:

1375 թվականից, այսինքն՝ Կիրիկիայի հայ պետականության անկումից հետո, հայերի և գերմանացիների միջև խզվում են ոչ միայն դիվանագիտական, այլ առևտրական հարաբերությունները:

Հայ-գերմանական հարաբերությունների նոր շրջանը կապված է XVII—XVIII դարերի հետ: Այս ժամանակ է, որ հայ առևտրականները, մասնավորապես Նոր-Ջուղայի հայ խոջաները, Գերմանիայի սովորական հյուրերն են դառնում: Նրանք Գերմանիա էին գալիս ո՛չ թե բուն Հայաստանից, այլ հայկական գաղթավայրերից՝ Եգիպտոսից, Միջագետքից, Պարսկաստանից, Հնդկաստանից և այլ երկրներից: Հայ առևտրականները բերում էին մետաքս, թանկագին քարեր, համեմունք և արևելյան այլ ապրանքներ:

XVII դարում Նոր-Ջուղայում կազմված է մի ցանկ այն վայրերի, ուր լինում էին հայ խոջաները և առևտուր անում: Ահա այդ ցանկի մեջ հիշվում է նաև «Ալամանց երկիրը» (Հին հայկական մատենագրության մեջ «Ալաման» են կոչվել գերմանացիները):

Ռուսական արխիվներից հրատարակված մի շարք վավերագրերից երևում է, որ Նոր-Ջուղայի առևտրական ընկերությունը

1 Վարդան մեծ, Պատմութիւն տիեզերական, էջ 179:

2 Ղ. Ալիշան, Միսական, էջ 651:

XVII դարի 60-ական թվականներին բանակցություն է վարել ռուսական արքունիքի հետ և թույլտվություն ստացել Ռուսաստանի վրայով ապրանքներ տեղափոխել եվրոպական երկրները, այդ թվում՝ նաև Գերմանիա: Ըստ որում, հայ առևտրականները Ռուսաստանի վրայով Գերմանիա գնալու համար ունեցել են երկու ուղի՝ մեկը Նովոգորոդի, մյուսը Արխանգելսկի վրայով¹: XVII—XVIII դարերում Գերմանիայի հետ աշխույժ առևտրական հարաբերության մեջ էին գտնվում մանավանդ Ղրիմի և Լեհաստանի հայկական գաղթավայրի առևտրականները: Հայտնի է, որ կվովում հայ բնակչության մեջ ապրում էին մեծ թվով նաև գերմանացիներ, որոնք հաճախ գործակցում էին հայերի հետ տարանցիկ առևտրի ասպարեզում, հատկապես Գերմանիայի ուղու վրա:

XVIII դարում կային արդեն հայեր, որոնք մշտական բնակություն էին հաստատել գերմանական քաղաքներում: Հայտնի է օրինակ, որ հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչ Իսրայել Օրին մշտական բնակություն էր հաստատել Պֆալցի Կյուրֆուրստի ռեզիդենցիայում՝ Դյուսելդորֆում²:

XVIII դարի վերջերին հայ մելիքական շրջանները, ինչպես հայտնի է, Իսրայել Օրու միջոցով փորձեր են անում դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնելու Պֆալցի Կյուրֆուրստ Հովհան Վիլհելմի հետ և խնդրելու նրա օգնությունը՝ հայ ժողովրդին պարսկա-թուրքական լծից ազատագրելու համար:

Հայ վաճառականների երթևեկը Գերմանիա ավելի հաճախ է դառնում XVIII դարում: Առևտրական գործարք կատարող հայ վաճառականներ են հիշվում Համբուրգ, Ֆրանկֆուրտ, Բրիսլավ, Դրեզդեն, Լայպցիգ և Նյուրնբերգ քաղաքներում³: Ըստ Տավրենի տեղեկության, հայ վաճառականները Նյուրնբերգ քաղաքից գնել են զարգեղեն և պճնանքի իրեր⁴: Այիշանը առևտրական տեղեկագրերից քաղելով, հրապարակել է հայ առևտրական գործարքների ծավալը ցուցանշող հետևյալ տվյալները. եթե հայ առևտրականները 1824 թվականին Գերմանիայից գնել և թրփիսի ու Օդեսա են տեղափոխել 600 000 ֆրանկի ապրանք, ապա 1825 թվականին

1 Армяно-русские отношения в XVIII веке, стр. 43, 62 и другие.

2 Տե՛ս Էզով, Сношения Петра Великого с армянским народом աշխատությունը:

3 Ղ. Ալիշան, Միսական, էջ 461:

4 «Հանդես ամսորեա», 1897, էջ 26:

այդ թիվը հասնում է 1 000 000 ֆրանկի, իսկ 1826 թվականին բարձրանում է 2 800 000 ֆրանկի¹։

Մինչև XIX դարի վերջին քառորդը հայ-գերմանական առևճուռները և տնտեսական կապերը չնայած բավական զարգացած են եղել, սակայն հայերը Գերմանիայում գաղթօջախներ չեն ըստեղծել։ Այս ժամանակից հետո է միայն, որ հայ ուսանողները սկսում են սովորելու գնալ գերմանական բարձրագույն ուսումնական հաստատությունները, մնում են այնտեղ և հիմք դնում առաջին փոքրիկ գաղթօջախներին Գերմանիայում։ Սկզբնական շրջանում Գերմանիա ուսանելու գնացող հայ երիտասարդների թիվը շատ փոքր է եղել, իսկ հետագայում մեծացել է։

1860—1870 թվականներին հայ ուսանողներ են սովորել Լայպցիգի, Բոնի, Մյունխենի, Հալլիի, Դրեզդենի և Հայդելբերգի համալսարաններում։ Շուտով հայ ուսանողների թիվն այնքան է շատացել Գերմանիայում, որ անհրաժեշտություն է առաջացել հայ ուսանողական միություններ կազմակերպել։

Հայ ուսանողության առաջին կազմակերպությունը հիմնվել է 1885 թվականին Լայպցիգի համալսարանում։ Այդ կազմակերպությունը կոչվել է «Հայ ճեմարանական ուսանողական միություն» («Armenischer Akademischer Studentverein»)։

Այդ թվականներին Բեռլինը դեռ մեծ համարում չունեի որպես գիտամանկավարժական կենտրոն։ Միայն 1871 թվականից հետո, երբ նա դառնում է Գերմանիայի մայրաքաղաքը և այնտեղ են սկսում հավաքվել Գերմանիայի լավագույն գիտնականներն ու մանկավարժները, ու Բեռլինի համալսարանը համաշխարհային ճանաչում է ստանում, սկսվում է հայ ուսանողների հոսանքը դեպի այնտեղ։ Շուտով Բեռլինը դառնում է Գերմանիայում սովորող հայ ուսանողների կենտրոնը։

Առաջին հայ ուսանողական կազմակերպությունը Բեռլինում հիմնվել է 1896 թվականին։ Այս ընկերությունը, գրում է Մելիք Կարապոզյանը, «Վերին աստիճանի բազմագույն էր. կղերականներ ու արմատականներ, իդեալիստներ ու մատերիալիստներ, գաղափարականներ ու անձնականներ, «կոմարարներ», ու «հանգիստներ», «կեղծավորներ» ու «անկեղծներ» — սրանք բոլորն էլ միևնույն ընկերության անդամներ էին»²։

1 Ղ. Ալիշան, Միսական, էջ 461։

2 Գ. Մելիք Կարապոզյան, Գերմանիայի հայ ուսանողությունը, Քիֆլիս, 1901, էջ 52։

Բեռլինի ուսանողական այս կազմակերպությունը, գաղափարական տարածայնությունների հետևանքով, երկար կյանք չի ունենում։ 1897 թվականին նրանից անջատվում է ազատամիտ ուսանողների խումբը և նոր կազմակերպություն ստեղծում՝ «Մատերիալիստական ընկերություն» անունով։ Կազմակերպությունն իր առջև խնդիր է դնում «Ի մի գումարել մատերիալիստական աշխարհայեցողություն ունեցող ուսանողներին և մտքերի փոխադարձ շփումով պարզել այդ աշխարհայեցողության վերաբերող կետերը»։

1896—1897 թվականներին սկսում է հասունանալ Արևմտյան Եվրոպայի համալսարաններում սովորող հայ ուսանողության ընդհանուր կազմակերպություն ստեղծելու խնդիրը։ Նախապատրաստական որոշ աշխատանք կատարելուց հետո, 1897 թվականի ապրիլի 12—15-ին, Հայդելբերգ քաղաքում տեղի է ունենում Եվրոպայի հայ ուսանողության առաջին համագումարը, ուր և ըստեղծվում է միությունը։

Եվրոպայի հայ ուսանողական միության առաջին տեղեկագրում կազմակերպության անհրաժեշտության մասին հետևյալն է ասված. «Արդ, շատ բնական էր, որ այսպես զանազան վայրերում ցրված հայ ուսանողները պահանջ զգացին ճանաչել իրար, անձնական և ընկերական մտերիմ հարաբերություններ և ծանոթություններ ստեղծել, դեռևս ուսանողական նստարանների վրայից բարեկամական ձեռք մեկնել իրար, բանաստեղծի հետ «Եղբայր ենք մենք» գոչելով, համերաշխության ոգին զարգացնել։ Այս շատ բնական էր, որ հայ ուսանողը բարձրանալով իր անհատականից, եսականից, ջանար հասարակական առաքինություններով օգտրվելու և իր ընկերների հետ միանալով ձգտեր դեպի ընդհանուր իդեալները»¹։

Ճշտված տվյալներով, 1898/1899 ուսումնական տարում Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել են հայ ուսանողներ, որոնցից 27-ը՝ Բեռլինում, 11-ը՝ Լայպցիգում, 8-ը՝ Մյունխենում, 6-ը՝ Դարմշտադում, 8-ը՝ Հալլեում, 3-ը՝ Փրայբերգում, 2-ը՝ Դրեզդենում, և մեկը՝ Բրեսլավում։

1899 թվականին նույն քաղաքում հրավիրվում է Եվրոպայի հայ ուսանողական միության երկրորդ համագումարը, ուր և հաստատվում է միության կանոնադրությունը։ Կանոնադրության մեջ միության նպատակը հետևյալ կերպ է ձևակերպված. «Բարոյական և մտավոր հաղորդակցության մեջ դնել հայ ուսանողական խրմ-

1 Գ. Մելիք Կարապոզյան, Գերմանիայի հայ ուսանողները, էջ 59—60։

բերը և ուսանողներին, որանց իրար հետ անձնական ծանոթութուններ անելուն նպաստել և ընդհանուր իղբալներ արթնացնել ուսանողութեան մեջ»¹։

Գերմանական համալսարաններն են ավարտել հայ հասարակական-հրապարակախոսական բնագավառի մի շարք ականավոր գործիչներ՝ Գրիգոր Արծրունին, Աբգար Հովհաննիսյանը, Ավետիք Արասխանյանը և ուրիշներ։ Գերմանիայի հայագիտական դպրոցի սաներն են հանդիսացել ակադեմիկոսներ Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Կարո Մելիք-Օհանջանյանը և այլ գիտնականներ։ Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի պետական իրավունքի բաժնում է սովորել հայ ականավոր հեղափոխական Ստեփան Շահումյանը, որն իր ուսման տարիներին անձնական կապեր է ունեցել Բեբելի, Մերինգի և ուրիշ սոցիալ-դեմոկրատների հետ¹։

Գերմանիայում սովորող որոշ հայ ուսանողներ սկսում են ծանոթանալ մարքսիստական գրականության հետ և փորձեր են անում որոշ աշխատություններ գերմաներենից թարգմանել հայերեն։ Մարքսիստական գրականության առաջին թարգմանիչներից է հանդիսացել Հ. Աթաբեկյանը, որը հաստատվելով Գերմանիայի Շտուդգարտ քաղաքում, 1894 թվականին, մի քանի ընկերների հետ միասին, գերմաներենից հայերեն է թարգմանել «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և դիմել էնգելսին՝ առաջաբան գրելու համար։ Հայտնի է էնգելսի գրած պատասխանը Աթաբեկյանին։

1905 թվականին Գերմանիայի հայ ուսանողական միութեան մեջ պառակտում է առաջացել, նրա կազմից հեռացել են որոշ ուսանողներ՝ շցանկանալով հետևել նեղ ազգայնական գաղափարների։ 1910 թվականին միութեան VII համագումարում պառակտումն ավելի է խորանում, ուստի որոշում են ցրել միութունը։ Նրա գրամագլխի երեք քառորդը նվիրում են Տարոնի դպրոցին, իսկ 1/4-ը՝ «Ուսանող» անունով թերթին՝ շարունակելու հրատարակությունը։ Միութեան գրադարանի գրքերը բաժանում են հայկական դպրոցներին։

1914 թվականի հուլիսի 16-ին Բեռլինում կազմակերպվում է «Գերմանո-հայկական միութունը»։ Միութեան շերտ պաշտպան-

1 «Նորք», Երևան, 1924, էջ 125—126։

ներից ու նրա հիմնադիր անդամներից են եղել հայտնի հայասեր դոկտոր Լեպսյուսը, հայագետ պրոֆ. Հ. Մարկվարտը և այլ գերմանացիներ։ Հայերից անդամակցել են բանաստեղծ Ա. Իսահակյանը և այլ անձինք։ Ընկերությունը կոչով դիմել է գերմանացի մտավորականներին՝ անդամակցելու միութեանը, որը և, ըստ տեղեկությունների, լայն արձագանք է գտել գերմանացի գիտնականների, արվեստագետների և հասարակական գործիչների շրջանում։ Ընկերությունը հրատարակել է «Մեսրոպ» անունով մի հանդես՝ հայերեն և գերմաներեն լեզուներով։

Վերջերս, սակայն, հրապարակված գաղտնի փաստաթղթերից հայտնի դարձավ, որ հումանիստական այդ գովելի ձեռնարկն անգամ փորձել է օգտագործել գերմանական հետախուզությունը՝ իր գործակալները մտցնելով ընկերության կազմում¹։

Գերմանիայում կրթություն ստացած հայ ուսանողները վերագործել են իրենց բնակավայրերը և հաջողությամբ աշխատել այնտեղ։ Բացառություն է կազմել Անդրիաս Արծրունին, Գրիգոր Արծրունու եղբայրը։ Ավարտելով Պետերբուրգի համալսարանը նա գնացել է Գերմանիա՝ կատարելագործելու իր մասնագիտությունը Հայդելբերգի համալսարանում։ Անդրիաս Արծրունին մասնագիտանում է քիմիայի մեջ և 1875 թվականին համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի հրավիրվում Ստրասբուրգի համալսարանը՝ հանքաբանության ասիստենտի պաշտոնով և մնում այնտեղ մինչև 1877 թվականը։ Այնուհետև նա հրավիրվում է Բեռլինի համալսարանը՝ պրիվանտ-դոցենտի պաշտոնով և աշխատում այնտեղ մինչև 1883 թվականը։ 1884 թվականին աշխատանքի է հրավիրվում Ախենի բարձրագույն արվեստագիտության ուսումնարանը, ուր և մնում է մինչև իր մահը՝ 1898 թվականը։ Ըստ տեղեկությունների, նա գիտական բեղուն աշխատող է եղել. գերմաներեն լեզվով լույս է ընծայել ավելի քան 50 ուսումնասիրություններ, որոնք գիտական մեծ արժեք են ներկայացնում²։

Հայկական եղեռնի կապակցությամբ չի կարելի շնչել գերմանացի բարեմիտ մի շարք մտավորականների արտահայտած արդարացի վայրույթը Թուրքիայում կատարած վայրագությունների նկատմամբ, որին մեղսակից են եղել նաև գերմանական իշխա-

1 Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ համաշխարհային I պատերազմի նախօրյակին և նրա պատերազմի տարիներին, Երևան, 1946, էջ 139—141։

2 «Բազմավեպ», 1898, 592—593։

նությունները: Մեծ է եղել մասնավորապես դոկտոր Լեպսյուսի գործունեությունը, որը մի շարք աշխատություններ է գրել և մերկացնող հարյուրավոր վավերագրեր հրատարակել: Լեպսյուսը, ըստ տեղեկությունների, Սիրիայում 400 հայ որբերի որբանոց է պահել և բարյացակամ դիրք է ունեցել Սովետական Հայաստանի նկատմամբ ու մտադիր է եղել հայ որբերին իր ծախսով տեղափոխելու Հայաստան¹:

204-ի պաշտոնական ներկայացուցիչ Կարեն Միբայելյանը 1925 թվականին շրջագայել է Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ այդ թվում՝ նաև Գերմանիայում: 204-ի կենտրոնական վարչության անունով 1925 թվականի նոյեմբերի 29-ին գրած իր զեկուցագրում նա Գերմանիայի հայ գաղթավայրի մասին հետևյալ տեղեկություններն է հաղորդել: Գերմանիայի հայ գաղթավայրը մեծ չէ՝ բաղկացած է այն ընդամենը 400—500 հոգուց, որոնք կենտրոնացված են Բեռլինում: Հայ բնակչության մեջ կան մանր առևտրականներ, ուսանողներ և ազատ պրոֆեսիայի տեր մարդիկ: Բարեկեցիկ վիճակի մեջ գտնվող հայերի թիվը շատ քիչ է: Բեռլինում կազմակերպվել է 204-ի մասնաճյուղ, որին անդամագրվել են սովետական օրենսդրության ունեցող հայերը: Գաղթավայրի հասարակական ներքին կյանքը գտնվում է խամրած վիճակում²:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո ևս Գերմանիայի փոքրիկ գաղթավայրը մնացել է նույն խղճուկ վիճակում: Գերմանիայի հայ բնակչության հոգևոր հովիվի էջմիածին ուղարկած մի զեկուցագրից երևում է, որ համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, չնայած տեղաբնակ հայերը մարդկային մեծ զոհեր չեն տվել, սակայն նյութական մեծ վնասներ են կրել: Զեկուցագրից երևում է, որ ծանր վիճակում են գտնվել հատկապես Գերմանիա եկած նորեկ հայ գաղթականները³:

Հայերը Շվեյցարիայում:

Պատմական վավերագրերից երևում է, որ առանձին հայ առևտրականներ Շվեյցարիայում եղել են XVII—XVIII դարերում, սակայն նրանք մշտական բնակություն չեն հաստատել. զանգվածային հայ գաղթականություն երբեք մուտք չի գործել Շվեյցարիա և այնտեղ սովոր հայկական գաղթօջախներ չեն ստեղծվել:

XIX դարի երկրորդ կեսում հայ երիտասարդության մեջ, ինչ

1 2ՊՁԱ, ֆ. 178, № 422, էջ 14:

2 Նույն տեղում:

3 2ՊՁԱ, կաթողիկոսական արխիվ, նորագույն ֆոնդ:

պես ասել ենք, բուռն ձգտում է առաջանում սովորելու գնալ Արևմտյան Եվրոպայի երկրները¹, մասնավորապես՝ Ֆրանսիայի, Գերմանիայի և Շվեյցարիայի համալսարանները: Եթե արևմտահայ երիտասարդության նախասիրությունը եղել է Ֆրանսիան, իսկ արևելահայերինը՝ Գերմանիան, ապա Շվեյցարիան հանդիսացել է այն երկիրը, ուր ուսանելու են եկել ինչպես արևելահայ, այնպես և արևմտահայ ուսանողությունը²:

Ըստ տեղեկությունների, հայ ուսանողությունը ավելի շուտ է սկսել հաճախել Շվեյցարիա, քան Գերմանիա: 1877 թվականին Շվեյցարիայում սովորելիս են եղել 31 հայ ուսանողներ, որոնցից 18-ը՝ ժնևում, 7-ը՝ Յյուրիխում և 6-ը՝ Լոզանում³: 1900 թվականին Շվեյցարիայում սովորող հայ ուսանողների թիվը հասել է 51-ի:

Տեղեկություններ կան այն մասին, որ 1872 թվականին Շվեյցարիայի Յյուրիխ քաղաքում հայ ուսանողները, վրացի և կովկասցի մյուս ուսանողների հետ համատեղ կազմել են Կովկասյան ուսանողների խմբակ՝ «Յարմո» անունով⁴: Հետագայում Շվեյցարիայի հայ ուսանողները մտել են Եվրոպայի հայ ուսանողության միության մեջ:

Շվեյցարիայում ուսանած հայ ուսանողների մեջ եղել է մեկը, որն արտակարգ հաջողությամբ ավարտելով Յյուրիխի համալսարանը, մնացել է նույն համալսարանում իբրև դասախոս և համաշխարհային համբավի է տիրացել:

Խոսքը վերաբերում է պրոֆեսոր-դոկտոր Հարություն Տիգրանի Արելյանցին: Նա ծննդյամբ լոռեցի է, Վարդաբլուր գյուղի շքավոր բնտանիքի զավակ: Նախնական կրթությունը ստանում է գյուղական վարժարանում, հետո շարունակում է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում: 1864 թվականին ավարտում է Ներսիսյանը «գերազանց» գնահատականով և, որպես խոստումնալից երիտասարդ, իրավունք ստանում՝ բարեգործական կտակով գործուղվել Եվրոպա՝ համալսարանական կրթություն ստանալու համար: Մանկավարժ դառնալու ցանկությամբ, նա սկզբում հաճախում է Հայդելբերգի համալսարանի բնագիտության բաժինը՝ միաժամանակ,

1 Գ. Մելիք-Կարազեղոյան, Գերմանիայի հայ ուսանողությունը, էջ 10:

2 Տեղեկագիր Եվրոպայի հայ ուսանողության, էջ 20:

3 «Մշակ», 1902, 10 ապրիլի:

4 А. Снегирева, Революционные организации груз. народников, документы, стр. 24—26.

ընդհանուր բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերելու նպատակով, դասախոսություններ լսում նաև նույն համալսարանի փիլիսոփայության, տրամաբանության և հոգեբանության բաժիններում: Նյութական ծանր պայմաններում, Հայդելբերգի համալսարանը չավարտած, անցնում է Շվեյցարիա և շարունակում իր ուսումը Ցյուրիխի համալսարանում՝ նպատակ դնելով մասնագիտանալ բնագիտության մեջ: 1872 թվականին, 23 տարեկան հասակում, նա այդ համալսարանի պրոֆ. Վիլիգենտասի մոտ քննություն է տալիս և ներկայացնում իր դոկտորական դիսերտացիան: Ուսուցիչը տեսնելով նրա արտակարգ ընդունակությունները, լոռեցի երիտասարդին պահում է իր մոտ ասիստենտի պաշտոնով: Եվ այսպես պարագաներն այնպես են դասավորվում, որ Հարուստներ չի կարողանում վերադառնալ հայրենիք՝ ծառայելու մատաղ սերնդի դաստիարակությանը: Ցյուրիխի համալսարանում նա շուտով ստանում է պրոֆեսորի կոչում և ավելի քան 40 տարի դասախոսում այնտեղ՝ ղեկավարելով քիմիագիտության ամբիոնը: Դասախոսական աշխատանքներից բացի, Ցյուրիխում նա վարում է նաև հասարակական մի շարք աշխատանքներ, այդ թվում՝ տեղի հայկական փոքրիկ գաղթօջախի պատվավոր նախագահի պարտականությունը:

Պրոֆ. Աբելյանցը Ցյուրիխի համալսարանում քիմիագետ մասնագետներ պատրաստելուն զուգընթաց, կատարում է գիտահետազոտական մեծ աշխատանք: Նա հրատարակել է քիմիագիտությանը նվիրված մի շարք աշխատություններ, որոնցից մեկը՝ «Առաջնորդ որակական անալիզի», մինչև 1920 թվականը հրատարակվել է 25 անգամ: Նրա ղեկավարած լաբորատորիայում մշակվել և գիտության սեփականությունն են դարձել իր և իր աշակերտների բազմաթիվ գյուտեր: Պրոֆ. Աբելյանցը զբաղվել է նաև նավթի այրման հարցի ուսումնասիրությամբ և ստեղծել ջերմությունը չափելու հատուկ սարք, որ գիտության մեջ հայտնի է հենց իր իսկ անունով:

Աբելյանցը մահացել է 1921 թվականի հոկտեմբերի 1-ին: Ցյուրիխի համալսարանի ռեկտորը իր դամբանական խոսքում ցավով նշել է, որ Աբելյանցի թաղումով Ցյուրիխի համալսարանը «Հողին է հանձնում իր կարևոր հողակտորը»¹:

Աբելյանցը չի նմանվել բարձր համբավի հասած և մեծահա-

1 Տ. Գ. Տեմիրեյան, Պրոֆ. դոկտ. Հարուստներ Տիգրան Աբելյանց (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1922 թ., էջ 189):

րուստ այն մարդկանց, որոնք մոռանում են իրեն ծնող ժողովուրդը: Սիրելով Շվեյցարիան՝ իր երկրորդ հայրենիքը, և նրան սիրահոժար տալով իր ամբողջ գիտելիքները, Աբելյանցը կապված է մնացել նաև իր ծննդավայր հայրենիքի հետ: Նա երկու անգամ այցելել է Հայաստան, բարձրացել է մեկ անգամ Արարատի գագաթը և իր տպավորությունները հրատարակել եվրոպական մի շարք թերթերում: Նա հանդիսացել է տեղի գաղթավայրի հետ կապված շատ ձեռնարկների նախաձեռնողը և ղեկավարը շվեյցարական հողի վրա: Շվեյցարական կառավարության ներկայացուցիչը իրավացի նշել է, որ «Թեև Աբելյանցը շատոնց շվեյցարացի էր, բայց ոգով միշտ հայ էր մնացած»²:

Շվեյցարիայի ժնև քաղաքի հետ է կապված հնչական կուսակցության հիմնադրումը, որն իր սկզբնական շրջանում կոչվել է «Հայ սոցիալ հեղափոխականների կազմակերպություն»²: Կուսակցության հիմնադիրներն են հանդիսացել մի խումբ կովկասահայ ուսանողներ: Ղեկավարներից ոմանք (Ա. Նազարբեկ, Մ. Նազարբեկ, Ռ. Խանազատ), արտասահմանում շփվելով ռուս և եվրոպական սոցիալ-դեմոկրատների հետ, իննսունական թվականների սկզբներում հայերեն են թարգմանել Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի մի քանի աշխատությունները:

XIX դարի վերջերին ժնևում փորձեր է արվել տեղի հայկական փոքրիկ համայնքի համար հայկական դպրոց բաց անել: Այդ գործի նախաձեռնողն է հանդիսացել Պոլսի նշանավոր մանկավարժ Ռեթեոս Բերբերյանը: Նա հայկական դպրոց է բացում 1896 թվականին, սակայն, նյութական միջոցներ չունենալու պատճառով, չի կարողանում երկար պահել և մեկուկես տարի հետո հարկադրված է լինում փակել այն:

Ռոթեոս Բերբերյանի գործի շարունակողն է հանդիսացել սեբաստացի Մ. Նալբանդյանը: Նա կողմնում բաց է անում գիշերօթիկ մի դպրոց՝ նպատակ ունենալով այն դարձնել յուրատեսակ նախապատրաստական վարժարան՝ հեշտացնելու համար հայ ուսանողների մուտքը շվեյցարական համալսարանները: Մ. Նալբանդյանը կողմնում հրատարակում է նաև «Գիտություն» անունով պատկերազարդ ամսաթերթ, որն առաջին հայկական պարբե-

1 Նույն տեղ, էջ 190:

2 Ան, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ. Փարիզ, 1934, էջ 145—193:

րականն է շվեյցարական հողի վրա: Ամսագրի հրատարակության առթիվ տպագրված հայտարարության մեջ ամսագրի նպատակների վերաբերյալ հետևյալն է ասված. «Լոզանի արևելյան կամ Հայկազյան գիշերօթիկ վարժարանն առաջիկա հուլիսի 1-ին իր երկրորդ տարին կթևակոխե: Այս առիթով դպրոցիս վարչությունը, խրախուսված ամեն կողմեն ընդունված քաջալերական թանկագին ցույցերեն, կուզե քայլ մ'ևս առաջանալ իր գծած ճամփուն մեջ և նույն ամսի վերջին սկսյալ կանոնավորապես հրատարակել... Գիտության անունով շքեղորեն պատկերազարդված ամսաթերթ մը, որ նպատակ պիտի ունենա տարածել և ժողովրդականացնել գիտությունը և անոր գեղեցիկ, օգտակար և գործնական կիրառումները հայ ժողովրդի ամեն խավերուն մեջ»¹: Ամսագրում, իրապես, հանրամատչելի գիտական բովանդակությամբ շատ հոգվածներ են հրատարակվել:

1907 թվականին հայ ուսանողները Լոզանում հիմնում են «Արմենիա» անունով հայ ուսանողական միություն, իսկ 1914 թվականին՝ «Տեղեկատու բյուրո»:

1903 թվականին «Հայկական սոցիալիստական դեմոկրատական բանվորական կազմակերպությունը» ժնկում հրատարակում է «Սոցիալիստ» անունով մի ամսագիր, որը երկար կյանք չի ունենում²:

1904 թվականի օգոստոս ամսին ժնկում Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսնում Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը» հայերեն լեզվով: Թարգմանության փորձեր 1901—1903 թվականներին կատարվել են նաև Թբիլիսիում և ժնկում (վերջինս՝ արևմտահայերեն), սակայն դարձյալ չեն հրատարակվել³:

Համաշխարհային I պատերազմից առաջ հայկական գաղթօջախ է եղել ժնկում: Հայ բնակչության թիվն այնտեղ հաշվել են մոտ 200 հոգի: Գաղթօջախն ունեցել է իր «Գաղութային միությունը», որը համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում և նրանից հետո՝ մոտիկ ժամանակներում, փայլուն գործունեություն է

1 Ն. Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բնութագրաֆիա, հ. II, էջ 37:
2 Տե՛ս Ս. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928:
3 Ք. Ավդալբեկյան, «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունները 1887-ից մինչև 1924 թ. (տե՛ս «Վերելք», Երևան, 1924, № 4—5, էջ 116—121):

ունեցել: Գաղթօջախում գոյություն է ունեցել «օգնության սնդուկ»՝ ժնկում ապրող և միջոցներից զուրկ հայերին օգնելու համար¹:

1920 թվականին ժնկի գաղթօջախն սկսվել է կազմալուծվել՝ հայ բնակչության մի մասի հեռանալու հետևանքով: «Գաղութային միության» վարչությունը ևս, տիրող անտարբերության մեջ, անգործության է մատնվել: Վերակառուցման փորձեր են արվել 1928 թվականին. ժնկում կազմվել է հայ բնակչության նոր միությունը, որին անդամակցել են 60 հոգի, ընտրվել է ղեկավար վարչություն:

Շվեյցարիայի մտավորականներից շատերը իրենց բողոքի ձայն են բարձրացրել Թուրքիայում հայկական կոտորածների առիթով: 1896 թվականին Շվեյցարիայի մի քանի քաղաքներում կազմակերպվել են «Հայասիրաց ընկերություններ»: Այդ ընկերությունների գործուն անդամներից է եղել Քոաֆթ Բոնաուր, որը բազմաթիվ հրատարակային դասախոսություններ է կարդացել հօգուտ հայ ժողովրդի պաշտպանության:

Համաշխարհային առաջին պատերազմից հետո Շվեյցարիայի «Հայրենասիրաց ընկերությունը» Պոլսում բաց է արել հայկական որբանոց, որը 1920 թվականին փոխադրել է Շվեյցարիա և տեղավորել ժնկի ու Լոզանի միջև եղած Բընեյ կոչվող մի գյուղում: Որբերի թիվը եղել է 40 հոգի: Որբանոցին կից բաց է արել նաև նախակրթարան: 1924 թվականին Սիրիայի և Լիբանանի որբանոցներից, ինչպես և Պոլսից, էգրիներից, և Բուխարեստից այս որբանոցն են բերվել նոր հայ երեխաներ և Բընեյի հայ որբերի թիվը հասել է 100-ի:

Շվեյցարիայի «Հայասիրաց ընկերությունը» Շամպելի կոչվող վայրում բաց է արել հայկական կոլեջ՝ ուսումնական այնպիսի ծրագրով, որ նախակրթարանն ավարտող հայ երեխան առանց գժվարության կարողանա ընդունվել Շվեյցարիայի համալսարանները:

Հայ-իսպանական հարաբերություններ: Հայերը Իսպանիայում երբեք կայուն գաղթավայր չեն ստեղծել: Հայ գաղթավայրերի պատմության կապակցությամբ հնարավոր է միայն խոսել հայ-իսպանական առնչումների և դիպվածային հարաբերությունների մասին: Ըստ որում, այդ առնչումները և հարաբերությունները շնայած երբեմն եղել են սերտ, բայց պատահական բնույթ են կրել: Նրանք, համեմատաբար, ավելի ունեցել

1 «Ֆրանսահայ տարեգիրք», 1927 թ., էջ 281—286:

են տնտեսական հարաբերությունների բնույթ, քան քաղաքական և մշակութային:

Հայ-իսպանական հարաբերությունների հնագույն շրջանի պատմությունը թանձր խավարով է ծածկված: Կան երկու ժողովուրդների ազգակցության հետ կապված որոշ առեղծվածներ, որոնց լուծման համար պատմական սկզբնաղբյուրները հիմքեր չեն տալիս: Ինչպե՞ս բացատրել իսպանական լեզվի մեջ հայկական որոշ բառերի առկայությունը, որոնք մատնացույց են անում լեզվաբաններից ոմանք¹: Հարցն ավելի է բարդանում, երբ նկատի ենք ունենում այդ երկու ժողովուրդների իրարից հեռու գտնվելը:

Հայ հնագույն մատենագրության մեջ Իսպանիան առաջին անգամ հիշվում է Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի մեջ: Շիրակացին Իսպանիան սահմանագծում է հետևյալ կերպ. արևմուտքից և հյուսիսից՝ օվկիանոսն է, արևելքից՝ Պյուտիսյան լեռները, իսկ հարավից՝ Հունական ծովը: Ըստ Շիրակացու տեղեկության, Իսպանիան բաժանվում է երեք մասի, որոնք ունեն շատ քաղաքներ և գավառներ²: Հայ գիտնականը մի այլ անգամ Իսպանիան հիշում է իր պատմական աշխատության մեջ՝ գիր ու գրականություն ունեցող երկրների շարքում³:

Հայ-իսպանական առնչումները գործուն բնույթ են ստացել միայն միջին դարերում, խաչակրաց արշավանքների ժամանակ: Իսպանացիները, որ խաչակրության եռանդուն մասնակիցներ էին, հազարներով եկել են Կրիկիայի Հայաստան, շփվել հայերի հետ, օգտվել տեղացիների աջակցությունից և հյուրասիրությունից ու բարեկամական հարաբերություններ հաստատել նրանց հետ:

Խաչակրության այս շրջանում էլ հաստատվում են հայ-իսպանական առևտրական գործուն հարաբերություններ: Մեզ հասած պատմական վավերագրերից երևում է, որ XIII դարի երկրորդ կեսից սկսած իսպանական նավերը հաճախ են սկսում խարիսի ձգել Կրիկիայի նավահանգիստներում⁴:

Պատմական այդ նույն աղբյուրից հայտնի է, որ Արագոնիայի թագավորը 1293 թվականին դիմել է Կրիկիայի հայոց թագավորին՝

1 «Հայաստանյայց եկեղեցի», 1941, էջ 373:

2 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 341:

3 Նույն տեղում, էջ 360:

4 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 457:

րին՝ խնդրելով իսպանացիներին Կրիկիայում տալ այն արտոնությունը, ինչ վայելում են ճենովացիները և վենետիկացիները: Եվ Ալիշանը աներկբայելի է համարում, որ Արագոնի Հակոբ II թագավորի և Հեթում II-ի միջև կնքված է եղել առևտրական պայմանագիր, ու իսպանացիները իրավունք են ստացել Կրիկիայում ազատ առևտուր անելու, ունենալու այնտեղ իրենց պաշտոնական մշտական ներկայացուցիչը (պայլը) և այլն, թեպետ այդ դաշնագիրը մեզ չի հասել:

Օշինի թագավորության տարիներին Կրիկիայի և Իսպանիայի միջև փորձեր են կատարվում հաստատելու նաև քաղաքական հարաբերություններ: Այդ տեղի է ունեցել հետևյալ իրադրության մեջ: XIV դարի առաջին քառորդից սկսած Կրիկիայի հայկական արքունիքը, նեղվելով եգիպտական սուլթանության կողմից, սկսում է իր հայացքը դարձնել դեպի Արևմուտք, այդ թվում նաև՝ Իսպանիա: Օշինը տարված է եղել խաբուսիկ այն հույսերով, որ քրիստոնյա Եվրոպան օգնելու է Կրիկիային՝ պաշտպանվելու եգիպտական սուլթանության հարձակումներից:

1375 թվականին Կրիկիան, ինչպես հայտնի է, չկարողացավ դիմանալ հոր եգիպտական զորաբանակների հարվածներին. եգիպտացիները հաղթանակ տարան, մտան Կրիկիա և գերեցին Կրիկիայի հայոց վերջին թագավորին՝ Լևոն Լուսինյանին: Պետք է ասել, որ Բարսելոնիայի և Կաստիլիայի քաղաքական շրջանները այդ ժամանակ ակտիվ մասնակցություն են ցուցաբերել եգիպտական սուլթանի մոտ գերի ընկած Կրիկիայի հայոց թագավորի ազատագրության գործում¹:

Սկսած XIII դարից, հաճախ են հայ-իսպանական առնչումներ տեղի ունենում Մեծ Հայքում: Այդ ժամանակ Արևելքում, ինչպես հայտնի է, հաստատվել էր Ֆրանկիսկյան միաբանությունը, որի մի ճյուղը մուտք էր գործել նաև Հայաստան: Միաբանության մեջ մեծ թիվ էին կազմում իսպանացիները²: Իսպանացի քարոզիչներից ոմանք, քարոզչական աշխատանքում հաջողություն ունենալու համար, հայերեն են սովորել, ուսումնասիրել են հայկական մատենագիտությունը և մի շարք թարգմանություններ կատարել:

Աղթամարցի մի գրիչ 1476 թվականին իր ընդօրինակած ձեռագիր հիշատակարանում պատմում է, որ ինքը և իր քեռին գնա-

1 Կ. Բամաջյան (տե՛ս «Բանասեր», 1905, էջ 71):

2 Մ. Օրմանյան, Ազգապատմ, II հ., էջ 1714—1715:

ցել են Հոռմ, մի տարի մնացել են այնտեղ, այնուհետև իր քեռին «Ելեալ գնաց ի Սպաննայ և ի Լուրիկէ, որ է եզր աշխարհիս»:

XV դարում Իսպանիա՝ այցելած հետաքրքիր անձնավորություններից է հանդիսացել Մարտիրոս Երզնկացին: Յանկուսթյուն ունենալով պատել աշխարհներ, ուսումնասիրել տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև իսպանացիների կյանքն ու կենցաղը, նա ճանապարհ է ընկնում 1489 թվականի հոկտեմբերի 29-ին դեպի Արևմտյան Եվրոպա: Լինում է Իտալիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում և Իսպանիայում ու 6 տարի մի քանի ամիս ճանապարհորդելուց հետո վերադառնում հայրենիք: Իր թողած ուղեգրության մեջ նա հայտնում է, որ ինքը հասել է մինչև «Պիսկա քաղաքը՝ յեզր ծովում»: Այնտեղից անցել է Սան Սեբաստիա, «Մեծն Փորթընկալթ» և հասել, իր բաներով ասած, Իսպանիայի վերջին՝ սահմանը՝ «յեզր աշխարհիս»: Իսպանիայում դռնված ժամանակ նա հանդիպում է ունեցել Իդաբելյա թագուհու հետ: Այնուհետև նա միացել է իսպանական ծովագլխների մի խմբի, որոնք բաց օվկիանոս են դուրս եկել նոր երկրներ փնտրելու համար¹:

Նման մի այլ հայ ճանապարհորդի մենք հանդիպում ենք XVI դարում: Դա Փիրզադե անունով սյունեցի մեկն է, Որոտան գավառից: 1586 թվականին նա ճանապարհորդել է Արևմտյան Եվրոպայում, հասել է մինչև Իսպանիա: Փիրզադեն թողել է իր համառոտ ուղեգրությունը, ուր Իսպանիայի մասին խոսելիս հիշում է Մադրիդ քաղաքը²:

Պետք է ասել, որ տարբեր ժամանակներում Հայաստան եկած իսպանացի ճանապարհորդները կամ պաշտոնական պատգամավորները որոշ հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանի նրկատմամբ: Դրա լավագույն ակադեմիկոս Կլավիտոյի՝ սպանացի այդ նշանավոր ճանապարհորդի՝ Հայաստանի ներքին կյանքին, նրա քաղաքական և տնտեսական վիճակի մասին իր ուղեգրությունների մեջ հատկացրած ծավալուն գլուխներն են, որոնք պատմական բացառիկ արժեք են ներկայացնում:

Իսպանիայի հետ դիվանագիտական բանակցություններ վարելու համար հայ բանագնացներ են եկել ո՛չ միայն Պարսկաստանից, այլև Վրաստանից: Այսպիսի բանագնացներից մեկը Իսպանիայի Փիլիպոս թագավորին է բերել Քարթլիի Սիմեոն թագա-

վորի 1596 թվականի օգոստոսի 14-ի նամակը՝ հայերեն և հունարեն լեզուներով: Սիմեոն թագավորն այդ նամակում հայտնում է, որ երկար ժամանակ է, ինչ Անդրկովկասի քրիստոնյա բնակչությունը նեղված է թուրքերից և ակնդետ սպասում են քրիստոնյա Արևմուտքի օգնությանը, այժմ ինքը գրություն է ստացել «ցեղար իմպերատորից», ուր նա իր սերն ու միաբանությունն է հայտնում, ուստի ինքը խնդրում է Փիլիպոսից, որ վերջինս աջակից հանդիսանա կայսրին, շինի հանկարծ վերջինս փոխի իր մտադրությունը և «թուրքի հետ պարզություն (այսինքն՝ միաբանություն—Ա.Ա.) անի»: Ինչ վերաբերում է իրեն, շարունակում է Սիմեոնը, ապա ինքը, Կախեթիայի Ալեքսանդր թագավորը և Պարսկաստանի Շահաբասը «երեքեանս միաբանեցաք, և խորհուրդ թատպիր արարաք, որ մեք այլ հիմակուց ի վեր առաջ գանք և զթուրքին գլուխս կոտրեմք»³:

Բանակցություններն, անշուշտ, ինչպես ճիշտ նկատել է ակադ. Ա. Հովհաննիսյանը, վարվել են հակաթուրքական լիգայի կազմակերպման նպատակով, որին պետք է միանային Պարսկաստանը, Ռուսաստանը, Իտալիան, Իսպանիան և եվրոպական այլ երկրներ²:

Մեզ հայտնի է Հայաստանի նկատմամբ իսպանական արքունիքի ցուցաբերած հետաքրքրության այլ փաստ ևս: 1610 թվականին Պարսկաստանի վրայով էջմիածին է գալիս իսպանական թագավորի պատգամավորությունը, որը պաշտոնական հանդիպումներ է ունենում և բանակցություններ վարում Մելիքսեդեկ կաթողիկոսի հետ: Իսպանական պատգամավորության և Մելիքսեդեկ կաթողիկոսի հանդիպումների մասին հայտնի է դառնում պարսկական արքունիքում: Շահաբասը զայրացած կարգադրում է Երեկական արքունիքում: Շահաբասը զայրացած կարգադրում է Երեկական արքունիքում՝ բանտարկել կաթողիկոսին և շարժարանքի ենթարկել մեծագույն դաժանությունը՝ «իր իսկ մարմնի միսը կտրելով՝ ուտեցնել իրեն»³: Հայ որոշ խոշաների միջնորդության շնորհիվ է, որ կաթողիկոսը մեծ տուգանքով ազատվում է Շահաբասի ձեռքից: Պողոս V պապին 1613 թվականի մարտի 22-ին ուղարկած նամակում Մելիքսեդեկ կաթողիկոսը գանգատվել է, որ իսպանական պատգամավորությանը ցույց տված ընդունելությունը շատ ծանր նստեց իր վրա՝ հազիվհազ կարողացավ ազատել իր գլուխը դահճի սրից:

1 Macler Fr., Notes de manuscrits arméniens, REA, p. 71:

2 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, II դիրք, էջ 472:

3 Առաֆել Դարիժեցի, էջ 207:

1 Տե՛ս ՄԱՄ, № 3488 ձեռագիր, ք. 170 ք:

2 Ծույն տեղում, Անհատական արժիվ Տիրաթ վարդապետի, № 122:

Մինչ այդ՝ 1602 թվականին, Մելիքսեդեկ կաթողիկոսը, Հովհաննես Տերզնեցու միջոցով, Կղմես VIII պապին է ուղարկած եղել մի նամակ, ուր խոսելով հայ ժողովրդի ծանր վիճակի մասին, «Ընդ երկաթէղեն լծով անհնարին բռնութեան թուրքաց», խնդրել է կարեկից լինել եվրոպական գաղթավայրերում գտնված հայության, մասնավորապես հայ առևտրականների նկատմամբ, նրանց վրա խորթ աչքով շնայել և հայ վաճառականների իրավունքը հավասարեցնել եվրոպացի առևտրականների իրավունքներին ու մաքսը գանձել տասը տոկոսի չափով և ոչ ավելի¹: Պապը, ստանալով այս նամակը, հատուկ գրությամբ դիմել է Իսպանիայի Փիլիպոս թագավորին և հանձնարարել նրան հայ առևտրականների նկատմամբ ցուցաբերել բարեկամական վերաբերմունք²: Մելիքսեդեկ կաթողիկոսի՝ պապին դիմելը, իսկ վերջինս՝ իսպանական թագավորին, պատահական չէր. իսպանացիները և պորտուգալացիներն այդ ժամանակ գրավել էին արևելյան Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի բոլոր կարևոր նավահանգիստները, ուր և հաստատվել էին հայ խոջաները և առևտրական լայն գործունեություն ծավալել: Մելիքսեդեկ կաթողիկոսը, անշուշտ, կատարած է եղել խոջաների առաջադրանքը:

XVII—XVIII դարում Իսպանիայի սովորական հյուրերն էին հայ բազմաշրջիկ խոջաները, որոնք գալիս էին հայկական տարբեր գաղթավայրերից՝ Նոր-Ջուղայից, Հնդկաստանից, Լեհաստանից, Քուրբիայից և այլ վայրերից: Այլշանը, պատմական աղբյուրներից բաղելով, հիշում է Իսպանիա այցելած բազմաթիվ հայ մարդկանց անուններ, որոնք եկել են իսպանական առևտրական կենտրոնները (Քադիս, Սևիլիա, Բարսելոնիա, Մադրիդ) գլխավորապես առևտրի համար:

Հայ առևտրականները ոչ միայն ճանաչում էին իսպանացիներին, այլև գործակցում էին նրանց հետ և հաճախ նրանց մոտիկ կոմպանիոններն էին դառնում: Պատահական չէ, որ XVII դարից սկսած հայ խոջաներին մենք հաճախ ենք սկսում տեսնել բուն Իսպանիայի տերիտորիայի վրա²:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս դարերում զանազան նպատակներով եկած հայերը մեծ թիվ չեն կազմել և մշտական բնակություն չեն հաստատել Իսպանիայում:

1 Ն. Ա. Ալիևյան, Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոս և իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 47:

2 Զախարիա Ազուլցի, Ժամանակագրութիւն, էջ 38:

XVII դարի հայ իսպանական հարաբերությունների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ իսպանական կառավարությունը նյութական որոշ օգնություն է ցույց տվել Գոալում հայկական դպրոցի հաստատման գործին¹:

Տարբեր ժամանակներում Իսպանիա են այցելել և այդ մասին հիշատակություններ թողել մի քանի հայ ճանապարհորդներ: 1609—1610 թվականներին Պորտուգալիայի Լիսաբոն քաղաքն է այցելել Օգոստոս Բաջնեցին: Նա եղել է Մադրիդում, այնտեղ հանդիպել մի հայ եպիսկոպոսի. «Մեկ հայ եպիսկոպոս կայր այս քաղաքս — գրում է նա — մեկ շաբաթ հետն կացի, աստուած իւրն բարի տայ, խիստ լաւ ընկալաւ մեզ հոն, իմ բանս տեսաւ»²: Պետք է կարծել, որ Մադրիդի հայ եպիսկոպոսը երթեկ անձնավորություններից չէ, նա պետք է որ այնտեղ երկար ապրած ու տեղացիներին լավ ծանոթ եղած լինի, որ կարողանար Բաջնեցու «գործը տեսնել»: Անհավանական չէ, որ այդ հայ եպիսկոպոսը Մադրիդում ունեցած լինի նաև իր համայնքը:

1690 թվականին Երուսաղեմի միաբանության անդամ Եղիա Բեթղեհեմցին Իսպանիայում է գտնվել իբրև հայկական պատրիարքարանի ներկայացուցիչ³: Նա տարել է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի գրությունը՝ Գալիլայի և Իսպանիայի թագավորներին, որի մեջ խնդրվում է, երբ որ նրանց ծովայինները որևէ վայրում նավ բռնագրավեն, ապա դրանց վրա գտնված հայ նավատիներին գերի չվերցնեն և չստրկացնեն, այլ ազատ արձակեն որպես քրիստոնյա և բարեկամ ժողովրդի զավակներ: Պապը կատարել է պատրիարքարանի խնդրանքը, հատուկ գրությամբ Եղիային ուղարկել է Իսպանիա և առաջարկել իսպանական թագավորին ընդառաջել Երուսաղեմի հայոց պատրիարքարանի խնդրանքին:

XVII դարում հայ-իսպանական հարաբերությունների մշակութային բնորոշ երևույթը իսպաներենից հայերեն կատարված մի շարք աշխատությունների թարգմանությունն է: Այդ բնագավառում աչքի ընկնող հայ թարգմանիչներից է հանդիսացել Երևանցի Գաբրիել Համազասպյանը: Նրա թարգմանած կարևոր աշխատություններից է «Գիրք ոսկեղէն և թուղթք քաղցրալուրբ», որը հոմաներանի Մարկոս Ավրելիոս կայսեր կենսագրությունն է: Թարգ-

1 Ն. Ա. Ալիևյան, Մովսես Գ. Տաթևացի, էջ 394—396:

2 Ստեփանոս Ռոշլա, Ժամանակագրութիւն, Վիեննա, 1964, էջ 191:

3 Մ. Ն. Ազավունի, Միաբանք և այցելութ հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 118:

մանութունն ունի հետևյալ հիշատակարանը. «Քարգմանեալ ի սպանական է հայկական բարբառ ի նախանձայող և ջանասէր պարոն Գաբրիել Համազասպյան Երևանցւոյ ի յօգուտ և ի զուարճութիւն ազգին Հայոց»¹:

Հայ թարգմանիչներից եղել են մարդիկ, որոնք հրաշալի տիրապետելով իսպաներենին և արևելյան լեզուներին, թարգմանչի պաշտոններ են վարել իսպանական դեսպանատներում: Նման անձնավորություններից է Կողմաս Քյոմերջյանը²:

Հավանական է, որ Իսպանիայի Գատիս քաղաքում XVIII դարում գոյություն ունեցած լինի հայկական փոքրիկ գաղթօջախ: Մեզ հայտնի են 1737 թվականին Գատիս քաղաքից գրված մի քանի նամակ (Բաղդասարի, Եղիսեյի, որդի տեր Հարությունի), ուր հայտնվում են, որ իրենք այնտեղ կին և երեխաներ ունեն³: Գատիս են այցելել հայ հոգևորականներ, հավանական է տեղի հայ համայնքը հովվելու նպատակով:

Իսպանիայի որոշ քաղաքներում, մասնավորապես Մադրիդում, հայկական փոքրիկ գաղթօջախ ստեղծվեց համաշխարհային առաջին պատերազմի տարիներին:

**Հայ-պորտուգալական
հարաբերությունները⁴:**

Հայերը պորտուգալացիների հետ առաջին անգամ ծանոթացել են խաչակրաց արշավանքների ժամանակ: Կիլիկիա եկող խաչակիրների մեջ եղել են բավական թվով նաև պորտուգալացիներ, որոնք ընդունելություն և աջակցություն են գտել հայերի կողմից: Հավանական է այդ ժամանակից էլ սկիզբ են առնում հայ-պորտուգալական առևտրական հարաբերությունները, որոնք լայն ծավալ չեն ստանում և խրզվում են կիլիկյան Հայաստանի պետականության անկումից հետո:

Հայ մատենագրության մեջ պորտուգալացիների մասին պահված հնագույն հիշատակությունը վերաբերում է XII դարին. հայկական միջնադարյան մի տաղում, որը սխալմամբ վերագրվում

1 Ղազիկյան, Հայկական նոր մատենագրություն և հանրագիտարան հայ կյանքի, Վենետիկ, 1909—1912:

2 Ղ. Վ. Ինճիճյան, Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի, մաս II, 5. V, էջ 156:

3 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 458:

4 Պորտուգալիայի և Հայաստանի հարաբերությունների մասին արժեքավոր ուսումնասիրությունը Ա. Ալպոյաճյանի «Պորտուգալ և Հայաստան» ուղագրավ հոդվածն է, որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1963 թ. XII համարում (էջ 43—51) և 1964 թ. I համարում (էջ 17—24),

է Հովհաննես Իմաստասերին և կամ Ֆրիկին, հիշվում է մի չքնաղ հայուհի, որի ձեռքը խնդրելու են եկել Մոսկվայի և Պորտուգալիայի թագավորների տղաները¹:

Տարբեր ժամանակներում եղել են փոխայցելություններ՝ պորտուգալացիները եկել են Հայաստան, հայերը՝ Պորտուգալիա: Հայտնի է, օրինակ, որ XIII դարի կեսերին մի խումբ պորտուգալացիներ, կորենցի ղեկավարությամբ, եկել են Հայաստան²:

Հայտնի է նաև, որ 1513 թվականին Պորտուգալիայի Լիսաբոն քաղաքն է եկել Եվթոպիայի Հեղինե թագուհու պաշտոնական ներկայացուցիչը՝ Մատթեոս անունով մի հայ դիվանագետ՝ բանակցելու համար պորտուգալական էմբանուել թագավորի հետ և խնդրել նրա զինական օգնությունը ընդգեմ Մոսահամմեդ Ղանի, որը նվաճած է եղել Եթովպիան³: Հետաքրքիրն այն է, որ դիվանագետ հայ հոգևորականը, Պորտուգալիայից վերադառնալիս, տեղացիներից իր հետ վերցրել է երկու հայերի: Այդ հիմք է տալիս ենթադրելու, որ Լիսաբոնում XVI դարում ապրել են հայեր:

Պորտուգալացիները, ինչպես հայտնի է, XVI դարում հաստատվել էին Հնդկաստանի մի շարք վայրերում և առևտրական լայն գործունեություն ծավալել: 1510 թվականին նրանք գրավել էին Գոա նավահանգիստը և այն դարձրել իրենց գաղութային հենակետը Արևելքում: 1588 թվականին նրանք հաստատվել էին նաև Կալկկոտի մոտ: Հետագայում նրանք ընդարձակել էին իրենց գաղութային տիրապետության սահմանները:

Այս շրջանում պորտուգալացիներն այնպիսի ահեղ մենատերեր էին Արևելքում, որ հնդկական ջրերում չէին կարող նավեր երևալ առանց պորտուգալական դրոշակի: Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնը XVI դարում դարձել էր ստրկավաճառության և արևելյան ապրանքների համաշխարհային շուկա⁴: Ահա այս ժամանակ է, որ հայ առևտրականները Հնդկաստանում նորից հանդիպում են պորտուգալացիներին և փոխհարաբերության մեջ մըտնում նրանց հետ: Հայերը ցամաքային ճանապարհով վաղուց էին մուտք գործել Հնդկաստան և ազատ ելումուտք ունեին երկրի ներքին նահանգներում: Երբ պորտուգալացիները հաստատվեցին

1 Աբիստակես Վարդ, Տեղանց, Հայ երգ, Քիֆլիս, 1882, էջ 62—63:

2 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, I հ., էջ 2:

3 Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, I հ., էջ 152—153:

4 «Всемирная история», т. IV, стр. 698—700.

ծովափին, նրանք իրենց ապրանքներն այլևս չէին արտահանում Հնդկաստանից քարավանային ճանապարհով և օգտվում էին պորտուգալացիների նավերից:

Հայ վաճառականները պորտուգալական կարևոր նավահանգրստներում ունեին իրենց ներկայացուցիչները և առևտրական ֆակտորիաները: Տեղեկություններ կան այն մասին, որ Գոալում և Դիու կղզում XVI դարում մի շարք հայ առևտրականներ արդեն մշտական բնակություն էին հաստատել պորտուգալացիների կողքին¹:

Պետք է ենթադրել, որ XVII դարում հայկական փոքրիկ գաղթօջախ է եղել Լիսաբոնում: Այդ երևում է ժամանակակից մի քանի հեղինակների հաղորդած տեղեկություններից: Այսպես, Սիմեոն Լեհացին իր «Ուղեգրության» մեջ խոսելով Լվովի մեծահարուստ վաճառականների՝ Եվրոպայի և Ասիայի տարբեր երկրներում ունեցած գործակալությունների մասին, նշում է, որ նրանք «Ունին և վեքիլի Ստամբուլ, Անկիւրի, Սպահան, Մոսկով, Կտանսքա, Պորտուգալ և այլն»²:

Լիսաբոնում ապրող հայերը, անշուշտ, փոքրաթիվ են եղել: Ըստ երևույթին, ամենից շատ Պորտուգալիա եկողները եղել են երթևեկ հայ վաճառականները, որոնք իրենց գործարքները պորտուգալական քաղաքներում վերջացնելուց հետո, հեռացել են այնտեղից: Պորտուգալիան հայ վաճառականների համար առևտրական կարևոր շուկաներից մեկն է հանդիսացել: Այդ երևում է գերմանացի հայագետ Շրոդերի կազմած հայ-լատին քերականության 1718 թվականի տպագրության հիշատակարանից, ուր խոսելով հայերի կապերի և երթևեկած երկրների մասին, առաջին հերթին հիշում է Պորտուգալիան³: Եղել են հայ ճանապարհորդներ, որոնք եղել են Պորտուգալիայում և միջանկյալ հիշատակություններ թողել այդ երկրի մասին:

XVII դարի հայկական ձեռագիր մի աշխարհագրության մեջ, որը հավանաբար թարգմանություն է, բավականին խոսվում է Պորտուգալիայի մասին: Այդ երկիրը, ասված է այնտեղ, «ոչ միայն գեղեցիկ է, այլև շատ պտղաբեր է»: Գովեստով է խոսվում երկրի կառուցումների և ժողովրդի բարեկեցության մասին: Պորտուգա-

1 Ա. Ալպոյանյան, Պորտուգալ և , Հայաստան (տե՛ս «Էջմիածին», 1964 թ. 1, էջ 20):

2 Սիմեոն Դպիր, Ուղեգրություն, էջ 333:

3 «Բանասեր» Փարիզի, 1899, էջ 227:

լիայում շատ են հրաշալիքները՝ 25 000 գեղեցիկ աղբյուրներ կան՝ կառուցված սրբատաշ քարերով, ծովեզերքին կառուցված են 200 կամուրջներ: Կարևոր նավահանգիստները վեցն են, ըստ աշխարհագրության հեղինակի տեղեկության, Պորտուգալիան լիքն է «ամենայն պիտույութ», մանավանդ՝ պտուղներով և գինով¹:

Հայ-պորտուգալական մշակույթների միջև աչքի ընկնող կապեր դժվարանում ենք մատնացույց անել: Իրարից շատ հեռու ապրող և առնչվելու քիչ առիթ ունեցող այդ ժողովուրդները մշակութային անմիջական կապեր չեն ստեղծել: Բացի այդ, ինչպես հայտնի է, միջնադարյան Պորտուգալիայում իշխող գրականությունը լատիներենն է հանդիսացել: Ենթադրվում է, որ Ղուկաս Խարբերդցին, որ բազմաթիվ աշխատություններ է թարգմանել լատիներենից, թարգմանել է նաև պորտուգալերեն բնագրեր:

XVIII դարի վերջերին հայերեն է թարգմանվել Մարմանգելիի «Բելխարիոս» աշխատությունը: Նրա թարգմանիչն է հանդիսացել Կարնեցի Պետրոս Բուռնազյանը՝ հնդկահայ Սամվել Մուրադի պատվերով: Հրատարակվել է այն Մադրասում 1809 թվականին՝ «Ազդարար»-ի խմբագիր Շմավոն Հարությունյանի տպարանում:

Հայ-պորտուգալական մշակութային հարաբերությունները սերտ գործակցություն են ծավալել նորագույն ժամանակներում Բրազիլիայում, ուր 40 տարուց ավելի է, ինչ կողք-կողքի ապրում են հայեր և բրազիլացիներ, որոնց պաշտոնական լեզուն պորտուգալերենն է: Այժմ Բրազիլիայում ապրող հայ երիտասարդները ոչ միայն ուսումնասիրում են պորտուգալերեն լեզուն, այլև այդ լեզվից կատարում են բազմաթիվ թարգմանություններ, այդ լեզվով հրապարակում թերթեր և ամսագրեր: Բրազիլիայում քիչ թիվ չեն կազմում այն հայ մտավորականները, որոնք իրենց կրթությունը ստացել են Բրազիլիայի համալսարաններում:

Հայերը Հուանդիայում:

Հուանդիայի երբեմնի եռուն կյանք ունեցող հայկական գաղթավայրը նոր ժամանակներում բոլորովին խամրում է:

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին փոքրաթիվ հայ գաղթականություն է գալիս Հուանդիա ձավա կղզուց: Գաղթականները եղել են այն հայերը, որոնք ճապոնական ռազմական իշխանությունների կողմից արգելափակման տակ են վերցված եղել²:

1 ՄԱՄ, ձեռ. № 1787, Թ. 23բ—24ա:

2 Սաուվան, Հուանդիան և հայերը (տե՛ս «Ճանդեա ամսօրյա», 1928, էջ 346):

Նորեկ գաղթականությունը ի վիճակի չի գտնվել նոր շունչ հաղորդելու հայկական խամրած գաղթավայրին: 1947 թվականին Հոլանդիա այցելած հայ ուղևորներից մեկը վշտով նշել է, որ «Ճավայն եկած հայերը, հին թե նոր, ընդհանրապես հոլանդերեն կխոսին: Նույնիսկ շատերը բոլորովին մոռացած են հայերեն»¹:

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին գերմանական ֆաշիստները Հոլանդիա տեղափոխեցին մեծ թվով հայ ռազմագերիներ՝ տեղավորելով նրանց Յլակեն կղզու, Անսվիկի, Ռոտերդամի և այլ վայրերի ռազմագերիների ճամբարներում: Հայ ռազմագերիները ստեղծում են իրենց ընդհատակյա կազմակերպությունը՝ ֆաշիզմի դեմ պայքարելու համար և հոլանդական Ալնքս Հակոբյանի միջոցով կապ հաստատում հոլանդական դեմոկրատական շարժման գաղտնի կազմակերպությունների հետ և նրանց հետ համագործակցված պայքարում ֆաշիստների դեմ:

Այս պայքարի ընթացքում հայ ռազմագերիները տվել են բազմաթիվ զոհեր: Ամերսֆուրտի գերեզմանատանը զոհված հայ ռազմագերիների հիշատակին կառուցված է հուշարձան:

Հոլանդացի գիտնական Վ. Նագելին, որը եղել է հոլանդական դիմադրական շարժման աչքի ընկնող գործիչներից մեկը, Երևան ուղարկած իր նամակներից մեկում, վերհիշելով հայ և հոլանդացի ընդհատակայիների պայքարի ծանր օրերը և տված զոհերը, հետևյալն է գրում. «Այո՛, հայ և հոլանդացի ընդհատակայիների համատեղ պայքարը, այդ զոհերի հիշատակը ցեմենտում է երկու ժողովուրդների հինավուրց բարեկամությունը»²:

Հայերը Բելգիայում:

XIX դարի երկրորդ կեսում զգալիորեն նվազում է նաև Բելգիայի հայ գաղթավայրը: Սակայն անկախ դրանից, հայ առևտրականները շարունակում են Բելգիա և Հոլանդիա Ռուսաստանի վրայով տանել Պարսկաստանի հողակավոր մետաքսը: Ռուսաստանի մաքսային իշխանությունների նոտարական մատյաններում բազմաթիվ գրանցումներ կան Ռուսաստանից Բելգիա, Հոլանդիա և արևմտաեվրոպական այլ երկրներ առևտրի գնացող հայ վաճառականների մասին:

Ճակատագրի շար բերումով, Բելգիայի Անտվերպեն քաղա-

¹ «Արևմուտք», 1947, № 85:

² Մ. Հակոբյան, Ինչ են պատմում հոլանդական փաստաթղթերը (տե՛ս «Սովետական Հայաստան», 1966, փետ. 1):

քում է մահացել ու թաղվել հայ նշանավոր տպագրիչ Թոմա Վանանդեցին: Ուշագրավ է նրա արկածալից կյանքի պատմությունը: Նա, ինչպես հայտնի է, իր երկու եղբորորդիների հետ միասին 1685 թվականին հիմնում է հայկական տպարան և նվիրվում հայ տպագրության պատվաբեր գործին: 1695—1705 թվականներին ընթացքում նա հրատարակում է 14 անուն գիրք և աշխարհացույցի մի գեղեցիկ քարտեզ, որոնք անցյալի հայ տպագրության զարդերը կարող են համարվել: Ցանկանալով ավելի օգտակար լինել իր ժողովրդի տպագրական գործին, նա իր տպարանը նվիրում է հայ ժողովրդին հետևյալ կտակով. «Տպարանը, բոլոր առարկաներով և բոլոր տպված գրքերը, նա մտադիր է թողնել իր սիրեցյալ հայրենիքին», ցանկանալով, որ իր «խեղճ հայրենակիցները», որոնք դեռ գտնվում են խավարի մեջ և բռնավորի լծի տակ, լուսավորվեն»¹:

Թոմա Վանանդեցին 1708 թվականին, ցանկանալով հայրենիք վերադառնալ, գալիս է Անտվերպեն՝ Զմյուռնիա գնացող նավով մեկնելու համար: Սակայն այստեղ էլ նա հիվանդանում է և մահանում:

Բելգիայում ապրող հայերը հիշվում են XIX դարի ութսունական թվականներից: Դրանք գլխավորապես Պոլսից եկած և ադամանդի վաճառքով զբաղվող վաճառականներ են եղել: Ըստ տեղեկությունների, 1886 թվականին Անտվերպենում հայ բնակչության թիվը շատ փոքր է եղել: Հետագայում այն թիվը փոքր-ինչ ավելացել է՝ Բելգիա սովորելու՝ եկած հայ ուսանողներով:

Բելգիայում սովորող հայ ուսանողները 1907 թվականին կազմել են հայ ուսանողական միություն: 1910 թվականին Բելգիայի երկու քաղաքներում՝ Բրյուսելում և Անտվերպենում, իր մասնաճյուղերն է կազմակերպել Հայ բարեգործական ընդհանուր միությունը:

Բելգիայի և Հոլանդիայի հասարակությունները նոր ժամանակներում որոշ հետաքրքրություն են ցուցաբերել հայկական գատի նկատմամբ և պահանջել նրա արդարացի լուծումը: 1902 թվականին Բելգիայի Բրյուսել քաղաքում հրավիրվել է հայասերների միջազգային կոնգրես՝ նվիրված հայկական հարցին: Այդ կոնգրեսում հայասիրական ճաներով ելույթ են ունեցել եվրոպական երկրների մի շարք աչքի ընկնող գիտական և հասարակական

¹ «Հանդես ամսօրյա», 1927, էջ 394:

գործիչներ, այդ թվում նաև՝ ֆրանսիական սոցիալիստ ժան ժո-րեսը¹։

Մինչև համաշխարհային առաջին պատերազմը Հուլանդիայի հայ բնակչությունը փոքրաթիվ է եղել՝ բաղկացած գլխավորապես առևտրականներից։ Նրանց մեծ մասը գտնվել է Անտվերպենում և զբաղվել ծխախոտի ու ադամանդի առևտրով։ Եղել են նաև համալսարաններում սովորող ուսանողներ²։

Պատերազմի տարիներին, երբ գերմանացիները գրավեցին Բելգիան, հայերը վախենալով, որ կարող են իրենց որպես թուրքահայատակների ստիպել ենթարկվելու թուրքական զորակոչին, հարմար են համարել տեղափոխվել հարևան չեզոք երկրները. հայերի մի մասը տեղափոխվել է Անգլիա, իսկ մյուս մասը՝ Հոլանդիա։

Պատերազմի ընթացքում, մանավանդ զինազաղարից հետո, գաղթականության ալիքը հեռավոր Բելգիա է նետել հազար հոգուց ավելի հայերի։ Այդ գաղթականության խոշոր մասը հաստատվել է Բրյուսելում, իսկ փոքրը՝ Անտվերպենում։

Բելգիական ժողովուրդը սրտացավ վերաբերմունք է ցուցաբերել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ողբերգությանը։ Բրյուսելում կազմակերպվել է «Հայ-բելգիական ընկերություն», որն իր մասնաճյուղերն է ունեցել Բելգիայի մյուս քաղաքներում։ Հանձնաժողովներն ամենուրեք կազմակերպել են բողոքի ցույցեր՝ հայ բնակչության կոտորածների առիթով և իրենց կայացրած որոշումներում պահանջել՝ «Հայ ժողովրդին հատկացնել սեփական հայրենիք իր նախնիքների հողի վրա»։ Հանձնաժողովն ունեցել է «Տեղեկատու սենյակներ», որոնք հայկական կոտորածների վերաբերյալ լուրերը տպագրել և տարածել են բնակչության մեջ, հայ որբերի և գաղթականության օգտին կազմակերպել են հանգանակություններ և այլն։

1930 թվականին, Բելգիայի քաղաքական անջատ գոյություն հարյուրամյակին, Անտվերպենի մեծահարուստ մի նավատեր՝ Ռոբերտ Վիբրենբրե, ցանկանալով նշել այդ տարեդարձը, 175 հազար ֆրանկի մի գումար է նվիրել Բրյուսելի համալսարանին՝ արևելքի պատմության և բանասիրության ինստիտուտ հիմնելու նպատակով³։ Այդ գումարից 20 000 ֆրանկը հատկացվել է հայագիտա-

1 «Ֆրանսիական տարեգիրք», 1927, էջ 272—275։

2 «Մշակ» թերթ, 1902, հուլիսի 16։

3 Սարոլյան, Հայերեն նոր ամբիոն Եվրոպայում (տե՛ս «Հանդես ամսօրեա», 1930, էջ 106—109)։

կան ամբիոնի ստեղծմանը։ Ամբիոնի պահպանման համար սակայն այդ գումարը բավական չի համարվել, ուստի Բրյուսելի համալսարանի ղեկավարն առաջարկել է տեղի հայ գաղթավայրին, որ նրանք ևս նյութապես օգնեն՝ այդ կարևոր գործը գլուխ բերելու համար։ Տեղի հայերը սիրահոժար հանձն են առնում և հանգանակության միջոցով լրացնում պակաս դրամը։ Ըստ որում, Բրյուսելի հայ համայնքը ընտրում է հատուկ մի մարմին՝ «Բրյուսելի համալսարանին կից Արևելյան կաճառի բարեկամների ընկերություն» անունով՝ խնդրի ունենալով մշտապես նյութական օգնություն ցույց տալ հայագիտական ամբիոնին։

1931 թվականին նոյեմբերի 24-ին տեղի է ունենում Բրյուսելի արևելյան ինստիտուտի բացումը¹։ Հայագիտական ամբիոնը վարելու համար դասախոս է հրավիրվում պրոֆեսոր Ն. Ադոնցը։

Պրոֆեսոր Ադոնցը Բրյուսելի համալսարանի հայագիտական ամբիոնը ղեկավարել է մինչև իր մահը։ Նրա մոտ հայագիտական կրթություն են ստացել անվանի մի շարք արևելագետներ, որոնք ներկայումս աշխատում են Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում։

Պողոս Նուբարը 1924 թվականին Բրյուսելում՝ հիմնել է Բարեգործական հաստատություն՝ նպատակ ունենալով նյութապես օգնել չքավոր հայ ուսանողությանը։ Այդ նպատակով նա անգլիական բանկն է դրել 20 հազար ստերլինգ դրամագլուխ՝ հետագայում նրա վրա ավելացնելով ևս 50 հազար դոլլար։ Կտակարարի նպատակն է եղել այդ դրամի տոկոսները հատկացնել հայ ուսանողության կարիքներին։ «Նուբարյան» կոչվող այդ հաստատության կանոնադրության մեջ հետևյալ պահանջներն են առաջադրված. «Դպրոցական դրամական նպաստներով օգնել հայ պատանիներին, որոնք ուսման ընդունակ են, բայց միջոց չունեն համալսարան և բարձրագույն դպրոց մտնելու, մասնագիտություն սովորելու և մեր ազգին օգտակար հանդիսանալու համար»²։ Կտակարարի պահանջով, նպաստից կարող են օգտվել միայն այն ուսանողները, «որոնք իրենց ուսումն ավարտելուց հետո հանձն կառնեն

1 Սարոլյան, Հայերեն ամբիոն Բրյուսելի համալսարանում (տե՛ս «Հանդես ամսօրեա», 1931, էջ 657—660)։

2 Սարոլյան, Բելգիա և հայերը, Վիեննա, 1937, էջ 216։

Հայաստան երթալ: Նրանք պարտավոր են հայկական կառավարության դպրոցներում դասախոսել կամ առհասարակ իրենց մասնագիտությունը Հայաստանում գործադրել: Ըստ կտակարարի պահանջի, թեկնածուները պարտավոր են իմանալ հայերեն գրել և կարդալ: Կարող են հաստատության թեկնածու լինել նաև աղջիկներ, սակայն պայմանով, որ նրանց թիվը ընդունվող հայ ուսանողության ընդհանուր թվի մեկ հինգերորդից ավելին չլինի: Պողոս Նուբարը ցանկացել է նաև հատուկ ուղադրություն դարձնել այն հայ ուսանողների վրա, որոնք պիտի մասնագիտանան մեքենագիտության, էլեկտրականության, քիմիայի, ճարտարապետության, ճարտարագիտության, դեղագործության և վաճառականության մեջ: Այստեղ էլ կտակարարը պահանջել է նախապատվություն տալ այն ուսանողներին, որոնք կիսոտանան աշխատանքի մեկնել Հայաստան: Նուբարյան այս հիմնարկը 1924 թվականից մինչև 1932 թվականը ունեցել է 48 թոշակառու ուսանող և ծախսել է ավելի քան մեկ միլիոն բելգիական ֆրանկ:

1927 թվականին ողջ Բելգիայում եղել է 8000—9000 հայ բնակչություն, որից կեսը՝ Անտվերպենում, կեսը՝ Բրյուսելում: Բրյուսելում կազմակերպվել է «Հայ կանաց միություն», հայ մարմնամարզական կազմակերպություն և այլ միություններ: Բրյուսելի և Անտվերպենի հայ գաղթօջախներն ունեցել են բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղերը:

Բելգիայի հայ գաղթավայրը, Հոլանդիայի հետ համեմատած, ավելի կազմակերպված է եղել: Նա ունեցել է իր ղեկավար կենտրոնական վարչությունը, որը կոչվում է «Բելգիայի հայ գաղութային վարչություն»: Գաղթավայրի վարչությունն ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից, որին ձայն տալու իրավունք ունեն տասնութ տարեկան և 12 ֆրանկ անդամավճար տվող բոլոր հայերը:

Բելգիայի հայ գաղթավայրն ունեցել է մի շարք բարեգործական և կրթական միություններ՝ «Հայ կարմիր խաչի», «Հայ երիտասարդաց միություն», «Հայաստանի օգնության կոմիտե» և այլն:

1945 թվականին Բելգիայում կազմակերպվել է նաև Հայաստանի հետ մշակութային կապի կոմիտե: Նրան հարել է «Հայ պատանիների միությունը», որը գոյություն է ունեցել կոմիտեի ստեղծումից առաջ: Այս կոմիտեն աշխատել է աշխուժացնել հայ գաղթավայրի հասարակական ներքին կյանքը և ծանոթանալ Բել-

գիայի հայերին Սովետական Հայաստանի առաջընթացի հետ: Հայաստանից ստացված նյութերի հիման վրա տեղական ակումբում պարբերաբար կազմակերպվել են դասախոսություններ՝ հայ ժողովրդի պատմության, գրականության, արվեստի շուրջը: Կոմիտեն ունի գրադարան, որը հարստացել է պրոֆ. Ադոնցի անձնական գրադարանի գրքերով:

XIV. ՊԱՐՍԿԱԿԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Պարսկահալու-
թյան ծանր վիճակը
XVIII դարի
երկրորդ կեսում
և առաջին ներ-
գաղթը Հայաստան:

Պարսկաստանի հայ բնակչությունն ան-
նկարագրելի ծանր վիճակում է գտնվել
XVIII դարի երկրորդ կեսում: Այդ շրջանը
Ֆեոդալական արյունահեղ կռիվների սոսկա-
լի մի շրջան է եղել Պարսկաստանում, որն
իր ծանր հետևանքներն է թողել ո՛չ միայն
հայ գաղթավայրի, այլև պարսիկ ժողովրդի
վրա ընդհանրապես:

Միջֆեոդալական կռիվներն սկսվել են 1747 թվականին՝ Նա-
դիր շահի սպանությունից հետո, երբ քաղաքական հրապարակ են
իջել և իշխանություն համար իրար հետ մրցել սկսել բախտիարա-
կան, զենդական, ղաջարական և աֆղանական ֆեոդալական խո-
շոր տները:

Միջֆեոդալական այս կռիվների ընթացքում քարուքանդ է
եղել երկիրը, կեղեքվել և կոտորվել է բնակչությունը: Իշխանու-
թյան գլուխ անցած տիրակալներից ամեն մեկն աշխատել է որ-
քան կարելի է շատ դրամ հավաքել՝ մեծ թվով զինվորներ վարձե-
լու և ուժեղ բանակ ստեղծելու համար: «Երկու տարվա ընթաց-
քում, — գրում է Տեր-Նովճանյանցը, — հինգ թագավորներ հաջոր-
դեցին իրար, որոնք մեծ գումարի հարկ են պահանջում՝ զորքերի
կարիքը բավարարելու նպատակով»:

XVIII դարի երկրորդ կեսում Պարսկաստանում ոչինչ չէր կա-
րելի տեսնել, բայց միայն՝ սուր և մահ, տուգանք և տանջանք:

1 Տեր-Նովճանյանց, I հ., էջ 285:

սուր՝ հաղթանակող խաներից, մահ՝ ավազակների ասպատակու-
թյուններից, տուգանք՝ ինքնագլուխ իշխաններից և տանջանք՝
հարկապահանջ բռնավորներից¹: Դատարկվել են քաղաքները,
բայթայվել գյուղերը: Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանը, որ
մի ժամանակ որպես միջազգային խոշոր շուկա մրցել է Պոլսի
հետ, այս շրջանում վեր է ածվել սովորական գյուղաքաղաքի՝
30—40 հազար բնակչությամբ:

Միջֆեոդալական արյունահեղ պայքարի այս շրջանում մեծա-
պես տուժել է նաև Պարսկաստանի հայ գաղթավայրը: Տիրակալ-
ները բացահայտ կողոպտել են պարսկահայ բնակչությանը և
մատնել նրան դառն աղքատության: Պահանջվող մի հարկին հա-
ջորդել է մյուսը: 1753 թվականին Սպահանի և Նոր-Ջուղայի վրա
դրված է եղել 60 000 թուման արտակարգ հարկ: Շատ շանցած,
երբ Սպահանին կարճ ժամանակով տիրել են աֆղանները, նորջու-
ղայեցիներից պահանջվել է ևս 1800 թուման²:

Ըստ ժողովրդական մի ավանդության, որ գրի է առել Տեր-
Նովճանյանցը, երբ պարսկական արքունիքը սկսում է ծանրացնել
ջուղայեցիների հարկերը և հարկահավաքները գալիս են Ջուղա,
ժողովուրդը նրանց ընդունում է լաց ու կոծով: Առաջին հարկա-
հավաքը դեռ նոր վերջացած, գալիս են նոր հարկահավաքներ՝ նոր
հարկերով: Ժողովուրդը այս խմբին ևս դիմավորում է լաց ու կո-
ծով, վաճառում ունեցած-չունեցածը և վճարում պահանջվող
հարկը: Շուտով սակայն գալիս են երրորդ խմբի հարկահավաք-
ները: Ժողովուրդն այս անգամ հարկահավաքներին դիմավորում
է նվագով, երգով ու պարով: Երբ հարկահավաքները հետաքրքր-
վում են, թե ինչո՞ւ են նրանք այդպես ուրախանում, ջուղայեցի-
ները պատասխանում են. «Մեր ունեցած-չունեցածը տվել ենք
արդեն հարկի դիմաց, այժմ ոչինչ չունենք տալու, եթե դրա համար
մեզ մահվան պիտի դատապարտեն, ապա նախընտրում ենք ուրա-
խություն դիմավորել մահը, քան լաց ու կոծով»³:

Ժամանակակից հայ տաղերգուներից մեկը ողբ է հորինել
պարսկահայերի ծանր վիճակի վերաբերյալ. «Արդ, որի՞ համար
ողբանք, — գրում է ողբերգակ տաղերգուն, — հոտով ոչխարի հա-
մար, որ ավար տարան և մենք թանի կարոտ մնացինք, թե ցորենի
շտեմարանի համար, որ կողոպտեցին և մենք սոված մնացինք:

1 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, III հ., էջ 849:

2 «Всемирная история», т. V, стр. 249.

3 Տեր-Նովճանյանց, հ. I, էջ 267:

Արդ, որի՞ համար տուրենք՝ մեր արտերի համար, որ տնկեցինք և մենք հասկաքաղի կարոտ մնացինք, թե կալ ու կալսի համար, որից կարոտ մնացինք... Արդ, որի՞ համար կոծենք՝ մահացածների համար, որոնք գիշատվեցին, թե՛ մեզ համար, որ կենդանի մեռելներ ենք դառել»¹:

Ստեղծված այս պայմանների հետևանքով քաղաքներում ապրող հայ բնակչությունը խուճապահար սկսել է փախուստի դիմել դեպի Հնդկաստան, Ռուսաստան և այլ երկրներ: «Այդ ժամանակ,— վշտով նշում է Խաչատուր Ջուղայեցին,— ջուղայեցի հայք սպառսպուռ ցրուեցան ընդ ամենայն երեսս երկրի... ոմանք գնացին ի Հնդկիս, և այլք ի սահմանս Ռուստաց և կէսք այլ վայրս նահանգաց աշխարհի»²: Բավական է ասել, որ Համադանի նախկին 3000—4000 հայ բնակչությունից դարի վերջին մնացած է եղել ընդամենը 300 հոգի³: Տեղի հայ վաճառականներից նրանք, ովքեր մնացել են Պարսկաստանում, զրկվել են իրենց գույքից, շատերը սպանվել են և կամ վաճառվել որպես ստրուկներ:

Տեղեկություններ կան այն մասին, որ 1725 թվականին, թուրքական զորքերը, Պարսկաստանի արևմտյան նահանգները արշավելիս, Համադան քաղաքում կոտորել են 300 հայ ընտանիք:

Այս շրջանում ևս շարունակվել է հայ բնակչության նկատմամբ պարսկական իշխանությունների վարած հալածողական քաղաքականությունը: Մթնոլորտը ավելի պղտորելու ուղղությամբ առանձնապես եռանդուն գործունեություն է ծավալել շիա հոգևորականությունը: Պարսկական կառավարությունն արգելել է հայ եկեղեցիներին բարձր զմբեթներ ունենալ: Հայերն իջեցրել են եկեղեցու զմբեթները և եկեղեցիներին արտաքինից մեշիդի կլոր ձև են տվել, իսկ ներսից պահպանել նախկին կարգը: Կառավարությունն արգելել է եկեղեցիների զանգեր զարկելը, հայերը զանգերի փոխարեն փայտից զանգին փոխարինող հարմարանքներ են ստեղծել և շարունակել ժամերգությունը: Կառավարությունը եկեղեցիները և վանքերը հարկի տակ է դրել: Ըստ տեղեկությունների, միայն Նոր-Ջուղայի և Սպահանի շրջանի հայկական եկեղեցիների վրա շահ Հուսեյինը դրել է 424 թուման հարկ, որը հետագայում ավելացնելով հասցրել է 800-ի: Հնարավորություն չունենալով

¹ Տե՛ր-Հովհաննես, հ. I, էջ 245:

² Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, էջ 289:

³ «Всемирная история», т. VI, стр. 249.

այդպիսի խոշոր գումար տալու, հայերը հարկի դիմաց հանել են եկեղեցիների և վանքերի արծաթյա ու ոսկյա խաչերն ու սպասները, նրանց փոխարեն հասարակ նյութերից փոխարինողներ են պատրաստել և համառությամբ հրաժարվել մահամեղականություն ընդունել: Պարսկահայերին չի ընկձել նաև կառավարության որոշումը՝ իրավունք տալու մահամեղականություն ընդունող հայ մարդուն՝ տիրանալու տվյալ ընտանիքի ողջ հարստությանը: Չենք խոսում դեռ ստորացուցիչ այլ միջոցառումների մասին, օրինակ, հայ մարդկանց վզից հատուկ նշան կախելը, հայ մարդուն արգելելը, որ ձի նստած անցնի քաղաքի փողոցներով և այլն:

XVIII դարում Պարսկաստանի հայ բնակչության անտերունջ վիճակից փորձել են օգտվել կաթոլիկ միսիոներական կազմակերպությունները, որոնք հաստատվել էին Պարսկաստանում Շահաբասի ժամանակից սկսած: Սկզբնական շրջանում նրանք խնդիր ունեին՝ կաթոլիկ դարձնել պարսիկներին: Սակայն երբ այդ գործում հաջողություն չգտան, փորձեցին դարձի բերել «հայ աղանդավորներին» և «փրկել նրանց մեղավոր հոգիները»: Միսիոներական կազմակերպությունների թիկունքում արևմտա-եվրոպական գաղութարար պետություններն էին կանգնած և նպատակ ունեին հայերին կաթոլիկ դարձնելով նրանց իրենց հենակները դարձնել Պարսկաստանում և Մերձավոր Արևելքի մյուս երկրներում:

Պարսկաստանում հաստատվել էին միսիոներական մի քանի միաբանություն՝ Օգոստինյան, որը գտնվում էր սկզբում պորտուգալական, իսկ հետո իսպանական թագավորի հովանավորության տակ, Կապուչինյան և Հիսուսյան, որոնք գտնվում էին ֆրանսիական թագավորի հովանավորության տակ, Կարմելյան, որը գտնվում էր պապի հովանավորության տակ և այլն:

Պարսկական կառավարությունը սկզբնական շրջանում հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերել դեպի միսիոներական այս կազմակերպությունները: Այդ պետք է բացատրել քաղաքական նպատակով: XVIII դարում Պարսկաստանն աշխատում էր զինական դաշնակցության մեջ մտնել արևմտա-եվրոպական երկրների հետ ընդդեմ թուրքիայի, ուստի աշխատում էր սիրալիք գտնվել Պարսկաստանի կաթոլիկների նկատմամբ:

Վատիկանը և արևմտաեվրոպական պետությունները, օգտվելով առիթից, աշխատել են իրենց դեսպանների միջոցով Պարսկաստանի կաթոլիկ համայնքների համար որոշ արտոնություն ձեռք բերել: Պարսկական կառավարության թուլլտվությամբ

նրանք եկեղեցիներ են կառուցել և համայնքներ հիմնել թավրի-
զում, Սպահանում, Համադանում և այլ վայրերում¹։

Միսիոներական այս կազմակերպությունները, հիմնավորվե-
լով Պարսկաստանի հայաշատ վայրերում, սկսել են քարոզչական
լայն աշխատանք ծավալել հայերին կաթոլիկացնելու ուղղությամբ։
Չնայած նրանց թափած հսկայական ջանքերին, պետք է ասել,
մեծ արդյունքներ չեն ունեցել։ Նրանց հաջողվել է փոքրաթիվ
հայկական կաթոլիկ համայնքներ ստեղծել միայն մի քանի վայ-
րերում։ Հայ հոգևորականները կատաղի դիմադրություն են ցույց
տվել միսիոներական քարոզիչներին²։

Պարսկահայերից կաթոլիկություն են ընդունում քիչ թվով հայ
առևտրականներ և նրանց ազգականները, որոնք իրենց շահերով
կապված էին կաթոլիկ աշխարհի հետ և իրենց առևտրական գոր-
ծունեության մեջ ցանկանում էին օգտվել կաթոլիկ հոգևորական-
ների, մասնավորապես Վատիկանի աջակցությունից։ Ի դեպ, Նոր-
Ջուղայի հայկական կաթոլիկ համայնքի և եվրոպացի միսիոներ-
ների ջերմ հովանավորներից է հանդիսացել Շահրիմանյանների
մեծահարուստ տունը, որն առևտրական լայն գործակալություններ
ունեն եվրոպական մի շարք երկրներում։

Պարսկահայության համար առանց այն էլ ստեղծված ծանր
պայմաններում Վատիկանի և արևմտաեվրոպական պետություն-
ների փորձերը հայերին կաթոլիկ դարձնելու ուղղությամբ ոչ միայն
հակաքրիստոնեական, այլև հակամարդկային ձեռնարկ էին։ Հայ
համայնքներում ստեղծված միջդավանական պայքարը մեծ վնաս
էր հասցնում պարսկահայությանը. այն ջլատում էր հայ հա-
մայնքները և հնարավորություն չէր տալիս հայերին միավորվել՝
դիմադրվելու նրան սպառնացող ամենամեծ վտանգին՝ ձուլմա-
նը։ Իրավացի է Տեր-Հովհանյանցը, որ խոսելով միջդավանական
այս պայքարի մասին, հետևյալն է գրել. «Մեծ ցավ է ինձ համար
իմ պատմության մեջ արձանագրել երկպառակության այնպիսի
իրադարձություններ, որոնք ոչ մի օգուտ չեն տա ընթերցողներին,
բացի այն, որ կվրդովեն նրանց սրտերը և կվշտացնեն նրանց...»³։

Ի դեպ, Նոր-Ջուղայի գավառներում ապրող հայ գյուղացիու-

¹ Այս մասին տես „A Chronicle of the carmelites in Persia and the
papal mission of the XVII th centuries“, vol. I-II, London, 1939.

² Վ. Ա. Բայբուրյան, Նոր-Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսի-
ոներին կազմակերպությունները (տե՛ս Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964,
№ 9, էջ 39—51)։

³ Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր-Ջուղայու, հ. II, էջ 267։

թյանը կողոպտել են նաև բախտիարները և Լոռիստանի լեռնա-
բնակները, որոնք սխտեմատիկաբար հարձակվել են հայ գյուղա-
ցիության վրա, կողոպտել նրանց, բռնել, տարել հայ գյուղացիների
ոչխարի հոտերը և տավարի նախիրները¹։

Պատկերացնելու համար հայ գյուղացիներին լոռերի և բախ-
տիարցիներին պատճառած հարստահարությունները, կարելի է
բերել մի խոսակցություն, որ տեղի է ունեցել հայ գյուղացու և
պարսիկ հարկահավաքի միջև։ Հարկահավաքը գյուղացուց պա-
հանջել է պետական հարկը, իսկ գյուղացին հարցրել է. «Ո՞վ է
այս երկրի պետական իշխանավորը՝ դո՞ւք, թե լոռերը. պարզեցե՞ք՝
թե ում պիտի մենք հարկ վճարենք. ձե՞զ, թե լոռերին»։

Այսպիսով, միջֆեոդալական կոիվները, ավերածությունները
և հարստահարությունները, հայ բնակչության նկատմամբ կիրառ-
վող ձուլողական քաղաքականությունը, ինչպես և կյանքի ու գույ-
քի անապահովությունը և այլ հանգամանքներ ստիպում էին
պարսկահայ բնակչությանը գաղթել դեպի ապահով երկրներ՝ Հրնդ-
կաստան և Ռուսաստան։ Գաղթում էր Պարսկաստանի քաղաքների
հայ բնակչության զգալի մասը։ Մնում էին միայն հայ գյուղա-
ցիությունը, իսկ քաղաքներում՝ հայերից միայն նրանք, ովքեր
գաղթելու հնարավորություն չունեին։ Այս դրությունն աչքի առաջ
ունենալով, գրում է Տեր-Հովհանյանցը, չպետք է զարմանալ, թե
ինչպես է եղել, որ Ջուղայի 12 հազար տուն հայ բնակչությունից
250 տարվա ընթացքում մնացել է միայն 300 տուն։ Զարմանալ
կարելի է, շարունակում է նա, թե ինչպե՞ս են կարողացել ջուղա-
յեցիները դիմանալ նման նահատակություններին, խոշտանգում-
ներին ու շարշարանքներին և պահպանել իրենց ֆիզիկական գո-
յությունը։

Նման պայմաններում ապրող պարսկահայության համար
կարելի է պատկերացնել, թե ինչ մեծ ուրախություն է հանդիսա-
ցել զանգվածային այն մեծ գաղթը, որ տեղի է ունեցել 1828
թվականին՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց
հետո։

Մինչև Արևելյան Հայաստանի ռուսական տիրապետության
տակ անցնելը, մեզ հայտնի չէ Հայաստան ներգաղթելու մասին
պատմական որևէ փաստ, որ տեղի ունեցած լինի Պարսկաստանից
կամ մյուս հայկական գաղթօջախներից։ Այդ բացատրվում է ոչ
թե նրանով, որ հայ գաղթականության մոտ մարել էին արդեն

1 Հ. Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, հ. II, էջ 267։

հայրենասիրական զգացմունքները, այլ որ Հայաստանը հեծում էր օտարերկրյա հարստահարիչների կրունկի տակ և ժողովրդի դրուժյունը մայր երկրում ավելի նպաստավոր չէր, քան գաղթավայրերում:

Այդ տեսանկյունից հայ գաղթականության տարեգրության մեջ շրջադարձային տարի է հանդիսացել 1828 թվականը, երբ Պարսկաստանից, իսկ հետո նաև Թուրքիայից, զանգվածային գաղթականություն է ներգաղթել Հայաստան:

1827 թվականին, երբ Երևանի և Նախիջևանի խանությունները գրավեցին ռուսական զորքերի կողմից, ռուսական արքունիքում և հայ քաղաքական շրջաններում առաջանում է Պարսկաստանի հայ բնակչությանը Հայաստան փոխադրելու խնդիրը: Ցարական արքունիքը և հայ քաղաքական շրջանները այս հարցում համամիտ են գտնվում՝ առաջնորդվելով յուրաքանչյուրը, իհարկե, իր շահերով:

Ցարական արքունիքի նպատակն է եղել Արևելյան Հայաստանում հայ խիտ բնակչություն ստեղծելով, ապահով հենարան ըստեղծել իր համար: Դեռևս Թուրքմենշախի բանակցությունների նախագծում, որը ներկայացվել է կառավարության հաստատմանը, նախատեսված է եղել հետևյալը. «Ռուսաստանի էական օգուտի համար հանգստություն պահպանելու և լեռնականների, թուրքերի ու պարսիկների հարձակումներից պաշտպանվելու համար անհրաժեշտ է սահմանամերձ, գլխավորապես նոր նվաճված մարզերում, բնակեցնել մեծ թվով, առավելապես հայերից, որպես ռուսական գահին առանձնապես նվիրվածների»¹:

Նույն նախագծի երրորդ կետում դարձյալ ասված է. «Դաշնագրում պարտադիր կանոն հաստատել, որպեսզի այդպիսի գաղթը շարգելվի, որովհետև էջմիածնի մայր աթոռը հայ ժողովրդի կենտրոնն է և Նախիջևանի ու Երևանի մարզերը էջմիածնի հետ միասին կազմում են նախկին հայկական թագավորության հիմքը, դրա համար էլ այդ ժողովուրդը բնակվելու համար իրավունք ունի հավաքվելու իր հայրենիքում, որտեղ յուրաքանչյուրի և բոլորի անվտանգությունը պետք է ապահովվի»²:

Ինչ վերաբերում է հայ ազատագրական շրջաններին, ապա

¹ Վ. Ա. Պարսամյան, Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 248:

² Նույն տեղը, էջ 248—249:

ներանք, Պարսկաստանի հայ բնակչությունը բերելով Հայաստան, ցանկանում էին ստվարացնել հայ բնակչությունը Արևելյան Հայաստանում և դարձնել այն կենտրոնական օջախ՝ ողջ հայությանը համախմբելու համար: Այդ նպատակադրումը շատ պարզ արտահայտված է Թուրքմենշախի պայմանագրի կնքելուց առաջ Եղիազար Լազարյանին Ներսես Աշտարակեցու գրած մի նամակում. «Այլ այսու ամենայնիւ — գրում է նա — զոր մեք գիտեմք, ոչ անդէպ համարիմք յայտնել, զի փրկութիւն հայրենեաց Հայաստանի յայնժամ եղիցի ապահով, յորժամ բազմացեն ի Հայաստան հ գաւառն Արարատեան, ի Նախիջևան, ի Փայտակարան և յամենայն յեզերս սահմանաց այնոցիկ ազգք Հայոց»¹:

Հայ բնակչությունը Պարսկաստանից Հայաստան տեղափոխելու հետևյալ ծրագիրն է առաջարկվել: Առաջին, Թավրիզից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից և Մարաղայից բոլոր հայերին՝ կամովին թե բռնությամբ, բերել Հայաստան: Երկրորդ, պարսիկների հետ կնքվող պայմանագրի մեջ հատուկ կետ մտցնել, որ Ղազվինից, Համադանից, Թեհրանից, Նոր-Ջուղայից, Սպահանի և Բուրվարի գյուղերից, Շիրազից և Բուշիրից Հայաստան մեկնել ցանկացողներին հնարավորություն տրվի գալ Հայաստան: Եվ երրորդ, կազմակերպել հայ գաղթականության ներգաղթը նաև Թուրքիայից:

Ռուսական դիվանագիտության համար հեշտ չի եղել, իհարկե, համոզել պարսկական իշխանություններին՝ թույլ տալ պարսկահայերին գաղթել Հայաստան, քանի որ նրանք չէին ուզում հեշտությամբ ազատվել հազարավոր հայ ճորտ գյուղացիությունից²:

Թուրքմենշախի պայմանագրով հայ գաղթականության հարցի դրական լուծումից հետո, առաջանում է մի այլ դժվարություն. հայ գյուղացիներից ոմանք չեն ուզում թողնել իրենց բնակարանները, հողը, հարազատների գերեզմանները և գաղթել անորոշության մեջ: Օրինակ, Ուրմիայի Ջամալու գյուղի բնակիչները չեն ցանկացել գաղթել, պատճառ բռնելով իրենց ցանքսերը: Աշտարակեցին նամակ է գրել նրանց ու հանդիմանել³:

Պարսկաստանի տեղական իշխանությունները աշխատել են

¹ Վ. Ա. Պարսամյան, Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 107:

² Օ. И. Попова, Грибоедов—дипломат, Москва, 1964.

³ Վ. Ա. Պարսամյան, Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 113:

ամեն տեսակ դժվարություններ հարուցել գաղթող հայ բնակչության առջև. տեղացիներին թույլ չեն տվել գնել գաղթողների առջարժ գույքը, փոխադրական տալ և այլն: Չնայած այս բոլոր դժվարություններին, Պարսկաստանից Հայաստան և գաղթել շուրջ 40 000 հայ բնակչություն¹:

Այս, իհարկե, մեծ թիվ չէր բաժանացած ու ավերակի վերածված Արևելյան Հայաստանի համար, սակայն հայ ժողովրդի պատմության մեջ այս իրադարձությունը նշանակալի է նրանով, որ առաջին դեպքն էր, որ հայ ժողովուրդը ոչ թե իր հայրենիքից գաղթում է արտասահման, այլ արտասահմանից ներգաղթում է հայրենիք:

Պարսկահայերից հետո հայ բնակչություն ներգաղթեց Արևելյան Հայաստան նաև Քուրբիայի հայկական վիլայեթներից: Հետագա 60 տարիների ընթացքում, ըստ տեղեկությունների, ներգաղթող հայ բնակչության թիվը անցել է հարյուր հազարից:

Պարսկաստանի հայ բնակչության ջերմ ցանկությունն է եղել, որ բարեկամական սերտ փոխհարաբերություններ ստեղծվեն Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Եվ այդ հասկանալի է. չէ՞ որ իրենց հայրենի երկիրը, սկսած 1828 թվականից, գտնվել է Պարսկաստանին անմիջական հարևանության մեջ և ընդհարումների ժամանակ առաջին հերթին նրա գլխին է պայթելու պատերազմի արհավիրքը:

Այդ իսկ պատճառով պարսկահայ գաղթավայրի բնակչությանը մեծ վիշտ է պատճառել ռուսական դեսպան, ռուս նշանավոր բանաստեղծ Գրիբոեդովի սպանությունը Քեհրանում, 1829 թվականի փետրվարի 11-ին: Պարսկաստանի հայկական եկեղեցիներում, ի հիշատակ մեծ բանաստեղծի, կատարվել են հոգեհանգիստներ: Գրիբոեդովի դիակը Քեհրանի հայերը թաղել են իրենց եկեղեցու բակում՝ եղբայրական գերեզմանում, իսկ հետո, երբ առաջացել է Գրիբոեդովի դիակի փոխադրության անհրաժեշտությունը, դիակը հանել են և տեղափոխել Քբիլիսի:

XVIII—XIX դարերում պարսկահայերը պարսկական արքունիքին տվել են պետական, հասարակական, զինվորական և քաղաքական բնագավառներում աշխատող մի շարք աշխատողներ, որոնց կենսագրությունները հրատարակել է բանասեր Գալուստ

Շերմազանյանը¹: Մենք պարսկահայ այդ գործիչների վրա չենք ուզում կանգ առնել այն պարզ պատճառով, որ այդ գործիչների մեծ մասը կապ չեն ունեցել պարսկահայ համայնքների հետ, նրանց գործունեությունն ամենևին չի առնչվում գաղթավայրի պատմության հետ և ապա՝ պարսկահայ այդ գործիչները հանդիսացել են պետական պաշտոնյաներ և ոչնչով չեն տարբերվել այդ նույն ժամանակ գործող պարսիկ դաժան մյուս պաշտոնյաներից:

**Իրանահայ
գաղթավայրը
XIX դարում:**

Պարսկաստանի հայ բնակչության դրու-
թյունը շարունակվեց ծանր մնալ նաև XIX
դարի առաջին քառորդում: Հայ գյուղացիու-
թյան մեծ մասը շարունակում էր ճորտա-
կան վիճակի մեջ մնալ պարսիկ արբաբների՝ կալվածատերերի մոտ, որոնց կեղեքումները, ըստ ժամանակակիցների վկայության, չափ ու սահման չեն ունեցել: Բացի հողային ռենտայից և պետական հարկերից, հայ գյուղացիները պարտավոր են եղել աշխատել նաև արբաբների տնտեսության մեջ և կոռային բազմատեսակ աշխատանքներ կատարել կալվածատիրոջ համար՝ ընդհուպ մինչև արբաբի տնտեսությունը վառելիքայտով, իսկ նրա անասունները՝ խոտով ապահովելը: Մանր վիճակում են գտնվել հատկապես հայ այն գյուղացիները, որոնք խառն ապրելիս են եղել պարսկական գյուղերում:

Բարվոր վիճակում չեն գտնվել նաև Պարսկաստանի քաղաքներում, հատկապես Նոր-Ջուղայում, Թավրիզում և Թեհրանում ապրող հայերը: Քաղաքի հայ բնակչությունը, ինչպես հայտնի է, անցյալում բաղկացած է եղել առևտրականներից և արհեստավորներից:

Իրանի հայ աշխատավորներից շատերը, ինչպես ասել ենք, իրենց ընտանիքների ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար, հարկադրված են եղել մշակության գնալ Ռուսաստան և Հնդկաստան: Սակայն այստեղ ևս Պարսկաստանի իշխանությունները աշխատել են դժվարություններ ստեղծել. մեծ չափերի մաքսեր են գանձվել մշակության գնացողներից, իսկ հաճախ՝ վերցրել են ավելի, քան այդ օրենքով սահմանված է եղել:

Պարսկահայ գաղթավայրի վիճակը մասամբ բարելավվում է XIX դարի կեսերից, երբ Պարսկաստանում վերջնականապես զսպվում է խաների կենտրոնախույս գործունեությունը, վերջ է

¹ Ա. Նրիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք, Քիֆ-իս, 1894, հ. 1, էջ 338:

¹ Գ. Շերմազանյան, Նյութեր ազգային պատմության համար. երևի հայկազունքի Պարսկաստան, Ռոստով, 1890:

տրվում ավազակութեանը և երկիրը կարգ ու կանոնի մեջ է մտնում: Պարսկական կառավարությունը, նպատակ դնելով երկիրը դուրս հանել տնտեսական ճահճացած վիճակից և զարկ տալ առևտրի զարգացմանը, ուշադրություն է դարձնում պարսկահայ համայնքների վրա և աշխատում վերջ դնել նրանց նկատմամբ եղած սահմանափակումներին:

Ատրպատականի հայերի թեմական առաջնորդներից մեկը՝ Գեորգ եպիսկոպոսը, 1855 թվականի հուլիսի 27-ին Նասրեդին շահին է ներկայացրել մի բողոքագիր՝ պարսկահայ համայնքների ծանր դրության մասին և առաջարկել մի շարք միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են կիրառել պարսկահայ գաղթօջախները քայքայումից փրկելու համար: Առաջարկվող միջոցառումները հետաքրքիր են այն տեսակետից, որ մեզ որոշ պատկերացում են տալիս պարսկահայ գաղթօջախների վիճակի մասին XIX դարում: Ատրպատականի հոգևոր առաջնորդը, պարսկահայ համայնքների գրությունը բարելավելու համար, շահից խնդրել է կիրառել հետևյալ միջոցառումները.

1. Իրավունք չտալ հավատափոխին՝ իր հարազատների գույքը պահանջելու,
2. Արգելել հայերի հավատափոխությունը Պարսկաստանում,
3. Թույլ չտալ ամերիկյան միսիոներներին և գրականություն վաճառողներին՝ քարոզչությամբ զբաղվել Պարսկաստանում,
4. Արգելել կալվածատերերին՝ հայ գյուղացիներից պահանջելու խոտ և ցախ,
5. Սահմանվածից ավելի մաքս չվերցնել Ռուսաստան մշակության գնացող պարսկահայերից,
6. Արգելել աղջիկ փախցնելը և փախցնողներին պատժել,
7. Սանձել Ղարաղաղի խաների և բեկերի անիրավությունները,
8. Օգնել Քավրիզի հայկական դպրոցին 250 թուման նպաստով,
9. Պարսկական գյուղերում ցրված հայերին հավաքել մի տեղ,
10. Միրով վարվել հպատակ հայերի հետ,
11. Թավրիզի և Թեհրանի հայերին ազատել ամեն տեսակի հարկերից,
12. Արգելել անզավակ հայ մարդկանց գույքի գրավումը,
13. Թույլ տալ հայ եկեղեցիներին զանգահարությունը,

14. Օրինականացնել հայ եկեղեցիների կալվածները¹:

Շահն ընդառաջել է Գեորգ եպիսկոպոսի խնդրանքին և բավարարել է նրա առաջադրած բոլոր պահանջները, բացառությամբ զանգահարության թույլտվություն տալը, որպեսզի չզրգոխ մուսուլման մոլեռանդ խավերին: Այդ առթիվ շահը հատուկ հրովարտակ է տվել Ատրպատականի թեմի առաջնորդին:

Հայ բնակչության դրությունը բարելավելու նպատակով Նասրեդին շահին է դիմել նաև Նոր-Ջուղայի թեմի առաջնորդ Քադեոս վարդապետ Բեկնազարյանը (1851—1863): Նրան հաջողվել է պարսկական արքունիքից ստանալ մի շարք արտոնություններ²: Այսպես, նա կարողացել է համոզել արքունիքին և ազատել պարսկահայերին զորակոչից: Մինչ այդ, հայ երիտասարդները կանչվում էին բանակ, ցրում նրանց պարսկական զորքերի մեջ և քշերին էր հաջողվում զինվորական պարտականությունը կատարելուց հետո կենդանի վերադառնալ տուն:

Քադեոս վարդապետն պակասեցնել է տվել Նոր-Ջուղայի և Փերիայի հայ բնակչության հարկերը՝ Նոր-Ջուղայինը 150, իսկ Փերիայինը՝ 300 թումանով: Արքունիքը որոշում է ընդունել՝ այսուհետ հայերից հարկը գանձել այն չափերով, ինչ չափով այդ գանձվում է տեղացի պարսիկներից:

Արքունիքի միջամտությամբ չափավորվել է կալվածատերերի հայ գյուղերից գանձվող ունտան: Քադեոս վարդապետը, գրում է Տեր-Հովհաննյանցը. «Ջնջեաց զհեղինակութիւն մասնաւոր իշխանաց և խանից»³: Նա, միաժամանակ, կարողացել է վերջ դնել գավառապետների շահատակություններին, որոնք «կանոնաւորեալ» տուրքից բացի, վերցնելիս են եղել նաև «տուրս զանկանոնաւորեալս», այլ խոսքով ասած՝ վերցրել են սահմանված հարկից ավելին:

Եվ, վերջապես, Քադեոս վարդապետի միջամտությամբ, պարսկական արքունիքը պատժիչ զորքեր է ուղարկել բախտիարցի ավազակների դեմ, որոնք շարունակաբար հարձակվել են հայկական գյուղերի վրա և թալանել բնակչության գույքը ու անասունները: Կառավարական զորքերը ցրել են բախտիարցի ավազակախմբերը և ղեկավարներին պատժել:

1 ԶՊՊԱ արխիվ, ֆ. 57, № 224, ք. 13—18:

2 Քադեոս վարդապետի ստացած արտոնության մասին տե՛ս Զ. Տեր-Հովհաննյանցի «Պատմություն Նոր-Ջուղայու», հ. II, էջ 83—85:

3 Տեր-Հովհաննյանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, հ. II, էջ 18:

Հասկանալի է, որ ոչ Գևորգ եպիսկոպոսը և ոչ էլ Թադեոս վարդապետը նման արդյունքի հասնել չէին կարող, եթե պարսկական քաղաքականության մեջ շրջադարձ տեղի ունեցած չլիներ պարսկահայության նկատմամբ, որ պարսկական արքունիքը վերջնականապես չհամոզվեր, որ պարսկահայ համայնքները կարող են որոշ դեր խաղալ Պարսկաստանի քայքայված տնտեսությունը վերականգնելու գործում:

Որքան բնակչություն է ունեցել Պարսկաստանի հայ գաղթավայրը XIX դարի վերջերում և XX դարի սկզբներում: Վիճակագրություն այն ժամանակ կատարել են Պարսկաստանի հայկական թեմերի առաջնորդարանները, ուստի մենք անհրաժեշտ ենք համարում բերել այդ տվյալները: Պարսկաստանում գոյություն է ունեցել երկու թեմ՝ Ատրպատականի, որը հիմնականում ընդգրկել է Հյուսիսային Պարսկաստանը և Նոր-Ջուղայի թեմ կամ իրանոհնդկական թեմ, որն ընդգրկել է հարավային Պարսկաստանը և Հնդկաստանը՝ նրա մոտիկ երկրների հետ միասին:

Նոր-Ջուղայի թեմը, ըստ 1856 թվականի վիճակագրական տվյալների, հետևյալ պատկերն է ունեցել: Ստորև բերում ենք Հ. Տեր-Հովհանյանի հրապարակած տվյալները:

Վ ա յ Ր Ե Ր	Գյուղերի թիվը	Տնեցիք	Շնչերը
Զարմհալ	6	306	2063
Փերիա	21	1014	6517
Բուրվարի	9	263	1502
Գյափլա	16	413	2480
Քյաղազ	9	183	1105
Քյամարա	5	124	744
Մալայիր	3	88	501
Ղարաղան	4	102	619
Համադան	4	40	235
Շավրին	—	76	318
Թեհրան	—	75	310
Ղազվին	—	36	173
Շահաբդուլաղիմ	—	39	145
Վանազ գյուղ	—	30	159
Շոթորխար	—	13	62
Անզալի (այժմ Փեհլևի)	—	9	37
Ռաշտ	—	7	72
Շիրազ	—	7	35
Բուշեր	—	9	41

Հովհանյանն իր հրապարակած վիճակագրական ցանկի մեջ է մտցրել նաև Լնջանի գավառի 11 գյուղերի, Ալիջանի գավառի 7 գյուղերի և Քյարվանդի գավառի անցյալում ապրող հայ գյուղացիության թվահաշիվը և նշել, որ այդ տվյալները նա վերցրել է 120 տարի առաջ գրված մի կոնդակից, իսկ իր ժամանակ այդ գավառների գյուղացիները հեռացած են եղել իրենց բնակավայրերից:

Հովհանյանի տեղեկության համաձայն, Նոր-Ջուղայի ավանն ունեցել է 371 տուն՝ 2586 շունչ բնակչությամբ¹:

Նոր-Ջուղայի թեմի հայ բնակչության վիճակագրական մի այլ ցանկ հրապարակել է «Մասյաց աղավնի»-ն: Այնտեղ զուգահեռ բերված են 1851 և 1880 թվականների վիճակագրական տրվյալները, որը նույնպես անհրաժեշտ ենք համարում բերել ստորև²:

Վ ա յ Ր Ե Ր	1851 թվական		1880 թվական	
	տուն	շունչ	տուն	շունչ
Նոր-Ջուղա	375	2550	450	4567
Թեհրան	75	310	150	678
Վանազ և Գեթրիար գյուղեր Թեհրանի մոտ	43	211	123	456
Շիրազ	7	34	25	98
Բուշեր	9	65	27	187
Համադան	40	234	125	475
Համադանի մոտիկ գյուղերը	76	316	212	789
Զարմահալի գավառ	306	2067	678	4567
Փերիայի գավառի 25 գյուղերում	1012	6543	2345	12123
Բուրվարի 16 գյուղերում	446	3005	587	6115
Քեամարայի 5 գյուղերում	124	751	250	1456
Ղյաթլայի 8 գյուղերում	183	1112	345	1234
Քյաղազի 7 գյուղերում	151	981	234	1244
Մալայիրի 4 գյուղերում	101	581	234	1244
Ղարաղանի 4 գյուղերում	102	773	245	1567 ⁴

Այսպիսով, Պարսկաստանի 5 քաղաքում և 78 գյուղերում 1851 թվականին գտնվել է 3046 տուն՝ 19 065 շունչ հայ բնակչությամբ:

1 Տե՛ս Տեր-Հովհանյանց, հ. II, էջ 312—317:
2 1851 թվականի վիճակագրական տեղեկությունները մենք վերցրել ենք «Մասյաց աղավնուց», իսկ 1880 թվականինը՝ արիվային վավերագրերից: (Տե՛ս «Մասյաց աղավնի», 1858, էջ 263 և 270Ա, ք. 57, գ. № 136, թ. 7):

չությամբ, իսկ 1880 թվականին հայ բնակչության թիվն զգալիորեն ավելացել է:

Մեր ձեռքի տակ եղած հայ բնակչության վիճակագրությունը հիմնականում, վերաբերում է նոր շրջանին: Այդ ունի հետևյալ պատկերը.

Թավրիզում	5500	շունչ
Սալմաստում	1200	»
Ուրմիայում	2400	»
Մարաղայում	1300	»
Միանդաբում	1000	»
Մակուում	50	»
Թաղեռս առաքյալի վանքում	40	»
Ս. Ստեփանոս Նախավկայում	100	»
Մուժումբարում	350	»
Ղարաղաղում	2500	»
Արդաբիլում	40	»

Ինչպես նոր-Ջուղայի, այնպես և Ատրպատականի վիճակագրական տվյալներից դժվար չէ նկատել, որ համաշխարհային պատերազմից առաջ պարսկահայ բնակչության ճնշող մեծամասնությունը գյուղացիությունն է հանդիսացել:

Նոր-Ջուղայի հայ գյուղացիները գտնվել են ճորտական վիճակում արքունիքի և կամ անհատ արքաբների (կալվածատերեր) մոտ: Ըստ տեղեկությունների, Փերիայի գավառի ինը հայկական գյուղերն արքունական են եղել և մինչև 1847 թվականը պարտավոր են եղել վճարել 1056 խալվար ցորեն, իսկ հետո՝ բնամթերքը փոխել են դրամի: Մնացած հայկական գյուղերը պատկանել են այս կամ այն պարսիկ արքաբին: Կալվածատիրական գյուղերի հայ բնակչության դրությունը, ինչպես նշում է մեր հեղինակը «ոչ նուազ ինչ են, քան ծանրութիւն հարկի գիւղականացն»¹:

1921 թվականին ստացված մի զեկուցագրում նոր-Ջուղայի թեմի հայ գյուղական տնտեսությունների թիվը հաշվում է 3328, որից սեփական հող են ունեցել միայն 200 տնտեսություն, իսկ մյուսներից՝ 244 տնտեսություն համարվում են սակավահող տնտեսություն, իսկ 2884 տնտեսություն եղել են «ամենևին հող չունեցողներ», որոնք աշխատում են կալվածատիրոջ տնտեսության

¹ Տեր-Հովհաննես, հ. II, էջ 301:

վրա՝ «անտանելի ծանր պայմաններում»¹: Ի դեպ, նոր-Ջուղայի թեմի այս գյուղացիությունն է, որ սեագործ բանվորներ է տվել անգլիական նավթահորերին:

Մի այլ զեկուցագրում հետևյալ տեղեկությունն է հաղորդվում. «Հողը և տները բոլոր գյուղերում պատկանում են կալվածատիրոջը, բացառությամբ 4—5 գյուղի, որտեղ տունը պատկանում է գյուղացուն և ի հարկին կարող է ծախել: Կալվածատերը գյուղացուց ստանում է հարկ 3—5 թուման յուրաքանչյուր զույգ եզ ունեցողից և ջրովի բերքի $\frac{1}{3}$ -ը, իսկ անջրդի բերքի՝ $\frac{1}{5}$ մասը: Բոլոր գյուղերն ունեն այգիներ, ցանում են գարի, ցորեն, ոսպ, սիսեռ, բամբակ և զանազան խոտաբույսեր՝ առվույտ, շաբդար, կորնգան և այլն»¹:

Նոր-Ջուղայի հայ գյուղացիությունը պարտավոր է եղել հողեր հարկ վճարել նաև նոր-Ջուղայի թեմի առաջնորդարանին: Ըստ Տեր-Հովհաննեսյանցի տեղեկության, Չարմահալի հայ գյուղացիները պարտավոր են եղել վանքին վճարել 5 բեռ ալյուր, 3 լիտր յուղ, 25 լիտր պանիր, 50 լիտր շորթան: Փերիան պարտավոր է եղել վճարել՝ 50—70 բեռ ալյուր, 10 լիտր յուղ, 25 լիտր պանիր, 50 լիտր շորթան և 15—20 ոչխար: Իսկ Քյազազը, Համադանը, Թեհրանը և մյուս հայկական համայնքներն իրենց հոգևոր հարկը վճարել են դրամով²:

Տեր-Հովհաննեսյանցը ուշագրավ փորձ է կատարել յուրովի սոցիալական բաժանման ենթարկելու նոր-Ջուղայի հայ բնակչությունը: Նա նոր-Ջուղայի ավանի հայ բնակչությանը բաժանել է հետևյալ շորս դասի մեջ.

Առաջին դասի մեջ մտել են քահանաները և վաճառականները: Քահանաների թիվը հաշվել է 35 հոգի, իսկ վաճառականների՝ 6 հոգի:

Երկրորդ դասի մեջ մտել են արհեստավորները, մանր առևտրականները՝ փերեզակներ, գուլպա գնող և վաճառողներ, ոսկերիչներ, հյուսներ, դարբիններ, նպարավաճառներ, մսավաճառներ, ցորեն գնող-վաճառողներ, ոստայնագործներ: Ըստ նրա հաշվումների, նոր-Ջուղայի երկրորդ դասի մեջ մտել են ընդամենը 140 տուն հայ բնակչություն:

¹ ՀՊՊԱ արխիվ, ֆ. 113, ց. 3, Մ 153, 18ա-բ:

² Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, Մ 2013, թ. 4ա-6բ:

Երրորդ դասի մեջ մտել են, նրա բառերով ասած՝ «քրտնաչան վաստակավորները և մշակները»¹, այսինքն՝ որմնադիրները, կոշկակարները, համետակարները և բոլոր նրանք, ովքեր մշակությամբ են զբաղվում և օրվա վաստակով հաց ճարում: Այս կարգի ընտանիքների թիվը հաշվում է 80:

Չորրորդ դասի մեջ մտցրել է այն բոլոր մարդկանց, ովքեր ապրում են «տառապանօք և հեծութեան ցաւօք»: Այդպիսիների թիվը հաշվվել է 50—60 տուն:

Պարսկաստանի քաղաքատիպ վայրերում հայ բնակչության մեջ ամենամեծ թիվը փաստորեն կազմել են արհեստավորները: Հայերի ձեռքումն են գտնվել գլխավորապես այն արհեստները, որոնք գործ չեն ունեցել սննդամթերքի և ընդհանրապես թաց մշակման հետ կապված մասնագիտությունների հետ, որովհետև շարիաթի սահմանումով ուղղափառ մահմեդականը իրավունք չունի ուտելու այն սննդամթերքը, որին «անհավատ քրիստոնիստի ձեռք է կպել»: Հայերին արգելված էր մսագործությամբ, հացագործությամբ և թաց մշակման հետ կապված մյուս մասնագիտություններով զբաղվել: Հայ արհեստավորները, հիմնականում, հանդիսանում էին՝ ոստայնագործները, ոսկերիչները, դարբինները, հյուանները և այլն:

Պարսկահայերի ամենից սիրած և եկամտաբեր մասնագիտություններից մեկը ոսկերչությունն է եղել: XIX դարում Պարսկաստանի ոսկերչությունն ամբողջությամբ, կարելի է ասել, հայ արհեստավորների ձեռքում է գտնվել: Հայ արհեստավորների ձեռքումն է եղել ո՛չ միայն քաղաքի սովորական, այլև պարսկական արքունական ոսկերչությունը: Հայ ոսկերիչները և ակնագործներն են պարսկական շոալլ արքունիքին ոսկեղեն և ակնեղեն մատակարարողները եղել: Աբբաս Միրզայի, Ֆաթալի-շահի և Մահմեդ շահի ոսկերչապետները եղել են հայեր: Արքունիքի հռչակավոր ոսկերիչներից է եղել Քաղեոս Առաքելյանը, որին Պարսկաստանում անվանել են Քուրապ: Նա այնքան մեծ հեղինակություն է ունեցել պարսկական արքունիքում, որ նրա միջնորդությամբ Աբբաս Միրզան հարկից ազատել է Քավրիզում բնակվող հայերին: Պարսկական արքունիքի լավագույն ոսկերիչներից է հանդիսացել նաև Ստեփան Եղիգարյանը, Առաքելը, Քոմաս խան Մելիք Քոփ՝ մասյանը, Մերունը (Հովհաննես Մասեհյանի հայրը) և ուրիշներ:

¹ Տեր-Հովհաննյանց, հ. II, էջ 144—145:

Պարսկահայ արհեստավորները մեծ հաջողություն են ունեցել նաև մուշտակագործության մեջ: Աղվեսի, կզաքիսի, զառան և այլ կենդանիների մորթուց նրանք պատրաստել են հրաշալի բուրբեր: Ըստ տեղեկությունների, սկզբնական շրջանում հայերի պատրաստած բուրբերը լայն սպառում չեն ունեցել, որովհետև այն ևս դասվել է թաց մշակման հետ կապված մասնագիտությունների շարքին, սակայն 1834 թվականին մոլլաները գտել են շարիաթի պատվերը շրջանցելու հնարամիտ մի միջոց. բուրբ գնող մեծահարուստ մարդիկ բուրբի գինը վճարել են հայ վարպետին աղքատ մահմեդականի ձեռքով, որով իրենց ազատել են հանցապարտությունից՝ մեղքը ձգելով աղքատ հավատացյալի վրա:

Նոր-Ջուղայում բազմատեսակ արտադրանք տվող արհեստներից են հանդիսացել ոստայնագործությունը և գուլպայագործությունը: Ըստ տեղեկությունների, Նոր-Ջուղայի ջուլհակները և գուլպա գործողները տարեկան վաճառքի են հանել 130 հազարից մինչև 140 հազար կտոր կտավ և 25 հազարից մինչև 30 հազար գուլպա գուլպա:

Արհեստավորները, ինչպես երևում է, բաժանվել են երկու խմբի: Այդ երևում է Տեր-Հովհաննյանցի դասակարգած Նոր-Ջուղայի հայ բնակչության ցանկից: Այդ ցանկում, օրինակ, ոսկերիչները, ջուլհակները, հյուանները և դարբինները մտել են երկրորդ դասի մեջ, իսկ որմնադիրները, քարհատները, կոշկակարները, համետակարները և սափրիչները՝ երրորդ:

Պարսկաստանի քաղաքաբնակ հայ բնակչության սոցիալական կազմում արհեստավորների զբաղեցրած տեղը պատկերացնելու տեսակետից ցուցանշական է Նոր-Ջուղայի հայ արհեստավորների թիվը, որը հրապարակել է Տեր-Հովհաննյանցը: Նոր-Ջուղայում, ըստ առանձին մասնագիտությունների, հետևյալ թվով արհեստավորներ են եղել. գուլպա գործողներ՝ 30 հոգի, ոսկերիչներ՝ 10 հոգի, հյուաններ՝ 6 հոգի, դարբիններ՝ 4 հոգի, ոստայնագործներ՝ 130 հոգի: Դժբախտաբար, թվական տվյալներ չկան որմնադիրների, քարհատների, սափրիչների, կոշկակարների և համետակարների մասին:

Պետք է ենթադրել, որ Պարսկաստանի քաղաքատիպ վայրերի մյուս հայ համայնքների հայ բնակչության սոցիալական կազմը չի տարբերվել Նոր-Ջուղայից:

Հայկական գյուղերում բավականին զարգացած է եղել գորգագործությունը: Պարսկահայերի գործած գորգերը հայտնի են եղել «Արմանիբաֆ» անունով և մեծ հռչակ են ունեցել միջազգա-

յին շուկաներում. նրանք ավելի թանկ են գնահատվել, քան պարսկական սովորական գորգերը:

Պարսկահայ համայնքների ներքին ընդհանուր ղեկավարությունը գտնվում է թեմական իշխանությունների ձեռքում: Մինչև 1944 թվականը Պարսկաստանում գոյություն է ունեցել երկու թեմ՝ Ատրպատականի՝ կենտրոն ունենալով Թավրիզը և Իրանո-Հնդկական՝ կենտրոն ունենալով Նոր-Ջուղան: 1944 թվականին Պարսկաստանում կազմակերպվել է երրորդ թեմը՝ կենտրոն ունենալով Քեհրանը:

Պարսկական իշխանությունները ճանաչում են թեմականի վարչությունները որպես հայ գաղթավայրի հոգևոր իշխանությունների պաշտոնական ներկայացուցիչներ և արտոնել են տնօրինելու ընտանեկան և ժառանգական խնդիրները: Յուրաքանչյուր թեմում կա թեմական խորհուրդ, որն ընտրվում է համայնքի անդամներից: Թեմական խորհուրդներին ղեկավարում է թեմակալը, որը նշանակվում է հոգևոր բարձր իշխանությունների կողմից: Թեմական իշխանություններն իրենց ունեցած իրավունքը՝ ամուսնության, ապահարզանի, կտակների, ժառանգության և որդեգրության հարցերում արգարացի տնօրինելու համար կազմել են «Իրանահայություն ընտանեկան և ժառանգական օրենքների ժողովածու»՝ 74 հոդվածից: Այս օրենքների ժողովածուն հաստատված է ինչպես տեղական կառավարության, այնպես էլ էջմիածնի կողմից:

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, ինչպես հայկական մյուս գաղթավայրերում, այնպես և Պարսկաստանում, արևմտահայության դրությունը Թուրքիայում բարելավելու համար տեղի են ունենում մասսայական ժողովներ ու միտինգներ: Նոր-Ջուղայի համայնական խորհուրդը հրավիրում է հատուկ ժողով և քննարկում այն հարցը, թե պե՞տք է արդյոք դիմում կատարել մեծ տերությունների կառավարություններին, թե ոչ, և դիմելու դեպքում ի՞նչ պետք է պահանջել: Այս ժողովի արձանագրությունից երևում է, որ տեսուչ Արմենակ Գերասիմյանը դեմ է եղել նման դիմում կատարելու և գտել է, որ դրանից ոչ թե օգուտ է ստացվելու, այլ՝ վնաս, որովհետև կապիտալիստական երկրները անտարբեր են գտնվելու հայերի նկատմամբ¹:

Նոր-Ջուղայի համայնական այս ժողովը, հակառակ Գերասիմյանի պահանջի, որոշել է դիմել մեծ տերություններին ոչ թե հայկական վիլայեթներում բարեկարգություններ կատարելու հա-

մար, այլ պահանջել՝ «Կուլտուրական ինքնավարություն հարևան քրիստոնյա պետության (նկատի ունենալով Ռուսաստանը—Ա.Ա.) քաղաքական գերիշխանության հովանավորության ներքո»: Ժողովը հեռագրել է ցարական արքունիքին և խնդրել, որ նա իր վրա վերցնի Թուրքիայի հայկական վիլայեթների քաղաքական հովանավորությունը և գերիշխանությունը¹:

Ի դեպ, ցարական արքունիքից Իրանի հայերը ստացել են հետևյալ անորոշ պատասխանը. «Սպասվում է հարմար ժամանակի և միջոցի, որպեսզի կարելի լինի առաջ տանել Թուրքիայում ապրող հայության վիճակի և ապահովության գործը»²:

Համաշխարհային առաջին պատերազմը իր ծանր հետևանքներն է թողել նաև պարսկահայության վրա: Պարսկաստանի հայ գաղթօջախներից տուժել է հիմնականում Ատրպատականի թեմը: 1918 թվականին, երբ Թուրքական զորքերը մտել են Ատրպատական, կատարել են իրենց սովորական վայրագությունները՝ կոտորել են զգալի թվով հայ բնակչություն: Ատրպատականից ստացված մի զեկուցագրում հետևյալ ձևով է նկարագրվում թեմի վիճակը համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, որից անհրաժեշտ ենք համարում մեջբերում անել: «Տաճկաց հինգամսյա տիրապետության օրով անվնաս մնացին Թավրիզ, Մարաղա և Ղարաղաղ: Կոտորվեցին Մակուի երեք գյուղերը մոտ 500 շունչ, մնացած կանայք և երեխայք, որոնք իսլամացան: Խոյում 1000 շունչ կոտորվել են, մնացին կանայք և երեխաները՝ իսլամացան: Սալմաստ, Ուրմիա, Սուլզուզ, Սովուշ-Բուլաղ գաղթեցին Համադան-Բակուբա-Ղազվին՝ կորցնելով ճանապարհին 5000 շունչ, մրդանացել են 5000 հոգի, որոնց մի մասը Բակուբա, Համադան, Ղազվին են: Իսլամացածները համարյա բոլորը նորից դարձել են իրենց եկեղեցու ժոցը, բայց խիստ բարոյական և նյութական ընկած դրության մեջ են: Թավրիզի և Մարաղայի հայերը թեև մարդկային կորուստ շատ քիչ են ունեցել, սակայն տուժեցին նյութապես: Ուրմիո և Սալմաստի հայությունը դեռ Թավրիզ է, հետ չի տարված իրենց տեղերը նույն պատճառով, ինչ որ Նախիջևանի և Ղարսի գաղթականները մինչև վերջին ժամանակներս: Բացի Ատրբայատականի հայությունից, Սալմաստ և Ուրմիա կար՝ վանից՝ 12 000 շունչ և Աղբակից՝ 2 000, որոնք այժմ Բաղդադի մոտ գտնված Բակուբա տեղում են: Բակուբայում նպաստ տալիս են

1 299Ա, ք. 57, գ. № 677, էջ 95—107:

2 Նույն տեղում:

1. 299Ա, ք. 57, գ. № 677, էջ 95—107:

անգլիացիք, Համադանում՝ ամերիկացիք, Ղազվինում՝ հայոց գումարներին, Քավրիզ՝ 1000 շնչին՝ ամերիկացիք, Քավրիզի 600 շնչին՝ մեր կոմիտեն: Ղարադաղի գյուղերին օգնում է մեր կոմիտեն, որ է պատգամավորական ժողովը, Մակու եղածներին օգնում է մեր ժողովուրդը: Մակու, Խոյ, Սալմաստ, Ուրմիա, Սուլդուզ, Միանդոբ, Ղարադաղի շատ գյուղեր, Աղբակ ավերված են բոլոր եկեղեցիները, թալանված է ամեն ինչ:

Առաջնորդարանը, թեմական ժողովը և խորհուրդը ոգի ի բռին գործում են ամեն ուղղությամբ՝ հօգուտ իրանց թշվառ ժողովրդի: Առաջնորդարանը նյութական սնանկության մեջ է, ապրում է ողորմությամբ: Մնացած հայերի թիվը այստեղ և Բաղդադի շրջանում հետևյալն է. Քավրիզ՝ 350, Մարաղա՝ 1200, Միանդաբի մնացորդ՝ 500, Ղարադաղում՝ 4000, Սալմաստ-Ուրմիա մնացորդ՝ 5000, Մակուի երեք գյուղերի մնացորդ՝ 350, Բակուբե վանեցի՝ 12 000, Սուսուլից Բակուբե են տարված 5000—7000»¹:

Պարսկաստանի հայ աշխատավորությունը ցնծությամբ է ընդունել Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու լուրը: Նա աշխատել է անել կարելին՝ նյութական իր համեստ օգնությունը ցույց տալ վերականգնվող Սովետական Հայաստանին: Սփյուռքահայ գաղթօջախներից Քավրիզն առաջինն է եղել, որ արձագանքելով 204-ի ԿԿ-ի կոչին, կազմակերպել է Քավրիզի 204-ի մասնաճյուղը 1922 թվականի ապրիլի 21-ին: Նոր կազմակերպված Քավրիզի 204-ի վարչությունը հանդես է եկել հատուկ կոչով՝ հայտարարելով հետևյալը. «Նորակազմ կոմիտեն լի է հավատով և խանդով դեպի հայ ժողովրդի ապագան, անցնում է գործի և վստահ է, որ Քավրիզի հայը, շնայած տնտեսական իր նախընթաց քայքայմանը, ոչ մի միջոց և ջանք չի խնայի՝ նպաստելու Հայաստանի վերաշինության գործին»: Կոչի հեղինակները միաժամանակ գտնում են, որ «Աշխարհի զանազան կողմերում ապրող հայը պարտավոր է կատարել իր հայրենասիրական պարտքը հայ բնաշխարհի հանդեպ» և տնտեսական ամեն տեսակի օգնություն ցույց տա Սովետական Հայաստանին:

Շատ շանցած Հայաստանի օգնության կոմիտեններ են ստեղծվում Պարսկաստանի մեծ և փոքր գրեթե բոլոր գաղթօջախներում՝ Թեհրանում, Նոր-Ջուղայում, Ռաշտում, Էնգելիում, Ղազվինում, Ահվազում, Նիշաբուրում, Մեշեդում, Փեհլևիում և այլն:

Պարսկաստանի հայ գաղթավայրում, մեզ ավելի մոտիկ ժա-

մանակներում, երբ ստեղծվել են քաղաքական բարենպաստ պայմաններ, Պարսկաստանի գաղթօջախներում ստեղծվում են մի շարք առաջադիմական կազմակերպություններ:

Պարսկահայ մշակույթը: Պարսկահայ գաղթավայրի մշակութային ամենից խոշոր օջախը հանդիսացել է Նոր-Ջուղան, որի ծաղկուն շրջանն է եղել XVII դարը:

Այստեղ է գործել Խաչատուր Կեսարացու հիմնած նշանավոր ճեմարանը, որը հայկական բարձրագույն դպրոցներից մեկն է հանդիսացել միջին դարերում: Այդ դպրոցի աչքի ընկնող ուսուցիչներից է եղել հայտնի Կոստանդին վարժապետը: Նոր-Ջուղայի այս ճեմարանն առաջինն է եղել, որ դասավանդման մեջ շեշտը դրել է աշխարհիկ դաստիարակության վրա. հայ խոջաները, որոնք նյութական օժանդակություն են ցույց տվել դպրոցին, ցանկացել են, որ այդ դպրոցը, ուր սովորելիս են եղել իրենց երեխաները, այնպիսին լինի, որ կարողանա պատրաստել ժամանակակից բնական գիտություններին տիրապետող և եվրոպական լեզուները գիտցող բարձրորակ մասնագետներ: Նոր-Ջուղան XVII դարում աչքի է ընկել նաև իր գրչության և մանրանկարչության մասին խոսք եղել է առաջին հատորում:

XVIII դարի երկրորդ կիսում, պարսկահայ գաղթօջախների նվազման զուգընթաց խեղճանում է նաև Նոր-Ջուղայի կուլտուրական կյանքը. ճեմարանը փակվում է, իսկ նրա փոխարեն հանդես են գալիս վանքերին կից դպրոցները, որոնք գործում են մեծ ընդմիջումներով: Նոր-Ջուղայի դպրոցական կյանքը XVIII—XIX դարերում կարողանում է հեիհե պահպանել իր գոյությունը՝ Հնդկաստանի, Ջավայի և Բաթուայի հայերի կտակած նվիրատվությունների շնորհիվ:

1833 թվականին մազրասաբնակ Գրիգոր Սամյանը 20 000 ռուպի է կտակել՝ Նոր-Ջուղայում դպրոց բաց անելու նպատակով, պահանջելով ուսուցանել «հայ մանկանց զարհեստն քերականական և թուաբանական»: Դպրոցը բաց է արվել Ս. Ստեփանոսի եկեղեցու գավթում, սակայն այն երկար կյանք չի ունեցել նյութական միջոցների սպառման պատճառով. փակվել է 1837 թվականին: Այս դպրոցում երկու տարի դասավանդել է Մեսրոպը Թաղիադյանը¹:

¹ ՀՊՊԱ, ֆ. 57, ց. 2, № 815, էջ 1—2:

¹ Տեր-Հովհանյանց, հ. II, էջ 255:

1843 թվականին կալկաթաբնակ Հարություն Աբգարյանը Ս. Աստվածածին եկեղեցու բակում հիմնել է մի դպրոց՝ «Հայկական հայրենասիրական» անունով: Գարոցը գործել է 40 տարի և բավականին գրագետ շրջանավարտներ տվել¹:

1853 թվականին Բաթուայից երկու քույրեր՝ Մարիամ Հարությունյան և Թագուհի Մանուկյան, Նոր-Ջուղայի Դավրեժ թաղում Ս. Մինասի եկեղեցու գավթում իրենց ծախսով բաց են արել հայկական մի նոր դպրոց, որը գործել է 30 տարի շարունակ²:

1880 թվականին Ճավայից, Բիրմայից և Հնդկաստանից հանգանակած միջոցներով Նոր-Ջուղայի Չարսու թաղամասում կառուցում են դպրոցական մի խոշոր շենք և 1883 թվականին այնտեղ կենտրոնացնում տեղի մանր երեք դպրոցները՝ անվանելով այն «Ազգային կենտրոնական դպրոց»³:

1858 թվականին ճավայաբնակ Մանուկ Հորդանանյանը Նոր-Ջուղայում առաջին անգամ բաց է անում օրիորդաց դպրոց: 1892 թվականին այս դպրոցը ևս միացվում է «Ազգային կենտրոնական» դպրոցին: 1901—1905 թվականներին մոսկվացի Գեորգ Քանանյանցի կտակով Նոր-Ջուղայում կառուցվում է մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի երկհարկանի շենք, ուր և տեղավորվում է «Ազգային կենտրոնական դպրոցը»: Նոր-Ջուղայում դպրոցներ են սենցել նաև հայ կաթոլիկները և հայ բողոքականները⁴:

Նոր-Ջուղայի կուլտուրական կարևոր հիմնարկներից է Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանը: Նրա հիմնադրման ճիշտ թվականը դժվար է ասել: Հայտնի է միայն, որ Շահաբասի բռնազաղթի ժամանակ գաղթականներն իրենց հետ բավականի թվով ձեռագրեր են բերել և նվիրել վանքին: Հավաքված այդ ձեռագրերը կնքվել են և խնամքով պահպանվել: 1770—1790 թվականներին, երբ ծանր պայմաններ են ստեղծվում Ջուղայի հայ բնակչության համար և ամեն մեկն աշխատում է փախչել և ազատել իր գլուխը, ձեռագրերն անտերության է թողնվում, որի պատճառով ձեռագրերից շատերը գողացվում են և կամ որպես անպետք գրքեր վաճառքի հանվում շուկայում ընչին գնով: Վրդովմունքով կարելի է կարդալ վանքի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Աստրախանցու՝ ամեն Մկրտչի 1783 թվականի նոյեմբերի 21-ին գրած նամակը,

1 «Պարսկահայ տարեցույց», 1929 թ., էջ 31—34:

2 Տեր-Նովհանյանց, հ. II, էջ 258—259:

3 «Պարսկահայ տարեցույց», 1929 թ., էջ 33—34:

4 Նույն տեղը, էջ 34—35:

ուր նկարագրում է ձեռագրերի ոչնչացումը. «Տեղիդ առաջնորդ Յովսէփ վարդապետն,— կարդում ենք այնտեղ,— երկու անգամ գիր է ղրկել, գրում այ՝ քանի հատոր գիրք այ ուզեցել, սրբազանն կարծում այ Ջուղայ կամ վանքն էլ էն այ՝ որ ինչ գիրք ուզենանք ձարվի: Պիտի լսած լինեք, որ Ազատ խանի ժամանակին յամի 1755 գրքերն ղիտրն 300 դիեան քաղաքի աթարներն ու բարութ շինողքն են առտուել»¹:

Վանքի ձեռագրերի վրա նորից սկսել են ուշադրություն դարձրնել XIX դարի երկրորդ կիսում: 1844 թվականին ձեռագրերի համար գրատուն են առանձնացրել և գրապահարաններ պատրաստել:

Վանքի մատենադարանի ձեռագրերի ցուցակն առաջին անգամ կազմել է բանասեր Գալուստ Շիրմազանյանը 1853 թվականին: Այդ ժամանակ ձեռագրական ժողովածուն եղել է 250 հատոր: Նոր ժամանակներում մատենադարանի ձեռագրերի ցուցակը կազմել են պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանը և Մեսրոպ մագիստրոսը: Ներկայումս Ամենափրկիչ վանքի մատենադարանում հաշվվում է մոտ 1000 ձեռագիր:

Ամենափրկիչ վանքին կից կազմակերպվել է հայկական թանգարան, որի շենքը կառուցվել է Թագոս Հարությունյանի նվիրատվությամբ 1907 թվականին: Թանգարանում ցուցադրվում են իտալական աչքի ընկնող նկարիչների գործեր, Նոր-Ջուղայի հայկական վանքի՝ շահերից ստացած ֆերմաներ, հայ ասեղնագործության ընտիր նմուշներ, Ջուղայի մանրանկարչական դպրոցի աչքի ընկնող ստեղծագործություններ, Նոր-Ջուղայում գրված ընտիր ձեռագրերի նմուշներ և այլն:

Պարսկահայ գաղթավայրի մյուս հին և կարևոր կուլտուրական օջախներից է Թավրիզը: Թավրիզում հայկական դպրատան գոյություն մասին տեղեկություններ կան 1600-ական թվականներից: Այն գտնվել է տեղի Ս. Աստվածածին եկեղեցու գավթում: Հետագայում այդ դպրոցում դասավանդել է ժամանակին հայտնի մանկավարժ Պողոս վարդապետը, որի մոտ կովկասում սովորել են Ստեփաննոս Նազարյանցը, Խաչատուր Աբովյանը, Մեսրոպ Թաղիադյանը և ուրիշներ: Այդ դպրոցի վրա է հիմնվել Արամյան կոչվող դպրոցը, որն զգալիորեն փոխել է իր բնույթը 1833 թվականին, երբ վերակառուցվել է նրա ուսման ծրագիրը և փոփոխվել դասավանդման հին մեթոդները: 1853 թվականին Ատրպատա-

1 Տեր-Նովհանյանց, հ. II, էջ 16:

կանի թեմի առաջնորդարանը, Ս. Թադեի վանքից այստեղ տեղափոխվելուց հետո, կառուցում է Արամյան դպրոցի շենքը, ուր ներկայումս տեղավորված է թեմի առաջնորդարանը:

Արամյան դպրոցը, Գ. արքեպ. Վեհապետյանի ջանքերով, նյութական բարեկարգ վիճակի մեջ է դրվում: Բացի տեղական միջոցներից, պարսկական կառավարությունը 1864 թվականից սկսած դպրոցին տալիս է 250 թուման նպաստ՝ պարսկերեն դասավանդելու համար: Դպրոցի վարչությանը հաջողվում է նաև 300 թուման նպաստ ստանալ ցարական արքունիքից՝ ուսուց լեզուն դասավանդելու համար: Հետագայում այդ գումարը բարձրացվել է 500 թումանի:

Արամյան դպրոցը ուսման ծրագիրը նոր բարեփոխության է ենթարկել 1874 թվականին: Այս բարեփոխությունից հետո նախկին նարեկ-նաղմոսյան դպրոցը փաստորեն վեր է ածվել նոր դրպրոցի՝ ժամանակակից իմաստով: Դպրոցում սկսվում են դասավանդվել նաև բնագիտական առարկաներ: Աշխատանքի է հրավիրվում ուսուցչական նոր կազմ: 1875 ուսումնական տարում հայոց լեզվի դասատու է հրավիրվում Հակոբ Մելիք-Հակոբյանը (Բաֆֆին), սակայն նրա պաշտոնավարության շրջանը շատ կարճ է տևում. «Մշակ» թերթին ուղարկած նրա մի թղթակցությունը դուր չի գալիս դպրոցի կղերական ղեկավարներին, ուստի նա ազատվում է աշխատանքից հաջորդ ուսումնական տարում:

1883 թվականին տեղի Թումանյան եղբայրների նվիրատվությամբ, Արամյան դպրոցի բակում կառուցվում է Աննայի անվան օրիորդաց դպրոցը: Բարեգործական հայ տիկիկների միությունը 1895 թվականին Թավրիզում բացել է մանկապարտեզ, որ առաջին է հանդիսացել ոչ միայն գաղթավայրում, այլ Իրանում ընդհանրապես:

1898 թվականի մարտի մեկին Թավրիզում հիմնվել է «Թավրիզի լսարանական ընկերությունը», որը հայերեն լեզվով դասախոսություններ է կազմակերպել գրական, պատմական, առողջապահական, մանկավարժական և այլ թեմաներով՝ նպատակ ունենալով պրոպագանդել ժամանակակից գիտական ըմբռնումները հայ բնակչության լայն շրջաններում:

Հայ բարեգործական ընկերության ծախսով Թավրիզում բացվել է նաև աղջիկների համար կարուձևի դպրոց: 1901 թվականին Վենետիկի միաբանությունը Թավրիզում բաց է արել տղաների դպրոց:

Պարսկաստանի երրորդ խոշոր կուլտուրական հայկական

կենտրոնը հանդիսացել է Թեհրանը: Նա այժմ ամենից խոշորն է և հայ բնակչության թվով և իր դպրոցներով: Թեհրանի դպրոցները, Թավրիզի և Նոր-Ջուղայի համեմատությամբ, այնքան էլ հին չեն. Թեհրանում այժմ գործող դպրոցներից հինը՝ Հայկազյան դպրոցն է, որը հիմնվել է 1870 թվականին: Դպրոցը կազմվել է երկու բաժիններից՝ տղաների և աղջիկների: Առաջինը՝ տղաներինը, կոչվել է Դավթյան դպրոց, իսկ երկրորդը՝ աղջիկներինը՝ Մարիամյան:

Թեհրանում 1885 թվականին կազմակերպվել է «Թատերասերների միություն»: Թեհրանցիները սիրել են թատերական ներկայացումները. նրանք գրկաբաց են ընդունել Կովկասից, Պուլսից և այլ վայրերից եկած դերասաններին: Տեղացիների մեջ ևս գտնվել են դերասանական շնորհալի ուժեր: Թեհրանում թատրոնի համար հատուկ սրահ է կառուցվել 1884 թվականին: Ի դեպ, նոր ժամանակներում ակադեմիկոս Հ. Աճառյանը ևս մասնակցել է Թեհրանի հայկական թատրոնի թատերախաղին՝ տանելով Մանուկ աղայի դերը «Մեծապատիվ մուրացկանների» մեջ:

Հայկական դպրոցներ են հիմնվել Պարսկաստանի հայկական գրեթե բոլոր գաղթօջախներում՝ Համադանում, Ռաշտում, Խոյում, Սալմաստում, Ուրմիայում, Մարաղայում և այլ վայրերում, որոնց վրա կանգ առնելու հնարավորություն չունենք: Կարելի է ասել, որ ամեն մի վայրում, ուր 10—20 ընտանիքից ավելի հայեր են համախմբված բնակություն հաստատել, նրանց հոգածության առաջնահերթ խնդիրն է եղել դպրոցներ բաց անել: Չենք խոսում նաև բարեգործական, հասարակական և սպորտային այլ և այլ կազմակերպությունների, օգնության կոմիտեաների մասին, որոնք այնքան շատ են եղել և բազմատեսակ, որ անունների միայն ցուցակը տասնյակ էջեր կարող են կազմել:

Պարսկաստանի հայ մշակույթի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում երկու խոսք ասել Մելքոն խանի մասին, որը փաստորեն հանդիսացել է լիբերալ-բուրժուական գաղափարախոսության առաջին դրոշակակիրը պարսկական հողի վրա:

Մելքոն խանը ծնվել է Թեհրանում 1831 թվականին: Նա սովորել և ավարտել է Փարիզի Մխիթարյան վարժարանը: 1856 թվականին պետական ծառայության է հրավիրվել Պարսկաստան: Ստանձնած պաշտոնը հնարավորություն է տվել նրան գտնվել Ամերիկայում և եվրոպական երկրներում, ծանոթանալ այնտեղ գոյություն ունեցող կարգերի և գաղափարախոսությունների հետ և, լիցքավորված առաջադեմ գաղափարներով, վերադարձել է

Պարսկաստան: Այստեղ նա իր շուրջն է հավաքել ազատամիտ պարսիկ և հայ մտավորականների սովոր մի խումբ և պրոպագանդել Պարսկաստանում բարեփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Իր առաջադեմ գաղափարների համար նա հալածանքի է ենթարկվել: Հետապնդումից խուսափելու համար 1872 թվականին փախել է արտասահման: Հաջորդ տարին սակայն նադիր շահը ներել է նրան ու նշանակել դեսպան Լոնդոնում: Հետագայում նա վերադարձել է Քեհրան: 1889 թվականին սակայն նա նորից ընդհարվում է շահի հետ, նորից թողնում Պարսկաստանը և տեղափոխվում Լոնդոն: Այստեղ նա սկսում է հրատարակել «Ղանուն» անունով մի ամսագիր: Այս պարբերականը, փաստորեն, առաջին սահմանադրական բնույթ ունեցող պարսկական ամսագիրն է հանդիսացել: Լույս է տեսել 48 համար: Հակառակ հարուցված բոլոր տեսակի դժվարություններին, ամսագրի որոշ համարներ տարածվել են Պարսկաստանում և շատերի մտքերն արթնացրել: Մելքոն խանը պահանջում է՝ Պարսկաստանում հաստատել սահմանադրական միապետություն, հրաժարվել պարսկական միջնադարյան անհասկանալի լեզվից և գործածել ժողովրդին հասկանալի լեզու, գրականության մեջ արժարժել ժամանակակից թեմաներ, կազմակերպել ժողովրդական քվեներով ընտրված խորհրդարան, որն իրավունք ունենա ազատ վճռելու պետական բոլոր տեսակի հարցերը:

Այս թերթի հետքերով են ընթանում հետագայում «Ախտար» (աստղ), «Հաբլ-օլ-Մաթին (ամուր պարան), «Սորայա» (բազմաստեղծ) և այլ թերթեր, որոնք հրատարակվում են արտասահմանի պարսիկ առաջադեմ մտավորականների կողմից: Այս լրագրերը հանդես են գալիս շահական դեսպոտիզմը մերկացնող հոգվածներով և պախարակում ծախված պարսիկ շինովներին: Նրանք պահանջում են սահմանափակել շահի իրավունքները, հաստատել սահմանադրական միապետություն և պաշտպանել մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը:

Պարսկաստանի հայ գաղթավայրում հրատարակվել են մի շարք թերթեր և ամսագրեր: Մեզ հայտնի պարսկահայ հնագույն թերթը հանդիսացել է «Համայնք»-ը, որը հրատարակվել է Ռեշտում 1880 թվականին: Ըստ ժամանակագրական հաջորդականության, հաջորդ թերթը եղել է «Շարժում» շաբաթաթերթը, լույս է տեսել Քեհրանում 1894—1897 թվականներին և ունեցել է գրական-գիտական բովանդակություն: Քեհրանում 1896 թվականին

հրատարակվել է՝ գրական-քաղաքական բովանդակությամբ մի այլ շաբաթաթերթ ևս «Աստղ արևելյան» անունով:

Պարսկաստանում հրատարակվող հայկական թերթերի թիվը ավելացել է XX դարում: 1903 թվականին Քավրիզում սկսում է լույս տեսնել «Գործ» անունով շաբաթաթերթը, որն ունեցել է ինչպես պաշտոնական, այնպես և գրական, գիտական ու առևտրական բաժիններ: Գարձյալ Քավրիզում, Ատրպատականի առաջնորդարանի պիտակով, լույս է տեսել «Ազդարար առաջնորդարանի» անունով շաբաթաթերթը: Քավրիզում 1909 թվականին լույս է տեսել «Առավոտ» անունով շաբաթաթերթը՝ գրական, հասարակական, քաղաքական և տնտեսական բովանդակությամբ և այլն:

Համաշխարհային առաջին պատերազմից հետո Պարսկաստանում, գլխավորապես Քավրիզում և Քեհրանում, հրատարակվել են բազմաթիվ հայերեն թերթեր և ամսագրեր:

XV. ՀԱՅԵՐՆ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ

Աֆղանստանի հայ գաղթօջախները, որոնք սովորաբար Պարսկաստանի գաղթօջախի մի ճյուղն են համարվում, ունեցել են երեք տարբեր շրջաններ:

Աֆղանահայ գաղութի հնագույն ճյուղը վերաբերում է Արշակունյաց ժամանակաշրջանին: Պարսիկների կողմից բազմաթիվ հայեր են տարվել և բնակեցվել Խուժաստանում, Սագաստանում, Խորասանում, Նիշապուրում և այլուր:

Հայ գաղթականների այս զանգվածների զգալի մասը հետագայում շարժվել է դեպի Արևելք և մշտական բնակություն հաստատել ներկայիս Աֆղանստանի տերիտորիայում:

Դեպի Աֆղանստանի ժամանակակից տերիտորիան դարձյալ բունի տարված հայ գաղթականության երկրորդ շրջանը վերաբերվում է XIV դարին: Այս շրջանում բունի գաղթած հայերը հիմնականում եղել են Հայաստանի հարևան Աղվանքի սահմանակից շրջաններից: Աղվանքից Լենկթեմուրի տարած հայ և աղվան գերիներն այնքան շատ են եղել, որ տեղիք է տրվել այն ավանդության, թե երկիրն Աֆղանստան է կոչվել մեր հարևան Աղվանքից տարված գերիների նախկին հայրենիքի անունով¹: Այս երկրորդ խմբի հայ գաղթականների մի զգալի մասը բնակեցվել է Ղանդահարում և Քաբուլում, մնացածները՝ երկրի հյուսիսում:

XVIII դարի 60-ական թվականներին, Սիմեոն Նրևանցին խոսելով Աֆղանստանի հայերի մասին, իր «Հիշատակարանում» հայտնում է, որ Ղանդահարի հայերին գերավարել է Լենկթեմուրը:

¹ Ալ. Երիցեան, «Հնից և նորից» (Նյութեր ազգային պատմության համար), տե՛ս «Արձագանք», 1886, № 86):

XIX դարի կեսերին համաշխարհային մամուլում տարածվեց մի տեղեկություն, որը գալիս է լրացնելու Սիմեոն կաթողիկոսի հաղորդածը Աֆղանստանի հայ գաղթականության մասին:

Վերջին աղվանական խռովություններից ամենից հզոր խռովությունը, ինչպես հայտնի է, եղել է Ղզլայ ռազմատենչ ցեղի ապստամբությունը, որը նպատակ է ունեցել տապալել էմիր Աբդուլ Ռահման խանին և նրան փոխարինելու էուբ խանով: Եվրոպական թերթերի թղթակիցները, որոնք անձամբ եղել են Ղզլայների մեջ և ականատես են եղել դեպքերին, միաբերան պնդում են, որ Ղզլայները, որոնք բաղկացած են 10 000 ընտանիքներից, ունեն բուն հայկական ծագում¹: Անգլիական թերթերից մեկի թղթակիցը, որպես հավաստի ապացույց, բերում է Ղզլայների ազգագրական կենցաղային բազմաթիվ սովորություններ, որոնք իրենց վրա կրում են հայկական դրոշմ: (Հիվանդների և խմորի վրա խաչակնքելու սովորությունը, ուխտատեղերում կամ տանը խաչով նշաններ դնելը և այլն): Լրագրողի պնդմամբ, հենց իրենք Ղզլայները ընդունում են, որ իրենց նախնիները հայեր են եղել²:

Մեզ է հասել մի ավանդություն, որ իբր թե Լենկթեմուրի տարած հայ գաղթականները ապրում էին Աֆղանստանի լեռնադաշտային շրջաններում և զբաղվում խաշնարածությամբ՝ հիմնական սնունդ ունենալով մսեղենը և կաթնեղենը: Մի տարի, երբ նրանց հոգևոր հովիվը մեծ պասին արգելում է կաթնեղեն և մսեղեն ուտել, ժողովուրդը խռովություն է բարձրացնում և մահմեդականություն ընդունում: Նրանք կազմում են մի առանձին ցեղ և կոչվում «ղրզլայի»³:

Մեզ հասած առասպելախառն այս տեղեկությունները կամ լրագրողների հաղորդած լուրերը հիմք ընդունել և հաստատել, որ իրոք Ղզլայները, անվիճելիորեն, նախկին հայ գաղթականների իսլամացած ժառանգներն են, դժվար է: Բայց մեզ հասած առասպելախառն տեղեկությունները պետք է որ ունենան պատմական ճշմարտության հատիկ: XIV դարում Աֆղանստանի տերիտորիայում գոյություն ունեցող հայ գաղթօջախների փաստը կասկածից վեր է:

Հաջորդ, երրորդ շրջանի հայ գաղթականությունը կապված է XVII դարի երկրորդ կեսի հետ: Բռնագաղթներից բացի, որոնց մա-

¹ «Արձագանք», 1887, № 17, էջ 253:

² ՉՍՄԸ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, № 63 (Աֆղանստան), էջ 7:

սին առանձին կիսովի, այս նոր շրջանի հայ գաղթականությունը, որը հիմնականում հաստատված է Ղանդահար և Քարուլ քաղաքներում, այլ պատճառներ էլ ուներ: Արևելքին քաջագիտակ հայ, հատկապես շուղահայ առևտրականները չէին կարող աչքաթող անել այդ քաղաքները, որոնցով անցնում էր Արևելքի առևտրական խոշոր զարկերակներից մեկը:

Դեռևս Կոստանդ վարժապետ Ջուղայեցին, իր առևտրական «Դավթարում», Ղանդահարը և Քարուլը հիշում է այն քաղաքների թվում, ուր հայերը առևտուր էին անում¹: Երբ ստեղծվեց Նոր-Ջուղան, որն անհամեմատ մոտ էր աֆղանական քաղաքներին, դեպի այնտեղ տանող ուղիներին քաջածանոթ հայերը ավելի հաճախ սկսեցին հայտնվել այդ քաղաքներում: 1670-ական թվականներին Քարուլում և Ղանդահարում արդեն կային հաստատուն հայ գաղթօջախներ²: Նրանք բաղկացած էին գլխավորապես առևտրականներից և արհեստավորներից:

1722 թ. Սպահանը գրաված և ավերած աֆղան Միր Մահ-մուղը կողոպտեց նաև Նոր-Ջուղան և իր հետ բռնի տարավ նոր-շուղայեցի 60 հայ արհեստավորական ընտանիքներ³:

Մի քանի տարի անց, Նադիր շահը դարձյալ Սպահանից, իր նախորդի օրինակով, տարավ 200 տուն հայ արհեստավորներ⁴, մոտ 500 մարդ⁵ և բնակեցրեց Քարուլում: Ավելի ուշ Նադիր շահը տասնյակ հազարավոր հայեր և վրացիներ բռնի քշեց Թուրքեստան և Աֆղանստան⁶, ու նրանք հիմնականում բնակություն հաստատեցին գյուղերում: Հայտնի է, որ 1750 թվականներին նրանք դեռևս կային, բայց արդեն կանգնած էին ձուլման ճանապարհին⁷:

Աֆղանստանի այս շրջանի գաղթականության մասին շատ քիչ բան գիտենք: Հայտնի է միայն, որ Սիմեոն Երևանցու կարգադրությամբ նրանք պետք է ենթարկվեին Աղվանից կաթողիկոսին, սակայն հավանաբար դա եղել է ձևական կարգադրություն: Իրականում հայկական այս հատվածները ոչ մի կապ չեն ունեցել Աղ-

1 ՄԱՄ, ձեռագիր № 5994, էջ 1ա-բ:

2 J. M. Seth, Armenians in India., p. 187.

3 ՀՄՄ ԳԱ, պատմ. ինստ. արխիվ, գործ 63, Աֆղանստան, էջ 2:

4 J. M. Seth, Armenians in India..., p. 198.

5 Մ. Թադիադեանց, Պատմութիւն հին Հնդկաստանի, Կալկաթա, 1848, էջ 174:

6 ՀՄՄ ԳԱ պ-ի արխիվ, գործ 63, Աֆղանստան, էջ 3:

7 «Արձագանք» Թիֆլիզ, 1897, № 17:

վանից կաթողիկոսության հետ և, առանց հոգևոր հովիտի ու եկեղեցու, արագ մահմեդականացել են ու ձուլվել տեղական ժողովուրդների հետ:

Աֆղանահայերի վիճակը միթիթարական չի եղել նաև քաղաքներում: Եկեղեցուց և հովիտից զուրկ, հայերն ստիպված գիմել են կաթոլիկ միսիոներներին և զավանափոխ եղել: Ոչ էջմիածինը և ոչ էլ նրա գահակալները բացարձակ ոչինչ չեն ձեռնարկել այստեղ հոգևոր հովիտ ուղարկելու ուղղությամբ:

Շատ ու քիչ միթիթարական վիճակ են ունեցել Քարուլի հայ գաղթականները: Այստեղ հաստատված մի բուռ հայ արհեստավորներն ու առևտրականները, իրենց հավաքած միջոցներով, Բալա-հիսար փողոցի վրա, Ջելելաբազ ամրոցի դարպասի մոտ, 1737 թ. կառուցել են հայոց եկեղեցի: Այս փողոցի վրա են գտնվել հայ արհեստավորների արհեստանոցներն ու վաճառականների խանութները: Քաղաքից մոտ մի մղոն հեռավորության վրա հայերն ունեցել են գերեզմանատուն: Ըստ տեղեկությունների, հայերն այդ ժամանակ վայելում էին կրոնական ազատություն: «Քարուլի մեջ գտնվող հայերը,— գրում է Բաֆֆին,— այս ժամանակ աֆղանական կառավարության բարձր պաշտոններու զլուխ անցան, շատերը պատերազմական բանակներու զլուխ եղած են»¹:

Սակայն, համեմատաբար, բավարար կյանք ունեցող այս գաղթօջախը շատ կարճ միջոցում անկում է ապրել և նրա անդամների մեծ մասը ցրվել է այլ վայրեր:

Խոջա Մկրտում Թիֆլիզեցին 1763 թվականին Ղուկաս կաթողիկոսին գրած նամակում տազնապով նշում է, որ Ղանդահարում, Քարուլում, Բուխարայում տնավորված հայ բնակչություն է տեսել²:

1763 թվականին Աֆղանստան է ուղարկվում Անանիա վարդապետը: Նրա հիմնական առաջադրանքն է եղել այս խուլ ու անծանոթ երկրում հայ մանուկներին մայրենի լեզվով գրագիտություն ուսուցանել և ի մի հավաքել ու համախմբել հայրենիքից հեռացված և հավաքական կյանքից զրկված հայերին: Քարուլի ճանապարհին Անանիան վախճանվում է: Հաջորդ տարին նույն նպատակով Աֆղանստան է ուղարկվում Գրիգոր վարդապետ Սանահնեցին:

Աֆղանստանի հայության թվի մասին այս շրջանում բացար-

1 Մեխիզաբե (Բաֆֆի), «Հայերը Քարուլի մեջ» (տե՛ս «Մշակ», 1880, № 101):

2 Դիան հայոց պատմութեան, հ. III, էջ 533:

ձակ ոչ մի տեղեկություն չունենք: Ըստ երևույթին, այդ թիվը բավականին մեծ եղած պետք է լիներ, որ Անանիան առաջադրանք ունենար Աֆղանստանի հայաշատ վայրերում կառուցել եկեղեցիներ և տեղի հայության համար ձեռնադրել քահանաներ¹:

Աֆղանստանի հայերին ուղարկված իր կոնդակում կաթողիկոսը պատվիրել էր հնազանդվել էջմիածնի իրենց առաջնորդ Գրիգորին և թույլ շտալ օտար կրոնավորների մուտքը հայկական համայնքը:

Հայտնի չէ, թե արդյոք հաջողություն ունեցավ Գրիգոր Սանահնեցին, թեև մի տեղ ասվում է, որ նա հայկական երկու եկեղեցի է կառուցել Աֆղանստանում²: Նա, ըստ տեղեկությունների, այդտեղ ոչ կարճ ժամանակ մնալուց հետո մեկնել է Բուխարա, սակայն տեղ չհասած վախճանվել է ճանապարհին:

Սա վերջին փորձն էր, որ էջմիածինը աշխատել է կամուրջ գցել Աֆղանստանի հայկական գաղթականների ու հայրենիքի միջև:

Իրար հաջորդող անբարենպաստ քաղաքական դեպքերը փակեցին Պարսկաստանի վրայով Աֆղանստան տանող ճանապարհները և կտրվեց կապող վերջին թելը աֆղանահայերի հետ: Որոշ ժամանակ կարծես Աֆղանստանի հայերի գոյությունն իսկ մոռացվեց: Միայն տարիներ անց, երբ Միջին Ասիան դարձավ Աֆղանստան տանող միակ անվտանգ ճանապարհը, հայ առևտրականները նորից երևացին նոր շուկաներում: Գարձյալ նրանք էին, որ նամակներով կամ անձամբ սկսեցին տեղեկություններ հաղորդել մոռացված այս հայ գաղթավայրի մասին: Առաջին լուրերն անմխիթար էին:

Ինչպես Քաբուլում ապրող 150 տունը, այնպես էլ մյուս քաղաքներում և գյուղերում ապրող հայությունը կանգնած էր ձուլման վտանգի առաջ: Զրկված հայրենիքի հետ ունեցած կապից, մահմեդականանալուց բացի այլ ելք չունեին նրանք: Կաթոլիկ միսիոներները ևս քնած չէին. օգտվելով հայ հոգևորականների բացակայությունից, նրանք հայ «հոգիներ էին որսում»³:

Աֆղանստանի հայ գաղութի այս ծանր վիճակի մասին հայտնի դարձավ Հովսեփ արքեպ. Արղուսյանին: Նա էր, որ օգտվելով

1 Դիան հայոց պատմության, Կ. III, էջ 533:

2 «Արձագանք», Թիֆլիզ, 1896, էջ 7:

3 «Ավետիք» Գ տարի, 1938, էջ 290:

Բուխարայում վախճանված ոմն մեծահարուստ վաճառական Բե-
ժանյանի կտակից, ձեռք մեկնեց Միջին Ասիա և Քաբուլ¹:

Եռանդուն Հովսեփ Արղուսյանը ձեռնարկում է ամենաակտիվ միջոցառումներ Քաբուլի գաղութի հետ կապերը վերականգնելու համար: Էջմիածին ուղարկած նամակների մեջ նա խնդրում է կաթողիկոսին մտահոգվել Աֆղանստանի հայերի վիճակով և միջոցներ ձեռնարկել ու փրկել նրանց ձուլումից: Արղուսյանը ըստ պատելով էջմիածնի միջոցառումներին, ինքն անձամբ սկսում է փոխհարաբերությունների մեջ մտնել աֆղանահայ համայնքի հետ, գրագրության մեջ մտնելով բուխարաբնակ հայ խոջա Սաֆարի հետ:

Նրա ստացած լուրերը հայ համայնքից սպասածից առավել անմխիթար էին: Նամակներում աֆղանահայերը հայտնում էին իրենց անտերունչ լինելը և խնդրում էին հոգևոր հովիվներ ուղարկել: Սիմեոն Երևանցին փորձում է բավարարել Աֆղանստանի հայերի խնդրանքը, բայց անհաջող. ճանապարհների դժվարությունները թույլ չեն տալիս էջմիածնից հոգևորականներ ուղարկել Քաբուլ: Անհաջող է անցնում նաև նրա փորձերը՝ նոր-Ջուղայի առաջնորդի կողմից մարդիկ ուղարկել: Երևանցին ստիպված դիմում է Հովսեփ Արղուսյանին և բացատրելով գործի էությունը, խնդրում է նրան բավարարել աֆղանահայոց խնդրանքը²:

Ձեռներեց Արղուսյանը շուտով նամակ է ուղարկում էջմիածին, որով հայտնում է, որ կատարելով կաթողիկոսի հանձնարարությունը՝ Աստրախանի վրայով երկու հոգևորական է ուղարկել Աֆղանստան: Երկու տարի սպասելուց հետո Արղուսյանը նրանց անունով Քաբուլ ուղարկած նամակում հիշեցնում է, որ նրանց պարտականությունն է Քաբուլում քահանայագործությունից բացի, հայ մանուկներին մայրենի գրագիտություն սովորեցնել³:

Արղուսյանը միաժամանակ պահանջում է նրանցից հաղորդել «...զամենայն որպիսութիւն նոցա», նշելով՝ «թէ որպէ՛ս են, ի՞նչ արհեստ ունեն, զի՞նչ են անունք երևելիոցն, որդիք նոցա կարդալո՞ց են, թէ չէ, դովլաթու շահն ողորմութիւն ունէ դոցա վերայ, թէ չէ...»⁴:

1 «Արձագանք», 1898, № 86, հուլիսի 28:

2 Դիան հայոց պատմության, գիրք ԺԱ, էջ 73:

3 ՄԱՄ, ձեռ. № 4501, Թ. 135ա:

4 «Արձագանք», 1896, № 86, օգոստոսի 6:

Դժբախտաբար, հայտնի չէ, թե ԱրղուՅյանի ներկայացուցիչները ի՞նչ են պատասխանել. պատասխան գրությունը մեզ չի հասել և մենք զրկվել ենք միակ հնարավոր աղբիթից՝ կոնկրետ տեղեկություններ ունենալ Աֆղանստանի հայ գաղութի XVIII դարի 70-ական թվականների պատմության մասին:

1775 թվականին Լահորից, ապա նաև՝ Շահջհանաբադից, բազմաթիվ հայ զինագործներ են տեղափոխվել Քարուլ՝ աֆղանական բանակի զենքեր պատրաստելու և զինման գործը գլուխ քերելու նպատակով: Բայց դրանց բախտն էլ շատ շտաբերվեց իրենց հայրենակիցների բախտից:

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբներին Քարուլի հայ գաղութը նվազել, հասել էր 30—40 տան, Ղանդահարի հայությունն ավելի քիչ էր, իսկ մնացած վայրերի հայությունը գլխովին ձուլվել էր, բացի առանձին անհատներից:

XIX դարի հատկապես 30—40-ական թվականների հայ համայնքների, ավելի շուտ՝ նրանց մնացորդների մասին տեղեկությունները համեմատաբար շատանում են: Դրանք հիմնականում հաղորդում են անգլիական ճանապարհորդները և Քարուլ մտածանգլիական սպաներն ու նրանց ուղեկցող հոգևորականները:

Մեզ են հասել XIX դարի 70-ական թվականներին կաթոլիկ միսիայի կողմից գրված մի քանի հաշվետվություններ՝ Քարուլի հայերի մասին: Այդ զեկուցագրերը մեծ մասամբ հրատարակել է Մ. Հ. Սեթը¹: Զեկուցագրերի հեղինակը որոշ տեղեկություններ է ուղարկել նաև գաղթավայրի անցյալի վերաբերյալ:

1832 թվականին Քարուլ այցելած Ժոզեֆ Վուլֆը եղել է հայկական համայնքում և հոգացել տեղի հայերի հոգևոր հոգսերը, հաղորդում է, որ այնտեղ ապրում են միայն մի քանի տասնյակ կղզիացած հայ ընտանիքներ, գրեթե կտրված արտաքին աշխարհից: «Այս փոքր համայնքը տարիներ շարունակ կողոպտվել և սնանկացվել է կառավարության կողմից... նա մեծապես վնասել է այդ երկրում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից, անօրինականություններից և արյունահեղություններից: Հենց միայն անցյալ տարի բազմաթիվ հայեր ամիրի կողմից բանտերն էին նետվել և Փեշավարի միսիայի միջնորդության շնորհիվ է, որ նրանք բանտից արձակվել են»²:

Փեշավարի կաթոլիկ միսիայի նման «հոգատարությունը»

պատահական չէր: 1832 թվականից սկսած նրանք աչքաթող չէին անում Քարուլի հայ համայնքը: Նրանք գրեթե ամբողջ համայնքի կյանքը առել էին իրենց ձեռքը: Փեշավարի միսիոներական դրպրոցում նրանք տեղ էին տալիս ոչ միայն հայ պատանիներին, այլ նույնիսկ աղջիկներին: Միակ նպատակը, որ հետապնդում էին միսիոներները, հայ համայնքի կաթոլիկացումն էր:

1842 թվականին քարոզիչ Ջ. Ն. Ալլենիի և կապիտան Բալվելիի «Հայ քրիստոնյա փոքրիկ համայնքի մասին» զեկուցագրից երևում է, որ հայերը շարունակում էին կղզիացած կյանք վարել Բալհիսար ամրոցին կից մի նեղ փողոցում: Նրանց հիմնական զբաղմունքը Շիրազի գինի պատրաստելն էր, կային նաև այլ արհեստավորներ: Ոչ այս և ոչ էլ մյուս զեկուցագրերում հայ առևտրականներ գրեթե չեն հիշատակվում: Հայերի կյանքը շարունակում էր մնալ անապահով. «նրանք (հայերը — Ռ. Ա.) ասում էին,— գրում է Ալլենը,— որ բազմապիսի հալածանքներ էին կրում աֆղաններից և հաճախակի ենթարկվում ժանր հարստահարությունների և բռնությունների»³:

Նման պայմաններում, իհարկե, հայ գաղութը զարգանալ կամ պահպանվել չէր կարող:

Մ. Թադիադյանը, որը ժամանակին տեղեկություններ է հավաքել աֆղանահայերի մասին, ամենամույլ գույներով է նկարագրել նրանց վիճակը 40-ական թվականներին: Նա հայտնում է, որ Քարուլում մնացել էին ընդամենը 30 տուն հայեր²:

Յոթ-ութ տարի հետո «Ազգասեր»-ը մեջբերում է արել Դելիի թերթերից մեկի հաղորդումը՝ Աֆղանստանի հայ համայնքի մասին, ուր ասվում է. «Ցարդ ևս անխնամ մնացեալ է, որ ցրուեցան և է, որ ուրացեալ խառնեցան յայլազգիս»³:

1876 թվականին էմիրի հատուկ հրամանով հայերը, հրեաների հետ միասին, որոնք մինչև այդ ազատ էին ամեն տեսակ զինվորական ծառայություններից և հարկերից, ենթակա դառան զինակոշման և հարկադրվեցին: 1890-ական թվականներին Աֆղանստանում աննշան թվով հայեր էին մնացել: Մեզ է հասել Աբդու Ռահան խանի մի ֆերմանը, որը նա ուղղել է կալվաթայի հայերին: Նամակը բավականին հետաքրքիր է Աֆղանստանի հայ գաղութի պատմության համար, ուստի նպատակահարմար ենք

¹ M. Seth, Armentians in India..., p. 188.

² Նույն տեղը:

¹ «Ազգասեր», 1850, հատ. Գ, № 108, էջ 184:

² «Բազմավեպ», 1878, էջ 351:

³ «Արձագանք», 1887, էջ 17:

համարում որոշ կրճատումներով ծանոթացնել ընթերցողին. «Շատ բարևներից և երախտիքներից հետո, թող հայտնի լինի Կալկաթայի հայ հասարակությանը, որ հանգուցյալ Նադիր շահի գահակալության տարիներին (թող աստված նրան հանգիստ շնորհի) ոչ մեծ թվով ընտանիքներ, որոնց մեջ հաշվվում էին մոտ հինգ հարյուր հայազգի մարդիկ, եկան այս երկիրը... Չնայած այն բանին, որ ինչպես մեր նախորդների, այնպես էլ այժմ մեր գահակալության տարիներին, նրանք չեն զգացել և չեն զգա որևէ անհանգրստություն և վնաս: Ընդհակառակը, նրանք բոլորը, մեծ և փոքր զբաղեցրել են և զբաղեցնում են նշանակալից պաշտոններ և աֆղանական կառավարությունից ստանում են աշխատավարձ, այնպես, որ նրանք գեղեցիկ բարեհաջողությունների են հասել կյանքում, այնուամենայնիվ նրանք իրենց դժբախտ են զգում սեփական ազգի հասարակության պակասի պատճառով»¹:

Այս նախաբանից էմիրն անցել է իր ֆերմանի բուն նպատակին. «Ցանկալի է, որ դուք ելնելով ձեր ազգային և կրոնական զգացմունքներից և համակրանքից, տաս-տասներկու կրթված կամ արհեստի գիտակ հայ ընտանիքներ տեղափոխեք Աֆղանստանի տերության սահմանները և այդպիսով մխիթարեք տեղի իրենց հայրենակիցներին իրենց մեծակության մեջ և հենց իրենք էլ իրենց կյանքն անցկացնեն բարեկեցության մեջ»²:

Նա այդ նամակում խոստում է տվել, որ Հնդկաստանից Աֆղանստան տեղափոխվել ցանկացող հայերին մինչև տեղ հասնելը բոլոր պահակային կետերում կապահովեն սննդամթերքներով և գիշերելու տեղերով, և տեղ հասնելիս նրանցից յուրաքանչյուրը կաշխատի իր մասնագիտությամբ: Էմիրը հավատացնում էր, որ հայերն իր երկրում կապրեն «ապահով և խաղաղ կյանքով»:

Աբդուլ Ռահման խանը իր հրավերն ավելի հեղինակավոր դարձնելու համար նամակը Կալկաթա է ուղարկում իր վառողապետ Սերվուրդին խանի (ազգությամբ հայ Ղուկաս Հովսեփյանի) միջոցով:

1896 թվականի մայիսի 25-ին Կալկաթայի հայերը ուղարկել են իրենց պատասխան նամակը էմիրին: Այդ նամակը, որն իր բովանդակությամբ արևելյան ամենաճարպիկ ու խորամանկ դիվանագետների նախանձը կարող է շարժել, հասել է մեզ: Մի ամ-

¹ Աֆղանստանի էմիրի նամակի թարգմանությունը հրատարակվել է «Մուրճ»-ում, 1896, № 6, «Արձագանք»-ում, 1897, էջ 253—256 և այլն: Մենք ավելի նպատակահարմար համարեցինք տալ բնագրի մեր թարգմանությունը: ² M. Seth, Armenians in India., p. 188-

բող էջ բարեմաղթություններ հղելուց հետո նրանք գրում են, որ ոչ միայն Կալկաթայի, Հայաստանի, Թուրքիայի և Իրանի «համառորեն աշխատող և հավատարիմ ծառայող շատ հայեր անշուշտ կհավաքվեն Ձերդ բարձրության գահի շուրջը, որին թող անփորձ պահի աստված: Բայց մենք շատ ենք ցավում, որ հենց հիմի, որևէ ընտանիք հազիվ թե ցանկություն հայտնի հեռանալ այստեղից, քանի որ նրանք բարեհաջող գործում են զանազան ասպարեզներում և գրեթե բոլորը կապված են բարեկամական կապերով, որից հազիվ թե ցանկանան կտրվել...»¹:

Նրանք այնուհետև խորհուրդ են տալիս էմիրին ավելի բարելավել տեղի հայերի վիճակը, որն օրինակ կհանդիսանա մյուս հայերին: Նույն պատասխան նամակում հայերը գրում են. «Մենք թույլտվություն ենք խնդրում ներկայացնելու Ձերդ բարձրության ուշադրությանը հետևյալ հարցը, որ Ձերդ բարձրությունը համաձայնվի Աֆղանստանի հայ մանուկներին ուսման ուղարկել Հնդկաստան, գուցե՝ Կալկաթա, ընդհանուր կրթության և մասնագիտական ուսուցման համար: Ավարտելուց հետո նրանք կվերադառնան տուն, որպեսզի հատուցեն հարազատ կառավարությանը ազնիվ և հավատարիմ ծառայությամբ...»²:

Թե ինչ եղավ հետո փոխադարձ սիրալիրություններով առատ բանակցությունների հետևանքը, գաղտնիք չէ: Միայն երկու բախտախնդիր հայեր գնացին Քաբուլ, որոնք կարճ ժամանակում արտաքսվեցին:

1897 թվականին էմիրի վերաբերմունքը դեպի իր հպատակ հայերը փոխվեց: Անհասկանալի պատճառով Աբդուլ Ռահմանը, որը շահագրգռված էր հայերի Աֆղանստան գալով և բարելավում էր նրանց վիճակը, հատուկ հրամանով երկրից բռնի ուժով արտաքսեց բոլոր հայերին: Նրանք ամբողջությամբ անցան Հյուսիսային Հնդկաստան և հաստատվեցին Փեշվարում³:

Կարճ ժամանակ անց միայն հայտնի դարձավ, որ էմիրը կատարել է իր բարեկամ արյունառուշտ սուլթան Համիդի ցանկությունը, որն իր հավատակցին հատուկ նամակով խնդրել էր արտաքսել հայերին. որպես անհավատարիմ հպատակների: Ի միջի այլոց, մեծ մարդասպանը, նույնանման նամակով դիմել էր նաև Պարսից նասրեդին շահին, որը, բարեբախտաբար, ավելի լրջմիտ գտնվեց, քան իր հավատակիցը:

¹ M. Seth, Armeelans in India., p. 189.

² Նույն տեղը, էջ 189:

³ Նույն տեղը, էջ 189:

Դժբախտաբար, Փեղեվար արտաքսված հայ գաղթականներով չզբաղվեցին ոչ էջմիածինը և ոչ Նոր-Ջուղան: Նրանց բախտին և ճակատագրին անտարբեր գտնվեցին նաև Կալկաթայի և Հնդկաստանի մյուս հայ համայնքների եկեղեցիներն ու մեծահարուստները: Նրանք բացարձակ ոչինչ չարեցին անհետացումից փրկելու համար այդ փոքրիկ համայնքը:

Մ. Սեթը իր «Հայերը Հնդկաստանում» գրքում, մեզ անծանոթ աղբյուրից բաղելով, մեջ է բերել հետաքրքիր մի տեղեկություն, որ Փեղեվարում հաստատված հայերն իրենց հետ Քարուլից բերել են պատկառելի հնուխառն ձեռագրերի մի մեծ ժողովածու: «Նրանք այնքան հին են իրականում, որ նրանց տերերից և ոչ մեկը կարող չէ կարդալ նրանք»¹:

Այս հոգվածի տպագրությունից հետո միայն օտարերկրյա շրջանները զգալի հետաքրքրություն սկսեցին ցուցաբերել Աֆղանստանից արտաքսված հայերի նկատմամբ: Ի՞նչ են եղել հոգվածում հիշված ձեռագրերը, հայտնի չէ: Միայն Ավատյանը Փեղեվար գնացած ժամանակ իր հետ Կալկաթա բերել և հայոց եկեղեցու գրադարանին է հանձնել մի քանի հայերեն ձեռագրեր: Դժբախտաբար, մենք չգիտենք փրկված այդ ձեռագրերի բախտը, հայտնի է միայն, որ Կալկաթայի հայոց եկեղեցին ներկայումս ձեռագրեր չունի:

Աֆղանստանի մյուս վայրերի հայկական համայնքների մասին եղած տեղեկությունները կցկտուր են. Հենրի Ռավլինստոնը «Անգլիացիները և ռուսներն Արևելքում» գրքում տվել է Չինաստանին սահմանամերձ աֆղանական Ղաշխա քաղաքի մարդահամարը. այնտեղ քաղաքի բնակիչների թվում նշված են նաև 300 հայեր²: Ռավլինստոնի հաղորդումը պետք է հավաստի համարել, քանի որ գեներալը ձեռքի տակ է ունեցել անգլիական գաղութային զորքերի հաղորդման տվյալները և ինքն էլ անձամբ եղել է Ղաշխալում:

Չինաստանին սահմանակից այս փոքրիկ քաղաքում 300 հայերից բաղկացած համայնքի գոյությունը զարմանալի չէ. Ղաշխան առևտրական քաղաք-հենակետ էր Չինաստանի հետ կատարվող մետաքսի առևտրում³:

¹ M. Seth, Armenians in Indin, p. 189.

² Major-General sir Henri Ravlinston, England and Russia in the East. London, 1896, p. 241.

³ Ռուկորուֆին Ք. Տեր-Հովհաննեսի, վերջաբանը (տե՛ս «Նոր ազդարար», Կալկաթա, 1955, էջ 20):

ХVI. ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ¹

Հնդկահայ գաղթօջախների հին շրջանին նվիրված գլխում խոսք եղել է այն մասին, որ Հնդկաստանի վերջնական գաղութայնացումից հետո հայկական գաղթօջախները սկսեցին քայքայվել և անկում ապրեցին: Լեոյի կարծիքով, հնդկահայ համայնքների քայքայման պատճառը հետևյալն է եղել. «Մինչդեռ եվրոպացիները հանդես էին գալիս այնպիսի վիթխարի ընկերական կազմակերպությամբ, պաշտպանում էին իրենց շահերը զորքի և թնդանոթների օգնությամբ, հայերը շարունակում էին իրենց հին նահապետական սիստեմով գործել: Նրանք առանձին-առանձին էին առևտուր անում, ցրված ուժերով կամ փոքրիկ աննշան ընկերություններով»²: Մեծանուն գիտնականի խոսքը, անշուշտ, վերաբերում է հայ առևտրականներին և նրանց անհաջող մրցությանը անգլիական առևտրական ընկերությունների դեմ: Բայց հնդկահայ գաղթավայրը միայն առևտրականներից չէր կազմված, այլ սոցիալական այլ խավերից ևս, որոնք համայնքներում մեծամասնություն էին կազմում: Հնդկահայ գաղթօջախների անկումը, իրականում, կապված էր Հնդկաստանի իսկ տնտեսական կյանքի անկման, Հնդկաստանում անգլիական գաղութարարների կատարած գիշատիչ կեղեքումների հետ: Անգլիան, գրում է Մարքսը, «Քանդեց Հնդկաստանի հասարակության անմիջական հիմքը՝ շրուցաբերե-

¹ Երկրորդ հատորում հնդկահայ գաղթօջախների նոր շրջանը աշխատել ենք շարադրել համառոտ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրատարակության մեջ է գտնվում նույն հարցին նվիրված մեր ընդարձակ աշխատությունը (Ռ. Արքահամյան):

² Լեո, Հայկական տպագրություն, հ. III, Քիֆլիս, 1902 թ., էջ 450:

լով մինչև այժմ ոչ մի փորձ վերակառուցելու այն: Հին աշխարհի կորուստը՝ առանց նորը ձեռք բերելու, հնդիկ բնակչի արդի դրժ-բախտությանը տալիս է ավելի ճնշող բնույթ»¹: Հնդկահայ համայնքները բոլոր թերերով կապված էին Հնդկաստանի հետ. հնդկական տնտեսության փլուզումն էլ այն հիմնական ծանր հարվածն էր, որ մահացու դարձավ հնդկական շատ գաղթօջախների համար:

XIX դարի սկզբներում հնդկահայ գաղթօջախների քարտեզը, նախկինի համեմատությամբ, զգալիորեն փոխվել էր: Ներսես Աշտարակեցու Հնդկաստան ուղարկած 1851 թվականի դեկտեմբերի 31-ի մի գրության մեջ թվարկված են հետևյալ գաղթօջախները՝ Կալկաթա, Չիչրա, Սեյդաբադ, Սուրաթ, Դաքքա, Ազրա, Գուլափեր, Կամփուր, Լահոր, Մադրաս և Բոմբեյ²: Ինչպես տեսնում ենք, Աշտարակեցու ցուցակից դուրս են մնացել Փաթանան, Գուլաթաբադը, Գոան, Չեխտագոնգը, Դելի, Հայդարաբադը, Հանգալորը, Մայսորը և շատ այլ քաղաքներ, ուր հայկական համայնքներ են եղել:

Հնդկահայ գաղթօջախների անմխիթար վիճակին XIX դարի առաջին կեսում անդրադարձել է Մ. Թադիադյանը: 1840 թվականին գրած իր մի հոդվածում խոսելով խամրող հնդկահայ գաղթօջախների մասին, նա վշտով գրում է. «...Արդ, կան տեղեր, ուր հայեր բոլորովին չեն մնացել, ինչպես Ակպարաբադը, Լահորը, Սուրաթը: Բայց կան և տեղեր, ուր մի քանի մարդիկ դեռ առկայծում են ճրագի պես և ցուցանշում են, թե երբևէ սովար հայություն է եղել, ինչպես Չիչրան, Սեյդաբադը, Փաթանան և Գուլափերը»³:

Թվապես չէ, որ միայն նվազել էին հայկական գաղթօջախները, այլև՝ տնտեսապես: Թադիադյանի վկայությամբ, Կալկաթայի հայկական գաղթօջախը, որն ամենից մեծն էր Հնդկաստանում, հազիվ էր կարողանում «Ազգային աղքատաց խնամ տանել» և հոգալ համայնքի անհրաժեշտ կարիքները⁴:

Հնդկահայ գաղթօջախների վիճակը XIX դարի 60-ական թվականներին մանրամասն պատկերել է Կալկաթայի բնակիչ, հնդկահայության հետ լավ ծանոթ Հովհաննես Խաչկյանը իր մի փոքրիկ, բայց շատ արժեքավոր աշխատության մեջ, որն ունի

1 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 131—132:

2 «Ազգասեր», 1851, հ. III, էջ 569:

3 Նույն տեղում, 1845, հ. I էջ 137:

4 Նույն էջում:

«Հայելի փոքրիկ» վերնագիրը: Խաչկյանը վշտով նշել է, որ նախկին ծաղկուն հնդկահայ գաղթօջախներից շատերը խամրել են և գոյություն չունեն: Մարել է Սեյդաբադի հայկական խոշոր գաղթօջախը և այնտեղ այլևս հայկական ոչ մի տուն չկա: Գուլափորում, երբեմնի բարձր անուն հանած հայ գաղթօջախը՝ անգլիական գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի հետ միասին վարած պայքարի շրջանում, այժմ գոյություն չունի և «Հայոց անունը մամռակալել է»: Դաքքայի հայկական գաղթօջախի հետքն անգամ չի մնացել: Խամրել են հայկական մի շարք այլ գաղթօջախներ ևս¹:

Հայ բնակչության թիվը պակասել էր նաև Մադրասում՝ հնդկահայ աչքի ընկնող այն գաղթօջախում, որը տվել էր հայ բուրժուական գաղափարախոսության այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսին Շահամիր Շահամիրյանն է, Մուսես Բադրամյանը, Հարություն Շմավոնյանը և ուրիշներ: XIX դարի սկզբներում, անգլիական գաղութարարների ստեղծած ծանր պայմանների հետևանքով, Մադրասի հայերից շատերը թողել են մանների հետևանքով, Մադրասի հայերից շատերը թողել են Մադրասը և տեղափոխվել Ինդոնեզիայի և Մալազիայի կղզիները:

1860-ական թվականներին, ըստ «Մասյաց աղավնու» մեջ տպագրված մի թղթակցության, Մադրասում փոքրաթիվ հայեր էին ապրում՝ գլխավորապես արհեստավորներ, պետական պաշտոնյաներ և գործավարներ: Ըստ որում, «Մասյաց աղավնու» թղթակիցը գանգատվում է, թե՛ «Եկեղեցական գանձանակին ապրող աղքատները շատ են»²:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հայերի թիվը Մադրասում չի անցել 25—30 ընտանիքից: Ավելի մոտիկ ժամանակներում՝ 1917 թվականին, Մադրաս այցելած Գուշակյանն իր ճանապարհորդական նոթերում նշում է, որ Մադրասի հայկական գաղթօջախում «Մեկ-երկու զանազան ծառայությունների մեջ գտնվող մարդկանցից բացի, մնացածները «կա՛մ անկար ծերունիներ են և կա՛մ նպաստընկալներ»³:

Բոմբեյի աղյուցուն հայկական գաղթօջախը XIX դարի սկզբներից սկսել է անկում ապրել: Բոմբեյում, որը անցյալում համարվել է «Հայոց որդոց համար համալսարան», ըստ 1813 թվակա-

1 2. Խաչկյան, Հայելի փոքրիկ, յոթում պատկերել զանազան խնամա Աստուծոյ առ աներախտ բնութիւն ազգի մարդկան, զմուշար վիճակ աշխարհիս, զանձս տին և նոր հնկգահայոց և ողորմելի վիճակ մերոյ այժմեան դարու: Կալկաթա, 1869, էջ 25:

2 «Մասյաց աղավնի», 1862, № 28, էջ 221:

3 Թ. Գուշակյան, Հնդկահայք, էջ 74:

նի մարդահամարի, ապրելիս են եղել ընդամենը 107 հոգի հայեր: 1889 թվականին Բոմբեյ այցելած Մ. Սեթյանը հայերի թիվը համարում է 30 հոգի: XX դարի մարդահամարի տրվյալներով, Բոմբեյում ապրում էր ընդամենը 25 տուն հայ բնակչություն¹:

XVIII դարում մի քանի հարյուր տուն հայ բնակչություն ունեցող Սուրաթը, ուր տեղավորված էին եվրոպական առևտրի հետ կապված ավելի քան երեսուն հայ խոջաներ, XIX դարի սկզբում գրեթե ամայացել էր: Ըստ տեղեկությունների, 1850 թվականներին Սուրաթում ապրում էին մի քանի տուն «շատ աղքատ հայեր», որոնց գործունեությունը գրեթե դադարել էր²:

Հնդկահայ միակ գաղթօջախը, որ կարողացավ XIX դարում տոկալ և հարատևել, Կալկաթայի գաղթօջախն է: Փաստորեն, հնդկահայ հասարակական և մշակույթային կյանքը Մադրասից տեղափոխվել է այստեղ և նա է ընդհանուր երանգ ու ուղղություն տվել հնդկահայ շրջաններին: Կալկաթայի հետ են կապված հայկական տպարանների ընկերությունների, դպրոցների, մշակույթային կազմակերպությունների գործունեությունները:

XIX դարում հնդկահայ գաղթավայրի բնակչության սոցիալական պատկերը միանգամայն տարբերվում էր նախորդից. եթե անցյալում բնակչության զգալի մասը կազմում էին առևտրականները, ապա այժմ հանդիսանում են արհեստավորները, նավահանգրստներում աշխատող գործավորները, հիմնարկություններում աշխատող ծառայողները, մանր առևտրականները և իրավաբանները, բժիշկները, ճարտարապետները և այլն:

(Հայ առևտրականների մի մասը սնանկացավ եվրոպական կապիտալի մրցակցության հետևանքով: Հայ առևտրականներից քչերն էին, որոնք ըմբռնելով ժամանակի ոգին, վերակառուցվեցին, աշխատեցին իրենց կապիտալները դնել արդյունաբերության մեջ, հիմնել գործարաններ և ֆաբրիկաներ: Եվրոպացիների օրինակով սկսեցին նաև համախմբվել և միավորելով իրենց կապիտալները, ստեղծել միություններ: Թաղիադյանը «Ազգասեր»-ում բերել է հայկական նման ընկերությունների բավականին ընդարձակ մի ցուցակ, որից երևում է, որ հնդկահայերը արդեն զգալի տեղ ունեին երկրի նոր զարգացող արդյունաբերության մեջ: Թաղիադյանը հայ գործարանատերերից հիշում է «Արևելյան Ապահովչաց

ընկերություն»-ը, որը հաստատվել է 1839 թ., «Մովային ապահովագրության գործարանը»-ը, որն իր բաժանմունքներն ուներ Լոնդոնում, Սինգապուրում, Մադրասում, Բոմբեյում, Չինաստանում: «Միացյալ շոգենավաձիգ ընկերություն»-ը, «Բասարաթ լեզակի ընկերություն»-ը, «Հուգիլիի գետնավային ընկերություն»-ը և այլն: Այս ընկերություններին ծառայում էին «Հովսեփ Մանուկ», «Հովհաննես-Սարգիս», «Հարություն Աբգար», «Հոփսիմե-Աննա-Մարտա», «Հիրո», «Էմենգո» անուններով և այլ շոգենավեր¹:

Չնայած այդ ընկերությունները երբեմն մեծ դրամագլուխներ ունեին և գործողության լայն շրջանակներ, սակայն նրանց մեծ մասը գործակցում էր եվրոպացիների հետ, գնում էր նրանց ետվից և ինքնուրույն չէին:

Բայց, այնուամենայնիվ, հայ առևտրականների մեջ գտնվել են մեծ թվով այնպիսիները, որոնք չեն վերակառուցվել և կանգնել են անխուսափելի կրախի առջև: Այդ երևույթը չի վրիպել Թաղիադյանի ուշադրությունից, որն իր «Ազգասեր»-ում բազմաթիվ հոդվածներ է տպագրել և կոչ արել նրանց վերակառուցվել՝ առևտրով զբաղվելու փոխարեն դառնալ «արդյունաբերական կառուցողներ»²: Խրատական բնույթի նման հոդվածներ են տպագրվել նաև «Եղբայրասեր»-ի էջերում³:

Հնդկահայ արդյունաբերողների մեջ գտնվել են այնպիսիները, որոնք իրենց գործունեության հեռանկարները տեսել են հայրենի երկրում և ծրագրեր են մշակել իրենց արդյունաբերությունը տեղափոխելու Հայաստան և բնավորվելու այնտեղ: Նրանք ցանկացել են հայրենի երկրում զարգացնել արդյունաբերությունը և արհեստագործությունը, կոչ են արել գնալ Հայաստան և «Ծաղկեցուցանել աշխարհն մեր»⁴, սակայն գործնական քայլերի չեն դիմել:

Արդյունաբերության գործը զարգացնելու և ժամանակակից գիտական հողի վրա դնելու համար, նրանք հատուկ ուշադրություն են դարձրել իրենց զավակների դաստիարակությանը, որոնք գալու են փոխարինելու իրենց. նրանք աշխատել են իրենց զավակներին

1 M, Seth, Armenians in India, էջ 294:

2 Նույն տեղում, էջ 290—300:

1 «Ազգասեր», 1846, էջ 134—135:

2 Ա. Կարիեյան, Ակնարկներ, հ. I, էջ 346:

3 «Եղբայրասեր», 1863, № 8, էջ 60:

4 «Ազգասեր», 1846, հ. 9., էջ 5:

կրթության տալ Եվրոպայի բարձրագույն ուսումնական մասնագիտական հաստատություններում¹։

Հնդկահայ առևտրականների մեջ գտնվեցին և այնպիսիները, որոնք գործունեության նոր ասպարեզներ սկսեցին փնտրել Հեռավոր Արևելքի այն վայրերում, որոնք դուրս էին գտնվում Եվրոպացիների հսկողությունից և մրցասուպարեզից։

Հենց այդ տարիներին էր, որ Ավստրալիայում բացվեցին ոսկու հանքերը, ու դեղին սատանայի տենդով բռնվեցին նաև հրնդկահայերը։ Շատ վաճառականներ իրենց փրկությունը գտնում էին «ավետյաց երկիր» գնալու մեջ, սակայն առաջին իսկ գնացողները շատ կարճ ժամանակում կորցնում էին ունեցածն էլ և հուսախաբ վերադառնում։ «Թագուժք ի մերազնէից,— գրում է «Եղբայրասեր»-ի խմբագիր Տեր-Հարությունյանը,— ի կողմանց գնացին անդ (Ավստրալիա—Ռ. Ա.) սակաւ ոսկոյ, ուր տարաբախտապէս գտան և ոչինչ, այլ ընդհակառակը կորուսին զոր ինչ և ունէին. ոմանք վերադարձան զուրկ ընչից... խորհրդակցեմ զի մի՛ ոք ցանկացի վերստին գնալ անդ ի փորձ վիճակին իւրոյ»²։

Հնդկաստանի հայ գաղթօջախներում, մասնավորապես Կալկաթայի հայ համայնքում, բնակչության ամենից մեծ մասը հանդիսանում էին արհեստավորները։ Հնդկահայ արհեստավորության մեջ ամենից մեծ թիվ ունեին ոսկերիչները, որոնք բաց էին անում իրենց արհեստանոցները առանձին-առանձին կամ մեկ-երկու հոգի միանում և կազմում էին փոքրիկ համքարություն։ Հայ ոսկերիչները Կալկաթայում այնպիսի համարում ունեին, որ նրանց շատ հաճախ պատվերներ էին տալիս ո՛չ միայն Հնդկաստանից, այլ նաև Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից։ Կալկաթայի հայ վարպետների ձեռքով պատրաստած զանազան իրեր, որոնք հասել են մեզ, իրենց գեղարվեստական ճաշակով, կատարման նրբությունամբ զարմանք են պատճառում դիտողին³։

Հայտնի է, որ երբ Անգլիա տանելու համար հարկավոր էր պատրաստել հնդկական Բուդդա-գոյա տաճարի մակետը, անգլիական Ստեֆե ոսկերչական ֆիրման հայ արհեստագործներին հանձնարարեց այն պատրաստել՝ որպես բարձրորակ վարպետների։

1 Խ. Ավետույան, Ավետույան, որ է բարոյական ստեղծագործություն, Կալկաթա, 1846, էջ 41։

2 «Ուսումնասիր», 1853, № 90, էջ 359։

3 Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում, Երևան, 1956, էջ 139։

Հայ արհեստավորներից մեծ հռչակ են ունեցել նաև ներկեր պատրաստող վարպետները, որոնց պատրաստած ներկերը մրցում էին մի ժամանակ մեծ հռչակ ունեցող «մարտին» կոչվող ներկերի հետ։ Հնդկահայ համայնքներում, մասնավորապես Կալկաթայում աշխատող հայ մասնագետների մեջ, մեծ թիվ էին կազմում իրավաբանները¹։

Կալկաթահայ իրավաբաններից մեծ հեղինակություն է ունեցել Քեմբրիջի համալսարանն ավարտած Գրիգոր Պոլլը, որը բարձր պաշտոններ է վարել Հնդկաստանի բարձրագույն դատարանում։ Սա է, որ պաշտպանել է Միքայել Նալբանդյանի՝ Մասեհ Բաբաշանյան կտակի կապակցությամբ Կալկաթայի դատարանում հարուցած հայցը և շահել այն²։ Ճանաչված իրավաբաններ էին նաև Հ. Առաքելը, Ս. Սարգիսը և ուրիշներ։ Հայ բժիշկների նախասիրած ճյուղը եղել է վիրաբուժությունը։

Մի քանի խոսք հայ ծովայինների մասին։ Գեոևս հնուց հայ ծովայինները քաջ հայտնի էին Հնդկաստանի նավահանգստներում։ «Հայերը,— գրում է Ինճիճյանը,— երևելի նավապետներ եղած են», որոնք «մեծ նավեր բանեցնելով վարպետ եղան Պենկալային առջևին ծոցին մեջ ու Գանկես կամ Կընկա գետին մեջ նավարկելու...»³։

XIX դարում էլ հնդկահայ գաղթօջախները տվեցին մի քանի հայտնի զինվորականներ, որոնցից ամենից նշանավորը Հակոբ Պետրոսյանն է, որը տարիներ շարունակ հավատարմությամբ ծառայել է Գլավիորի ռաջաներին։ Գեոևս 1780 թվականին Տաունդ Ռալոյի կողմից նա արժանացել է գնդապետի աստիճանի։ Ռաջան նրա հրամանատարության տակ է դրել 12 հետևակային և 4 հեծելազորային գունդ՝ 150 հրետանիով։

78-ամյա ծերունի զորավարը փայլել է հատկապես 1843 թվականի դեպքերից՝ հետո, երբ հնդիկ ժողովուրդը կռվում էր անգլիական գաղութարարների դեմ։ Նրա զինվորական տաղանդի ամսին գովեստով են խոսում և երախտագիտությունամբ հիշում ժամանակակից հնդիկ բարձրաստիճան զինվորականները⁴։ Նրա բա-

1 «Ազգասեր Արարտյան», 1848, հ. I, էջ 44։

2 Մատենադարանի արխիվ, անհատական ֆոնդ № 233, վավ № 256։

3 Ռ. Աբրահամյան, «Ավետիս Կարբեցու պարսկա-հնդկական ուղեգրությունը», տե՛ս «Սով. Հայաստ.» ամսագ., 1960, № 1, էջ 34։

4 «Ազգասեր Արարտյան», 1848, հ. Ա, էջ 44։

նակում կար հայկական փոքրիկ ջոկատ: Հնդկաստանից ուղարկված մի թղթակցության մեջ, ուր խոսվում է Հակոբ Պետրոսյանի մասին, ասված է. «Ձինուր էին ընդ նովաւ այլ բազումք ի հայոց ի նշանաւոր կարգս զօրականին»¹:

Հոր ճանապարհով են գնացել նրա որդիները, Հովհաննես Հակոբը, որը նույնպես բարձրացավ մինչև գնդապետի աստիճանի, 1850 թվականին զոհ գնաց մի դավադրության²:

Գլախալի հայկական գերեզմանատանը թաղված է մի այլ հայ բարձրաստիճան զինվորական՝ Հայդարբադի զորքերի գրնդապետ Մովսես Մանուկը, որը 1837—1851 թթ. եղել է Հայդարբադի նիզամի ամենից աչքի ընկնող զինվորականներից մեկը³:

Կալկաթայում հայերի խաղացած դերի մասին է վկայում այն փաստը, որ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը կոչվում է «Հայկական»: «Հայկական» է կոչվում Կալկաթայից ոչ հեռու լեռնաշղթաներից մեկը: Կալկաթահայ նշանավոր դեմքերից մեկի՝ Սարգսի անունով է կոչվում Կալկաթայի մի այլ փողոց: Ավետիս Մադիկյան Կարբեցու «Ունգրությունից» երևում է, որ «Հայկական» է կոչվել Կալկաթայի խոշոր նավահանգիստներից մեկը: Հայտնի է, որ կալկաթահայ վաճառականները ունեին մի քանի հազար տոննա ջրածավալ ունեցող նավեր:

Հնդկահայ գաղթօջախների սոցիալական տարբեր խավերի մեջ տեղի է ունեցել որոշակի ձևավորված դասակարգային խմբավորում և ներքին սուր պայքար, որը մասամբ իր արտացոլումն է գտել հնդկահայ մամուլում: Ըստ տեղեկությունների, Կալկաթայում որոշակի ձևավորվել է երկու խմբավորում՝ մեծահարուստների, որը ղեկավարել է Մարտիրոս Մկրտչյանը, և այսպես կոչված՝ «ռամիկ»-ների, որը ղեկավարել է Հովսեփ Ստեփանյանը:

Հակոտնյա այս խմբավորումների պայքարը ծավալվել է համայնքի վարչության ընտրության հարցում: Ունևորները դիմել են ամեն տեսակ խարդավանքի՝ ընտրվելու համար, իսկ աշխատավորներին տեղ չեն տվել: Եղել են դեպքեր, երբ աշխատավորության ներկայացուցիչները հրաժարվել են ընտրություններին մասնակցելուց այն պատճառաբանությամբ, թե «...էս ա որ ասում ան՝ խեղճ մարդիբըն որ ժողովումն վօտ (քվե) չունիք, գնանք, ինչ առենք. ուրենք ում կամենան՝ ընտրում ան»: Ըստ որում, խուզ

1 «Արմավենի» Գահիրե, Ա տարի, 1937—1938, էջ 224:

2 M. Seth, Armentians et Agra and Glavior, 1930, p. 9.

3 «Արմավենի», Ա տարի, էջ 224:

քողոքներ են եղել թե՛ «...չում ե՛րբ պիտի կոմիսարքն հարուստիքն ընտրվեն»¹:

«Շտեմարան»-ում տպված մյուս նյութերը նույնպես ցույց են տալիս, որ Կալկաթահայ համայնքում իրոք գոյություն է ունեցել վերնախավից դժգոհ խումբ, որը հավանաբար բաղկացած էր մանր առևտրականներից, արհեստավորներից և նոր գաղթած հայերից:

Այս խմբի պաշտպան Ստեփանյանը հրապարակախոսական հոդվածներից բացի, քննադատական բանաստեղծություններ է հրատարակել «բուռ-բուռ ուրբի կուտակող հարուստների» դեմ²:

Քիչ թե շատ ձևավորված այդ ներհակ հոսանքներն ու խմբումները շարունակվել են մինչև XIX դարի 60—70-ական թվականները: Նրանցից մեծահարուստների խումբը քննադատում է գաղթը և գաղթականներին հրաժարվում է ընդունել, նույնիսկ ժամանակավորապես օթևան տրամադրել «չուղայեցի եղբայրների»:

«Եղբայրասեր»-ի թղթակիցներից մեկը խոսելով հակառակորդ այդ հոսանքի ներկայացուցիչների մասին, հետևյալն է գրում. նրանցից «հազար կամ երկու հազար ուսուցող կարողութեան տէրը, մեծ համարում ունենալով, կբռնամանայ ի վերայ չբաւորաց և աղքատաց...»³:

Չնայած հնդկահայ մեծահարուստներից ոմանց դիմադրությանը, այնուամենայնիվ, հնդկահայ համայնքները իրենց նյութակարոտ, աղքատ և նոր պանդխտած հայրենակիցներին չթողեցին երեսի վրա: Համայնքի նվիրաբերած գումարներով և կալկաթահայկա Հարություն Պետրոսի թողած գումարով Կալկաթայում 1820 թվականին հիմնվեց աղքատանոց⁴: Աղքատանոցի միջոցները հետագայում համալրվում էին զանազան հանգանակությունների, նվիրատվությունների, կտակարարների թողած դրամների միջոցով: Այս աղքատանոցում ձրի խնամվում էին հարյուրավոր հայեր:

Աղքատանոցն առ այսօր ունի «հյուրանոց», ուր գաղթական հայերը երեք ամիս ձրի բնակվում են:

Հնդկահայերն աշխատում էին ապահովել նաև իրենց օգնա-

1 «Շտեմարան», Կալկաթա, 1822, էջ 69:

2 Նույն տեղը, էջ 242:

3 «Եղբայրասեր», 1862, № 2, էջ 224:

4 Ա. Ալպոյանյան, ՊԶԳ, հ. III, էջ 334:

կարոտ հայրենակիցների բժշկական օգնության գործը, նույնիսկ փորձեր են արվել ստեղծելու «Ազգային դեղատուն»¹։

Հնդկահայ պարբերականներում ցրված նյութերից երևում է, որ Հնդկաստան եկող գաղթական և աղքատ հայերով զբաղվել են գաղթօջախների հայկական եկեղեցիները։ Սակայն XIX դարի կեսերին, երբ բավական թվով հայեր եկան հատկապես Ն. Զուղայի հայկական գյուղերից, աղքատանոցների վիճակը բավականին դժվարացավ։ «Դուժինով» եկող հայերին բոլորին օգնելու հնարավորություն չունեցող Դաքայի, Բոմբեյի եկեղեցիներն այլևս չէին կարողանում նրանց ընդունել։

«Ծղբայրասերը» հրատարակել է այդ մարդկանց մասին մի շարք հոդվածներ, շեշտելով, որ «Հնդկաստանում խեղճ հայի վիճակը ողբալի է»։

Չբավոր հնդկահայերի վիճակը պատկերացնելու տեսանկյունից ուշագրավ է մի բանաստեղծություն, որը հրատարակել է «Ծղբայրասեր»-ը «Ոմն աղբատի» ստորագրության տակ։ Բանաստեղծության մեջ ասված է.

«Օտար քաղաքում հիվանդ և աղքատ,
Ումանի՛ց աստված ունեմք մեք գանգատ.
Ընկած եմք ավեր հյուրանոցի մեջ
Նրկնային ողորմ առ մեզ առ ի էջ։

էջ առ մեզ, նստիր մեր մահճի մոտիկ,
Մեր թշվառության արա դու մոտիկ.
Ի՛նչ էինք մին օր և ի՛նչ ենք դարձեր,
Ա՛խ, մեր զավակունք ինչքա՛ն են լացեր»²։

Հնդկահայերը միշտ էլ ամենասերտ կապերով են կապված եղել Հայաստանի և Նոր-Զուղայի հետ։ Չխոսելով այն հսկայական գումարների մասին, որ հայերը թողել են այս կամ այն կազմակերպություններին, հիշենք իր դրամով Նոր-Զուղայում հայկական դպրոց հիմնող Մելքոն Գասպարյանին, «Օճանասփյուռոյան» ընկերությանը տպարան նվիրող Պողոս Հորդանյանին, հայոց «Մարդասիրական ճեմարանի» հիմնադիրներից Աստվածատուր Մարտիրոսյանին և հարյուրավոր այլ հայերի, որոնք իրենց ծախսով աղքատանոցներ են հիմնել, հայերեն գրքեր են հրատարակել և այլն։

1 «Ազգասեր», 1894, հ. 1, էջ 195։

2 «Ծղբայրասեր», 1863, № 34, էջ 252։

Հնդկահայ առաջավոր մտավորականները, Մայր հայրենիքից կտրված լինելով հանդերձ, ուշի ուշով հետևում էին մեծ տերութունների փոխհարաբերություններին։ Նրանք առանձին համակրանքով էին հետևում հույն ժողովրդի մղած ազատագրական շարժումներին։ Հնդկահայ գաղթօջախներում կոչեր էին արվում, որ հայերը, հույների օրինակով, դիմեն ապստամբության։

1806 թ. Մադրասում լույս է տեսել «Անցք կամ գործք» վերնագրով Մադրասի հայ գաղթօջախի պատմության համար արժեքավոր մի տետրակ, ուր ամփոփված են Մադրասի հայկական համայնքի ժողովների արձանագրությունները։ Այդ արձանագրություններից երևում է, որ գաղթօջախն ապրել է հասարակական ակտիվ կյանքով, համայնքի ժողովներում քննարկվել են հրատապ շատ հարցեր, որոնց թվում նաև՝ Հայաստանի ազատագրման հարցը։ Ելույթ ընկեցողների մեծ մասը հանձին Ռուսաստանի տեսել են այն ուժը, որը «կարկառել է ձեռքը առ փրկութիւն և ազատութեան մեր»¹։ Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հետորոններից մեկը կոչ է արել հայ ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքի համար հնդկահայերի անունից շնորհակալական գիր ուղարկել Ռուսաստանի «մարդասէր և օրհնեալ» կառավարությանը²։ Մադրասցիները նման ժողովներում հաճախ են քննարկել դեպի Ռուսաստանն ունենալիք իրենց դիրքը։ Նրանք հատուկ ուղերձներ են ուղարկել ոչ միայն Ալեքսանդր I-ին, այլ նաև վրաց Հերակլ թագավորին³։

Շմավոնյանի պարբերականում տպագրված վավերագրերը և մանավանդ մադրասցիների ժողովների արձանագրությունները ցույց են տալիս, որ Շմավոնյանը լուսատու նոր հեռանկարների փրականացումը կապում է անմիջապես հյուսիսային հզոր պետության հաղթական արշավանքի հետ։

1827 թ. հնդկահայերը մեծ ցնծությամբ են ընդունում այն լուրը, որ ռուսական կառավարությունը իր զորքերը կենտրոնացրել է թուրքական սահմանագլխին և պատրաստվում է ազատագրել հայերին։ Այնքան է մեծ եղել հնդկահայերի ոգևորությունը, որ նրանք ապրելով անգլիական տիրապետության տակ, չէին թաքցնում իրենց համակրանքը Ռուսաստանի կառավարության նկատմամբ։ Հայաստանի ազատագրման, ինչպես և ազատագրումից հետո

1 Ա. Երեմյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի դրոշակակիրները, «Էջմիածին», 1948, № 10—12, էջ 38։

2 Ա. Երեմյան, նույն աշխատությունը, էջ 41։

3 «Շտեմարան», էջ 773։

այնտեղ հաստատվելիք կարգի մասին հնդկահայ գաղթօջախներում գոյություն է ունեցել երկու կարծիք. նրանցից մեկը շափավոր է եղել, իսկ մյուսը՝ ակտիվ: Ակտիվ հոսանքի կողմնակիցները գրտնում էին, որ «Ամենայն քաղաքացիքն համախմբեալ օգնականութիւն ուղարկեն առ տունն Հայոց՝ թէ պաշտօնեայ, թէ դրամ, թէ արհեստաւոր, թէ զեն, ինչ որ կարողանան ուղարկեն»¹: Տեղի են ունեցել այդ երկու հոսանքների բախումներ:

«Շտեմարանի» խմբագիրը, որն ավելի հակված էր դեպի այն խումբը, որը հույսը դրել էր Ռուսաստանի օգնութեամբ հայ ժողովրդի ազատագրութեան վրա, 1882 թվականին հրատարակում է կաթողիկոսի կոնդակը Հայաստանի ծանր վիճակի մասին թուրքական լծի տակ և հորդորում Հայաստանի ազատագրութեան անհրաժեշտութիւնը՝ կոչ անելով. «Հայկազունք, քաջալերացուք, միշտ ձմեռ չէ լինելոց»:

1827 թ. ռուսական բանակների կողմից Երևանի գրավման և հայ ժողովրդի վրայից պարսկական դարավոր լծի թոթափման լուրը շատ արագ հասավ հնդկահայ գաղթօջախները՝ անսահման ուրախություն պատճառելով գաղթօջախների բոլոր խավերին: Հոգու անսահման հրճվանքով շնորհավորական հարյուրավոր նամակներ գնացին հեռավոր Հնդկաստանից դեպի էջմիածին:

Ահա մադրասահայերի ուղարկած նամակից մի հատված՝ ուղղված Ներսես Աշտարակեցուն. «Անպատմելի ցնծութեամբ անձին, ամենազուարճ հրճուանօք սրտի և խանդաղտական բերկրանօք հոգւոյ ընդգրկեալ համբուրեցաք զաւետաւոր, զաւետաբեր... և պատմագրական ծանուցումն ազատութեան Հայրենեաց մերոց աստուածընտիր մասինն Հայաստանեայց աշխարհի և հոգևոր մօրն մերոյ սրբոց աթոռոյն էջմիածնի ի յԱստուածապարտ զօրաց... Վեհափառ կայսերն ամենայն ռուսաց նիկողայոսի... Ապաքէն այսուհետև Տունն Հայկա պարտական և երախտապարտ է օրհնեալ և բարեբարոյ ազգին ռուսաց և տանն մեծի Պետրոսի...»²:

Շատ ջերմ ու հուզիչ շնորհակալական նամակ է գրել Մեսրոպ Քաղիաղյանը՝ ուղղված «Ազգասեր հասարակութեան Հայոց, փրկեալ քաղաքին Երևանայ»: «Աչքներդ հազար լոյս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն շաքչարանքիցն ազատվեց, քրիստոնեից տերութեան ներքոյ ընկաւ... — գրել է նա: — Իմ լաւ քաղաքացիք, էսպես երջանիկ բախտի, որ դուք եք պատահել, կարծեմ ոք մեր

նախնիքն և Արշակունի թագաւորութեան ժամանակումն էլ չէին պատահել. զերա թէպէտ և թագաւորութիւն իւրանցն էր, սակայն քարբարոսութիւն և զուլումն պակաս չէր»¹:

Թե Մադրասից, Կալկաթայից և Հնդկաստանի զանազան քաղաքներից ուղարկած խմբական նամակ-համախոսականներում և թե առանձին շնորհավորականներում հնդկահայերը շատ բարձր են գնահատում Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում:

Հնդկահայութեան պատկերացմամբ արդեն եկել էր այն ժամանակը, որ իրականանա հայ ժողովրդի դարավոր բաղձանքը՝ ստեղծվի անկախ-ազատ Հայաստան: Սկսած հասարակ արհեստավորներից մինչև մեծահարուստ վաճառականներն այնպես էին տգեղրված կատարվածով, որ պատրաստակամություն էին հայտնում վերադառնալ իրենց պապերի թողած հայրենիք և լծվել նրա լուսավորման, բարգավաճման գործին: Շատ էր ոգևորված հատուկապես Մեսրոպ Քաղիաղյանը: Իր վերը բերված նամակում, բարձր գնահատելով ձեռք բերված ազատությունը, նա գրում է. «Ախ, իմ լավ քաղաքացիք, ախ, հոգիս հարայ ա կանչում. հին խմորն թողէք, նոր ազգի լուսաւորութեան և պայծառութեան հետեւեցէք: Պարտ է ուրեմն աստուծոյ ողորմութիւնն ոտանատակ շտալ, նորա ձեզ տուած ազատութիւնն անմահ փրկութիւն համարել, ջանալ որ ձեր խանգատայ որդիքն կարողանան իմաստութեամբ թուր բռնել ընդդէմ թշնամեաց, աստուծոյ և բարերար կայսեր ձերոյ և ձեր աղջկերքն՝ գրիչ, նոքա՝ քաջութիւն առնեն, և սոքա նորանց քաջութիւն գրեն. նոքա դառնան քաջ զօրք և զօրաքա նորանց քաջութիւն գրեն. նոքա դառնան քաջ զօրք և զօրաքա մեր աշխարհն մին անգամ իւր որդիք և դստերքն էսպէս կատարելութեամբ ծաղկած տեսնել, չգիտեմ, ո՞ր մին ֆռանկի աշխարհելութեամբ ծաղկած տեսնել, չգիտեմ, թէ արուեստով, թէ հիցն պակաս կմանայ, թէ լուսավորութեամբ, թէ արուեստով, թէ ազնուութեամբ, և թէ երջանկութեամբ. և ոչ թէ միևնիցն: Ահա էսայ իմ ցանկութիւնս իմ քաղցր Աշխարհիս համար, եթէ որ հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հեշտ է, մենք հիմն կզնենք և Աստուած կշինի. և ես ուրախ կլինիմ ապրիլ ձեզ համար՝ և մեռնիլ ձեզ համար»²:

Ինչպես հնդկահայերից շատ շատերին, այնպես էլ Քաղիաղյանին համակել էր հայրենիք վերադառնալու գաղափարը: Նրանք

1 Ա. Երեմյան, նույն աշխատությունը, էջ 41:

2 «Շտեմարան», էջ 773:

3 ՄԱՄ, կաթող. արխիվ, թղթ. № 58, վավ. № 303:

1 Նույն տեղը, թղթ. № 61, վավ. № 788:

2 ՄԱՄ, կաթող. դիվան, թղթ. № 58, վավ. № 303:

Կալկաթահայ համայնքի ղեկավար մարմինը եղել է եկեղեցական վարչությունը: Նա մշակել է ինքնուրույն ներքին կանոնադրություն՝ համակերպված տեղի պայմաններին և ենթակա կառավարության հսկողությանը: Համայնքի ղեկավար եկեղեցական ժողովը ընտրվում էր ժողովրդի կողմից չորս տարին մեկ անգամ: Ներկայացուցիչները այդ ժողովում կոչվում էին «կոմիսարներ», «կոմիսարներից» բացի, կային «ավանդապահներ» և մեկ «եկեղեցապան»¹: Ընտրությունները կատարելիս, ինչպես տեսանք, բավականին սուր բախումներ են եղել հասարակ ժողովրդի և վերնախավի միջև, և «կոմիսարները» միշտ հարուստներն են ընտրվել²:

Հայկական համայնքները երկար տարիներ առաջնորդվել են իրենց ներքին կանոնադրությամբ: Երբ 1830 թվականին անգլիական գաղութարարները փորձեր էին անում Հնդկաստանի համար սահմանադրություն մշակել, հայկական համայնքներն աշխատեցին իրենց իրավունքները սահմանադրորեն ճանաչել տալ: Այդ նպատակով կալկաթահայերից ստեղծվեց մի պատկառելի հանձնախումբ, որը մոտ մեկ տարի աշխատելուց հետո, փոխարքային ներկայացրեց հնդկահայերի համախոսականը³: Հնդկահայերը մտահոգված իրենց ապագայով, մանրամասնորեն հիշեցրել էին իրենց կատարած ծառայությունները երկրին՝ սկսած XVI դարից:

Կալկաթահայերն իրենց նամակում բերել են բազմաթիվ փաստեր և դեպքեր Հնդկաստանի պատմությունից, ուր երբեմն խոստն դեր են խաղացել հայկական համայնքները: Նրանք միաժամանակ հիշել են այն արտոնությունների և իրավունքների մասին, որոնք տարբեր ժամանակներում շնորհվել են տեղական առանձին իշխանությունների կողմից և ցանկություն հայտնել, որպեսզի նրանք պաշտոնական ճանաչում ստանան նոր սահմանադրությամբ:

Հնդկահայ գաղթօջախների առաջադեմ մտավորականությանը հուզում էր շատ կարևոր մի հարց ևս: Հնդկահայերը, հեռու հայրենի բառ ու բանից, օտար շրջապատում դատապարտված էին «սուզվելու ազգերի օվկիանոսում» և անհայտանալու: Այս հեռու-հեռաստաններում հայության պահպանության միակ ելքը մնում էր ազգային լեզվով դպրոցներ բացելը և ազգային մշակույթ պահպանելը:

1 M. Seth, Armenians in India, էջ 541-544:

2 «Շտեմարան», էջ 63 և այլն:

3 M. Seth, Armenians in India, էջ 541-544:

Հնդկահայ մշակութային կյանքի ամենից խոշոր ու նշանակալից երևույթ եղել է մեծ ժողովրդականություն ունեցող Կալկաթայի «Հայկական մարդասիրական ճեմարանը»: Ժամանակին, 1797 թվականին, ճեմարան հիմնելու գաղափարը տվել է Աստվածատուր Մուրադխանյանը: Նա այդ նպատակի համար հատկացրել է 8000 ռուպի: 1816 թվականին Սեյդաբադից մի այլ ջուրդայեցի հայ, նորից արժարժում է ճեմարան բաց անելու խնդիրը և իր կողմից այդ նպատակի համար հատկացնում 20 000 ռուպի: Նա միաժամանակ բաց նամակով դիմում է հնդկահայությանը՝ հանդանակություն կազմակերպելու համար¹:

1821 թվականին հայերի նվիրատվություններից հավաքած դրամով բացվում է «Հայոց մարդասիրական ճեմարանը»: Դրաբացումը մինչև 1842 թվականը երկսեռ է եղել, ունեցել է երկու բաժին՝ տղաների և աղջիկների, իսկ այնուհետև աղջիկների բաժինը փակվել է:

Դպրոցն ունեցել է երթևեկ և գիշերօթիկ բաժիններ: Գիշերօթիկում մեծ մասամբ սովորում էին Պարսկաստանի, Հնդկաստանի և հարևան երկրների հայ գաղթօջախներից եկած երեխաները: Զբաղոր հրեխանների համար ուսումը ձրի է եղել: Սկզբնական շրջանի ուսումնական ծրագրում ճնշող է եղել լեզուների դասավանդումը՝ գրաբար, անգլերեն, ֆրանսերեն, լատիներեն, հունարեն և պարսկերեն: Դասավանդվել են նաև բնագիտություն, աշխարհագրություն, աստղաբաշխություն և մաթեմատիկա²:

Ճեմարանը ղեկավարում էր համայնքի կողմից ընտրված չորս հոգուց բաղկացած հոգաբարձությունը: Առաջին դեմքը «գլխավոր վարժապետն» էր³: Առաջին ուսուցիչներն են եղել հայ կուլտուրայի աչքի ընկնող այնպիսի մանկավարժներ, ինչպիսիք են Մարտիրոս Դավթյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Հովհաննես Ավդալյանը և ուրիշներ:

Մոտ 150 տարվա իր գոյության ընթացքում Մարդասիրական ճեմարանը տվել է հարյուրավոր շրջանավարտներ: Նրանցից շատերը հետագայում դարձել են հայ մշակույթի ասպարեզում ճատեր:

1 The Armenian College and Philanthropic Academie for 1912-1913, Calcutta, 1914

2 Մ. Լ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը XX դ. առաջին կեսին, Երևան, 1964, էջ 429:

3 «Կարգադրութիւնք Մարդասիրական ճեմարանին հայոց, որ է Կալկաթա», «Արշալոյս Արարատեան», Ջմիւռնիա, 1844, № 208:

կան համայնքի ներքին կյանքի մասին, նամակներ, օտար թերթերից բերված քաղվածքներ և այլն: «Շտեմարան»-ը մեկ տարի լույս տեսնելուց հետո դադարել է:

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում «Ազգասեր», «Ազգասեր Արարատյան» պարբերականները, որոնց խմբագիր-հրատարակիչը հանդիսացել է ականավոր հայ մանկավարժ, գրող, լուսավորիչ Մեսրոպ Թադիադյանը:

«Ազգասերի» և «Ազգասեր Արարատյան»-ում հրատարակված նյութերը բազմազան են. տեղեկատու լուրերի, հայտարարությունների կողքին ընթերցողը կարող է գտնել պատմական-բանասիրական ուսումնասիրություններ, հրապարակախոսություններ, հայրենասիրական, բարոյական, խրատական բանաստեղծություններ, զանազան թարգմանություններ և այլն: Առաջին իսկ համարներից պարբերականը տպագրվել է աշխարհաբար լեզվով, ավելի շուտ՝ ջուղահայ բարբառի և աշխարհաբարի խառնուրդով:

Կալկաթայում, Եդիազար Տեր-Հարությունյանի խմբագրությամբ, լույս է տեսնում «Եղբայրասեր» թերթը 1862—1863 թթ.: Թերթի հիմնական նպատակն է եղել պայքարել ձուլման դեմ, պահպանել հայ մշակույթը և զարգացնել այն:

Հնդկահայ գաղթօջախներում հրատարակվել են նաև մի շարք պարբերականներ: «Մաղկաստանը» տպագրվել է 1822 թ. Բոմբեյում, վիմատիպ, հայտնի չէ խմբագրի անունը: Նախքան «Մաղկաստանը» 1820 թ. տպագրվել է «Հայելի կալկաթյան» շաբաթաթերթը: Այնուհետև 1844 թ. Բոմբեյում տպագրվել է «Բոմբեյի հայոց լրաթուղթը», ապա՝ «Ազդարար» երկշաբաթաթերթը՝ քաղաքական և բանասիրական բովանդակությամբ: Ընդամենը 39 համար է հրատարակվել Մաղրասի «Բանասերը»: Երկու տարի գոյատևելուց հետո 1865 թ. Կալկաթայում փակվում է: 1892 թ. Հովսեփ Մելիք Բեգլարյանի խմբագրությամբ անգլերեն լեզվով հրատարակվել է սկսում «Արա» ամսագիրը: Զերմ հայրենասիրական ուղղություն ունեցող այս ամսագրի նպատակն է եղել քաղաքակիրթ մարդկության ուշադրությունը հրավիրել հայկական հարցի վրա: 1933 թ. «Զանգից» հետո, 1950—1955 թթ., Կալկաթայում հրատարակվել է «Նոր Ազդարար»-ը՝ Զ. Հանանյանի խմբագրությամբ¹:

¹ Վերոհիշյալ բոլոր փաստերն առնված են «Նոր Ազդարար» պարբերականից» (տե՛ս «Նոր Ազդարար», 1951, № 3):

Հնդկահայ մշակույթի անբաժանելի մասն են կազմում Հընդկաստանի հայ տպարաններն ու տպագրությունը:

XIX դարի առաջին կեսը հնդկահայ գաղթավայրի մտավոր և մշակութային շարժման ամենից բեղուն ժամանակաշրջանն է հանդիսացել: Հնդկահայերն այդ ժամանակ արդեն ունեին բավականի պատկառելի փորձ տպագրության ասպարեզում: Դարի սկզբներում իրար հաջորդեցին Մաղրասում 1809 թ. Երազեցու, 1818 թ. Սարգիս Մատուր Աղավելյանցի, ապա Զնթլում Ավետույանի տպարանները, որոնք տասնյակ բազմաբովանդակ հայրենասիրական, հայագիտական գրականություն են հրատարակել:

Հայկական տպագրության բաժիններ են ունեցել կաթոլիկ և բապտիստական քարոզչական տպարանները Սրբնբուրում և ապա՝ Կալկաթայում: Այս երկու տպարաններում հայերեն տպված մի քանի անուն գրքերը բոլորն էլ կրոնական բովանդակությամբ են:

«Մարդասիրական ճեմարանի» հիմնադրումից հետո Հովհաննես Ավդալյանի ջանքերով ստեղծվեց «Մարդասիրական տպարանը», որը կեսդարյա կյանք ունեցավ:

Հայկական տպագրական գործը իր զարգացման բարձրությանը հասավ, երբ 1845 թ. Կալկաթայում ստեղծվեց «Արարատյան ընկերությունը», որի հիմնական նպատակներից էր Հնդկաստանում հայերեն գրքեր և լրագրեր հրատարակելը: Տպարանի գլուխ կանգնած էր Մ. Թադիադյանը: Այստեղ, բացի «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյանից», հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր, բարոյախոսական գրքեր և այլն:

1846 թվին ստեղծված Պողոս Վիչենյանի «Արծիվ» տպարանը կարողացավ միայն մի քանի գրքեր հրատարակել:

Ավելի երկար կյանք և բազմաբովանդակ հրատարակություններ ունեցավ Հովհաննես Խաչկյանի հիմնադրած տպարանը՝ 1869 թվից սկսած: Կալկաթայում այժմ էլ հայ գաղթօջախը ունի իր տպարանը:

Մշակութային և ընկերական կազմակերպությունները հնդկահայ գաղթօջախներում, Ինդոնեզիայի, Բիրմայի և մյուսների համեմատ, քիչ են եղել: 1915 թ. Բոմբեյում հիմնվեց «Օճանասիյունյան ընկերությունը»¹: Նրա հիմնական նպատակն է եղել հայերեն ձեռագրեր հավաքել և հրատարակել, օտար լեզուներից թարգմանություններ կատարել, զարգացնել հայկական մշակույթը և նպաստել հայ ժողովրդի լուսավորությանը²:

¹ «Օրացույց», 1899:
² «Ազգասեր», 1847, № 102, էջ 239:

«Օճանասփյուռ» ընկերությունը մտահոգված է եղել մանուկներին մայրենի լեզվով դաստիարակելու գործով: Բոմբեյում հիմնել է հայկական դպրոց¹: Բոմբեյաբնակ Պողոս Հորդանյանը, իր հայրենակիցներին օգնելու համար, «Օճանասփյուռ»-ին է նվիրել հայկական տպարան²: Գրեթե նույն նպատակներով և ծրագրով, նշանաբան ունենալով՝ «Ուսումնասիրություն, ընթերցասիրություն, բարեսիրություն», 1818 թ. Կալկաթայում հիմնվում է «Իմաստաքննադատության միությունը»: Կարճ անց, այս երկու ընկերությունները սկսում են հանդես գալ միացյալ ուժերով: Նրանք միացյալ ուժերով հրատարակել են «Հայելի կալկաթյան», ապա՝ «Շտամարան» պարբերականները, մի շարք արժեքավոր գրքեր: Սրանց ջանքերով է, վերջապես, որ բացվում է «Մարդասիրական ճեմարանը»:

1845 թ. հուլիսի 17-ին Մանուկ Զորաբյանի ղեկավարությամբ, Պետրոս Սարգսյանի, Թադևոս Ավետումյանցի, Ավետիք Գալստյանի և Մեսրոպ Թաղիադյանի ջանքերով, հիմնադրվում է «Արարատյան ընկերությունը»:

Երկար ժամանակ հնդկահայ գաղթօջախներում նման կամ այլ միություններ չեն եղել: XX դարի սկզբներին հիմնվել է հայկական «Մարզական ակումբը»: Ակումբը, որն ունի ֆուտբոլի, հոկեյի, ռեգբիի, բասկետբոլի և այլ խմբեր, ճանաչված է որպես երկրի լավագույն մարզական ակումբներից մեկը:

1920-ական թվականների սկզբներին Կալկաթայում հիմնադրվել է «Հայկազյան մշակույթային միությունը»: Միությունը դարձել է սովետահայ մշակույթի ջատագովը Հնդկաստանում: Ընկերությանը կից գործում են զանազան ինքնագործ խմբեր: Իր ուժերով ընկերությունը կազմակերպում է թատերական, նույնիսկ օպերային ներկայացումներ հայկական բովանդակությամբ: Այսպես, օրինակ, նրանք մարմնավորել են «Անուշ»-ը, «Զար ոգու», «Պատվի համարի» ներկայացումները: Ընկերությունը կազմակերպում է երաժշտական երեկոներ, դասախոսություններ՝ նվիրված հայ մշակույթի այս կամ այն տարելիցին, Սովետական Հայաստանի նվաճումներին, կազմակերպում է ցուցահանդեսներ և այլն:

Գործում է առ այսօր Մեսրոպ Սեթի ջանքերով 1909 թ. հիմնադրված «Մարդասիրական ճեմարանի» շրջանավառների միությունը» և «Կանանց բարեգործական միությունը»:

1 նույն տեղում, էջ 240:

2 Ա. Ալպոյանյան, ՊՁԳ, հ. III, էջ 416:

Հնդկահայ գաղթօջախներում ապրող հայերի թվի վերաբերյալ հայտնվել են զանազան իրարամերժ կարծիքներ: Շատ հաճախ հնդկահայության թվին միացվել է նաև Ինդոնեզիայի, Քիրմաչի, Սինգապուրի, երբեմն էլ նույնիսկ՝ Հեռավորարևելյան երկրների հայ գաղթականության թիվը: Այսպես, Գելյուրեն Հընդկաստանում և հարևան կղզիներում ապրող հայերի թիվը հաշվում է 25 000¹, Հ. Չագճյանը՝ 20 000², որոնք, անշուշտ, չափազանցություններ են: Ոմանք հավանաբար հաշվի առնելով հնդկահայության հարուստ շրջանների նվիրատվությունների մեծ շափերը, այդ թիվը հասցրել են նույնիսկ 50 000³:

Հնդկաստանում ընդհանրապես չի եղել մարդահամար և հազիվ թե հնարավոր լինի որևէ կոնկրետ բան ասել հնդկահայերի թվի մասին, որոնք ցրված էին ամբողջ Հնդկական թերակղզով մեկ: Հավանաբար, ճշմարտությանն ավելի մոտիկ է Ալիշանի հաղորդած թիվը՝ 5000⁴:

XIX դարի վերաբերյալ կան հետևյալ տեղեկությունները. Կարպետ վարդապետ Շահնազարյանը հաշվում է 1500 հոգի⁵: 1829 թ. Կալկաթա այցելած Պ. Պ. Լազարովիչը՝ միայն կալկաթահայոց թիվը հաշվում է 150 տուն⁶: Նույնն է կրկնում մի քանի տարով ուշ այցելած Ավետիս Կարբեցի Մադիկյանը⁷: 1846 թվականի մարդահամարով Հնդկաստանում ապրում էին 257 հայ ընտանիքներ, որոնցից 120-ը՝ Կալկաթայում: Այդ մանրամասն ցուցակից, որը տպվել է «Ազգասերում», երևում է, որ այդ ընտանիքների մեծ մասը բաղկացած են եղել մեկ-երկու հոգուց միայն⁸: Հետագա մարդահամարները քիչ տարբերությամբ միայն կրկնում են իրար:

Ստորև բերում ենք երկու մարդահամար՝ նպատակ ունենալով որոշ պատկերացում տալ հնդկահայ բնակչության մասին նոր ժամանակներում: Նրանցից առաջինը վերաբերում է 1911 թվականին, իսկ երկրորդը՝ 1951-ին:

1 «Մասյաց աղավնի», Թեոդիսիա, 1860, № 2, էջ 31:

2 Հ. Չագճեան, Պատմութիւն հայոց..., էջ 411:

3 «Սին», 1875, № 8, էջ 84:

4 Ղ. Ալիշան, Աշխարհագրութիւն..., Վենետիկ, 1853 թ., էջ 31:

5 «Մասեաց աղավնի», 1960, էջ 31:

6 Պ. Լազարեիչ, Ստորագրութիւն Կալկաթա քաղաքին, Կալկաթա, 1832, էջ 43:

7 ՄԱՄ, ձեռագիր № 2821, էջ 41ա:

8 «Ազգասեր», 1946, հատ. բ, էջ 126—128:

1) Բոմբեյ	23 տուն	72 շունչ	2) Կալկաթա	200 տուն	915 շունչ
Մադրաս	9 »	20 »	Ասանսոլ	39 »	102 »
Կալկաթա	112 »	485 »	Բոմբեյ	25 »	53 »
Դաքքա	12 »	47 » ¹	Մադրաս	8 »	32 »
			Դաքքա	43 »	75 » ²

Ահա հնդկահայ գաղթօջախների շատ փոքր քարտեզը իր իրական պատկերով: Չնայած այն շատ ու շատ է կրճատվել, թվապես նվազել է հայության քանակը, բայց փաստը մնում է փաստ, որ դարեր շարունակ մաքառելով ամենակուլ ձուլման դեմ, նրանք պահպանել են իրենց գոյությունը:

Նոր ժամանակներում կցկտուր տեղեկություններ ունենք հրեական հայերի մասին: Գիտենք միայն, որ նրանք դրական դիրք են ունեցել և ուրախությամբ ընդունել սովետական կարգերի հաստատումը Հայաստանում լուրը: Այն ժամանակ, երբ շատ գաղթավայրերում որոշ խավեր կասկածանքով են նայել հայ ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցող այս իրադարձությանը, 1924 թվականի նոյեմբերի 13-ին հնդկահայ գաղթավայրի ամենից ակնավոր և սիրված մտավորականներից մեկը՝ Մեսրոպ Սեթյանը, հանդես է եկել Սովետական Հայաստանին նվիրված հատուկ զեկուցումով և դրական գնահատումով ներկայացրել ոչ միայն հնդկահայերին, այլև հնդիկ և եվրոպացի հասարակայնությանը³: Նույն թվականին հնդկահայ գաղթօջախում կազմակերպվել են ՀՕԿ-ի մասնաճյուղեր, որոնց անդամակցել են հայրենասեր հնդկահայերը⁴:

Խոսելով XX դարի հնդկահայության մասին, չի կարելի լռել հնդկահայ հասարակության ակտիվ գործիչ, գիտնական Մեսրոպ Հակոբ Սեթի մասին: Բազմավաստակ գիտնականը մեղվի համբերատարությամբ շրջել է ողջ Հնդկաստանում, եղել է բոլոր այն վայրերում, ուր երբևէ ապրել են հայեր, նշխար առ նշխար հավաքել է հնդկահայության ցրված պատմությունը և երկու փառահեղ հրատարակությամբ ներկայացրել ընթերցողին:

Այժմ Հնդկաստանում ապրող հայության թիվը, ըստ Միրզոյանի 1955 թ. հաշվումների, մոտ 1400 է, որոնց մեծ մասն

¹ «Օրացույց», 1911 թ., Նոր-Ջուղա, յԱպահան:

² «Նոր Ազդարար», Կալկաթա, 1951 թ., № 2:

³ M. Seth, The Republic of Armenia, Calcutta, 1924.

⁴ ՀՊՀԱ, ֆ. 178, վավ. 197:

ապրում են Կալկաթայում: Հայեր են ապրում նաև Կալկաթայից 186 մղոն հեռավորության վրա գտնվող Ասանսոլում, ինչպես նաև Դհանբուդում և Ջարդայում: Վերջին երեք քաղաքների հայությունը հիմնականում բաղկացած է մեքենագետներից, երկաթուղայիններից, ածխահանքային մասնագետներից և մասնագետ վարպետներից: Նրանք հիմնականում աշխատում են երկաթուղային շինաներից: Նրանք հիմնականում աշխատում են երկաթուղային շինարարությունում, ընկերություններում, ածխահանքերում: Կան հայեր, որոնք զբաղվում են «չիլաքի» գործով, ունեն սեփական գործատներ: (Չիլաքը՝ այդ հատուկ ծառերից ստացվող խեժ է, որը փոխարինում է պլաստմասսային և սոսնձին)¹:

«Արև»-ում հրատարակված մի թղթակցությունում հեղինակը Հնդկաստանից հետևյալն է գրել ներկայիս հնդկահայության մասին. «Ազգերի վերածնության ու զարթոնքի այս եռուն ժամում հնդկահայությունը լարել է իր գերագույն ճիգերը, աշխատում է հնարավոր սահմաններում մնալ հայ, բառի լավագույն իմաստով...»:

¹ Ար. ԲՏ. Միրզոյան, Ամփոփ պատկեր ներկա հնդկահայ գաղութին (տե՛ս «Արև», 1955, 21 դեկտեմբերի):

XVII. ԲԻՐՄԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆ

Բիրմայի հայ գաղթօջախների սկզբնավորման հաստատ ժամանակը, արևելյան շատ հայ գաղթօջախների նման, հայտնի չէ: Գիտնականներից ոմանք պնդում են, որ բիրմահայ գաղութը ավելի հին է, քան հնդկահայ գաղութը¹, մյուսները գտնում են, որ Բիրմայում հայերը սկսել են հաստատվել միայն Շահ-Աբասի հայտնի բռնագաղթի, ավելի ճիշտ՝ Նոր-Ջուղայի հարուստ գաղթօջախի անկումից հետո²: Մի շարք այլ ուսումնասիրողներ բիրմահայ գաղութը համարում են հնդկահայ գաղթօջախի մի ճյուղը³:

Իրականում, հավանականը երևի այն է, որ Բիրմայի հետ հայերի ծանոթությունը ունի այնքան հնություն, որքան որ Հընդկաստանի հետ: Միջին դարերում հայ և եվրոպացի ճանապարհորդների մեծ մասը, որոնք այցելել են Բիրմա, Հնդկաստան և Ինդոնեզիա, երեք երկիրը միասին ուղղակի համարել են Հնդկաստան:

Միջին կամ ուշ շրջանի այդ աղբյուրներում հաճախ բիրմական քաղաքներ՝ Ռանգունը, Սիրիամը, Մանտլեն, Մոուլմեյն և այլն, ուղղակի համարում են հնդկական քաղաքներ, իսկ այնտեղ ապրող հայերին՝ հնդկահայեր: Հայագետները և արևելագետների մի մասը զարմանալիորեն կրկնել են սկզբնաղբյուրների սխալը և երբեմն նույնացրել հնդկահայ և բիրմահայ գաղթօջախները:

Մեր ձեռքի տակ եղած հայկական առաջին սկզբնաղբյուրը, ուր հավաստի հիշատակություն կա հայ-բիրմական կապերի (այստեղ խոսքը տնտեսական առևտրական կապի մասին է), գուցե նաև առաջին գաղթօջախների մասին, Կոստանդ Ջուղայեցու

1 «Մանկավարժանոց», 1782, № 1:

2 Վ. Բան. Աղանյան, Օրացույց Նոր-Ջուղայի, Նոր-Ջուղա, 1919:

3 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 63, էջ 2:

«Առևտրական մատյանն» է: Ինչպես արդեն ասել ենք «Հնդկահայերը» գլխում, XVII դարի Նոր-Ջուղայի առևտրական նշանավոր դպրոցի ուսուցիչ Կոստանդ Ջուղայեցին, օգտվելով XV—XVI դարերի հայ առևտրականների «գավթարներից», օրագրություններից և այլ վավերագրերից, կազմել է հետաքրքիր մի գասագիրք, ուր հիշվում են Արևելքի, Եվրոպայի և Աֆրիկայի այն քաղաքները, որտեղ հայ առևտրականները հաստատված են եղել: Քաղաքների այդ շարքում Բիրմայում հիշվում են երկուսը՝ Ավան և Ռանգունը:

XVI դարի առաջին կեսին բիրմահայ գաղթօջախների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Գ. Էպ. Փոլագյանը՝ հիմնվելով մեզ անհայտ աղբյուրների վրա: Ըստ այդ հաղորդման, Ավայում 1545 թվականին Պավոյ երկրորդի պալատական զորամասում կային հայ զինվորականներ, որոնք բարձր դիրքեր ունեին⁴:

Բիրմայի արևմտյան ափերին և հարավում հայկական գաղթօջախների փաստը XVI դարի վերջում և XVII դարի սկզբներին հաստատում են նաև եվրոպական սկզբնաղբյուրները: Ավայի 1612 թ. բավականին աշխույժ կյանք ունեցող հայ համայնքների մասին հավաստի վկայություններ են պահվել անգլիական աղբյուրներում²: Ընդ որում, երբ անգլիացիները խոսում են Ավայի կամ Սիրամի հայկական առևտրական ֆակտորիաների մասին, կամ Սիրամի հայկական առևտրական ֆակտորիաների մասին, կամ անպայման խոսում են այն կապակցությամբ, որ հայերը ապա անպայման խոսում են եվրոպացիների համար Բիրմայում և նրա հարևան երկրներում³:

Հայկական ծագում ունեցող նյութական կուլտուրայի մնացորդները, կառույցները՝ Պեգույում, Սիրամում, Մանդալայում, Ավայում և Ամարապուրայում, ինչպես և եվրոպական ճանապարհորդների և առևտրականների հիշատակումները, նույնպես վկայում են այն մասին, որ իրոք այդ վայրերում XVII դարի սկզբներին գոյություն են ունեցել հայկական արդեն սկզբնավորվող գաղթօջախներ⁴:

Սրանցից Պեգույի և Ավայի գաղթօջախներն այնքան են հայտնի եղել, որ նրանց մասին տեղեկություններ են հասել էջմիածին

1 «Սին», Երուսաղեմ, 1959, էջ 170:

2 G. Harvy, History of Burma, London, 1925. էջ 346:

3 Дж. Е. Холл, История Юго-Восточной Азии, Москва, 1958, стр. 264:

4 Л. Х. Тер-Мкртчян и Л. К. Мкртчян, «Из истории армянской общины

Бирме» (см. «Народы Азии и Африки», Москва, № 3, 1961 г. стр. 135):

և այնտեղից այս կամ այն առիթով XVII դարում կոնդակներ են ուղարկվել: Նույն ժամանակներում մի ճանապարհորդ, որն անձամբ եղել է ու շրջել Բիրմայում, գրում է. «Հայերը, որոնք հաստատված են Ավայում և ունեն իրենց ինքնուրույն իշխանությունը, բավականին դժվարացրել են եվրոպական վաճառականների գործը»¹: Բիրմահայ Մ. Գասպարյանի վկայությամբ, նույն ժամանակների մի շարք շիրմաքարեր են պահվում Ռանգունի թանգարանում:

Ի միջի այլոց, այդ շիրմաքարերի վրա եղած արձանագրություններից երևում է, որ բավականին բազմազան է եղել բիրմահայերի զբաղմունքը: Առևտրականների կողքին հիշվում են նաև քաղաքական և զինվորական գործիչներ, նավավարներ և այլ մասնագիտությունների մարդիկ:

Ինչպես այս, այնպես էլ մի շարք պատմական այլ վկայություններ ցույց են տալիս, որ XVII դարի սկզբներում հայկական գաղթօջախներ գոյություն ունեին Բիրմայում²:

Բիրմայի հայ գաղթօջախներից ամենից հնագույնը, ինչպես երևում է, Ավայի գաղթօջախն է: Դժբախտաբար, նրա մասին տեղեկություններ չունենք, գիտենք միայն, որ XVII դարում՝ «Գտանեն անդ բազումք ի հայոց ...ունին և եկեղեցի գեղեցիկ պայծառ և ոսկեզօծեալ, և բարձր զանգակատուն առ նովառ և սենեակք և բնակարանք, քահանայից»³: Բնական է, որ «ոսկեզօծեալ» եկեղեցի կարող էր ունենալ ոչ միայն բավականաչափ հարուստ և սովոր բնակչություն ունեցող, այլև բարեկեցիկ կյանք ունեցող համայնքը միայն: Հայկական այս համայնքը այնքան պետք է հայտնի եղած լինի, որ այնտեղ էջմիածնից ուղարկվի հոգևոր հովիվ:

Այս շրջանում Ավայի հայերը հիմնականում զբաղվում էին վաճառականությամբ: Աշխարհագրագետ Պեշենգի վկայությամբ, «վաճառականութիւն մեծամեծ իրոց, մանաւանդ ականց է ի ձեռս նոցա (հայերի—Ռ. Ա.)»³: Աշխարհագրագետը այնուհետև հաստատում է, որ հայերը այնտեղ ամուր հաստատված ինքնուրույնություն և կալվածքներ ունեցող միակ օտարականներն են, որ

1 Մ. Գասպարյան, Բիրմայի հայ գաղութը (տե՛ս «Նոր ազդարար», Կալկաթա, 1950, № 1, էջ 15):

2 Հ. Գ. Ազոնց, Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, մասն I, հ. IV, Վենետիկ, 1805, էջ 152:

3 Հ. Գ. Ազոնց, Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, հ. IV, էջ 152:

դժվարացնում են եվրոպացիների, մանավանդ անգլիացիների առևտրական գործարքները:

Հայերի աշխուռ դիրքը այնքան էր մեծ, որ եվրոպացիները Բիրմայում աշխատում էին օգտվել հայերի կապերից և հեղինակությունից: Դա, հիմնականում, վերաբերվում է XVII դարին, երբ եվրոպացիները դեռ վերջնականապես չէին հաստատվել Հնդկաստանում և նրա հարևան երկրներում, չէին անցել բացահայտ գրավումների և աշխատում էին այս կամ այն կառավարչին կամ ինքնակալին գրավել իրենց կողմը՝ առևտրի թույլտվություններ ստանալու զանազան պատվիրակությունների միջոցով: Հայտնի է, օրինակ, որ 1692 թ. Մադրասի անգլիական առևտրական ֆակտորիաների կառավարիչը բիրմական իշխանությունների հետ բանակցելու համար դիմում է Բիրմայի հայերի միջնորդությանը¹:

Բիրմահայերը ո՛չ միայն միջնորդի դեր են կատարում, այլ և այդ պատվիրակությանը ապահովում են նավերով, որոնք, ի միջի այլոց, լողում էին հայ ծովայինների և նավավարների ղեկավարությամբ²:

Այդ գաղթօջախները սերտորեն կապված էին բիրմական զանազան խավերի հետ: Հայերից ոմանք բարձրանում էին հազարապետների աստիճանի և «Նշանավոր դիրք ունեին թագավորական տանը»³: (Այդպես եղել է Պեզուում, Ասարապուրայում, Ավայում և այլ քաղաքատեղերում): Նրանցից մեկը՝ Խոջա Նիկողայոս Աղալարյանը, հասել է երկրի գանձապետի պաշտոնին, մի վստահություն, որին արժանանում է առաջին օտարերկրացին: Սա էր, որ իր ծախսով կառուցեց Սրինգ նավահանգստի հայոց եկեղեցին⁴:

Ինչպես Պեզուի, Ամբրապուրայի, Ավայի, այնպես էլ ժամանակի մյուս հայ գաղթօջախների մասին թվական տվյալներ չկան, բայց կարևոր է հիշատակել, որ XVII դարի սկզբներին և կեսերին հայկական եկեղեցիներ են գոյություն ունեցել Ավայում և Սիրամում, Մանդլեում և այլուր:

Բիրմահայ համայնքների հիմնական զանգվածը հին շրջանում, իհարկե, զբաղվել է վաճառականությամբ: Հայ վաճառականները այստեղ ևս կարևոր դեր էին խաղում երկրի տնտեսական կյանքում: 1675—1680 թթ. Բիրմա այցելած անգլիական ճանա-

1 «Սրին», 1959, էջ 158:

2 Նույն տեղը, էջ 169:

3 Հ. Գ. Ազոնց, Աշխարհագրություն, IV հ., էջ 152—153:

4 ՉՍՄ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գ. № 64, Բիրմա, էջ 2:

պարհորդ Ստեփաննոս Մասթերը, որի վրա դրված էր բիրմական արքունիքի հետ բանակցելու պարտականություններ, լոնդոն ուղարկած իր զեկուցագրում վկայում է «Որ Պեզուի հայերը... ամբողջ Բրմաստանի սուտակի վաճառականությունը վերցրել են իրենց ձեռքը»¹: Նույնն է վկայում նաև քիչ ավելի ուշ Սիրիամ այցելած Ալեքսանդր Համիլտոնը²: Բնականաբար, միայն թանկագին քարերի վաճառքով չէր, որ զբաղվում էին հայ խոջաները: Նրանց գործունեությունը ընդգրկում էր առևտրական ավելի լայն ոլորտներ:

Ամենայն հավանականությամբ, Բիրմայի հին հայ գաղթականությունն այս փոքրիկ կղզյակները հիմնականում բաղկացած էին հին և նոր շուղայեցիներից, որոնք կամ ուղղակի եկել էին հայրենիքից, կամ էլ Հնդկաստանի հայ գաղթավայրերից՝ Մադրասից, Դաքքայից և հատկապես Բիրմային գրեթե սահմանակից Բենգալիայից:

Այս շրջանում հայ շատ գաղթօջախներ Բիրմայում տեղական չեն եղել: Նրանցից ոմանք ունեցել են տասնյակ, իսկ երբեմն էլ միայն տարիների կարճատև կյանք: Դրա պատճառը, հիմնականում, Բիրմայում գոյություն ունեցող քաղաքական խիստ անբարենպաստ պայմաններն են եղել. գրեթե անընդմեջ կրկնվող պատերազմները՝ Բիրմայի տերիտորիայում գոյություն ունեցող իշխանությունների և թագավորությունների միջև: Հաճախ մի իշխանություն կամ թագավորություն հարձակվում էր մյուսի վրա, այրում, կոտորում, կողոպտում, տակնուվրա էր անում ամեն ինչ և հեռանում: Նման վայրագությունների ժամանակ տեղացիների հետ ոչնչանում և տուժում էին նաև հայերը: Երբեմն նման մի հարձակում ասպարեզից հեռացնում էր այդ վայրի հայ գաղթօջախը:

Սկզբնական շրջանի հայ գաղթօջախների շարժունակությունը Բիրմայում կապված էր մի այլ հանգամանքի հետ ևս: Հայերը ո՛չ միայն Բիրմայում, այլ նաև այլ վայրերում գլխավորապես կենտրոնանում էին երկրի մայրաքաղաքներում և քաղաքական ու տրեստասական նշանակություն ունեցող կենտրոններում: Եվ որովհետև XVII դարում և XVIII դարի առաջին կեսին հաճախ էին փոփոխվում Բիրմայի մայրաքաղաքները, փոխվում էր նաև հայ գաղթօջախների աշխարհագրական քարտեզը: Սակայն այդ հաճախակի կրկնվող տեղաշարժերը չէին խանգարում, որպեսզի Բիրմայի հայերը, անգլիացիների թափանցումներից առաջ, Բիրմայի պատմու-

¹ «Սին», Երուսաղեմ, 1959, էջ 169:

² Նույն տեղը:

թյան քաջատեղյակ, երկրի նախկին վարչապետ Բա Մավի վկայությամբ, «Բրմաստանի ամենեն ազդեցիկ տարրը»¹ եղած լինեն:

XVIII դարի 50—60-ական թվականներից հետո Բիրմայի հայ գաղթօջախները աշխուժացում ապրեցին: Այս աշխուժացումը առաջացավ հիմնականում Նոր-Ջուղայից եկող գաղթականական թարմ հոսանքով: Երբ այլևս անտանելի դարձավ տնտեսական վիճակը Նոր-Ջուղայում, այնտեղից դուրս եկող գաղթականների բազմաթիվ քարավաններից մեկը ուղղություն վերցրեց դեպի Բիրմա: Նոր եկողները գրեթե ամբողջությամբ հաստատվում են այն քաղաքներում, ուր արդեն կային հայեր:

Բիրմա եկողների այս հոսքին պետք է ավելացնել նաև այն, որ այստեղ էին սկսել տեղափոխվել բազմաթիվ աշքաբաց և փորձառու, Բիրման բավականին լավ իմացող հնդկահայեր Հնդկաստանի այն վայրերից, ուր անգլիական գաղութարարներն էին հաստատվել: Դրանք հայ վաճառականներն էին և հայ արհեստավորները, որոնք չդիմանալով արդեն անգլիական հուժկու ընկերությունների մրցակցությունը դուրս էին շարտվել հնդկական շուկաներից, և նրանց ոչինչ չէր մնում անել, քան փնտրել նոր, ազատ շուկաներ:

Այդ ժամանակներում են կազմավորվել Բիրմայի մի շարք նոր գաղթօջախները: Եղած պատմական փաստերը վկայում են, որ հայերը, երկրի խորքն անցնելուց առաջ, հաստատվում էին ծովափնյա վայրերում:

XVIII դարի հիմնական թվականներին Պեզուի, Ամարապուրայի և Ավայի կողքին սկսեց զարգանալ ծովափնյա Սիրիամը, ուր Բիրմայի զանազան վայրերից սկսեցին հավաքվել բազմաթիվ հայ ընտանիքներ և ձեռնամուխ եղան լայն գործունեության²: Սակայն նոր ծարձակող հայկական այս համայնքը շատ կարճ կյանք ունեցավ: 1756 թ. նա գրեթե ամբողջությամբ զոհ դարձավ մոնների (տալախինգներ) և բիրմացիների միջև եղած պատերազմների: 1756 թ. մոնների դեմ ապստամբած և արդեն հաղթանակներ տարած բիրմացիները Ալուան-Պայի (Ալոմպրա) ղեկավարությամբ շրջապատեցին Սիրիամը, գրավեցին և հրո ճարակ դարձրին ամբողջ քաղաքը: Ավերեցին և հրո ճարակ դարձրին նաև հայերի տները, խանութները և արհեստանոցները: Հայերից շատերը ըս-

¹ «Պայթար», Բոստոն, 8 հոկտ., 1959 թ.:

² «Մուրճ», 1904, № 9, էջ 15:

պանվեցին: Պատահական մի թյուրիմացութեամբ հայերը հալածվեցին թե՛ քաղաքը պաշարողների և թե՛ պաշարվողների կողմից: Քաղաքի պաշարման ժամանակ կրոնական մի տոնի առթիվ հայոց եկեղեցու զանգահարութունը մոտերի կողմից դիտվեց որպես թշնամուն հաղորդվող ազդանշան, և հայոց հոգևոր հովիվը ու զանգահար ժամկոչը զլխատվեցին¹, մյուս հայերն առնվեցին կասկածների տակ և հալածվեցին: Ալուան-Պայի զինվորները շինայեցին նաև հայերին, որպես պաշտպանության մասնակիցների:

XVIII դարի քսանական թվականների Ավայի հայ գաղութի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Սանգամերոնը, հիմք ունենալով երկու կաթոլիկ քարոզիչների հաղորդած տեղեկությունները, որոնք հովվելու համար ուղարկվել էին Բիրմա: Ավայի թագավորը մի ընդունելության ժամանակ լատին քարոզիչներին հայտնել է, որ տեղի հայերից «մեծ օգնություն է ստանում»: Հայտնի է, որ Սիրիամի կաթոլիկ եկեղեցին, որը Բիրմայի առաջին աղյուսաշեն շենքն է, կառուցել է Սիրիամի հայկական գաղութի ներկայացուցիչ Նիկողայոս Ագուլյանը²:

Դժբախտաբար, մանրամասնություններ մյուս բիրմահայ շատ գաղթօջախների նման Սիրիամի հին շրջանի մասին նույնպես չունենք: Գուցե շատ բան ասեր Սիրիամի հայոց եկեղեցու դիվանը, սակայն այն ոչնչացել է անգլիական գաղութային զորքերի վայրագությունների հետևանքով՝ անգլո-բիրմական առաջին պատերազմի ժամանակ:

XVIII դարի 30—40-ական թվականներին անգլիացիները, օգտվելով մոտերի և բիրմացիների հակամարտություններից, կարողացան առանց դժվարության հաստատվել Բասեյն գետի գետաբերանում, նեգրայս կղզու վրա (հայկական աղբյուրներում՝ Նեգրեջ—Ռ. Ա.), ստեղծեցին առևտրական ֆակտորիա, որը հետագայում ամրացրեցին հրետանիներով և դարձրին ռազմական հենակետ երկրի խորքերը թափանցելու համար: Անգլիական Արևելահնդկական ընկերությունը, նպատակ ունենալով պառակտել երկրի դիմադրողականությունը, հրահրեց մոտերի հակաբիրմական ապստամբությունը: Բիրմայի նոր ինքնակալ Ալուան-Պայը (Ալումպրա) (հայկական աղբյուրներում (Ըռլավան-Պոայ)—Ռ. Ա.) որոշեց վերջ

1 շՄՍՀ ԳԱ պատմ. ինստ. արխիվ, գործ 63, Բիրմա, էջ 2 (հմմ. «Մուրճ», 1904, № 9, էջ 14):

2 «Մուրճ», 1904, № 9, էջ 17:

տալ այդ ֆակտորիային: Պատասխանատու և վտանգավոր այդ գործը հանձնարարվեց Բիրմայի հայ համայնքի աչքի ընկնող դեմքերից մեկին՝ բիրմական արքունիքում մեծ հեղինակություն վայելող Խոջա Գրիգոր Այվազյանին¹, որը սկզբում նորակառույց մայրաքաղաք Ռանգունի մաքսատան ղեկավարն էր²:

Հետաքրքիր զուգահեռություն է: Այստեղ էլ ջուղայեցի Խոջա Գրիգորը իր հայրենակից Գրիգոր Հարությունյանի օրինակով, զենք վերցրեց ձեռքը՝ կովելու համար իր երկրորդ հայրենիքի և հյուրընկալող ժողովրդի ազատության համար:

Գրիգոր Այվազյանը դիմեց ռազմական խորամանկության: Նա անգլիացիների մոտ հայտնի էր որպես վաճառական: Օգտվելով վաճառելու նեգրայսում: 1759 թ. աշնանը լավ զինված բիրմական մի զորաբաժին, ծպտված բեռնակիրների, նավավարների և վաճառականների շորերով, Գրիգորի ղեկավարությամբ, մոտենում է ներգալսին: Ոչինչ չկասկածելով, անգլիացիները նրանց ներս են թողնում ֆակտորիա: Ծպտված զինվորները հատուկ ազդանշանով դուրս են հանում թաքցրած զենքերը և սկսում կոտորել անգլիացիներին: Թշնամուն ոչնչացնելուց հետո նեգրայսի ամրություններն ավերվում են՝ ֆակտորիան հիմնահատակ կործանում: Այս փայլուն հաղթանակից հետո անգլիական գաղութարարները դուրս են շարտվում նաև Բիրմայի մյուս մասերից³:

Անգլիական գաղութարարները ստիպված հաշտության պայմանագիր են կնքում բիրմացիների հետ, ընդունելով իրենց պարտությունը: Աղբյուրների վկայությամբ, հաշտության բանակցությունների միջնորդը Խոջա Գրիգոր Այվազյանն էր, որը և ներկայացնում է բիրմական կողմը⁴:

Նրան էր, որ պարտությունից հետո դիմեցին անգլիացիները, խնդրելով միջամտել՝ բաց թողնելու գերված անգլիական զինվորներին նեգրեյսի մոտ պարտություն կրելուց հետո⁵:

Գրիգոր Այվազյանը այս փայլուն հաղթանակից հետո բիրմական կառավարության կողմից արժանացել է բարձր պատվի: Նրան վստահվեց երկրի հարավի Սիրիամի կառավարչի պաշտոնը՝ կենտ-

1 շՄՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ 63, Բիրմա, էջ 3:

2 Ք. Ավետույան, «Արամայիս», Կալկաթա, 1846, էջ 133—137:

3 Նույն տեղը, էջ 113—117:

4 «Մուրճ», Թիֆլիս, 1904, № 9, էջ 16:

5 Ա. Ալպոյանյան, ՊԶԳ, հ. III, էջ 438:

րոն ունենալով Բասենը¹: Նա հետագայում դառավ Ալուան-Պայի վեզիրը, ինչպես հավաստում են պատմական մի քանի աղբյուրներ:

Զմուռացվեցին նաև մյուս բիրմահայերի ծառայությունները: Կառավարության հատուկ որոշմամբ Ռանգունում հողակտոր նվիրվեց նրանց՝ եկեղեցի և այլ շինություններ կառուցելու համար: Երկրի զանազան մասերից հրավիրեցին հայերին՝ այնտեղ բնակվելու: Ալուան-Պայի նպատակն էր իր մայրաքաղաքում հավաքել բանիմաց և աշքաբաց հայ վաճառականների և արհեստավորների՝ նորաստեղծ Ռանգունի տնտեսական կյանքի զարգացմանը նպաստելու համար: Հենց սկզբում Իրադավեյի վտակի գետաբերանում հայերը կառուցում են մի մատուռ, իսկ 1763 թ., երբ նրանց թիվը ավելանում է, թագավորի նվիրաբերած հողի վրա, Ռանգունի կենտրոնում Գրիգոր Այվազյանի ծախսով կառուցվում է Ս. Աստվածածին հայոց եկեղեցին:

1765 թ. Միմեոն կաթողիկոս Զնուլայեցու կազմած Զամբում Ռանգունը հիշվում է որպես հայաբնակ և հայաշատ կենտրոն, Սուրաթի, Բոմբեյի, Կալկաթայի, Մանիլայի և ուրիշ վաղուց հայտնի հայաշատ կենտրոնների կողքին:

Առևտրից, արհեստից և զինվորականությունից բացի, XVIII դարում էլ հայերը ծառայության մեջ էին մտնում բիրմական արքունիք, կառավարական և վարչական ապարատում որպես թարգմանիչներ, պաշտոնյաներ, ծառայողներ և այլն: Հատկապես մեծ հեղինակություն էին վայելում հայ թարգմանիչները²:

XIX դարի Բիրմայի պատմությունը հայտնի է որպես հանուն ազատության և անկախության մղած հերոսական պայքարի մոտ 60-ամյա պատմություն: Անգլիական գաղութարարները դուրս մղվելով երկրից XVIII դարի վերջում, չէին կարողանում հաշտվել դրա հետ և նախապատրաստվում էին նոր գրավումների, նոր գավթումների: Բիրմահայ գաղութի կյանքը, բնականաբար, իր բոլոր կողմերով սերտորեն կապված էր Բիրմայի պատմության այդ շրջանի իրադարձությունների հետ:

XIX դարի սկզբին բիրմահայ գաղթօջախների քարտեզը կարծես թե դառել էր կայուն, հայերի գործունեության շրջանակները բոլոր ասպարեզներում ընդարձակվել էին: Առևտրականների, արհեստավորների և զանազան կարգի ծառայողների կողքին սկսել էին երևան գալ պլանտատորները³:

1 «Միոն», Երուսաղեմ, 1959, էջ 169:

2 ՇՄՇ ԳԱ պատմության արխիվ, գործ 63, Բիրմա, էջ 3:

3 «Մուրե», 1905, էջ 74:

Բիրմահայերին էր պատկանում կենտրոնական Բիրմայի նավթային պաշարների մշակման և արտահանման մենաշնորհը՝ տրրված երկրի թագավորի կողմից: Նավթարդյունաբերական այս կազմակերպությունը ղեկավարում էր բիրմական ժողովրդին իր մատուցած մեծ ծառայություններով հայտնի Խաչիկ Մանուկը:

Ըստ Հարվեյի¹ և ուրիշ աղբյուրների², հայերը Բիրմայում զբաղվում էին մի այլ մասնագիտությունում ևս, որով Հայաստանում չէին զբաղվում և դա նոր էր նրանց համար՝ այդ նավաշինությունն էր: Նրանց կառուցած նավերն ունեին հայկական անուններ՝ «Արա», «Հայկ», «Արարատ», «Տիգրան», «Ջուղա» և այլն: Արևելքի շատ ու շատ նավահանգստներում էին հայտնի բիրմահայ նավավարներ Հայրապետ Մկրտում Շիրազեցու, Պետրոս Հովհաննիսյանի, Հարություն Ղազարի և ուրիշների անունները... Սակայն XIX դարի բիրմահայ ամենից մեծանուն «ծովային գայլը» ողջ Արևելքին հայտնի «Կապիտան Մանուկն» էր՝ Հովսեփ Մանուկյանը, որը համարվում էր ծայրագույն արևելքի ամենից հմուտ ծովայիններից մեկը³:

Ըստ երևույթին, արտակարգ մեծ են եղել նրա մատուցած ծառայությունները, որ բիրմական կառավարությունը նրան շնորհել է օտարազու համար գրեթե անհնարին երկու մեծ տիտղոսներ՝ «Մահաբավազա» և «Ռազա» («Իշխան» և «ասպետ»), որը մոտավորապես հավասար է հնդկական «ռաջային»:

Հայազգի ծովայինի գերեզմանաքարին բիրմերեն փորագրված են նրա երկու տիտղոսներն էլ:

Սեփական նավեր կառուցելու պահանջը, հավանաբար, թելադրվում էր եվրոպական պետությունների հետ առևտրի մրցակցությամբ: Բնականաբար, Արևելա-եվրոպական առևտրական ընկերությունները չէին փոխադրում իրենց վաղեմի և փորձված մրցակիցների ապրանքները, իսկ տեղական նավերն էլ այնքան չէին, որ կարողանային փոխադրել նաև հայ առևտրականների ապրանքները: Այդ իսկ պատճառով էլ հայերը գերադասում էին ունենալ իրենց սեփական նավերը: Միայն XIX դարի հիսնական թվականներին Հովհաննես Սարգիսը «կառուցեց տասնյակ առագաստանավեր հօգուտ երկրի»⁴:

1 G. Haryvey, History of Burma, էջ 246:

2 «Միոն», 1959, էջ 171:

3 Նույն տեղում:

4 «Նոր ազդարար», 1950, էջ 17:

Ինչպես այլուր, այնպես էլ Բիրմայում հայերը բարեկամական փոխհարաբերության մեջ են եղել տեղացիների հետ: Գ. Փուլադյանը խոսելով հայերի և բիրմացիների փոխհարաբերությունների մասին, գրել է. «Ընդհանուր առմամբ հայերու և բիրմացիներու փոխադարձ հարաբերությունները լավ եղած են: Բիրմացիները բարյացակամ և սիրալիր գտնված են հայերու հանդեպ: Ասոր պատճառն այն է, որ հայերը ազդեցիկ ըլլալով քաղաքական, նավային և առևտրական ասպարեզներուն մեջ, հավատարմորեն և նվիրումով ծառայած են զիրենք հյուրընկալող երկրին և պետությանը»¹:

Հայտնի են բազմաթիվ փաստեր, որ նույնիսկ շատ մեծ հեղինակություն և պաշտոն ունեցող մարդիկ կշտամբանքի էին ենթարկվում այս կամ այն հային նեղելու կամ նրա նկատմամբ ցուցաբերած անբարյացակամության համար:

Հայերի, հատկապես հայ առևտրականների վիճակը, Բիրմայում երկար ժամանակ շինաց արտոնյալ: Այստեղ էլ կատարվեց այն, ինչ կատարվեց Հնդկաստանում, Ինդոնեզիայում և նրանց հարևան երկրներում: Բիրման գաղութացնելուց հետո նրա ներքին և արտաքին շուկաները գրավվեցին եվրոպական Արևելա-հնդկական ընկերությունների կողմից և մրցակցության կամ բռնի ուժով հայերը կամ դուրս մղվեցին այդ շուկաներից կամ էլ նրանց գործունեությունը դրվեց խիստ հսկողության տակ:

Ըիշտ է, կային այս կամ այն մարզում գործող առանձին հայկական ընկերություններ, որոնք ո՛չ միայն դիմանում էին եվրոպական լուրջ մրցակցությանը, այլև նրանց էին դուրս մղում ասպարեզից, բայց դրանք առանձին դեպքեր էին միայն: Հիմնականում, նրանք կուլ էին գնում այդ անհավասար մրցակցությանը:

Բիրմահայերը ակտիվ օգնություն ցույց տվին բիրմացիներին՝ անգլիացիների դեմ մղած ազգային-ազատագրական պայքարում: Պոլսում հրատարակվող «Լույս»-ը, խոսելով բիրմահայերի մասին, գրել է. «Ինչպես մինիստրը (խոսքը Բիրմայի արտաքին գործերի մինիստր Կալավուն Մինասի մասին է—Ռ. Ա.), այնպես էլ մյուս հայերը, որոնք գտնվում են նրա ծառայության մեջ՝ Անգլիայի դեմ մղվող պատերազմի ժամանակ (խոսքը առաջին անգլո-բիրմական պատերազմի մասին է (1824—1826)—Ռ. Ա.) մեծ ծառայություններ են մատուցել թագավորական իշխանությունը: Մեծ էր նրանց

ծառայությունը հատկապես պատերազմի ժանր հետևանքները վերացնելու գործում»¹:

Առաջին անգլո-բիրմական պատերազմի ժամանակ հատկապես մեծ է եղել բիրմահայ համայնքի ամենից աչքի ընկնող դեմքերից մեկի՝ նավավար Սարգիս Մանուկյանի դերը:

1826 թ. անգլիացիների կողմից բիրմացիների հետ հաշտության բանակցություններ վարող դեսպան Գրաֆերդի վկայությամբ, Սարգիս Մանուկյանը ուղղակի ծախսերը հոգալու համար պետությանը փոխօգնություն է տվել 400 000 ռուպպի:

Սարգիս Մանուկյանը շնորհիվ իր ունեցած կապերի և վայելած մեծ հեղինակության, բազմաթիվ կարևոր պաշտոններ է վարել բիրմական արքունիքում: Մեծ է եղել նրա բերած օգուտը Բիրմային հատկապես եվրոպական պետությունների հետ ունեցած տնտեսական փոխհարաբերությունների ասպարեզում:

Սարգիս Մանուկյանը չի մոռացել նաև իր ազգակիցներին: Բիրմայում հայկական դպրոց չլինելու պատճառով նա, իր դրամով, Կալկաթայի «Մարդասիրական ձեռնարանում» տարիներ շարունակ հոգացել է 15 աշակերտների ծախսերը, որպեսզի բիրմայեցի հայերը կարողանան մայրենի լեզվով կրթություն ստանալ:

Անգլո-բիրմական պատերազմների ժամանակ հայերի բիրմական կողմնորոշումը այնքան պետք է բացահայտ եղած լինի, որ նրանք անգլիացիների կողմից դիտվել են որպես թշնամիներ, նրանց սեփականությունը՝ «թշնամու սեփականություն»: Այսպես, օրինակ, առաջին անգլո-բիրմական պատերազմի ժամանակ Ռանգունի հայոց եկեղեցին այրվեց որպես թշնամու սեփականություն: 1852 թ., երբ անգլիացիները սկսեցին տիրություն անել Պեգուում, հայերը խիստ նեղվեցին և հալածանքների ենթարկվեցին «որպես թշնամիներ»²:

XIX դարի 60—70-ական թվականներին, երբ արդեն Բիրմայի հարավը գաղութացված էր, Վերին Բիրմայի նկատմամբ, այդ նույն ժամանակ, անգլիացիներից բացի հետաքրքրություն էին սկսել ցույց տալ ԱՄՆ-ը և Իտալիան՝ որպես հենարան Չինաստան ներթափանցելու համար: Նրանով հետաքրքրվում էին նաև Ֆրանսիայի և Գերմանիայի գաղութարարները:

¹ «Պայքար», 1958, 15 նոյեմբերի:

¹ «Լույս», Կոստանդնուպոլիս, 1876 թ., 6, էջ 225, տես Մ. X. Գեր-Մկրտչյան և Մ. K. Մկրտչյան, «История армянской общины в Бирме». (Տե՛ս «Народы Азии и Африки», 1961, № 3, стр. 136).

² «Ազգասեր», 1851, էջ 620:

Բիրմական թագավոր Մինդունը, իսկ հետագայում նաև նրա հաջորդ Թզիրաուն, սկսեցին դիվանագիտական ճարպիկ քաղաքականություն վարել եվրոպական երկրների հետ՝ աշխատելով օգտագործել նրանց հակամարտությունները և փրկել Վերին Բիրման գաղութացումից: Մինդունը աշխատում էր փնտրել նոր հզոր դաշնակիցներ: Այդպիսի դաշնակից Մինդուն համարում էր Ռուսաստանը: Իր նպատակին հասնելու համար Բիրմայի գահակալը դիմում է տեղի հայ համայնքների օգնությանը: Խորհրդակցելով իր արտաքին գործերի մինիստրության հայ ծառայողների հետ, նա խնդրում է իր անունից դիմել հայոց կաթողիկոսին՝ միջնորդելու ռուսական կառավարության առաջ՝ ռուս-բիրմական դաշինք ստեղծելու համար:

Մեզ է հասել և Մատենադարանում է պահվում ինչպես Բիրմայի արտաքին գործոց նախարարի բիրմերեն և հայերեն նամակը¹, այնպես էլ նրա պատասխանը²: Մեզ հասած այդ նամակներից, ինչպես նաև կողմնակի այլ նյութերից իմանում ենք հետևյալ մանրամասնությունները՝ կապված ինչպես բիրմահայ համայնքի, այնպես էլ հայերի միջնորդությամբ ռուս-բիրմական դաշինքի հաստատման փորձերի հետ: Դեռևս 1874 թ. Մինդուն հատուկ նամակով դիմել է հայոց կաթողիկոսին, ուր մանրամասն տեղեկություններ է հաղորդել տեղի հայերի մասին և խնդրել է հոգևոր հովիվ առաքել:

Բիրմահայ գաղթավայրը, նորագույն շրջանում գաղթականական թարմ հոսանքներ շրնդունելու հետևանքով, սկսում է խամրել: Գաղթօջախների մեծ մասը դադարում է գոյություն ունենալուց: Որոշ գաղթօջախներում հիշվում են առանձին հայ մարդկանց խմբեր, որոնք սակայն հավաքական, հաստատուն կյանք չեն ստեղծում, ուստի ավելորդ ենք համարում նրանց վրա կանգ առնել:

1 Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, կաթող. դիվան, թղթապանակ 227, վավ. 244, էջ 2—4:

2 Նույն տեղ, վավ. 222:

XVIII. ԻՆԴՈՆԵԶԱԼԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Ինդոնեզիայի հանրապետությունը Ասիայի ու Ավստրալիայի միջև ընկած այն մեծ կղզախումբն է, որը կազմում են Զավա, Սումատրա, Բորնեո, Մատորա, Յելեբես և հարյուրավոր մեծ ու փոքր ուրիշ կղզիներ: Հնում յուրաքանչյուր կղզու վրա կազմավորվել են մեկ կամ մի քանի մանր պետություններ, որոնք հավաքական անունով կոչվել են Արևելյան Հնդկաստան: Հոլանդացիների գրավումից հետո այդ կղզիները կոչվեցին Նիդեռլանդական Հընդկաստան:

Ինդոնեզական կղզիների հետ հայերի ունեցած ծանոթությունն անհամեմատ ավելի ուշ է, քան Ֆիլիպինյան կղզիների, Չինաստանի և մյուս հարևան երկրների հետ: Հոլանդական գրավումներից հետո է միայն, որ հատ ու կենտ հայեր Մանիլայի վրայով սկսեցին գալ ու հաստատվել այնտեղ: Հետագայում ևս Սուրաթից և հնդկական այլ քաղաքներից, հայ առևտրականներն սկսեցին երևալ ինդոնեզական կղզիներում:

Հույկական կազմավորված գաղթօջախի մասին ինդոնեզիայում առաջին անգամ խոսել է ռուս գիտնական Ի. Բակունինը¹, որը տարիներ շարունակ ապրել է Զավայում և լավ ծանոթ է եղել երկրի հետ: Ըստ նրա տեղեկության, Զավայում XVII դարում գտնվել է 2000 հայ բնակչություն:

XVII դարում հայ գաղթօջախների առկայության փաստը հաստատում է նաև Կոստանդ Զուլայեցին իր նշանավոր «Աշխար-

1 И. Бакунин, Тропическая Голандия, Пять лет на острове Ява. СПб, 1902, стр. 193.

հաժողովում»։ Նրա մոտ, Հեռավոր Արևելյան մի շարք խոշոր կենտրոնների թվում, ուր կային հայկական գաղթօջախներ, հիշվում են «Չաքաթրան, որ ումանք Բաթալիա ասեն», «Մուքասարն» և «Տիմորն»¹։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առաջին շրջանում հայերի հարաբերությունները հոլանդացիների հետ թշնամական չեն եղել։ Հոլանդացիները, եթե բացարձակ չէին հովանավորում հայերին, ապա չէին էլ հալածում, անգլիացիների նման հսկողության տակ չէին առնում հայերի գործունեությունը։ Հայերի նկատմամբ հոլանդացիների ցուցաբերած նման վերաբերմունքը ուներ, իհարկե, իր պատճառը։ Նրանք, հանձին հայերի, տեսնում էին Արևելքին քաջ գիտակ առևտրի և մյուս մարզերի մեջ փորձված հուսալի դաշնակիցների։ Հայերին իրենց կողմը գրավելով, ցանկանում էին նրանց ուղղել իրենց քաղաքական և տնտեսական հզոր մրցակիցների՝ բրիտանական «ընկերությունների» դեմ, մի բան, որը խիստ ձեռնու էր նրանց։

Հոլանդացիները 1741 թ. մարտի 21-ի հրովարտակով ինդոնեզահայերին շնորհել էին հոլանդացուն հավասար «ազատ քաղաքացու» իրավունք։ XVII—XVIII դդ. ինդոնեզահայ գաղթավայրի մասին, դժբախտաբար, ուշագրավ այլ տեղեկություններ չկան։ Որոշակի հայտնի է միայն, որ այդ դարերում ինդոնեզահայերը «նվազ չէին Բրիտանական Հնդկաստանի հայերից»²։

Այս շրջանի ուսումնասիրությանը զբաղվող գրեթե բոլոր գիտնականները XVII—XVIII դարերը համարում են ինդոնեզիայի հայ գաղթավայրի պատմության առաջին շրջանը³, իսկ XIX դարի սկզբից՝ սկիզբ են դնում երկրորդ շրջանին։

Այս նոր, երկրորդ շրջանում, հիմնականում Մադրասից եկող մեծահարուստ վաճառականների կողքին, գերակշռող տեղ էր գրավում պարսկական իշխանություններից և հարստահարություններից հեռացած պարսկահայ աշխատավորությունը։

Գաղթականների այս նոր խմբերը մեծ մասամբ հաստատվում էին Ջավայի մայրաքաղաք Բաթավիայում և ստվարացնում տեղի գաղթօջախը։ Ավելի բանիմաց և աչքաբաց մարդիկ երկար

¹ ՀՊՄ, Զեռագիր, 5994, թ. I ա. Բ.

² G. Pauls, Short history of the armenian comuniti in Neterlandes India, 1935, Batavia, p. 7.

³ Encyclopediā van Nederlandich-India 3 gramenhage-Amsterdam, Batavia. vol I, p. 60.

չէին մնում Բաթավիայում. կարճ ժամանակ անց, շատ ու քիչ փորձ ձեռք բերելուց հետո ցրվում էին կղզու ծովեզրյա քաղաքներում։

Գաղթավայրի երկրորդ շրջանը Հորդանյանը և Թ. արք. Գուշակյանը կապում են Մադրասից ինդոնեզիա գաղթած Գևորգ Մանուչարյանի հետ, որն իր հետ բերել է մի խումբ մադրասահայերի¹։ Հայրենասիրական, լուսավորչական գաղափարներով տոգորված Մանուչարյանը, նկատի ունենալով, որ սովորել ցանկացող հայ երիտասարդների հոսանքը գաղթավայրերից գնում է դեպի Լոնդոն, ուր հայ երիտասարդները սովորելով անգլիական բարձրագույն ուսումնական հաստատություններում, մոռանում են իրենց մայրենի լեզուն և օտարանում, նպատակ է դնում Լոնդոնում իր փողով հայկական ճեմարան հիմնել։ Չնայած այդ ձեռնարկի նախատեսված դրամի մեկ քառորդը՝ 50 հազար գիլդեր, ուղարկվում է անգամ Լոնդոն, սակայն գործը գլուխ չի գալիս բարերարի մահվան պատճառով²։

XIX դարի 30-ական թվականներին հայերը այնքան էին շատացել ինդոնեզիայի մայրաքաղաք Բաթավիայում, որ հարկ եղավ 1831 թվականին այստեղ փայտաշեն մատուռ կառուցել և հոգևոր հովիվ հրավիրել³։ 1850-ական թվականներին հայկական մեծացած համայնքի համար այլևս նեղ էր այդ մատուռը։ 1852 թ. նոյեմբերի 22-ի ժողովում ինդոնեզահայերը որոշում են և հանգանակած գումարով կառուցում Ս. Հովհաննես եկեղեցին⁴։

Ներսես Աշտարակեցու՝ հնդկահայերին ուղղված մի նամակում, գրված 1851 թվականին, Արևելքի հայ գաղթավայրերի ցուցակում հիշվում են Ջավայի «Պթալիա, Ամարա, Մուրաբա, Թգալ, Ջապարա քաղաքները»⁵։ Անշուշտ, սխալ է Ա. Ալպոյանյանը, երբ Ջավայի հայ գաղթօջախների, հատկապես Բաթավիայի մասին խոսելիս, 1860-ական թվականները համարում է «անկման ժամանակաշրջան»⁶։ Այս շրջանը, հակառակը, հայ գաղթօջախի վերելքի շրջանն էր և «անշքացման ու քայքայման» հետքն իսկ չկար։

1 2. Հորդանեան, նշված աշխատություն, էջ 17, Թ. արք. Գուշակյան, Հընդգահայթ, էջ 275։

2 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 507—511։

3 Ա. Ալպոյանյան ՊԶԳ, հ. III, էջ 56։

4 Նույն տեղում, էջ 456։

5 «Ազգասեր Արարատյան», 1851, էջ 569։

6 Ա. Ալպոյանյան, ՊԶԳ, հ. III, էջ 460։

1855 թվին արդեն Բաթավիայում, Սամիրանգում, Ջապարայում կային 10 «հայկական կոմպանիաներ»: Մի քանի տարի անց նրանց թիվն ավելացավ: Ընդարձակվել էր նաև գաղթօջախների աշխարհագրական քարտեզը¹:

Չնայած Սամիրանգի գաղթօջախը մեծ փարթամության չհասավ Բաթավիայի և Սուրաբայի նման, և դեռ ծաղկման չհասած անկում ապրեց, բայց նա նշանակալից դեր կատարեց ինդոնեզահայ գաղութի պատմության մեջ և իր փոքրաթվության իսկ տարիներին ակտիվ մասնակցություն ունեցավ գաղութահայ կյանքում տեղի ունեցած բոլոր իրադարձություններին:

Գ. Պողոսյանը նշում է, որ բացի Սամիրանգից, Ջավայի ներքին գավառներում էլ բավականին թվով առևտրական և արհեստավոր հայեր են ապրել XIX դարի սկզբներին²:

Ինդոնեզիայի համայնքին քաջածանոթ այս անձնավորության հաղորդումից մեզ համար արժեքավոր է առանձնապես արհեստավորության վերաբերյալ ակնարկը:

XIX դարի կեսերին ինդոնեզիա այցելած եվրոպացի ճանապարհորդ Բարաթթա Իդապցիին իր ուղեգրություններում արտակարգ գովեստով է խոսում հայ արհեստավորների մասին, որոնց ձեռքով պատրաստած իրերը, նրա ասելով, իրենց նրբությամբ և գեղեցկությամբ զարմանք են պատճառում եվրոպացիներին:

Ինդոնեզահայ աշխատող գաղթօջախներից էր Սուրաբայի հայ համայնքը:

Հայերի մուտքը և հաստատումը այս առևտրական և նավահանգստային կարևոր քաղաքում սկսվել էր XIX դարի սկզբներին: 1875 թվականին Հնդկաստանից, Բիրմայից և մյուս վայրերից նոր գաղթականական խմբեր են գալիս Սուրաբա և ստվարացնում գաղթօջախը: Մինչև 1875 թ., եթե այստեղ գործել են ջուղայեցիների մի քանի առևտրական ընկերություններ միայն, ապա 1880-ական թվականներին նրանց թիվն անցել է մեկուկես տասնյակից:

1879 թ., ոչ ճիշտ տվյալներով, Սուրաբայում արդեն կային երեսուն տուն հայ ընտանիքներ: Սուրաբայից բացի, փոքրաթիվ հայկական համայնքներ են եղել հարևան Տոլունգ-Ադունդում, Մո-

1 2. Տեր-Նովնանաց, Պատմութիւն Նոր-Ջուղայու, հ. II, էջ 23—24:

2 3. Մ. Կ. Յ. «Ջավայի հայ գաղթականութիւնը» (տե՛ս «Բազմավեպ», 1869, էջ 461):

ջոկեռտոյում և այլ քաղաքներում¹: Ինդոնեզիայի մյուս համայնքների հայերից ոմանք, տեսնելով իրենց հայրենակիցների որոշ հաջողությունները Սուրաբայում, տեղափոխվում էին այնտեղ, իսկ հարուստ տներն ու ընկերությունները բացում էին իրենց մասնաձյուղերը:

XIX դարի կեսերից մինչ դարի վերջը ընկած ժամանակաշրջանում հայերը ապրում էին նաև Չերեբոն, Մալանգ, Սինգարազա, Ջապարա, Թգալ, Մերան, Պալեմբանի, Սամիրանգ, Մանոդո և մի շարք այլ քաղաքներում: Սակայն սրանց մեծ մասում հայերը զգալի թիվ չեն կազմել և գաղթօջախ չեն ստեղծել²:

Ինդոնեզիայում էլ հայրենի հողից կտրված, հայոց դպրոցից զուրկ հայությունը մասամբ կուլ է գնացել ձուլմանը: Ինդոնեզահայ թղթակիցներից մեկը ցավով նշել է, որ կան շատ հայեր, որոնք հայերեն լեզուն այլևս անօգուտ են համարում³ և գերադասում են խոսել հոլանդերեն և անգլերեն:

Ինդոնեզահայ համայնքի հայրենասեր որոշ անձնավորություններ եռանդուն միջոցներ են ձեռնարկել ձուլման վտանգի առաջն առնելու համար. նրանք հիմնել են կազմակերպություններ, գրել հողվածներ և ամեն կերպ աշխատել ինդոնեզահայության մեջ վառ պահել հայրենիք վերադառնալու հույսերը:

1828 թվականին, երբ հայտնի դարձավ Արևելյան Հայաստանի ազատագրումը Ռուսաստանի կողմից, մեծ ոգևորություն առաջացրեց սփռված հայ գաղթօջախներում: Հայ պանդուխտները ցրն-ծովյամբ ընդունեցին ներսես Աշտարակեցու ավետաբեր կոնդակները՝ «Վասն ազատութեան աշխարհին Արարատեան»: Նրանցից շատերը որոշեցին թողնել օտար հորիզոններն ու վերադառնալ հայրենի երկիրը: Այս երևույթը ավելի շեշտված նկատվեց նաև ինդոնեզահայության մեջ:

Ուշագրավ է այն, որ ինդոնեզահայ շրջաններում հայրենադարձի ջերմ փափագողների շարքում հանդես եկան նաև հայ առևտրականներ: Այդ, իհարկե, պատահական չէր. XIX դարի առաջին քառորդում հայ վաճառականների զգալի մասը դուրս էր մղվել արևելյան շուկաներից: Անգլիական ընկերության հակահայկական քաղաքականության հետևանքով հայ «կոմպանիաները» կծկվել,

1 Գաղթականութիւն հայոց ի Զաւայ (տե՛ս «Բազմավեպ»-ի մատնացոյց արված հողվածը, էջ 186):

2 «Պայքար», 17 մարտի, 1958:

3 «Բազմավեպ», 1899, էջ 464:

փոքրացել էին և մեծ ճիգերով էին կարողանում իրենց գոյությունը պահել գլխավորապես այն վայրերում, ուր դեռ ազատ էին անգլիական մրցակցությունից:

Նրանց վիճակը սկսեց ծանրանալ նաև հոլանդական և մյուս ընկերությունների գործող շրջանակներում: Կործանման վտանգի առաջ կանգնած հայերը փրկության միակ ելքը գտնում էին հայրենիքի ազատագրման և տունդարձի մեջ: Աշտարակեցու կոնդակները նոր հույսի դռներ էին բացում ինդոնեզահայության բոլոր խավերի համար:

Մեզ է հասել Ղարաբաղից՝ հեռավոր Սամիրանգ հասած և հեքիաթային հարստության տիրացած Հովսեփ Ամիրխանյանի պատասխան նամակը՝ Ներսես Աշտարակեցուն՝ գրված 1829 թ. հոկտեմբերի 20-ին: Նա, իր այդ նամակում հետևյալն է գրել. «Այժմ մենք ավելի քաջանիկ ենք մեր նախնիքներից, վասն զի արժանացանք տեսնել ամենասիրելի հայրենեաց ազատութիւնը և ուրեմըն սրբազան պարտավորութիւն ենք համարում մշտական երախտապարտութեան մեր խորին զգացմունքը Ռուսիոյ կայսեր, մեր հին հայրենեաց մեծահոգի ազատչին...»¹: Այնուհետև Ամիրխանյանը խնդրում է Աշտարակեցուն հայտնել, թե ի՞նչ բախտ է վիճակվելու Հայաստանին ապագայում, ի՞նչ նպատակ ունի Ռուսաստանը, քանի որ մտադիր է «...եթէ միայն կարելի լինի զնեղ դրամով իմ նախնեաց երկիրն, այն է Ղարաբաղի աշխարհը Փայտակարանով հանդերձ, կամ թե մի որոշ հարկ տալ նոցա տիրելու համար»²: Նա հավատացնում է Աշտարակեցուն, որ նոր շահույթների ձգտելը չէ, որ թելադրել է իրեն այդ նամակը գրելու, այլ անկեղծ հայրենասիրությունը: «Հավատացնում եմ Ձեզ...— գրում է նա,— այստեղ ոչ մի բանի պակասութիւնը չունեմ... Գետիններ, նավեր, շինություններ,— ամեն ինչ ունեմ, բավականաչափ, բայց բախտի այս ճոխ պարզկենբը տակավին ինձ չեն մխիթարում, երբ մտաբերում եմ, թե ինչ վիճակի մեջ է իմ սիրելի հայրենիքը և որպիսի՞ թշվառություն են կրում ոմանք իմ հայրենակիցք: Այս պատճառով շատ փափագում եմ ունեցածիս մի մասն նվիրել հօգուտ և ի թեթևություն վիճակի իմ հայրենյաց: Եթե իմ մտադրություններս իրագործվեն, ընտանիքով և ունեցվածս գումար-

1 Այ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Բ, Քիֆիս, 1895, էջ 507—508:

2 Ա. Երիցյան, նույն տեղում, էջ 408:

ներովս կգամ Հայաստան և իմ մնայուն կարողությունից կնշանակեմ հօգուտ իմ հայրենակցյաց այնքան, որ կարողանան եկամուտ բերել և 4 կամ 5 լաբ ուսփի (մեկ լաբը հավասար է 100 000 ուսպփի): ...Շնորհիվ աստուծոյ ես այստեղ մի տիրապետող իշխանի հավասար կյանք եմ վայելում: Միմիայն հայրենեաց սերն է, որ վշտացնում է ինձ...»¹:

Ամիրխանյանը ցանկություն է հայտնել անձամբ գալ Պետերբուրգ և բանակցել թագավորի հետ: Աշտարակեցին Ամիրխանյանի այս ցանկությունը լազարյանի միջոցով հասցնում է Բեկենդորֆին, սա էլ իր հերթին ցարին: Բեկենդորֆը 1830 թ. դեկտեմբերի 3-ի իր պատասխան գրությամբ ուղարկել է ցարի հրավերը Ամիրխանյանին Պետերբուրգ՝ «անձամբ պատասխանելու նրա հարցերին»:

Հայտնի է, որ Ամիրխանյանը ուղևորվել է Հոլանդիա՝ այնտեղից Պետերբուրգ գալու համար, բայց թե հասել է արդյո՞ք Պետերբուրգ և բանակցել է ցարական արքունիքի հետ, ոչինչ հայտնի չէ:

Վերջերս Մատենադարանում հայտնի է դարձել մի վավերագիր, որ բացահայտում է մեծահարուստ Ամիրխանյանի «հայրենասիրության» էությունը և իր հայրենակիցների նկատմամբ նրա արտահայտած «սրտացավության» բուն պատճառը: Պարզվում է, արտահայտում է ցարին և ցանկացել նրանից զնեղ Երևանը տարեկան կես միլիոն ֆրանկ վճարելու պարտավորությամբ, որպեսզի ինքն այդ նահանգի ինքնուրույն իշխանը դառնա²:

XIX դարի կեսերին, երբ Արևմտյան Հայաստանի զանազան վայրերում՝ Ջեյթունում, Վանում, Մուշում, էրզրումում, Զարսանվաղում և այլուր հայերը ապստամբության դրոշ պարզեցին հանուն իրենց ազատության և անկախության, այդ պայքարի արձագանքները հասան նաև Ինդոնեզիայի հայերին: Ժամանակի պարբերական մամուլում հրատարակվել են ինդոնեզահայ մի շարք առաջավոր գործիչների հոդվածները և նամակները՝ նվիրված հայ առաջավոր գործիչների հոգվածները և նամակները՝ նվիրված հայ առաջավոր ազատագրական պայքարին: Նրանք ամոթ համարելով ժողովրդի ազատագրական պայքարին: Նրանք ամոթ համարելով «մեռելային թմրությունը», կոչ են արել աշակցել ազատագրական հայ պայքարին»³: Նրանք աշխատել են ցույց տալ նաև նյութա-

1 Ա. Երիցյան, էջ 410—411:

2 Ա. Անասյան, XIX դարի հայ ազատագրական շարժումները և Ինդոնեզիայի հայ զարույթը (տե՛ս 2002 ԳԱ «Տեղեկագիր», 1983, № 7):

3 «Փարիզ», Փարիզ, 1913, № 84:

կան օգնություն: 1862 թ. Զեյթունի ապստամբությանը հաջորդած արյունալի հաշվեհարդարի արձագանքները երբ հասնում են ինդոնեզիա, գաղթօջախների բնակիչները հավաքում են և «Փարիզ» թերթի խմբագրության միջոցով իրենց հայրենակիցներին ուղարկում մի քանի հազար ֆրանկ¹:

Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումներին գործնական օգնություն ցույց տալու նպատակով ինդոնեզահայերը 1891 թ. օգոստոսի կեսերին կազմակերպում են մի միություն, որը կոչվել է «Հայոց խրախուսական Միություն»²: «Միության» կազմակերպիչն է հանդիսացել Օհաննես Քյուրբջյանը (Կարնեցի), մի անձնավորություն, որը արտաքսված է եղել ցարական կառավարության կողմից որպես հեղափոխական:

«Հայոց խրախուսական Միաբանությունը» մշակել է իր նպատակներն ու անելիքները և տպագրել մի «Կանոնադրություն», որը լույս է տեսել Մարսելում 1892 թվականին:

«Միաբանության» գլխավոր նպատակը եղել է՝ «նյութական կարողության նպաստել այնպիսի ազգօգուտ գործերի, որ կվերաբերեն հայրենիքի ազատությանը»³:

Հայրենի երկրի վիճակը ավելի լավ պատկերացնելու, դեպքերին արագ արձագանքելու նպատակով որոշվել է բաժանորդագրվել օրաթերթերի, ամսաթերթերի, գրականության և այլն: Այդ նպատակով առանձնացվել է մոտ 200 գիրքեր: 1894 թվականին, երբ հայտնի է դարձել թուրք իշխանության կողմից Սասունում կազմակերպված արյունահեղ կոտորածը, ինդոնեզահայերն անմիջապես կազմակերպել են հանձնաժողով՝ Սասունի աղետալիների օգտին հանգանակություն կատարելու համար: Սրան հաջորդում է թուրք կառավարության գեներալի քաղաքականության սպանիչ քննադատությանը նվիրված Հ. Հորդանանյանի հոդվածի հրատարակումը:

Հայերը և հուանդացիները հավաքում են 8000 գիրքերի հստակ պատկանելի մի գումար և ուղարկում սասունցիներին:

XIX դարի ինդոնեզահայ գաղթօջախների կյանքում ամենից հետաքրքիր ելույթներից մեկը՝ կանոնադրությունն է, որն ունի «Սահմանադրութիւն և կարգաւորութիւն ժողովրդեան Հայոց ի Ճավա» վերնագիրը: Այս կանոնադրությունը 1880 թվականի հունվարի 6-ին հաստատվել է կառավարության կողմից:

1 Հ. Հորդանանյան, նշված աշխատությունը, էջ 118:

2 Հ. Հորդանանյան, նշված էջը:

3 Ք. Գալսկյան, Հնդկահայք, էջ 311:

Ինչ է իրենից ներկայացնում 97 կետերից բաղկացած այդ «Սահմանադրությունը», ո՞րն էր նրա առավելությունը հայկական մյուս գաղթօջախներում՝ Հնդկաստանի և Բիրմայի հայ համայնքներում գործող օրենսդրություններից, որոնք նույնպես վավերացված են եղել տեղական իշխանությունների կողմից:

Ամենից առաջ, պետք է ասել, որ այն համընդհանուր բնույթ է ունեցել և չի սահմանափակվել Զավաթով: Սահմանադրության 5-րդ կետն ասում է, որ ազգային ժողովին կարող են մասնակցել թե՛ Բաթավայի և թե՛ կղզու մյուս քաղաքների հայությունը¹:

Եթե մյուս ներքին կանոնադրություններում «...ընտրութեանց և ձևի տեսակներով տկար է ժողովրդական սկզբունքը...», այստեղ այդպես չէ. «Գործերուն վերին հսկողությունը ինքը հասարակությունս ստանձնած է ուղղակի առանց ներկայացուցչական կամ երեսփոխանական ժողովի»:

Գոյություն ունեցող մյուս բոլոր հայկական «Սահմանադրությունների համեմատությամբ ինդոնեզահայերինը ունի մի շատ կարևոր կետ ևս. դա վերջին 27-րդ կետն է, որն ունի «Անկումն ժողովրդեան» վերնագիրը:

Ավելորդ չենք համարում բերել այդ հոդվածը հատվածաբար. «Հոդված 27. Եթէ ուրուք ժամանակ այս ժողովրդից ոչ ավելի քան երկու ընտանիք գլուխ մնացած լինեն, օրինաց համաձայն կլուծվի այն, ամեն կալվածներ, գրավականներ, գույքեր և շարժական իրեր, որոնք հիշված են վերևում, անցնում են հայ ժողովրդին, որը ենթակա է Ռուսահայաստանի, Երևանի էջմիածին վանքում նստող հայոց կաթողիկոսին կամ հայոց եկեղեցուն...»:

Հետաքրքիր է 27-րդ կետի «Կտակ» պահանջը, ըստ որի, կաթողիկոսը պետք է զուտ եկամուտների կեսը օգտագործի հայրենիքում դպրոցներ կառուցելու ծախսերի համար, երեք քառորդ մասը՝ հայ մանուկների ուսման համար: Հայրենասեր ջուղայեցիները չեն մոռացել նաև հայրենի Զուղան. եկամուտի մյուս քառորդը պետք է օգտագործվեր «Զուղայի մանկանց ուսման համար»:

«Սահմանադրության» նույն կետը իրավունք է տալիս կտակատարին տասը տարվա ընթացքում, ինդոնեզիայի այս կամ այն քաղաքի հայ գաղթականության իսպառ վերացման դեպքում, ցանկացած ձևով տնօրինել, ընդհուպ վաճառել նրան արդեն ենթակա սեփականությունը: Այս դեպքում էլ՝ Զավա հասած հայրենասեր

1 Ք. Գալսկյան, Հնդկահայք, էջ 251:

շուղայեցիները բաղձանքը մեկ է եղել՝ ստացված եկամուտն ամբողջությամբ օգտագործել լուսավորության նպատակով:

Մի քանի խոսք «Սահմանադրության» մյուս կետերի վերաբերյալ, որոնք պատկերացում են տալիս գաղութի ներքին կյանքի մասին: Երեք տարին մեկ ինդոնեզահայերը Բաթավիայում պետք է գումարեին «Հանրական ժողով»: Ժողովին մասնակցելու և քվեարկելու իրավունք ունեին ինդոնեզական կղզիներում ապրող հասակը լրացած արական սեռի այն բոլոր հայերը, որոնք երկու տարուց ոչ պակաս ապրում էին այնտեղ: Վերոհիշյալ պահանջները չլրացնող հայերը նույնպես իրավունք ունեին մասնակցելու «Հանրական ժողովին», բայց միայն՝ խորհրդակցական իրավունքով: Նրանք կարող էին քվեարկության իրավունք ստանալ ժողովի թույլտվությամբ ձայների մեծամասնության դեպքում: Զանազան պատճառով ժողովին շնորհակալացող հայր կարող էր իր իրավունքը վատահել մեկ ուրիշին:

1880 թվականին տեղի է ունենում ինդոնեզիայի հայ համայնքների անդրանիկ ժողովը Բաթավիայում: Ըստ «Սահմանադրության» սահմանած կարգի, ընտրվում է առաջին «Հանրական ատյանը»: Նույն թվականին տեղական իշխանությունները հաստատում են «Սահմանադրություն և կարգաւորություն Հայոց ի նիտերլանդական Հնդկաստանի»:

1905—1906 թթ. Կովկասի հայ սովյալները ևս ստացան ինդոնեզահայերի օգնությունը: Կովկաս ուղարկված գումարի մեջ կար նույնիսկ Բալի կղզու հայերի օգնության մասը:

1908 թ. արևմտահայությանը օգնելու նպատակով Կ. Պոլիս ուղարկվեց Բաթավիայի, Սուրաբայի և նրա մոտակա վայրերի՝ Գալուհանի, Բալի և Լոմբոկ կղզիների հայերի օգնությամբ հանգանակած 1660 գիլդեր:

Հայոց մեծ եղենի լուրը ցնցեց նաև ինդոնեզահայ հատվածին. անկարող անձնական մասնակցության, նրանք անմիջապես ձեռնամուխ եղան գեթ նյութական օգնությամբ հասնելու թուրքական յաթաղանից հրաշքով փրկված սովալլուկ և օգնակարոտ որբուկներին:

1915—1917 թթ. զանազան ճանապարհներով նրանց ուղարկած օգնության շափը անհաշիվ է: 1917 թ. Թ. Գուշակյանը եղել է ինդոնեզիայի հայ գաղթօջախներում և հանգանակություն կազմակերպել: Նա այցելել է Բաթավիայի, Բանդունգի, Կալուանի, Սուրաբայի, Մակասարի, Սամիրանգի և մյուս ինդոնեզահայ գաղթօջախները: Բոլոր տեղերում, առանց բացառության, ինդոնեզա-

հայութունը բերել է իր առատ նվերը ի նպաստ հայ գաղթականության: Հավաքված գումարի շափը հասել է հարյուր հազար գիլդեր գումարի¹:

Գաղթօջախներում ապրող մտավորականները լավ գիտեին, որ առանց դպրոցի, առանց մայրենի գրի ու գրականության անհնար կլինի պահպանել մայր հայրենիքից պոկված ու աշխարհի հեռուները նետված հատվածը: Եվ նրանք եռանդուն կերպով ձեռնամուխ են եղել հայկական դպրոց ստեղծելու գործին: Հետաքրքիր է Ջավա կղզում ստեղծած առաջին հայերեն դպրոցի մայրենի լեզվի ուսուցիչ, գաղութի հասարակական քաղաքական աչքի ընկնող դեմքերից մեկի դատողությունները ինդոնեզիայում հայկական դպրոց ստեղծելու անհրաժեշտության մասին: «Որ ժողովրդի լեզուն դադարելուց դադարում է գոյություն ունենալ նաև այդ ժողովուրդը, դա հայտնի է պատմությունից, — գրում է նա, — բայց եթե կորչում է ազգը, կորչում է նաև ոչ միայն հայրենիքն առհասարակ, այլև ժողովրդի ամեն մի ներկայացուցիչ առհասարակ, որն օտար դիմակ է առնում և խառնվում օտար ազգի: Այդ պատճառով պարտավոր է յուրաքանչյուր ոք, իր իսկ օգտի համար, իմանալ իր ժողովրդի լեզուն՝ ի օգուտ հայրենյաց, ի օգուտ սերունդների»²:

Հայրենասեր ուսուցչի նման էին մտածում հեռավոր այս գաղթօջախի շատ ներկայացուցիչներ: Այս հրամայական պահանջըն էր թելադրում հայկական ուսումնարան ունենալը, հայ մանուկներին մայրենի լեզվով սովորեցնելը: Հայ մանուկների կրթությամբ մտահոգված Բաթավիայի համայնքի մեծահարուստներից մեկը՝ Գեորգ Մանուկ Մանուչարյանը, ինչպես ասացինք, լոնդոնում հայ մանուկների համար բարձրագույն ճեմարան բացելու նպատակով 250 հազար գիլդեր է փոխանցել բրիտանական բանկերից մեկին:

Գեորգ Մանուչարյանցի երկու քույրերը, որոնք ժառանգել էին իրենց եղբոր հարստությունը, աշխատեցին «գեթ շափով մը վերակազմելու իրենց հանգուցյալ եղբոր՝ Ադա Գեորգի եվրոպահայ դպրոցի հին փլած երազը»:

Ինդոնեզահայ համայնքի XIX դարի կեսերին աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկի, Մանուկ Հորդանյանի հորդորմամբ,

1 Թ. Գուշակյան, Հնդկաստան, էջ 269—330:

2 Յ.Մ.Կ.Յ., Ճաւայի հայ գաղթականութիւնը (տե՛ս «Քաղմավէպ», 1899, էջ 255):

քույրերը համաձայնվեցին դպրոցը բացել 1855 թ. Բաթավիայում:
Դպրոցի աշխատանքը ապահովելու համար քույրերը հատկացնում են 100 000 գիլդեր¹, ոմանց կարծիքով՝ 120 000 գիլդեր արժողութայմբ կալվածքի եկամուտը²:

Ուսումնարանի նպատակի, դերի, դասավանդվող առարկաների և նրա հետ կապված այլ հարցերի պատասխանը շարադրված է նրա «Ծրագրում»: Նրա հիմնական նպատակն է «առ յառաջս առնելոյ մօտակայ վտանգի կորստեան յայսմ օտար աշխարհի»³: Նման դեր «Կանոնադրությունը» վերագրում է գաղութահայ բուլոր դպրոցներին:

«Մանուկ և Հարություն» դպրոցը երկսեռ է եղել, ունեցել է նաև գիրքօթիկ բաժին: Հիմնական դասավանդվող առարկաներն են եղել հայոց լեզուն, հայ գրականությունը, հայ ժողովրդի պատմությունը և հանրակրթական առարկաներ: Օտար լեզուներից դասավանդվում էին անգլերեն, հոլանդերեն, գերմաներեն և ֆրանսերեն:

Չորս օտար լեզուների դասավանդման փաստը Բաթավիայի հայոց դպրոցում որոշ մասնագետների հիմք է տվել անելու սխալ այն ենթադրությունը, որ Հայոց դպրոցում «Հայ աշակերտների սակավության պատճառով (թեկուզ տնտեսական նկատումամբ), անհրաժեշտ է եղել աշակերտների կազմը լրացնել օտար երեխաներով»⁴: Առանձին դեպքերում տեղացի կամ հոլանդացի խառն ամուսնությունից երեխաները գուցե և սովորել են հայոց դպրոցում (նման փաստեր Կալկաթիայի հայոց ճեմարանից ունենք⁵), բայց որ այն էլ տնտեսական նկատումներով հայոց փոքրիկ դպրոցում օտարներ են ընդունվել, հեռու է իրականությունից: Չորս օտար լեզուները ոչ թե այլազգի պատկանող աշակերտների համար էին, այլ հենց հայ մանուկների համար:

Ըստ դպրոցի «Կանոնադրության», հայկական դպրոցը Բաթավիայում գոյություն պետք է ունենար այնքան ժամանակ, մինչև թեկուզ մեկ հայ աշակերտ մնար: Տասը տարիների ընթացքում ոչ մի հայ աշակերտ չունենալու դեպքում, Բաթավիայի հայոց դպրոցը

1 ՇՊԱ, ֆ. 56, թղթ. 43, վ. 38, թ. 39—40:

2 Տ. Արգարյան, Նոր-Ջուղայի դպրոցները (տե՛ս «Լոյս», օրացույց, 1905, էջ 74):

3 «Արշալույս Արարատյան», 1881, էջ 682:

4 Մ. Լ. Սանբրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին, Երեւան, 1964, էջ 440:

5 Պ. Պ. Լազարովիչ, Ստորագրութիւն Կալկաթա քաղաքի, Կալկաթա, 1848, էջ 46:

րոցի գումարը պետք է պատկաներ հայ ժողովրդին: Այդ գումարով դպրոց պետք է բացվեր Երևանում կամ Հայաստանի մի այլ քաղաքում¹:

Քսաներեք տարվա բեղմնավոր և հայրենանվեր աշխատանքից հետո, 1870 թ. աշակերտների պակասի և միջոցների սղության պատճառով, դպրոցը փակվեց: Այս դպրոցի փակումով հայերենի դասավանդման գործը շվեթացավ: Ազգային վարչությունը, ընդառաջելով հայ ծնողների փափագին, մայրենի լեզվի ուսուցիչ վարձեց հայ երեխաների համար: Անկախ դրանից, 12—18 ինդոնեզահայ երեխաներ յուրաքանչյուր տարի գնում էին Կալկաթա՝ հայկական ճեմարանում սովորելու:

Ինդոնեզահայ գաղթօջախներում չի եղել տպագրություն, չի եղել մամուլ: Սակայն Ինդոնեզիայի հայ մտավորականներին հուզել է իրենց գաղթօջախների անհայտացող պատմությունը: Այդ պատմությունը կորուստից փրկելու համար մեղվաջան գործ է կատարել Վ. ք. Աղանյանը, որի հրատարակած օրացույցները հարուստ և հետաքրքիր նյութեր են պարունակում Ինդոնեզիայի հայ գաղթօջախներին նվիրված ուսումնասիրության համար: Հայերը երկու փոքրիկ աշխատություններ են հրատարակել անգլերեն լեզվով՝ նվիրված ինդոնեզահայերին:

Ժամանակի զանազան պարբերականներում հրատարակվել են ինդոնեզահայ մտավորականների, բանաստեղծների, գրողների մի շարք այլ գործերը, որոնք, անշուշտ, XIX դարի հայ ընդհանուր մշակույթի անբաժանելի մասն են կազմում:

Հայ մշակույթին ծառայելու վառ ապացույց է ինդոնեզահայության կողմից «Գանձանակ գրաւոր աշխատանաց» սնդուկի հիմնումը 1854 թվականին: Այս սնդուկի հիմնական նպատակն է եղել նպաստել աշխարհի զանազան տպարաններում հայերեն գրքեր հրատարակելուն²: Այս «Սնդուկի» ստեղծումով ինդոնեզահայերը փաստորեն ավելի կազմակերպված ձևի մեջ էին դնում մինչ այդ գոյություն ունեցող հայրենանվեր աշխատանքը:

«Գանձանակ գրաւոր աշխատանաց»-ը հանրօգուտ նախաձեռնություն է հանդիսացել գաղթահայության կյանքում: Նրա ցույց տված նյութական օժանդակութայմբ Նոր-Ջուղայում, Կալկաթայում, Երուսաղեմում և այլուր հրատարակվել են տասնյակ հայերեն գրքեր³:

1 ՇՊԱ, ֆ. 56, թ. 43, վ. 38, թ. 39—40:

2 «Նոր Ազգարար», 1952, № 6—8, էջ 19:

3 Տե՛ր-Յովհաննես, Պատմութիւն Նոր-Ջուղայու..., հ. II, էջ 19:

Ինդոնեզաճայ հայրենասերներից ոմանք նյութապես օգնել են նաև հայկական տպարաններ հիմնելուն: Հայտնի է, որ 1799 թվականին բաթավաբնակ Հակոբ Նուրաջանը Նոր Նախիջևանի տպարանին է նվիրել 5000 ուրլի:

Մի այլ ինդոնեզաճայ՝ Մանուկ Հարությունյանը, իր ծննդավայր Նոր-Ջուղայում տպարան ստեղծելու ջերմ ցանկությամբ, Խտալիայում ձեռք է բերել մի ամբողջ տպարան՝ մեքենաներով, տառերով, և որպես անձնական նվեր, ուղարկել Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքին¹: Հետագայում այդ տպարանին օգնելու նպատակով «Գանձանակ գրաւոր աշխատանաց սնդուկը» առանձնացրել է որոշ գումար՝ որպեսզի մշտական օգնություն կազմակերպի Նոր-Ջուղայի այս տպարանին: Տարիներ շարունակ ուղարկվող օգնության այդ գումարը հասնում է մի քանի հազար գիրդերի: Ի դեպ, ինդոնեզաճայերի ջանքերով ստեղծված այդ տպարանի արգասիքը եղավ 1880—1881 թթ. տպագրված Հարություն Տեր-Նովհանյանցի «Պատմութիւն Նոր Ջուղայու» հատորները:

Ինդոնեզաճայերը արտակարգ հարգալից վերաբերմունք են ունեցել դեպի «Ազգասերի» և «Ազգասեր Արարատյանի» խմբագիրը՝ մեծ հայրենասեր և լուսավորիչ Մեսրոպը Թաղիադյանը: Նրանք գնահատել են Թաղիադյանի աշխատանքը և հաճույքով կարդացել նրա գրքերը և հոդվածները: Նրանք աշխատել են նյութապես օգնել նրան: Հայտնի է, որ 1851 թվականին «Ազգասեր Արարատյան»-ի վերաբացման համար հիմնական նպաստ ուղարկողները հանդիսացան ինդոնեզաճայերը²:

Ինդոնեզաճայերի 90 տոկոսը, ինչպես ասել ենք, ջուղահայերի սերնդից էին, որոնք Նոր-Ջուղայի վրա նայում էին իբրև իրենց ծննդավայր մետրոպոլիայի և բոլոր թեղերով մնում էին կապված նրա հետ, և որքան էլ հեռու գտնվեին, աշխատում էին ցույց տալ նրանց հնարավոր ամեն օգնություն: Ինչպես Հեռավոր Արևելքում, Հնդկաստանում, Բիրմայում, այնպես և Ինդոնեզիայում չի եղել շատ թե քիչ բարեկեցիկ մի ջուղայեցի, որ իր կենդանության ժամանակ կտակով իր ունեցվածքից բաժին հանած չլինի ծնրնդավայրին:

Հետաքրքիր է, որ ինդոնեզաճայ համայնքների ներկայացուցիչները մտածել են հետագայի մասին ևս ու այնտեղ ստեղծված

¹ Տեր-Նովհանյանց, Նշված աշխատությունը, հ. II, էջ 19:

² «Ազգասեր Արարատյան», 1851, էջ 564—565:

բոլոր հասարակական կազմակերպությունները, գաղութի կյանքը վերանալուց հետո, իրենց ունեցած գումարները և հարստությունները կտակել են Նոր-Ջուղային¹:

Այդ գիտակցությամբ է, որ ինդոնեզաճայերը 1858 թ. ստեղծեցին «Գանձանակ Ջուղայու տնանկաց» սնդուկը: Կազմակերպության միակ նպատակն էր հանգանակությունների, նվիրատվությունների միջոցով հավաքել գումարներ և ուղարկել իրենց չբավոր հայրենակիցներին: Այդ կազմակերպությունը, որ գոյություն ունի մինչև այսօր, հարյուր տարուց ավել բարեգործական մեծ աշխատանք է կատարել՝ օգնելու հազարավոր կարոտյալ հայերի: «Մնդուկ Ջուղայու տնանկացն» է, որ համաձայնության է եկել դեպի Բուշեռ հայկական ընկերությունների վարձած առաջաստանավերի նավավարների հետ՝ աղքատ ջուղահայերին ձրի տեղափոխելու Ինդոնեզիա և այլ վայրեր:

Նվրոպական երկրներում եղած և առաջավոր կուլտուրայի հետ շփվող հայերը ակտիվորեն առաջ են քաշել հայ աղջիկների և կանանց կրթության հարցը: Քանի որ ինդոնեզիայում հայ երեխաների փոքրաթիվ լինելը թույլ չէր տալիս առանձին օրիորդաց դպրոցներ հիմնել և նրանք սովորում էին երկսեռ դպրոցներում, ապա այդ հնարավոր էր կատարել Նոր-Ջուղայում: 1857 թվականին Մանուկ Հորդանանյանը իր միջոցներով Նոր-Ջուղայում բաց է արել հայ օրիորդաց առաջին դպրոցը: Այդ դպրոցն ընդունվող բոլոր աշակերտուհիների կրթությունը, առանց բացառության, ձրի է եղել: Աշակերտները անխտիր ապահովվել են ձրի դասագրքերով, գրենական պիտույքներով, տետրակներով՝ դպրոցի հիմնադիրների հաշվին:

Եթե Հնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Չինաստանի և մյուս երկրների հայ գաղթօջախների պատմությունները գրելիս բավականին հարուստ և հետաքրքիր նյութեր են հանդիպում աչքի ընկնող հայ քաղաքական գործիչների մասին, ապա Ինդոնեզիայում նման հայ գործիչների չենք հանդիպում: Այդ պետք է բացատրել նրանով, որ եթե վերոհիշյալ երկրներում հայերը մուտք էին գործել և գաղթօջախներ հիմնել նախքան եվրոպացիների գալը, գործել և գաղթօջախներ հիմնել նախքան եվրոպացիները այս երկրում հիմնապա այստեղ՝ հակառակը: Հայ գաղթօջախները այս երկրում հիմնականում ստեղծվեցին նրա գաղութացումից հետո: Հուլանդական գաղութարարներն իրենց ձեռքն էին առել երկրի կյանքի բոլոր ասպարեզները և օրենքի ուժով զրկել մյուսներին այդ իրավունքից:

¹ Հ. Հորդանանյան, Նշված աշխատությունը, էջ 43:

Միայն առունձին դեպքերում գաղութային իշխանությունները հայ մարդկանց վստահել են զանազան բարձր պաշտոններ: Այսպես, օրինակ, հուլանդական իշխանությունները XIX դարի կեսերին հայ համայնքների երեք ներկայացուցիչներին՝ Հովհաննես Պետրոսյանին, նրա եղբայր Հարություն Պետրոսյանին և էմիլ Սատուրյանին զանազան ժամանակներում և նահանգներում վստահել են փոխնահանգապետի պաշտոններ: Արևելյան և եվրոպական մի շարք լեզուների գիտակ Ա. Աղանուրը նշանակվել է պետական թարգման: Մինհարդ Հովհաննիսյանը եղել է երկրի կրոնի և կրթության պետական քարտուղար¹: Հայտնի են նաև զանազան մանր կարգի թարգմանիչներ, պաշտոնյաներ, նոտարներ, գրագիրներ, իրավագետներ և այլն:

Ինդոնեզիական ժողովրդի գաղութարարների դեմ մղած ազատագրական պայքարում ինդոնեզահայերը միշտ կանգնած են եղել տեղացիների կողքին և հարկ եղած դեպքում զենք են վերցրել և կռվել գաղութարարների դեմ՝ տեղացիների հետ ձեռք-ձեռքի տված: Ինդոնեզահայ մտավորականներն իրենց աշխատություններում դատապարտել են գաղութարարների կատարած հարստահարությունները: Ինդոնեզահայ գաղութի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը՝ Գևորգ Ավետ Զաքարյանցը, իր «Ջալա կամ ընդհանուր ծանոթութիւն բազմակողմի ծովու Արևելեան հնդկաց...» ուսումնասիրության մեջ, մեծ հումանիստին վայել գրչով և սրտի ցավով է նկարագրում գաղութային շահագործման հետևանքով տնտեսական ծանր պայմանների մեջ ընկած տեղացիների վիճակը՝ «Մշակք անթիւ են ի Ճաւայ... — գրում է նա — վարձ հաշիւ աղի ու բրնձի բաւական առնէ... զոչինչ աւելի աշխատեն, քան զաօրյա հաց իւրեանց...»²

Ինդոնեզահայ գաղթօջախների դասակարգային շերտավորման մասին կան տվյալներ, որոնք որոշ պատկերացում տալիս են: Շատ վաղուց է քաղաքացիություն ստացել այն կարծիքը, որ ընդհանրապես Արևելքի, հատկապես Հնդկաստանի և Ինդոնեզիայի հայ գաղթօջախները բաղկացած են եղել մեծահարուստ վաճառականներից, որ նրանք իբրև ապրել են շոալլ և փարթամ կյանքով և այլն: Զի կարելի ժխտել, իհարկե, որ հատկապես հեռավոր արևելյան հայ գաղթօջախների բնակչության զգալի խավը բաղկացած է եղել վաճառականներից, երբեմն՝ միջազգային շրջանակ-

ներին քաջածանոթ վաճառականներից և նրանց հետ սերտորեն կապված մանր առևտրականներից, բայց դրանց կողքին գտնվել են առևտրից հեռու, կարիքի և աղքատության մեջ գտնվող, օրհացի կարոտ աշխատավորներ:

Պարսկական իշխանությունների հայահալած քաղաքականության, ֆեոդալական ճնշման և կեղծքման հետևանքով XIX դարում շարունակվել է պարսկահայ գաղթականների հոսքը դեպի արևելյան երկրները, առաջին հերթին՝ Հնդկաստան, Ինդոնեզիա և Բիրմա: Այս նոր եկողները արդեն առևտրի նորանոր լայն շրջանակներ փնտրող վաճառականներ չէին, այլ կողոպտված և հաճախ ծայր աղքատության հասած մարդիկ:

XIX դարի կեսերին Ինդոնեզիայի հայ համայնքներում այնպիսի վիճակ ստեղծվեց, որ Ջավայի հայկական համայնքները նախ Բաթավիայում (1852 թ. մայիսի 5-ի) ապա՝ Ջապարայում, Սուրաբայում, Թզալում, գումարեցին ժողովներ՝ նվիրված Ինդոնեզիայի հայ շքավորներին, որբերին օգնելու, նրանց երեխաներին ուսման տալու հարցերին: Հանգանակությունը հասավ 8000 գիլդերի: Ինդոնեզիայում ստեղծվեց «Հայկական միաբանություն» անունով մի կազմակերպություն, որն իր տնօրինության տակ առավ այդ գումարը և զբաղվեց հայ կարոտյալներին օգնելու հարցերով:

Առաջին այս հանգանակությունով, ինչպես ասում են, «վերքերը չապաքինվեցին»: 1927 թվականին Ինդոնեզիայի հայ շքավորների և աղքատների թիվը հասել էր նախկինի համեմատ շատ ավելի մեծ չափերի: «Հայկական միաբանությունը» և մյուս հայկական կազմակերպությունները այլևս անկարող էին իրենց միջոցներով նրանց ապահովելու: Հայկական համայնքները ստիպված դիմում են տեղական իշխանություններին և խնդրում, որ «...1927 թ. դրամի վիճակախաղեն մի մասն, իբրև պարզև հատկացնել Հայկեան միաբանության սնդկի օգտին, կառավարութեանը բացատրելով՝ թե այդ սնդուկը Ջավայի աղքատ և կարոտ հայերի օգնության համար է հիմնված, իսկ այժմ թե հիմնադրամը և թե եկամուտները խիստ նվազած են»¹:

Կառավարությունը հաշվի առնելով հայկական համայնքում ստեղծված ծանր կացությունը, 1928 թվականին նրան է հատկացնում 13 989, ապա 1929 թ. 15 494 գիլդեր գումար: Ինդոնեզահայ գաղութի կարիքավորներին հաճախ գումարներ էին հատկացվում

1 Հ. Հորդանանեան, նշված աշխատությունը, էջ 28:

2 Ա. Ք. Կարիեյան, Ակնարկներ..., հ. II, էջ 471:

1 Հ. Հորդանանեան, նշված աշխատությունը, էջ 31:

նաև Բաթավիայում 1858 թ. ստեղծված «Գանձակ Զուղայի տնանկաց»-ից:

Ինչպես տեսնում ենք, բերված այս միջանկյալ փաստերն իսկ գալիս են հերքելու հայ գաղթօջախի բնակչության միատարրության և մեծ հարստության առասպելը:

Ինդոնեզահայ գաղթօջախներից մի քանիսը XX դարում խամբեցին, նույնիսկ իսպառ վերացան, բայց և եղան այնպիսիները, որոնք գոյատևեցին և որոշ վերելք ապրեցին:

XX դարի ամենից նշանավոր գաղթօջախը, անշուշտ, Սուրաբա քաղաքի գաղթօջախն էր: Առևտրաշահ և նավահանգստային այս քաղաքը գնալով ավելի էր զբաղվում հայերի ուշադրությունը: Գրեթե առանց բացառության այնտեղ էին հաստատվում նոր-ձուղայից եկող գաղթականները: Գաղթականական, թեև փոքր, այս հոսանքը հայկական նոր շունչ էր տալիս համայնքի կյանքին: Նոր եկողները սիրով և խնամքով էին ընդունվել և ապահովվել բնակարանով ու աշխատանքով: Նորեկներին մեծ մասամբ աշխատանքի էին ընդունում գաղթավայրում գործող հայկական զանազան ընկերություններն ու առևտրական տները: Արհեստավոր հայերն աշխատանքի էին անցնում գլխավորապես կղզում գործող «Ազատ որմնագիր» ընկերության մոտ, ուր աշխատում էին վարպետ հայեր: Նորեկները կամաց-կամաց բնավորվում էին և շատ շանցած արդեն եռանդուն մասնակցում թե երկրի և թե հայկական համայնքի կյանքին: Բայց Սուրաբայի հայության զբաղմունքը շարունակում էր մնալ առևտուրը:

1927 թ. ազգային միջոցներով և նվիրատվություններով, որին մասնակցեցին նաև Ինդոնեզիայի, Բիրմայի, Հնդկաստանի հայերը, Սուրաբայում կառուցվեց հայոց Ս. Գեորգ եկեղեցին, որը կանգուն է առ այսօր: Հաջորդ տարին սուրաբացիները կազմել են իրենց «Ազգային վարչությունը»: Դրանից առաջ այստեղ գործում էր «Զավայի հայ կանանց բարեգործական միություն Սուրաբայում», որը ժամանակին խիստ և դեղորայք է ուղարկել Սովետական Հայաստան: Սուրաբայի հայեցը ունեցել են նաև «Սպորտային ակումբ», «Հայ թատերասիրաց և երաժշտասիրաց միություն» և այլ կազմակերպություններ: Սուրաբայի հայոց եռուն կյանքը խզվեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այժմ Սուրաբայում ապրում են 250-ի մոտ հայեր:

Բանդունգում հայերը առաջին անգամ երևացել են XIX դարի վերջին: Այդ հայերի զգալի մասը տեղական գաղթօջախի բնակիչներ չէին. նրանք մեծ մասամբ Բաթավիայի և Սուրաբայի

հայկական ընկերությունների ներկայացուցիչներն ու նրանց ընտանիքի անդամներն էին, որոնք մի քանի տարի ապրելուց հետո, հեռանում էին: Գաղթօջախը դառավ հաստատուն միայն XIX դարի 20—30-ական թվականներին: Հետաքրքիր է, որ Բանդունգի հայերից միայն մեկ-երկուսն են եղել վաճառական, մյուսները եղել են մանր գործավորներ, գրասենյակային պաշտոնյաներ, անգլերեն լեզվի ուսուցիչներ և այլն:

Բալի կղզում հայերը մուտք են գործել անցյալ դարի վերջերին: Առաջին եկվորները հայ ընկերությունների մասնաճյուղերի ներկայացուցիչներ են եղել: Կղզում հայերը շատ չեն ցրվել, նրանց հիմնական կայանը եղել է Սինգապուրը: Այստեղի հայերը, ի տարբերություն Բանդունգի հայության, հիմնականում զբաղվում էին վաճառականությամբ:

Մակասարի հայ գաղութի նորագույն շրջանի պատմության նյութերը դժբախտաբար վերաբերվում են միայն հայկական առևտրականներին և ընկերություններին. նրանք ոչինչ նոր կամ հետաքրքիր տեղեկություններ չեն տալիս ինդոնեզահայ գաղթօջախների պատմության վերաբերյալ: 1942 թ. հայկական կյանքը գրեթե դադարեց այստեղ: Այսօր մոտ երեք տասնյակ հայեր կան միայն, որոնք ունեն շինանյութերի մատակարարման մի ընկերություն՝ «Արմենյըն թրեյթինք» անունով:

Բացի վերոհիշյալ քաղաքներից, նորագույն շրջանում հայկական փոքրիկ համայնքներ են եղել Թզալում, Մապարայում, Սումբերինգայում, Սալատիխայում, Շերիբանում և այլուր:

Ըստ Վ. ք. Աղանյանի կազմած մարդահամարի, ինդոնեզիայի հայաբնակ քաղաքները հետևյալներն են եղել՝ Բաթավիա, Բոյտունգորի, Չերիբոն, Սուրաբա, Սիոդարչո, Ընգալիդուե, Տալունդ, Ազունդ, Լավանգ, Բատու, Մալանգ, Սոլո, Մադիոն, Բալի կղզի: Սամարինգա (Բորնեա կղզի), Մակասար, Միդան (Սումատրա կղզի): Այս վայրերում հայերը մեծ մասամբ զանազան գործերի մասնագետներ էին, թարգմանիչներ, երբեմն նաև արհեստավորներ և ապա նոր մանր կարգի խանութպաններ և խոշոր ընկերությունների ներկայացուցիչներ:

Ինդոնեզիայի հայ բնակչությունը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ չկարողացավ հեռանալ: Կոահելով սպասվող աղետը, հայերը նախօրոք թաքցրին հայոց եկեղեցու թանկարժեք զույքը, սպասները, դիվանը, գրադարանը և այլն:

Զավթողական իշխանությունների հատուկ հրամանով այստեղ

էլ հայերը դիտվեցին որպես ճապոնական կայսրության թշնամիներ և 1943 թ. դեկտեմբերի 20-ին բոլոր հայ ընտանիքները՝ մեծով ու փոքրով, նետվեցին արգելափակոցների մեջ: Արգելափակոցներում շատերը զոհ դառան սովին ու համաճարակին: Արգելափակոցների սարսափներից ազատված հայերը վերադարձին իրենց բնակարանները մինչև վերջին ասեղը կողոպտված գտան: Գրեթե իսպառ վերացավ Բանդունգի համայնքը: Արգելափակոցներից ազատվեց միայն մեկ ընտանիք: Գաղարեց հայկական կյանքը նաև Մակասարում: Մանր հարված ստացավ Ինդոնեզիայի երբեմնի ամենից ծաղկուն գաղութը՝ Բաթավիան (Ջակարտա): Բանը հասավ այնտեղ, որ ազգային իշխանության կենտրոնը տեղափոխվեց Սուրաբա: Հայկական կյանքը խամրեց նաև երկրի մյուս մեծ ու փոքր քաղաքներում:

Գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում հայկական կյանքը կամ մեռնում է, կամ դատապարտված է մահվան: Ամբողջ գաղութը կանգնած է ձուլման ճանապարհին: Այստեղ հայերը մեծ մասամբ ձուլվում են հոլանդացիների և հազվագյուտ դեպքում՝ տեղացիների հետ: Հայրենիքից կտրվածությունը, դպրոցի պակասը, խառն ամուսնությունները տակն ու վրա են անում հայկական գաղթավայրը: Եթե մինչև 1940 թ. թեկուզ առանձին, բայց հայ ընտանիքները գալիս էին Ինդոնեզիա, ապա 1946 թվականից հետո հայերը սկսել են Ինդոնեզիայից հեռանալ դեպի Հնդկաստան, Ավստրալիա, Հոլանդիա, նույնիսկ գտնվում են հայեր, որոնք վերադառնում են պապերի կողմից թողած հայրենի նոր-Ջուզան:

Այժմ հայեր ապրում են միայն Մակասարում, Սուրաբայում և Ջակարտայում: Մյուս վայրերում ապրող հատուկներ հայերը գաղթօջախի աստիճանի չեն հասնում: Ներկայիս Ինդոնեզահայության թիվը չի անցնում 300-ից:

XIX. ՀԱՅԵՐԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Այս ընդհանուր գլխի տակ խոսք է լինելու փոքրաթիվ հայկական այն համայնքների մասին, որոնք գտնվել են Խաղաղ օվկիանոսի Մալայան, Հոնկոնգ, Սինգապուր և այլ կղզիներում: Ծիշտ է, սովոր չեն եղել այդ գաղթօջախները, բայց ընդարձակ է եղել նրանց աշխարհագրական քարտեզը: Աշխարհի այս հեռավոր ծայրը հասած և հաստատված հայերը ապաստան փնտրող սովորական փախստականներ չեն եղել: Նրանց հիմնական մասը փորձված ջուղահայեր են հանդիսացել, որոնց այս ծայրագույն հեռուներն է բերել առևտուրը և եվրոպական Արևելա-Տնդկական ընկերությունների հետ տեղի ունեցող մրցակցությունը¹:

Սինգապուր:

Հեռավոր արևելյան հայ գաղթօջախներից ամենից նշանավորը Սինգապուր կղզու և նույնանուն քաղաքի գաղթօջախն է հանդիսացել: Նրա սկզբնավորման մասին կոնկրետ փաստեր չունենք: Հավանաբար, այն սկզբնավորվել է XVIII դարի վերջին և սովորացել XIX դարի սկզբին: Ծիշտ է, դեռ շատ վաղ ժամանակից Մալլակայի հարավային մասերը, հատկապես Մալլակա քաղաքը հայտնի էին հայերին, բայց Սինգապուր կղզին դուրս էր մնացել նրանց տեսադաշտից:

XVIII դարի վերջերին, ինչպես հայտնի է, անգլիական գաղութարարները նվաճեցին ծայրագույն արևելքի այդ մասերը և XIX դարի սկզբին, ինը անկախ փոքրիկ ինքնավարություններից ստեղծեցին «Նեդուցային գաղութները», որոնք կոչվում էին նաև

1 «Ազգասէր», հատ. Ա, № 6, 1845, էջ 53:

«Քաղաքատեղի գաղութներ»։ Նրանք հիմնեցին Սինգապուրը և դարձրին այն վարչական կենտրոն։ Սինգապուրը արագ բարձրացավ ու դարձավ Հնոավոր Արևելքի բրիտանական գաղութային իշխանությունների վարչատնտեսական, առևտրական կենտրոն և ռազմածովային խոշորագույն բազա։ Այդ ժամանակից հայերը սկսեցին մուտք գործել Սինգապուր։

Այստեղ եկող և հաստատվող հայերը դարձյալ շուղահայեր և հնդկահայեր էին։ Հենց սկզբից նրանք Սինգապուրում ստեղծեցին հայկական ընկերություններ։ Սինգապուր եկողների մեջ կային հայ առևտրականներ, որոնք եվրոպացիների կողմից դուրս էին մղվել մյուս շուկաներից և բախտ էին փնտրում այստեղ։ Ահա այս հայերն են, որ ստեղծեցին Սինգապուրի հայ գաղթօջախի կորիզը։

Սինգապուրի բարձրացումից հետո նրանից ոչ այնքան հեռու գտնվող Մալլակա քաղաքը կորցրեց իր նախկին առևտրատնտեսական նշանակությունը։ Շատ վաղուց, դեռևս հուլանդական ներխուժումներից առաջ ստեղծված Մալլակայի հայկական գաղթօջախը, երկու հարյուր հիսուն տարվա փարթամ կյանքից հետո, սկսեց անկում ապրել։ Գործելու լայն շրջանակներից և հնարավորություններից զրկված հայերը գրեթե ամբողջությամբ տեղափոխվեցին բարգավաճող Սինգապուր։ Այնքան շատ էր Սինգապուր տեղափոխված մալլակահայերի թիվը, որ հայերը տեղացիների կողմից մալլակացիներ են կոչվել¹։ 1818 թվականին ամբողջությամբ այստեղ տեղափոխվեց նաև Սինգապուրի հարևան Պենանգ կղզու հայկական համայնքը, որն այնտեղ հաստատվել էր XVI—XVII դարերից։ Այսպիսով, ծայրագույն Արևելքի այս ազատ նավահանգիստ-քաղաքը իր մեջ առնելով Հնդկաստանից, Մալլակայից և Պենանգից եկած հայերին, հնարավորություն տվեց լայն գործունեություն ծավալելու։ Հետագայում Սինգապուր եկան և հաստատվեցին փոքր թվով հայեր տարբեր գաղթօջախներից։

XIX դարի կեսից Սինգապուրի հայկական գաղթօջախի բնակչության թիվը համեմատաբար մեծ է եղել։ XIX դարի 30—40-ական թվականներին հայերը քաղաքի կենտրոնում կառուցել էին բազմաթիվ տներ, խանութներ և հիմնարկներ։ Զուտ հայերին պատկանող այդ տները կազմել են Սինգապուրի կենտրոնական փողոց-հրապարակներից մեկը։ Չնայած այժմ գրեթե հայեր չեն ապրում այստեղ այլևս, բայց երբեմնի հայաշատ այդ վայրը մինչև այժմ էլ կոչվում է «Հայկական փողոց»։ Մեծաթիվ հայ բնակչու-

1 Ք. Գուշակյան, Հնդկահայք, էջ 264։

չության մասին է խոսում այն փաստը, որ 1851 թ. Սինգապուրում հրատարակվող «Ուսումնասերը» կոչ է անում անգլիական մրցակցությանը զոհ չգնալու համար շուտափույթ կերպով Սինգապուրում կազմակերպել միություններ, ընկերություններ և գործարաններ, որից, նրա կարծիքով, «հազարավոր համազգիներ կարող են փարթամանալ»¹։ «Հազարավորն»՝ անշուշտ, չափազանցություն է, իրականը, հավանաբար, այն է, որ Սինգապուրում հայ գաղթօջախն իր ծաղկման շրջանում ունեցել է մի քանի հարյուր հոգի հայ բնակչություն։ «Հայկական փողոցի» վրա հայերը 1834 թվականին կառուցում են Սինգապուրի հայոց եկեղեցին։

Հայկական այս եկեղեցին, իր ճարտարապետական բարձր արվեստով, համարվում է Սինգապուրի ամենից գեղեցիկ կառույցներից մեկը։ Ըստ Գուշակյանի նկարագրության, նա «ներբուստ բոլորակաձև, հայկական ոճի գողտրիկ տիպար մըն է, որ կհիշեցնե Անիի Ս. Փրկիչը»²։

«Ուսումնասեր»-ում տպագրված նյութերից երևում է, որ 1840—1850-ական թվականներին Սինգապուրի նավահանգիստ մտնող նավերի մեջ եղել են հայ վաճառականների նավեր։ Սակայն հետո անգլիացիները գաղտնի մի համաձայնությամբ հրաժարվեցին տեղափոխել հայերի ապրանքները և դադարեցին գործարքներ կնքել հայերի հետ։ Սինգապուրում արդեն հայերն անկարող եղան մրցելու իրենց հզոր հակառակորդի հետ։

Դժբախտաբար, մինչև հիմա ոչինչ չգիտենք նաև Սինգապուրի համայնքի հասարակական և կուլտուրական կազմակերպությունների մասին։ Միայն «Ուսումնասեր»-ում տպագրված հաղորդումներից հնարավոր դարձավ պարզել հետևյալը։ Սինգապուրի հայերն ունեցել են «Ազգային ժողով», որը պարբերաբար հավաքվել է և քննարկել համայնքի ներքին կյանքին վերաբերվող հարցեր։ «Ազգային ժողովն» իր ամենամյա ժողովում ընտրել է կառավարչություն՝ Աթոռակալի ղեկավարությամբ³։

Անշուշտ, Սինգապուրի հայ գաղութի մարդաշատության և նրա վայելած հեղինակության մասին է վկայում նաև այն փաստը, որ Սինգապուրում եղել են «Հայկական», «Սարգսյան» և «Մարտիրոսյան» անուններով փողոցներ։

Սինգապուրի հայ գաղթօջախի պատմության XIX դ. երկրորդ կեսի վերաբերյալ քիչ բան գիտենք, բացի այն, ինչ թողել են

1 «Ուսումնասեր», 1851, հ. Բ, էջ 59։

2 Ք. Գուշակյան, Հնդկահայք, էջ 445։

3 «Ուսումնասեր», 1850, հ. Բ, էջ 24։

առանձին հիշատակագիրներ, որոնք մեծ մասամբ հանդիսանում են էջմիածնից կամ Նոր-Ջուղայից ուղարկված նվիրակներ: 1870-ական թվականներին «Սինգապուր կոտնվին շատ հայազգի ընտանիքներ,— գրում է ականատեսներից մեկը,— որոնք Հնդկաստանի՝ անգլիացի լծեն ազատ կողմերուն վաճառականության մեծ մասը ձեռներնին կպահեն»¹:

1911 թ. Նոր-Ջուղայի «Օրացույցում» Սինգապուրում հաշվվում է 60 հայ բնակիչ²: Սինգապուրի հայ համայնքը մտնում էր Նոր-Ջուղայի թեմի մեջ:

XX դարի սկզբին Սինգապուրի հայ համայնքը թեև փոքրացած, բայց շարունակում էր գոյատևել խառնալեզու և բազմակրոն այս քաղաքում: Դեռ կային մի քանի առևտրական ընկերություններ, որոնք իրենց մասնաճյուղերը տարածել էին Բանկոնգից— Լոնդոն³:

Բավականին մանրամասն տեղեկություններ Սինգապուրի հայ դաղթօջախի մասին 1917 թ. հաղորդում է այնտեղ այցելած Գուշակյանը, որն այս վայրերն էր եկել հանգանակություն կատարելու նպատակով՝ ի նպաստ Մերձավոր Արևելքի արաբական երկրներում ապաստան գտած գաղթականության: Գուշակյանի նոթագրությունից երևում է, որ 1917-ական թվականներին Սինգապուրում ապրում էր փոքրաթիվ հայկական համայնք: Սրանց մեջ չկային այլևս անցյալի մեծահարուստ նոտաբլները. նրանց զավակների հիմնական զբաղմունքը մանր կարգի վաճառականությունն է եղել, պանդոկապանությունը, իրավաբանությունը, լուսանկարչությունը և նման այլ պաշտոններ: Սակայն այդ չի խանգարել, որ աշխարհի ծայրն ընկած հեռավոր կղզու հայերը ևս իրենց լուծայից համեստ բաժին հանեն մեծ եղեռնից տուժած իրենց նյութակարոտ հայրենակիցներին:

Գուշակյանի վկայությամբ, Սինգապուրի հայությունը, հակառակ Բիրմայի և Ինդոնեզիայի շատ քաղաքների հայության, «առանց բացառության կիսոսին հայերեն... իրենց կյանքին ու ընտանեկան հարկին մեջ եվրոպականացած կարգ ու սարքին հետ, կպահեն ազգային բարբի պարզությունը և հայկական հոգվոց ջերմությունը»⁴:

1 Ն. Եփր. վ. Չազրենեան, Պատմութիւն հայոց հայկազանց տերութեան սկզբանէ մինչև մեր ժամանակն, Վիեննա, 1872, էջ 412:

2 «Օրացույց», Նոր-Ջուղա—Սպահան, 1911:

3 Թ. Գուշակյան, Հնդկահայք, էջ 261:

4 Նույն տեղում, էջ 261—263:

Ամենից ակնառու երևույթը Սինգապուրի հայոց համայնքի կյանքում, անշուշտ, այդ «Ուսումնասեր» լրագիրն է, որը հրատարակվել է 1849—1853 թվականներին: Թերթի հրատարակիչ խմբագիրն է հանդիսացել Գ. Դ. Գալստյանը: Թերթը բաժանորդներ է ունեցել Կալիաթայում, Մադրասում, Կանտոնում, Սուրաբայում, Պինանգում, Ռանգունում, Բոմբեյում, Մանիլայում և այլ վայրերում¹:

Մեզ են հասել «Ուսումնասեր»-ի գրեթե բոլոր համարները: Դժվար չէ դատողություններ անել ինչպես այնտեղ տպագրված նյութերի, այնպես էլ նրանց ուղղության մասին: Թերթում զգալի տեղ է հատկացվել լուրերին: Նա մանրակրկիտ տեղեկություններ է հաղորդում ապրանքների գների, տեսակների մասին, առանձին բաժնով հաղորդագրություններ են տպվել Սինգապուր մտնող և դուրս եկող նավերի մասին և այլն: Առանձնահատուկ տեղ են գրավում այնտեղ տպված հոդվածները և յուրահատուկ «Առաջնորդողները», ուր անդադար հղովելով «ազգ», «լուսավորություն», «հայրենասեր», «ազգասեր» և նման բառեր, «Ուսումնասերի» խմբագիրը որոշակի կերպով պաշտպանում է հայ հետադեմ-կղերականների իրավունքները և հայացքները²:

Սինգապուրում շնայած ամեն տեսակ ջանքերին, հայերին չհաջողվեց բացել հայկական դպրոց՝ մատաղ սերնդին դաստիարակելու մայրենի լեզվով: Հայ մանուկներին տառաճանաչ դարձնողները ընտանիքի ավագներն էին մնում: XIX դարի կեսերին Սինգապուրում հիմնադրվում են հայատառ գրքեր տպելու համար «Արփի» և «Մասիս» վիմադարանները³: Հայկական երկու վիմադարանները շեն բավարարել հայերի պահանջը: Սինգապուրում փորձեր են արվել նոր տպարան ստեղծելու ուղղությամբ:

Գործը ձեռնարկել է Սինգապուրի հայերեն թերթի՝ «Ուսումնասերի» խմբագիր և հրատարակիչ Գրիգոր Գ. Գալստյանը: Սեփական միջոցներով բավականին աշխատելուց հետո, նա անկափող է եղել գործը գլուխ բերել և հատուկ շրջաբերականով դիմել է Սինգապուրի ու նրա հարևան գաղթօջախների «պատվելի ազգայնաց»՝ դրամական օգնության խնդրանքով⁴:

1 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. I, էջ 373:

2 Նույն տեղում, էջ 396:

3 «Ուսումնասեր», 1850, հ. Բ, 1 հունվ., 1850 թ., № 23:

4 Նույնը, հ. II, 15 օգոստ., 1850, № 28:

Սինգապուրում հայկական տպարան ստեղծելու գաղափարը, ըստ երևույթին, խափանվել է Գ. Գ. Գալստյանի՝ Ավստրալիա տեղափոխվելու հետևանքով:

Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջին դույլ սառը ջուրը լցրեց Սինգապուրի ծխացող հայ գաղթօջախի վրա: Եթե բիրմահայերի մի մասին հաջողվեց փախչել և ազատվել ռազմական գործողություններից առաջ, ապա ճապոնական ավիացիայի կողմից կրակի տակ առնված ջրերի վրա Սինգապուր կղզուց դուրս եկող ոչ մի համարձակ նավ չերևաց:

Սինգապուրի հայերն ամբողջությամբ կողոպտվեցին, նրանցից շատերը երկու տարվա մահամերձ կյանք ունեցան համակենտրոնացման ճամբարներում: Պատերազմի ավարտից հետո քչերը միայն կենդանի դուրս եկան ճամբարներից, որոնց մի մասը այլևս չմնաց Սինգապուրում և ցրվեց: Մնացածների վիճակն էլ գովական չէ: Չկա առաջվա բարեկեցությունը և ազատված հայերը «...հազիվ են կարողանում օրվա ապրուստը հայթայթել»¹:

Պենանգ:

Հայերը Մալայան թերակղզուց արևմուտք գտնվող այս փոքրիկ, չափերով գրեթե աննշան կղզուն ծանոթ էին XVII դարից: Գաղութը հիմնվել է XVIII դարի երկրորդ կեսին²: Հայերի թիվը այնքան է շատացել այս կղզում, որ 1822 թվին հարկ է եղել քաղաքի կենտրոնական մասի փողոցներից մեկի վրա եկեղեցի և նրան կից շենքեր կառուցել: Հենց այս ժամանակ էլ երևի հիմնվել է մինչև այժմ իր անունը պահող «Հայկական փողոցը»³: 1820-ական թվականներին բուռն թափով բարձրացող Սինգապուրը խամրեցրեց այս գաղթօջախը: Գրեթե ամբողջությամբ հայերը տեղափոխվեցին այնտեղ: 1846 թ. Կալկաթայում հրատարակված «Արամայիսը» մի քանի տուն հայեր է միայն հաշվվում Պենանգում⁴: Երևի դա չէր խանգարում, որ «Ազգասեր» հանդեսը գործակալությունն ունենար այնտեղ և պենանգահայերին հաղորդակից դարձներ հայկական կյանքին:

Չնայած թվական աննշանությանը, այս գաղթօջախի մասին էլ լավ գիտեին էջմիածնում: Մ. Քաղիադյանը հրատարակել է Ներսես Աշտարակեցու կոնդակներից մեկը (1851 թվ. գրված)

1 Ք. Գուշակյան, Հնդկահայեր, էջ 249:

2 Ա. Ալպոյանյան, ՊՉԳ, հ. III, էջ 442:

3 Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի, հ. I, էջ 351:

4 «Արամայիս», Կալկաթա, 1846, էջ 46:

ուղղված հնդկահայերին: Այդ կոնդակին Քաղիադյանը կցել է մի ծանոթագրություն, որով ճշտել է այնտեղ հիշված տեղանունների ցանկը, ուր և գտնվում է Պենանգը¹:

XIX դարի կեսերին Պենանգում գործում է «Արևելյան ապահովաց ընկերության» առևտրա-արդյունաբերական մի ճյուղը:

1846 թ. «Ազգասերը» հրատարակել է պենանգաբնակ իր հայրենակիցներից մեկի հետաքրքիր մի ուսումնասիրությունը՝ Պենանգի մասին: Հեղինակը մանրամասն տեղեկություններ է հաղորդել կղզուների, չափերի, հարկերի, մաքսերի, բերքի, ապրանքների գների, տեղացիների վարք ու բարքի, կենցաղի վերաբերյալ և այլն²: Հետագայում Պենանգի մասին տպված ակնարկների շարքը գրեթե ամբողջությամբ նվիրված է մալայացի բնակիչների մեծարմանը:

1830-ական թվականներից հետո, այլևս հայեր չմնացին կղզում: 1834 թ. տեղական իշխանությունները փորձեցին օգտագործել ավերակ դարձած հայոց եկեղեցու հողամասը, սակայն սինգապուրաբնակ հայերը սկզբում արգելեցին, հետագայում վաճառեցին կառավարությանը 34 000 դոլլարով և ստեղծեցին «Խաչատուր Գալուստյան» անձեռնամխելի գումարը, որի տոկոսները մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը ստանում էին Սինգապուրի հայերը: Եթե ուրիշ մարած գաղթօջախներում, գոնե որպես անցյալի հուշ, մնում են հայկական հուշարձանները կամ գեղեզմանները, այստեղ հայկական անցյալից այդ էլ չի մնացել:

Մալլակա:

Հնագույն փաստը վերաբերում է XVII դարին: Այն հիշվում է Կոստանդ վարժապետի գրքում: Ա. Ալպոյանյանի ենթադրությամբ, հայերը հաստատվել են այստեղ XVII դարի վերջերում: Նախքան անգլիացիների գրավումը (1759 թվականը) հայերը հոլանդացիների տիրապետության շրջանում բավականին մեծ հաջողությունների են հասել տնտեսական կյանքի բնագավառում³: XVIII դարի վերջին Մալլակայում էր գործում Ծահամիր սուլթանում Ծահամիրյանի ավագ որդին՝ Հակոբ Ծահամիրյանը: Մալլական Մանիլայի, Պենանգի նման հենակետ էր, ուր հայկական ապրանքներով բեռնված նավերը մտնում էին այս նավահանգիստը: Լավ իմանալով այդ, հետագայում հայերի հետ մեր-

1 «Ազգասեր Արարտեան», 1851, հար. Գ. թ. 72, էջ 569:

2 «Ազգասեր», հ. III, էջ 108:

3 ՊՉԳ, հ. III, էջ 443:

ցակցող ֆրանսիացիները և անգլիացիները Մալլակայի ջրերում դարանակալում և ավազակաբար կողոպուտի էին ենթարկում հայ մրցակիցների նավերը:

1820-ական թվականներից հետո Սինգապուրի վերելքը խամրեցրեց նաև այս հայ գաղթօջախը: Նրանք գրեթե ամբողջությամբ տեղափոխվեցին և հաստատվեցին Սինգապուրում: Տարիներ հետո, նրանց մյուս հայերից զանազանելու համար, ինչպես ասել ենք, կոչում էին մալակկացիներ:

Վերջին անգամ Մալլակայի հայ գաղութը հիշվում է էջմիածնի 1850 թ. մի Կոնդակում¹:

Հոնկոնգ և Մակաո:

Այս հայ փոքրիկ գաղթօջախների հիմնավորման ժամանակի մասին Հոնկոնգի համալսարանի պեկտոր Հինդեյ Ռայտը հետևյալն է գրել. «Ես իմ հետազոտությունների ընթացքում հանդիպել եմ հայերի, որոնք այստեղ են եկել ավելի կանուխ, քան թե պորտուգալացիները»²: Պրոֆեսոր Ռայտի հայտարարությունը, անշուշտ, հավաստի է, քանի որ Հոնկոնգի և Մակաոյի հարևան Կանտոնում իրոք հաստատված հայեր եղել են հուանդացիներից առաջ:

Կաթոլիկ քարոզիչ Ժակ Բրաունը, խոսելով այս երկու կղզիների հայերի մասին, գրել է. «Հայերը ճարտար են, արթնամիտ, հանդուգն և ծրաջան»³:

Հայ գաղթօջախները հուանդահայատակ Մակաոում և անգլիապատկան Հոնկոնգում կազմակերպվել են XVIII դ. կեսերին և XIX դ. սկզբներին: 1765 թ. կազմված «Ջամբո»-ում Մակաոն և «Չինու երկիրը» (այստեղ խոսքը անշուշտ Հոնկոնգի մասին է, քանի որ չինական մյուս քաղաքներն՝ առանձին անուններով հիշված են) դրված են այն քաղաքների շարքում, ուր հայ գաղթավայրեր կան⁴: Նրանց բնակչությունը, հիմնականում, ջուղայեցիներ և հնդկահայեր էին: XIX դարի վերջում այստեղ գործում էին բազմաթիվ հայկական ընկերություններ՝ «Սեթյան», «Աբգարյան», «Աղաբեկյան» և ուրիշներ: Հոնկոնգի և Մակաոյի հայերի հայությունը իր վրա է գրավում հատկապես չինարենակ հայրենակիցների ուշադրությունը, որոնցից շատերը տեղափոխվում են այս կղզիները:

1 Ա. Ալպոյանյան, ՊՁԳ, հ. III, էջ 317:

2 «Արև», Կահիրե, 12 օգոստոսի, 1958:

3 Նույն տեղում:

4 Իմենե Երևանցի, Ջամբո, էջ 48:

Թվական տվյալներ այս կղզիներում ապրող հայերի մասին չունենք: Այնուամենայնիվ, նրանց թիվը բավականին պետք է եղած լինի, որ այս հեռավոր վայրերը անհրաժեշտ համարեն այցի գալ էջմիածնի նվիրակները:

1924 թ. այստեղ այցելած Իրանա-հնդկական թեմի առաջնորդի՝ Սահակ արքեպ. Ազատյանի վկայությամբ, այստեղ ապրում էր միայն 15 հայ ընտանիք:

Հոնկոնգի հայկական համայնքների ամենից աչքի ընկնող դեմքը Պոլ Չաթրըն է հանդիսացել: Նրա ծրագրով և դրամով է կառուցվել Հոնկոնգի նավահանգիստը՝ իր 11 մթերանոցներով¹:

Խաչիկ Աստվածատրյանն է եղել Հոնկոնգի նավահանգստի մոտի ծովը նվաճելու գաղափարն առաջարկողը: Այս առաջարկը ժամանակակիցները համարում են «...դարուս մեջ հղացած ամենն հանդուգն, ամենն համարձակ, ամենն ընդարձակ, ամենն հանճարեղ ծրագիրներն մեկը»²:

Նրա օժանդակությամբ է կառուցվել տեղի համալսարանը և բազմաթիվ այլ շենքեր: Նա չի մոռացել նաև իր ազգակիցներին. միայն Կալկաթայի հայոց համայնքին նվիրած գումարը հասնում է 3 միլիոն ուսպպի: Այժմ հայ բարերարի անունով Հոնկոնգում կա երկու փողոց՝ «Աստվածատրյան» և «Խաչիկ»:

1 «Նոր դար», Քիֆլիզ, 1884, էջ 179:

2 «Արևիք», Կ. Պոլիս, 1879, էջ 179:

XX. ՀԱՅԵՐԸ ՖԻԼԻՊՊԻՆՅԱՆ ԿԴՁԻՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՈՐ
ՁԵԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Մանիլա:

Հեռավոր Արևելքի անհետացած հայ գաղթօջախներից է Ֆիլիպպինյան կղզիների հայ գաղթօջախը: Ինչքան էլ անհավատալի լինի, բայց պատմական փաստ է, որ հայ վաճառականները Ֆիլիպպինյան հետ քաջ ծանոթ էին և ելումուտք ունեին այնտեղ եվրոպացիներից առաջ: Հայտնի է, որ Կոստանդ վարժապետը իր նշանավոր «Մատենանում» Հեռավոր Արևելյան Մալլակայի, Տիմորի, Մակաոյի, ինդոնեզիական կղզիների և մյուսների կողքին, հիշում է Ֆիլիպպինյան կենտրոն Մանիլան որպես առևտրաշահ մի քաղաք, ուր լինում են հայ վաճառականներ¹ սկսած XVII դարից:

Ղ. Ալիշանը, խոսելով Հեռավոր Արևելյան մի շարք հայ գաղթօջախների մասին, գրում է. «Բայց առաջ քան զսոսա անցեալ դարու, թերևս կանխագոյն ևս, նաևեալ յայց ելանէին վաճառականք մեր ի Փիլիպպինեան և Մանիլեան կղզիս»²:

Հավանաբար XVII դարից էլ այստեղ հաստատված հայ վաճառականներն ու նրանց գործակիցները հանդիսացան այն կորիզը, որի շուրջը հետագայում ստեղծվեց հայ գաղթօջախը: Հայերը այս կղզախմբում հիմնականում կենտրոնանում էին Լուսանի Մանիլա քաղաքում: Մեզ հասած կցկտուր տեղեկություններից երևում է, որ 1571 թ. այս կղզախումբը իսպանացիների կողմից գաղութացվելուց հետո, հայերի հոսքը դեպի այնտեղ ուժեղացավ: Հետաքրքիր է այն փաստը, որ կայսերական հրամանով խստագույն արգելվում է ամեն տեսակ օտարազգուն մուտք գործել Ֆիլիպպինյան կղզիները, իսկ հայերը, դրան հակառակ, ինչպես Չինաստա-

1 ՀՍՍՌ Մատենադարան, Ձեռագիր № 5684, Թ. 2բ:

2 Ղ. Ալիշան, Միսական, էջ 468:

նում, այնպես Արևելքի շատ երկրներում, բացարձակ ազատություն էին վայելում. նրանք ոչ միայն ազատ ելումուտ ունեին Ֆիլիպպինյան կղզիներում, այլև հովանավորվում էին տեղական իշխանության կողմից:

Նշված ժամանակամիջոցում առևտրի համար այստեղ եկող հայերը գլխավորապես ջուղահայեր էին՝ Հնդկաստանի, Չինաստանի ու արևելյան այլ երկրների առևտրականներ:

Քաղելով մեզ անհայտ աղբյուրներից, Գ. Ագոնցը Մանիլայի հին գաղթականության մասին հետևյալն է գրում. «...Ոչ ոք յազգաց, և ոչ յերոպացուց կարող է անդ վաճառականութիւն առնել, բայց ի շինաց, հնդկաց և հայոց»: Հավանաբար այստեղ էլ վստահությամբ են վերաբերվել հայերին: Դրանով պետք է բացատրել այն փաստը, որ «...ոմանք յօտար ազգաց կամեցեալ առևտրութիւն առնել անդանօր, յանուն հայոց առնեն»¹: Սույն հիշատակության շարունակությունից երևում է, որ այստեղ էլ, ինչպես Արևելքի շատ երկրներում, օտարազգիները մեծ մասամբ եվրոպացիներ էին՝ «...ի հայոց առաքին վաճառականութիւն»²:

Հայ առևտրական գաղութը Մանիլայից արտահանում էր համեմունքներ, մետաքս, զանազան կերպասներ, զանազան այլ ապրանքներ:

Մանիլայի հայ փոքրիկ գաղթօջախը այս շրջանում հանդիսանում էր յուրօրինակ մի հենակետ կամրջակ, կապող օղակ՝ Հեռավոր Արևելքի, Չինաստանի հայ գաղթօջախների և հնդկահայոց ու Նոր-Ջուղայի մեջ:

Մանիլաբնակ հայերի մասին ոչ այս շրջանի, և ոչ էլ հետագայի՝ տեղեկություններ չգիտենք: Հայտնի է միայն, որ նրանք, հիմնականում, վաճառականներ էին: Դժբախտաբար, չգիտենք նաև ոչինչ Մանիլայի հայ համայնքի ներքին կյանքի, նրա աչքի ընկնող անդամների մասին: Չունենք նաև ոչ մի թվական տվյալ բնակչության վերաբերյալ: Դատելով այն հանգամանքից, որ աղոթատուն չեն ունեցել, պետք է որ նրանց թիվը անցած չլինի մի քանի հարյուրից:

XVIII դ. կեսերից սկսած էջմիածնի վավերագրերում սկսում են հիշվել Ֆիլիպպինյան կղզիների հայկական համայնքները: Մանիլան ևս մի անգամ չէ, որպես Նոր-Ջուղայի առաջնորդության թեմի մեջ մտնող համայնք, XVIII դարում հիշատակվում էջմիա-

1 Ղ. Ալիշան, Միսական, էջ 468:

2 Նույն տեղում:

ծնի գրագրութիւններում¹։ Ֆիլիպպինյան կղզիների այս գաղթա-
վայրը երկար կյանք չունեցավ։ Երբ սկսեց բարձրանալ ինդոնե-
զական քաղաքների առևտրա-տնտեսական նշանակութիւնը, սկը-
սեցին փոխվել առևտրաուղիները և Մանիլայի դերը խամրեց։ Հա-
յերը, մրցակցութեանը դիմանալու համար, չէին կարող չնետվել
նոր ասպարեզ։ Տասնյակ հալ մարդիկ միայն մնացին Ֆիլիպպին-
ների մայրաքաղաքում։

Հռչակավոր նավավար Լա Պերուզը 1788 թ. Հեյբերգյան կղզի-
ներից ուղարկած զեկուցագրերում հիշում է հայերի, որոնք ապ-
րում էին Մանիլայում։

Մանիլայում ապրող հայերը մեծ մասամբ Հնդկաստանի հայ
խոշոր ընկերութիւնների և առևտրական տների ներկայացուցիչ-
ներ էին, որոնք ղեկավարում էին տեղի մասնաճյուղերը։ Նրանցից
շատերը մշտական բնակիչներ չէին։

Հետագա տարիների հայկական կյանքի մասին Ֆիլիպպին-
ներում իմանում ենք միայն երկրորդական, երրորդական ականա-
տեսներից և տեղեկութիւններից։

XIX դ. երկրորդ կեսերին Մանիլայում ապրում էին հայեր,
որոնք բաժանորդներ էին Հնդկաստանում, Թուրքիայում, Եվրոպա-
յում հրատարակվող թերթերի և ամսագրերի։

1958 թվականին այստեղ այցելած Փոլատյանի ուղեգրու-
թիւններից երևում է, որ հայկական կյանքն այստեղ գրեթե մե-
ռած է եղել, այնտեղ մնացած են եղել միայն անհատ հայ ըն-
տանիքներ։

Ֆիլիպպինների հայկական համայնքի կուլտուրական կյանքի
մասին դարձյալ ոչինչ չգիտենք, բացառությամբ հետևյալի։
XIX դարի կեսերին Ֆիլիպպիններում է ապրել Զաքարիա Զուղա-
յեցին, որը զբաղվում էր գրական աշխատանքով։

Մեզ են հասել նրա երկու աշխատանքները։ Դրանցից մեկը՝
Մանիլայի մենաստանում 1755 թվականին նրա գրած մատյանն
է։ Աշխատանքը ինչ-ինչ ճանապարհներով հասել է Ռանգուն, այն-
տեղից անցել Մ. Թաղիադյանի ձեռքը, որը հատվածներ է հրա-
տարակել այդ մատյանից։ Աշխատանքը հիմնովին նվիրված է
գրաբարի պաշտպանութեանը որպես «ազգապահպանման մի-
ջոցի»²։

Ապրելով հեռավոր Ֆիլիպպինյան կղզիներում և պաշտպանե-

1 Սիմեոն Երեանցի, Զամբո, էջ 48։

2 Ազգասեր, 1950, հ. 52, էջ 295։

չով գրաբարը, Զաքարիան շատ լավ է հասկացել նաև աշխարհա-
բարի նշանակութեան մասին. նա աշխարհաբարը շահավետ է գտել
«կարողացողաց խրմար»։

Զաքարիան կատարել է նաև թարգմանութիւններ։ 1755
թվականին Մանիլա մայրաքաղաքում իսպաներենից հայերեն
թարգմանած մի մատյան հասել է մեզ և պահվում է Մաշտոցի
անվան Մատենադարանում։ Այդ թարգմանութիւնը, որ ունի
«Գործ հոգևոր և գիրք շորորդ, որ կոչի գուռն առաքելութեան»
վերնագիրը, կրոնական բովանդակութիւն ունի։ Թարգմանիչի հի-
շատակարանում հետևյալն է ասված. «Թարգմանեալ իսպանոյիայ
լեզուէ առ մեր հայկական աշխարհս լեզուոյն, վասն ամենայնի
շահաւետութեան կարողացողութեան, նոյն հայոց հաւատացեալ
ազգին։ Աշխատասիրութեամբ ըսպանահանոյ Զուղայեցի տէր
Մարտիրոսայ որդի Զաքարիայ-եղբայր Ֆոանչիսկոյ. 1755 թվ-
Մանիլայ մայրաքաղաքում»¹։

Նոր Զելանդիա։ Նոր Զելանդիայի հայ գաղութը նոր է,
այն դեռևս գտնվում է ձևավորման շրջա-
նում։ Ա. Ալպոյանյանը այս գաղթօջախի սկիզբը համարում է
1945 թվականը²։

Նախքան 1945 թ. հայտնի է միայն հետևյալ փաստը. 1880-
ական թվականներին այնտեղ ապրող մի հայ բժիշկ՝ Սեթ Սամյա-
նը, իր ազնիվ, հոգատար վերաբերմունքի համար երկրում մեծ
ժողովրդականութիւն է վայելել և ընտրվել է նոր Զելանդիայի
ինքնավար վարչութեան անդամ³։

Այս հայ գաղթօջախի մասին վերջերս տեղեկութիւններ է
հրատարակել Փոլատյանը⁴։ Ըստ այդ տեղեկութիւնների, այստեղ
այժմ ապրող հայ համայնքի անդամների մեծ մասը մասնագետ-
ներ են՝ բժիշկներ, ճարտարապետներ, թարգմանիչներ և այլն։
Հայերն այստեղ չունեն հասարակական ոչ մի կազմակերպութիւն։

Վերջին տարիներս Ռումինիայից, Բուլղարիայից և Եգիպտոսից
գաղթականների նոր հոսանքներ են գալիս և հաստատվում Օք-
չենա, Վելլինգտոն, Կրայսկերչ քաղաքներում՝ կազմելով անհե-
ռանկար և շուտափուլի մահվան դատապարտված գաղթօջախներ։

1 ՄԱՄ, Զեռագիր № 62։

2 Ա. Ալպոյանյան, ՊՉԳ, հ. III, էջ 476։

3 Նույն տեղում, էջ 476—477։

4 Արև, 1958, հունիսի 28։

XXI. ՀԱՅԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Չինաստանը հին Արևելքի այն երկրներից է, ուր հայերը ոտք են դրել հնագույն ժամանակներից սկսած: Պատմական աղբյուրներում տեղեկություններ կան այն մասին, որ հայ վաճառականները ներթեկեցում էին Չինաստան և արտահանում այնտեղից մետաքս ու այլ ապրանքներ: Ըստ մի վկայության, որ վերաբերում է մեր թվարկության երկրորդ դարին, հայ վաճառականները առևտուր էին անում Չինաստանի առևտրաշատ կենտրոններում և գործարքներ կնքում տեղացի հայերի հետ¹:

Բանասեր Հ. Քյուրդյանը փաստեր է մատնանշում, որ հայ առևտրականները շարունակել են առևտուր անել Չինաստանում նաև վաղ միջնադարում, և նրանց հաճախ ուղեկցել են հայ հոգևորականները, որոնք Չինաստան են գնացել քարոզչության նպատակով²:

Հայերի հաճախ երևալը Չինաստանում և առնչումները չին ժողովրդի հետ հնագույն շրջանում այնքան հաճախ և սերտ են եղել, որ հայկական հողում ստեղծվել է մի ավանդություն, իբր թե հայ նախարարական խոշոր տոհմերից մեկը՝ Մամիկոնյանների տոհմը, եկել է Չինաստանից և ունի չինական ծագում³:

Հնագույն այս ժամանակներում հազիվ թե հայերը մշտական բնակություն հաստատած լինեն Չինաստանում, թեև ուղևորական ֆակտորիաների ձևով:

Հայկական գաղթօջախների հիմնումը Չինաստանում կապված

¹ H. Wells, The Outline of History, London, 1895, էջ 475:

² Չ. Քյուրդյան, Հում մետաքսի վաճառականությունը և հայերը, էջ 139:

³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 149:

է մոնղոլական առաջին արշավանքների հետ: Հայտնի է, որ մոնղոլական հրոսակները, որոնք խորշակի պես անցան հայկական լեռնաշխարհով, հազարավոր գերիներ բռնեցին և տարան դեպի Քաբուլ, Սամարղանդ և ներկայիս Չինաստանի հյուսիսային շրջանները, ուր և նրանք կազմեցին իրենց գաղթօջախները՝ բախտակից ասորի նեստորականների կողքին¹:

Երկրի հյուսիսում հաստատված այս հայ տարագիրները զբաղվեցին իրենց նախասիրած զբաղմունքով՝ առևտրով: Օգտվելով տեղացիների բարյացակամ վերաբերմունքից, նրանք շուտով թափանցեցին երկրի խորքերը և հասան մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը:

Հայկական այս գաղթօջախների մասին տեղեկություններ կան կաթոլիկ կրոնավոր Անդրիաս Պերուճիացու մի նամակում, որ ուղղված է Կղեմիս պապին՝ գրված 1326 թ.²: Չինական խոշոր քաղաքներում, ասված է այդ նամակում, հայեր են ապրում: Սրանք, անշուշտ, թաթար-մոնղոլական բռնագաղթով տարված հայերն էին, զուցե նաև՝ Չարմաղանի կամ Բաթուի տարած հայազգի զինվորներից:

Նույնի մի այլ վկայության համաձայն, հայեր էին ապրում նաև Չինաստանի ծովափնյա առևտրական քաղաքներում: Հատկապես մեծ էր նրանց թիվը Կանտոնում: Տեղեկություններ կան, որ 1307 թվականից առաջ Կանտոնում կառուցվել է հայկական մեծ և գեղեցիկ եկեղեցի³: Ա. Մոուլեն ո՛չ միայն հաստատում է այս փաստը, այլ նաև ավելացնում, որ եկեղեցուն կից կառուցվել են այլ շինություններ ևս⁴:

Չին ժողովրդի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Հեթում պատմիչը. «Այս երկրի (այսինքն՝ Չինաստանի—Ռ. Ա.) մարդիկ,— գրում է Հեթումը,— շատ հնարամիտ են և օժտված մեծ սրամտությամբ: Այնքան այլազան և հրաշագեղ բաներ կան այս երկրի մեջ և այնքան՝ նրբարվեստ, որ հազիվ թե որևէ մեկը համեմատվի նրանց հետ»⁵:

Հայկական առաջին այս գաղթօջախները, սակայն, երկար կյանք չունեցան, նրանց մի մասը զոհ գնաց թաթար-մոնղոլական խժոժություններին: XVI—XVII դարերում սկսում է հայ-չինական

¹ Ա. Ալպոյանյան, ՊՁԳ, հ. III, էջ 317:

² ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գ. 63, Չինաստան:

³ «Երևակ», 1860, էջ 229:

⁴ A. G. Maule, Christians in India before the year 1550, p. 241.

⁵ Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, 1842:

հարաբերությունների նոր շրջանը: Չինաստանի հետ աշխույժ առևտուր են սկսում պարսկահայ և հնդկահայ վաճառականները: Եվրոպացի ճանապարհորդները վկայում են, որ XVI—XVII դարերում հայերը վաճառականական ռազմիրաններն են հանդիսացել Չինաստանում:

Ուշ միջնադարում ևս Չինաստանում գոյություն են ունեցել հայ գաղթօջախներ: XVII դարի կեսերին Կանտոնից Հոնոմ ուղարկված մի նամակում, ուր հիշվում են այնտեղ ապրող քրիստոնյա ընտանիքները, երեք անգլիական և մեկ դանիական ընտանիքների կողքին հիշվում են 30 հայ ընտանիք¹:

Անգլիական Արևելյան-հնդկական ընկերության և հնդկահայ վաճառական խոշա Փանոս Քալանթարի միջև 1688 թ. կնքված պայմանագրի շորրորդ կետով իրավունք էր տրվում հայերին՝ անգլիացիներին հավասար մաքսով և պայմաններով Չինաստանում առևտուր անելու²: Օգտվելով այդ արտոնությունից և օգտագործելով ընկերության նավերն ու հնարավորությունները, հայերը առևտրական լայն գործունեություն ծավալեցին, որը մեծ աշխուժացում առաջացրեց Կանտոն-Մակո-Սինգապուր-Հնդկաստան առևտրում:

Ղ. Ալիշանի վկայությամբ, XVII դ. սկզբներին եվրոպացիները Չինաստան մուտք գործելիս, ապահովության համար հագնում էին հայկական տարազ³: Օտարերկրացիների՝ հայանուն և հայազգեստ Չինաստան մտնելու այս փաստերն, անշուշտ, խոսում են այն մասին, որ հայկական փոքրաթիվ համայնքները XVI—XVIII դարերում բավականին դիրք և հեղինակություն էին վայելում Չինաստանում: Հայերը շուտով ձեռք բերեցին սեփական շոգենավեր և իրենց ապրանքները սկսեցին փոխադրել այդ նավերով: Շուտով նրանք այնպիսի մրցակիցներ դարձան անգլիացիներին, որ վերջիններս, որպես «Քչնամու սեփականություն», սկսեցին բռնագրավել հայ վաճառականների նավերը, որոնք դուրս էին գալիս Չինաստանից:

XVIII դարի սկզբներին հայ ոչ մեծ գաղթօջախներ, մեծ մասամբ իբրև առևտրական ֆակտորիաներ, հիշվում են Շանհայում, Կանտոնում և Մակաոյում: 1722 թ. գրված մի վավերագրում, ուր խոսվում է Կանտոնից դուրս եկող նավերի մասին, հիշվում է

¹ «Արև», 1958, 1 օգոստոսի:

² M. Seth, Armenians in India, p. 271.

³ Ղ. Ալիշան, Սինգապուր, էջ 467:

նաև հայկական տարբերանշանով կանտոնաբնակ հայերի նավերի մասին:

Հավաստի հաղորդումներից երևում է, որ XVI—XVIII դարերում Չինաստանում եղած հայկական գաղթօջախներն այնքան էլ մեծ չեն եղել: Ընդարձակ չի եղել նաև այդ գաղթօջախների աշխարհագրական քարտեզը՝ Շանհայ, Կանտոն, Չուանչա և մեկ երկու այլ քաղաքներ:

Հավանաբար, հայկական գաղթօջախների այդ կղզյակներից ամենից մարդաշատը և հայտնին Կանտոնն է եղել: XVIII դ. Կանտոնի հայ գաղթօջախի մասին գիտեին ոչ միայն նոր-Ջուզայում, այլ նաև էջմիածնում: 1765 թ. Սիմեոն կաթողիկոսի կազմած հայկական գաղթօջախների ցուցակում հիշվում է «Չինու երկիրը». Կանտոնը, Մակալը՝ որպես էջմիածնին ենթակա գաղթօջախներ¹:

XVIII դ. վերջից մեզ են հասել մի քանի հետաքրքիր վավերագրեր չինաբնակ հայերի մասին: Դրանք էջմիածին ուղարկած գեկուցագրեր են՝ Չինաստանում ապրող մի քանի հայերի կտակների մասին: Դրանցից մեկը կանտոնաբնակ գանձակեցի Մնացական Ղասապյանի կտակի մասին է. հայրենիքից հեռացած և օտարության մեջ հարստացած գանձակեցին խոշոր մի գումար է կտակել իր Հայրենի երկրին²: Մի այլ գեկուցագրում խոսվում է չինաբնակ Հովհաննես Մաթևոսյանի մասին, որը 80 000 բուլպի է կտակել որ նախիջևնին: Հիշվում են մի քանի այլ կտակներ ևս:

Տեղեկություններ կան, որ XVIII դարի վերջին չինահայ վաճառականները սկսել են հալածվել տեղում հաստատված անգլիացիների կողմից: 1783 թվականին Կանտոնի հայերը ենթարկվել են վոլոպուտի: Նման պայմաններում, բնականաբար, հայերի ազատապրելու և գործելու պայմանները նեղանում էին: Այդ է պատճառը, որ նրանցից շատերը տեղափոխվում էին Մակաո, Սինգապուր և այլ վայրեր:

XIX դ. սկզբին նոր իրադրության մեջ, Հնդկաստանից և նրա հարևան երկրներից հայ գաղթականության նոր հոսք է սկսում զեպի Չինաստան: Դրանք գլխավորապես այդ երկրների շուկաներից դուրս մղված և նոր շուկաներ փնտրող հայ առևտրականներից չեն հիմնում, այլ միայն էին: Նրանք այստեղ էլ նոր գաղթօջախներ չեն հիմնում, այլ միայն փարմացնում, աշխուժացնում էին հները: Նոր շրջանում հայ գաղթօջախների աշխարհագրական քարտեզը մնաց անփոփոխ:

¹ Սիմեոն կաթ. Երևանցի, Ջամբո, էջ 48:

² Դիան հայոց պատմության, գիրք VII, էջ 312:

Չինական հայ համայնքները, գրեթե առանց բացառության, զբաղվում էին առևտրով: Նրանք հիմնականում գործում էին երկրից արտահանվող առևտրի շրջանակներում: Հազվագյուտ դեպքերում էին հայերը մտնում երկրի ներքին առևտրի մեջ:

Հայ առևտրականները Չինաստանում գործում էին իրարից անկախ և անմիաբան: Այս բացասական երևույթը նկատողության է արժանացել Քաղիադյանի կողմից. «Եթե շինաբնակ հայերը, — գրում է Քաղիադյանը, — ամենեքին միաբանէին ի մի տուն և յընկերութիւն և զամենայն գործառութիւն սիրով և խորհրդով կատարէին, անշուշտ համարեմք, որ զկնի քանի ամաց հայկազեանց ընկերութիւն ի Չին գերեւելի տեղին գտանի ի մէջ ամենայն վաճառականից Կանթոնոյ...»¹:

Առևտրականների այս պաստառի վրա երևացող միակ հայ աչքի ընկնող մտավորականը, որը հայտնի է եղել Չինաստանում իր լուսավորչական գործերով, դա Կանտոնում ծնված և կրթված, շինարեն լեզվի ուսուցիչ և շինարենից՝ եվրոպական լեզուներ և հակառակը թարգմանություններ կատարող Հովհաննես Ղազարյանն է: Նա է անգլերենից շինարեն թարգմանել Աստվածաշունչը՝ որի մի մասը հրատարակվել է Սերամփուրում: Ըստ շինագետ գիտնականների վկայության, այդ՝ Աստվածաշնչի առաջին և լավագույն թարգմանությունն է շինարեն²:

XIX դարի առաջին կեսում շինահայ գաղթօջախները դեռ պահպանում էին իրենց գոյությունը: Սինգապուրում հրատարակվող «Ուսումնասերը» խոսելով շինահայ վաճառականների մասին, նշում է, որ Կանտոնում կան «երևելի գործարաններ», որոնք կառուցվել են հայերի ջանքերով: Տեղեկություններ կան Կանտոնում հայ առևտրական տների հիմնած բանկի մասին³:

XIX դարի վերջի շինահայ գաղութները սկսել են նվազել: Չինաստանի քաղաքներում փոքրաթիվ հայեր էին մնացել, որոնք մայրենի լեզուն չմոռանալու համար իրենց երեխաներին ուղարկում էին Սինգապուր՝ հայ քահանայի մոտ՝ հայերեն սովորելու համար:

Հեռավոր արևելյան երկաթուղու կառուցումից հետո Մերձամուրյան շրջաններն սկսեցին շարժվել Միջին Ասիայում բնակվող բազմազգ և բազմալեզու գաղթականական զանգվածներ: Այս նոր

¹ «Ազգասեր Արարատեան», 1850, հ. II, էջ 390:

² «Սիոն», 1959, էջ 276:

³ «Արարատ», 1872, էջ 134:

և անծանոթ շրջանները հետաքրքրում էին նաև հայերին: Ռուսաստանի արևելյան շրջաններում և Միջին Ասիայում ապրող որոշ թվով հայեր տեղափոխվեցին այս շրջանները: Նրանք վլադիվոստոկով անցնում էին Մանջուրիա և իջնում Չինաստանի արևելյան շրջաններում: Հակառակ երկրի հարավի հայ գաղթօջախների բնակչության, որոնք գերազանցապես նորջուղայեցիներ էին, այստեղի հայ գաղթօջախները, գրեթե առանց բացառության, բաղկացած էին դարաբաղցիներից և զանգեզուրցիներից:

Չինաստանի այս մասերում նրանք հաստատվում էին գլխավորապես Մուկդենում, Խարբինում, Չանչունում, Դայրենում, Շանհայում և այլ քաղաքներում:

Այստեղ արդեն հայ բնակչության սոցիալական կազմը, հակառակ հարավի գաղթօջախների, տարբեր էր. բնակչության հիմնական մասը՝ արհեստավորներ էին, ինժեներներ, բժիշկներ, փաստաբաններ, երկրաչափներ և այլ մասնագիտության տեր մարդիկ:

Ժամանակակիցների վկայությամբ, հատկապես մեծ հեղինակություն էին վայելում բժիշկները: Նրանցից մեկը՝ Ստեփան Մուդկոնյանը, Խարբինի առողջապահության ղեկավարն է հանդիսացել:

Չինաստանի այս շրջաններում, հատկապես Մանջուրիայի քաղաքներում, հայերը բարեկեցիկ վիճակ ունեին, ուստի նրանք նամակներով հորդորում էին իրենց հայրենակիցներին՝ թուրքիայից և Պարսկաստանից տեղափոխվել Մանժուրիա:

Չինաստանում ամենից հայաշատ քաղաքը այս շրջանում Խարբինն էր: Այստեղ ապրող հայերի թիվը անցնում էր մի քանի հարյուրից:

Խարբինի հայերը համայնքի ներքին կյանքում առաջնորդվում էին իրենց իսկ մշակած «Սահմանադրությամբ»: Այդ «Սահմանադրությամբ» էին առաջնորդվում Չինաստանի հյուսիս-արևելքի գրեթե բոլոր հայ գաղթավայրերը: Դժբախտաբար, ուսումնասիրողներից և ոչ մեկին հայտնի չէ այդ «Սահմանադրության» բովանդակությունը: Հավանական է, այն փոխառնված լինի Չինաստանի ռուսական գաղթօջախների ներքին «Սահմանադրություններից», քանի որ հայերը Չինաստանում շատ սերտ փոխհարաբերությունների մեջ էին ռուսների հետ, և ապրում էին նրանց հետ կողք-կողքի:

1937 թ. Չինաստան հովվական այցի զննցած Ա. Վ. Ղազարյանի վկայությամբ, Խարբինահայերը համայնքի ազգային կյանքը ապահովելու համար կազմել էին «Արծիվ» հայրենասիրական

կան միությունը: Երկար ժամանակ բավականին ժրաջան այստեղ գործում էր «Հայ երիտասարդական ակումբը» և «Հայ տիկնանց միությունը»: Նրանք ունեին ժողովատեղի, ուր հաճախ հավաքվում էին, կազմակերպում երեկույթներ: Հայերն իրենց հավաքույթները շատ հաճախ անց էին կացնում տեղի ուսական համայնքի հետ: Խարբինի հայ համայնքները դպրոց չեն ունեցել, սակայն աշխատել են մասնավոր դասերով, երեկոյան ընթերցանությունների միջոցով երիտասարդությանը թույլ շտալ մոռանալ մայրենի լեզուն¹:

Խարբինի հայ բնակչության թվի մասին տեղեկություններ չունենք: Կարելի է ենթադրել, որ նրանք բավականին շատ պետք է եղած լինեն, որ եկեղեցի կառուցելու հարկ լիներ: Նրանց թվական մեծության մասին է խոսում այն փաստը, որ էջմիածնից մի քանի անգամ նվիրակություններ են գնացել նրանց այցի: Խարբինի, ինչպես և շինական մյուս քաղաքների հայ բնակչության շատության մասին է խոսում նաև այն փաստը, որ փորձեր են եղել այնտեղ թեմակալություն ստեղծել, որն ինչ-ինչ պատճառով չի հաջողվել և Խարբինը ու նրա հարևան հայաշատ քաղաքները կրցվել են Աստրախանի թեմին: Ուշ շրջանի տեղեկություններով, 1937 թ. Խարբինի հայերի թիվը անցնում էր 200-ից:

Խարբինից հետո, իր մեծությամբ եղել է Շանհայի հայ գաղթօջախը: Հին շրջանի մասին մանրամասնություններ չունենք: Ղազարյանի հաղորդած տեղեկության համաձայն, հայերի թիվն այստեղ անցնում է 200-ից: Հետագայում այդ թիվը հասավ 600-ի:

Գաղթօջախի սոցիալական կազմի մասին մանրամասնություններ չգիտենք, բայց եղած կցկտուր տեղեկություններից երևում է, որ այստեղ էլ հայերի մեծ մասը արհեստավորներ և մասնագետներ էին: Հայերն այստեղ հիմնել են իրենց բանկը: Շանհայաբնակ Հայկ Ասատրյանին է պատկանել քաղաքի ստադիոնը: 1931 թ. կազմակերպվել է «Հայ երիտասարդական միությունը» և այլն:

Շանհայում հայերը չունեին առանձին եկեղեցի և գերեզմանոց: Նրանք իրենց հոգևոր պետքերը հոգում էին ուսական եկեղեցում և մահացածներին թաղում ուսական գերեզմանոցում: Երբեմն շանհայաբնակ հայերին այցի էին գալիս Խարբինի կամ Վլադիվոստոկի հայոց եկեղեցիների հովիվները:

Հայերն այստեղ էլ չունեին դպրոց և ընթերցարան: Չնայած դրան, նրանք, գրեթե առանց բացառության, գիտեին մայրենի

լեզուն, բոլոր ընտանիքներն էլ հայախոս էին: Նրանք մի շարք թերթեր էին ստանում Ռուսաստանից, Եվրոպայից, Ամերիկայից և Եգիպտոսից: Շանհայում կար «Հայոց տուն», ուր զանազան առիթներով հավաքվում էին հայերը:

Հայկական փոքրիկ գաղթօջախներ կային Չանչունում, Ցինդաոյում, Տյանցզինում, Թենչենում, Ռայլինում: Այդ վայրերի հայերը, գրեթե առանց բացառության, զբաղվում էին քաղցրավենիքներ և հացա-բուլկեղեն պատրաստելով և վաճառականությամբ:

Ճապոնական զավթումների ժամանակ Չինաստանի գաղթօջախները մեծապես տուժեցին: Հայերը համարվեցին ճապոնական կայսրության թշնամիներ և մեկուսացվեցին: Նրանց մեծ մասը զոհ գնաց համակենտրոնացման ճամբարներում: Ճապոնական իշխանությունների կարգադրությամբ, հայերը և ուսներն իրենց թևին կրում էին «Տ» տառանիշը, որպես անվստահելի մարդկանց:

Չինահայ գաղութների հետագա բախտի մասին, դժբախտաբար, հավաստի տեղեկություններ չունենք: Կողմնակի աղբյուրներից իմանում ենք միայն, որ աննշան թվով հայեր կան այնտեղ: Նրանց մեծ մասը 50-ական թվականներին գաղթել են Ավստրալիա, Մալայան և Տիլիպինյան կղզիներ:

¹ «Սին», 1937, էջ 291:

XXII. ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆ

Հինգերորդ աշխարհամասը հայերին սկսել է հետաքրքրել միայն XIX դարի 50-ական թվականներից:

Արևելքի, հատկապես Հեռավոր Արևելքի երբեմնի հայ առևտրական ընկերությունների մեծ մասը թեև բավականին թուլացել էր, թեև նրանց մի մասը անկարող էր դիմանալու զենքով ու զորքով հաճախ առևտրական գործարքներ կատարող Արևմտաեվրոպական և Արևելա-հնդկական ընկերությունների անհավասար մրցությանը, այնուհանդերձ դեռ մնում էր լուրջ մրցակցի դերում:

Հայերին արևելքի առևտրական շուկաներից վերջնականապես դուրս մղելու համար 1850 թվականին եվրոպական ընկերությունները, անգլիացիների նախաձեռնությամբ, կնքեցին մի նոր գաղտնի պայմանագիր՝ բոլորի կենթարկելու հայկական ընկերությունների ապրանքների փոխադրումը իրենց նավերով: Եթե առաջ հայկական ապրանքներ հրաժարվում էին փոխադրել միայն անգլիական ընկերությունների նավերը, ապա նրանց միացան մյուս երկրների ընկերությունները: Ծիշտ է, գոյություն ունեին հայ առևտրականների նավեր, ինչպես սեփական, այնպես էլ վարձած, բայց նրանք չափազանց քիչ էին այն գործարքների համար, որ ձեռնարկում էին հայերը:

Շատ հայերի համար, որոնք բնակվում էին Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Սինգապուրում և այլուր, նոր բարձրացող Ավստրալիան և հատկապես Մելբուռնի մոտ հայտնաբերված ոսկու հարուստ հանքավայրերը հույսի և բախտի խաբուսիկ փարոս դարձան: Բազմաթիվ հայեր սկսեցին մեկնել Ավստրալիա և ցրվել նրա քաղաքներով և գյուղերով մեկ:

Սկզբնական շրջանում գաղթած և Ավստրալիայում հաստատված բազմաթիվ հայեր կորել են «դեղին սատանայի տենդում»՝ հետք իսկ չթողնելով: Բայց դա չխանգարեց, որ դեպի Ավստրալիա գնացած ջուղայեցի առաջին անդարձ ճամփորդներին հետևեին արևմտահայերի ու ռուսահայերի նոր հոսանքներ և առատ զոհերի ու կորուստների գնով ստեղծեին առաջին գաղթօջախները Ավստրալիայում:

Ավստրալիայում բնակություն հաստատած առաջին հայերից էր Մելբուռն Մանուկ նորջուղայեցին: Նրան, իր իսկ վկայությամբ, այնտեղ էր բերել երկրի «ոսկեփայլ համբավը»: Մելբուռն Մանուկին հետևել են բազմաթիվ հայեր, դարձյալ շլացած ոսկու փայլից: Սակայն այս բազմաթիվներից անհատների անունը իսկ չի մնացել¹:

Արևելքի, հատկապես Հնդկաստանի և նրա հարևան երկրներից հայերի գաղթը Ավստրալիա շատագուցում էր Սինգապուրի «Ուսումնասերի» խմբագիր Գ. Դ. Գալստյանը: Այդ նպատակով նա հողվածներ է տպում նոր «Ավետյաց երկրի» մասին:

Իր ասածին որպես հաստատում, «Ուսումնասերի» խմբագիրը հրատարակում է Պորտ Ֆիլիպպից ստացված իր մի հայրենակցի նամակը, որը կարճ ժամանակում հարստացել է: Նա Զուղայից ու այլ վայրերից եկած և անգործ մնացած հայրենակիցներին կոչ է անում անհապաղ մեկնել Ավստրալիա, շհավատալ «փսփսացող» թերահավատներին: Նա իր կոչը ուղղում է նաև մեծահարուստներին: Գալստյանը խորհուրդ է տալիս, որ Կալկաթայի հայերը միանան և ընկերություն ստեղծեն՝ հավատացնելով, որ Ավստրալիայում նրանք հուսախաբ չեն լինի: Իր ասածներին որպես ապացույց, նա դարձյալ քաղվածքներ է բերում Մելբուռն Մանուկի նամակից, ուր խոսվում է այն մասին, որ Սիդնեյ եկողները միշտ կարող են աշխատանք գտնել, որ ամեն օր Ամերիկայից և Եվրոպայից եկող հազարավոր մարդիկ կան: Հենց գալու առաջին իսկ օրը հայ գաղթականներին էլ կարող են աշխատանքով ապահովել: Նա չի մոռանում թվարկել նաև աշխատանքի տեսակները՝ «բուշեք դրստողներ, փուքս փշողներ, շոբաններ» և այլ հասարակ աշխատանքներ, շեշտելով, որ Ավստրալիա գնացողները պետք է լինեն առողջ, հաղթանդամ և դժվարությունների տակացող մարդիկ²:

1 Գրասեռ Երվանդ, «Հայերն յԱվստրալիա», «Արևելք», 29 յուլիսի, 1895 թ.:
2 «Ուսումնասեր», Սինկափոր, 1853, թիվ 90, էջ 359:

Դեպի Ավստրալիա գնալու հորդորանքը անշուշտ ուներ իր պատճառները. Գալստյանը լավ էր տեսնում տնտեսական քայքայման, դեպի անկում գնացող հայ վաճառականության վիճակը: Նա մի կողմից ուզում էր իր հայրենակից մեծահարուստներին տնտեսական նոր շուկաներ գտնելու ուղիներ ցույց տալ, մյուս կողմից՝ աշխատանքով ապահովել նոր-Ջուղայից և Պարսկաստանից հնդկական քաղաքները լցված և հայկական աղքատանոցների վրա ժանրացած իր հայրենակիցներին:

Թե ինչ ազդեցություն են գործել Գալստյանի հողվածները Հրնդկաստանում և նրա հարևան հայ գաղթօջախներում «Ուսումնասեբ»-ը կարդացողների վրա, չգիտենք: Հավանաբար, սկզբնական շրջանում քիչ չեն եղել դյուրահավատներ, այլ կերպ չէր կարող Գալստյանը Թուրքիայից Ավստրալիա գնացող հայերի մասին նյութեր հրատարակել, իսկ իր շրջապատից գնացողների մասին՝ ոչ:

Վերջ ի վերջո, հենց ինքը՝ խմբագիրը, իր հայտարարության համաձայն, ելնելով «ազգի» շահերից, դիմում է շատ վճռական քայլի. փակում է իր վիմագարանը, դադարեցնում է թերթի հրատարակումը և ի «սէր ազգիս և յառաջագիմովեան նորին», գնում Ավստրալիա: «Ուսումնասերի» խմբագրի վերջին հողվածը վերջանում է հետևյալ խոսքերով. «Միրեմք մեք զազգ մեր և ի սրտէ ցանկանամք զբարօրութեան նորին... և մեծամեծ օգտեաց վասն մերոցն սիրեցեալ ազգին փութամք ելանել աստի առ Մելբուռն»¹:

Վիմագարանը Գալստյանն իր հետ Ավստրալիա շտարավ: Դա նա բացատրում է նրանով, որ ինքը չի ուզում մշտական մնալ Ավստրալիայում, քանի որ հարստանալուց հետո նպատակ ունի վերադառնալ և շարունակել իր գործը:

Այդ էր Ավստրալիա մեկնող հայերի մեծամասնության նպատակը: Ավստրալիա հասնող հայերը շատ շծավավեցին, շարժատավորվեցին: Եթե որոշ թվով մարդկանց, իրոք, բախտը ժպտաց և որոշ դրամ չարքաշ աշխատանքով ձեռք բերելով վերադարձան, բայց մեծ մասին այլ բախտ վիճակվեց: Անցյալ դարի ինսունական թվականներին Ավստրալիա այցելած և հայ գաղթականության պատմությունը ուսումնասիրած գրասեր Երվանդը հետևյալն է գրում նրանց մասին. «Բայց ցավ ի սրտե ըսել է թե կարծես դժբախտութիւնը յուրեանց անբաժանելի ընկերը կլինի, և բաց ի փորբամասնութենն մը անհաջող կելնե. հանքագործն ուր որ բահը

¹ Նույն տեղում:

զարնե ոսկիի փոխարեն՝ հող ու մոխիր և առևտրականն ալ իր գործունեության մեջ վնաս և սնանկություն գտնելով»¹:

Դա էր անշուշտ հիմնական այն պատճառը, որ հայ համայնքների անդամների թիվը չէր մեծանում, սղածներն էլ հիմնականում տղամարդիկ էին: 1891 թվականի մի վիճակագրության համաձայն, հայերի թիվը չէր անցնում մի քանի տասնյակից: Նրանք հիմնականում ապրում էին Մելբուռն, Բրենգտոն, Սիդնեյ, Բրիսբեն, Բրոկեն-Հոլլ և այլ քաղաքներում²:

Կան առանձին տեղեկություններ, որ եղել են հայ գաղթականներ, որոնք ապրել են գյուղերում, զբաղվել են հողագործությամբ: Նրանց մասին, դժբախտաբար, սրանից բացի, ավելի ոչինչ չգիտենք:

Այս շրջանի Ավստրալիայի հայ գաղթօջախների անդամներից հայտնի են երկու դեմքեր, որոնք երկուսն էլ իրենց բազմաթիվ հայրենակիցների նման ողբերգական վախճան են ունեցել: Դրանցից առաջինը՝ Հակոբ Տեր-Մինասյանն էր՝ Բալակլավայի ճակատամարտի հերոսը, բազմաթիվ եվրոպական և արևելյան լեզուների թարգմանիչը, միջազգային դիվանագիտական բանակցությունների ժամանակ «գորավարների ընկերը»:

Տեր-Մինասյանին էլ այս հեռուներն էր բերել հարստանալու ձգտումը: Մեծ հայրենասերը նպատակ էր դրել Եվրոպայում ըստեղծել ազատ հայկական տպարան և հրատարակել հայրենասիրական ժողովրդա-ազատագրական պայքարի կոչ անող թերթ և գրականություն ընդդեմ Թուրքիայի: Սկզբում մեծ հաջողությունների հասավ և հայտնի դառավ ո՛չ միայն հայկական համայնքներում, այլ նաև տեղացիների մոտ, բայց վերջում Տեր-Մինասյանը 72 տարեկան հասակում մահացավ կարիքի և մոռացության մեջ՝ հնահավաքին թողնելով եվրոպական պետություններից ստացած իր շքանշանները և հրովարտակները:

Դժբախտ զոհերից մեկն է Գրիգոր Դավթի Գալստյանը՝ «Ուսումնասեր»-ի խմբագիրը: Չնայած Գալստյանը Մելբուռն էր հասել մյուս իր հայրենակիցների պես ոչ դատարկ գրպանով և իր հետ տարած դրամագլխով բավականին հաջող գործ էր սկսել, «Բայց իր ձեռնարկներն Ավստրալիայի հրապարակին քննադատելի կացությանց պատճառով անհաջողությամբ կվնասեին և հա-

¹ «Արևիկ», 1895, 29 յունիսի, 1895 թ.:

² ՀՍՍՀ ԳԱ ՊԻ արխիվ, գործ 63, Ավստրալիա, էջ 2:

վելումն դժբախտությանց հիվանդություն ալ վրա կհասնի, զո՛հ մի
ևս կգլորվի Ավստրալիայի հայ բախտախնդիրներու...»¹։

Երվանդունին տվել է մի շարք այլ զոհերի անուններ։ Նրանք
մեծ մասամբ բանվորներ են, բեռնակիրներ, հանքավայրերում
աշխատողներ։ Խոսելով այդ դժբախտների մասին, հողավածագիրը
շեշտում է, որ նրանք մեծ մասամբ առողջ, հսկա մարդիկ էին։
«Թող այդ մահերը արտասովոր չթվա,— ասում է նա իր ընթեր-
ցողներին,— փորձեք պանդխտել դեպի օտար հորիզոններ, կիմա-
նաք այդքան կորուստների պատճառը»²։

Ավստրալիայի հայ գաղթականների վիճակը սկզբնական շր-
ջանում գովական չի եղել նաև մի այլ պատճառով։ Ինչպես բոլոր
օտարներին, այնպես էլ հայերին տեղացիներն ընդունել են ոչ բա-
րեկամաբար։ Նրանք ամեն մի նոր եկող հայի մեջ տեսնում էին
մի նոր մրցակցի, մի նոր գանձ փնտրողի, այդ պատճառով էլ
նրանց վերաբերմունքը հասնում էր թշնամանքի։ Գա է հիմնական
պատճառը, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ավստրալիա-
յում հայ գաղթօջախների վիճակը կայուն չէր։ Դեպի Ավստրալիա
եկող նոր գաղթականական խմբերը չէին կարողանում կայուն դար-
ձրնել և ստվարացնել գաղթօջախներն այն պատճառով, որ նախ-
կինում եկած «բազմաթիվ գաղթականներ ալ հուսահատված կվե-
րադառնային»³։

Անհաջողության հանդիպելով հանքավայրերում և փոքր քա-
ղաքներում, հայերը սկսեցին հաստատվել խոշոր քաղաքներում,
առաջին հերթին՝ Մելբուռնում և Ադելայդայում։ Նրանց հիմնական
զբաղմունքը մանր առևտուրն ու արհեստն էր, կային նաև նավաս-
տիներ, նավերի վրա աշխատող հնոցապաններ և այլն⁴։

Այսպես շարունակվեց վիճակը Ավստրալիայի հայ գաղթօջախ-
ներում մինչև համաշխարհային առաջին պատերազմը։

Սուլթանական Թուրքիայի կողմից հայ ժողովրդի մասսայա-
կան բնաջնջման մահաշունչ լուրը, հասավ նաև հինգերորդ աշխար-
համաս։ Այստեղ բնավորված մի բուռ հայերը ցնցվեցին իրենց
հայրենակիցների և հարազատների զխիսն պատահած աղետից։
Նրանց առաջին գործն այն եղավ, որ աշխատեցին այս հեռու-
հեռաստաններից օգնության հնարավոր ձեռք պարզել ջարդերից

1 «Արևելք», 10 օգոստ., 1895։

2 Երվանդունի, Ավստրալիա և հայք, «Արմենիա», 1891, № 76։

3 «Արևելք», 29 յուլիսի, 1895 թ.։

4 «Արևելք», 18 օգոստ., 1895 թ.։

փրկված որբ, անօգնական, անտուն ու անհայրենիք փախստա-
կաններին։ Գաղութի միջոցներն անշուշտ աննշան էին, հարկավոր
էր ավելի գործնական քայլի դիմել։

Հայկական համայնքի խնդրանքով, գաղութի աչքի ընկնող
ներկայացուցիչներից մեկը՝ Տ. Պալաքյանը, համայնքի անունից
դիմում է կառավարությանը՝ խնդրելով անարձագանք չմնալ հայ
աղետյալների օգնության կանչին։ Տեղական իշխանությունները,
որոնք կարոտ էին աշխատանքային ձեռքերի, Պալաքյանի միջո-
ցով փորձեցին հայերին հրավիրել Ավստրալիա՝ խոստանալով
ամեն տեսակ բարիքներ։ Սակայն հեռատես Պալաքյանը լավ
հասկանալով, որ Ավստրալիա գալով հայ գաղթականները կցրը-
վեն երկրով մեկ և կկտրվեն հայրենիքի հետ կապի բոլոր թելերից
ու կկորչեն, կձուլվեն¹, հրաժարվեց այդ գործին ընթացք տալուց։

Չնայած հայերի այնքան կտրուկ հրաժարմանը՝ գաղթական-
ներ բերելու, Մելբուռնի տեղական իշխանությունները ի նպաստ
հայ աղետյալների կազմեցին օգնության կոմիտե։ Շնորհիվ ավըս-
տրալաբնակ հայերի ակտիվ մասնակցության, կոմիտեն առաջին
խսկ նվազին հավաքեց 2500 անգլիական ոսկի՝ հայերին օգնելու
համար։ Այնքան մեծ էր առաջին օրվա հաջողությունն ու ոգևորու-
թյունը, որ որոշում ընդունվեց հայերին օգնելու համար հատկաց-
նել մի օր ևս։ Նման օրինակով գումարներ հավաքվեցին նաև Ավս-
տրալիայի մյուս հայաշատ քաղաքներում։ Բոլոր տեղերում հան-
գանակությանը, հայերից բացի, մասնակցում էին շատ տեղացի-
ներ ևս²։

Տ. Պալաքյանը 1915 թ. կարողանում է ստանալ տեղական
իշխանությունների որոշումը, որ այն հայերը, որոնք թեև թուր-
քահպատակ են, բայց թշնամի չեն դիտվի Ավստրալիայում, եթե
գալու լինեն։

Ավստրալիայի հայ գաղթօջախի ներկայացուցիչները այս
բոլորի մասին տեղյակ պահելով էջմիածնին, խնդրել են նրա կա-
թողիկոսից, որ նա օրհնության թղթեր և կոնդակներ ուղարկի
Ավստրալիայի բոլոր պետական այն անձնավորություններին,
լրագրերին և կազմակերպություններին, որոնք շարունակում են
«սպաս դնել ի նպաստ հայոց»³։

Այնուհանդերձ, առանց հրավերի սպասելու, երկրագնդի հինգ-

1 Գ. եպ. Փղատեան, Ավստրալիոյ հայերը (տե՛ս «Արև», 17 մայիսի, 1953)։

2 «Ավստրալիա և Հայաստան», «Արարատ», 1917, էջ 635։

3 «Արարատ», 1917 թ., էջ 636։

երորդ աշխարհամասն էլ հասան հայ գաղթականների զարկված քարավանի փոքրիկ խմբերը: Նրանց ընդունեցին ավստրալահայերը և տեղավորեցին Ադելաիդայում, Մելբուռնում, Սիդնեյում և մյուս հայաշատ քաղաքներում: Գաղթականների նոր խմբերը մեծ մասամբ զբաղվում էին արհեստներով, կային նաև փոքր թվով վաճառականներ և երկրագործներ:

Քսանական թվականների սկզբին Ավստրալիա եկան նոր գաղթականների փոքրիկ խմբեր Հունաստանից և Ռուսաստանից:

Կարճ ժամանակ անց, նրանցից ոմանք կարողացան ստեղծել ոչ միայն բարեկեցիկ կյանք, այլ սկսեցին մյուս հայ գաղթօջախների իրենց հայրենակիցների նման աչքառու դեր խաղալ հատկապես արհեստի և առևտրի բնագավառում:

Այդ թվականներին Ավստրալիայում կային այնպիսի հայեր, որ ճանաչվում էին երկրի շրջանակներից դուրս: Նմաններից էր Մելբուռնի համալսարանի ուսուցչապետ պրոֆեսոր Գարազաշյանը:

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի վերջերք, դեռ ավելին՝ մինչև դարի հիսնական թվականները, հայերը զանգվածաբար դեռ չէին գաղթել Ավստրալիա: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ավստրալիայի հայ գաղթօջախները հավաքական և համայնական կյանք չեն ունեցել: Ավստրալիայի հայ գաղթօջախներում չեն եղել նաև դպրոցներ, հասարակական կազմակերպություններ, մամուլ և այլն և ոչ էլ եղել են ցանկություններ և ձգտումներ դրանք ստեղծելու:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ելնելով տընտեսական և քաղաքական պայմաններից, բազմաթիվ հայեր Զինաստանից, Սինգապուրից, Ինդոնեզիայից և հեռավորարևելյան այլ երկրներից սկսեցին գաղթել Ավստրալիա:

Եկողների այս խմբերի մեջ, ճիշտ է, չկային առևտրականներ և արհեստավորներ, բայց նրանք նման էլ չէին 15—20-ական թվականների գաղթականներին: Սրանց մեծ մասը մի քանի լեզուներ գիտցող, զանազան մասնագիտությունների տեր և բանիմաց մարդիկ էին արդեն, անցած բազմաթիվ փորձություններից: Շուտով նրանց թիվը այնքան ավելացավ, որ Սիդնեյում հարկ եղավ ստեղծելու համայնքների ներքին կյանքի վրա վերահսկող եկեղեցական խորհուրդ (թեև առանց եկեղեցու), որն անպայման հաստատվում է տեղական իշխանությունների կողմից: Հայոց համայնական խորհուրդն ուներ նաև համառոտ կանոնադրություն, որով առաջնորդվում էին: Կանոնադրությունը՝ մայրենի լեզուն մոռացած հայերի համար թարգմանվել է անգլերեն:

Դժբախտաբար, այսօրվա ավստրալահայ գաղթօջախների մասին քիչ բան գիտենք: Նրանք, հիմնականում, գտնվում են Մելբուռնում, Ադելաիդայում, Սիդնեյում: Այս երեք խոշոր հայ գաղթօջախներից դուրս հայեր են ապրում նաև մի քանի փոքր քաղաքներում: Սիդնեյում գնել են պատրաստի եկեղեցի, ունեն եկեղեցական խորհուրդ, առաջնորդվում են 1958 թ. Փոլադյանի պատրաստած քառասուն կեսից բաղկացած կանոնադրությամբ, ունեն «Լույս» անունով թերթ:

«Նոր Ազգարար»-ը 1953—54 թթ. ավստրալահայության թիվը հաշվում է 500¹, Փոլադյանը՝ մոտ 1000², «Էշմիածնի» թղթակիցը՝ մոտ 1500³: Հիմա, անշուշտ, նրանց թիվը հասել է մի քանի հազարի:

1950-ական թվականի սկզբներին Ավստրալիա հովվական այցելություն գնացած Ասողիկ վարդ. Ղազարյանը գրում է. «Ավստրալիայի հայ գաղութը մեծանալուն ճամփուն վրա է: Կուզան ամեն կողմե, Եվրոպայի զանազան կողմերեն, Սյուրիայեն, Լիբանանեն, Կիպրոսեն, Եգիպտոսեն, Հնդկաստանեն, Ճավայեն, Զինաստանեն...»: Այո՛, ի ցավ սրտի պետք է նշել, որ գնալով ավելանում է հայ գաղթականների հոսանքը տարբեր գաղթավայրերից դեպի Ավստրալիա: Հարյուրավոր հայ ընտանիքներ գնում են Ավստրալիա, հազարավոր մղոններով ավելի հեռանում հայրենի երկրից⁴: Չնայած Ավստրալիայում բնավորված հայերը հաստատում են ահումբներ՝ նպատակ ունենալով հայերին հեռու պահել ձուլումից, ամեն կերպ աշխատում են պահպանել իրենց ինքնուրույնությունը, սակայն «ամեն կերպն» էլ շուտ կամ ուշ իր վախճանն ունի և անկարելի է դիմադրել ձուլման սպառնալիքին: Հենց այդ են վկայում Ավստրալիա գաղթած հայերի նամակները, որոնք հաճախ տպագրվում են արտասահմանի հայկական պարբերականներում⁵:

1 «Նոր Ազգարար», 1954 թ., թիվ 12—13, էջ 42:

2 «Արև» 28, 29 հունիսի, 1, 16. օգոստոսի 1958 թ.:

3 «Էշմիածնի», 1957 թ., № 12, էջ 53:

4 «Սիոն», 1935, էջ 92:

5 Նույն տեղը, էջ 169:

XXIII. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆ

Առաջին տեղեկությունները Ամերիկայում գտնվող հայերի մասին:

Ե՞րբ է հայ մարդն առաջին անգամ ոտք դրել Նոր աշխարհի՝ Ամերիկայի հողի վրա, և ո՞վ է եղել այդ անձնավորությունը, դժվար է ասել, քանի որ մինչև 1820 թվականը սովորություն չի եղել Ամերիկա եկող օտարազգի գաղթականին արձանագրել իր իսկական անունով (բոլոր անսովոր անունները այն ժամանակ փոխել և գրի են առել անգլիական անունների տարբերակներով), ուստի դժվար է գաղթականական ցուցակներում փնտրել որևէ գաղթականի ազգային պատկանելությունը: Հայտնի է միայն, որ 1618 թվականին Ամերիկա եկող առաջին հայ գաղթականներից մեկը, որի անունը պաշտոնապես արձանագրվել է Ամերիկայի Վերջինիա նահանգի գաղթականական ցուցակներում և որի ազգային պատկանելությունը նշվել է, հանդիսացել է հայազգի Ջոն Մարտինը («Jon Martin the Armenian»): Նա հայ գրականության մեջ հայտնի է Հովհաննես Մարտիկյան կամ Հովհաննես Մարտիրոսյան անունով:

Ջոն Մարտինը, ըստ տեղեկությունների, զինվորական է եղել, ունեցել է կապիտանի կոչում և Ամերիկա գալուց առաջ եղել է Արևմտյան Եվրոպայի մի քանի երկրներում՝ ինչպես ստանում, Հոլանդիայում ու Անգլիայում: Նա Ամերիկա է եկել իբրև կոնզոնի Ջեյմս-Քաուն գաղութի անդամ և գաղթականական ցուցակում արձանագրվել է որպես 95 արկ վարելահող ունեցող հողատեր¹: Ընթացիկություններ կան, որ Ջոն Մարտինը Ամերիկա է հրավիր-

¹ The Record of Verginia Company of London, 4. III, 86. (օգտվել ենք Մանկունուց):

վել մի ամերիկացու կողմից՝ ծխախոտագործությունը զարգացնելու նպատակով:

Հաջորդ տեղեկությունը Ամերիկա եկող հայ մարդկանց մասին վերաբերվում է երկու պոլսահայ շերամապահների, որոնք Ամերիկա են եկել 1653—1654 թվականներին: Այս երկու շերամապահներին Պոլսից Ամերիկա է հրավիրել Վիրջինիայի կառավարիչ Էդվարդ Դիքսը՝ ցանկություն ունենալով զարգացնել շերամապահությունը Ամերիկայում: Ըստ տեղեկությունների, հայ շերամապահները սկզբում հաջողություն չեն ունեցել և ուզեցել են անգամ ետ վերադառնալ, սակայն Դիքսը և Վիրջինիայի մի քանի ազգեցիկ ու մեծահարուստ մարդիկ, նրանց աշխատանքը խրախուսելու նպատակով, նվերներ են տվել և պահել իրենց մոտ: Հայ շերամապահներին վերջի վերջո հաջողվել է թթենիներ տրնկել տալ և շերամապահական մեծ տնտեսություն ստեղծել: Վիրջինիայի պատմության լավագիտակ մասնագետ Էդվարդ Էգլեսթոնը, խոսելով Վերջինիայի շերամապահության սկզբնավորման մասին, գրում է. «Եթե հավատարյու լինենք մեզ հասած տեղեկագրին, Վիրջինիան է մատակարարել Չարլզ առաջինի թագադրության պատմուճանը, իսկ Չարլզ II-ի մետաքսե զգեստը, անտարկուցս, Վիրջինիայում մշակված խոզակներից էին պատրաստվել: Դիքս անունով մի պարոն հայեր բերել տվեց՝ Վիրջինիայի իր խոզակի արտադրությանը հսկելու համար»¹:

ՀՄՄՄ պետական պատմական արխիվում պահված մի վավերագրից երևում է, որ հայ շերամաբույծները Ամերիկայում ստացած իրենց առաջին մետաքսից մի դրոշակ են պատրաստել և նվեր ուղարկել էջմիածին: Հետագայում այդ դրոշակի տեղը հայտնի է դարձել Քուրթիայի ամերիկյան դեսպանին, որը 1898 թվականի հունվարի 16-ին մի գրությամբ դիմել է էջմիածին և խնդրել այդ դրոշակը ուղարկել իրեն՝ Ամերիկա ուղարկելու համար, որպես ազգային հնազույն և պատմական արժեք ներկայացնող կարևոր ցուցանյութ²:

Հայ շերամաբույծներին հետևել են շերամի փորձառու այլ մասնագետներ ևս, որոնք գաղթել են Ամերիկա և գործուն մասնակցություն ունեցել Վիրջինիայում շերամապահությունը հիմնավորելու և զարգացնելու գործում: Մ. Սերոբյանը, իր «Ամերիկայի գաղութի ծագումը» խորագրով հոդվածում, խոսելով Ամերիկա

¹ Eduard Eggleston, The Bigginers Nof ation, p. 78 (օգտվել ենք Մանկունուց):

² ՀՊՊԱ, ֆ. 57, ց. 2, մասն 1, էջ 11:

եկած հայ առաջնեկների և նրանց մատուցած ծառայությունների մասին Ամերիկայի գյուղատնտեսությունը, հետևյալն է գրել. «Սա ստույգ է, թե այդ հայերուն նախաձեռնությունը է, որ առաջին շերամապահությունը տեղի կունենար Վիրջինիայի մեջ, և ամերիկյան առաջին մետաքսը հայերուն ձեռքով Վիրջինիային կարտադրվեր: Ասով է միայն, որ հայ միտքն ու ճարտարությունը կրցած է սատարել իր կազմության խանձարուրին մեջ եղող ամերիկյան ազգին մետաքսագործական ճարտարվեստին մեջ»¹:

Ի դեպ, իր ժամանակին բանաստեղծ Ֆերդերը, Վիրջինիային նվիրած իր մի բանաստեղծության մեջ դրվատելով հայ նորեկ գաղթականների գործունեությունը Ամերիկայում, ողջունել է նրանց գալուստը Ամերիկա, որպես աշխատարար և ստեղծագործող ժողովրդի:

Հարց է առաջանում. Ամերիկա եկող հայ գաղթականության այս առաջին խմբերում, շերամաբույծներից բացի, ուրիշ ի՞նչ զբաղմունքի տեր հայեր են եղել և ո՞ր վայրերից: Ն. Լ. Մանկունին, որ հանգամանորեն ուսումնասիրել է Ամերիկա ժամանած XIX դարի գաղթականական ցուցակները, հետևյալ պատասխանն է տալիս այս հարցերին. «Այս առաջին շրջանի հայերն եղած են շերամի փորձառու վարպետներ և մշակողներ, արհեստավորներ, արվեստագետներ, լրագրողներ, մտավորականներ, ուսանողներ, աշխատավորներ, վաճառականներ և այլ մասնագիտության տեր մարդիկ, որոնք մեկնած են մեծ մասամբ թուրքիո ծովեզրյա քաղաքներին: Սակայն այդ շրջանին որոշ թվով հայեր այլ պանդխտած են Հայաստանի ներքին գավառներին՝ Խարբերդեն, Սեբաստիայեն, Մարզվանեն, Կյուրինեն, Կեսարիայեն, Տիգրանակերտեն, ինչպես և Կիլիկիո շրջանեն՝ Մարաշեն, Այնթափեն և այլն»²:

XIX դարի սկզբներին Ամերիկա են սկսում շարժվել հայ գաղթականական առաջին խմբերը: Նրանց կազմում գտնվել են տարբեր խավերի պատկանող անձնավորություններ. մենք նրանց մեջ տեսնում ենք հատկապես սովորելու գնացող հայ ուսանողների: Ըստ որում, առաջին գաղթականության թիվը մինչև XIX դարի վաթսուական թվականները, այսինքն՝ մինչև քաղաքացիական պատերազմները, աննշան է եղել:

Առաջին հայ գաղթականները հավաքական համայնքներ դեռ

¹ «Ամերիկահայ տարեցույց», 1912, էջ 15:

² Ն. Լ. Մանկունի, «Ամերիկայի գաղութի պատմությունից (տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1962, № 1, էջ 96):

չեն ստեղծել. նրանք Ամերիկայում բնակություն են հաստատել. ցրված ձևով՝ ում գործը որտեղ հաջողվել է:

Առաջին ամերիկահայ մտավորականը, որը փորձել է համախմբել Ամերիկայի հայ բնակչությունը, պաշտպանել նրանց իրավունքները, հանդիսացել է Խաչատուր Ոսկանյանը կամ, ինչպես Ամերիկայում անվանել են նրան՝ Քրիստափոր Օսկանը: Սա շատ հետաքրքիր դեմք է, ուստի ավելորդ չենք համարում նրա մասին փոքր-ինչ ծանոթություն տալ: 1854 թվականին Ոսկանյանը գնացել է Ամերիկա և զբաղվել գրական աշխատանքով: «Նյու-Յորք-Տրիբուն» թերթում անգլերեն լեզվով նա բազմաթիվ հոդվածներ է տպագրել հայ ժողովրդի պատմության, կուլտուրայի, գրականության մասին և հերքել միսիոներների տարածած անհեթեթ լուրերը: Հայ ժողովրդի խեղճության և հետամնացության վերաբերյալ: Նա միաժամանակ «Հայու տղա» ծածկանունով աշխատակցել է Պոլսի «Մասիս» շաբաթաթերթին և աշխատել հայ ընթերցողին ներկայացնել Ամերիկայի ճշմարտացի պատկերը՝ իր լավ և վատ կողմերով: Պաշտոնավարելով ամերիկյան հիմնարկներում՝ կուլտուրիայի համալսարանում գրադարանավարի պաշտոնով, «Մամուլի ակումբում»՝ իբրև անդամ, իսկ որոշ ժամանակ հետո՝ նախագահ, նա մոտիկ կապեր է ստեղծել ամերիկյան բարձր շրջանների հետ և իր այդ ծանոթությունների միջոցով աշխատել օգտակար լինել Ամերիկա եկող հայ գաղթականությանը: Նրա բնակավայրը, ինչպես վկայում են ժամանակակիցները, ժամադրավայր է հանդիսացել ամերիկահայերի համար: Նա յուրատեսակ տեղեկատուի դեր է կատարել հայ գաղթականության համար, շատերին է օգնել աշխատանքի տեղավորվելու, բնակարան ձգելու և այլ գործերում¹:

Ոսկանյանը մեծ աշխատանք է տարել նաև Ամերիկայի հայկական համայնքները կազմակերպելու ուղղությամբ: Նրա, ինչպես և ամերիկահայ մի քանի հայրենասեր մտավորականների նպատակն է եղել Ամերիկայում հիմնել հայկական քաղաք՝ զուտ հայ բնակչությամբ: Այդ գործում նրան մեծ շնորհակցել է Մ. Թոփհանյանը՝ ժամանակին աչքի ընկնող ամերիկահայ հրապարակախոսներից մեկը, որը բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել Պոլսում հրատարակվող «Մանգուլմե»-ում և խրախուսել է հայ բնակչության գաղթը Ամերիկա:

¹ Մ. Սերոբյան, «Ամերիկահայ գաղութի ծագումը (տե՛ս «Ամերիկահայ տարեցույց», 1912, էջ 17):

Հայկական քաղաք ստեղծելու գաղափարն այնքան իրական դործ է համարվել ամերիկահայերի համար, որ նրանք պատրաստել և կառավարության հաստատմանն են ներկայացրել հայկական քաղաքի նախագիծը: Ըստ այդ նախագծի, քաղաքի անունն էր լինելու Նոր Անի: Արևելքից արևմուտք ձգվող նրա փողոցները ևս կրելու էին հայկական քաղաքների անուններ՝ Վան, Մուշ, Զեյթուն, Կարին և այլն: Ամերիկյան կառավարությունը հավանություն չի տվել այդ նախագծին և Ոսկանյանի ու մյուս հայրենասերների ցանկությունը մնացել է իբրև չիրագործված երազանք:

Ամերիկա եկող առաջին հայ գաղթականական խմբերի մեջ եղել են և առանձին հաջողակ անձնավորություններ, որոնցից մեկի մասին ուզում ենք խոսել: Այդ անձնավորությունը հաշատուր Սերոբյան անունով մեկն է, որը փաստորեն առաջին հայ գյուտարարն է եղել Ամերիկայում: Խաշատուր Սերոբյանը Ամերիկա է եկել 1849 թվականին, սկզբում աշխատել է իբրև անասնաբույժ: Հետագայում փոխել է իր մասնագիտությունը և աշխատել է իբրև դեղագործ: Հնարավորություն ունենալով դեղատան մեջ փորձեր դնել, նրան հաջողվել է ստանալ կանաչ գույնի ազնիվ տեսակի մի ներկ, որը հավանության է արժանացել կառավարության կողմից և օգտագործվել թղթագրամ-դոլլարների տպագրության համար: Այդ գյուտը հնարավորություն է տվել կանխելու դրամի կեղծումները: Սերոբյանը, իր այդ գյուտի համար, պարգևատրվել է կառավարության կողմից: Հետագայում նա վաճառել է գյուտի մենաշնորհը և ստացած դրամով մտել ամերիկյան համալսարան, սովորել բժշկություն և մնացել ու աշխատել Ամերիկայում¹:

Ինչպես հայկական մյուս գաղթավայրերում, այնպես և Ամերիկայում հայ գաղթականությունն անտարբեր չի գտնվել տվյալ երկրում տեղի ունեցող հասարակական և քաղաքական իրադարձությունների նկատմամբ: 1860—1865 թվականներին Ամերիկայում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմների տարեգրությունների պատմության մեջ արձանագրված են մի շարք հայ բժիշկների և զինվորականների անուններ, որոնք ծառայել են Լինկոլնի բանակում և կովել Հարավի ստրկատերերի դեմ: Հայտնի են, օրինակ, բժիշկներ Սիմեոն Մինասյանի, Կարապետ Գալըստյանի, Պարոնիկ Մաթևոսյանի, դեղագործ Խաշատուրյանի ազգանունները, որոնք նվիրվածությամբ ծառայել են Հյուսիսի բանա-

կում և գովեստների արժանացել հրամանատարության կողմից: Թվարկված բժիշկներից Սիմեոն Մինասյանը քաղաքացիական կռիվների շրջանում եղել է Ֆիլադելֆիայի հիվանդանոցի գլխավոր բժիշկը: Հյուսիսի բանակում հայ զինվորականներից աչքի ընկնող սխրագործություններով հանդես են եկել Պոլսի մտտիկ Խաս գյուղացի Արմենակ անունով մեկը, որն իր քաջագործության համար հասել է զինվորական բարձր աստիճանի, զմյուռնահայ Նարինյանը, Զորա Թադևոսյանը և ուրիշներ¹:

Քաղաքացիական պատերազմներից հետո, երբ երկիրը շատ ու քիչ խաղաղվում է և Ամերիկյան թևակոխում էր արդյունաբերության զարգացման բուռն շրջանը, Եվրոպայի արևելյան և հարավ-արևելյան երկրներից, ինչպես և Թուրքիայից, մասսայական գաղթ է սկսում դեպի Ամերիկա: Այդ տարիներին ուժեղանում է նաև հայ գաղթականության հոսանքը Ամերիկայի գլխավորապես այն վայրերը, ուր ապրում էին իրենց հայրենակիցները:

Թուրքիայից Ամերիկա հայ գաղթականություն տեղափոխելու նպատակով Մ. Թոփհանելյանը եկել է Պոլիս և սկսել է հավաքագրել Ամերիկա գաղթել ցանկացող հայերին: Մեկնելուց առաջ նրանք նամակ են գրել Ոսկանյանին և խնդրել պարզել, թե ի՞նչ վայրում իրենք բնակություն պիտի հաստատեն և ի՞նչ պայմաններով է ամերիկյան կառավարությունը ցանկանում ընդունել հայ գաղթականությունը: Ոսկանյանը հայտնել է, որ ամերիկյան կառավարությունը խոստանում է ներգաղթող յուրաքանչյուր հայ ընտանիքի ձրի տրամադրել 160 «արտավար հողամաս», միայն քաղաքացիական ձևակերպումների համար յուրաքանչյուր ընտանիք պարտավոր է վճարել 14 դոլլար: Ոսկանյանը միաժամանակ հայտնել է, որ հինգ տարի հողամասը մշակելուց հետո այն դառնում է ընտանիքի անձնական սեփականությունը:

Ամերիկացի միսիոներների, ինչպես և ամերիկահայ մտավորականների ջանքերը XVIII—XIX դարերում՝ մեծ թվով հայ գաղթականություն փոխադրելու Ամերիկա, պետք է ասել, այնքան էլ հաջողությամբ չեն պսակվել: Համենայն դեպս, 1820 թվականից մինչև 1880 թվականը, ըստ տեղեկությունների, Ամերիկայում բնակություն հաստատած հայերի թիվը 300-ից չի անցել¹: Այդ մասամբ հետևանք էր այն դժվարությունների, որոնց հանդիպում էին նորեկ հայ գաղթականները Ամերիկայում: Հայ գաղթականները մեծ դժվարությամբ են սովորում տեղական լեզուն, աշխա-

¹ Մ. Սերոբյան, նշված հոդվածը (տե՛ս «Ամերիկահայ տարեցույց», 1912 թ., էջ 28):

¹ Ն. Լ. Մանկունի, նշված աշխատությունը (տե՛ս ՊՔԸ, 2962, № 1, էջ 97):

տանք ճարում և հարմարվում տեղի սովորություններին և պայմաններին: «Հայ գաղթականները,— գրում է Ճիզմեճյանը — Ամերիկայի մեջ առաջին առթիվ կգտնեին գործարաններ և գործավորական կյանք, ածուխ և փողի, երկաթի պայքար, վիշապի պես ֆշշացող մեքենաներ, բարձրաբերձ ծխնելույզներ ցցված ամեն գյուղ ու քաղաք: Եվ ասոնց մեջ օրական 10—12 ժամ շարաշար քրտնաջան աշխատություն»¹:

Փաղթավայրի հիմնումը և ստվարացումը:

1870 թվականներից սկսում է արևմտահայ պանդուխտների հոսանքը դեպի Ամերիկա: Եթե առաջներում Ամերիկա եկող գաղթականական քարավանները հիմնականում բաղկացած էին հայ արհեստավորներից, մանր առևտրականներից և ուսանողներից, ապա այժմ գաղթականների հիմնական մասը հանդիսանում է հայ աշխատավորությունը, որը և առաջին գաղթօջախն է ստեղծում Ամերիկայում: Այդ պետք է բացատրել ոչ այնքան Ամերիկայի գրավչությամբ, որքան թուրքական կառավարության կողմից հայ գյուղացիության վրա դրած ծանր հարկերով, հայ գյուղացիների հողազրկումով, գավառներում կատարվող ավազակություններով, վաշխառուների կողոպուտով և այլն, որոնք և հարկադրում են հայ գյուղացուն թողնել իր բնակավայրը և դիմել պանդխտության՝ իր և իր ընտանիքի ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Նա գալիս է առաջին հերթին Պոլիս, իսկ այնտեղից էլ ուղևորվում հեռավոր այն վայրերը, ուր կարող է աշխատանք և ապրուստ գտնել: Ըստ որում, մեծ մասամբ գալիս է առանց ընտանիքի, գալիս է դրամ աշխատելու և վերադառնալու հեռանկարով:

Ամերիկան այդ ժամանակ խոշոր արդյունաբերական երկիր էր՝ կանգնած զարգացման լայն ճանապարհի վրա: Նա մեծ կարիք ուներ էժան բանվորական ձեռքերի, ուստի ամերիկյան կառավարությունը լայնորեն բաց էր արել իր դռները հայ պանդուխտների առջև: Ամերիկայի լրագրական գործակալները արևմտահայ աշխատավորությանը պրոպագանդում էին գալ Ամերիկա՝ «երանության աշխարհը», ուր ոսկու լեռներ էին խոստանում: Եվ այսպես, անեղծ երազներով տարված հայ պանդուխտները սկսում են հոսել դեպի Ամերիկա:

Իսկ ինչպե՞ս էր դիմավորում Ամերիկան այս նորեկ հայերին, որտեղ էին հայ պանդուխտներն աշխատանքի անցնում և ինչ

¹ 2. Վարժապետյան, Միացյալ նահանգաց գաղութն այսօր (տե՛ս «Ժամանակ», օրաթերթ, Պոլիս, 1860, փետրվարի 22):

պայմաններում էին աշխատում: Այս մասին ուշագրավ է լսել առաջին պանդուխտներից մի քանիսին, որոնք իրենց հիշողությունները գրի են առել և հրատարակել:

Ուստրաբնակ նախկին հայ բանվորներից մեկը հետևյալն է հաղորդում. «Քսանե ավելի կբնակեին Հանովը և էլլին փողոցներուն անկյունը գտնված տանը մեջ, միևնույն սենյակին մեջ եփելով, ուտելով և պառկելով: Յուրաքանչյուր գործավոր ինքը իր ճաշը կպատրաստեր, ամանները կլվար, սենյակը կմաքեր, լվացքը կըներ, գոնե շաբաթը անգամ մը: Երբ բարեկամի կայցելելինք՝ իր սենյակին մթնոլորտը ծխախոտի ծխով և մոխրով ու հոտերով ապականած էր, կեղտոտ անկողիններ, որոնց սավաններուն գույնը շատոնց հրաժեշտ տված էր ճերմակության, փողի, լուցկիի կտորներ, սիկարի մասեր, ոսկորներ... սենյակին գարզը կկազմեին»¹:

Մի այլ պանդուխտ՝ կյուրինցի ժամկոչյան ազգանունով, հետևյալ տեղեկությունն է հրապարակել. «Երբ ես առաջին անգամ մտա Ուստրիի երկաթաթելի գործարանը աշխատելու, գործը շատ ծանր էր, որմե շատ մարդիկ վնասված էին և կորսնցուցած իրենց թևը, մատները, ոտքը կամ կյանքը: Հասարակ գործավորները կստանային շաբաթական 7,5 դոլլար, բայց քիչ մը ավելի լավ գրել կարգալ գիտնալուս, անգլիերեն խոսքեր և բառեր գլորելուս համար ինձի 8,5 դոլլար տվին, որը բացառիկ շաբաթական էր այն օրերուն: Ոմանք, երբեմն, թելքաշի վրա գործ-գլուխ աշխատելով, օրական կստանային երկու-երեք դոլլար, երբեմն՝ մինչև չորս դոլլար:

Հայ պանդուխտները մեծ մասամբ Խարբերդի նահանգեն էին: Քոլորս ալ լիզու չէինք գիտեր, բայց նախանձախնդիր էինք գործ գտնելու և տևական գործելու: Պետք է գիտենաս, որ պանդուխտներն իրենց ետև թողած էին հայր, մայր, կին, զավակներ ու որբ ազգականներ: Մենք իրենց ապավենն էինք. բոլորն ալ օգնութեան կսպասեին: Երբ գործ ճարեին անհնար էր, անգործները գործարանի բոսերուն (գործատերերուն) նվերներ կտանեին, հաճախ կը դիմեին եկեղեցիներուն կամ կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներուն: Երբեմն դիմումները հաջողությամբ կվերջանային: Գործավորների ընտրությունը կատարողը միստր Հոլն էր: Առավոտ ժամի տասին կուգար, գործավորները կարգի կանգնած կսպասեին, ան կզններ գործավորները, անոնց բազուկները ճիշտ այնպես, ինչպես մեկը

¹ «Ամերիկահայ տարեցույց», 1913, էջ 76:

ոչխար կընտրե, և կընտրեր հարմարները, իսկ մյուսները գլխիկոր ետ կդառնային»¹:

Ամերիկա եկած հայ գաղթականությունը տեղավորվում է մի շարք քաղաքներում: «Ուստունական թվականներին,— գրում է գոկտոր Այվազյանը՝ հայ գաղթականներից մեկը,— Միացյալ Նահանգաց մեջ հայերու ամբողջական թիվը չէր ավելի, քան 500: Չափազանց փոքր թիվ մը և ցիրուցան»... 1885-ին Ամերիկայի մեջ հայերու թիվը սկսած էր ստվարանալ և հայկական փոքր գաղութներ երևան կուգային Նյու-Յորք քաղաքին մեջ: Նյու-Յորքի հանդիպակաց Հուդզոն գետի արևմտյան ափանց վրա, Ջերսի քաղաքի բարձանց վրա և Մասաչուզետս նահանգի Բոստոն, Ուստր և այլ մի քանի փոքր քաղաքներուն մեջ: Նյու-Յորքի հայերուն թիվը 150-ի հազիվ կհասներ, իսկ Ջերսի քաղաքի բարձանց վրա կային իբրև երկու տասնյակ հայեր, մեծ մասամբ տիգրանակերտցի ոստանյակներ, որ մետաքսի գործերուն մեջ կաշխատեին: Հայերեն շատեր անտեղյակ էին երկրին սովորությանց և լեզվին, պանդուխտներ օտար երկրի մեջ, առանց բարեկամի, հայերեն խոսելու և հայու երես տեսնելու կարոտով կմաշեին»²:

Ամերիկայի հայ գաղթականության առաջին համախմբումը և առաջին հայ գաղթօջախի հիմնումը տեղի է ունեցել Ուստրում, ուր մեծ թվով հայ բանվորություն է աշխատել տեղի երկաթալարի գործարանում: 1888 թվականին այստեղ, ամերիկահայության պատմության մեջ առաջին անգամ, կազմակերպվել է այսպես կոչված «Կաճառ հայկական»-ը, որը կոչվել է նաև «Կաճառ հայկական Ուստրի լուսավորչական հայոց»: Կաճառի կազմակերպման գործում գործուն մասնակցություն է ունեցել Մ. Փորթուզալյանը: Կաճառի խնդիրն է եղել կազմակերպել դասախոսություններ հայ ժողովրդի պատմության, գրականության, հայկական հարցի շուրջը և հայ բանվորության ինքնագիտակցությունը բարձրացնող այլ թեմաներով:

Այդ նույն տարում հայերը ձեռնարկել են կառուցել առաջին հայկական եկեղեցին Ամերիկայում:

Երիտասարդ է նաև Պրովիդենսի հայ գաղթօջախը: Նրա ըսկզբնավորությունը համարվում է 1878 թվականը: Ըստ տեղեկությունների, Նյու-Յորքից մի քանի հայ տնտեսություններ են

¹ Ն. Լ. Մանկուճի, Ամերիկահայ գաղութի պատմությունից (տե՛ս «ՊՐՀ», 1962, № 1, էջ 103):

² Տե՛ս «Ամերիկահայ տարեցույց», 1912 թ., էջ 169:

Պարբերական մամուլը¹:

Ամերիկայի հայ գաղթավայրի հասարակական, քաղաքական և կուլտուրական կյանքում խոշոր դեր է ունեցել ամերիկահայ մամուլը, որը հանդես է եկել հայ գաղթավայրի կազմավորման առաջին իսկ օրից: Ամերիկահայ մամուլը, սկզբնական շրջանում, լույս է տեսել անհատական նախաձեռնությամբ և, պետք է ասել, շատ անմխիթար վիճակում. հրատարակիչներից ոմանք կատարել են ո՛չ միայն խմբագրի և սրբագրիչի, այլև գրաշարի ու վաճառողի դեր: Սեփական տպարաններ գոյություն չեն ունեցել, բաժանորդները փոքրաթիվ են եղել և չեն ապահովել տպագրական ծախսերը:

Ամերիկայում հրատարակված առաջին հայկական պարբերականը հանդիսացել է «Արեգակ» ամսաթերթը, որը լույս է տեսել Ջերզի Սիթիում 1888 թվականին: Նրա խմբագիրն է հանդիսացել Հ. էկինյանը, որը համարվում է ամերիկահայ լրագրության հայրը: «Արեգակ»-ը երկու տարի լույս տեսնելուց հետո, 1890 թվականին, վերանվանվել է «Սուրհանդակ» և վերածվել շաբաթաթերթի: Ամերիկահայ այս առաջին պարբերականի հրատարակության առթիվ «Մշակ»-ը հետևյալն է գրել. «Անունը («Արեգ») գեղեցիկ է, բայց անշուք հետք է թողել Ջերզի Սիթիի մեջ, 1888 մայիսին լույս տեսած քաղաքական ազգային շաբաթաթերթը, նպատակը՝ գաղթականության առաջն առնել, բայց չորս ամիս կարողացավ ապրել, սեպտեմբերին «Արեգակը» մայր մտավ և հավիտյան դուրս չեկավ»: 1890 թվականի վերջերում «Սուրհանդակը» վերանվանվել է «Ազատություն»: Կարճ ժամանակով այն դադարել է և նորից սկսել լույս տեսնել 1891 թվականին որպես ամսաթերթ, իսկ 1892-ին՝ շաբաթաթերթ:

էկինյանը հայ գաղթականության Ամերիկա տեղափոխվելու հարցում հստակ տեսակետ չի ունեցել. եթե «Արեգակ»-ի մեջ՝ «Ամերիկյան հայք ու մայր հայրենիք» խորագրով խմբագրական հոդվածում իր հայրենակիցներին խորհուրդ է տվել չգալ Ամերիկա, ապա «Սուրհանդակ»-ի մեջ նա հանդես է եկել որպես հայ գաղթականության Ամերիկա գալու ջերմ կողմնակից:

Ամերիկահայ առաջին հայկական թերթի խմբագիրը, չնայած գրական պատշաճ պատրաստություն չի ունեցել, չնայած ծանոթ

¹ Ամերիկահայ մամուլի վերաբերյալ տե՛ս Արսեն Տիրանի հոդվածը «Ամերիկահայ մամուլը» վերնագրով, որը տպագրվել է «Ամերիկահայ տարեցույց»-ի մեջ, 1912, էջ 127—146:

չի եղել հայ ժողովրդի անցյալի հետ, սակայն թերթի հրատարակութեան գործում ցուցաբերել է մեծ եռանդ, արտակարգ նվիրում և նախաձեռնություն:

Ամերիկայում հրատարակվող հաջորդ հայկական լրագիրը հանդիսացել է «Արարատ» երկշաբաթաթերթը: Այն սկզբում հրատարակվել է Կ. Պոլսում՝ Մարտիրոս Այվատյանի կողմից: Թերթի հրատարակությունը, դեռ մի տարի չբոլորած, խափանվել է թուրքական կառավարության կողմից: Այնուհետև Մարտիրոս Այվատյանի որդին՝ Փառունակ Այվատյանը, տեղափոխվել է Ամերիկա և 1891 թվականի հունվարի 1-ից շարունակել «Արարատ»-ի հրատարակությունը: Սկզբում այն եղել է երկշաբաթաթերթ, հետո վեր է ածվել շաբաթաթերթի, 1902 թվականին դարձել է ամսագիր և, երկու համար լույս տեսնելուց հետո, դադարել է:

«Արարատ»-ը ունեցել է բավականի հարուստ բովանդակություն. հոդվածներ են լույս տեսել գիտական, պատմական, աշխարհագրական, բժշկական և այլ բովանդակություններով: Տեղեկություններ են տպագրվել հայրենի երկրից և այլն:

1891 թվականի հունվարի 1-ից Նյու-Յորքում սկսել է լույս տեսնել «Հայք» պարբերականը: Խմբագիրն է հանդիսացել բժիշկ Մ. Ս. Գաբրիելյանը: «Հայք»-ը 1891—1892 թվականներին լույս է տեսել ամիսը երկու համար՝ ութը խոշոր էջերով, 1893 թվականին՝ 16 փոքրադիր էջերով, 1896 թվականին դարձել է ամսագիր, 1897 թվականին նորից սկսել է լույս տեսնել 16 էջով՝ 8-ր հայերեն, 8-ը՝ անգլերեն: 1896 թվականի ապրիլի 1-ին դադարել է:

«Հայք»-ը ունեցել է լիբերալ բուրժուական ուղղություն: Նա ունեցել է հետևյալ բաժինները՝ ազգային, առողջապահական, բանասիրական, կենսագրական-մատենախոսական, թղթակցություններ և լուրեր: Գաբրիելյանն իր այդ պարբերականը հրատարակել է նյութական մեծ զոհողությունների գնով. նա բժշկությամբ է զբաղվել և վաստակած միջոցները դրել թերթի հրատարակության վրա: «Հայք»-ը անհատական ձեռնարկ է եղել:

1897 թվականին Պ. Ս. Շաղալյանի խմբագրությամբ և Պոլսի ճանաչման դրամագլխով Ուստրում լույս է տեսնում «Միբրատ» շաբաթաթերթը: Նրա հրատարակիչները, ինչպես ասված է խմբագրականում, նպատակ են դրել գաղթավայրին ծանոթացնել տեղի ապրող ժողովրդի հետ, իսկ գաղթավայրը՝ տեղի ժողովրդին: Շաբաթաթերթի ծավալը փոքր է եղել, ինչպես և նյութական միջոցները: Շաղալյանը մեծ դժվարությամբ է խմբագրել շաբաթաթերթը:

Թը, որովհետև ուսանող է եղել Բազմարվեստ վարժարանում, միաժամանակ աշխատել է երեկոյան դպրոցում: Վերջ ի վերջ տեսնելով թերթի տպագրության դժվարությունները, հրաժարվել է և թերթը փակել, գերադասելով շաբաթեղենի փոքրիկ ֆաբրիկա հիմնել, քան սոված խմբագիրների վրա ևս մի նոր սոված խմբագիր ավելացնել:

1897 թվականին Հ. էկինյանը և Թ. Չարշափճյանը միասին Նյու-Յորքում հրատարակել են «Տիգրիս» անունով մի թերթ: Նյութական միջոցները նրանց տրամադրել է 9—10 տիգրանակերտցիներից կազմված ընկերությունը: Թերթը հրատարակվում է ընդամենը մի տարի, որովհետև ընկերության մեջ անհամաձայնություն է առաջանում և թերթը մի տարի հետո դադարում է լույս տեսնելուց. էկինյանը հեռանում է խմբագրությունից: Նոր խմբագիր են դառնում Գ. Զիթճյանը և Վ. Շահինյանը, որոնք թերթի «Տիգրիս» անունը փոխում են «Ձայն հայրենյաց»-ի: 1900 թվականին խմբագրությունը Նյու-Յորքից տեղափոխվում է Ուստր: Այստեղ ընկերության դրամագլուխը վերջանում է: Խմբագիրներից Շահինյանը հեռանում է, իսկ Զիթճյանը խմբագրությունը տեղափոխում է Բոստոն, ուր և թերթը դառնում է վերակազմյալ հնչակյանների պարբերականը Ամերիկայում: Թերթը հաջողությամբ լույս է տեսնում մինչև 1906 թվականի ապրիլ ամիսը:

«Ձայն հայրենյաց»-ի անմիջական շարունակությունն է հանդիսանում նույն ուղղությամբ և գաղափարներով լույս տեսնող «Ազգ»-ը: Այն մինչև 1908 թվականը խմբագրում է Պարթևյանը: 1910 թվականից թերթը խմբագրում է Ա. Նազարեթյանը: «Ձայն հայրենյաց»-ի և «Հայրենիք»-ի որդեգրած ուղղությունը եղել է ազգային-բուրժուական: Խմբագրական մի հոդվածում թերթի որդեգրած գաղափարների մասին հետևյալն է ասված. «Ներկա հայ սերունդը իր ուժերեն շատ զործեր ունի կատարելիք: Մենք շատ ետ մնացած ենք քաղաքակրթական ազգերեն, մեր անմիջական պարտքն է կովել հայ ազգը կաշկանդող քաղաքական պայմաններու և տգիտության դեմ՝ սպասելով, որ զարգացած ազգեր լուծեն դրամագլխի և աշխատության կնճոտ և դժվարին հարցը»:

1899 թվականի հոկտեմբեր ամսից լույս է տեսնում «Կոչնակ» թերթը Կանդիկյանի խմբագրությամբ, որը հանդիսացել է Ամերիկայի միսիոներական ընկերության պաշտոնական պարբերականը: Թերթի ծախսերի մի մասը հոգում է միսիոներական ընկերությունը, իսկ մյուս մասը՝ հայ մարդիկ: Իր խմբագրական

հողվածում շաբաթաթերթը խոստանում է «Առողջ և անկախ շաբաթաթերթ մը ըլլալ՝ նպատակ ունենալով լեցնել ամերիկյան հայ գաղթականության իմացական և բարոյական պետքերը»:

Շաբաթաթերթին իր էջերում լայն տեղ է տվել կրոնա-բարոյախոսական հոդվածներին, Հայաստանից և հայ գաղթավայրերից ստացված լուրերին: Հետո է կանգնած եղել քաղաքական աղմկոտ վեճերից, որ այդ ժամանակ ծավալված է եղել հայ իրականության մեջ:

1904 թվականից լույս է տեսնում «Armenia» անունով անգլերեն ամսագիր՝ նպատակ ունենալով ամերիկացիներին ծանոթացնել հայ հին և նոր գրականության հետ: Այս ամսագիրը հրատարակվել է այնպիսի մի շրջանում, երբ ամերիկյան շրջաններում սկսել էր հետաքրքրություն առաջանալ հայ ժողովրդի անցյալ ու ներկա մշակույթի նկատմամբ: Դրանով պետք է բացատրել այն մեծ հաջողությունը, որ ունենում է «Armenia»-ի հրատարակությունը: Ամսագիրը հանդիսացել է հնչակյան կուսակցության օրգանը: Ամսագրի հրատարակության գործում եռանդուն գործունեություն է ցուցաբերել Ա. Մահտեսյանը: Ամսագիրը լայն տարածում է ունենում: Հնչակյանների պառակտման հետևանքով դադարում է նրա հրատարակությունը: Ա. Մահտեսյանը 1910 թվականին իր անձնական միջոցներով փորձում է այն շարունակել, սակայն հաջողություն չի ունենում:

1905 թվականի հոկտեմբերից մինչև 1907 թվականի մարտ ամիսը, Հ. Հակոբյանի խմբագրությամբ, լույս է տեսնում «Արաքս» շաբաթաթերթը, որը փորձում է նրա բովանդակությունը նմանեցնել Պետերբուրգում լույս տեսնող «Արաքսին»: Շաբաթաթերթում ղեկավարում են գլխավորապես նյութեր «հայրենի հիշատակներին», աշխարհագրական նյութեր, պատմական և գրական նյութեր:

1903 թվականից Բոստոն քաղաքում սկսում է լույս տեսնել հնչակյան կուսակցության «Երիտասարդ Հայաստան» անունով թերթը, որը շարունակվում է մինչև այժմ: Նա խմբագրվել է մի շարք անձնավորությունների կողմից (Ս. Գուլյանի, Ս. Խանջելոֆյանցի, Սիրվարդի և ուրիշների կողմից): 1903—1905 թվականներին այն լույս է տեսնում Բոստոնում, 1906—1912-ին՝ Նյու-Յորքում: «Երիտասարդ Հայաստան»-ը սկզբում եղել է շաբաթաթերթ, իսկ հետո վեր է ածվել օրաթերթի:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում լույս են տեսել հայկական այլ թերթեր և ամսագրեր ևս, որոնց բոլորի վրա մեկիկ-մեկիկ կանգ առնելու հնարավորությունը չունենք: Նրանցից կա-

րելի է թվարկել հետևյալները. «Քաղաքացի» — շաբաթաթերթ, Հ. էկինյանի խմբագրությամբ լույս է տեսել 1902 թվականին: Յրեզնոյում, «Ասպարեզ» շաբաթաթերթը հրատարակվել է Յրեզնոյում 1908 թվականին, «Պահակ» եռօրյա թերթը լույս է տեսել 1911 թվականին Բոստոնում: «Արագած» — պատկերազարդ շաբաթաթերթը լույս է տեսել Նյու-Յորքում 1911 թվականին և այլն:

Ավելի նոր ժամանակներում լույս տեսած կարևոր ամերիկահայ պարբերականներից է «Պայքար» օրաթերթը: Այն սկսել է լույս տեսնել 1921 թվականից և շարունակվում է մինչև այժմ:

Ամերիկահայ մշակույթի բաժնում դժվարանում ենք գովեստով խոսել դպրոցական կյանքի մասին, որովհետև այն Ամերիկայի հայ գաղթավայրերում միշտ էլ, կարելի է ասել, գտնվել է անմխիթար վիճակում: 1910 թվականի փետրվարի 22-ին երեսփոխանական ժողովի ատենագրության մեջ հրապարակված տրվյալներից երևում է, որ Ամերիկայի նման հայկական խոշոր գաղթավայրում դպրոցներ են եղել ընդամենը հինգ վայրում՝ 1) Ուեստ Հոպլենդմի մեջ՝ մեկ դպրոց՝ 60 երկսեռ աշակերտներով, որի ծախսերը հոգացել է տեղի Տիկնանց կրթասիրաց միությունը, 2) Նյու-Յորքում՝ մեկ դպրոց՝ 50 երկսեռ աշակերտությամբ, որի ծախսերը հոգացել է տեղի Հայկական միությունը, 3) Յրեզնոյում՝ մեկ դպրոց 106 երկսեռ աշակերտությամբ, որի ծախսերը հոգացել է տեղի համայնքը, 4) Ֆավլըրում՝ մեկ դպրոց՝ 40 երկսեռ աշակերտությամբ, որի ծախսերը հոգացել է տեղի համայնքը, և վերջապես, 5) Նդեմում՝ ընդամենը 20 աշակերտությամբ, որը պահվել է տեղի հայերի նյութական օժանդակությամբ¹:

Տասնյակ հազարավոր բնակչություն ունեցող հայ գաղթավայրի համար վերը բերված խղճուկ թվերը ցույց են տալիս, թե ինչքան անմխիթար վիճակում է գտնվել դպրոցական կյանքը Ամերիկայի հայ գաղթավայրում:

1 ՀՊՊԱ, ֆ. 57, գ. 1884, էջ 30բ:

XXIV. ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ¹

Սփյուռքահայության դիրքորոշումը Սովետական Հայաստանի նկատմամբ:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություն էին ո՛չ միայն հայրենի երկրում ապրող հայության, այլև սփյուռքահայության համար: Հայկական մեծ եղենից հետո արյունոտված ու թափառական, իրավազուրկ և հուսահատ հայ տարագիրների համար հայ աշխատավորների ջանքերով ամրակուռ պետության ստեղծումը հույսի և ներշնչումի նոր աղբյուր հանդիսացավ: Սփյուռքահայությունն զգաց, որ իր բոլոր երազները դեռևս խորտակված չեն և հավատաց, որ Մայր հայրենիքը, եղբայրական մեծ ընտանիքի մեջ, ոտքի պիտի կանգնի հսկայի քայլերով, և պիտի գա այն երջանիկ օրը, երբ նա ի վիճակի պիտի գտնվի հավաքելու ցրված զավակներին իր շուրջը:

Հայաստանում սովետական կարգեր ստեղծելուց դեռ մեկ և

¹ Մայր հայրենիքի և սփյուռքահայության միջև նորագույն շրջանում գոյություն ունեցող փոխհարաբերությունը ցույց տալու նկատառումով, այս հատորի վերջում զետեղում ենք «Սփյուռքահայությունը և Սովետական Հայաստանը» վերնագրով ներկա ուրվագիծը: Այս գլուխը խնդիր չունի փոխարինելու հայ գաղթավայրերի հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմությանը: Նորագույն շրջանի հայ գաղթավայրերի պատմությունը շատ ավելի հարուստ է և արժանի է հատուկ ուսումնասիրության:

կես տարի առաջ, հայ ժողովրդի փորձության ծանր ժամանակներում, բուլղարահայ կոմունիստները Պլովդիվում հանդես են եկել սփյուռքահայությանն ուղղված ուշագրավ մի կոչով, հայտարարելով հետևյալը. «Բուրժուական կուսակցություններն ոչ մեկը, որքան ալ ինքզինքը «հեղափոխական» հորջորջե, ոչ ալ մեծ պետությունները, որ կողմն ալ որ ըլլան, ի վիճակի չեն հայ ազնիվ ժողովրդին վերադարձնելու անոր առաջվա ուժերը...»: Եվ կոչի հեղինակները գալիս են այն եզրակացության, որ հայ ժողովրդի «Ազատագրումը կարելի է միայն հայ սոցիալիստական խորհրդային հանրապետության մեջ»¹:

Պլովդիվում լույս տեսնող «Կարմիր լուրեր» թերթը, որը հանդիսացել է սփյուռքահայ քաղաքական և հասարակական առաջավոր մտքի խիղախ դրոշակակիրը, 1920 թվականի հուլիսի 2-ի համարում զետեղած հոդվածում գտնում է, որ եթե Հայաստանի աշխատավորներն իրենց ձեռքը վերցնեն կառավարությունը և հրշակեն պրոլետարական դիկտատուրա՝ «Միայն այն ատեն կունենա հայ ժողովուրդը իր իսկական ազատությունը»²:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ պարզ դարձավ, որ հայ ժողովուրդը միայնակ չի կարող կանգնել վերահաս վտանգի առջև, իսկ եվրոպական երկրները անբարյացակամ դիրք են վերցրել, հայ շրջահայաց մտավորականների հայացքները սկսեցին ուղղվել դեպի Ռուսաստան և այնտեղից ակնկալել հայ ժողովրդի փրկությունը: Բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, որն արտասահմանում ուշադիր հետևում էր արևմտյան եվրոպական երկրների դիվանագիտական խաղերին, Հովհաննես Թումանյանին ուղղած 1921 թվականի հուլիսի 1-ի թվակիր նամակում հետևյալն է գրել. «Եվրոպան ո՛չ միայն չի օգնի մեզ, այլև թշնամի է և որոճում է հայկական բնաջնջումով... ըստ իս Հայաստանը և հայ ժողովուրդը կարող են միայն ապրել Ռուսաստանի հետ կամ բնավ չեն կարող ապրել»³:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու լուրը հրճվանքով է ընդունել սփյուռքահայ աշխատավորությունը: Պատմական խոշոր նշանակություն ունեցող այդ իրադարձության առաջին նշողներն են հանդիսացել բուլղարահայ կոմունիստները: Բուլղա-

¹ «Բանրեր» Հայաստանի արխիվների», 1960, № 1, էջ 295:

² Տե՛ս Ռ. Խաչատրյանի հոդվածը «Սովետական Հայաստան», 1960, հուլիսի 15:

³ «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 173:

րիայի հայ բանվորական կոմունիստական կուսակցության վառ-նայի մասնաճյուղը, Հայաստանում սովետական կարգեր հաստատելու կապակցությամբ, դիմել է ռուսինահայությանը և բուլղարահայությանը հատուկ կոչով ու հայտարարել, որ Հայաստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունները «եկան իրականացնելու հայ ընչազուրկին և բանվորին վառ հույսերը»¹:

Պոլսի «Երկիր» լիբերալ-բուրժուական ուղղություն ունեցող թերթը 1921 թվականի հունվարի 28-ին հանդես է եկել հատուկ խմբագրական հոդվածով և խորհուրդ տվել սփյուռքահայությանը՝ բարյացակամ դիրք վերցնել Սովետական Հայաստանի նկատմամբ. «Տարբեր աշխարհայացքները պետք չէ, որ մեզ խրչեցնեն,— գրել է նա,— և ոչ ալ մեզ հասցնեն այն մոլեգնություն, որ մենք չճանչրնանք Երևանի նոր կառավարությունը: Անհիկա կըլլա անդարմանելի սխալ մը»²:

Նույն կարծիքն է հայտնել Պոլսի «Առավոտը» թերթը իր 1921 թվականի հունվարի 12-ի խմբագրականում. «Այսօր գրեթե ընդհանուր է այն կարծիքը,— գրում է նա,— Հայաստանի համար փրկարար և նպատակահարմար է այն քաղաքականությունը, որ իրան կապահովե Ռուսաստանի բարեկամությունը»: Նա գտնում է, որ Արևելքի ընդհանուր բոցավառումի օրերին սովետական իշխանությունից բացի չկա մի ուրիշ իրական և մոտիկ ուժ, որի օգնությանը կարելի լինի դիմել՝ հայ ժողովրդի ֆիզիկական և քաղաքական գոյությունը ապահովելու համար»³:

«Անի» ամսագիրն անդրադառնալով Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու պատմական նշանակությանը, գտնում է, որ «1920-ին նահատակ ժողովրդին կյանքին մեջ տեղի ունեցավ դեպք մը, ուր երջանկաբարձ զանգվածներու տարերային ուժերը բռնեցին մեր պատմության սայլը թավալող ցուլերուն եղջյուրներեն, շրջեցին այդ սայլի անիվները և նզովքը վեր ածեցին օրհնություն»⁴:

Սովետական Հայաստանի նկատմամբ բարյացակամ դիրք է վերցրել և հայրենի երկրում տեղի ունեցող տնտեսական և մշակույթային տեղաշարժերն արդարացի ու պատշաճին դրվատել է հնչակյան կուսակցության պարբերական մամուլը: Բեյրութում

1 ՉՊՀԱ, ֆ. 4/114, ց. 2, № 3, էջ 34:

2 «Երկիր» Պոլիս, 1920, դեկտեմբերի 28:

3 «Առավոտ», 1921 հունվարի 12:

4 «Անի», Բեյրութ, 1946, № 1, էջ 1:

(Լիբանան) լույս տեսնող հնչակյան «Արարատ» թերթը, անդրադառնալով Հոկտեմբերյան մեծ հեղափոխության նշանակությանը հայ ժողովրդի կյանքում, Հոկտեմբերյան հեղափոխության հետ է կապել «Ճնշված ու գերի ազգերու, իրավազրկված բազմահարյուրավոր միլիոն աշխատավոր զանգվածներու, անոնց կարգին դարերով տառապած հայ ժողովրդին հոգեդարձն ու վերահաստան»¹:

Հայաստանի նկատմամբ դրական դիրք են ունեցել նաև ռամկավարները: Հ. Երվանդը իր «Ռամկավար ազատական կուսակցությունը» վերնագրով աշխատության մեջ, անդրադառնալով հայ գաղթավայրերի նկատմամբ Սովետական Հայաստանի բռնած դիրքորոշմանը, նրա անմիջական խնդիրն է համարել. «...Աջակցել և մեր ուժերը տրամադրել հայկական կառավարության, Հայաստանի տնտեսական և բարոյական վերաշինության... աշխատել արգելել ամեն տեսակ արկածախնդրություն, որ կրնա վտանգել ժողովրդին և պետության գոյությունն»²: Հեղինակը սակայն չի թաքցրել, որ Հայաստանի ներկա կառավարությունը և իրենց կուսակցությունը գաղափարական հարցերում գտնվում են երկու «ծայրագույն եզրերում»³:

1920 թվականի օգոստոսի 10-ին Սևրում դաշնակիցների ու սուլթանական Թուրքիայի միջև կնքված պայմանագրի 88—91-րդ հոդվածներով, ինչպես հայտնի է, Թուրքիան հանձնառու էր եղել ճանաչել արևմտահայության անկախությունը՝ վանի, Բիթլիսի և մասամբ էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթների սահմաններում: Վերջնական սահմանները գծելու պարտականությունը հանձնարարվեց Վիլսոնին, որը այդ կատարեց 1920 թվականի նոյեմբերի 22-ին: Իրերի այս ընթացքում սփյուռքահայ դյուրահավատ շրջաններում շարունակվում էին որոշ ակնկալություններ իմպերիալիստական հաղթող պետություններից, դեռ նրանց մոտ չէր խախտված հավատը դաշնակից երկրների նկատմամբ և կարծում էին, որ նրանք երախտամոռ չեն գտնվի նահատակ հայ ժողովրդի նկատմամբ: Սակայն 1922 թվականի Լոզանի կոնֆերանսում, երբ վերջնականապես գերեզմանվեց Սևրի պայմանագիրը և աշխարհն ականանալու տես եղավ կապիտալիստական դիվանագիտության նոր դիմակահանդեսին հայկական հարցում ու հասկացավ, թե պատերազմի

1 «Արարատ», 1946, նոյեմբերի 8:

2 Հ. Երվանդ, Ռամկավար ազատական կուսակցությունը, իր այս օրը և վաղը, Պոսթըն, 1927, էջ 13—14:

3 Նույն տեղում:

տարիներին ի՛նչ ստոր նպատակներով է շարաշահվել հայկական հարցը, ի՛նչքան խաբուսիկ են եղել հաղթանակ շահած կապիտալիստական երկրների կառավարությունների հայ ժողովրդին հանդիսավորապես տված խոստումները և որքան կեղծ են եղել հայ ժողովրդի ողբերգության առթիվ կապիտալիստական քաղաքականագետների ասած «կարեկից» խոսքերը:

Ֆ. Նանսենը, որ ի պաշտոնե մասնակցում էր Ազգերի լիգայում հայկական հարցի քննարկմանը, արել է կարելին ամեն ինչ, որպեսզի արդարացի վերաբերմունք ցուցաբերվի հայ ժողովրդի նկատմամբ: Հայտնի է նրա ելույթը ժնևում գումարված Ազգերի լիգայում 1925 թվականի սեպտեմբերի 5-ին: «Հայ ժողովուրդը, — ասել է նա, — բարձր մշակույթ ունի, մտավորական բացառիկ ձիրքով է օժտված, շարքաշ ու աշխատասեր է և այս վերջին երեք տարվա մեջ ճշմարիտ հրաշք է գործել՝ երկիրը դուրս բերելով այն թշվառությունից, որի մեջ մխրճվել էր, երբ ամեն օր քաղաքների փողոցներում տղաների և շափահասների դիակներ էին կրում սայլերով: Թախանձագին խնդրում եմ ժողովից, որ չփախցնի այս առիթը: Այսօր հաճախ մոռացության է տրվում հայկական ողբերգությունը և կամ անտարբերությամբ, նույնիսկ անգույթ զվարճախոսությամբ է հիշվում այն... Բայց է՛լ ավելի թախանձագին խնդրում եմ Եվրոպայի երեք մեծ ազգերի կառավարություններից՝ Անգլիայից, Ֆրանսիայից և Իտալիայից, որ աջակցություն ցույց տան ինձ... քանի որ նրանք ուղղակի պատասխանատվության բաժին ունեն հայ ժողովրդի ողբերգության մեջ»¹: Վերջ ի վերջո, տեսնելով կապիտալիստական երկրների դիվանագետների կեղծ ու տմարդի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ, մեծ հուամանիստը զայրացած հայտարարել է. «Վա՛յ հայերին, որ նրանք երբևիցե ներքաշվել են Եվրոպական քաղաքականության մեջ: Շատ լավ կլիներ նրանց համար, եթե Հայաստանի անունը երբեք չարտասանվեր որևէ Եվրոպական դիվանագետի կողմից»²:

✓ Լոզանից հետո սփյուռքահայությունը սթափվեց. նրա համար համոզեցուցիչ սկսեցին դառնալ այն զգաստ խոսքերը, որոնք լրսվում էին Սովետական Հայաստանից՝ իմպերիալիստական երկրների կուլիսային խարդավանքների մասին:

Լոզանից հետո տարագիր հայության շրջանում փաստորեն տեղի է ունեցել հիմնական բեկում դեպի Սովետական Հայաս-

տանը. սփյուռքահայ աշխատավորությունը իր հույսերն ու ակընկալություններն սկսում է սերտորեն վերջնականապես կապել Մայր Հայրենիքի հետ¹:

✓ Սփյուռքահայության հավատը դեպի հայրենի երկիրն ավելի է ամրապնդվել, երբ նրանց հայտնի են դարձել այն բարեփոխությունները, որոնք կարճ ժամանակում կատարվել են Հայաստանում, երբ նրանց հայտնի է դարձել այն հոգատարության մասին, որ Հայաստանում ցուցաբերվում է արևմտահայ գաղթականության նկատմամբ: Պոլսում հրատարակվող «Երկիր» թերթը 1921 թվականի սեպտեմբերի 16-ի համարում անհրաժեշտ է համարել նշել, որ դաշնակցական կառավարությունն իր տիրապետության երեք տարիների ընթացքում արևմտահայ գաղթականության վրա նայել է խորթ աչքով և բնավ չի մտածել արևմտահայ գյուղացիությանը հող տրամադրելու մասին, մինչդեռ Սովետական Հայաստանի ղեկավարները սկզբից ի վեր իրենց գլխավոր խնդիրներից մեկը դարձրել են արևմտահայ գյուղացիությանը հողի հետ կապելու խնդիրը²:

Անհիմն չէր Ամերիկայում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթի 1923 թվականի այն պնդումը, թե «Գաղութահայության մեջ ավելի կշեռտվի համակրանքը դեպի Հայաստանի ներկա կառավարությունը»³:

Սփյուռքահայ աշխատավորությունը սերտորեն կապվեց հայրենի երկրի հետ և սկսեց ուշի ուշով հետևել նրա առաջընթացին: Բուլղարահայ կոմունիստները, գաղթավայրի բնակչությանն ուղղված իրենց կոչում, նշել են, որ հայ ժողովուրդն այսօր ունի իր ազատ հայրենիքը, որն ամփոփում է իր մեջ արյունի և ավերի համատարած փոթորկից ազատված հայ ժողովրդի խլյակները: Այդ հայրենիքը, գրում են կոչի հեղինակները, թանկագին է, որովհետև ձեռք է բերվել ծանր ու անթիվ զոհերի գնով: Նրանք կոչ են անում նյութական օգնություն կազմակերպել հայրենի երկրին, որով ո՛չ միայն կթեթևանա իրենց եղբայրների ծանր բեռը, այլև պայմաններ կստեղծվի սփյուռքահայության հավաքման համար հայրենի երկրում⁴:

Այս տարիներին ակտիվ գործում էին նաև Սովետական Հա-

1 Ա. Հովհաննիսյան, Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925, էջ 22:

2 «Երկիր», 1921, սեպտեմբերի 16:

3 «Հայաստանի կոչնակ», 1923, հուլիսի 28:

4 ՀՊՀԱ, ֆ. 178, № 396, էջ 47:

1 «Արև», 1925, հոկտեմբերի 7:

2 F. Nansen, Armenian and the Near East, London, 1928, p. 527.

յաստանի թշնամիները, մասնավորապես դաշնակցականները, որոնք երկրից դուրս նետվելուց հետո հաստատվել էին հայ գաղթավայրերում և ամեն տեսակ հերյուրանքներ էին տարածում Հայաստանում տիրող դրություն մասին: Պլովդիվում լույս տեսնող «Նոր աշխարհ» թերթը իր առաջնորդող հոդվածում, մերկացնելով թշնամական տարրերի հերյուրանքները, պահանջել է ամենաբուռն կերպով հակազդել Սովետական Հայաստանի նկատմամբ կույր ատելությունը տողորված այս մութ ուժերին¹:

Փարիզում գտնվող մի խումբ մտավորականներ (Շիրվանզադե, Ռ. Որբերյան, Տ. Կամսարական, Լեոն Բաշալյան, Վ. Մալեզյան, Հ. Գյուրջյան, է. Շահեն, Ս. Խաչատրյան) 1926 թվականին հանդես են եկել Փարիզի «Ապագա» թերթում Սովետական Հայաստանի շուրջ տարածվող զրպարտչական հերյուրանքների դեմ և հայտարարել. «Այսօր քաղաքական, մտավորական ղեկավարներուն և անոնց աջակցող բովանդակ ժողովրդին շինարարական վաստակը մեր ամենուս համար հրճվեցուցիչ և սրտապնդիչ ճշմարտություն մըն է»²:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, փաստորեն սփյուռֆահայության համայնքներում ստեղծվում է երկու խմբավորում՝ Սովետական Հայաստանի համակիրների և հակառակորդների: Սփյուռֆահայ աշխատավորությունը անվերապահ կանգնում է Սովետական Հայաստանի համակիրների խմբում: Հակառակորդ խումբը, հիմնականում, կազմվում է դաշնակցականներից և նրանց համակիր խավերից: Այս երկու խմբի մեջ սկսվում է սուր և անհաշտ պայքար, որը շարունակվում է մինչև այսօր:

Թշնամական տարրերը արևմտահայ աշխատավորության համակրանքը շահելու նկատառումով աշխատում են լուրեր տարածել, որ իբր թե Սովետական Հայաստանի կառավարությունն անուշադիր է սփյուռքահայության նկատմամբ, չի հետաքրքրվում նրա ճակատագրով և չի ցանկանում կապ ստեղծել սփյուռքի հետ, չի ցանկանում սփյուռքահայությանն ընդունել հայրենի երկիր և այլն:

Զրպարտչական այդ լուրերը հերքելու նպատակով հանդես է գալիս Ալեքսանդր Մյասնիկյանը հատուկ գրքույկով, որը տպագրվում է Նյու-Յորքում 1923 թվականին: Մյասնիկյանն իր այդ

գրքույկում որոշակի հայտարարել է. «Թող գաղութահայ աշխատավորությունն իմանա, որ Հայաստանը ուշի-ուշով հետևում է նրա յուրաքանչյուր քայլին: Ամեն մի լուր ու թերթ, որ ստացվում է Ամերիկայից կամ Եվրոպայից, մեզ ուրախացնում է, որովհետև մենք այնտեղ կարողում ենք գաղութահայ բանվորության ու արհեստավորության տրամադրությունների մասին: Խորհրդային Հայաստանը գիտե, որ գաղութահայ աշխատավորությունը ապրում է մեր երկրի ուրախության մեջ և ցավերով: Պետք է որ այդ աշխատավորության ու Խորհրդային Հայաստանի միջև ձգված լինի ամուր կամուրջ»¹:

Հաջորդ տարին Ալեքսանդր Մյասնիկյանը հանդես է գալիս նոր գրքույկով՝ «Կուսակցությունները գաղութահայության մեջ», որը հրատարակվում է Քեյֆլիսիում: Գրքույկը նվիրված է «Գաղութահայ տառապող աշխատավորության—գործարանային բանվորներին, աստանդան գյուղացիներին, նկուղների շարքալ բազուկավորներին՝ այդ բարձրացող, ոտքի կանգնող ու մարտնչող բանակին»²:

✓ Մյասնիկյանը, Սովետական Հայաստանի կառավարության անունից, հավաստիացրել է սփյուռքահայությանը, որ նա աչքաթող չի արված Հայաստանի կառավարության կողմից և ցանկալի է համարել, որ հայ գաղթավայրերի և հայրենի երկրի միջև հաստատվի սերտ կապ:

Թե ինչպիսի սիրով ու հավատով է կապված եղել սփյուռքահայ աշխատավորությունը Սովետական Հայաստանի հետ, ապացուցում է այն խորը վշտակցությունը, որ ցուցաբերել է նա Լենինի մահվան կապակցությամբ: ✓

Հայկական գաղթավայրերում ամենուրեք կազմակերպվել են սգո նիստեր և միտինգներ: Առաջադիմական թերթերում սև շրջանակների մեջ տպագրվել են Լենինի նկարը և մահախոսականներ³:

Թեհրանի «Բանվոր» թերթը 1924 թվականի հունվարի 24-ի իր խմբագրականում Լենինին համարում է «ճնշված ժողովուրդների ազատարարը»: Նա գտնում է, որ «Պատմության մեջ եղակի տիպար էր Լենինը. բացի նրանից չի եղել ոչ ոք, որի քարոզած դավանանքը այնքան իրական արդյունք տված լիներ»⁴:

1 Ալ. Մարտունի, Գաղութահայ աշխատավորություն, էջ 13:
2 Ալ. Մարտունի, կուսակցությունները գաղութահայության մեջ, Քեյֆլիս 1924, էջ 3:
3 ՀՀԱ, ֆ. 178, № 421, էջ 28—29:
4 «Բանվոր» թերթ, 1924, հունվարի 24:

1 Ռ. Խաչատրյան, Բուլղարական կոմպարտիայի մարտական օրգանը (տե՛ս «Սովետական Հայաստան», 1962, մարտի 25):
2 «Ապագա», 1926, փետրվարի 12:

«Ռանչբար Իրանի» թերթը 1924 թվականի հունվարի 24-ի խմբագրականում կենինին համարում է խորհրդային հասարակարգի «Հիմնական սյունը», «Քսաներորդ դարի խոշորագույն անձնավորությունը, համաշխարհային պատմության ամենախոշոր դեմքերից մեկը»¹:

Արտասահմանի հայ աշխատավորությունը բաժանել է սովետահայ իր եղբայրների վիշտը նաև Ալեքսանդր Մյասնիկյանի ողբերգական մահվան առիթով: Սովետական Հայաստանի կառավարության անունով ցավակցական հեռագրեր են ստացվել արտասահմանի գրեթե բոլոր հայկական գաղթավայրերից:

**Հայաստանի
օգնության
կոմիտեների
գործունեությունը
Սփյուռքում:**

1921 թվականը Սովետական Հայաստանի ծանր տարիներից մեկն էր: Թուրքական վայրագությունները, ինչպես և քաղաքացիական պատերազմները գրեթե ավերել էին երկիրը: Մայր աստիճանի քայքայված վիճակում էր գտնվում մանավանդ գյուղատնտեսությունը: Հայաստանի բնակչության ավելի քան 250 000 հոգի ենթակա էին սովամահության: Մանր էր դրությունը մանավանդ Ջանգեղուրում և Ալեքսանդրապոլում: Հայաստանում մոռեցնում էր նաև համաճարակը, որը հազարավոր զոհեր էր խլում բնակչությունից: Պետք էր ձեռք բերել դեղորայք: Մեծ կարիք կար նաև հագուստեղենի: Մի խոսքով, անհրաժեշտ էր շտապ փնտրել միջոցներ՝ ստեղծված ծանր դրությունը մեղմելու համար:

Ահա այսպիսի ծանր շրջանում, Հայաստանի մի խումբ հայրենասեր և հեղինակավոր մտավորականների նախաձեռնությամբ, կազմակերպվում է Հայաստանի օգնության կոմիտեն, որը կարճ կողովում է ՀՕԿ²:

ՀՕԿ-ի հիմնադիր ժողովը բացվում է Երևանում 1921 թվականի սեպտեմբերի 13-ին: Ժողովին մասնակցում են հայ աչքի ընկնող գրողներ, գիտնականներ և հասարակական ու քաղաքական գործիչներ:

ՀՕԿ-ի հիմնադիր ժողովը, իր աշխատանքներն ավարտելուց հետո, դիմում է Հայաստանից դուրս գտնվող հայությանը և կոչ

անում՝ կազմակերպելու օգնություն՝ Հայաստան ուղարկելով առաջին հերթին հաց, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, զգեստ և դեղորայք, որպեսզի կարելի լինի ապահովել բնակչությանը սովամահության վտանգից, և հնարավոր լինի ստանալ, ընդունել և տեղափոխել երեք աստանդական կյանք վարած այն գաղթականներին, որոնք հոգնած և ընչազուրկ դառնում են իրենց հայրենիքը¹:

Ժողովականներն ընտրում են ՀՕԿ-ի կենտրոնական վարչություն 77 հոգուց, որի մեջ մտնում են կոն, Թ. Ավդալբեկյանը, Մ. Արեղյանը, Մ. Սարյանը և այլ անվանի գրողներ, արվեստագետներ և գիտնականներ: Վարչության նախագահ է ընտրվում բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

ՀՕԿ-ի հայությանն ուղղված կոչին արձագանքում են ինչպես սովետական հանրապետությունները, այնպես էլ արտասահմանի հայկական բազմաթիվ համայնքներ և կազմակերպություններ:

Սփյուռքում առաջին արձագանքողներից մեկն է հանդիսացել հայ բարեգործական ընդհանուր միության վարչական ժողովի նախագահությունը: Նա, ՀՕԿ-ի կոչն ստանալուն պես, դիմում է սփյուռքահայությանը հատուկ հանձնարարականով, որի մեջ ասված է. «Որևէ ջանք պետք չէ խնայեք, որպեսզի ձեր շրջանակին մեջ գտնվող հայերը, յուրաքանչյուրն իր միջոցներուն համեմատ և կարելին եղածին շահով առատաձեռնորեն, անխտիր մասնակցի այն հանգանակությանը, որ բացած ենք»²:

Հայկական գաղթավայրերում ՀՕԿ-ի մասնաճյուղ առաջին անգամ կազմակերպվում է Թավրիզում 1922 թվականին: Հաջորդ տարին Իրանի գրեթե բոլոր հայաշատ վայրերում՝ Թեհրանում, Նոր-Ջուղայում, Ռաշտում, Փեհլեխում, Մարաղայում, Ուրմիայում, Արդաբիլում և այլուր կազմակերպվում են ՀՕԿ-ի մասնաճյուղերը: 1924—1926 թվականին ՀՕԿ-ի ճյուղեր են սկսում կազմակերպվել նաև հայկական մյուս գաղթավայրերում:

Որոշ երկրներում ՀՕԿ-երը կազմակերպվում են երկրի կառավարությունների հավանությամբ և գործում են լեգալ: Այդպես է եղել, օրինակ՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և մի քանի այլ երկրներում: Իսկ որոշ երկրներում, տեղի իշխանությունների անբարյացակամ վերաբերմունքի հետևանքով, ՀՕԿ-երը կազմակերպվում և գործում են կիսալեգալ ձևով: Այդպես

1 ՀՊՀԱ, ֆ. 178, № 5, էջ 1—2:

2 Նույն տեղում, № 4, էջ 8—9:

1 «Ռանչբար Իրանի», 1924, հունվարի 2:

2 ՀՕԿ-ի մասին լույս է տեսել Հ. Մելիքսեթյանի «Հայաստանի օգնության կոմիտեն և նրա դերը հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդման գործում» արժեքավոր հոդվածը (տե՛ս «Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր», 1959, № 8, էջ 31—48) և Ա. Վարդապետյանի «Հայաստանի օգնության կոմիտե» խորագրով գրքույկը, 1966 թ.:

է եղել՝ Հարավային Ամերիկայում, Սիրիայում, Եգիպտոսում, Բուլղարիայում և Ռումինիայում:

1921 թվականի հոկտեմբերի վերջերին, 204-ի կենտրոնական վարչութիւն լիազորութեամբ, Պոլիս է մեկնում մի պատվիրակութիւն՝ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ղեկավարութեամբ:

Պատվիրակութեան Պոլիս մեկնելը դրական արդուներ է տալիս: Պոլսում էր այդ ժամանակ գտնվում Հայաստանի օգնութեան մարմինը (ՀՕՄ-ը), որն իր մասնաճյուղերն ուներ Բուլղարիայում, Ռումինիայում և Եգիպտոսում: Պատվիրակութեանը հաջողվում է համաձայնութեան գալ ՀՕՄ-ի կենտրոնական վարչութեան հետ և ստանալ նրա նյութական միջոցները: Բացի այդ, պատվիրակութիւնը հնարավորութիւն է ունենում Պոլսում հանդես գալ մի շարք զեկուցումներով և կենդանի խոսքով լուսաբանել Սովետական Հայաստանի իրական վիճակը, հերքել թշնամական շրջանների տարածած անհեթեթ լուրերն ու զրպարտութիւնները:

204-ի կենտրոնական վարչութեան կողմն արտակարգ կարեկցութեամբ և օգնելու շեքմ պատրաստակամութեամբ են ընդունել արտասահմանի հայկական գրեթե բոլոր գաղթավայրերը: Կոչի առաջին արձագանքողներն են հանդիսացել բուլղարահայերը: Բուլղարիայի կոմունիստական կուսակցութեան հայկական խմբերի կոմիտեն Ֆիլիպոպոլում, 1921 թվականի սեպտեմբերի վերջերին, դիմել է բուլղարահայութեանը՝ «Օգնենք Խորհրդային Հայաստանին» սրտառուչ կոչով¹:

Շատ շանցած, 204-ի ԿԿ-ի կոչին արձագանքել է Քավրիզի հայ գաղթօջախը: Քավրիզի 204-ի վարչութիւնը, 1922 թվականի ապրիլի 30-ին, Երևան՝ 204-ի կենտրոնական վարչութեան անունով, ուղարկած իր գրութեան մեջ հայտարարել է, որ Քավրիզի հայ գաղութը հանդիսանալով Մայր հայրենիքում ապրող հայութեան բեկորներից մեկը, միշտ էլ իր հոգու բոլոր թելերով կապված է եղել հայ բնաշխարհում ապրող իր եղբայրների հետ, միշտ էլ հաղորդակից է եղել իր բազմատանջ հայրենիքի ցավերին ու ուրախութիւններին: Եվ երբ այսօր Հայաստանի օգնութեան կոչ է ուղղվում հայ գաղութներին, Քավրիզի հայութիւնը չի զլանա իր հայրենասիրական պարտքը կատարելուց²:

Աշխատանքներ են տարվել բոլոր գաղթավայրերում: Եգիպտոսում 1924 թվականին ձեռնարկվել է հանգանակութիւն ճահիճ-

ների շորացման նշանաբանով: Եգիպտահայութիւնը պարտավորութիւն է վերցրել շորացնել Հայաստանում 1000 դեսյատին ճահիճ: Կահիրեում կազմվել է «Հայաստանի վերաշինութեան Եգիպտոսի հանգանակութեան հանձնաժողով», որն իր մասնաճյուղն է ունեցել Ալեքսանդրիայում: Կահիրեում հրատարակվող «Արև» թերթն այդ առիթով հանդես է եկել հատուկ խմբագրականով և կոչ արել նյութական աջակցութիւն ցույց տալ՝ ոտոգելու Հայաստանի անջրդի դաշտերը և շորացնելու ճահիճները¹:

Արտասահմանի հայ գաղթավայրերում ամենուրեք հանգանակութիւններ են կատարվում և գոյացած գումարով ապրանքներ կամ սննդամթերք գնում և ուղարկում Հայաստան:

Մինչև 1923 թվականի վերջերը Հայաստանում 204-ի արտասահմանյան ճյուղերից ստացվել է 42 հազար փութ ալյուր, 30 հազար փութ սերմացու, 266 հազար ուրլու արժեքով հագուստեղեն, կոշիկեղեն, դեղորայք, մեքենաներ և կանխիկ դրամ: Առաջին երեք տարում 204-ի ճյուղերի միջոցով ստացված ալյուրի, սերմացուի, ցորենի, հագուստեղենի, դեղորայքի, մանր գործիքների և գրենական պիտույքների արժեքը ոսկու կուրսով հաշվել է 450 հազար ուրլի²:

Ստացված այս ապրանքները և սննդամթերքները, իհարկե, շատ շնչին էին այն մեծ կարիքների համեմատութեամբ, որ ուներ Հայաստանը: Պետք է նկատի ունենալ, որ տեղացի բնակչութիւնից բացի, անհրաժեշտ էր կերակրել ավելի քան 120 հազար հայ գաղթականների և մոտ 25 հազար որբերի: Այդ շնչին էր նաև այն խոշոր օգնութեան համեմատութեամբ, որ ցույց էին տալիս Ռուսաստանը և մյուս հանրապետութիւնները: Սակայն սփյուռքահայութեան օգնութիւնը ցուցանշական է այն տեսակետից, որ հայրենի երկրի ծանր օրերին, երբ գերմարդկային ճիգեր էր կատարվում սովի և հիվանդութիւնների ճիրաններից ազատելու համար մարդկանց, տարագիր հայութեան ճնշող մեծամասնութիւնը, առանց նշանակութիւն տալու սովետական իշխանութեան շուրջ տարածված զրպարտութիւններին, հաստատակամ կանգնում է հայրենի երկրի կողքին և օգնութեան ձեռք մեկնում նրան:

Հայկական գաղթավայրերում 204-ի խոշոր կազմակերպութիւններ գոյութիւն են ունեցել ԱՄՆ-ում և Ֆրանսիայում: ԱՄՆ-ում 204-ը ունեցել է 79 մասնաճյուղ, որոնցից խոշորները գտնվել են

¹ «Խորհրդային Հայաստան», 1924, հունիսի 28:

² 29 Ա, ք. 178, № 66, էջ 66-68:

¹ 29 Ա, ք. 178, № 59, էջ 17:

² Նույն տեղում, № 1, էջ 43:

Նյու-Յորքում, Չիկագոյում, Բոստոնում, Ֆիլադելֆիայում, Դետրոյթում և Սան-Ֆրանցիսկոյում: ԱՄՆ-ում 204-ի անդամների թիվը հասել է մինչև 2500-ի: Ֆրանսիայում գոյություն է ունեցել 204-ի 31 մասնաճյուղ՝ 1800 անդամով: Խոշոր մասնաճյուղերը գտնվել են Փարիզում, Մարսելում և Լիոնում, ուր, համեմատաբար, հայկական մեծաթիվ բնակչություն էր ապրում: Մեծ է եղել նաև Բուլղարիայի 204-ի անդամների թիվը՝ մոտ 3000 հոգի: Ըստ տեղեկությունների, 1930 թվականին 204-ն արտասահմանում ունեցել է 200-ից ավելի կազմակերպություն՝ շուրջ 10 000 անդամով:

204-երը կազմակերպչորեն ավելի ամրապնդելու և նրանց միջոցով Սովետական Հայաստանի իրական վիճակը ճշմարտացի ներկայացնելու նպատակով, 204-ի կենտրոնական վարչությունը մի քանի անգամ ուղարկել է իր պատգամավորներին հայ գաղթավայրերը, որոնք այնտեղ հանդես են եկել զեկուցումներով, տարել են իրենց հետ Հայաստանը պատկերող կինոնկարներ, ալբոմներ, գրքեր և ցուցադրական այլ նյութեր ու խանդավառել հայրենակարոտ գաղթահայությանը:

Հովհաննես Թումանյանից հետո, 1924 թվականին, արտասահմանի հայ գաղթավայրերն է գործուղվել Արամայիս Երզնկյանը, որը եղել է 204-ի առաջին ներկայացուցիչներից և նրա գործուն ղեկավարներից մեկը: Երզնկյանը եղել է Ֆրանսիայում, Գերմանիայում, Բելգիայում և Անգլիայում, հանդես է եկել մի շարք զեկուցումներով և աշխատել ցրել այն սխալ պատկերացումները, որոնք ստեղծված են եղել Սովետական Հայաստանի թշնամական տարրերի կողմից²:

1925—1926 թվականներին Եվրոպայի և Ամերիկայի գաղթավայրերն են այցելել 204-ի կենտրոնական վարչության երեք ներկայացուցիչները՝ Գրիգոր Վարդանյանը, Կարեն Միքայելյանը և բժիշկ Կամսար Գրիգորյանը: Նրանք եղել են Գերմանիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և Ամերիկայում: Թե ինչպիսի մեծ խանդավառություն է պատճառել հայրենի երկրից հազարավոր կլիմետրերով հեռու գտնվող ամերիկահայությանը այս պատգամավորությունը, բավական է կարգալ այն ժամանակվա հայկական թերթերը, ուր օրը օրին տպագրվել են պատգամավորների հրապարակային դասախոսությունները: Պատգամավորների այս ելույթը շրջագայել է ԱՄՆ-ի 60 խոշոր

քաղաքներում, ուր հայ բնակչություն էր ապրում, կարգացել է 120 դասախոսություն և ամենուրեք ցուցադրել Հայաստանի ներկա կյանքը պատկերող կինոնկարներ¹:

Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը, ժամանակին անդրադառնալով 204-ի գործունեությանը, բարձր գնահատական է տվել նրա աշխատանքներին. «Սոցիալիստական հայրենիքի հմայքըն ու հեղինակությունը գնալով ավելի ու ավելի է աճում արտասահմանյան աշխատավորների մեջ,— գրել է նա:— Սովետական են 204-ի՝ Խորհրդային Հայաստանի բարեկամների՝ այդ մասսայական կազմակերպությունների շարքերը արտասահմանի բոլոր գաղթօջախներում: Անհրաժեշտ է, որ գաղութահայ աշխատավորներն էլ ավելի հոծ զանգվածով խմբվեն 204-ի շուրջը որպես մի կազմակերպություն, որն անկեղծորեն ցանկանում է նյութապես և բարոյապես օգնել Խորհրդային Հայաստանի կառուցման գործին՝ ուժեղացնելու համար նրա դիրքերը»²:

Հայ գաղթավայրերում սկզբնական տարիներին 204-ի կազմակերպություններին անդամակցել են սփյուռքահայության սոցիալական տարբեր խավերը, առաջադիմական հայացքներ ունեցող մարդիկ: Նրանց մեջ գտնվել են անգամ սովետական կարգերի նկատմամբ թշնամաբար տրամադրված տարրեր, որոնք ժամանակի ընթացքում խմբավորվելով, սկսել են դժվարություններ հարուցել 204-ի աշխատանքներում: 204-ի կենտրոնական վարչությունը, ցանկանալով վերջ դնել այդ դրույթյանը, անհրաժեշտ է համարել հատուկ շրջաբերականով զգուշացնել 204-ի մասնաճյուղերին, որ 204-ը «չնայած անկուսակցական մարմին է, սակայն նա ունի իր քաղաքական դիրքավորումը. նա խորհրդային երկրի և առանձնապես Խորհրդային Հայաստանի ջերմ բարեկամ կազմակերպություն է: Հետևաբար 204-ի մեջ չեն կարող տեղ ունենալ Խորհրդային Հայաստանի թշնամի տարրերը»³:

Երբ Սովետական Հայաստանում ավարտվում է սովի և համաճարակի դեմ տարվող պայքարը, և հայ աշխատավորությունը եռանդով ու ոգևորությամբ լծվում է վերաշինության գործին, մի քանի տարի հետո դրսևորվում են շինարարական այդ մեղվաչան աշխատանքների շոշափելի արդյունքները: Այս երևույթը զգալի

1 2ՊՀԱ, ֆ. 178, № 66, էջ 66—68:

2 2ՊՀԱ, ֆ. 178, № 66, էջ 66—68:

1 2ՊՀԱ, ֆ. 178, № 741, էջ 10:

2 Նույն տեղում, № 66, էջ 66—68:

3 Նույն տեղում, № 741, էջ 10:

բեկում է առաջ բերում սփյուռքահայ շրջաններում: Այժմ սփյուռքահայությունն սկսում է ավելի լավատեսորեն նայել հայրենի երկրի հակայաքայլ տեղաշարժերին:

Պարսկաստանի Ահվազ գաղթօջախի 204-ի մասնաճյուղը 1925 թվականի հուլիսի 9-ին 204-ի կենտրոնական վարչությանն ուղարկած իր գրության մեջ, արտահայտելով տեղի հայ բնակչության ոգևորությունը Հայաստանում կատարվող կառուցումների առիթով, գրել է. «Մեզ հասած տեղեկությունները հայրենիքի վերաշինության վերաբերյալ ոգևորիչ և գոտեպնդիչ են, և մենք չենք կարող չոգևորվել և միևնույն ժամանակ մեր հիացմունքը շարտահայտել առ հայ շարքաշ շինականն ու բանվորը, որոնք առեղծված դժվարին ու ծանր պայմաններում աննկուն առաջ են տանում ավերակ երկրի վերաշինումն ու կերտումը, հայ կուլտուրան իր հարազատ բնագավառում»¹:

Սովետական Հայաստանում տեղի ունեցող վիթխարի տեղաշարժերի նկատմամբ սփյուռքահայ առաջադիմական շրջանների վերաբերմունքը գնահատելու տեսակետից ցուցանշական է Հյուսիսային Ամերիկայի համագաղութային կենտրոնական հանգանակիչ մարմնի 1926 թվականի մայիսի կոչի հետևյալ տողերը. «Այսօր անոնք՝ մեր հայրենակիցները, մեր սիրելի ազատ հորհրդային Հայաստանի մեջ իբրև ազատ քաղաքացիներ, լծված են վերաշինության գործին այնպիսի եռանդով ու ոգևորությամբ, որ նույնիսկ օտարներու հիացմունքի առարկա են դարձած: Այլևս մեր ականջին չի հասներ լացի ու կոծի ձայներ, որոնք մեր սիրտը արյունով կլցնեին: Այլևս մենք չենք լսեր ջարդի ու սարսափի լուրեր, որոնք մեզ տիրությունը կպատեին: Արհավիրքեն, մղձավանջեն ազատ հայ գյուղացին, հայ բանվորը, հայ մտավորականը կզարգացնեն մեր երկրի գյուղատնտեսությունը, ճարտարվեստն ու մշակույթը...»²:

1925—1926 թվականներին 204-ի կենտրոնական վարչության պատգամավորների՝ արտասահման այցելելուց և Հայաստանի մասին նրանց տված բացատրությունից հետո, առանձնապես գործուն դերով սկսում են հանդես գալ ամերիկահայ հայրենակցական միությունները, որոնք ձգտելով իրենց ավերված գավառների ցրված բնակչությանը համախմբել հայրենի երկրում և հավերժացնել իրենց ծննդավայրի հիշատակը, ցանկանում են

1 2ՊՁԱ, ֆ. 178, № 409, էջ 80:

2 Նույն տեղում, № 422, էջ 32:

իրենց հայրենակցական միության անուններով Երևանում ավաններ կառուցել: Այդ գործում առանձնապես ակտիվ հանդես է գալիս ԱՄՆ-ի հայ գաղթավայրը, մասնավորապես արաբկիրցիների, մալաթիացիների, սեբաստացիների, եվդոկացիների, կեսարացիների, թոմարզացիների, տիգրանակերտցիների և խարբերդցիների հայրենակցական միությունները, որոնք ավաններ են կառուցում Երևանում:

1934—1937 թվականներին Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Սիրիայի հայ գաղթավայրերից մի շարք հայրենակցական միություններ դիմել են Երևանի 204-ի գլխավոր վարչությանն ու Սովետական Հայաստանի ղեկավար մարմիններին և թույլտվություն խնդրել՝ Հայաստանում իրենց միության անունով ավան կառուցել կամ օգնել կառուցող ավանների շինարարությանը: Այդ հայրենակցական միություններից շատերին չնայած չի հաջողվել իրագործել իրենց նախատեսած ծրագիրը, սակայն այն փաստը, որ նշված հայրենակցական միությունները քաղաքական բավականին անբարենպաստ պայմաններում, անշահախնդիր և մեծ նվիրումով հանդես են եկել նման հայրենասիրական ձեռնարկներով, ապացույց է հայրենի երկրի նկատմամբ տարագիր հայության ցուցաբերած անսահման սիրո և նվիրվածության: Ցանկանում ենք այստեղ բերել այդ հայրենակցական միությունների ոչ լրիվ ցանկը:— Մարսելի վասպուրականցիների միությունը, Ֆրանսիայի Պրուսա-Սեռլենդի վերաշինության հայրենակցական միությունը, Ամերիկայի Սոկատի վերաշինության ընկերությունը, Մարսելի Չաթի վերաշինության հայրենակցական միությունը, Հալեպի Քիլիսի վերաշինության մասնաճյուղը, Փարիզի Բուլանիայի հայրենակցական միությունը, Մարսելի ասլանբեգցիների վերաշինական միությունը, Մարսելի Բարձր Հայքի վերաշինության հայրենակցական միությունը, Հալեպի զեյթունցիների հայրենակցական միությունը, Տիգրանակերտցիների հայրենակցական միությունը, Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը, Մեծ Նոր գյուղի հայրենակցական միությունը, Հաճնի հայրենակցական միությունը, Կյուրցունի հայրենակցական միությունը, Քղիի հայրենակցական միությունը, Ամերիկայի Կիմերիկի հայրենակցական միությունը, Դետրոյթ-Միչիգանի համաքղեցիական միությունը, Մարսելի Ամասիայի հայրենակցական միությունը, Ամերիկայի Սեբաստիայի վերաշինության միությունը, Մարսելի Սիվրի Հիսարի հայրենակցական վերաշինության միությունը, Համաերզնկյան պատգամավորական ժողովը և այլն:

Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը գնահատելով 204-ի աշխատանքը, գրել է. «204-ը հանդիսանում է գաղթահայության մեջ հորհրդային Հայաստանի ամենաչերմ բարեկամը և նրա տնտեսական, քաղաքական և կուլտուրական վերելքի ու բարգավաճման մասին գրեթե առաջին և միակ տեղեկատու հասարակական կազմակերպությունը: 204-երը եղել են և են հորհրդային Հայաստանի և գաղութահայության շաղկապը»¹:

Հայաստանի տնտեսական կյանքի բարելավումից հետո օգնության անհրաժեշտությունն ինքնին վերանում է: 204-երն այժմ զաղարում են Հայաստանին օգնող մարմին լինելուց և վերածվում ներգաղթին օժանդակող մարմնի: Եվ այսպես, նրանք հեռանում են այն նպատակից, որի համար կոչված էին: Հայաստանի կառավարությունը նկատի ունենալով, որ ներգաղթ կոմիտեն արգեն ստեղծվել էր և նրան զուգահեռ 204-ի մարմնի առկայությունը նպատակահարմար չէր, ուստի 1937 թ. դեկտեմբերի 3-ի հրամանով որոշում է լուծարքի ենթարկել այն: Այդ որոշումից հետո լուծարքի են ենթարկվում Հայաստանի օգնության կոմիտեները Սփյուռքում:

204-ը, իր գոյության շուրջ 16 տարիների ընթացքում, խոշոր գործ է կատարել հայրենի երկիրը սփյուռքահայությանը ներկայացնելու և սփյուռքահայությունը՝ հայրենի երկրին: Հայ գաղթավայրերը, 204-երի միջոցով գորավիզ են հանդիսացել հայրենի երկրին և իրենց համեստ մասնակցությունը ցուցաբերել երկրի տնտեսությունը վերականգնելու գործում:

Հայ գաղթավայրերը հայրենիքի կողքին են գտնվել ո՛չ միայն սովի և համաճարակի ծանր տարիներին, ո՛չ միայն տնտեսության վերականգնման և շինարարական աշխատանքների ծավալման ժամանակ, այլև բնական պատահարների ծանր օրերին: Հայ գաղթավայրերը սիրով են արձագանքել հայրենի երկրի կոչին՝ օգնելու 1927 թ. Լենինականի երկրաշարժից տուժածներին: Գրեթե ցուրր գաղթավայրերում կազմակերպել են հանգանակություններ և հավաքված դրամն ուղարկել Հայաստանի կառավարությանը՝ օգտագործելու քանդված տների վերաշինության համար: Ոչ լրիվ տվյալներով, Լենինականի տուժածներին իբրև օգնություն ուղարկվել են հետևյալ գումարները. Ֆրանսիայից՝ 232 հազար ֆրանկ և 4500 ստերլինգ, Բելգիայից՝ 4242 ֆրանկ, Շվեյցարիայից՝ 10968

ֆրանկ, Ամերիկայից՝ 622232 դոլար, Եթովպիայից՝ 6500 ֆրանկ, Երուսաղեմից՝ 29370 ֆրանկ, Բելյուսթից՝ 30 000 ֆրանկ, Դամասկոսից՝ 500 ֆրանկ, Եգիպտոսից՝ 3325 ստերլինգ, Ռումինիայից՝ 700 ստերլինգ, Գերմանիայից՝ 61 ստերլինգ, Կիպրոսից՝ 162 ստերլինգ, Իրանից՝ 15 142 ուրլի և այլն¹:

1931 թ. հայ գաղթավայրերը նյութական լայն օգնություն են կազմակերպել նաև Զանգեզուրի երկրաշարժից տուժածներին: Զանգեզուրի աղետյալների օգտին բոլոր հայկական գաղթավայրերից ստացվել են օգնության գումարներ:

Ճիշտ է, այդ օգնություններն այնքան մեծ չեն եղել, որ կարողանային էական նշանակություն ունենալ ինչպես Լենինականի, այնպես և Զանգեզուրի երկրաշարժից առաջացած ավերումները վերականգնելու գործում, բայց ցուցանշական են այն տեսակետից, որ ապացուցում են տարագիր հայության անխարդախ սերն ու կարեկցությունը դեպի հայրենի երկիր:

Լենինականի և Զանգեզուրի բնական աղետների այս ծանր օրերին, ինչպես հայտնի է, Սովետական Հայաստանին անմիջապես օգնության ձեռք մեկնեցին Սովետական Միության եղբայրական հանրապետությունները: Այս փաստը հիացմունքով է նշվել սփյուռքահայ շրջանակներում: Չէ՞ որ այդ աղետը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը իր թիկունքում ուներ անշահախնդիր բարեկամներ, հանձին սովետական ժողովուրդների:

Սովետական Հայաստանի կառավարության սրտացավ վերաբերմունքը իր ազգակից տարագիրների նկատմամբ դրսևորվել է Իրաքի հայ գաղթականության ներգաղթը կազմակերպելու գործում:

1917 թվականի մարտի 11-ին, երբ անգլիացիները գրավեցին Բաղդադը, այնտեղ ապաստանեցին Արևմտյան Հայաստանից, հստակապես վասպուրականի գյուղերից, ինչպես նաև Ուրմիայից ավելի քան 25 հազար հայ գաղթականներ: Անգլիական ռազմական իշխանությունները թուրքական սպանդից ազատված այս գաղթականությունը տեղավորեցին Բաղդադի մոտիկ Բաքուբա կոչվող վայրում, վրանների տակ: Այս վայրի հայ գաղթականությունը գնալով ավելի բազմացավ և վայրը ստացավ Բաքուբայի «հյուղաքաղաք» կամ «վրանաքաղաք» անունը²:

¹ Նույն տեղում, № 394, էջ 37:

² 292Ա, ֆ. 200, ց. 1, № 237, էջ 107—108:

Անգլիական իշխանությունները, ինչպես ասել ենք, 1920 թվականին Բաքուրայի հյուղաքաղաքի հայ գաղթականությանը տեղափոխում են Միջագետքի հարավում գտնվող Ներհումեր կոչվող վայրը՝ Բասրայից ոչ շատ հեռու: Հայ գաղթականությունը Ներհումերում ավելի ծանր վիճակի մեջ է ընկնում: Վատառողջ կլիմայի, վատ ջրի, համաճարակի, կիսաքաղց վիճակի հետևանքով տեղի են ունենում մեծ թվով մահացություններ:

Ներհումերի հայ գաղթականության գրությունը ավելի է ծանրանում, երբ անգլիական իշխանությունները որոշում են կտրել նյութական այն խղճուկ օգնությունը, որ նրանք ցույց են տալիս հայ թշվառ գաղթականներին:

Ճակատագրական այս ծանր շրջանում Հայաստանի կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը հայ գաղթականության նկատմամբ ցուցաբերում են արտակարգ սրտացավ վերաբերմունք: Այդ ցայտուն դրսևորված է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի 1921 թվականի հուլիսի 2-ի կոչ-դիմումի մեջ, ուղղված Համադանի, Քերմանշահի, Մուսուլի և Ներհումերի գաղթականներին: Այդ փաստաթուղթը, փաստորեն, արտասահմանի հայությանը ներգաղթի խոստումներ տվող առաջին վավերագիրն է, ուստի անհրաժեշտ ենք համարում ընդարձակ մեջբերում անել նրանից.

«Հայաստանի Կենտրոնական Կոմիտեն ամենամեծ համակրանքով և նույնքան խորին վշտով է հետևում ձեր գերմարդկային գողգոթային, անասելի տառապանքներին, որ կտանեք ամբողջ երեք տարիներ ի վեր...— ասված է այնտեղ:— Երկրի և արտասահմանյան գաղութների հայ աշխատավորական զանգվածները մեջ հավասարապես առաջ եկած է միանգամայն բնական և կյանքի անփոխարինելի օրենքներին համապատասխան հոգեբանական թեքում ի նպաստ խորհրդային իշխանության... Հայաստանի կոմունիստական կուսակցությունը մեկնակետ ունենալով վերոհիշյալ իրողությունը, որ ստեղծվեցավ բովանդակ հայ աշխատավորության մեջ աշխարհիս որ կողմն ալ ցրված ըլլան, առաջարկում է ձեզ վերադառնալ Հայրենիք՝ խորհրդային իշխանության ծոցը, և նվիրվել մեր ազգի շինարարությանը: Կոչ անելով վերադառնալ դեպի հայրենի երկիրը ի խնդիր անոր շինարարության, ի խնդիր ձեր աստանդական կյանքին: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը պիտի ի գործ դնեն իր բոլոր հնարավոր միջոցները ապաստան տալու, վերաբնակեցնելու ձեզի գյուղերու և թե քաղաքներու մեջ, պիտի տա

իր բոլոր կարելի և անկարելի միջոցներով՝ անելով իր լավագույն ճիգը ընդառաջելու համար ձեր կարիքներին մինչև որ դուք ևս իր հերթին կարողանաք նվիրվելու մեր երկրի վերաշինության սրբազան գործին: Շարունակեցեք ըլլալ ավելի քան անվհատ, դիմացկուն և... վստահ եղեք, որ ձեր գողգոթան պիտի պսակվի ձեր հայրենի երկրի ասպնջականությամբ»¹:

Կարելի է արդյոք պատկերացնել, թե ի՞նչ ուրախությամբ ու գորովանքով են ընդունել արտասահմանի հուսահատ, անհեռաճակար ու թափառական հայ գաղթականները հայրենի երկրից լավող ձայնը:

1921 թվականի հոկտեմբերին, Իրաքի 12000 հայ գաղթականության անունից, նրա ներկայացուցիչները դիմել են Սովետական Հայաստանի կառավարությանը, նկարագրել իրենց ծանր գրությունը, անգլիացիների ռազմական իշխանությունների անբարյացակամ դիրքը և խնդրել աջակցել իրենց՝ տեղափոխվելու Հայաստան: Իրաքի հայ գաղթականության ներկայացուցիչները Սովետական Հայաստանի կառավարությանն ուղարկած իրենց դիմումի մեջ հայտարարել են. «Բնաջնջումի նախօրյակին այս բազմահազար գաղթականությունը կսիրե հուսալ իր փրկությունը միայն իր հարազատ հայրենիքից»²:

1921 թվականի աշնանը, երբ հայտնի է դառնում, որ անգլիացիները դադարեցրել են Միջագետքի Ներհումերի ճամբարի հայ գաղթականությանը տրվող նպաստը, որի հետևանքով նրանք ընկել են անասելի ծանր գրության մեջ, Սովետական Հայաստանի կառավարությունն անհրաժեշտ է համարում օգնության ձեռք մեկնել հայ տարագիրներին: Սովետական Հայաստանի Արտաքին գործերի կոմիսար Ա. Մոսվյանը 1921 թվականի հոկտեմբերին հուշագրով դիմել է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Քերզոնին հետևյալ հայտարարությամբ. «Օգնության գործի դադարեցումը Միջագետքի անգլիական իշխանությունների կողմից փաստորեն համազոր է գաղթականության մահվան դատա-

1 Այս կոչ-դիմումը դեռ չի հրատարակված, նրանից մեջբերում է արել պատմական գիտությունների թեկնածու Հ. Մելիքսեթյանը իր «Սովետական իշխանության առաջին քայլերը հայ գաղթականության հարցում» խորագրով հոդվածում (տե՛ս «Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր», 1960, № 3, էջ 3—20):

2 «Կարմիր աստղ», 1921, հոկտեմբերի 14:

պարտելուն»¹: Մուսավյանը Անգլիայի արտաքին գործերի մինիստրին խնդրել է շարունակել գաղթականության նպաստավորումը: Հուլյանը վերջում նա ավելացրել է. «Իսկ եթե Բրիտանիայի կառավարությունը հրաժարվի ստանձնել իր վրա այդ դժբախտ գաղթականների հոգածությունը, կխնդրեի գեթ կատարել նրանց վերջին իղձը և միջոցներ ձեռք առնել նրանց տեղափոխելու Պոլսի վրայով դեպի Բաթում, որպեսզի Հայաստանի կառավարությունը հնարավորություն ունենա տեղափոխել նրանց իր սահմանները»²:

Շուտով անգլիական երեք նավով Ներհումների ճամբարից Բաթում է բերվում 9192 շունչ հայ բնակչություն, որոնք երկաթուղով տեղափոխվում են Հայաստան:

Ներհումների գաղթականության այդ խումբը Հայաստան տեղափոխվելուց հետո ևս այնտեղ մնացել են 2505 հոգի: Իրաքի անգլիական իշխանությունները, կոմիսար Կոքսի կարգադրությամբ, դադարեցրել են նրանց տրվող նպաստը և առաջարկել ցրվել՝ նպատակ ունենալով հայ գաղթականությանը զրկել Հայաստան գնալու հնարավորությունից և ապահովել Միջագետքի և Իրանի անգլիական նավթահանքերում աշխատող բանվորական ուժը: Ապրուստի տարրական հնարավորություններից զուրկ, ապաստան գտնելու հեռանկար չունեցող հայ գաղթականությունը, հանկարծակի եկած, հրաժարվել է կատարել անգլիական իշխանությունների կարգադրությունը՝ հեռանալ ճամբարից և պահանջել է իրեն ճանապարհել Հայաստան: 1921 թվականի հուլիսի 3-ին Ուինստոն Չերչիլին ուղարկած Կոքսի մի զեկուցագրից երևում է, որ նա հայ գաղթականներին ճամբարից ցրելու համար դիմել է բռնի ուժի. ոստիկաններին պատվիրել է քշել վրաններից հայ գաղթականներին, սակայն նրանք դիմադրել են ոստիկաններին, նույնիսկ «քարկոծել նրանց»³:

Հաջորդ տարին Միջագետքի անապաստան այս գաղթականությունը ևս Պարսկաստանի վրայով տեղափոխվում է Հայաստան:

Իրերի բերումով, այդ տարիներին ծանր դրություն է ստեղծվել ո՛չ միայն Իրաքի հայ գաղթականության, այլև Հունաստանի և Պոլսի հայ գաղթականության համար:

1921—1922 թվականներին, Կիլիկիայի և Զմյուռնիայի դատարկումից հետո, ինչպես հայտնի է, Հունաստան ապաստանեցին

ավելի քան 120 000 հայ փախստական: Հուլյն ժողովուրդը շնայած սիրալիր ընդունեց բախտակից հայ գաղթականներին, սակայն ի վիճակի չէր այդքան գաղթականությանը ապաստան տալ և կերակրել: Պետք է նկատի ունենալ, որ 1918—1923 թվականներին հայերից բացի Հունաստան էին ապաստանել շուրջ մեկ միլիոն երկու հարյուր հազար հուլյն գաղթականներ¹: Լեռնոտ և տնտեսապես թույլ զարգացած այնպիսի մի երկիր, ինչպիսին Հունաստանն է, չէր կարող ապաստան տալ և խնամել այդքան գաղթականության: Հունաստանի կառավարությունը որոշում է ընդունում օտար հպատակություն ունեցող գաղթականներին դուրս անել երկրից: 1923 թ. հունվարին ընդունած օրենքով, հանձնարարվում է օտարահպատակներին ազատել պետական ծառայությունից, գործարաններից և այլ աշխատանքներից: Հայ գաղթականության դրությունն սկսում է ծանրանալ:

Այդ դրության մեջ Աթենքի հայ ազգային վարչական ժողովը 1923 թ. հունիսին դիմում է սփյուռքահայությանը և խնդրում օգնության ձեռք մեկնել²:

1924 թ. ապրիլ ամսին հունական կառավարությունը որոշում է ընդունում և առաջարկում հայ գաղթականությանը 15 օրվա ընթացքում հեռանալ Հունաստանից: Այնուհետև հունական կառավարությունը դիմում է Ազգերի լիգային և պահանջում հայ գաղթականությանը Հունաստանից տեղափոխել մի այլ երկիր: Եվ այսպես, հայ գաղթականության առջև ծառանում է թափառական ցուպը նորից վերցնելու անհրաժեշտությունը: Բայց դեպի ո՞ւր: Ազգերի լիգայի՝ Հունաստան եկած հանձնաժողովին Հունաստանի հայերը այս հարցին մի պատասխան են տալիս. «Դեպի հայրենի երկիր»³:

Այս տարիներին ծանր էր նաև պոլսահայերի դրությունը: Պոլսի հայոց պատրիարքը 1922 թ. նոյեմբերի 19-ին հատուկ գրությամբ դիմել է Սովետական Հայաստանի ժողկոմխորհի նախագահին և խնդրել հնարավորություն տալ որոշ թվով պոլսահայերի ներգաղթել Հայաստան: Պատրիարքի գրության մեջ ասված է, որ 4. Պոլսի 200 000-ի մոտ հայ ժողովուրդը խուճապային սար-

1 Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից, էջ 26—27:

2 «Ժողովրդի ձայն», 4. Պոլիս, 1923: (Օգտվել ենք Կոնկինոսի հիշված աշխատությունից):

3 «Ժողովրդի ձայն», 4. Պոլիս, 1923: (Օգտվել ենք Կոնկինոսի հիշված աշխատությունից):

1 ՀՊՁԱ, ֆ. 114, ց. 1, № 89, էջ 34:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում էջ 43—50:

սափի մեջ, որի գոյությունը յուրաքանչյուր օր նրանից խլում է նրա լավագույն տարրերը և եթե այսպես շարունակվի, ապա վերջի վերջո կհանգի այն իրողության, որ Կ. Պոլսի հայ գաղթավայրի՝ հայ մշակույթի այս կարևոր կենտրոնը, կդադարի գոյություն ունենալուց¹:

Սովետական Հայաստանի կառավարությունն ի վիճակի չէր, իհարկե, մեծ թվով գաղթականություն ընդունել: Նա նախանձեղի ժառանգություն չէր ստացել անցյալից. քարուքանդ մի երկիր՝ հարյուր հազար որբերով ու գաղթականությամբ: Ծանր, շատ ծանր էր այդ պայմաններում գաղթականություն ընդունելը: Բայց, այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը որոշում է արձագանքել իր ազգակիցների կանչին և հայրենիքի դռները բաց է անում հայ գաղթականության առջև:

Առաջին տարիների ներգաղթը, պետք է ասել, որ կազմակերպված բնույթ չի ունեցել. ցանկանալով ներգաղթին ավելի կազմակերպված ձև տալ, ՀՍՍՀ ժողկոմսովետը 1925 թ. սեպտեմբերի 2-ին որոշում է ընդունել և կազմակերպել ներգաղթի պետական կոմիտե, որը պլանավորել է ներգաղթի գործը՝ արտասահմանից ընդունելով առաջին հերթին ծանր դրության մեջ գտնվող գաղթականներին²:

Ըստ վիճակագրական տվյալների, 1921—1928 թվականներին արտասահմանի հայ բնակչությունը Հայաստան է ներգաղթել հետևյալ վայրերից. 1921 թ. Թուրքիայից՝ 1500 հոգի, 1922 թ. Միջագետքից՝ 9192 հոգի, 1923 թ. Վանից՝ 932 հոգի, 1924 թ. Միջագետքից՝ 1045 հոգի, նույն տարին Պոլսից և Հունաստանից՝ 1600 հոգի, Եգիպտոսից՝ 275 հոգի, Հունաստանից՝ 1247, հոգի, 1925 թ. Պոլսից՝ 675 հոգի, նույն տարին Միջագետքից՝ 379 հոգի, 1926 թ. Հունաստանից՝ 3120 հոգի, 1927 թ. Պոլսից՝ 400 հոգի: Նույն տարին Հունաստանից՝ 1200 հոգի, 1928 թ. Հունաստանից՝ 700 հոգի և այլն³:

Այդ թիվը, իհարկե, աննշան էր բազմահազար դիմումների համեմատությամբ, որոնք արվել են այդ տարիներին հայ գաղթավայրերից՝ Հայաստան ներգաղթելու համար:

Երեսնական թվականներին կապիտալիստական երկրներում ծայր առած տնտեսական ճգնաժամը իր ծանր հետևանքներն է

թողնում նաև սփյուռքահայ աշխատավորության վրա և նորից հրապարակի վրա դնում ներգաղթի հարցը: Հայ գաղթավայրերից նորից դիմումներ են ստացվում Հայաստան ներգաղթելու համար⁴: Ըստ որում, ներգաղթողները բնակություն են հաստատում զբաղավորապես նոր Սեբաստիայում, նոր Խարբերդում, Արաբկիրում, նոր Մալաթիայում, նոր Եվդոկիայում, նոր Ամասիայում, նոր Արժաշում, Անի-Պեմզայում, Լենինականում, Իջևանում, Ստեփանավանում և այլ վայրերում:

Մեղվաչան աշխատանքով, երբ Հայաստանում վերականգնվում է տնտեսությունը, վերանում է գործազրկությունը և ըստեղծվում են անհրաժեշտ պայմաններ, Սովետական Հայաստանի կառավարությունը նորից անդրադառնում է ներգաղթի հարցին և որոշում ընդունում ներգաղթ թույլ տալու մասին:

Ըստ վիճակագրական տվյալների, 1932—1936 թվականներին հայ գաղթականություն է եկել հետևյալ վայրերից. 1932—1933 թթ.՝ Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից՝ 8007 հոգի, 1936 թ. Ֆրանսիայից՝ 180 հոգի, «Արագած» արտել և անհատական՝ 1000 հոգի, հաշվառման մեջ չմտնողներ՝ 6928 հոգի⁵:

Այսպիսով, 1921—1936 թվականների ընթացքում արտասահմանից Հայաստան է ներգաղթել շուրջ 40 000 հայ բնակչություն:

Հայ գաղթավայրերը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Հայրենի երկիրը իր տարագիր զավակներին մոտիկից ճանաչեց Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիներին՝ փորձության այդ ծանր ժամանակներում:

Ի պատիվ սփյուռքահայության պետք է ասել, որ այն օրվանից, երբ Սովետական Միությունը ենթարկվեց ուխտադրուժ հարձակման ֆաշիստական Գերմանիայի կողմից, արտասահմանի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը անվերապահ կանգնեց հայրենի երկրի թիկունքում:

Իր բազմադարյան պատմության ընթացքում հաճախակի կրկնվող պատերազմները և արհավիրքները հայ ժողովրդի գիտակցության մեջ ստեղծել են վտանգի պահին միավորվելու ձգտում: Այդ նույնը՝ արտասահմանի հայ համայնքներում տեղի ունեցավ նաև համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին. հայրենիքին սպառնացող վտանգի պահին գաղթավայրե-

1 ՀԳՀԱ, ֆ. 178, № 394, էջ 85:

2 Ե. Ռ. Հարությունյան, Սովետական Հայաստանը 40 տարում, էջ 141:

3 ՀԳՀԱ, ֆ. 178, № 394, էջ 85:

1 ՀԳՀԱ, ֆ. 178, № 257, էջ 47:

2 Նույն տեղում:

րի հայ բնակչության ստվար մեծամասնությունը միավորվեց: Ինչպես միշտ, բացառություն էին կազմում դաշնակցականները: Նրանք իրենց ժառանգությունն առաջարկեցին Հիտլերին և փոքրաթիվ հայ դավաճաններից կազմեցին այսպես կոչված կամավորական խմբեր, և սրանք Դրոյի ղեկավարությամբ կռվեցին Սովետական բանակի դեմ Հյուսիսային Կովկասում:

Պետք է նկատի ունենալ, որ համաշխարհային երկրորդ պատերազմը, հայ ժողովրդի գոյավիճակի տեսանկյունով, տեղի էր ունենում տարբեր իրադրության մեջ, քան համաշխարհային առաջին պատերազմը: Եթե այն ժամանակ հայ ժողովուրդը միայնակ էր, լքված կեղծ դաշնակիցներից, թույլ և անպաշտպան՝ հանձնված ճակատագրի քմահաճույքներին, ապա այժմ նա հանդես էր գալիս Սովետական Միության հարազատ ընտանիքի մեջ, նրա ամրակուռ կազմում:

Անկարելի է նկարագրել այն ոգևորությունը, որով համակվել են սփյուռքահայերը, երբ ստացվել են տեղեկություններ ռազմաճակատներից սովետական բանակի հաջողությունների և հայ ռազմիկների ու հրամանատարների ցուցաբերած սխրագործությունների մասին: Լիբանանի «Սովետական Հայաստանի բարեկամների միությունը», արտահայտելով տեղի հայության զգացմունքները, Հայաստանի կուլտուրական կապի ընկերությանը ուղարկած իր գրության մեջ հայտարարել է. «Հայրենական ներկա պատերազմը պատմական մեծ հեղափոխություն առաջ բերեց նաև մեր գաղութին մեջ: Այսօր Սուրիո և Լիբանանի հայությունը համախմբված է հայրենասիրական դրոշակի տակ և պատրաստ է հայրենիքի համար որևէ զոհողության առաջ կանգ շունել: Բոլորիս սրտերն ալ կուտին, երբ հայ զինվորներն ու սպաները, քաղաքական մարդիկ և աշխատավորները, իրենց հերոսությունովն ու աշխատանքովը Խորհրդային Միության կառավարության և եղբայրական ժողովուրդների գնահատանքին կարժանանան»¹:

Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքներից, պատերազմի այդ ծանր օրերին, Հայաստանի կառավարության անունով ստացվել է հետևյալ հեռագիրը. «Մենք պարծենում ենք Կարմիր բանակի շարքերում գտնվող և թիկունքում աշխատող հայաստանցի զավակների ու դուստրների հերոսական պայքարով: Մենք

ցույց կտանք մեր լիակատար օգնությունը: Անհողողող է մեր հավատքը զազրելի հիտլերիզմի ջախջախման նկատմամբ»:

Սփյուռքահայ շրջանները ըստ պատշաճին գնահատել և իրենց հիացմունքն են հայտնել ո՛չ միայն հայ ռազմիկների քաջագործությունների, այլև թիկունքում աշխատող իրենց եղբայրների ու քույրերի գործունեության համար: Արտասահմանի մի խումբ հայուհիներ Հայաստանի մշակույթային կապի միության վարչությանն ուղարկած գրության մեջ խնդրել են շնորհավորել իրենց քույրերին, որոնք թիկունքում հերոսական աշխատանք են կատարում և օգնում ռազմաճակատին¹:

1943 թվականի հունվարին հրատարակվում է կաթողիկոսական տեղապահ Գեորգ արքեպ. Չեորբբյանի կողմից ուղղված հայ հավատացյալներին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման առթիվ:

Հայ հայրենասերները, ինչպես Սովետական Միության մեջ, այնպես և արտասահմանում, սիրով են արձագանքում այս կոչին, ամենուրեք կազմակերպում են կոմիտեներ և սկսում հանգանակությունը:

Նյու-Յորքից հայտնել են, որ մարտի 7-ին տեղի է ունեցել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին աշխատող միջոցներ հանգանակող կոմիտեի նիստը:

1943 թվականի օգոստոսի 6-ին Բոստոնում տեղի է ունեցել Հայկական դեմոկրատական առաջադիմական կազմակերպության տարեկան ժողովը, որը քննարկելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կազմակերպմանը նյութական աջակցություն ցույց տալու հարցը, հավանություն է տվել այդ ձեռնարկին և իր ուղարկած հեռագրում հայտնել է իր սերն ու նվիրվածությունը Սովետական Հայաստանի կառավարությանը և ժողովրդին, «որի զավակները հերոսաբար կռվում են թշնամի նացիստների դեմ»:

Շուտով հայ գաղթավայրերն սկսում են իրենց հանգանակած միջոցները մուծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին: Ըստ որում, շարասյան հանգանակությանը մասնակցում են շատ քիչ բացառությամբ հայկական համայնքների գրեթե բոլոր անդամները՝ հարուստ, թե աղքատ, առևտրական, արհեստավոր, թե բանվոր: Ըստ տեղեկությունների, «Սասունցի Դավիթ» տանկային շարասյանը հայ գաղթավայրերից առաջին նվազում մուծել

¹ 2ՊՁԱ, ֆ. 178, № 1, էջ 5—6:

¹ 2ՊՁԱ, ֆ. 178բ, № 9, էջ 29:

են հետևյալ գումարները. Նյու-Յորքից՝ 10 հազար դոլլար, Հարավային Ամերիկայից՝ 5800 դոլլար, Երուսաղեմից՝ 2000 ֆունտ անգլիական ստերլինգ, Նյու-Յորքից երկրորդ անգամ՝ 40 հազար դոլլար, երրորդ անգամ՝ 20 հազար դոլլար, չորրորդ անգամ՝ 10 հազար դոլլար, Քավրիգից՝ 120 հազար ույալ, Սպահանից՝ 30 հազար թուման, Տրեզնոյից՝ 10 հազար դոլլար, Կիպրոսից՝ 3100 ստերլինգ, Կահիրեից՝ 10 հազար ստերլինգ, Քեհրանից՝ ավելի քան մեկ միլիարդ ույալ, Նյու-Յորքից՝ հինգերորդ անգամ 25 հազար դոլլար և այլն:

Հստ որում, Ամերիկայից ստացված հեռագրում ասվում է, որ բացի վերը հիշված գումարներից, Ռուսաստանի օգնության կոմիտեի միջոցով Կարմիր բանակին է ուղարկվել 87 000 դոլլարի դեղորայք և 50 000 դոլլար կանխիկ դրամ:

Հանգանակած միջոցներով Սովետական Միության գործարաններում պատվիրվում է տանկերի կառուցումը, որոնք և արագ կառուցվում ու հանձնվում են Կարմիր բանակի հրամանատարությանը: Տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Կարոբկովը 1944 թվականի հունվարի 29-ի գրությամբ հայտնել է Սովետական Հայաստանի կառավարությանը, որ տանկային առաջին շարասյունը ընդունված է բանակի հրամանատարության կողմից, նշանակված են նրանց տանկիստները և սպաները, որոնք «Սասունցի Դավիթ» տանկերի վրա երդվել են անխնայաբար շախչախել գերմանական զավթիչներին:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հրամանատարն ընդունելով տանկերը, հայտարարել է. «Ընդունելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, զորամասի հրամանատարության, սպաների, սերժանտների, տանկիստների և ինձ հանձնված զորամասի անունից վստահեցնում եմ Կարմիր բանակի զրահատանկային զորքերի հրամանատարությանը և հայ ժողովրդին, որ մենք անխնայ կջախչախենք մեր երկիրը ներխուժող գերմանական հափըշտակիչներին»:

Ցուցանշական է այն փաստը, որ սովետական գործարանները կատարել են նվիրատուների խնդրանքը՝ բոլոր տանկերի վրա հայերեն տառերով գրել են «Սասունցի Դավիթ»:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը մեկնում է ռազմաճակատ և մտնում կռվի մեջ: Շուտով այդ դիվիզիայի հրամանատարը, որի զորամասում գործել է «Սասունցի Դավիթ»-ը, հատուկ գրությամբ դիմել է Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցչին և հայտնել շարասյան մարտական գործո-

ղությունների մասին: Զեկուցագրում ասվում է, որ հայ ժողովրդի փառաբանված հերոս Սասունցի Դավիթ անունը կրող տանկերը գտնվում են վստահելի ձեռքերում և տանկիստները զարնանային ուղեխափանքի պայմաններում տասը օրվա ընթացքում մարտերով անցել են 200 կիլոմետր տարածություն՝ ազատագրելով հարյուրավոր բնակավայրեր և ֆաշիստական ստրկությունից փրկելով հազարավոր սովետական մարդկանց:

Հայ գաղթավայրերը, սակայն, չեն բավարարվել միայն տանկային մի շարասյուն կառուցելով, նրանք որոշել են կառուցել նաև երկրորդ տանկային շարասյունը և սկսել են միջոցներ հանգանակել այդ նպատակի համար: Շուտով այդ ֆոնդում այնքան գումար է հավաքվել, որ հնարավոր է եղել գործարաններին պատվեր տալ երկրորդ տանկային շարասյան կառուցման համար: Կաթողիկոսական դիվանում պահպանված մի տեղեկությունից երևում է, որ միայն Ամերիկայից երկրորդ տանկային շարասյան կառուցման օգտին ստացված է եղել 40 000 դոլլար, իսկ Իրանից՝ 1 750 000 ույալ:

Սովետական Միության գործարանները շուտով կառուցում են «Սասունցի Դավիթ» երկրորդ տանկային շարասյունը: Կարմիր բանակի զրահատանկային զորքերի հրամանատար մարշալ Ֆեդոտինովը և զրահատանկային ու մեքենայացված զորքերի ռազմախորհրդի անդամ գեներալ Բիրյուկովը հեռագրել են, որ երկրորդ տանկային շարասյունն ընդունված է. ուղարկված է համալրելու փոխգնդապետ Վոյնիկովսկու տանկային զորամասը, որտեղ գտնվում են «Սասունցի Դավիթ» առաջին տանկային շարասյան տանկերը:

«Սասունցի Դավիթ» երկրորդ տանկային շարասյունը կառուցվելուց հետո ևս հայ գաղթավայրերում չեն դադարում Կարմիր բանակի օգտին կատարվող հանգանակությունները: Քեհրանի մի խումբ հայ երիտասարդների նախաձեռնությամբ սկսում են աշխատանքներ տարվել մարշալ Բաղրամյանի անունով տանկային շարասյուն կառուցելու ուղղությամբ: Այդ գործը կազմակերպելու համար ընտրվում է կենտրոնական հանձնաժողով, որն իր աշխատանքներն սկսում է 1944 թվականի օգոստոսի կեսերին: Կազմակերպչական այդ ժողովի հրապարակած հաղորդագրության մեջ ասվում է, որ «Հայրենական քաջարի բանակայինների և զորավարների, առանձնապես զորավար Բաղրամյանի ներկա պատեմությանը և ցուցաբերած հերոսությունները շափազանց ոգևորեցին Սփյուռքի հայրենասեր հայ ժողովրդին, ուստի առաջացավ նրա

անունով տանկային շարասյուն կառուցելու անհրաժեշտությունը»¹։ Մեկ օրվա մեջ կենտրոնական հանձնաժողովը հանգանակել է մոտ երկու միլիոն ուշալու։ Պատերազմի ավարտման պատճառով Բաղրամյանի անունով տանկային շարասյան կառուցման օգտին սկսված հանգանակությունը չի շարունակվել։

Խոշոր է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման նշանակությունը հայ գաղթավայրերի պատմության մեջ։ Այդ ձեռնարկի մեջ կարևորությունն այնքան նյութականը չէ, որքան բարոյականը։ Հայրենական պատերազմում Սովետական Միության գործադրած վիթխարի ջանքերի մեջ այդ ձեռնարկը փոքրիկ հյուսիս է, սակայն այդ փոքրիկ ձեռնարկը եկավ համոզելու հայրենի երկրում ապրող հայրենակիցներին, որ իրենցից բաժանված հոգեհարազատ հատվածն անկարեկից, անտարբեր չի իր նկատմամբ, որ նա զգայուն թելերով կապված է հայրենի երկրի հետ և նեղ օրերում հաստատուն կանգնած է նրա թիկունքում։

Սովետական Միության կառավարությունը ևս գոհունակությամբ նշեց պատերազմի տարիներին հայ գաղթավայրերի հայրենասիրական վերաբերմունքը։ «Խորհրդային Հայաստան» թերթը, պատերազմի թեժ օրերին, խոսելով Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության մասին և այդ կապակցությամբ անդրադառնալով արտասահմանի օգնությունը, գրել է. «Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից սովետական հայրենիքի պաշտպանության համար ոտքի կանգնեցին նաև արտասահմանյան հայրերը։ Նրանք բոլոր միջոցներով օժանդակում են սովետական ժողովրդին և Կարմիր բանակին՝ արագացնելու Ֆաշիզմի ջախջախումը։ Բավական է միայն հիշատակել այն փաստը, թե ինչպիսի մեծ արձագանք գտավ կաթողիկոսական տեղակալ Գեորգ արքեպիսկոպոս Չեսոբերջյանի 1943 թվականի հունվարի կոչը՝ արտասահմանյան հայերին՝ կառուցելու «Սասունցի Դավիթ» անունով տանկային շարասյունը։

Աշխարհի բոլոր մասերում բնակվող հայերը բարձր խանդավառությամբ սկսեցին մոծումներ կատարել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար...

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հզոր տանկերը, այժմ իրենց ծանր թրթուռների տակ ձգմելով գերմանական զավթիչներին, հաղթականորեն շարժվում են դեպի արևմուտք։

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մուտքը Կարմիր

բանակի շարքերը մի նոր լավագույն վկայություն է արտասահմանյան հայերի սիրո և համակրանքի դեպի սովետական հայրենիքը. դա սովետական ժողովուրդների հետ միասին թշնամու դեմ նրանց պայքարի հաստատ որոշման ապացույցն է»։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտի կապակցությամբ բազմաթիվ հեռագրեր և գրություններ են ստացվել։ Հալեպի հայրենաբաղձ հայերի ընդհանուր միությունը 1945 թվականի մայիսի 16-ին Հայաստանի կուլտուրական կապի ընկերությանն ուղղված գրության մեջ ասում է. «Սրտի անհուն բերկրանքով և անսահման խանդավառությամբ կողջունենք և կշնորհավորենք մեր եղբայրներուն և քույրերուն՝ իմպերիալիստական զազանի և ֆաշիստ հետադիմական ուժերի վրա տարած հայրենասիրական արդար պատերազմի առթիվ, գալիք դարերը երախտապարտ ձգելու սահմանված աննախընթաց ու փառապանծ հաղթանակի համար»¹։

Հայրենական պատերազմի ավարտից հետո հեռավոր Կիպրոսի հայ գաղթավայրի նիկողիա քաղաքի հայ համայնքը Հայաստան այցելող իրենց ներկայացուցչին գրավոր հատուկ հանձնարարություն է տվել, որն անհրաժեշտ ենք համարում փոքրիկ մեջբերում անել, որովհետև նրա մեջ, ըստ էության, արտասահմանում են ոչ միայն Կիպրոսի, այլև արտասահմանի ողջ հայության զգացմունքները. «Սիրելի պատգամավոր, բարի եղեք ըսել հայրենիքի մեր եղբայրներուն, թե սև անձծք մը իբրև զոհ՝ աշխարհի շոքա ծագերուն ցրված... ամեն հայու նման, այս փոքրիկ կղզին հալերն ալ հիացմունքով և խանդավառությամբ կմտածեին իրենց վրա։ Ըսեք թե՛ կմնանք հոգևին կապված այն հողին, որուն զավակները Միկոյաններ, Իսակովներ, Բաղրամյաններ, Թևոսյաններ և Խաչատրյաններ կրցան դառնալ։ Թե՛ ունենք անսահման սեր հանդեպ այն ժողովրդին, որ ն. Ստեփանյաններու, Կինոսյաններու, Մկրտումյաններու, Ջաբրյաններու նման արի և անձնվեր որդիների ծնունդ տվավ...»²։

Համաշխարհային երկրորդ պատերազմում, Ֆաշիզմի դեմ մղած պայքարի ծանր օրերին իրենց անձնական մասնակցությամբ հանդես են եկել նաև սփյուռքահայերը։ Սփյուռքի երիտասարդությունը դաշնակիցների զորաբանակներում (Ամերիկայի, Ֆրանսիայի և Անգլիայի) կռվել է հիտլերականների դեմ, գերմանացիների կողմից նվաճված երկրներում տեղացիների հետ համագործակց-

¹ «Էջմիածին», 1944, № 7—8, էջ 17—18։

¹ 2ՊՁԱ, ֆ. 709, № 7, էջ 22։

² Նույն տեղում, № 4, էջ 4։

ված, մտել է պարտիզանական շոկատների մեջ: Եվ քիչ չեն այն հայերի թիվը, որոնք իրենց կյանքն են զոհել այս կամ այն երկիրը ֆաշիզմից ազատագրելու գործում:

Նշանակալից է եղել առանձնապես այն պայքարը, որ մղել են ֆրանսահայերը՝ Ֆրանսիան գերմանացիների կողմից նվաճվելուց և դրածո վիշիական կառավարության ստեղծումից հետո: Այդ ժանրը, ճակատագրական օրերին, ֆրանսահայերը ֆրանսիական հյուրասեր ժողովրդի նկատմամբ իրենց երախտագիտական պարտքը կատարելու անկեղծ ցանկությունը, աշխատել են ետ շմնալ տեղացիներից:

Համաշխարհային պատերազմի այդ դաժան տարիներին ֆրանսահայ գաղթավայրը տվել է Ֆրանսիայի հակաֆաշիստական ազատագրական շարժումների ականավոր դեմքերից մեկին՝ Միսակ Մանուշյանին:

1939 թվականի սեպտեմբերի 2-ին՝ Ֆրանսիան պատերազմի մեջ մտնելու առաջին իսկ օրը, ֆրանսահայատակ հայ երիտասարդները կանչվել են պարտադիր զինծառայության: Ոչ ֆրանսահայատակ հայերից շատերը մտել են կամավորական խմբերի մեջ: Այդ օրերին բանտերից ազատվել են քաղաքական «ձախ» ուղղություն ունեցող անձինք, այդ թվում՝ նաև Միսակ Մանուշյանը:

Միսակ Մանուշյանը փաստորեն հայ Ֆուչիկն է հանդիսացել գաղութահայ իրականության մեջ: Նրա մասին բազմաթիվ աշխատություններ են գրվել ֆրանսերեն լեզվով: Նրան բանաստեղծություններ են ձոնել ֆրանսիացի գրողները: Նրա մասին հատուկ երգ կա, որ երգվում է Ֆրանսիայում: Միսակ Մանուշյանը մտնում է Փարիզի շրջապատում գործող պարտիզանների շարքերը որպես հասարակ զինվոր և իր ցուցաբերած քաջագործության շնորհիվ առաջ է քաշվում և նշանակվում Փարիզի շրջապատում գործող ինտերնացիոնալ շորս շոկատների հրամանատար: Զոկատներն ունեցել են հետևյալ անունները՝ «Ազատություն», «Վիկտոր Հյուգո», «Չապակ», և «Ստալինգրադ»: Այդ շոկատներում հավաքված են եղել տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ հայեր, լեհեր, ռումինացիներ, իսպանացիներ, հրեաներ և այլն: Զոկատը կատարում է ահաբեկումներ գերմանական զորքերի մեջ, խորտակում է արևելյան ռազմաճակատ ուղարկվող ավելի քան 20 գնացր և այլն: Ցնցող տպավորություն է թողնում ֆաշիստական դահիճ Ռիտտերի սպանությունը:

Անձամբ Հիտլերի կարգադրությամբ, Փարիզի փողոցներում փակցվում են աֆիշներ 10 հոգու նկարով, որոնց մեջ հատուկ

սլաքով նշված է Միսակ Մանուշյանը՝ առաջարկելով ֆրանսիացիներին բռնել և իրենց ձեռքը տալ այդ «ահաբեկիչներ»-ին: Ֆրանսիացիները գերմանացիների տարածած այդ աֆիշների նկատմամբ ցուցաբերում են իրենց վերաբերմունքը՝ աֆիշների ներթուրմ գաղտնի գրում են՝ «Հաղթանակ», «Կեցցեն ահաբեկիչները», «Ազատություն» և այլ բառեր:

Դավաճանը, սակայն, կատարում է իր սև գործը: Մանուշյանը և նրա խմբի 22 անդամները ծուղակի մեջ են ընկնում և ձերբակալվում: Երեք ամիս հետաքննությունից հետո նրանց բոլորին էլ դատապարտում են գնդակահարման: Հայտնի է այն նամակը, որ նա մահվանից առաջ գրել է իր կնոջը. «Շուտով, կեսօրից հետո, — գրում է նա, — ժամը 15-ին կգնդակահարվենք: Ի՞նչ կարող եմ գրել քեզ. իմ մեջ ամեն ինչ անորոշ է և միաժամանակ շատ պայծառ: Ես մտել եմ ազատության բանակը որպես կամավոր զինվոր, և ես մեռնում եմ երկու մատ հեռու հաղթանակից և նպատակից: Երջանկություն նրանց, ովքեր պիտի ապրեն մեզանից հետո և պիտի վայելեն վաղվա խաղաղության և ազատության քաղցրությունը:

Վստահ եմ, որ ֆրանսիական ժողովուրդը և ազատության համար բոլոր պայքարողները պիտի գիտենան արժանավայել կերպով պատվել մեր հիշատակը: Մեռնելուս պահին հայտարարում եմ, որ ես ոչ մի ատելություն չունեմ գերմանական ժողովրդի դեմ և ոչ ոքի դեմ. յուրաքանչյուրը կստանա իր արժանի պատիժը կամ վարձատրությունը: Պատերազմից հետո, որ այլևս երկար չպիտի տևի, գերմանական ժողովուրդը և մյուս բոլոր ժողովուրդները, պիտի ապրեն խաղաղ կերպով և եղբայրաբար... եթե հնարավոր է, իմ հիշատակներս տար Հայաստան»:

Մանուշյանի հիշատակը հավերժացրել է ֆրանսիական ժողովուրդը: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակից հետո նրան շնորհվել է հերոսի կոչում: Նրա անունով կոչվել են Փարիզի մի քանի փողոցներ, որոնցից մեկը գտնվում է Կոմունյաի պատի մոտերքը: Մոն Վալերում՝ այն բլրակում, ուր գնդակահարվել են Ֆրանսիայի պաշտպանության Մանուշյանի ղեկավարած 23 հերոսները, դրվել է երկրորդ անմար ջահը: Փետրվարի 21-ը սահմանվել է սգատոն: Ամեն տարի այդ օրը Մանուշյանի գերեզմանի շուրջն են հավաքվում նրա կազմակերպության նախկին անդամները և նրան հարգող ֆրանսիացիներ, դրվատում նրա սխրագործությունները և թարմ ծաղիկներ դնում ֆաշիստական զոհերի գերեզմանին:

Ֆրանսիայի հերոսական շրջանների շատ ականավոր ներկա-

յացուցիչներ են խոսել Մանուշյանի հերոսությունների մասին և բարձր գնահատել այն: Այսպես, Լուի Արագոնը հանդես գալով հայ պոեզիայի օրը, հետևյալն է ասել Մանուշյանի կապակցությամբ. «Յրանսիացի առաջավոր մտավորականները սև մեղանով պաշտպանեցին հայ ժողովրդի դատը, սակայն հայ ժողովուրդը Յրանսիայի ազատագրության գործում տվեց իր կարմիր արյունը: Յրանսիան երբեք չի մոռանա ֆրանսիական պատերին ֆաշիստների փակցրած այն աֆիշը, որի վրա նկարված էին Յրանսիայի ազատագրության տասը հերոսները, իսկ կենտրոնում սև սլաքի ներքև՝ Միսաբ Մանուշյանը»¹:

Յրանսիայի ազատագրության համար միայն Մանուշյանի խումբը չէ, որ թափել է իր արյունը: Այդ պայքարում արտակարգ հերոսություն են ցուցաբերել բազմաթիվ ֆրանսահայեր:

1941 թվականին գաղթավայրի հասարակական և քաղաքական առաջադիմական բոլոր ուժերի միավորումով, Յրանսիայի խոշոր գաղթօջախներում, ստեղծվում են «Հայ ազգային խորհուրդներ», որոնք անվերապահ կանգնում են ֆրանսիական ժողովրդի կողքին և գործում նրա հետ ձեռք-ձեռքի տված: Կարելի է ասել, որ պատերազմի այդ ծանր տարիներին Յրանսիայում հիտլերականների դեմ պայքարող ընդհատակյա շատ կազմակերպությունների, մարտական խմբերի և պարտիզանական ջոկատների մեջ եղել են բազմաթիվ հայեր, որոնք չեն խնայել իրենց կյանքը Յրանսիայի ազատագրության համար:

Յրանսիայում գտնվող հիտլերական օկուպանտների և նրանց դրածո վիշիականների դեմ պայքարող ֆրանսիացի հայրենասերների շարքերում գտնվել են որոշ թվով նաև ֆրանսահայեր: 1941 թվականի գարնանը ստեղծվում է ընդհատակյա մարտական երեք խումբ, որոնք խոշոր գործ են կատարել Հարավային Յրանսիայում՝ պարտիզանական ջոկատներ կազմակերպելու և ղեկավարելու գործում: Պարտիզանական այդ ջոկատներում եղել են ֆրանսիացիներ, հայեր, հույներ, հրեաներ, իտալացիներ և իսպանացիներ:

Հայկական ընդհատակյա այդ խմբի առաջին մարտական գործողությունը տեղի է ունեցել 1941 թվականի աշնանը. նրանք ուռմբ են նետել Մարսելի «Սպլենդիտ» հյուրանոցի շենքի վրա այն ժամանակ, երբ տեղի էր ունենում գերմանական բարձրաստիճան զինվորականների խորհրդակցություն: Ռումբի պայթյունից սպան-

վել են ֆաշիստական ութ բարձրաստիճան զինվորականներ: 1942 թվականի օգոստոսին նրանք ուռմբ են նետում Մարսելի «Կապիտոլ» թատրոնի շենքը մտնող հիտլերական զորամասի վրա և մեծ վնաս պատճառում:

Պակաս ակտիվությամբ հայ պարտիզանները չեն գործել նաև միջին Յրանսիայում: 1942 թվականի ամռանը Գրենոբլ քաղաքում հիմնվում է «Լիբերտե» («Ազատություն») կոչվող ջոկատը, որի մեջ մտնում են ազգային փոքրամասնությունները՝ իտալացիներ, հայեր, հրեաներ, իսպանացիներ և այլն:

1944 թվականին Հարավային և Միջին Յրանսիայում, մոտավոր հաշիվներով, 5000 հայեր պայքարել են հիտլերական նվաճողների դեմ՝ 16 պարտիզանական ջոկատներում: Մարտնչող այդ հայ պարտիզաններին նյութական-բարոյական օգնություն են ցույց տվել Հայ ազգային խորհուրդները, որոնք թաքստոցներ են պատրաստել և հարկավոր դեպքում պատսպարել պարտիզաններին, դրամ են տվել նրանց, սննդամթերք են հասցրել և այլն: Հայ ազգային ճակատի պարտիզաններին տված գումարը հասել է 8 միլիոն ֆրանկի, իսկ սննդամթերքը՝ 10 000 կապոցի:

Երկրորդ համաշխարհային պատերազմի արյունոտ տարիներին հայ ժողովուրդը Յրանսիայի պաշտպանության և ազատագրության համար տվել է ավելի քան 500 սպանված և 300 վիրավոր:

Փաշիզմի դեմ մարտնչող հայրենասերների շարքում հայ պարտիզաններ են եղել այլ երկրներում ևս՝ իտալիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Հարավսլավիայում և գերմանացիների կողմից օկուպացիայի ենթարկված այլ երկրներում:

Փաշիստների դեմ գործող հայ պարտիզանների շարքում եղել են նաև կանայք, որոնցից իր քաջագործություններով հայտնի է Բուլղարիայի պարտիզանական ջոկատներից մեկում գործող Հերթուրիս Ռազկրատյանը: Նա հայտնի է նաև «Սաշկա» ծածկանունով:

Սաշկան իր մորը 1944 թվականի մարտի 18-ին գրել է. «Մայրի՛կ, դու իմ մասին չպետք է անհանգստանաս, որովհետև ես չեմ միայն, որ թողել եմ տուն ու ծնողներ: Դու պետք է հպարտ լինես, որ աճեցրել ես այնպիսի զավակ, որը պետք է ֆաշիզմից պաշտպանի թշվառ ժողովրդին»:

Սաշկան, ղժբախտաբար, ուղղակի գործողություններից մեկի ժամանակ ընկել է ֆաշիստների ձեռքը և գնդակահարվել:

¹ «Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր», 1945, № 4, էջ 82:

**Սփյուռքահայ
առաջադիմական
կազմակերպու-
թյունները:**

Համաշխարհային երկրորդ պատերազմում Սովետական Միության տարած հաղթանակը, հայ գիտնականների ու հրամանատարների ցուցաբերած քաջագործությունները, հայրենի երկրի մասին ստացվող քարենպաստ տեղեկությունները և այլն մեծ ոգևորություն են առաջացնում գաղթավայրերում և ցրում տարիներ շարունակ տարածվող գրպարտչական լուրերը: Բեյրութում լույս տեսնող «Ժողովրդի ձայն» թերթը իր խմբագրական հոդվածում գրում է. «Սովետական թնդանոթները ո՛չ միայն հայրենիքի սահմաններից դուրս քշեցին ֆաշիստական հորդաները, այլև ցրեցին հայրենիքի շուրջը եղած ստերի մշուշը»¹:

Հայրենական պատերազմի տարիներին և նրանից հետո հայ գաղթավայրերում աստիճանաբար սկսում են կազմակերպվել առաջադիմական և Սովետական Հայաստանի բարեկամ մի շարք կազմակերպություններ: Դժվար է մեզ մեկուսեցնել թվարկել դրանք, սակայն նրանց գործունեության մասին ընդհանուր պատկերացում տալու նպատակով ավելորդ չենք համարում մի քանիսի վրա կանգ առնել:

Ամերիկայի հայկական գաղթավայրում, նոր ժամանակներում, գործել են մի շարք քաղաքական, հասարակական, մշակույթային, մարզական, եկեղեցական, բարեգործական և այլ միություններ ու կազմակերպություններ, սակայն նրանք գործել են անջատ, անհամերաշխ, իսկ երբեմն՝ թշնամաբար: Համաշխարհային պատերազմի տարիներին գաղթավայրի առաջադիմական կազմակերպությունները, հակաֆաշիստական պայքարը հաջող կազմակերպելու և հայրենի երկրին՝ Սովետական Հայաստանին, զորավիգ կանգնելու նպատակով, առաջին անգամ գաղթավայրի պատմության ընթացքում, միավորում և կազմակերպում են համազաղութային մի կազմակերպություն, որը կոչվում է Ամերիկահայ ազգային խորհուրդ: Այդ կազմակերպությունը հիմնադրվում է 1943 թվականի վերջերին և վերջնականապես ձևակերպվում 1944 թվականի մարտի 19-ին:

Ամերիկահայ ազգային խորհրդի մեջ մտնում են Ամերիկայի հայ առաջադիմական միությունը (Պրոգրեսիվ լիգան), ռամկավարները, հնչակյանները և քսան հայրենակցական միություններ՝ Համասերաստիականը, Համախարբերթցիականը, Համաքղեցիա-

¹ «Ժողովրդի ձայն», Բեյրութ, 1944:

կանը, Տիգրանակերտցիների, Արաբկիրի, Կովկասահայերի, Ջըմլունիայի և մյուս հայրենակցական միությունները: Ազգային խորհրդի աշխատանքներին գործակցում են գաղթավայրի աչքի ընկնող մի շարք հայ գիտնականներ, գրողներ և հասարակական գործիչներ: Խորհուրդն իր մասնաճյուղերն է հիմնում ստվարաթիվ հայ բնակչություն ունեցող Ամերիկայի գրեթե բոլոր քաղաքներում:

Ազգային խորհրդի հիմնական նպատակն է եղել՝ կազմակերպել ձեռնարկումներ հօգուտ Սովետական Հայաստանի, բոլոր միջոցներով պաշտպան կանգնել տարագիր հայության և օգնել նրանց գաղթելու հայրենի երկիր, հաստատել սերտ հարաբերություններ Հայաստանի հետ:

Ամերիկահայ ազգային խորհուրդը ակտիվ աշխատանք է սկսում և դառնում գաղթավայրի առաջադիմական, գործունյա և հեղինակավոր ղեկավար մարմինը: Նա կազմակերպում է մի շարք ձեռնարկումներ հօգուտ Հայաստանի, նյութական աջակցություն է ցույց տալիս գաղթավայրերից հայրենիք մեկնող, բայց նյութական կարիք ունեցող հայերին և այլն: Խորհուրդի գործունեությունը պարբերաբար և լայնորեն լուսաբանված է ամերիկահայ առաջադիմական մամուլում («Լրաբեր», «Նոր օր», «Պայքար» և «Երիտասարդ Հայաստան» թերթերում):

Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ 1945 թվականին կազմակերպվել է Սովետական Հայաստանի հետ մշակութային կապ պահպանող ամերիկահայ կոմիտեն, որն իր շուրջն է համախմբել մոտ հարյուր հոգի ամերիկահայ գիտնականներ, գրողներ, արվեստագետներ և հասարակական աչքի ընկնող գործիչներ: Կոմիտեն ընտրել է իր վարչությունը՝ բաղկացած 13 հոգուց և մասնաճյուղեր հաստատել ամերիկահայ մի շարք գաղթօջախներում: Միության վարչությունը հաստատվում է նյու-Յորքում:

Ամերիկահայ գաղթավայրում նոր ժամանակներում գործող առաջադիմական կազմակերպություններից է հանդիսացել Ամերիկահայ առաջադիմական միությունը (Պրոգրեսիվ լիգան), որն իր մասնաճյուղերն է ունեցել Ամերիկայի բոլոր հայաշատ վայրերում: Միության պաշտոնական պարբերականն է հանդիսացել «Լրաբեր» թերթը, որը փաստորեն շարունակությունն է Ամերիկայում 1922—1934 թվականներին լույս տեսնող «Բանվոր» և 1925—1926 թվականներին՝ «Նոր աշխարհ» առաջադիմական թերթերի:

Ամերիկահայ առաջադիմական միության ղեկավարության տակ է գտնվել Ամերիկահայ առաջադիմական երիտասարդական

միությունը, որին անդամակցում են տեղի հայ երիտասարդ բան-
վորները և ուսանողները: Միության պաշտոնական պարբերականն
է անգլերեն լեզվով լույս տեսնող «Armenian Tribun» թերթը¹:

1942 թվականին, Սովետական Միությանը սպառնացող ծանր
վտանգի օրերին, Բեյրութում կազմակերպվում է «Խորհրդային
Հայաստանի բարեկամների ընկերությունը», որին միանում է
նախապես կազմակերպված «Հայաստանի պաշտպանության լի-
գան»: Ընկերությունն անդամակցում են հայ բանվորներ, արհեստա-
վորներ, բժիշկներ, ինժեներներ, լրագրողներ և ազատ զբաղմունքի
մարդիկ: Ընկերությունը որոշակի խնդիր է դնում իր առջև հաս-
տատակամ կանգնել Սովետական Հայաստանի կողքին և բացա-
հայտ հայտարարում. «Այսօր Սուրիո և Լիբանանի հայությունը
համախմբված է հայրենասիրական դրոշակի տակ և պատրաստ
է հայրենիքի համար որևէ զոհողության առջև կանգ չառնել»²:
Ընկերությունը սերտ փոխհարաբերության մեջ է գտնվել և գոր-
ծակցել է Սովետական Հայաստանի մշակույթային կապի կազմա-
կերպության հետ: Ընկերությունը իր մասնաճյուղերն է ունե-
ցել Սիրիայի և Լիբանանի հայաշատ մի շարք վայրերում՝ Հալե-
պում, Դամասկոսում, Ջահլեում, Տրիպոլում և այլ վայրերում: Նա
է նախաձեռնել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին
հանգանակությունը, կազմակերպել է դասախոսություններ Սովե-
տական Միության և Սովետական Հայաստանի մասին, նշել է հո-
բելյանական տոները, հանրամատչելի շարքով հրատարակել է
գրքույկներ Սովետական Միության կյանքից և այլն: Ընկերությունն
ունեցել է նաև իր պաշտոնական օրգանը՝ «Առավոտ» անունով:

1944 թվականի սեպտեմբեր ամսին Հալեպ քաղաքում, տեղի
հայ երիտասարդության ջանքերով, կազմակերպվում է հայրենա-
բաղձ հայերի ընդհանուր միությունը, որի նպատակի մասին հե-
տևյալն է ասված «Դեպի նրկիր» անունով նրա պաշտոնական օր-
գանում. «Միությունը իր խորքին մեջ զուտ մշակութային է, կաշ-
խատե անճեցնել սերը հանդեպ Հայաստանի և մեզ հյուրընկալող
արաբ ժողովրդի»: Ընկերությունն աներկբա ընդունում է, որ «Աշ-
խարհով մեկ ցրված հայերի միակ, իսկական հայրենիքը Խորհրդ-
դային Հայաստանն է, իսկ պետական սիստեմը՝ սոցիալական
իրավակարգը»³: Ընկերության ցանկությունն է եղել նախապատ-

րաստել Սիրիայի հայ երիտասարդությանը հայրենիք փոխադրելու
համար: Ցուցանշական է այդ տեսակետից միություն «Հայրենա-
բաղձ» և իր պաշտոնական պարբերականը՝ «Դեպի երկիր» ան-
վանումները:

Բեյրութում և Հալեպում կազմակերպված են եղել Սովետա-
կան Հայաստանի հետ մշակույթային կապ պահպանող միու-
թյուններ, որոնք սերտ հարաբերությունների մեջ են գտնվել
Հայաստանի մշակույթային ընկերության հետ. նրանցից ստացել
են անհրաժեշտ գրականություն, թերթեր, ամսագրեր, Հայաստանի
կյանքը ցուցադրող լուսանկարներ և ծանոթացրել տեղի հայ բնակ-
չությանը:

1944 թ. սեպտեմբերի 9-ին, ինչպես հայտնի է, բուլղար ժո-
ղովուրդը, սովետական բանակի օգնությամբ, տապալեց միապե-
տական կարգերը, ֆաշիստներին դուրս արեց երկրից և հռչակեց
ժողովրդական իշխանություն: Այդ իրադարձությունը շրջադարձա-
յին կետ հանդիսացավ նաև բուլղարահայ գաղթավայրի համար.
բուլղարահայերը դուրս եկան կրկնակի հարստահարությունից,
քաղաքացիական հավասար իրավունք ստացան և հնարավորու-
թյուն ունեցան ազատորեն կազմակերպելու իրենց համայնքների
հասարակական ներքին կյանքը:

1944 թվականի հոկտեմբերի 22—23-ին Վառնայում տեղի է
ունենում Բուլղարիայի հայրենական ճակատի հայկական կոմի-
տեների կոնֆերանսը, ուր հիմնադրվում է «Երևան» առաջադիմա-
կան միությունը: Այդ կոնֆերանսում ընտրվում է կենտրոնական
վարչություն և հաստատվում միության կանոնադրությունը:

Վառնայի կոնֆերանսում հաստատված «Երևան» միությունն
իր կանոնադրության մեջ խնդիր է դրել համախմբել իր շուրջը
առաջադիմական ուղղություն ունեցող բոլոր բուլղարահայերին,
ժողովրդականացնել հայրենիքի ճակատ բուլղարական կառավա-
րության հակաֆաշիստական քաղաքականությունը, ամրացնել բուլ-
ղարահայության սիրո զգացմունքները հանդեպ Սովետական Հա-
յաստանը, ծանոթացնել հայ մշակույթը բուլղարական հասարա-
կությանը և, փոխադարձաբար, բուլղարական մշակույթը ծանոթաց-
նել հայ հասարակությանը և այլն¹:

«Երևան» միության վարչությանն են ենթարկվում գաղթա-
վայրի հայկական բոլոր կազմակերպությունները՝ թաղական խոր-
հուրդները, հոգաբարձական մարմինները, հասարակական կազմա-

1 2ՊՀԱ, ֆ. 709, № 51, էջ 14—17:

2 Նույն տեղում, № 1, էջ 5—6:

3 Նույն տեղում, № 1, էջ 20—22:

1 2ՊՀԱ, ֆ. 709, № 1, էջ 16:

կերպությունները և այլն: Կենտրոնական վարչությունն ունեցել է իր բաժինները՝ կուլտուրական, սպորտային, կանանց և կրթության:

«Երևան» միությունն իր մասնաճյուղերն է հիմնում Բուլղարիայի հայաշատ բոլոր կենտրոններում՝ Բուսետում, Վառնայում, Սիդխատայում, Պլովդիվում, Քրճալիում, Ալթոսում, Շումենում, Խարմանլիում, Բազարչիկում, Խասկովոյում, Ստարա-Ջագորայում, Նովա-Ջագորայում, Եմբուլում, Սլիվենում, Բուրգասում, Դորրիշում և Քազանլըկում:

Ռումինիայի գաղթավայրում ևս առաջադիմական նոր կազմակերպությունների հանդես գալը կապված է Ռումինիայում ֆաշիստական ռեժիմի տապալման և ժողովրդա-գեմոկրատական կարգերի հաստատման հետ, որը տեղի է ունեցել 1944 թվականի օգոստոսի 23-ին: Հեղափոխությունը լայն ասպարեզ է բաց արել ոչ միայն ռումին ժողովրդի, այլև այդ երկրի ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև՝ ռումինահայություն համար:

Հեղափոխությունից հետո գաղթավայրի առաջադիմական գործիչները 1945 թվականի հունվարի 28-ին հրավիրում են համագաղութային կոնֆերանս՝ գաղթավայրերի բոլոր հայաշատ վայրերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Կոնֆերանսում որոշում են ընդունում և հիմնում «Հայաստանյան ճակատ հայրենասիրական-մշակույթային» կազմակերպությունը, որն իրավունք է ստանում տնօրինելու գաղթավայրի վարչական, ուսումնական, հասարակական բոլոր գործերը: Կոնֆերանսն ընտրում է կենտրոնական վարչություն հետևյալ սեկցիաներով՝ Հայաստանյան ճակատի, Ստեփան Շահումյանի անվան երիտասարդական վարիչ մարմնի, Երիտասարդական մշակույթային մարմնի, «Կոմիտաս» երգչախմբի, ֆիզկուլտուրայի, ուսանողության և կանանց:

«Հայաստանյան ճակատ»-ի կենտրոնական վարչությունը հաստատվում է Բուխարեստում: Նա իր մասնաճյուղերն է ստեղծում՝ Կոստանցայում, Բրաիլում, Գալացում և այլ հայաշատ գաղթօջախներում:

Ֆրանսիայի ազատագրումից հետո «Հայ ազգային ճակատը», որի մասին խոսք է եղել առջևում, ո՛չ միայն շարունակում է իր աշխատանքները լեզու պայմաններում, այլև սկսում է առաջատար դեր կատարել գաղթավայրում: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1945 թվականի մարտի 16—18-ին հրավիրվում է ֆրանսահայերի համագումար, որին մասնակցում են 97 պատգամավորներ Ֆրանսիայի բոլոր խոշոր գաղթօջախներից և կազմակերպություններից՝ Ազգային ճակատից, Կանանց միությունից, Հայ երի-

տասարդ հայրենակիցների միությունից, Երիտասարդական ընդհանուր միությունից, Հայ մարմնամարզական ընդհանուր միությունից, Հայ գրողների ընկերությունից, Ազատ արվեստագետների ընկերությունից, Բարեգործական միությունից, Կապույտ խաչի կազմակերպությունից, նախկին հայ ռազմիկների միությունից, եկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչներից և այլն: Համագումարն ընտրում է գաղթավայրի գերագույն մարմինը՝ «Ֆրանսահայ ազգային ընդհանուր միություն» անունով:

Ֆրանսահայ ազգային ընդհանուր միությունը միավորում է գաղթավայրի հասարակական հոսանքները և իրավասություն ստանում դառնալու ֆրանսահայ գաղթավայրի վարչական մարմինը: Ֆրանսահայ համագումարը հաստատում է Միության կանոնադրությունը և ծրագիրը: Միության նպատակների հատվածում՝ գաղթավայրի և Սովետական Հայաստանի միջև կապ հաստատելու մասին, ասված է, որ «Ան (այսինքն՝ Միությունը—Ա.Ա.) կենդանի կապ կհաստատե հայ գաղութին և հայրենիքին միջև, անոր հետ մշակույթային սերտ ու տևական հարաբերություններ ստեղծելու համար»¹:

Համագումարը ընտրում է Միության կենտրոնական վարչությունը: Միությունը հրատարակում է իր պարբերականը «Ժողովուրդ» անունով: Նա իր մասնաճյուղերն է հիմնում Ֆրանսիայի հայաշատ բոլոր վայրերում՝ Մարսելում, Լիոնում և այլն:

Միության կենտրոնական վարչության շուրջը համախմբվում է գաղթավայրի ճանաչված և հեղինակավոր մտավորականությունը՝ իրավաբաններ, գիտնականներ, գրողներ, դերասաններ, բժիշկներ, ինժեներներ, ժուռնալիստներ և այլն: Կենտրոնական վարչությունը հաջողվում է ձեռք բերել սեփական շենք՝ օժտված թատերասրահով, ուր հաճախ կազմակերպվում են դասախոսություններ և տրվում ներկայացումներ:

Ֆրանսահայ գաղթավայրում գործել են մշակույթային, սպորտային, բարեգործական մի շարք կազմակերպություններ, որոնցից կարելի է հիշել Հայ գրողների ընկերությունը, որը միավորել է գաղթավայրի հայ գրողներին, քննադատներին և բանաստեղծներին: Ընկերությունը հաճախ կազմակերպում է երեկոներ հայկական և ֆրանսիական գրականության շուրջը: Հայ գրողների երեկոներին հաճախ մասնակցել են նաև ֆրանսիացի գրողներ:

Մշակույթային կարևոր կազմակերպություններից է Ֆրանսիա-

1 «Արևմուտք», 1945, № 2:

յի հայ կուլտուրական ընկերությունը, որը կապ է հաստատել Հայաստանի մշակույթային կապի ընկերության հետ, նրանից ստանում է համապատասխան գրականություն և տարածում նրանք ֆրանսահայ շրջաններում:

Փարիզում է գտնվել Հայ բարեգործական ընդհանուր միության վարչությունը, որը համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո դրական մեծ աշխատանք է կատարել հայ գաղթավայրերում՝ նպաստավորելով կարիքավորներին, խնամելով հայ որբերին, նյութապես օժանդակելով հայկական դպրոցներին և այլն:

Մշակույթային կազմակերպություններից է հանդիսացել Ազատ արվեստների միությունը, որը միավորել է հայ արվեստագետներին, նկարիչներին, գրողներին, քանդակագործներին և այլն: Միության մեջ գտնվել են որոշ թվով նաև ֆրանսիացիներ:

Ֆրանսիայում նախկին հայ զինվորականները կազմակերպել են իրենց կազմակերպությունը: Նրան անդամակցում են մեծ մասամբ այն զինվորականները, որոնք կռվել են Ֆաշիզմի դեմ:

Պաղեստինի Հայֆա քաղաքում 1945 թվականին, մի խումբ հայ երիտասարդների նախաձեռնությամբ, ստեղծվում է «Սովետական Հայաստանի պաշտպանության լիգա» անունով մի կազմակերպություն՝ խնդիր ունենալով կանգնել հայրենի երկրի կողքին և ցույց տալ նրան բարոյական ու նյութական օժանդակություն: Չնայած Պաղեստինի անգլիական իշխանությունները որոշ արգելափակումներ են հարուցում նրա առջև, աշխատում են սահմանափակել նրա գործունեությունը, բայց, այնուամենայնիվ, լիգայի ղեկավարներին հաջողվում է կազմակերպել հանգանակություն հօգուտ հայրենական պատերազմում տուժած ընտանիքների, կազմակերպել հանդեսներ ու երեկոյթներ, ծանոթացնել տեղացիներին հայրենի երկրում տեղի ունեցող տեղաշարժերի և հայ ռազմիկների ցուցաբերած հերոսությունների հետ և այլն:

Կիպրոսում 1944 թվականի մայիսի 5-ին կազմակերպվում է «Հայաստանի բարեկամների միություն» անունով մի կազմակերպություն՝ նպատակ ունենալով կուլտուրական կապ հաստատել հայրենի երկրի հետ, ծանոթացնել տեղացիներին Սովետական Հայաստանի հետ և հետամուտ լինել ներգաղթի կազմակերպմանը: Կազմակերպությունն իր մասնաճյուղերն է ունեցել Լարնակում, Ֆամագոստում և Լիմասոլում:

1945 թվականի հոկտեմբերի 11-ին Եգիպտոսի Կահիրե քաղաքում կազմակերպվում է «Եգիպտահայ ազգային խորհուրդ»

անունով համագաղութային մի մարմին, որին մասնակցում են տեղի հայկական կազմակերպությունները և քաղաքական կուսակցությունները, բացի դաշնակցականներից: Խորհուրդն իր առջև խնդիր է դնում մշտական կապ պահպանել հայրենի երկրի հետ և ամրապնդել հայ և եգիպտացի ժողովուրդների միջև գոյություն ունեցող կուլտուրական կապը: Հոկտեմբերի 20-ին եգիպտահայ ազգային խորհուրդի մասնաճյուղ է կազմակերպվում նաև Ալեքսանդրիայում:

Մեծ հայրենադարձը:

Հայաստանում սովետական կարգեր քաղաքացիական կյանքը բնականոն հունի մեջ մտնելուց հետո, կարելի է ասել, քոլոր տարիներում էլ տեղի են ունեցել հայ բնակչության ներգաղթներ: Սակայն դրանք, համեմատաբար, այնքան էլ խոշոր չեն եղել: Հայաստանը մեծ թվով գաղթականություն է ընդունել 1946—1948 թվականներին: Հայ ժողովրդի նորագույն ժամանակաշրջանի պատմության մեջ այդ տարիների հայրենադարձը, նախորդներից տարբերելու համար, ընդունված է անվանել «Մեծ հայրենադարձ»:

Մեծ հայրենադարձը տեղի ունեցավ Հայրենական պատերազմից անմիջապես հետո, տնտեսական արտակարգ ծանր պայմաններում: Այդ այն ժամանակն էր, երբ դեռ նոր էր վերջացել պատերազմը և ժողովրդի վերքերից արյուն էր հոսում, երբ պատերազմի տարիներին աշխատավորների զգալի մասի ռազմաճակատներում գտնվելու հետևանքով, հացի, հագուստի և սննդամթերքի դժվարություններ էին ստեղծվել: Բայց այնքան շատ էին արտասահմանից հայերի ներգաղթի համար ստացվող դիմումները, այնքան բուռն էր ներգաղթելու նրանց ցանկությունը, որ Սովետական Հայաստանի կառավարությունը չուզեց անուշադիր գտնվել սփյուռքահայության նկատմամբ: Եվ ահա Սովետական Հայաստանի կառավարությունը որոշում է արտոնել հայ բնակչության ներգաղթը Հայաստան:

Որոշման մեջ, որը հրապարակվել է 1945 թվականի դեկտեմբերի 2-ին, ասվում է, որ ՍՍՀՄ ժողկոմսովետը, Հայկական ՍՍՀ կառավարության միջնորդությամբ, թույլատրում է արտասահմանի հայ բնակչության վերադարձը հայրենի երկիր: Ներգաղթողներին հնարավորություն է տրվում Հայաստանում անհատական բնակարանների լայն շինարարություն կատարել: Ըստ որում, հայրենադարձները կառուցած բնակարանների համար ստանում են պետական վարկ՝ 50 տոկոսի շահով¹:

¹ «Սովետական Հայաստան», 1945, դեկ. 2:

Անհուն բերկրանքով ու գոհունակությամբ են ընդունել Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայությունը կառավարության որոշումը: Այս որոշման առիթով մամուլում հայրենի կառավարությանն ուղղված շնորհակալական խոսքով հանդես են եկել հայ մի շարք աչքի ընկնող գրողներ, գիտնականներ, արվեստագետներ և արտադրության առաջավոր բանվորներ:

Ավետիք Իսահակյանը իր «Բարի գալուստ թանկագին հարազատներին» վերնագրով ողջույնի խոսքում գրել է. «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու մասին ՍՍՀՄ ժողովրդական կոմիսարների սովետի որոշումը մեր բոլորի սրտերը լցնում է շատ մեծ ուրախությամբ: Անվերապահ խնդրությամբ ողջունում ենք այս նշանակալից ակտը: Ոչ մի ազնիվ հայ, բացի ցնծագին գնահատականից, ուրիշ վերաբերմունք չի կարող ունենալ այս որոշման հանդեպ»¹:

Դերենիկ Դեմիրճյանը «Նրանք հայրենիք են վերադառնում» վերնագրով իր ողջույնի խոսքում գրել է. «Նրանք հայրենիք են վերադառնում, հայրենիք, որի մի մասը ավերված է թշնամու ձեռքով, որտեղից նրանց անջատեց սրի ու սարսափի զարհուրանքը միայն: Նրանք այժմ միայն ճանաչում են և ունեն իրոք միայն մի հայրենիք՝ Խորհրդային Հայաստան: Միայն Խորհրդային Հայաստանն է իրականն ու հնարավորը: Միայն Խորհրդային Հայաստանն է, որ պիտի ապրի, միայն Խորհրդային Հայաստանի բախտի հետ կարող է իր կյանքն ու հույսերը կապել համայն հայությունը»²:

«Ներգաղթի արտոնության բերկրալի լուրը — գրել է «Հայ մամուլը» — անսահման ուրախությամբ կհամակե սրտերը բոլոր անոնց, որոնք մաքուր համոզում մը ունեցան Խորհրդային Հայաստանի լուսապայծառ իրականության և որոնք Խորհրդային Միության պատերազմի դժվարին օրերուն, անխախտ հավատք ունեցան ժողովուրդներու արդար դատի հաղթանակին՝ անձկանոք սպասելով բախտավոր և երջանիկ օրվան, դեպի հայրենիք ներգաղթին, մասնակցելու համար հայրենիքի վերելքի աշխատանքներուն»³:

Հայկական բոլոր գաղթավայրերում կազմակերպվում են ներգաղթին աջակցող մարմիններ, որոնք անհրաժեշտ հրահանգներն ստանալուց հետո, Սովետական Հայաստանից եկած ներկայացու-

ցիչների օժանդակությամբ, սկսում են ցուցակագրել ներգաղթ ցանկացողներին:

Թե ինչպիսի խանդավառությամբ և ոգևորությամբ են ցուցակագրվել տարագիր հայերը՝ հայրենիք մեկնելու համար, կարելի է դատել այն փաստով, որ միայն Սիրիայում և Լիբանանում, կարճ ժամանակվա ընթացքում՝ 1946 թվականի հունվարի կեսերից մինչև փետրվարի 26-ը, ինչպես հաղորդել է Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթ կոմիտեն, ցուցակագրվել են 12 000 ընտանիք՝ 65 000 շնչով¹: Հաղորդագրության մեջ ասվում է, որ ցուցակագրությունը մեծ թափով դեռ շարունակվում է. օրական ցուցակագրվում են շուրջ 800 հոգի:

Դամասկոսից Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը ներգաղթի կոմիտեի կենտրոնական վարչության անունով ուղարկած 1946 թվականի ապրիլի 4-ի գրությամբ հայտնել է, որ Դամասկոսում և գավառներում ապրող հայ բնակչության 96 տոկոսը ցուցակագրվել է՝ ներգաղթելու²: Ներգաղթել ցանկացողների մասին հաղորդումներ են ստացվել նաև այլ գաղթավայրերից:

Հասկանալի է, որ հայրենի երկիրն ի վիճակի չէր արտասահմանում ապրող ավելի քան մեկ միլիոն բնակչությանը մեկեն ընդունել, ուստի ներգաղթի կենտրոնական կոմիտեն անհրաժեշտ է համարում զգուշացնել ներգաղթին օժանդակող կոմիտեներին, որ Հայաստանը առաջին հերթին ներգաղթ է ընդունելու միայն այն գաղթավայրերից, որոնց բնակչությունը ծանր վիճակում է և նրանց Հայաստան տեղափոխելը առաջնահերթ խնդիր է:

Հայրենադարձների առաջին քարավանը Սովետական Միություն է գալիս Բեյրութից 1946 թվականի հուլիսի 27-ին «Տրանսիլվանիա» ջերմանավով՝ բերելով հայրենադարձ հայերից 1806 հոգու:

Առաջին քարավանին հետևում են երկրորդը, երրորդը, չորրորդը և բազմաթիվ ուրիշներ: Գալիս են քարավանները՝ Նզիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից, Ֆրանսիայից, Հունաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, Պարսկաստանից, Իրաքից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից և այլ գաղթավայրերից:

Սովետական Հայաստանի բնակչությունը սիրով ու գուրգուրանքով ընդունում է իր հայրենադարձ հարազատներին, աշխա-

1 Նույն տեղում, 1945, № 260:

2 «Սովետական Հայաստան», 1945, № 260:

3 «Հայ մամուլ», 1945, դեկտ. 8:

1 202Ա, ֆ. 362, ց. 4, էջ 12:

2 Նույն տեղում, ց. 2, № 4:

տում է նրանց ապահովել բնակարանով: Դժվար էր, իհարկե, այն ժամանակ, երբ պատերազմը նոր էր վերջացել, լավագույն պայմաններ ստեղծել ներգաղթողների համար. շատ չէին ներգաղթողների համար պատրաստած բնակարանները, անկարելի էր բոլորին անմիջապես բնակարաններ հատկացնել: Սակայն հայրենի երկրի բնակչությունը աշխատել է անել ամեն ինչ, որպեսզի դժգոհ չլիցի հայրենիք վերադարձող իր հարազատներին:

Հայ գաղթավայրերի ոչ բոլոր բնակիչները ի վիճակի էին ապահովել իրենց տնհրաժեշտ ճանապարհածախսով և նյութական միջոցներ ունենալ մինչև կկարողանան հասնել Հայաստան և անցնել աշխատանքի: Այդ կարգի մարդկանց օգնության ձեռք է մեկնում ՀԲԸ միությունը, որն իր 1946 թվականի մարտի 19-ի գրությանմբ, ներգաղթի կոմիտեի անունով, ողջունել է ՍՍՀՄ ժողովուստվետի որոշումը և հայտարարել է, որ «Աշխարհի շորս անկյունները ցրված վտարանդի հայության երազն է, որ կկատարվի»: Նա իր ուրախությունն է հայտնել, որ «Ներգաղթն արդեն իսկ մտած է իրականացման ճամփուն մեջ» և սիրահոժար ընդունել է Հայաստանի կառավարության հրավերը՝ աշխատելու և նյութապես օգնել ներգաղթին¹:

Մտտավոր հաշվով, 1946 թվականից մինչև 1950 թվականը արտասահմանից Հայաստան է եկել շուրջ հարյուր հազար գաղթականություն:

Ներգաղթը չի դադարել հետագա տարիներին ևս: Ներգաղթողներին ընդունող ու տեղավորող հանրապետական կոմիտեն որոշակի սկզբունք է վերցրել — ներգաղթողներ ընդունել այնքան, որքան բնակարաններ պատրաստ են նրանց տեղավորելու համար: Եթե 1950 թվականից ներգաղթը փոքր-ինչ սահմանափակվել է, թույլ է տրվել միայն առանձին անհատների, ապա այդ պետք է բացատրել նրանով, որ հնարավոր չի եղել մեծ թվով եկողներին ապահովել բնակարաններով: Հետագայում, երբ հանրապետությունում շինարարությունը սկսել է լայն թափ առնել, նորից հնարավոր է դարձել զանգվածային գաղթականություն ընդունել արտասահմանից: Միայն վերջին երեք և կես տարում արտասահմանից հայրենադարձվել են շուրջ 7000 մարդ²: Ըստ որում, Հայաստանի կո-

մունիստական կուսակցության XXIV համագումարում հանրապետության կուսակցական, սովետական և տնտեսական կազմակերպությունների կարևոր խնդիրներից մեկն է համարվել «Արտասահմանից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձած մեր հայրենակիցների աշխատանքային և կենցաղային պայմանների, նրանց շրջանում տարվող աշխատանքի բարելավումը»¹:



Հայ գաղթավայրի պատմությունը՝ գաղթի, օտարության, պանդխտության պատմություն է, այլ խոսքով ասած՝ թշվառության պատմություն: Դժվար է այդ պատմության մեջ արևոտ օրեր փնտրել: Եվ մենք, գրի առնելով այդ պատմությունը, մեզ ողբերգակ պատմաբան կհամարենք, եթե բախտ չունենայինք տեսնելու Հայաստանի շքնաղայգաբացր սովետական արևի տակ և հայ ժողովրդի դարավոր շարքաշության վախճանը՝ հայրենադարձությունը, որն անցյալում հայ բազմաթիվ սերունդների փայփայած նվիրական երազանքն է եղել:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, երբ Հայաստանում ստեղծվեցին սովետական կարգեր և հայ ժողովուրդը սկսեց զարգանալ և բարգավաճել, երբ պարզ դարձավ, որ հայ ժողովուրդը սովետական մեծ ընտանիքում վախ չունի արհավիրքներից ու փոթորիկներից, դարեր շարունակ հայրենի երկրից տարազրված հայ պանդուխտները սկսեցին վերադարձի ճանապարհ բռնել: Հայ ժողովրդի պատմության մեջ, մեր ներկա սերնդի աչքի առջև, տեղի ունեցավ պատմական ամենախոշոր իրադարձություններից մեկը՝ թափառիկ հայության վերադարձն իր նվիրական հայրենիքը՝ Սովետական Հայաստան:

Ալեքսանդր Մյասնիկյանը, 1924 թվականին իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» խորագրով արժեքավոր աշխատության մեջ, խոսելով արտասահմանի հայ բնակչության հեռանկարների մասին, լավատեսորեն նշել է. «Արտասահմանում, այսինքն՝ Եվրոպայում, Ամերիկայում, Աֆրիկայում և այլուր, բացի խորհրդային երկրներից, կա մեկ միլիոնից ավելի հայություն: Նրա խոշոր մեծամասնությունը բանվորներ, աշխատավոր

¹ ՀՊՀԱ, ֆ. 178, № 30, էջ 14:

² Ա. Ե. Քալիեյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIV համագումարին, Երևան, 1966, էջ 71:

¹ Հայաստանի կոմունիստական պարտիայի XXIV համագումարի բանաձևերը, Երևան, 1966, էջ 30:

գյուղացիք և մանր արհեստավորներ են: Դա հայ գաղթականութիւնն է մասամբ նստակյաց արդեն, մասամբ էլ կարոտ հողի, աշխատանքի ու հացի: Աստանդական է հայ գաղթականը: Դժբախտ օրեր է նա անցկացնում: Նրա կրծքումն է կսկիծը, անցյալի տխուր օրերը, հուսախաբութիւնը, նացիոնալիզմի ապիկար քաղաքականութիւնը, ասիական անլուր կոտորածները: Նրա անցյալը տխուր է, իսկ ներկան դժբախտ: Բայց կա նրա «վաղը», նրա ապագան, որ պիտի լինի լավ, ուրախ և երջանիկ»¹: Մյասնիկյանը, անշուշտ, սփյուռքահայի բարօրութիւնը, ուրախութիւնը և երջանկութիւնը նրա տուն դարձի մեջ է տեսել:

Սովետական մեծ գործչի կանխատեսութիւնը մեր ժամանակներում և մեր աչքի առջև իրականութիւնն է դառնում:

ԲՈՎ Ա Ն Գ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Իրկու խոսք	3
Ներածութիւն	7
I. Հայ գաղթավայրերը Սիրիայում և Լիբանանում	13
II. Իրաքի հայ գաղթավայրը	34
III. Եգիպտոսի հայ գաղթավայրը	54
IV. Սուդանի հայ գաղթօջախները	77
V. Եթովպիայի հայ գաղթավայրը	83
VI. Հայ գաղթավայրերը Աֆրիկայի մյուս երկրներում	97
VII. Հունաստանի հայ գաղթավայրը	100
VIII. Բուլղարահայ գաղթավայրը նոր ժամանակներում	115
IX. Ռումինահայ գաղթավայրը	129
X. Հայկական գաղթավայրը Հունգարիայում	142
XI. Ֆրանսիայի հայ գաղթավայրը նոր ժամանակներում	155
XII. Հայերն Ավստրիայում	171
XIII. Հայկական փոքր գաղթավայրերը Արևմտյան Եվրոպայում	179
XIV. Պարսկահայ գաղթավայրը նոր ժամանակներում	216
XV. Հայերն Աֆղանստանում	244
XVI. Հնդկահայ գաղթավայրը նոր և նորագույն ժամանակներում	255
XVII. Բիրմահայ գաղթավայրը	280
XVIII. Ինդոնեզահայ գաղթավայրը	293
XIX. Հայերը Հեռավոր Արևելքում	313
XX. Հայերը Ֆիլիպինյան կղզիներում և նոր Զելանդիայում	321
XXI. Հայերը Չինաստանում	326
XXII. Ավստրալիայի հայ գաղթավայրը	334
XXIII. Ամերիկայի հայ գաղթավայրը	342
XXIV. Սփյուռքահայութիւնը և Սովետական Հայաստանը	376
XXV. Բովանդակութիւն	423

¹ Ալ. Մարտունի, Կուսակցութիւնները գաղութահայութեան մեջ, Թիֆլիս, 1925, էջ 136—137: